Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՊԵՐԳԵՐԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

5




ՀԱՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ГР. А. ГРИГОРЯН

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ ЭПИЧЕСКИЕ ПЕСНИ И ИСТОРИЧЕСКИЙ ПЕСЕННЫЙ ФОЛЬКЛОР

КНИГА ПЯТАЯ

ТЕКСТЫ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1986

Ա 821.09-1

ՊԱՀԵՍՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՊԵՐԳԵՐԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԲՆԱԳՐԵՐ

Ա 54252

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1986

ԳՄԴ 82.32—6
Գ 888

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ
Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Մ. ՆԱՋԻՆՅԱՆ

Գիրքը ուրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր Վ. Հ. ԲԴՈՅԱՆԸ և
բանասիրական գիտությունների թեկնածու
Ռ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Գրիգորյան Գ. Ա.
Գ 888 *Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը /ՀՍՍՀ ԳԱ. Հնագիտ. և ազգագր. ինս-տ.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ. Հրատ.*

Հրատ. է 1965 թ.

Հ. 5: (Ինագրեր) /Պատ. խմբ. Ա. Մ. Նազինյան.— 1986.— 417 էջ.

Աշխատությունը հետազոտությունների շարքի հինգերորդ գիրքն է, որն ընդգրկում է ժանրի բնագրերը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Առաջին բաժնում դետեղված են հնագույն շրջանի, երկրորդում՝ միջնադարի, երրորդում՝ նոր ժամանակների, իսկ չորրորդում՝ սոցիալիզմի դարաշրջանի վիպերգերն ու պատմական երգային բանահյուսության ստեղծագործությունները:

Նախատեսված է հայ բանահյուսությամբ զբաղվողների և ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԴ 82.32—6

Գ $\frac{4604000000}{703(02)-86}$ 82—84

© Հայկական ՍՍՀ ԳԱ. հրատարակչություն, 1986
Ներածության և ծանոթագրությունների համար

Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսության ստեղծագործությունները հինգ հազար տարվա պատմություն ունեն, եթե նկատի ունենանք, որ «Հայկ և Բել» վիպերգը, որով սկսվում է հայ վիպերգությունն ու մեր ժողովածուն, ստեղծվել է մ. թ. ա. 3-րդ հազարամյակի կեսերին:

Բնագրերը՝ «Հայկ և Բելից» մինչև Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմին նվիրված «Վալշեբրիկներ» (Բոլշևիկներ) ծավալուն հյուսվածքը և մի քանի այլ երգեր, հիմնականում հանված են մեր պատմիչների գրքերից, ժամանակագրություններից, ձեռագրերից, բանահյուսական ժողովածուներից, ամսագրերից, պարբերական մամուլից, ազգագրական և այլ հանդեսներից, որոնցից շատերն այժմ, իրրև նյակի հրատարակություններ, անմատչելի են շատերին: Վիպերգերի ու պատմական երգային բանահյուսության մի որոշ մասը մեր պրառումներն են և հրատարակվում են առաջին անգամ: Ժողովածուն ընդգրկում է 261 ստեղծագործություն՝ տարբերակներով հանդերձ, որոնք հստակ պատկերացում են տալիս մշակութային այդ երևույթի մասին, ներկայացնում ժանրն ամբողջությամբ: Ժողովածուն մեկանում նախորդը չունի:

Ժողովածուն բաղկացած է չորս մասից: Առաջին մասում զետեղվել են հին շրջանի, երկրորդում՝ միջնադարի, երրորդում՝ նոր ժամանակների, իսկ չորրորդում՝ սոցիալիզմի էպոխայի վիպերգերն ու պատմական երգային բանահյուսության ստեղծագործությունները: Նյութի դասակարգման մեր ելակետը եղել է ժամանակագրական սկզբունքը, որը և անշեղորեն կիրառել ենք ոչ միայն գիրքը մասերի բաժանելիս, այլև մասերի ներսում, հերոսների գործունեության և դեպքերի ճշգրիտ կամ մոտավոր ժամանակը նկատի ունենալով: Իսկ միջնադարյան վիպերգերը, իրրև արտակարգ մեծ ժամանակաշրջանի (1800 տարի) ստեղծագործություններ, ներկայացրել ենք ներքին պարբերացմամբ (IV—VIII, IX—XI, XII—XIV, XV—XVIII դարեր, որը և, ընդհանուր առմամբ, համընկնում է ֆեոդալիզմի ընդունված պարբերացմանը:

Մենք հրաժարվեցինք գիրքը ծանրաբեռնել գիտական ապարատի բազմաթիվ, ավյալ դեպքում, մեզ ավելորդ թվացող բաղադրամասերով՝ բառարանով, հատուկ անունների, առարկայական, վիպերգերի մատենագիտական և այլ ցանկերով: Անհրաժեշտ համարեցինք միայն ծանոթագրությունները, որոնց մեջ նախ՝ տեղեկություններ են տրվում աղբյուրի մասին, որտեղից վերցվել է վիպերգը և ապա նշվում գրառման

հանգամանքները ու բերվում, եթե կան այդպիսիք, վիպերգերի հետ առնչվող և նրանց ինչ-որ չափով լրացնող պրոյցները:

Կարևոր է նկատել, վերջապես, որ վիպերգերն ու պատմական երգային բանահյուսության ստեղծագործությունները բերվել են անաղարտորեն, առանց հավելումների ու կրճատումների՝ ինչպես եղել են ակզբնաղբյուրներում: Փոխվել է միայն ուղղագրությունը:

Նյութերը հավաքել ենք երկար տարիների ընթացքում, պրպտելով հնարավոր ու մեզ մատչելի բոլոր սկզբնաղբյուրները: Սակայն մենք հավակնություն չունենք ժողովածուն լիակատար ու սպառիչ համարելու: Իսկ որ հավաքածը վիպերգական ժառանգության գերակշիռ մասն է և ամբողջական ու ճիշտ է ներկայացնում ժանրը իր զարգացման մեջ՝ անտարակուսելի է: Հենց դա էլ մեզ հնարավորություն է տվել այն ուսումնասիրել ըստ հասարակական ֆորմացիաների՝ գրեթե չորս գիրք[1], որոնց ընդհանուր եզրակացությունը ամփոփում ենք ժողովածուի առաջաբանում՝ «Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը» խորագրի տակ:

Ավելորդ չենք համարում նկատել, որ մեզնից անկախ պատճառներով ժողովածուից դուրս են մնացել վիպերգերի և պատմական երգային բանահյուսության բազմաթիվ ստեղծագործություններ՝ 12 մամուլ ծավալով: Մոռացությունից փրկելու նկատառումով ձանոթագրությունների մեջ թողել ենք նրանց սկզբնաղբյուրները:

---

[1] Գր. Գրիգորյան, Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը, գիրք առաջին, Հին շրջան, 1972. գիրք երկրորդ, Միջնադար, 1981, գիրք երրորդ, Նոր ժամանակներ (անտիպ). գիրք չորրորդ, Սովետահայ վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը, 1965.

1. ՇԱԳՈՒՄԸ, ԿԱՋՄԱՎՈՐՈՒՄԸ, ԺԱՆՐԱՅԻՆ ԳԾԵՐԸ

Վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը իրականության արտացոլման ճշդրտությամբ և գեղարվեստական ձևերի ու միջոցների հարուստ համակարգով նշանակալից տեղ են գրավում հայ ժողովրդական պոետական ստեղծագործության մեջ: Նրանց արմատները ևս ձգվում են դարերի խորքը, հասնելով ընդհուպ մինչև նախնադար: Ավելին, բանահյուսական մյուս բոլոր ժանրերի նման նրանք ևս որոշակի կերպարանք են ստանում դեռևս նախնադարյան հասարակության ընդերքում: Սակայն, դատելով հետագա գրառումներից, նրանք նախնադարում չեն ունեցել այն բնույթն ու բովանդակությունը, պատմական այն որոշակի շեշտը, որ բնորոշ է մեզ հայտնի վիպերգերին ու պատմական երգային բանահյուսությանը: Նրանցում մինչև այժմ պահպանված մի քանի գծերից ու վերապրուկներից պարզ երևում է, որ նրանք սկզբնապես ունեցել են բնության երևույթները և մարդու կյանքի ու գործունեության հանգամանքները միֆական մտածողության անկաշկանդ թռիչքներով ներկայացնելու բնավորություն, բնությունը ամբողջությամբ վերցրած, մարդկային գործունեությամբ տոգորելու կամ օժտելու ունակություն, բնությանը միտք ու հոգի տալու հախուռն ձգտում: Մեզ այսօր ժպիտ շարժող խաղեր կարող են թվալ Կարոս խաչի, Հայկի, Արամի, Տիգրանի և այլոց հեքիաթային, ֆանտաստիկ ծնունդն ու արարքները, եթե մոռանանք, որ նրանք նշանակալից չափով կապված են վաղնջական անցյալի մարդու դիցաբանական, ուրեմն և գեղարվեստական մտածողության հետ ու հանդիսանում են դրա արգասիքը:

Պատմական երգը, ինչպես անվանումն էլ հուշում է, իբրև այդպիսին, հասարակական զարգացման ուշ շրջանի ծնունդն է: Այն իբրև բովանդակություն և ձև բանահյուսական մյուս ժանրերից սահմանա-

զատվում է այն ժամանակներից, երբ սկսվում է հասարակության բուն պատմությունը։ Այստեղ արդեն նրա համար առաջնայինը դառնում է ոչ թե բնության խորհրդավոր ուժերի, այլ պատմական իրականության պատկերումը։ Չհավորվելով պատմական կյանքի կոնֆլիկտների ու կոլիզիաների հորձանուտում և նրանց ազդեցությամբ, արտացոլելով այդ կոնֆլիկտներն ու կոլիզիաները, այն, դրանով իսկ, դառնում է հասարակական ուժերի կրողը, հասարակության տվյալ իրավիճակի բուն ոգու արտահայտիչը։ Ավելին, այն, բայլելով պատմության թարմ հետքերով, պատկերում է ոչ միայն դեպքեր ու դեմքեր, որոնք իրական են ու կոնկրետ պատմական, այլև հասարակության տվյալ պատմաշրջանի ցանկություններն ու իդեալները։

Պատմական նշանակալից ոչ մի իրադարձություն, հասարակության շահերը շոշափող բախտորոշ ոչ մի դեպք դուրս չի մնում նրա տեսադաշտից։ Նա դրանք անմիջապես որսում է, իմաստավորում, վիպական տեսք տալիս ու գնահատում։ Այն իսկական օպերատիվ ժանր է, սոցիալ-քաղաքական կյանքի հուսահատ ճիչերին ու հաղթական կանչերին արձագանքող ստեղծագործությունների մի տեսակ, որն իր խոսքով, որ ժողովրդի խոսքն է, համախմբում է նրան, նոր լիցք տալիս, բարձրացնում։ Պատմական երգը, կամ վիպական երգը հասարակության, ժողովրդի անցած փոթորկոտ ճանապարհի ուղեկիցն է, պատմության ուղեկիցը։ Նա պատմական գիտակցության արգասիք է։ Ճիշտ է, նրա ստեղծագործություններում իրական պատմությունը և վիպական պատմությունը միշտ չէ, որ համընկնում են, նրանցում չկան պատմական իրադարձությունների ճշգրիտ տեղն ու թվականները, վիպական կերպարներն ու նրանց արարքները պատմական դեմքերի ու նրանց արարքների պատճենները չեն, այլ բոլորովին նոր որակ են ու նոր ըմբռնումներ, բայց, ընդհանուր առմամբ, հարազատ են տվյալ պատմաշրջանին, անսխալ են արտահայտում զարդացման տրամաբանությունն ու տենդենցները։

Դրանք ժանրի գլխավոր հատկանիշներն են, նրա բովանդակության առաջատար գծերը։ Սակայն նեղացրած կլինենք նրա ընդգրկման սահմանները, եթե չնկատենք, որ հասարակական-քաղաքական կոնֆլիկտներից ու կոլիզիաներից բացի, այն անդրադառնում է նաև ժողովրդի նիստ ու կացին, նրա կենցաղին, կոլեկտիվ հոգեբանությանը և հաճախ ստեղծագործության առարկա դարձնում այնպիսի պրոբլեմներ, օրինակ, սիրո, կյանքի և մահվան պրոբլեմը, որոնք խորապես համամարդկային են և իրենց գեղարվեստական լուծմամբ խորապես առաջադիմական։

Վիպերգերն ու պատմական երգային բանահյուսության ստեղծագործությունները նշված գծերով մոտենում են էպոսին, և երբեմն այնքան, որ դժվար է լինում տարբերել իրարից, մանավանդ, որ ժողովրդական իդեալների առատությամբ, կերպարների կատարելությամբ ու գեղարվեստական ընդհանրացումների ուժով չի զիջում նրան: Այսուհանդերձ վիպական, պատմական երգերը, հատկապես հին և միջնադարյան, ինչպես ներկայացրել են մեր հայագետներից մի քանիսը, էպոսներ չեն: Մինչդեռ էպոսին բնորոշ է լայն ու խոր պատմականությունը, ավյալ ժողովրդի պատմական զարգացման ընթացքի ամբողջական արտացոլումը նրա գլխավոր կերպարի մեջ, ազգային բնավորության բոլոր կարևոր գծերի համակենտրոնացումը, նրանով ավյալ ժողովրդին ներկայացնելն ու ազգը խորհրդանշելը, վիպերգին՝ նեղ և առավել կոնկրետ պատմականությունը՝ ավյալ դարաշրջանից ետ ու առաջ չշարժելու խիստ պայմանով, միայն մի սահմանափակ պատմաշրջանի անցքերի գեղարվեստական վերարտադրությունը, ազգային միայն մեկ կամ մի քանի հատկանիշների խտացումը և, վերջապես, իր գլխավոր կերպարի միջոցով միայն ավյալ ժամանակների ժողովրդին ներկայացնելն ու խորհրդանշելը:

Էպոսը մեծ ծավալի նավ է: Մի կոնկրետ իրադարձության վրա բարձրանալով՝ նա այնուհետև կատում-անցնում է բոլոր ժամանակները, բայլում նոր հերոսների հետ, իր վրա կրելով անցած էպոխաների որոշակի հետքերը: Նա անընդհատ ստեղծագործական պրոցեսի մեջ է, իր գաղափարներով ու իդեալներով համահունչ բոլոր ժամանակներին: Նա գեղարվեստական մեծ բնդհանրացումների գործ է, մի վիթխարի կաղնյդոսկոպ, որտեղ ազգը, ժողովուրդը տեսնում է իր ամբողջական պատկերը, իր անցած ճանապարհի բանաստեղծական-վիպական նկարագիրը:

Հայ ժողովրդական ոչ մի վիպերգ նման ընդգրկում չունի: Փաստագրությունը, որ նրա տարերքն է, իր ծանրությամբ անընդհատ ձգում է ներքև, կապում իրեն ծնող պատմաշրջանի հետ, արգելակում նրա թռիչքը: Բոլոր դարաշրջանների վիպերգերի ու պատմական երգերի բնական միահյուսմամբ ստեղծված ամբողջությունը միայն կարող է էպոսի պատրանք առաջացնել: Բայց բանահյուսական պրոցեսը բացառել է այդ միահյուսումը, որովհետև պատմական երգի, իբրև ժանրի, կոչումը, ֆունկցիան, իր գեղարվեստական արժանիքների հետ միասին, եղել է ու է ավյալ դարաշրջանի քաղաքական անցքերի առավելագույն մանրակրկիտ ու փաստագրական բնութագրությունը: Վիպական-պատմական երգի կերպարը գրեթե միշտ նույնանում է իր պատմա-

կան նախատիպին, օրինակ, Տրդատը—Տրդատ Թագավորին, Դրիգորը—Դրիգոր Լուսավորչին, Արշակը—Արշակ Թագավորին, Պապը—Պապ արքայորդուն, Դրիգոր Նարեկացին—Դրիգոր Նարեկացուն, «Լենին փաշան»—Լենինին: Մինչդեռ էպոսում այդպիսի որոշակի ու անվերապահ նույնացում չկա: Նույնը կարելի է ասել պատկերվող իրադարձությունների և սյուժետային այլ բաղադրամասերի վերաբերյալ: Էպոսը իր լայն ու խոր պատմականության, դիցաբանության ու անօրինակ հերոսականության հետ միասին սինկրետիկ ժանր է, բանահյուսական գրեթե բոլոր ժանրերի անկրկնելի համաձուլվածք, իսկ վիպերգը կամ պատմական երգը այդ համաձուլվածքի բաղադրամասերից մեկը միայն, որն, ինչպես նկատեցինք, դնալով պատմության թարմ հետքերով՝ շեշտը դնում է գերազանցապես տվյալ կոնկրետ դեմքի կամ դեպքի վրա և առավել հանգամանալից ներկայացնում այն: Իրականության արտացոլման հենց այդ եղանակն էլ պայմանավորում է նրա պատմաճանաչողական արժեքն ու գեղարվեստական ձևի առանձնահատկությունները:

2. ՄԻՋԱՎԱՅՐԸ, ՀՈՐԻՆՈՂՆԵՐԸ, ՊԱՏՈՒՄՆԵՐԸ

Վիպերգերի և պատմական երգային բանահյուսության պատմականության աստիճանը որոշվում է իրականության հետ ունեցած հարաբերության աստիճանով, այն բանով, թե նրանք որքանով են համապատասխանում այն միջավայրին, այն կոնֆլիկտներին ու կոլիզիաներին, որոնց հիմքի վրա բարձրանում են: Իբրև կանոն նրանք ուղիղ համեմատական են իրենց ստեղծող միջավայրին, կոնֆլիկտներին ու կոլիզիաներին և ճիշտ են արտացոլում նրանց բնորոշ առանձնահատկությունները, բովանդակությունն ու գաղափարական սլացքը: Դրանցից դուրս պատմական երգ չկա և չի կարող գոյություն ունենալ: Պատմական երգի ստեղծման պարտադիր կանոն է նաև տեղի ունեցող իրադարձությունների ժամանակը, որից հետևում է, որ այն ստեղծվում է ոչ թե պատմական հանգամանքներից դուրս, այլ կոնֆլիկտների ու կոլիզիաների լուծման ժամանակաշրջանում, կամ նրանց ավարտից անմիջապես հետո, նրանց թարմ տպավորության տակ: Մեր ունեցած բոլոր վիպերգերը, սկսած «Հայկ և Բելից» և վերջացրած «Լենին փաշայով» ու «Վալշուրիկներով» (բոլշևիկներ), որոնցից նախավերջինում արտացոլվում է Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը, իսկ վերջինում՝ Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմը դրա լավագույն

ապագույցներն են: Նրանց հորինողները դեպքերի անմիջական մասնակիցներն են կամ՝ ականատեսները, դեպքերի ծանրությունը իրենց ուսերի վրա կրած և նրանց բնույթն ու բովանդակությունը խորապես ըմբռնած մարդիկ: Սալդաթի ու պանդխտի մորմոքը, նրանց անլուր տառապանքներն ու բողոքի ճիչերը իրական են ու խորապես պատմական այն պատճառով միայն, որ երգ են դարձել սալդաթի ու պանդխտի կողմից, ցարական բանակի դաժան ծառայության մեջ և նույնքան դաժան ու ապրաջինջ պանդխտության տարիներին, օտար ափերի հեղձուցիչ մթնոլորտում: Դեպքերից ու նրանց տեղի ունեցած ժամանակից դուրս վիպերգ չի ստեղծվում: Իսկ եթե երբևէ ստեղծվում է, ապա ստանում է ժանրային այլ նկարագիր, հանդես գալիս գերազանցապես իբրև պրոյց կամ ավանդություն, դուրկ վիպերգին բնորոշ «փաստագրության» հասնող պատմականությունից, անմիջականությունից և կոմպոզիցիոն յուրօրինակ բաղադրամասերից:

Բայց բոլոր դինվորներն ու պանդուխտները, և ընդհանրապես իրազարձությունների բոլոր մասնակիցներն ու ականատեսները վիպերգուներ չեն: Ավելին, վիպերգուներ չեն նույնիսկ նրանք, որոնք օժտված են ստեղծագործելու շնորհքով: Վիպերգուները հատուկ կերտվածքի մարդիկ են, էպիկական շնչով տոգորված երգիչներ, որոնց իմպրովիզացիոն տարերքը հրաշքներ է գործում գերազանցապես պատմական կոնֆլիկտների ժամանակ, հասարակական բովանդակության ու կենցաղային ուշագրավ դեպքեր վիպերգելիս, ականավոր մարդկանց կյանքի ու գործի մասին պատմելիս: Մեր ունեցած կցկտուր փաստերից և, մանավանդ, վիպերգերից պարզ երևում է, որ նրանք օժտված են եղել պատմական բացառիկ դգացողությամբ ու կանխատեսումներով: Հեղաբեկումների և ազգային ու դասակարգային հալածանքների ամենադաժան պահերին անգամ նրանք առաջնորդվել են ազգային ու պետական համընդհանուր շահերով, երկրի ճակատագրով, նրա ապագայով: Մեր պատմության հեռավոր ժամանակներում նրանք առանց վարանելու ստեղծագործության առարկա են դարձրել իրենց կեղեքող Տիգրան Մեծին, Արշակ Երկրորդին, Պապ արքայորդուն և այլ թագակիրների այն պատճառով միայն, որ նրանք պաշտպանել են վերոհիշյալ գաղափարները, որ ազգային ու պետական շահերի իրենց ըմբռնումը համընկել է նրանց ըմբռնմանը: Նրանք, իբրև առաջավոր մտածողներ ու գեղագետներ, կարողացել են բռնել ժամանակի բաղկերակը, մի կոնկրետ անցքի, կոնֆլիկտի ու կոլիզիայի մեջ տեղավորել այն, բնութագրել: Եթե դրանց ավելացնենք սոցիալ-քաղաքական այլ հարցերի տարերային մատերիալիստական մեկնաբանությունը, ինչպես և կյանքի ու մահվան հարատև

պայքարի մեջ կյանքի խանդավառ փառաբանությունը, ապա ընդհանուր գծերով ամբողջացրած կլինենք նրանց բուն էությունը, որով նրանք ընդհուպ մոտենում են Էպոսի վարպետ ասացողներին, դառնում իսկական էպիկներ։ Եվ բնավ պատահական չէ, որ նրանցից շատերը պատմել են նաև «Սասունցի Դավիթ» էպոսը, իսկ էպոսի ասացողները ընդհակառակը՝ վիպերգեր։

Վիպերգերի հեղինակների ստեղծագործական նկարագրի նշված հատկանիշները հավասարապես վերաբերում են նաև ասացողներին, վիպերգությունների իրար հաջորդող սերունդներին, որոնք ոչ միայն մեզ են հասցրել անգնահատելի մի հարստություն, այլև անտրտունջ աշխատանքով անընդհատ կատարելագործել են այն ու բազմապատկել։ Դրանով է բացատրվում վիպերգերի պատկառելի քանակը՝ ավելի քան երեք հարյուր ստեղծագործություն, իրենց պատումներով ու տարբերակներով, որոնք իրականության արտացոլման հզոր շնչով ու գեղարվեստական ընդհանրացման ուժով չեն զիջում թե՛ իրար և թե՛ հայ բանահյուսության մյուս բոլոր ժանրերի լավագույն ստեղծագործություններին։ Գրի չառնվելու պատճառով բազում վիպերգեր անհետ կորել են։ Եթե չլինեին, օրինակ, պատմահայր Մ. Խորենացին, որ առաջինը գրի առավ հին բանահյուսության անգնահատելի գոհարները, դրանց թվում նաև պատմական-վիպական երգեր, և նրանից հետո եկող ու նրա հետևությամբ իրենց աշխատություններում բանահյուսական տվյալներն առատորեն օգտագործող պատմիչները (Փավստոս Բուզանդ, Սեբեոս, Հովհան Մամիկոնյան, Շապուհ Բագրատունի և ուրիշներ), մենք, կարելի է ասել, գրեթե գաղափար չէինք ունենա հին և միջնադարյան վիպերգության վերաբերյալ։ Մենք մեր ունեցածի համար երախտապարտ ենք նրանց և միջնադարյան մեր անխոնջ գրիչներին, որոնց ձեռագրերում պահպանված բանահյուսական ստեղծագործությունների, դրանց թվում և վիպերգերի մի մասը գիտական շրջանառության մեջ դրվեց հայագետ Ա.ս. Մնացականյանի ջանքերով՝ 1956 թ. հրապարակված նրա «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» գրքով։ Վիպերգերի և ընդհանրապես բանահյուսական ստեղծագործությունների գրառման գործը բարվոք վիճակում չի եղել նաև նոր ժամանակներում։ Եթե ժողովրդական երգիչները միջնադարում եկեղեցականության ռեակցիոն խավի կողմից անխնա հալածվել են, ապա նոր ժամանակներում՝ արհամարհվել։ Մենք վիպերգերի և պատմական երգային բանահյուսության միջնադարյան և նոր ժամանակների ոչ մի գրառում չունենք ընդհուպ մինչև արժանահիշատակ Գարեգին Սրվանձտյանցը, որն իր անօրինակ սխրանքով դրեց հայ բանահյուսության գրառման ու հրատարակության և հայ ֆոլկլորագիտության հիմքերը։ Չնայած դրան, մեր ունեցածով

մենք կարողանում ենք անսխալ ուրվագծել անցած դարաշրջանների վիպական-դեղարվեստական պատկերը։ Եվ դա այն պատճառով միայն, որ պատմական վիպական երգերի առատությամբ միջնադարը չի պիջում հին ժամանակներին, նոր ժամանակները՝ միջնադարին, իսկ սոցիալիզմի դարաշրջանը՝ նոր ժամանակներին։ Պատմական-վիպական երգերի համար, հորինման առումով, չեն եղել, այսպես կոչված, աննպաստ կամ նպաստավոր դարաշրջաններ։ Պատմական զարգացման ողջ ընթացքում ոչ մոռացվել է նախորդ ժամանակներում ստեղծվածը և ոչ էլ կանգ առել նորի ստեղծումը։ Այս հարատեւումն ու հարաստեղծումը, ինչպես և ակնհայտ առատությունը բացատրվում է հայ ժողովրդի պատմության փոթորկալից ընթացքով և դրա նկատմամբ նրա ստեղծողների ցուցաբերած ակտիվ վերաբերմունքով ու ազնիվ անհանգստությամբ։

3. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԸՍՏ ՎԻՊԵՐԳԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ

Վիպերգերի և պատմական երգային բանահյուսության նշված առատությունը, ըստ առանձին դարաշրջանների, նաև այն արժեքն ունի, որ մեզ հնարավորություն է տալիս դծելու նրա և նրա ստեղծողների անցած ճանապարհը, պատմությունը տեսնելու շարժման մեջ։ Առանձին վիպերգը, կամ՝ պատմական երգային բանահյուսության առանձին ստեղծագործությունը միայնակ չի կարող և չի տալիս պատմությունը, պատմության շարժումը, որովհետև նրա մեջ պատկերված է պատմական մի մոմենտ, մի իրադարձություն։ Այլ կերպ ասած, այն պատմական զարգացման շղթայի մի օղակն է և ոչ ամբողջ շղթան։ Ուրեմն, մի առանձին ժամանակաշրջանի պատկերը կարելի է վերականգնել այդ ժամանակաշրջանում ստեղծված երգերի վերլուծությամբ, նրանց միջև եղած ներքին կապի հայտնաբերմամբ միայն։ Այդ բանում կարելի է համոզվել ժամանակով մեզ ավելի մոտ սովետահայ վիպերգերի ու պատմական երգային բանահյուսության օրինակով։ Դրանց մեջ ժամանակագրական կարգով առաջինը Հոկտեմբերյան հեղափոխությանը վերաբերող «Լենին փաշա» վիպերգն է, այնուհետև՝ քաղաքացիական կռիվներին, Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը, Լենինին, մեր կյանքի առաջընթացին և ապա Հայրենական մեծ պատերազմին նվիրված երգերը։ Ինչպիսի՞ն կլիներ պատկերը, եթե մենք չունենայինք նշված շրջաններից մեկին կամ մի քանիսին վերաբերող պատմական, վիպական երգեր։ Հասկանալի է, որ կկտրվեր նրանց միջև եղած ներքին

կապը և մենք չէինք ունենա զարգացման պրոցեսի անընդմեջ նկարագիրը՝ հայ ժողովրդի սոցիալիստական վերածնունդը պայմանավորող իրադարձությունների և նրա անցած դլխավոր շրջանների ամբողջական պատմությունը։

Պատմության շարժումն արտացոլելու այս ֆունկցիան, սակայն, սովետահայ վիպերգերի առանձնահատկությունը չէ։ Այն, ինչպես նկատեցինք, բնորոշ է ամբողջ ժանրին, ուրեմն և բոլոր ժամանակների վիպերգերին ու պատմական երգային բանահյուսությանը։ Եվ իրոք, եթե սովետահայ վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը սյուժեների ու կերպարների միջոցով արտացոլում են հայ ժողովրդի նորագույն պատմությունը, ապա հին շրջանի վիպերգերն ու երգային բանահյուսությունը նույն միջոցներով՝ հին շրջանը, միջնադարյանը՝ միջնադարը, նոր ժամանակներինը՝ նոր ժամանակները՝ կապիտալիզմի դարաշրջանը։ Նման ներքին կապ ու փոխադարձ պայմանավորվածություն, պատմության նման շարժում մենք տեսնում ենք նաև առանձին դարաշրջանների միջև։ Եվ ինչպես չի կարելի անտեսել նրանցից մեկն ու մեկում հորինված վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը՝ առանց մի առանձին վերցրած դարաշրջանի պատմության շարժումը խախտելու, այնպես էլ չի կարելի անտեսել այդ դարաշրջաններից մեկն ու մեկը՝ առանց պատմական զարգացման շղթան կտրելու, առանց հայ ժողովրդի պատմության դեղարվեստական արտացոլման ամբողջականությունը խախտելու։ Հետևաբար, վիպերգերի ու պատմական երգային բանահյուսության կապակցված քննությունը միայն կարող է տալ պատմության շարժման լուսաբանությունը և ամբողջացնել պատմական զարգացման շղթան։

4. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՎԻՊԵՐԳԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բայց դա վիպերգերի ու պատմական երգային բանահյուսության ստեղծագործությունների պատմականության մի կողմն է միայն։ Նրա մյուս ոչ պակաս կարևոր կողմն էլ այն է, որ նա իր վերաբերմունքն է ցույց տալիս ժողովրդի անցած ճանապարհի դլխավոր ու բախտորոշ իրադարձությունների նկատմամբ, գնահատում այն, որը, գրեթե միշտ, տրամագծորեն տարբերվում է իշխող վերնախավի գնահատականից, հակադրվում նրան։ Ժողովրդի և իշխողների հայացքներն ու ձգտումները համընկել են միայն պատմական այն պահերին, երբ նրանց սպառնացել է արտաքին վտանգը։ Այդ պահերին նրանք մի կողմ են դրել իրենց

միջև եղած սոցիալ-դասակարգային հակասությունները և միասնական հզոր ճակատով դուրս եկել արտաքին հարստահարիչների դեմ: Վտանգն անցնելուց հետո նրանց սրերը կրկին խաչաձևվել են, կրկին բորբոքվել պայքարը, որն իր հարատևության պատճառով ձևավորել է ըստ ամենայնի հակապիր ըմբռնումներ և աշխարհայացք՝ կանխորոշելով պատմական նշանավոր իրադարձությունների ու դեմքերին նրանց տված հակապիր գնահատականը: Հիշենք հենց Բեկուղ հայկական միասնական հզոր պետության ստեղծման համար թափված ջանքերը, որոնք, հակառակ պաշտոնական պատմագրության ու կենտրոնախույս ֆեոդալների, ջերմորեն պաշտպանվում է վիպերգուների կողմից և գաղափարապես ու հուզականորեն հաստատվում: Այդ են վկայում իր հորը, եղբոր որդիներ Գնելին ու Տիրիթին դաժանորեն սպանող Արշակի և երկրի առաջընթացը խաթարող Ներսեսի սահմանած կանոնները վերացնող Պապի գործունեության նկատմամբ նրանց ցուցաբերած բացահայտ համակրանքը: Արշակի գովերգը իր բարձրակետին հասավ Արշակավանի կառուցմամբ, որը բացառապես միապետի մտահղացումն էր: Հանուն միասնական հզոր պետության և երկրի հուսալի պաշտպանության՝ կալվածատերերի ծանր լծի տակ տնքացող շինականներին, բոլոր ըմբոստներին (որոնց Փավստոսը գողեր, պոռնիկներ, մարդասպաններ, ավազակներ, հափշտակիչներ անունն է տալիս) Արշակավան բերելով, նա հովանավորության տակ առավ նրանց, որով և նախ՝ շշմեցնող հարված հասցրեց մասնատված ազնվականությանը և, ապա, ակամայից ազատություն տվեց ճորտերի դժգոհությանը, նրանց ընդվզումներին: Պապի ռեֆորմները, որ Արշակի ներքին քաղաքական գծի շարունակությունը պետք է համարել, կղերականությանը տնտեսապես կաղմալուծելով և պետական կառավարման գործից հեռացնելով՝ երկիրն ազատեց հազարավոր պորտաբույծներից, հզորացրեց բանակը և եկեղեցական կալվածքների մի մասը ժողովրդին տալով՝ նպաստեց նրա բարեկեցության բարձրացմանն ու երկրի առաջընթացին: Դա հենց այն դրականն էր, որ բերում էր ժողովրդին ազնվականության ու կղերականության դեմ միապետների մղած պայքարը, պատմականորեն այն առաջադիմական երևույթը, որ չի նկատվել կամ անուշադրության է մատնվել պաշտոնական պատմագրության կողմից: «Ցոլկլորը,—գրում է Մ. Դորկին,—ամենահին ժամանակներից անբաժան և յուրահատուկ կերպով ուղեկցում է պատմությանը: Նա իր կարծիքն ունի Լյուդովիկոս 11-րդի, Իվան Գրոզնու գործունեության մասին, և այդ կարծիքը խիստ տարբեր է մասնագետների գրած գնահատականից, մասնագետներ, որոնք այնքան էլ չեն հետաքրքրվել այն հարցով, թե աշխատավոր

ժողովրդի կյանքի մեջ հատկապես ի՞նչ է մտցրել միապետների պայքարը ֆեոդալների դեմ»[1]: Ռուսական վիպերգերում, պատմական երգային բանահյուսության մեջ ու հեքիաթներում Իվան Դրոզնին հանդես է բերվել իբրև իմաստուն և արդարամիտ թագավոր, իբրև ժողովրդի մարդ: Մեզ մոտ Տիգրանն ու Արշակը ևս բարձրացվել են պատվի նույն պատվանդանին, դարձել ժողովրդի սիրելին, իդեալականացվել: Իսկ Պապ արքայորդին հերոսացվել ու իմաստնացվել է այնքան, որ համեմատվել է մարդկանց փոխակերպելու հնարքով օժտված հունական դիցաբանության հերոս Կիրկեի հետ: Հիշատակության արժանի են նաև մեծ ժողովրդականություն վայելող իրական-պատմական այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Բևոդորոս Ռշտունին և նրա որդի Վարդ Պատրիկը, որոնք հանուն հայ ժողովրդի հարատևության թե՛ իրականում և թե՛ վիպերգում երես են թեքում Բյուզանդիայից և դաշինք կնքում Հայաստան ներխուժած արաբների հետ: Ջենով Հովանյան այդ քայլը կղերապահպանողական պատմագրությունը (Ղևոնդ պատմիչ, Սեբեոս) համարել է դավաճանություն, իսկ ժողովուրդը՝ սխրագործություն: Ահա թե ինչպիսի խոր անդունդ է գոյություն ունեցել ժողովրդի և ժամանակին իշխող պատմահայեցության միջև՝ հայրենիքի ճակատագիրը տնօրինելու հարցում:

Այս տեսակետից պակաս պերճախոս չէ նաև «Սենեքերիմ թագավոր» վիպերգը, որտեղ Թուրք-սելջուկների առաջին իսկ հուժկու հարվածից Սենեքերիմ թագավորն ընկրկում է և սկսում մտածել ոչ թե երկրի ու ժողովրդի, այլ սեփական կաշին փրկելու մասին: Այդ մտածումներն ու ահավոր մորթապաշտությունը նրան հանգեցնում են այն վճռին, որ նա, հակառակ ժողովրդի, երկիրը հանձնում է հույներին (Վասիլ կայսր), փոխարենն ստանալով արհավիրքներից հեռու Սեբաստիան: Վիպերգուները խոր վշտով ու վրդովմունքով են արձագանքել այդ փաստին, արգահատանքով ու սպանիչ ծաղրով գծել Սենեքերիմի կերպարը: Նույնն ենք տեսնում նաև Անի քաղաքի պաշտպանությանը նվիրված վիպերգում: Այն օրերին, երբ ժողովուրդը քաղաքի համար դեմքը ձեռքին ինքնամոռաց կռվում է հռոմեական զավթիչների դեմ, այդ նույն օրերին Վեստ Սարգիսն ու Պետրոս Գետադարձը, օգտվելով Գագիկ թագավորի բանտարկությունից Հռոմում, որ կազմակերպել էին իրենք, անձնական ճղճիմ նկատառումներով, Անիի բանալիները հանձնում են կայսրին: Անին վաճառելով հռոմեացիներին, նրանք փաստորեն վաճառում են Հայաստանը, հայ ժողովրդին, երկար ժամանակ փակելով նրա

---

[1] Մ. Գորկի, Գրական հրապարակախոսական հոդվածներ, 1949, էջ 293:

առաջ հարատևության ու զարգացման բոլոր ճանապարհները։ Վիպերգը դա գնահատում է իբրև ժողովրդի ֆիզիկական ոչնչացման մի զարհուրելի վարքագիծ և անվերապահորեն մերժում։ Դրան հակառակ պաշտպանում ու փառաբանում է ազատագրական հերոսամարտերը, ինքնուրույն ու անկաշկանդ Հայաստանի գոյության գաղափարը։ Այսպիսին է էպոխայի քաղաքական բախտորոշ պրոբլեմի, իր պատմական ճակատագրի լուծման ժողովրդական ըմբռնումն ու գնահատականը։

Պատմության ժողովրդական ըմբռնումն ու գնահատությունը ինչ-որ չափով կամբողջանա, եթե նշենք նաև այն հանրահայտ փաստը, որ բոլոր ժամանակների վիպերգերում անսքող պատկերվել են աշխատավոր մարդու տառապանքն ու ցասումը, նրա և ստրկատիրոջ, նրա և ֆեոդալի, նրա և բուրժուայի միջև եղած անհաշտելի հակասությունները։ Իշխողներն ամեն միջոց գործադրել են սրբագործել շահագործական կարգերը, իսկ աշխատավորներն, ընդհակառակը, հերքել ու կործանել։ Այս կերպ կյանքը և ընդհանրապես պատմությունը ներկայացվել է իբրև իշխողի և իշխվողի միջև մղված տևական ու համառ պայքարի պատմություն և ըստ ամենայնի դրսևորվել բանահյուսության ինչպես բոլոր ժանրերում, այնպես էլ վիպերգերում ու պատմական երգային բանահյուսության մեջ։ Եվ եթե փորձենք փիլիսոփայորեն, ուրեմն և ճիշտ որակել երևույթը, ապա կարող ենք ասել, որ դա հենց կյանքի ռեալիստական արտացոլումն է, պատմության տարերային մատերիալիստական ըմբռնումը։ Նաև սրանով պետք է բացատրել մարքսիզմի արագ ընկալումն ու տարածումը, հեղափոխական ընդվզումների սրընթաց զարգացումն ու հաղթանակը, որ էպիկական լայն շնչով պատկերված է «Լենին փաշա» վիպերգում և լենինյան երգաշարի ստեղծագործություններում։

Ա 47457

5. ՎԻՊԵՐԳԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Պատմության շարժման լուսաբանությունը և պատմության գնահատությունը դեռևս պատմական իրականության ամբողջական արտացոլումը չէ։ Դրա համար անհրաժեշտ է գծել վիպերգերի զարգացման շղթան և բացահայտել նրանց բովանդակությունը։ Այդ, իհարկե, բնավ էլ անիրագործելի չէ և մենք հիմքեր չունենք գանգատվելու, եթե նկատի չունենանք, որ մեզ մոտ հիշյալ շղթան սկսվում է ոչ թե նախնադարից, այլ ստրկատիրական հասարակության վերջին շրջանից, մ.թ.ա. մոտա-

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՈՒՇԿԻՆԱՏՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ

վորապես երրորդ հազարամյակից, երբ ստեղծվում ու ձևավորվում է «Հայկ և Բել» վիպերգը։ Եվ եթե դա, ըստ Խորենացու դասակարգման և ըստ բովանդակության, հին շրջանի վիպերգություն է, մեզ ստույգ հայտնի, առաջին ստեղծագործությունն է, ապա հին շրջանի վիպերգերը, ամբողջությամբ վերցրած, պատմական զարգացման շղթայի առաջին օղակն են, որոնք իրենց գաղափարական հարստությամբ ու գեղարվեստական ձևերի ավարտվածությամբ չեն զիջում հետագա շրջաններին և, թեև ընդհանուր գծերով, բայց ճիշտ են արտացոլում պատմական իրականությունը։ Եվ իրոք, մեր մենագրություններից առաջին գիրքն[1] արդեն հիմք է տալիս ասելու, որ հին վիպերգերի հիմնական բովանդակությունը հայ էթնոսի կազմավորման բարդ ու երկարատև պրոցեսի գեղարվեստական արտացոլումն է, որպիսին չենք տեսնում ոչ բանահյուսական այլ ստեղծագործություններում և ոչ էլ, մանավանդ, պատմագիտական երկերում։ Այդ պրոցեսն սկսվելով անհիշելի ժամանակներից, տարբեր դրսևորումներով շարունակվում է մինչև Տիգրան Մեծի ժամանակները և հիմնականում ավարտվում։

«Հայկ և Բել» վիպերգը այդ շղթայի առաջին օղակն է, որտեղ Հայաստանը և հայասա ցեղերին խորհրդանշող Հայկը հերոսաբար կռվում է Ասորեստանը և ասորաբաբելական բռնակալներին խորհրդանշող Բելի դեմ և հաղթում նրան։ Բելի դեմ Հայկի մղած կռիվն ու տարած հաղթանակը հայացման համար հայասա ցեղերի հարյուրամյակներ մղած կռվի և հաղթանակի արտահայտությունն է։ Բայց դա՝ ըստ այժեններից մեկի, կամ այժենների մի խմբի։ Համաձայն այժենների մի այլ խմբի, Բելը ոչ թե օտար բռնակալ է, բաբելոնացի, այլ ուրարտացի է, նրա վերջին թագավորը, որով և նրա ու Հայկի միջև մղված կռիվը ներկայանում է իբրև ուրարտացիների և հայասանների միջև մղված միջցեղային կռիվ, որն ավարտվում է ուրարտացիների պարտությամբ, հայասա-արմենների հաղթանակով ու հայկական թագավորության հիմնադրմամբ։ Իսկ սրանից հետևում է, որ Հայկը, ուրեմն և հայերը ոչ թե գալիս են դրսից, այլ տեղացիներ են, բնիկներ։ Այդ մասին պատմող այժենները Խորենացու ժամանակ դեռևս գոյություն են ունեցել։ Բայց նա ուշադրություն չի դարձրել դրանց վրա։ Հայաստանի երկփեղկվածության և ինքնության կորստի պայմաններում՝ ժողովրդի հայրենասիրական ոգին բորբոքելու և նրան ձուլման ու ֆիզիկական ոչնչացման վերահաս վտանգից փրկելու նպատակով մշակել է բաբելական Բելի, այսինքն արտաքին բռնակալի դեմ մղված կռվի այժեն։

---

[1] Գր. Գրիգորյան, Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը, գիրք առաջին, Հին շրջան, 1972։

Օտար զավթիչների դեմ հայ ժողովրդի ինքնության և տերիտորիալ ամբողջության պահպանման համար մղված հերոսամարտերը առավել հզորությամբ երևան են գալիս «Արտաշես և Արտավազդ», «Տիգրան և Աժդահակ» վիպերգերում: Արտաշեսն ու Տիգրանը հայկական երկրամասերը թշնամիներից ետ նվաճելով և անջատ-անջատ նախարարությունները իրար միացնելով՝ մեծապես նպաստում են հայ ժողովրդի կազմավորմանը: Իսկ եթե նկատի ունենանք, որ այդ պրոցեսը երևան է գալիս նաև հայկական հզոր պետականության ստեղծման ու նույնքան հզոր բանակի կազմակերպման, նորանոր տեղամասերի ձուլման ու միայն հայերենը պետական լեզու սահմանելու և Հայաստանի արագ բարգավաճման ու ժողովրդի բազմացման կերպարանքով, ապա պարզ կդառնա, որ հայ էպոսի կազմավորումը Արտաշեսի և Տիգրանի ժամանակներում հիմնականում հասել էր իր ավարտին: Դա երևում է նաև հետո՝ վաղ միջնադարում հյուսված վիպերգերից, որոնց մեջ վիպերգուները հայ էպոսի կազմավորման հարցը անցած փուլ համարելով, արծարծում են արդեն դարաշրջանին բնորոշ ու հրատապ նոր պրոբլեմներ: Նշված երկու վիպերգերում հայ էպոսի կազմավորման և ավարտի փաստը համապատասխանում է պատմական իրականությանը, խորապես պատմական է և հենց դրանով իսկ խորապես գեղարվեստական:

Հայ էպոսի կազմավորման երկարատև պրոցեսը մեր պատմության հին շրջանի գլխավոր հատկանիշն է, դարաշրջանի հասարակական-քաղաքական իրադարձությունների բուն բովանդակությունը: Բայց քննարկված վիպերգերում, բացառությամբ թերևս «Հայկ և Բելի», դարաշրջանը բնութագրող գլխավոր սյուժեներից բացի կան նաև բազմաթիվ երկրորդական, այսպես կոչված, կենցաղային սյուժեներ, հերոսների առօրյան կյանքը, անհատական բախումները, ներաշխարհի ելևէջները, պատկերացումներն ու ընդհանրապես աշխարհըմբռնման աստիճանը բացահայտող մոտիվներ, որոնք իրենց գոյությամբ լայնացնում են վիպերգերի ընդգրկման սահմանները և առավել ամբողջական ներկայացնում դարաշրջանը:

Նույնպիսի ընդգրկում տեսնում ենք ինչպես հաջորդ բոլոր ֆորմացիաների, այնպես էլ միջնադարյան վիպերգերի և պատմական երգային բանահյուսության մեջ: Կարելի է ասել, գրեթե չկա սոցիալ-քաղաքական մի նշանավոր իրադարձություն, պատմական մի նշանավոր դեմք, համազգային ու համաժողովրդական նշանակության մի պրոբլեմ, որ իր գեղարվեստական-վիպական արտացոլումը գտած չլինի նրանց մեջ, մեկնաբանված ու գնահատված չլինի պատմության ժողովրդական ըմբռնման ու իդեալների բարձունքից, երկրի զարգացման հեռանկարների տեսանկյունից:

Հիշատակության արժանի է, ամենից առաջ, բարձրարվեստ պատկերումն այն պայքարի, որ երկրի անկախության վերականգնման, ֆեոդալական մասնատվածության վերացման և կենտրոնացված հզոր պետության ստեղծման համար մղվել է դեռևս վաղ միջնադարում: Պատմական հանգամանքների բերումով այդ, սակայն, չի կաղապարվում IV—VIII դարերի շրջանակներում, այլ դուրս գալով այդ շրջանակներից, կարմիր թելի նման անցնում է միջնադարյան բոլոր վիպերգերի միջով՝ դառնալով նրանց բովանդակության կարևորագույն գծերից մեկը: Բագրատունիների կարճատև թագավորությունը ժողովրդի դարավոր երազանքի իրականացումը չեղավ: Այդ պատճառով էլ շարունակվեց օտար զավթիչներին դաշնակցած կենտրոնախույս ուժերի և պետական իշխանությունը զավթել ցանկացող հայրենադավ նկեղեցականության դեմ մղվող անդիջում պայքարը ու նրա գեղարվեստական արտացոլումը միջնադարյան վիպերգության մեջ: Եվ քանի որ դա պատահականություն չէր, այլ հայոց պատմության օրինաչափ արտահայտություններից մեկը, ուստի սխալ չի լինի, եթե հայ միջնադարյան վիպերգությունը համարենք Հայաստանի անկախության և հայկական կենտրոնացված, հզոր պետականության ստեղծման վիպերգություն:

Սակայն ազգային ինքնության ու կենտրոնացված հզոր պետականության գաղափարի իրականացումը կախված էր օտար զավթիչների դեմ մղված ազատագրական պայքարի հաջող ելքից միայն: Այդ պատճառով հայրենիքի ամենագլխավոր և ամենաոխերիմ թշնամիները բոլոր դեպքերում մնում էին բյուզանդացիներն ու պարսիկները, արաբներն ու սելջուկները, մոնղոլներն ու թուրք-թաթարական ցեղերը, որոնք իրար հաջորդելով անխնա ոչնչացնում էին ժողովրդին, ավերակների վերածում երկիրը: Սրանց դեմ մղված անհավասար, բայց հերոսական կռիվներն էլ հենց հանդիսանում են վիպերգերի և պատմական երգային բանահյուսության գլխավոր թեման, նրանց հիմնական բովանդակությունը: Տիգրան Մեծի տիրակալության քայքայումից հետո այդ ազատամարտերը առավել կատաղի բնույթ ստացան և տարբեր տեմպով շարունակվեցին մինչև XVIII դարի վերջը և հետո: Կարելի է համարձակորեն ասել, որ Սասունցի Դավթի «Թուր կեծակին» փայլատակել է միջնադարյան վիպերգերի ու պատմական երգային բանահյուսության բոլոր ստեղծագործությունների վրա և գաղափարական ներշիրք տվել նրանց: Հետևաբար, տեղին կլինի նկատել, որ այդ վիպերգերը եղել ու մնում են իբրև ազգային-ազատագրական պայքարի վիպերգություն:

Հենց դրանով էլ պայմանավորվում է նրա մի այլ, ոչ պակաս կարևոր առանձնահատկության՝ ազատագրական պայքարի տևական ու

համառ բնույթի, նրա անսովոր հերոսականության պատկերումը։ Որքան խորանում ու դաժան կևրպարանք են առանում կողոպուտն ու գերևվարումները, կոտորածներն ու ցեղասպանությունը, այնքան ավելի հզորանում է ժողովրդական դիմադրության ոգին, անհատական ու մասսայական հերոսությունը, որը շատ անգամ է ծունկի բերում զավթիչներին, և ոտքերի տակ կրակ վառելով՝ ստիպում հեռանալ Հայաստանից։ Այս տեսակետից միջնադարյան վիպերգերն ու պատմական երգային բանահյուսության ստեղծագործությունները մեզ միաժամանակ ներկայանում են իբրև բողոքի ու ցասման, հերոսության ու հաղթանակի երգեր։

Իսկ եթե ի լրումն այդ բոլորի նկատի ունենանք նաև, որ ժողովրդի կյանքի ու պայքարի ամենաօրհասական, ամենածանր ու ողբերգական պահերի պատկերման ժամանակ անգամ վիպերգերը բարձրացել են մղձավանջից և խաղաղասիրության, հումանիզմի ու ջերմ հայրենասիրության գովերգի հետ միասին պայծառ լավատեսությամբ նայել ապապային, ապա ընդհանուր գծերով ամբողջացրած կլինենք գաղափարական այն հարստությունը, որով տոգորված են նրանք։

Համապգային ու համաժողովրդական շահերի արտացոլման ուժով միջնադարին չեն զիջում նոր ժամանակների վիպերգերն ու պատմական երգային բանահյուսության ստեղծագործությունները, որոնք ընդգրկում են 1801 թվականից մինչև Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունն (1917) ու Հայաստանի նոյեմբերն (1920) ընկած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական գլխավոր իրադարձությունները։ Դրանցից ամենից առաջ, մի առանձնակի ջերմությամբ է պատկերվում ռուս-պարսկական պատերազմի (1828—1829) մի քանի դրվագներ, ռուսների տարած փայլուն հաղթանակն ու Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելու պատմական ակտը, որով վերջ է տրվում պարսկական խանների դարավոր տիրակալությանը, ուրեմն և հայ ժողովրդի վաղուց սկսված ասիմիլյացիային ու ֆիզիկական ոչնչացմանը և նոր հեռանկարներ բացում նրա զարգացման համար Ռուսաստանի հովանու ներքո։

Թեև ոչ լայն ու ընդարձակ այժեններով, բայց տրվում է ապա՝ ռուս-պարսկականին անմիջականորեն հաջորդող ռուս-թուրքական պատերազմի պատկերը, Բայազետի հերոսական պաշտպանությունը, ռուս դիվիզորների և հայ կամավորների սխրանքները, նրանց կենքի ևղբայրությունը («Հեյ վոխ, Բայազետ վառեցին»)։

Թուրք զավթիչների ու կեղեքիչների դեմ բռնկված ազգային-ազատագրական կռիվները ամբողջ հարյուրամյակում չդադարեցին, այլ,

բնդհակառակը, դնալով առավել կատաղի և օրհասական բնույթ ստացան։ Զեյթունցիների 1862, 1878, 1884, 1895—96 և 1915 թթ. ըմբոստ ելույթները, 1880 թվականի Վասպուրականի և Սասունի ազատագրական շարժումները խոր հետք թողեցին վիպերգության վրա, դարձան նրա լեյտմոտիվը, գովքի առարկան («Տնկի քեշիշ կըսև», «Երգ Զեյթունի», «Արաբոյի երգը», «Կարիճ սասունցիք», «Սասունցոց բողոքը» և այլն)։ Դարավերջի և մանավորապես XX դ. առաջին երկու տասնամյակի վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը. սակայն, մեծ եղեռնի հետևանքով մի պահ վերածվեցին դերազանցապես լացի ու ողբի բանահյուսության։ Թուրք ջարդարարների դեմ ուղղված բողոքի ու ցասման ճիչերը խլացան մորթվող մի բուռ ժողովրդի արյան ձայների մեջ։ Բայց այդ մի պահ միայն։ Երեք տարի անց, 1918-ի մայիսին, երբ ջարդարարները փորձում են սրի քաշել ժողովրդի երկրորդ կեսը, նա համախմբելով իր ուժերը ոտքի ելավ և Սարդարապատում ջարդուփշուր անելով շնագայլի ժանիքները՝ դուրս վռնդեց հայրենի հողից։

Վիպերգուները ամբողջ ուժով նշավակում են նաև պատերազմը, այն սանձազերծողներին ու ցարիզմը («Հասան Ղալա» և «Սալդաթի խաղեր» երգաշարերը)։ Սրանց մեջ բարձր հնչող հակապատերազմական մոտիվները միանալով հակացարական բացահայտ տրամադրություններին, երգերին հաղորդում են շեշտված քաղաքական բնավորություն։ Նոր ժամանակների վիպերգերն ու պատմական երգային բանահյուսության ստեղծագործությունները, ընդհանուր առմամբ, քաղաքականապես հասունացած ժողովրդի երգեր են։ Այս տեսակետից ուշադրության արժանի են նաև պանդխտի երգերը, որոնք ոչ միայն հայ ժողովրդի ազգային դարավոր հալածանքների դեղարվեստական տարեգրություններն են, այլև սոցիալ-դասակարգային նոր հարաբերությունների ցոլացումները, արդյունքը դասակարգային այն դաժան ճնշման ու կեղեքումների, որոնք ահավոր չափերի հասան XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին՝ կապիտալիզմի շեշտակի զարգացման հետևանքով։

Նոր հեղաբեկումների, կոլիզիաների ու կոնֆլիկտների շնչով են տոգորված սոցիալիզմի դարաշրջանի վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը։ Ավելին, նրանք տարեգրական ճշգրտությամբ և առավել խորն են արտացոլում նորագույն ժամանակների իրադարձությունները, որոնք դուրս գալով մի առանձին ժողովրդի ազգային պատմության շրջանակներից ստանում են համաշխարհային պատմական նշանակություն, նշանավորում նոր փուլ մարդկության զարգացման ու առաջընթացի մեջ։

Ժամանակագրական կարգով դրանցից առաջինը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն է, որը 1917 թվականի հոկտեմբերին Ռուսաստանում տապալեց կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը և երկրում հաստատեց բանվոր դասակարգի դիկտատուրա։ Մադկի Սեփոյի նշանավոր «Լենին փաշան», մի քանի այլ վիպերգեր («Լենինի հեքիաթ», «Լենինի հեքիաթը») և պատմական երգային բանահյուսության տասնյակ ստեղծագործություններ, որ հրապարակվել են 1922—1924 թթ., այդ իրադարձության գեղարվեստական արտացոլումներն են։ Դրանց մեջ բարձր պաթոսով ու մեծ ընդհանրացումներով պատկերվում է ոչ միայն հեղափոխության ընթացքն ու հաղթական ավարտը, այլև նրա բնորոշ գծերն ու առանձնահատկությունները, նրա առաջնորդի հավաքական կերպարը։ Իսկ եթե նշենք նաև, որ հեղափոխության բնորոշ գծերի դրսևորումով վիպերգուները ուղղակի ցույց են տալիս նաև աշխարհի բաժանումը երկու լագերի՝ սոցիալիզմի ու կապիտալիզմի լագերի, որոնցից առաջինն իր հաղթարշավի սկզբին է, իր ուժերի ծաղկման շրջանում, իսկ երկրորդը՝ իր դարն ապրել է ու դատապարտված է մահվան, ապա պարզ կդառնա գաղափարական բովանդակության այն հզորությունը, որով տոգորված են հեղափոխությունը փառաբանող վիպերգերը։

Հոկտեմբերի հետ առնչվող ու անմիջականորեն նրանից բխող նորագույն ժամանակների երկրորդ իրադարձությունը, որ բախտորոշ եղավ հայ ժողովրդի համար, դա 1920 թվականի նոյեմբերն էր, երբ ժողովուրդը Հոկտեմբերով գոտեպնդված ոտքի ելավ և նրա ազատարար 11-րդ բանակի օգնությամբ տապալեց դաշնակ մասուղերիստների անարգ լուծը և հաստատեց բանվորների ու գյուղացիների իշխանություն։ Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը և քաղաքացիական կռիվներին նվիրված վիպական հյուսվածքների («Ռուբենի երգը», «Ագստաֆայից բերեցին լուրը», «Ձախմախլվից անցավ զորքը» և այլն) հիմնական առարկան հայ ժողովրդի սոցիալիստական վերածնունդն է, իսկ գլխավոր հերոսը՝ Հոկտեմբերի փոթորկից արբնացած մարդը, որը աչքի է ընկնում հեղափոխական հայրենասիրությամբ և գալիքի նկատմամբ ունեցած պայծառ հավատով։ Վիպերգերն ընդհանրապես ճիշտ են բացահայտում թե՛ տեղի ունեցած կոլիզիաների ու կոնֆլիկտների իմաստն ու նշանակությունը և թե՛ նրանց ժողովրդական ըմբռնումն ու պատկերացումները, որոնք նախորդների համեմատությամբ, նոր են և, ըստ ամենայնի, հեղափոխական։ Այս առումով Հոկտեմբերն ու Հայաստանի Նոյեմբերը պատկերող վիպերգը կարելի է համարել հեղափոխական վիպերգեր։

Երևույթների լայն ընդգրկումով և առաջավոր գաղափարախոսությամբ դրանց չեն զիջում Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի վիպերգերն ու պատմական երգային բանահյուսության ստեղծագործությունները, որոնց մեջ իր ծավալով ու գեղարվեստական կատարելությամբ ամենաակնառուն «Վալշուրիկներ» վիպերգն է: Նրա գլխավոր հերոսի՝ Սովետական Միության ժողովուրդների հավաքական կերպարի արարքներով բացահայտված է պատերազմի ողջ ահագնությունը, ընթացքն ու էտապները, բնույթն ու բովանդակությունը, նրա հաղթական ավարտն ու հաղթանակի համաշխարհային պատմական նշանակությունը: Վիպերգը սոցիալիստական ազգերի եղբայրական համագործակցության, նրանց անօրինակ սխրանքների ու ազատագրական մեծ միսիայի, սովետական սիստեմի ու խաղաղության խանդավառ գովերգն է և ահեղ նախազգուշացում բոլոր նրանց, ովքեր կփորձեն սուր բարձրացնել սովետական ժողովուրդների դեմ:

Ինչ վերաբերում է պատերազմի շրջանում հորինված պատմական երգային բանահյուսության ստեղծագործություններին, ապա նրանք, առանձին վերցրած, թեև ամբողջական պատկերացում չեն տալիս հայրենական պատերազմի մասին, բայց անցքերի ներքին իմաստը, մարտնչողների բարոյաքաղաքական նկարագիրն ու փոթորկոտ հուզաշխարհը բացահայտելով՝ լրացնում են «Վալշուրիկներին»: Դրանց մեջ, ինչպես ճիշտ նկատել է Վ. Յու. Կրուպյանսկայան ռուսական ռազմաճակատային ֆոլկլորի իր ժողովածուն գնահատելիս, արտացոլվել է «Պատերազմի հոգեբանությունը» բնութագիրը այն բանի, թե ինչով է շնչում մարտիկը, նրա գործողությունների ու արարքների դրդապատճառները, ներքին մղումը[1]: «Հենց այդ երգերի հետ են մարտիկները գնացել գրոհի,— ավելացնում է ռուս նշանավոր ֆոլկլորագետ պրոֆ. Մ. Ազադովսկին,— դրանցով են պաշտպանել Մոսկվան, դրանց հետ են մտել ազատագրված քաղաքները: Նրանք ատելությամբ ու ցասումով են հնչել գերության մեջ, նրանց հետ ու նրանց համար են գնացել գնդակահարության և աքսոր»[2]:

Ռուսական ռազմաճակատային բանահյուսությանը տրված այս գնահատականները նույնությամբ վերաբերում են նաև հայկական պատմական երգային բանահյուսության ստեղծագործություններին, որոնք «Վալշուրիկներ» վիպերգի հետ միասին սովետահայ վիպերգությունը հարստացրին հայրենասիրական նոր բարձրարվեստ գործերով:

---

[1] Фронтовой фольклор, М., 1944, с. 6.

[2] Նույն տեղում, էջ 31

6. ՎԻՊԵՐԳԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Բայց վիպերգերն ու պատմական երգային բանահյուսության ստեղծագործությունները միայն բովանդակություն և առաջավոր գաղափարախոսություն չեն: Դրանց հետ միասին նրանք գեղարվեստական ձևեր են, խոսքի արվեստի գործեր, որոնք հաջողությամբ են կատարել պատմական իրականության արտացոլման իրենց ֆունկցիան, որոշակի հունի մեջ դրել ժամանակակիցների մտքերն ու զգացմունքները, դաստիարակել ու բարձրացրել նրանց՝ մղելով նոր սխրանքների: Այդ ձեղի է ունեցել, անտարակույս, ոչ մոգական ուժի օգնությամբ, այլ վիպական արվեստի նրա պոետիկայի բոլոր բաղադրամասերի հմուտ օգտագործմամբ, նորմայի և անհատանելի տիպարի հասնող կերպարների ու բնավորությունների ստեղծումով: Գեղարվեստական յուրաքանչյուր ստեղծագործության անսխալ չափանիշը կերպարների առկայությունն է նրա մեջ, և նրանց կատարելությունը: Դեռևս Վ. Բելինսկին է նկատել, որ «երբ վեպում կամ պատմվածքում չկան կերպարներ ու դեմքեր, չկան բնավորություններ, չկա ոչինչ տիպական, ինչքան էլ ճիշտ ու մանրամասն նկարագրված լինի այն, ինչ նրա մեջ պատմվում է»[1]: Ուստի վիպերգերի արվեստի մասին խոսելիս, ամենից առաջ պետք է նկատի առնվեն նրանցում գործող կերպարներն ու բնավորությունները, որովհետև նրանց մեջ ու նրանց միջոցով է միայն անխաոս բնականությամբ երևան գալիս պատմական այս կամ այն ժամանակահատվածի համայնապատկերը, ուժը հասարակական-քաղաքական այն հոսանքի, որ կրում է նրանց:

Ստեղծագործական պրոցեսի այս ընդհանուր օրինաչափություններից դուրս չեն հայ ժողովրդական վիպերգերի ու պատմական երգային բանահյուսության կերպարները, որոնց քանակը մի քանի հարյուրից անցնում է: Բայց նրանք ոչ միայն բազմաքանակ են, այլև բազմազան են՝ թե՛ իրենց հասարակական-քաղաքական բովանդակությամբ ու աշխարհայեցողությամբ և թե՛ անհատական, մարդկային նկարագրով: Ըստ որում հին շրջանի և միջնադարի մի շարք կերպարներ, որ գերազանցապես իրական-պատմական են, հանդես են գալիս իբրև հասարակական դեմքեր, որն էլ հենց նրանց կենդանի անհատականությունն է: Այսինքն հասարակական մարդը և մարդը նրանց մեջ նույնանում են, որով և տիպականը դառնում է անհատական, անհատականը՝ տիպական (Հայկ, Արամ, Արտաշես, Տիգրան, Մոքոս և այլն): Անհատը ձուլվում է

[1] *В. Белинский*, Собр. соч. в 3-х томах, т. III, М., 1948, стр. 789.

հասարակությանը այնպես և այն չափով, որ տոհմային, հասարակական հնչեղություն են ստանում ոչ միայն նրանց հասարակական արարքները, այլև ներանձնական ապրումները, նույնիսկ սիրո դպացումն ու նրա պատճառած տվայտանքները: Իբրև օրինակ կարելի է հիշատակել Սաթենիկի կերպարը: Հ. Թումանյանը մեկնաբանելով Արգամ իշխանի նկատմամբ նրա տածած անպատասխան սիրո ջերմությունն ու խորությունը, իրեն հատուկ խորաթափանցությամբ նկատել է, որ «...Սաթենիկի տենչանքի վրա պետք է նայել ոչ իբրև մի անհատի ցանկության, այլ մի ժողովրդի, որ առասպելի մեջ արտահայտել և դրել է անհատի սրտում»[2]: Բայց Սաթենիկի սիրո մեջ կա նաև գեղարվեստական ընդհանրացման փաստը, նա իր բուռն տենչանքով և ծաղիկներով դյութելու սովորությամբ ներկայացնում է իր նման բազում սիրահարների: Այս տեսակետից սխալ կլինի հասարակական մարդու և մարդու նույնացում համարել վիպերգական բոլոր կերպարները: Այդպես վարվել նշանակում է անտեսել հասարակական զարգացման պրոցեսը, հետևաբար և այն փոփոխությունը, որ տեղի է ունենում գեղարվեստական մտածողության և վերջինիս արդյունք հանդիսացող կերպարների նկարագրի մեջ: Այն, ինչ նրանց համար որակ է դառնում վաղ միջնադարում և հետո, իրեն զգացնել է տալիս դեռևս հին շրջանում: Օրինակ, նույն Սաթենիկի և Արտաշեսի սիրո պատմությունը և Սաթենիկի հիասթափությունը Արտաշեսից, Տիգրանուհու և Աժդահակի ամուսնությունն ու առաջինի շրջահայաց վարքագիծը և այլն, որոնք արդեն նրանց, իբրև կերպարների, անհատականությունն են աղդարարում: Ի տարբերություն հին վիպերգերի—միջնադարյան ու նոր ժամանակների վիպական կերպարները որոշակիորեն անջատվում են հասարակությունից, մի պրոցես, որ սկսվել էր դեռևս հայրիշխանության հերոսական շրջանից, և դառնում որոշակի հոսանքի կրողներ, հասարակական որոշակի խավի արտահայտիչներ: Այս կերպ մարդը գնալով առավել անհատական կերպարանք է ստանում և նրա մեջ ամփոփված ընդհանուրը հանդես է գալիս ոչ իբրև հասարակության և անհատի նույնության արդյունք, այլ իբրև գեղարվեստական ընդհանրացում: Վիպերգերի և պատմական երգային բանահյուսության գրեթե բոլոր կերպարները մեծ ընդհանրացումներ են, այսինքն իրենց արարքներով ներկայացնում են տվյալ պատմաշրջանի հասարակության մեծամասնությունը՝ միաժամանակ մնալով իբրև կոնկրետ մարդիկ ու կոնկրետ անհատականություններ: Մի Տիրան կամ Արշակ, Պապ կամ Մուշեղ, Մոքոս կամ Գրիգոր Դերեն, Ասյան աղա կամ Մոկաց Միրզա և ուրիշներ՝ իրարից տարբերվում են

---

[2] Հ. Թումանյան, Երկեր, հատ. 4, էջ 15:

ոչ թե իրենց մեջ խտացված ընդհանուր գծերով, այլ իրենց անհատական նկարագրով՝ մտածելակերպով, գործելու միջոցներով, ժողովրդի հետ ունեցած կապով, հարուստ հուզաշխարհով: Իսկ եթե նկատի ունենանք, որ մեր վիպերգերում ևս ընդհանուրը տրվում է միայն անհատականությունների միջոցով և միայն այդ ձևով արտացոլվում, ապա միանգամայն պարզ կդառնա նրանց գեղարվեստական կատարելությունը:

Բայց նրանք մեզ այդպես ներկայանում են ոչ միանգամից, այլ աստիճանաբար, սյուժեի զարգացման ընթացքով, կոնկրետ գործողություններով: Նրանք անընդմեջ գործում են և միայն գործով դրսևորում իրենց ուղեգծի պատմական արդարացիությունը և իրենց՝ իբրև կերպարների: Նրանց բախման պատճառներն ու շարժառիթները այնքան կենսական են ու ճակատագրական, որ անմիջապես գործողությունների մեջ են գնում նրանց և հենց այդ ընթացքում էլ բնութագրում: Եթե Բելն ու Աժդահակը, Շապուհն ու հունական կայսրն, օրինակ, հայերի և Հայաստանի վրա հարձակվելով իրենց դրսևորում են իբրև զավթիչներ, ապա Հայկն ու Արամը, Տիգրանն ու Արշակը, Պապն ու մյուսները ազատագրական կռվի ելնելով ու նրանց ջախջախելով՝ իրենց դրսևորում են իբրև հայ էթնոսի կազմավորման մարտիկներ, իբրև հայ ժողովրդի անձնվեր պաշտպաններ: Ազատագրական կռիվը, որ իր հորձանուտի մեջ է առնում հերոսներին ու ստիպում գործել, վճռական ազդակ է հաղորդում նաև նրանց կատարելության պրոցեսին:

Վիպերգերի սյուժեների և նրանց ընթացքով պայմանավորված կերպարների դինամիզմը նոր շունչ է հաղորդում նրանց և դարձնում առավել կենդանի: Նրանք, օրինակ, ազատագրական կռվի են նետվում ոչ միայն հանգամանքների բերումով, պարտքի կատարման համընդհանուր կարգի համաձայն, այլև ներքին մղումով, մտքի և հոգու թելադրանքով: Եվ եթե պատահում է այնպես, որ չեն կարողանում կատարել իրենց ցանկությունը՝ մերկացրած սրով մխրճվել թշնամի զորաբանակների սիրտը, խորապես վշտանում են և, դրանով իսկ, առավել կենդանի ու հուզական կերպարանք ստանում: Մանվելը բարվոք է համարում մեռնել ռազմադաշտում՝ սուրը ձեռքին, քան մահճում՝ հիվանդությունից. Տիգրան Երվանդյանը պատրաստ է իր անձը զոհել, միայն թե ստրկացած չտեսնել իր կնոջը. Տիգրանուհու համար հայրենիքի կորստյան դիմաց մի ընչին կորուստ է իր մահը: Այդպես են գրեթե բոլոր դրական կերպարները: Նրանք առավել կենդանի ու շոշափելի են դառնում մանավանդ կենցաղային երևույթների, անհատական ճաշակի ու սովորությունների մեջ, տխրության և ուրախության պահերին, իրար

հետ ունեցած կապի ու փոխհարաբերության ժամանակ։ Նրանք իրադարձությունների ու մարդկանց անտարբեր նայող արարածներ չեն, միայն գաղափարակիրներ ու ֆանատիկներ, նրանց մեծագույն մասը աշխատավոր ներքնախավերի ներկայացուցիչներ են, առաջադիմականի դորավիգներ՝ թագավորների տիտղոսով՝ միանգամայն պարզ ու հասարակ։ Ոչինչ մարդկային օտար չէ նրանց։ Առասպելական կերպարանք ունեցող մի թագակիր (Տրդատ), որ Տորքին հավասար իր ուժով զարմանք է պատճառում հունական կայսրին, կարող է սիրահարվել խելագար սիրով, դաժան մի տիրակալ, որ արյունով է ներկում գահը (Արշակ) հոգեկան խռովքի պահին կարող է ինքնասպան լինել, հերոսական մի մարդ (Պապ), որին նույնացնում են հունական դիցաբանության հերոս Կիրկեի հետ, կարող է լաց լինել և այդ կերպ ներում խնդրել մի Հարդուց (Մուշեղ), որին հանիրավի կասկածել է, հրեշտակի նման մի կին կարող է տարիներ ոխ պահել և հարմար առիթով վրեժխնդիր լինել իր դժբախտության համար (Փառանձեմ), Թեոդորոս Ռշտունու նման մեկը հանուն ժողովրդի կարող է դրժել իր խոսքը և հետանալ երեխա «բարեկամից», գարձյալ հանուն ժողովրդի մի Դայլ Վահան («Տարոնի պատերազմ») կարող է խորամանկել և գլխովին ջախջախել Բշնամու դորաբանակները և այլն։ Օրինակները շատ են, սակայն բերածներն էլ բավական են համոզվելու, որ կերպարները ներգործում են մեզ վրա և գեղարվեստական հաճույք պատճառում ոչ միայն իրրև ընդհանուրի կրողներ, այլև իրրև անհատականություններ, իրրև կենդանի, հուզական մարդիկ։ Նրանց առկայությունը հարստացնում է վիպերգերի բովանդակությունը, բարձրացնում նրանց գեղարվեստական-ճանաչողական արժեքը։ Իրենց կենդանի, հուզական կերպարներով նրանք որոշակի պատկերացում են տալիս մեր ժողովրդի պատմական զարգացման ընթացքի մասին, որոշակի ուրվագծում նրա անցած էտապները, կամ այն կոլիզիաներն ու կոնֆլիկտները, որ իրենց հորձանուտի մեջ են առել նրանց։

Եվ դա այն պատճառով նաև, որ նրանք դարաշրջանի սոցիալ-քաղաքական իրադարձությունների կրողներն են, դարաշրջանի ամենամտրողական ու ամենավառ արտահայտությունները։ Նրանցից յուրաքանչյուրը, ի տարբերություն էպոսի կերպարների, սերտորեն կապված է ժվյալ դարաշրջանի հետ ու պարփակված է նրա մեջ՝ նրանից ետ ու առաջ չշարժվելու խիստ պայմանով։ Նրանք բնութագրվում են դարաշրջանով, դարաշրջանը՝ նրանցով, նրանք միասնության մեջ են և առանց մեկի դժվար է հասկանալ մյուսը։ Հայկն, օրինակ, կազմավորվում է հայ էթնոսի լինելության պրոցեսում և այդ պրոցեսն է արտա-

ցոլում։ Նրանից հետո եկող կերպարները, Արամից մինչև Տիգրանը, նշված պրոցեսի տարբեր աստիճաններն են ներկայացնում։ Արշակը, Պապը, Վասակը, Մուշեղը, Մոբսես և նոր ժամանակների կերպարները (Մոկաց Միրզա, Ասլան աղա, Զելթունի, Սասունի հերոսական պաշտպաններ, հայդուկներ և այլն) բարձրանում, մին ու մյուսն են ստանում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մեջ և հայկական հզոր պետականության ստեղծման համար թափված ջանքերում։ Նույնը պետք է ասել նաև նորագույն ժամանակների մասին, որոնք Լենինի կերպարով խորհրդանշում են հին աշխարհի վերափոխման և նոր դարաշրջանի, սոցիալիզմի դարաշրջանի սկիզբը։ Այդ կերպարները դժվար է շփոթել իրար հետ, ինչպես որ դժվար է շփոթել նրանց ներկայացնող ժամանակներն ու դարաշրջանները։ Նրանք վերջիններիս ոգին են, նրանց, եթե կարելի է ասել, ծննդյան կենդանի վկայագիրը, նրանք խորապես պատմական են և հենց դրանով էլ խորապես տիպական։

Սրանք են մեր վիպերգական կերպարների կատարելության չափանիշները։ Բայց թևի կլինի այդ բնութագիրը, եթե այս ընդհանուր և ամենևին ոչ լրիվ հատկանիշներին չավելացնենք այն մի քանի կարևոր գծերը, որ բնորոշ են նրանցից յուրաքանչյուրին իբրև անհատականության։ Այս առումով, ամենից առաջ, պետք է նկատենք, որ նրանք մի ստանդարտով չեն ձևված։ Ժամանակը, որ կանխորոշել է վիպերգությունների պեղարվեստական մտածողության աստիճանը, իր կնիքն է դրել կերպարների ոչ միայն հասարակական-քաղաքական նկարագրի, արարքների ու ձգտումների, այլև նրանց աշխարհըմռնման, բնության և հասարակության յուրօրինակ ընկալման վրա, ու նաև դրանով տիպականացրել։

Մեր պատմության հեռավոր ժամանակներում, երբ մարդը դեռևս ամբողջությամբ չէր ազատագրվել բնության խորհրդավոր ուժերի ազդեցությունից, չէր կարող իր հերոսների կերպարն ամբողջացնել առանց դիցաբանության, առանց նրանց դարերով կարծրացած պատկերացումների հետ կապվելու։ Եվ որոշակի նկատելի է, որ հին շրջանի գրեթե բոլոր կերպարները այս կամ այն չափով այդ պատկերացումների հետքերն են կրում, այդ պատկերացումների մարմնացումներն են։ Նրանցից ամենանշանավորն ու ամենատիպականն, օրինակ, Հայկը իր միանգամայն իրական պատմական նկարագրի հետ միասին հանդես է բերում իբրև հունական Օրիոնին հավասար մի համաստեղություն, երկինք բարձրացվելով կապվում է տարվա, ժամանակի հետ, և ապա, իբրև անհաշտ ատելածամարտ ձեռք մեկնում Պրոմեթևսին, Ամիրա-

նին, Արտավազդին ու Մհերին: Այդ գծերի բացակայությունն, անտարակույս, հերոսին դուրս կդներ դարաշրջանից, կդարձներ ժամանակավրեպ, չոր, անարյուն և ոչ տիպական: Դիցաբանական այս և նրա իրական պատմական կերպարի բնորոշ գծերի վարպետ համաձուլվածքով է, որ նա դարձել է դարաշրջանի մարդկանց մտածողության և հասարակական բախումների կրողը, դարաշրջանի ամենատիպական կերպարը:

Եթե Հայկի կերպարին, իբրև անհատականության, բնութագրական է դիցաբանությունը, ապա միջնադարյան վիպերգերի կերպարներից շատերին, դարձյալ պատմական հանգամանքների պատճառով, հոգևկան ցնցումներն ու ավայտանքները, ողբերգական ճակատագիրն ու մահը, այսինքն մարդու մեծ առապանքը, կամ մեծ մարդու կործանումը: Հերոսամարտերի ամենաթեժ պահին նրանք դավադրաբար ընկնում են՝ չհասնելով Հայաստանն ապատագրված: Տիրան Թագավորը խաբեությամբ կուրացվում է, Արշակը, դարձյալ խաբեությամբ, Տիզբոն է կանչվում և շղթայակապ Անհուշ բերդ նետվում, Վասակը մորթաղերծ է արվում և կախվում Արշակի բանտախցում՝ նրա դեմ դիմաց, Փառանձեմը գերի է տարվում և հրեշավոր տանջանքներից հետո սպանվում, Պապը հունական կայսեր հրամանով քեֆի ժամանակ սրախողխող է արվում և այլն: Ողբերգական մահով են մեռնում նաև Քաջ Թոռնիկը, իշխան Խաչիկը և անգամ կենցաղային վիպերգերի հերոսներ Հովհաննեսն ու Աշեն: Իրենց փոթորկոտ հուզաշխարհով ու հզոր բնավորությամբ, երկրին ու ժողովրդին օգտակար լինելու անդուսպ ձգտումով, ողբերգական ճակատագրով ու հերոսությամբ նրանք նշանակալից չափով անհատականանում են՝ նոր առաջընթաց նշանավորելով վիպերգերի տիպականացման արվեստում:

Նոր ժամանակների վիպերգերի ու պատմական երգային բանահյուսության կերպարներում որակ է դառնում միջնադարի վերջին շրջանի վիպերգերում սկիզբ առած սոցիալական տանջանքների ու տառապանքների գիծը և դրանով պայմանավորված բողոքն ու ցասումը, որոնք այժմ արդեն ազգայինից բացի բացահայտ դասակարգային բնավորություն են ստանում («Կոտորածի ու ողբի երգեր», «Գերեվարումների ու պանդխտի երգեր», «Սալգաթի խաղեր» և այլն): Նրանք անհատականանում են գերազանցապես սեփականատիրական անարդար կարգերի դեմ սկսված մասսայական ընդվզումների մեջ, օրավուր շիկացող դասակարգային պայքարի մթնոլորտում:

Իսկ ինչ վերաբերում է նորագույն ժամանակներին, սոցիալիզմի դարաշրջանի վիպական կերպարներին, ապա նրանք, և նրանցից ամե-

նատիպականը՝ «Լենին փաշան» անհատականանում է ոչ միայն իբրև ընդհանուրի կրող՝ իբրև Ռուսաստանի կոմունիստական կուսակցության ստեղծող ու առաջնորդ, Հոկտեմբերյան մեծ հեղափոխության արարիչ ու հեղափոխության հանճար, սովետական պետության հիմնադիր ու դեկավար, հայ ժողովրդի սոցիալիստական վերածննդի շենարարար ու դրոշակակիր, աշխատավոր մարդկության երազանքների մարմնավորում ու խորհրդանիշ, այլև աշխատավոր մասսաների նկատմամբ ունեցած անսահման սիրով, իսկ թշնամիների նկատմամբ տածած ատելությամբ, հեղափոխական արիությամբ ու հաստատակամությամբ, սկզբունքայնությամբ ու հեղափոխական անողոքությամբ, հեռուն տեսնելու բացառիկ կարողությամբ ու պայծառ լավատեսությամբ, անկեղծությամբ, արդարամտությամբ ու անկրկնելի համեստությամբ։ Իսկ եթե դրանց ավելացնենք նրա ջերմ սերն ու հոգատարությունը ընկերների ու ծանոթների նկատմամբ և «աներևակայելի ծարավն ու մղումը դեպի աշխատանքը» (Մ. Գորկի), ապա գրեթե ամբողջացրած կլինենք նրա կերպարն իբրև մարդու, իբրև բացառիկ անհատականության։

Վերոհիշյալ կերպարների տիպական գծերը այն էպոխաների տիպական գծերն են, որոնց մեջ նրանք գործել են ու կազմավորվել, միս ու արյուն ստացել։ Այս առումով տեղին կլինի նկատել, որ միշտ էլ իբրև գեղարվեստական կերպարի ստեղծման օրինաչափություն, տիպականը պատմական է, պատմականը՝ տիպական։

* * *

Արդեն նկատել ենք, որ ստեղծագործության գեղարվեստականության չափանիշը կերպարի կատարելությունն է, և որ, հետևաբար, առանց վերջինի անիմաստ է խոսք բացել գրական ու բանահյուսական ստեղծագործությունների գեղարվեստականության մասին։ Այդ բացահայտ ճշմարտություն է։ Սակայն պետք է նկատել, որ ստեղծագործության գեղարվեստականությունը կերպարների կատարելությամբ չի սպառվում։ Այստեղ հսկայական դեր են կատարում նաև պատկերավորման ու արտահայտչական միջոցները, երկի ստեղծման ու կազմավորման պրոցեսին մասնակցող ամենաբազմազան ձևարկներն ու գրական տեխնիկան, առանց որոնց վարպետ օգտագործման անհնար է «նյութին տալ քիչ թե շատ կատարյալ գեղարվեստական ձև»[1]։ Այս

[1] Մ. Գորկի, Գրական հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 173։

առումով միանգամայն ճիշտ կլինի վիպերգերի ու պատմական երգային բանահյուսության արվեստի մեր համառոտ բնութագիրը, եթե, ինկուզ հապանցիկ, չանդրադառնանք վերոհիշյալ գրական եղանակներից ու տեխնիկայից մի քանիսին՝ կոմպոզիցիային, պատմելաձևին և կերպարատեղծման արվեստին:

Իսկ մինչ այդ նկատենք, որ պատկերավորման ու արտահայտչական միջոցները իրենց հարստությամբ ու ֆունկցիոնալ հատկանիշներով առանձնապես չեն տարբերվում գրականությանը հայտնի պատկերավորման ու արտահայտչական միջոցներից, որոնք նրանց նման առհասարակ միշտ կոնկրետ են ու պատկերավոր, հստակ են ու ճշգրիտ, դիպուկ են ու կտրուկ, հակիրճ են ու հզոր, կենդանի են ու հուզական: Եվ ապա, որ ամենակարևորն է, հաջողությամբ են արտացոլում իրականությունը և հաջողությամբ էլ տիպականացնում կերպարներին ու այն միջավայրը, որի մեջ նրանք գործում են: Իրրև գեղարվեստական մտածողության որոշակի աստիճանի արտահայտություններ նրանք ձևավորվել են ոչ միանգամից, այլ աստիճանաբար, վիպերգությունների բազմաթիվ սերունդների ստեղծագործական ջանքերի լարումով, արտահայտչական և պատկերավորման նորանոր շեշտերի ու երանգների կուտակումով: Եթե հին վիպերգերին ու պատմական երգային բանահյուսությանը բնորոշ են սիմվոլներն ու փոխաբերությունները, անձնավորումն ու հիպերբոլան, դիցաբանությունն ու ժողովրդական ստուգաբանությունները, ապա միջնադարի ու հետագա ժամանակների գործերին՝ համեմատությունները ու համադրությունները, կրկնությունները ու կրկնակները, հակադրությունները ու էպիտետները, դարձվածքներն ու շրջասույթները, հարուստ բառապաշարն ու նրա շերտերը, նոր բառակապակցությունները ու ընդհանրապես պատկերավորման ու արտահայտչական միջոցների մեզ հայտնի բոլոր տեսակները: Մենք այստեղ չենք անդրադառնում նրանց կոնկրետ դրսևորումներին, այդ անհրաժեշտ չափով արված է վիպերգերին ու պատմական երգային բանահյուսությանը նվիրված մեր ուսումնասիրության նշված չորս գրքում, այստեղ ընդգծենք միայն, որ նրանք հասկանալի պատճառներով հավասար ուժով չեն հնչել բոլոր ժամանակների և վիպերգությունների բոլոր սերունդների շուրթերին:

Նույնը վերաբերում է նաև վիպերգերի և պատմական երգային բանահյուսության ստեղծագործությունների կոմպոզիցիային: Չխոսելով նրա տարբեր մասերի համաչափության, սերտ համակցության, կուռ կառուցվածքի և անկաշկանդ ընթացքի մասին, որ զարգացման երկար

ճանապարհի արդյունք են, մենք առաջին պլան ենք քաշում առանձնապես սյուժենները, որոնք եթե հին ժամանակների վիպերգերում հանդես են գալիս գերազանցապես միջադեպերի տեսքով, առանց միջնորդավորվող օղակների, որպես մի պարզ պատմություն, ապա միջնադարյան և հետագա շրջանի հյուսվածքներում համեմատաբար բարդանում են, գլխավոր սյուժեի հետ միասին հանդես են գալիս երկրորդական, այսպես կոչված դուստր սյուժեներ և ընդունում բազմաճյուղ և բազմագիծ ընթացք։

Սյուժեն կոմպոզիցիայի հիմքն է, առանց նրա, կարելի է ասել, գեղարվեստական երկ գոյություն չունի։ Բայց մի սյուժեն համապարփակ չէ, այն իրականության մի բնագավառ է, և որքան էլ հմտորեն հյուսված լինի, չի կարող և չի ներկայացնում կյանքը ողջ բազմազանությամբ։ Այդ կարող են անել միայն սյուժենների բազմաթիվ խմբեր, սյուժենների հարաբերությունը։ Միայն նրանց հարաբերությունն ու բազմազանությունը կարող է արտացոլել կյանքը իր ամբողջության մեջ, միայն նրանց տեսակներով ու հատկանիշներով կարող է որոշվել արտացոլվող իրականության բնութագիրը։ Այս առումով շատ բնորոշ է այն փաստը, որ մենք մեր պատմության հին շրջանի կամ, ինչպես ընդունված է ասել, հեթանոսության շրջանի մասին գաղափար ենք կազմում ոչ միայն հայ էպոսի կազմավորումն արտացոլող սյուժեներով («Հայկ և Բել», «Հայկյան Արամ»), այլև նրան հաջորդող «բնակության տեղ» նվաճելու (Արամանյակի, Մանավազի, Բազի և այլոց արշավը հարավից հյուսիս), արդեն ձևավորված հայրենիքի պաշտպանության («Տիգրան և Աժդահակ»), հայ պետականության ստեղծման («Արտաշես և Սաթենիկ»), գահակալական կռիվների («Արտաշես, Երվանդ»), կենցաղային («Արգավան, Արտավազդ»), սոցիալական ընդվզումների («Արտաշես, Արտավազդ») սյուժեներով և այլն։

Իրենց հարաբերությամբ ու բազմազանությամբ աչքի են ընկնում առանձնապես միջնադարյան և հետագա ժամանակների վիպերգերի սյուժենները։ Նրանցով է, որպես կանոն, գծվում հետագա դարերի հասարակական-քաղաքական կյանքի նկարագիրը։ Եթե, օրինակ, միջնադարն ու նոր ժամանակները մեր առաջ կանգնում են այնպիսի սյուժեներով, որոնց մեջ բարձր հնչում են քրիստոնեության տարածումն ու պայքարը հեթանոսության դեմ, հայկական հզոր պետականության ստեղծումն ու պայքարը կենտրոնախույս ուժերի դեմ, ազգային-ազատագրական հերոսամարտերը բյուզանդական ու պարսկական զավթիչների դեմ, աշխարհիկ ոգու բռնկումներն ու նոր հոգեբանության կազ-

մավորումը, կոտորածները, գերեվարումներն ու պանդխտությունը, սոցիալական հուժկու ընդվզումներն ու հեղափոխական շարժումները, ապա նորագույն շրջանի երգերում՝ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունն ու Հայաստանի Նոյեմբերը, քաղաքացիական կռիվներն ու Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմը և այլն:

Բայց ժամանակից սերված ու նրանով պայմանավորված այս ժանրերը, որ հայ ժողովրդի պատմական զարգացման ընթացքն են ուրվագծում, իրարից տարբերվում են ոչ միայն իրենց բովանդակությամբ ու բնույթով, այլև որոշակի ընդգծված հատկանիշներով, որոնցից առավել ակնառուները նրանց կոնկրետ պատմականությունն է, հերոսականությունը, ողբերգական որոշակի երանգը, նորի արարումն ու անհատնում հավատը գալիքի նկատմամբ: Եվ ապա, բոլոր այս ժանրերն անխտիր բարձրացնում են հասարակական-քաղաքական, համազգային ու համամարդկային հրատապ խնդիրներ ու պրոբլեմներ: Կենցաղային այս ժանրերն անգամ ժողովուրդների բարեկամության ու մարդու կատարելության գաղափարն են հնչեցնում: Նրանք տոգորված են, ի վերջո, մարդուն հերոսացնելու կենսական հզոր ուժով:

Բայց այս ժանրերն ինքնիրենց չեն ստեղծվում և, առավել ևս, ծավալվում ու զարգանում: Նրանց հիմքն ու առաջմղիչ ուժը նրանց կյանքի կոչող դարաշրջանի հասարակական-քաղաքական կոնֆլիկտներն են ու կոլիզիաները, որոնց բնույթով ու բովանդակությամբ էլ որոշվում են նրանք: Այս մասին նախորդ էջերում արդեն ըստ ամենայնի խոսվեց: Այստեղ հիշենք միայն այս ժանրի ծավալման այն աստիճանները (նախադրություն, հանգույց, գործողության զարգացում, դագաղնակետ ու հանգուցալուծում), որոնք գրականության տեսաբանները զարմանալիորեն մինչև այժմ շարունակում են գրական երկի մենաշնորհը համարել, մոռանալով, որ գրական պրոցեսի ինչպես բազմաթիվ օրինաչափություններ, այնպես էլ դրանք բանահյուսությունից են անցել գրականությանը: Եվ միանգամայն իրավացի է Դիդրոն, երբ նկատում է, որ «պոետական մտածողությունը գոյություն է ունեցել այն ժամանակ, երբ դեռևս չի եղել ոչ մի պոետ»[1]: Մ. Գորկին և աշխարհի բոլոր մեծերը բազմիցս նշում են, որ արվեստի ակունքները գտնվում են ժողովրդական բանահյուսության մեջ: Այնպես որ խոսել այս ժանրերի ծավալման աստիճանների և ընդհանրապես՝ գրական պրոցեսի ու տեխ-

---

[1] *Дени Дидро*, Собр. соч. в десяти томах, том V, М.—Л., 1935—1947, с. 346.

նիկայի մասին, նշանակում է խոսել բանահյուսական արվեստին բնորոշ օրինաչափությունների մասին: Տվյալ դեպքում՝ վիպերգական սյուժեներին սկզբնապես բնորոշ գծերը գրականից տարբերվում են ոչ թե իրենց քանակով, այլ իրենց ոչ բարդ և ոչ միջնորդավորվող դրսևորումներով: Նրանցից որ մեկն էլ որ վերցնելու լինենք, ամենաակնառու հատկանիշները, ինչպես նկատել ենք, մնում է սյուժեի ծավալման աստիճանականությունը, պարզությունն ու անկաշկանդ ընթացքը: Եվ որ նույնքան բնորոշ է, նրանք ոչ թե անորոշ սկիզբ ունեցող, անվերջ շարունակվող կամ ցանկացած տեղում ընդհատվող գործեր են, այլ խնձացիորեն մտածված և սերտորեն համակցված մասերի ամբողջություն, գեղարվեստական կուռ կոմպոզիցիաներ:

Այստեղ որոշիչ դեր են կատարում ոչ միայն սյուժեի ծավալման եղանակները, այլև պատմելու եղանակները, պատմելաձևը, որոնց մեջ, լայն առումով, մտնում են թե՛ կոնֆլիկտներն ու կոլիզիաները, կերպարների սիստեմը, նրանց փոխադարձ կապի ու հարաբերության մեջ դնելու արվեստը, նրանց երկխոսություններն ու մենախոսությունները և թե՛ վիպերգուի ասի առկայությունը, լիրիկական շեղումները, բնության ժլատ նկարագրությունները, անկողմնակալ շարադրանքը, նամակագրության ձևարկը, պատմությունը որոշակի տեղում ընդհատելն ու որոշակի տեղից սկսելը, չափի զգացումը և այլն: Եվ որ գլխավորն է, դրանք արվում են ոչ թե տարատամ ու աննպատակ, այլ իրականության ու մարդկանց ճշմարտացի վերարտադրելու, ունկընդիրների վրա ներգործելու որոշակի նպատակադրումով, արվեստի կատարյալ գործեր ստեղծելու բուռն ձգտումով:

Արտահայտչական ու պատկերավորման միջոցների, կոմպոզիցիայի, սյուժեների, պատմելաձևի և ընդհանրապես գրական պրոցեսի ու տեխնիկայի վարպետ օգտագործումով վիպերգուները ի վերջո ստեղծում են կերպարներ, կամ իրական, պատմական դեմքերին բարձրացնում են կերպարների աստիճանի, նրանց մեջ խտացնելով դարաշրջանի այս կամ այն հատկանիշը, կամ դարաշրջանն ամբողջությամբ վերցրած: Պետք է նկատել, սակայն, որ կերպարաստեղծման միջոցներն ու արվեստը նույնպես բոլոր ժամանակներում նույն բովանդակությունն ու մակարդակը չունեն: Իբրև պատմական կատեգորիաներ նրանք հասարակական տարբեր հարաբերությունների ու գեղարվեստական տարբեր մտածողության արդյունք են, որոնք արվեստի շարունակականության օրենքով աստիճանաբար հարստանում են՝ ձեռք բերելով կերպարաստեղծման նոր երանգներ ու ֆունկցիաներ:

Հին շրջանից որքան ետ ենք գալիս, այնքան որոշակի է երևում կերպարաստեղծման արվեստի առաջընթացը: Եթե հին վիպերգերում այդ միջոցներից առաջնակարգն ու վճռականը գերազանցապես միֆական բովանդակություն ունեցող կամ դեռևս միֆական մտածողության վրա խարսխված հիպերբոլան է, սիմվոլներն ու ալեգորիաները, ժողովրդական ստուգաբանություններն ու դիմանկարային բնութագրումները և այլն, ապա միջնադարյան ու հետագա շրջանի վիպերգերում դրանց ավելանում են հեղինակային ուղղակի բնութագրումները, հոգեբանական ծալքերի նկարագիրը, արագընթաց ու շեշտակի գործողությունները, լեզվաոճական նոր ու բազմազան ձևերը, վիպերգուների գաղափարական-հուզական բացահայտ վերաբերմունքը և շատ ու շատ այլ միջոցներ ու հնարանքներ: Հենդ այդ պատճառով էլ նոր որակ է ստանում ոչ միայն կերպարաստեղծման արվեստը, այլև հենց ինքը կերպարը: Վաղեմի վիպերգական կերպարները նկատելիորեն իջնում են իրենց պատվանդանից, երկփեղկվում են, խարխլվում, տեղը զիջելով նորերին, որոնք, ի տարբերություն հների, ոչ թե արդեն տրված, պատրաստի, ավարտուն կերպարներ են, որոնց մասին վիպերգուները միայն պատմում են, այլ գոյանում են աստիճանաբար, ծավալվող գործողությունների ընթացքով, հանգամանքների բերումով, սոցիալ-քաղաքական, կենցաղային որոշակի միջավայրում: Բայց նրանք ոչ միայն ձեռք են բերում նոր հատկանիշներ, հանդես գալիս նոր անակնկալ կողմերով ու երանգներով, այլև որոշակի «հակասություններով», մեզ հայտնի վարքագծին տարբեր և, նույնիսկ, հակադիր վարքագծով: Դաժան տիրակալ Արշակը, ինչպես արդեն նկատել ենք, որ հոր արյունով էր ներկում գահը, Անհուշ բերդում վերածվում է մի սովորական մահկանացուի, արտաքուստ մեղմ ու խաղաղ Փառանձեմ թագուհին կյանքի վերջում դառնում է վրիժառու և հայրենիքի անձնուրաց մարտիկ: Այդպիսի կերպարները շատ են և բոլորին հիշելու հարկ չկա: Այստեղ նշենք միայն, որ նրանք աստիճանաբար օժտվում են բարդ ու հարուստ հուզաշխարհով, կյանքը վերափոխելու անհողդողդ կամքով, հեղափոխական մարդասիրությամբ, հզոր բանականությամբ, հնարամտությամբ: Ընդհանուրն իրենց մեջ կրելով, տոհմական որոշ կապեր պահպանելով հանդերձ նրանք խորապես մարդկայնանում են, անհատականանում, իսկ նրանցից մեկը («Լենին փաշեն») թեև հասցվում է Պրոմեթևսին հավասար բարձրության, բայց դարձյալ մնում է իբրև ամենամարդկային մարդը աշխարհում:

Ի վերջո շատ կարևոր է նկատել, որ պատկերավորման, արտահայտչական և ընդհանրապես վիպաստեղծման բոլոր միջոցները որքան

էլ բազմազան ու հարուստ լինեն, դեռևս ստեղծագործության կատարելության երաշխիք չեն: Նրանք փակ երգեհոնի նման լուռ են ու անկյանք, քանի դեռ նրանց չի դիպել վարպետ ձեռքը: Եվ ինչպես նրանք կենդանանում են երաժիշտ վիրտուոզի հրաշագործ մատների շնորհիվ, այնպես էլ գեղարվեստական երկը, տվյալ դեպքում վիպերգերն ու պատմական երգային բանահյուսության ստեղծագործությունները, ձեվավորվում, կյանք են ստանում արտահայտչական և մյուս բոլոր նույնքան հրաշագործ միջոցների շնորհիվ, նրանց վարպետ գործադրումով:

ԲՆԱԳՐԵՐ

ՀԻՆ ՇԻՋԱՆ

1. ՀԱՅԿ ԵՎ ԲԷԼ

«Սկիզբ և երևելիք առաջինքն ի դից, և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և բազմամարդութեան: Եւ ի սոցանէ հատեալ գոան ազգ սակայիցն, անհեղեղք, յաղթանդամք մարմնով և վիթխարիք. որք յղացեալ ամբարտաւանութեամբ՝ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն, և ի նոյն լինէին ի գործ անկեալք. յոր հողմ ահագին իմն և աստուածային շնչեցեալ ի դից ցասմանէ՝ ցրէ զամբարտակն, և մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ, աղմուկ շփոթի ի մէջ արկանէին: Յորոց մի էր և Յապետոսթեանն Հայկ, անուանի և քաջ նախարար, կորովածիգ և հաստատակեղն»:

Եւ այս կարգ պրուցաբանութեան դադարումն առցէ. զի հանդէս է մեր՝ ոչ զպատմութեանն ողջաբանութիւն գրել, այլ ջանալ ցուցանել զառաջինսն մեր և զբուն հին նախնիս: Արդ ի նոյն մատենէ սկսեալ ասացից. Յապետոսթէ, Միրոդ, Սիրաթ, Թակլադ. որ է Յաբեթ, Դոմեր, Թիրաս, Թորգոմ: Յետ որոյ նոյն ժամանակագիր յառաջ մատուցեալ ասէ. Հայկ, Արամանեակ, և զայլսն ի կարգի, զորոց յառաջագոյն ասացաք:

Ա. Յաղագս ապստամբութեանն Հայկայ

Այս, ասէ, Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ: Սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ, և ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն՝ միապետել ի վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց: Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնավորութեանն Բելայ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն խօլաց և ուժաւորաց: Քանզի անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր, սուր ի կող

ընկերի իւրոյ ձգելով՝ ջանային տիրել ի վերայ միմեանց. ուր պատահմունք ի դէպ ելանէին Բելայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր: Որում ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ օնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց, որդւովք, արամբք զօրաւորօք, թուով իբրև երեքհարիւր, և այլովք ընդօծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղխիւ: Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամանեկայ»: Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս:

«Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արևմուտս հիւսիսոյ, գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտի Հարք, այս ինքն թէ հարք են ասէին բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ: Շինէ և զիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշէն»: Յիշի և աստանօր ի պատմութեանս՝ ի հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ, առ երկայնանստիւ միով լերամբ, բնակեալ յառաջագոյն արք սակաւք, ինքնակամ հնազանդեալ դիւցազիննն: Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անդիրս:

Բ. Յաղագս պատերազմին եւ մահուանն Բելայ

Եւ յառաջ մատուցեալ զբանս իւր ասէ, թէ ի հաստատել Տիտանեանն Բելայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան՝ առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ արամբք հաւատարմօք, գալ նմա ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ: «Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց. այլ ջեռուցեալ մեղկեա զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուդ, և հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարտութեան, ուր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութեան»: Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամաւորն Բելայ՝ խստութեամբ պատասխանեաց: Դառնայ առաքեալն անդրէն ի Բաբելովն:

Ապա զօրաժողով լինի ի վերայ նորա Տիտանեանն Բէլ ամբոխիւ հետևակ զօրաց. գայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադմեայ: Փախստական լինի Կադմոս առ Հայկ, քաջընթացիկս առաջի իւր առաքէ. «Դիտեա՛, ասէ, ո՛վ մեծդ դիւցազանց, զի զիմեալ գայ ի վերայ քո Բէլ յաւերժիւք քաջօք և երկնադիզօք հասակօք սկայիւք մրցողօք: Եւ իմացեալ իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ՝ փախեայ, և

գամ աւասիկ տագնապաւ: Արդ՝ աճապարեա խորհել զոր ինչ գործելոց
եա»:

Իսկ Բէլն, յանդուգն և անճոռնի զօրութեամբ ամբոխին, որպէս
յորձան ինչ սաստիկ ընդ զառ ի վայր հեղեղեալ՝ փութայր հասանել ի
սահմանս բնակութեանն Հայկայ, ի սիրտ և ի մարմին վստահացեալ
արանց զօրաւորաց: Աստ ուշիմ և խոհեմ սակայն, քաջագանգուրն և
խայտակնն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռունս, արս քաջս և
աղեղնաւորս, թուով չոյժ նուագունս, և զայլսն ևս որ ընդ իւրով ձե-
ռամբ. հասանէ չկոր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանուսս ունե-
լով չինքեան ձկունս: Եւ կոչեցեալ զզօրս իւր՝ ասէ ցնոսա. «Յելանելն
մեր հանդէպ ամբոխին Բելայ՝ դիպել ջանասցուք տեղւոյն, ուր անցեալ
կայցէ ի մէջ խոտան քաջացն Բէլ: Զի կամ մեռցուք, և աղխ մեր ի ծառա-
յութիւն Բելայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ՝
ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք չաղթութիւն ստացեալք»:

Եւ չառաջ կոչս անցեալ բովանդակ ասպարէզս՝ հասանեն ի միջոց
ինչ դաշտաձև՝ լերանց բարձրադունից: Եւ չաջմէ ջուրց հոսանաց ի
բարձրաւանդակում կուռ կալով ի տեղւոջ, ի վեր զերեսս ամբարձեալ՝
երևեցաւ նոցա բազմութիւն անկարդ հրոսակի ամբոխոյն Բելայ, ցան և
ցիր չանդուգն չարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով. իսկ Բէլ հեզ
և հանդարտ ամբոխիւ մեծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ոստոյ միոյ,
իբրև ի դիտանոցի: Ծանեաւ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին, չորում
Բէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ ընտրիւք և վառելովք ոմամբք. և
երկար միջոց ճանապարհի ընդ նա և ընդ ամբոխն: Եւ ինքն գլխանոց
ապուցեալ երկաթի, նշանաւորօք վերջիւք, և տախտակս պղնձիս թիկանց
և լանջաց, և պահպանակս բարձից և բազկաց. զօտևորեալ զմէջսն, և
չահեկէ զսուրն երկսայրի. և նիզակ անարի ի ձեռին իւրում աջոյ, և
չահեկումն վահան, և ընտիրք չաջմէ և ի ձախմէ: Եւ տեսեալ Հայկին
զՏիտանեանն կուռ վառեալ, և զարս ընտիրս ընդ նմա աջինս և ահե-
կինս՝ կարգէ զԱրամանեակն երկու եղբայրք ընդ աջմէ, և զԿադմոս և
զայլս երկուս չորդոց իւրոց ի ձախմէ, զի արք կորովիք էին չաղեղն
և ի սուսեր. և ինքն առաջի, և զայլս հրոսակին զկնի իւր կարգեաց.
երեքանկիւնի իմն կարգեաց ձևով, հանդարտ չառաջ մատուցեալ:

Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս՝ ահագին
դղրդմունս ի վերայ երկրի առնէին շահատակելով, և ահս պակուցա-
նողս տարաղուզ չարձակմանցն սկայապունքն զմիմեամբք արկանէին:
Անդ ոչ սակաւք չերկոցունց կողմանց արք չաղթանդամք բերանով սրոյ
դիպեալք՝ տապալ չերկիր կործանէին, և մարտն չերկոցունց կողմանց
մնայր անպարտելի: Զայսպիսի անակնունելի դիպուած տարակուսանաց

տեսեալ արքայն Տիտանեան զարհուրեցաւ, և ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջոտնեալ ելանէր. քանզի խորհէր ի միջոցի ամբոխին ամրանալ, մինչև հասցէ բովանդակ զօրն, զի միւսանգամ ճակատ յօրինեսցէ: Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զլայնալիճն, դիպեցուցանէ զերեքթևանն կլիծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն. և այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փշէ զոգին: Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան՝ փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց: Եւ վասն այսորիկ այսչափ բաւական լիցի ասել:

Բայց զտեղի ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այսորիկ աղագաւ և գաւառն այժմ անուանի Հայոց ձոր: Իսկ զբլուրն, ուր քաջամարտիսքն անկաւ Բէլ՝ անուանեաց Հայկ Դերեզմանս. որ այժմ ասին Դերեզմանակք: Բայց զդիակն Բելայ պաճուճեալ դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, և թաղել ի բարձրաւանդակ տեղւոջ, ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց: Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք:

2. ՀԱՅԿ ԵՒ ԲԵԼ

Եւ Բէլն Տիտանեան ի վեր կարծէր զինքն քան զամենայն ազգս մարդկան, զիւրն ոչ ճանաչելով զբնութիւն, այլ զամենայն ազգս մարդկան ի ծառայութիւն իւր կոչէր: Ապա յայնմ ժամանակի Հայկն Աբեթածին ոչ կամեցաւ հնազանդել ի ծառայութիւն Բելայ արքային. արհամարհեաց զնա աստուած կոչել: Անդ Բէլ ի վերայ Հայկին յարձակեալ մարտիւ, իսկ Հայկն արի՝ աղեղամբ հալածեաց զնա:

Արդ՝ այս է Հայկն, որ ծնաւ զԱրամենակ զորդի իւր ի Բաբելոն: Եւ ծնաւ Արամենակ ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Արամայիս: Եւ ծնաւ Արամայիս ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Ամասիա: Եւ ծնաւ Ամասիա ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Գեղամ: Եվ ծնաւ Գեղամ ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Հարմայ: Եւ ծնաւ Հարմայ ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Արամ: Եւ ծնաւ Արամ ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Արայն Գեղեցիկն:

Արդ՝ այս են անուանք ազգածինն արանց, անդրանկելոցն ի Բաբելոն, գնացելոցն ընդ կողմանս հիւսիսոյ յերկիրն Արարադայ: Զի չուեալ խաղաց գնաց Հայկն ի Բաբելոնէ կնաւն և որդւովքն և ամենայն աշխուժ հանդերձ, և չոգաւ բնակեցաւ յերկիրն Արարադայ, ի տանն որ

ի լեռնոտինն, որ զառաջինն շինեալ էր Զրուանայ հաւրն՝ և եղբարբքն հանդերձ։

Եւ ապա ետ գնա Հայկն կալուած ժառանգութեան Կադմեայ թոռին իւրում որդւոյն Արամենակայ։ Եւ ինքն չուեաց գնաց անտի ևս ի հիւսիսակողմն և չոգաւ բնակեցաւ ի բարձրաւանդ դաշտավայրի միջ. և կոչեցաւ անուն դաշտին այնորիկ Հարք, յանուն Հարցն։

Իսկ երկիրն ըստ նմին պատշաճի կոչեցաւ անուն Հայք, որ են հայազամբք հանդերձ։

Եւ արդ՝ այս Հայկ հզաւր զաւրութեամբ և բարի անձամբ և կորովի ազեղամբ և մարտիկ յոյժ։

Յայնմ ժամանակի թագաւորեաց ի Բաբելոն որսորդ հսկայ Բէլն Տիտանեան, ճոխն չաստուածացեալ, որոյ հզաւր զաւրութեամբ և սաստիկ յոյժ գեղ պարանոցի իւրոյ։ Եւ էր իշխան ամենայն ազգացն, որ սփռեցան ի վերայ երեսաց ամենայն երկրի։ Որոյ արարեալ առ աչաւք կախարդութեամբ հնարս, և հրամանս թագաւորականս ամենայն ազգաց. և հպարտութեամբ ամբարտաւանութեան իւրոյ կանգնեաց զպատկերն իւր, և ետ երկիր պագանել իբրև աստուծոյ, և զոհս մատուցանել։

Եւ վաղվաղակի կատարէին ամենայն ազգքն զհրամանս նորա. բայց մի ոմն Հայկ անուն, նահապետ ազգացն, ոչ հնազանդեցաւ ի ծառայութիւն նորա. և ոչ կանգնէր ի տան իւրում զպատկեր նորա, և ոչ մեծարէր զնա աստուածաւրէն շքով։

Եւ էր անուն նորա Հայկ, ընդ որում ծնաւ արքայի Բէլայ ոխութիւն մեծ։ Եւ զաւրաժողով լինի Բէլ արքայ ի Բաբելոն և դիմէ գնայ ի վերայ Հայկայ սպանանել զնա։

Գայ հասանէ յերկիրն Արարադայ ի տունն, որ էր նոցա հայրենի, զոր շինեալն էր ի լեռնոտին. և Կադմոս փախստական գնաց ի Հարք առ հայր իւր ազգ առնել նմա. և ասէ. «Դիմեալ գայ Բէլ արքայ ի վերայ քո, և եկն եհաս մինչ ի տուն անդր. և ես կնաւ իմով և որդւովք ահաւասիկ գամ փախստական»։

Առնու Հայկն զԱրամենակ և զԿադմոս զորդի իւր. և զորդիս նոցա և զորդիս եւթանեցունց դստերաց իւրոց, արս հսկայս և նուաղունս թուով։

Եւ ի դիմի հարկանի Հայկն Բէլայ արքայի. և ոչ կարաց զդէմ ունել բազմութեան արանց հսկայից սպառազինաց։

Անդ ի դիմի հարկանի Հայկն Բէլայ, և կամեցաւ ըմբռնել զնա Բէլ ի բուռն իւր։ Խոյս ետ Հայկն յերեսաց նորա, և գնայր նա փախստական. և Բէլ զհետ նորա երթայր պնդագոյն հանդերձ զինակրաւն իւրով։

Ջտեղի կալաւ Հայկն և ասէ զնա. «Ձի՞ պնդեալ գաս զհետ իմ.

դարձիր անդրէն ի տեղի քո, զի մի՛ մեռանիցիս այսաւր ի ձեռաց իմոց. քանզի ոչ վրիպի նետ իմ իմիք»: Պատասխանի ետ Բէլ, և ասէ. «Վասն այնորիկ, զի մի անկցիս ի ձեռս մանկտւոյ իմոյ և մեռանիցիս. այլ եկ ի ձեռս իմ, և կեաց ի տան իմում խաղաղութեամբ, ունելով ի գործս զմանկունս ի տան իմոյ զորսականս»:

Պատասխանի ետ նմա Հայկն և ասէ. «Շուն ես դու և չերամակէ շանց՝ դու և ժողովուրդ քո: Եւ վասն այնորիկ թափեցից իսկ այսաւր ի քեզ զկապարճս իմ»: Եւ արքայն Տիտանեան սպառազինեալ, և վտահացեալ ի կուռ սպառազինութիւն անձին իւրոյ:

Եւ Հայկն Աբեթայն մերձենայր և ունէր ի ձեռին իւրում զաղեղն, որպէս հեծան հզաւր մայրափայտեայ: Եւ Հայկին զտեղի կալեալ պատրաստի ընդդէմ նորա աղեղամբ: Եւ կանգնէ զկապարճան ի գետնոյ ընդ ինքեան չաւղ սկայաւրէն կամարին, և ընդ գիրկս մտեալ՝ զաւրութեամբ հարկանէ նետիւ զտախտակս երկաթիս, և ընդ պղնձի վահանն ի թափ անցուցանէ ընդ մսեղէնն արձանն, չերկիր խարսխեալ վտարեալ նետն. և վաղվաղակի չերկիր կործանեալ զաստուածակարծեալ հսկայն. և զաւրք նորա փախստական լինէին: Եւ նոքա զհետ մտեալ թափեցին ի նոցանէն երամակս ձիոց և ջորեաց և ուղտուց:

Եւ Հայկն դարձաւ ի տեղի իւր. և չոգաւ կալաւ Հայկն զերկիրն Արարադայ, և բնակեցաւ անդրէն ազգաւ իւրով մինչև ցայժմ: Եւ ի ժամանակի մահուան իւրոյ ետ զնա կալուած ժառանգութեան կազմեալ թոռին իւրում, որդւոյ Արամենակայ եղբաւր Հարմայի: Եւ Արամենակայ հրամայեաց երթալ ի հիւսիսակողմն, ուր ինքն իսկ դադարեաց զառաջինն:

Եւ եղև չետ մահուանն Հայկայ առ Արամենակ զորդիս իւր և զդստերս իւր և զարս նոցա, և զքորս եւթանեսին և զարս նոցա, զուստերս և զդստերս նոցա և զամենայն աղխ իւր, և չոգաւ բնակեցաւ անդէն չառաջնումն գաւառին, զոր կոչեցին չանուն Հարց իւրեանց՝ Հարք: Ապա գնայ անտի ևս Արամենակ ի հիւսիսակողմն, և երթեալ իջանէ չերկիր մի խորին դաշտավայր, որ կայ ի մէջ բարձրաբերձ լերանց. և հատանէ անցանէ ընդ մէջ նորա գետ չորդահոսան. որով անցեալ Արամենակ բնակէ անդ, և շինէ զերկիրն կալուած ժառանգութեան իւրոյ՝ զվայրն լեռնակողմն և զառապար:

Զկնի Արամենակայ որդի նորա Արամայիս շինէ իւր ի վերայ գետեզերն տուն բնակութեան, և անուանէ զանուն նորա ըստ անուան իւրոյ Արամայիր: Եւ որդիքն նորա սկսան բազմանալ և լնուլ զերկիրն:

Եւ շինեցին գաւառք. մեռաւ և Արամայիս, և կալաւ զերկիրն որդի նորա Ամասիա: Եւ ապա չետ նորա Գեղամ: Մեռաւ Գեղամ, և տիրեաց

որդի նորա Հարմայ. ապա որդին Հարմայի Արամ: Ապա որդի նորա Արայն Դեղեցիկ, որով անուն իսկ դաշտին այնորիկ կոչեցաւ յանուն Այրարատ:

3. ՀԱՅԿԱՆ ԱՐԱՄ

Ա. Յաղագս ընդ առեւելեայս պատերազմին եւ յաղթութեանն, եւ մանուան Նիւարեն Մադեսայ

Եւ վասն որ հաճոյ թուեցաւ մեզ դաշխատութիւնն, որ ի վերայ քոյ հրամանիդ, համարել հնշատութիւն, քան զառ ի յայլոցն որ ի կերակրոց և յըմպելեաց լինին խրախճանութիւնք՝ հաւանեցաք անցանել սակաւուք և ընդ կարգ բանից պատերազմացն որ ի Հայկեանն Արամայ: Սա այր աշխատասէր և հայրենասէր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիր, լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենեացն, քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենեացն և հարազատից արեան նորա տիրել արանց օտարաց:

Այս Արամ, սակաւուք ամօք յառաջ քան զտիրելն Նինոսի Ասորեստանեայց և Նինուէի, նեղեալ սա յաղգացն որ շուրջ պիւրեաւ՝ ժողովէ զբազմութիւն ընտանի արանց քաջաց և աղեղնաւորաց, և որք ի տէգ նիզակի կամակարողք, նորատիք և հարուստք յոյժ և յաջողաձեռնութիւն իսկ, և երեսաւորք ի սիրտ և ի պատրաստութիւն պատերազմի, իբր թէ բիւրս հինգ: Պատահէ Մեդացւոցն երիտասարդաց, որոց առաջնորդէր Նիւբար ոմն ասացեալ Մադէս, այր հպարտ և պատերազմասէր, որպէս ցուցանէ նոյն ինքն պատմագիրն, յեղերս սահմանացն Հայոց: Որոց միանգամ քուշանաբար հինիւ ամբակակոխ արարեալ զսահմանս Հայոց՝ ծառայեցոյց ամս երկուս: Որում յանկարծօրէն ի վերայ հասեալ Արամ յառաջ քան զծագել արեգական՝ սատակեաց զբազմութիւն ամբոխիցն, և զնոյն ինքն զՆիւբարն զկոչեցեալն Մադէս ձերբակալ արարեալ ածէ յԱրմաւիր, և անդ ուրեմն ի ծայրս աշտարակի պարսպին ցից վարեալ երկաթի ընդ ճակատն, յորմն վարսել Հրամայէ, ի տեսիլ անցաւորաց և ամենայն եկելոց անդր. և դաշխարհն նորա մինչև ի լեառնն անուանեալ Զարասպ՝ ի ծառայութեան հարկի կալաւ մինչև ցթագաւորութիւնն Նինոսի ի վերայ Ասորեստանի և Նինուէի:

Իսկ Նինոս թագաւորեալ ի Նինուէ՝ յիշատակ քինու զնախնւոյն իւրոյ զԲելայ ունէր ի մտի, ի զրուցաց ուսեալ. և զայս խորհէր հատուցանել յամս ձիգս, նկատել որսալ զյաջողութիւն աւուրց, բառնալ ջնջել

զամենայն ճետ սերմանեալ յարւանց քաջին Հայկայ։ Այլ երկիւղ կասկածանաց խարդաւանակ լինելոյ իւրոյ թագաւորութեանն դայսպիսիս համարեալ իրագործութիւնս՝ ծածկէ զչարութիւնն, և հրամայէ նմա զնոյն իշխանութիւն անկասկածաբար ունել. և համարձակութիւն տայ նմա վարսակալ ածել մարգարտեայ, և երկրորդ նորա կոչել։ Այլ այս շատացի ասել այսչափ. քանզի չիողացուցանէ զմեզ որ առաջիկայս է իր՝ յեղերումն յամել այսր պատմութեան։

Բ. Յաղագս ընդ Ասորեստանեայս կռուոյն եւ յաղթութեանն, եւ Պայապայն Քաաղեայն, եւ Կեսարու, եւ առաջին եւ այլոց անուանեալ Հայոց

Կարգեսցուք դոյզն յիշատակօք բանից և որ ինչ զկնի այսորիկ յարևմուտս սորա գործք քաջութեան պատմին ի նոյն մատենի, և որ ընդ Ասորեստանեայս կռիւն. զպատճառս և զզօրութիւն իւրացն միայն յայտնելով, և զերկարութիւն գործոյն համառօտ բանիւ յանդիման կացուցանելով։

Նոյն այս Արամ, յետ վճարելոյ ճակատուն որ ընդ արևելեայս՝ խաղայ նոյն զօրութեամբ զկողմամբք Ասորեստանի. դառնէ և անդ դումն ապականիչ երկրին իւրոյ, չորիւք բիւրովք վառելովք հետևակօք և հինգ հազար հեծելազօրու, Բարշամ անուն, յազգէ սկայիցն. որոյ սաստկագոյնս նեղեալ հարկաց խստութեամբ՝ անասպատ զբովանդակ շրջակայն իւր առնէր։ Սմա ճակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ, հալածական ընդ մէջ Կորդուաց ի դաշտն Ասորեստանի արկանէ, զբազումս ի նոցանէ սատակելով. իսկ Բարշամ առաջի դինակրաց նորա պատահեալ՝ մեռանի։ Եւ զայս Բարշամ վասն իւրոց արութեան բազում գործոց աստուածացուցեալ պաշտեցին Ասորիք ժամանակս յոլովս։ Իսկ զմեծ մասն դաշտացն Ասորեստանի կալաւ ի ծառայութեան հարկի Արամ բազում ժամանակս։

Այլ որ ինչ յարևմուտս կոյս ընդ Տիտանեանսն է սորա գործ քաջութեան՝ ասել կայ մեզ առաջի։ Աստ յարևմուտս շարժեալ ի վերայ առաջնոյն չորիւք բիւրովք հետևակազօրու և երկու հազար հեծելովք՝ հասանէ ի կողմանս Կապադովկացւոց, ի տեղի մի, որ այժմ ասի Կեսարիա։ Եւ քանզի զարևելեանն և զհարաւայինն նուաճեալ, յանձնեալ էր ի ձեռն երկուց ցեղից այսոցիկ, Սիսակեանցն զարևելս, և որք ի Կադմեայ տանէն՝ զԱսորեստանին՝ ոչ ինչ այնուհետև կասկած շփոթից ուստեք ունէր։ Վասն որոյ յերկարեալ ժամանակս լինել յարևմուտս՝

պատահէ նմա Պայապիս Քաղեայն Տիտանեան պատերազմաւ, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտոսն և զՄովկիանոս։ Որում ի դիմի հարեալ վանէ, փախստական արկանելով ի կղզի ինչ ասիական ծովուն։ Եւ իւր Թողեալ զոմն Մշակ անուն յաղթէ իւրմէ և բիւր մի ի զօրացն ի վերայ աշխարհին՝ և ինքն դառնայ ի Հայս։

Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս հայկական. վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զկղզիմայն զայն Պոռտին Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք։ Եւ զդաստակերտն, զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապահն Արամայ, փոքրագունիւք պարսպեալ որմովք, անուանէին հինք աշխարհին՝ Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել. մինչև յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարիա։ Ըստ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ մինչև ցրուն իւր սահմանսն, զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք, այլ և Չորրորդ։ Այս է առաջին և ճշմարիտ պատճառն վասն անուանելոյ զարևմտեան մեր կողմն Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և Չորրորդ Հայք։ Իսկ որ այլ ի յոմանց ասի ի յունական կողմանսն՝ մեզ ոչ է հաճոյ. այլոց որշափ կամք իցեն։

Արդ սա այսպէս հզօր և անուանի եղեալ՝ յանուն սորա մինչև ցայսօր, որպէս ամենեցուն յայտնի է, որ շուրջ զմեօք ազգք զաշխարհս մեր անուանեն։ Բազում և այլ գործք քաջութեան ի սմանէ գտանին կատարեալ, այլ մեզ բաւական լիցի ասացեալս։

Բայց թէ ընդէր այսոքիք ի բուն մատեանս Թագաւորացն կամ ի մեհենիցն պատմութիւնս ոչ յիշատակեցան, մի ոք ընդ այս երկբայացեալ տարակուսեսցի։ Մի՝ զի յառաջ քան զՆինոսի ժամանակ Թագաւորութեանն է, յորում ոչ ոք այսպիսի իրաց փոյթ յանձին ունէր. երկրորդ՝ զի ոչ հարկ ինչ և ոչ պէտք կարևորք էին նոցա՝ զազգաց օտարաց և զաշխարհաց ի բացեայ և զհամբաւս հինս և զղրոյցս նախնականս յիւրեանց Թագաւորաց կամ մեհենից մատեանս դրել. մանաւանդ զի և ոչ պարծանք ինչ նոցա և ոչ բարգաւաճանք՝ օտար ազգաց քաջութիւն և գործք արութեան։ Բայց թէպէտ և ոչ ի բուն մատեանսն, սակայն որպէս Մար Աբաս Կատինայ պատմէ՝ ի փոքունց ոմանց և յաննշանից արանց, ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դիւանի արքունեաց։ Ասէ և այլ իմն պատճառս նոյն այր, թէ, որպէս ուսայ՝ հպարտ և անձնասէր գոլով Նինոս, և կամելով զինքն միայն աշխարհակալութեան և ամենայն քաջութեան և լաւութեան ցուցանել սկիզբն՝ հրամայէ զբազում մատեանս և զղրոյցս առաջնոցն, տեղեաց տեղեաց և ուրուք ուրուք գոր-

ծոց քաջութեան, այրել, իսկ որ առ իւրովք ժամանակօք՝ դադարեցուցանել, և որ ինչ վասն իւր միայնոյ՝ գրել։ Այլ զայս աւելորդ եղև մեզ երկրորդել։

Բայց Սրամ չետ ամաց կենաց իւրոց ծնաւ զԱրայն. չետ որոյ և այլս բազումս կեցեալ ամս՝ մեռաւ։

4. ՏԻԳՐԱՆ ԵՎ ԱԺԴԱՀԱԿ

Ա. Յաղագս Տիգրանայ, թէ որպիսի ամենայնիւ

Բայց անցցուք այսուհետև որ ինչ յաղագս Տիգրանայ և որ ի նմանէ գործք։ Քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցուն քաջ։ Որ և Կիւրոսի աջակցեալ, զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեաւ նուաճեալ հնազանդէր։ Եւ զսահմանս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինան մեր հասուցանէր չեղերս ծայրից բնակութեան, և ամենեցունց որ առ իւրովքն էին ժամանակօք՝ նախանձելի, և զկնեաց ըղձալի ինքն և ժամանակ իւր։

Զի ո՞ոք ի ճշմարիտ արանց, և որոց ի բարս արութեան և խոհականութեան սիրելութիւն կայցէ, սորա չիշատակօքն ոչ զուարճասցի, և յորդորեսցի այսպիսի այր լինել։ Արանց կացեալ գլուխ և արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց, և զընդ չծով կացեալսս՝ չծագիրս և հարկապահանջս կացոյց բազմաց. մթերս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պէս պէս գունից և անկուածոց՝ արանց միանգամայն և կանանց՝ հասարակաց բազմացոյց. որովք տգեղագոյնքն իբրև զգեղաւորս երևէին սքանչելիք, և գեղաւորքն ըստ ժամանակին առ հասարակ դիւցազնացեալք։ Հետևակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպազեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք. մերկքն վահանօք և զգեստուք երկաթեօք պարածածկեալք։ Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիմք՝ զիշնամիսն արտահալածել։ Խաղաղութեան և շինութեան բերող, իւղով և մեղու գամենայն հասակ պարարեալ։

Զայս և որ այլ այսպիսիք բազումք, եթէ մերոյ աշխարհիս խարտեաշս այս և աղեբեկ ծայրիւ հերաց երուանդեանս Տիգրան, հրեսօք գունեան և մեղուական, անձնեայն և թիկնաւէտն, առոգաբարձն և գեղեցկոտն, պարկեշտն ի կերակուրս և յըմպելիս, և ի խրախճանութիւնս օրինաւոր. զորմէ ասէին ի հինան մեր, որք փանդռամբն երգէին, լինել

սմա և ի ցանկութիւնս մարմնոյ չափաւոր, մեծիմաստ և պերճաբան, և յամենայն որ ինչ մարդկութեան՝ պիտանի: Եւ զի՞նչ ինձ ի գիրսս յայսոսիկ արդեօք իցէ բան սիրելի, քան թէ որ յաղագս սորա էին գովեստք և պատմութիւնք յերկարել: Արդարադատ և հաւասարասէր կշիռս ունելով յամենայնի՝ զամենայն ուրուք զկենցաղ՝ մտացն լծակաւ կշռէր: Ոչ ընդ լաւագոյնսն խանդայր, և ոչ զնուաստսն արհամարհէր, այլ ամենեցուն հաւասարակաց հնարէր զխնամոցն իւրոց ի վերայ տարածանել զգեստս:

Սա նախ յառաջագոյն դաշնաւոր եղեալ Աժդահակայ, որ ի Մարաց էր, տայ նմա զքոյր իւր Տիգրանուհի կնութեան, ըղձիւք խնդրելով զնա Աժդահակայ: Քանզի ասէր. կամ ի ձեռն այսպիսւոյ մերձաւորութեան սէր հաստատուն առ Տիգրան ունել, կամ դիւրաւ այսպէս դաւաճանել զնա ի սպանումն: Զի էր նմա խէթ կամաց իւրոց, մարդարէութիւն իմն յոչ կամաց լեալ նմա առաջիկայ դիպուածն իւր:

Բ. Վասն երկիւղի կասկածանացն Աժդահակայ ի միաբանութենէ սիրոյն Կիւրոսի եւ Տիգրանայ

Բայց էր նիւթ այսպիսւոյ խոհականութեան դաշնաւորութիւն մըտերմութեանն՝ որ ի Կիւրոսէ առ Տիգրան. յորմէ բազում անգամ և ախտ քնոյ ի բաց փախուցեալ լինէր յԱժդահակայ յիշատակաւս այսուիկ. և խորհրդակցաց իւրոց անդուլ առնէր հարցումն վասն այսպիսւոյ պատճառի. «Ո՞րպիսի հնարիւք լուծանել կարասցուք, ասէ, զկապ սիրոյ պարսկայնոյն և Հայկազինն բազմաբիւրաւորի»: Եւ յայսպիսում շփոթման խորհրդոց հասանէ նմա առաջիկայիցն յայտնութիւն ի ձեռն անրջականաց իմն նախատեսութեանց, օրինակաւս այսուիկ, ասէ՝ որ պատմէն:

Գ. Թէ որպէս ի խիթի լինելով Աժդահակայ՝ զառաջիկայ իւր դիպուածն տեսանէ սքանչելի երազով

Էր, ասէ, յաւուրսն յայնոսիկ ոչ սակաւ ինչ վտանգ՝ որ ի Մարացն Աժդահակայ, ի միաբանութենէն Կիւրոսի և Տիգրանայ: Վասն որոյ և ի սաստկութենէ ծփանաց խորհրդոցն լինէր նմա ի տեսլեան երազոցն երևութանալ ի քուն գիշերոյ, զոր ոչ երբէք յարթնութեան ետես աչօք, և ոչ ի լուր ականջաց լուաւ: Ուստի և ընդոստ ի քնոյն լինելով՝ ոչ յամէբսա սովորութեան կարգին ի ժամ խորհրդականութեանն. այլ այն ինչ գիշերոյն ժամս ունելով ոչ սակաւս՝ ձայնէ զխորհրդակիցսն, և

տրտում երեսօք յերկիր հայելով ի խորոց սրտին մռնչէ յոգւոցհանութիեամբ: Եւ ի զվասն էրն ի խորհրդակցացն հարցանիլ՝ յերկարէ ժամս ինչ զպատասխանիսն, և ուր ուրեմն հնծութիեամբ սկիզբն արարեալ յայտնէ զամենայն, որ ի ծածուկս սրտին խորհուրդ և կասկած, ընդ նմին և զիրս ահագին տեսլեանն:

«Էր ինձ, ասէ, ո՛վ սիրելիք, լինել այսօր յերկրի անծանօթում, մերձ ի լեառն մի երկար յերկրէ բարձրութիեամբ, որոյ գագաթինն սաստկութիեամբ սառնամանեաց թուէր պատեալ. և ասէին զոգես յերկրին Հայկազանց զայս լինել: Եւ ի նայել իմ յերկարագոյնս ի լեառնն՝ կին ոմն ծիրանագգեստ, երկնագոյն ունելով զիւրեաւ տեւ, նստեալ երևեցաւ ի ծայրի այնպիսւոյ բարձրութեան, աչեղ, բարձրահասակ և կարմրայատ, երկանց ըմբռնեալ ցաւովք: Եւ ի յերկարագոյնս նայել իմ յայնպիսի երևումն և ի հիացման լինել՝ ծնաւ յանկարծ կինն երիս կատարեալս ի դիւցազանց հասակաւ և բնութիեամբ: Առաջինն զերանան ածեալ ի վերայ առիւծու՝ սլանայր յարևմուտս, և երկրորդն ի վերայ ընծու՝ ի հիւսիսի հայելով. իսկ երրորդն զվիշապ անարի սանձեալ՝ ի մերոյս վերայ շահատակեալ յարձակէր տէրութեանս:

«Եւ ի մէջ խառնից այսպիսեացս երազոց, թուէր ինձ կալ ի վերայ տանեաց իմոց արբունեացս, և զնոյն ինքն վերին երեսս յարկացս տեսանել զեղեցկօք և բազմագունիւք զարդարեալ շատրուանօք, և զպատկողսն մեր զդիսն հրաշատեսիկ տեսլեամբ ի վերայ կացեալս և զիս ձեօք հանդերձ պատուել զնոսա զոհիւք և խնկովք: Եւ յանկարծ ի վեր նայեցեալ, զայն որ ի վերայ վիշապին հնծեալ էր այր, արծուոյ իմն արդարև սլացեալ թևովք տեսի յարձակեալ. որ մօտ հասեալ՝ խորհէր կործանել զդիսն: Իսկ ես Աժդահակ խորոց ընդ մէջ անկեալ՝ յիս զայնպիսի ընկալայ զյարձակումն, մարտ ընդ սքանչելւոյն առնելով դիւցազինն: Եւ նախ ի տէգ նիզակաց զմարմինս երկաքանչիւրոցս յօշելով, վտակս արեան ի վայր հոսեցուցաք, և զարեգակնատես երեսս ապարանիցս արեան հոսեալ ցուցաք ծով: Այսպէս և զկնի այլովք զինուք ժամս ոչ սակաւս:

«Բայց զի՞նչ օգուտ ինձ և խօսիցս երկարութիւն. զի վախճան գործոյն՝ իմն էր կործանումն. ուստի և ի քրտան սաստկութեան յայսպիսւոյ եղեալ տագնապէ՝ փախեաւ յինէն քունն, և այսուհետև ոչ թուիմ կենդանի: Զի ոչ այլ ինչ նշանակէ երևութիցս շարժումն, եթէ ոչ որ ի Հայկազնեանն Տիգրանայ հասանելոց է մեզ բռնութեան յարձակումն: Բայց ո՛վ արդեօք, յետ աստուածոյն օգնականութեան, բանիւ և գործով մեզ օգուտ խորհելով, ոչ զինքն կարծիցէ թագաւորակից մեր լինել»:

Եւ բազում ինչ ի խորհրդակցացն լուեալ օգտութեան մտածութիւն՝ շնորհակալութեամբ պատուէ զնոսա:

Գ. Յաղագս որ ի խորհրդակցացն բան. զկնի ապա եւ որ ինչ իւր մտածութիւն, եւ նոյնինետայն գործն

«Բազում ինչ հանճարով և իմաստութեամբ ի ձէնջ յուսայ, ասէ, ո՛վ սիրելիք, ասացից և որ ինչ իմ յետ աստուածոցն օգնականութեան յայսոսիկ օգտակարագոյն բան և մտածութիւն։ Քանզի ոչ ինչ առ թշնամեացն զգուշութիւն վեհագոյն բերէ օգնականութիւն, և ծանօթութիւն նոցայցն առաջի արկելոց գործոց՝ քան թէ որ ի ձեռն սիրով դաւելոյն զկորուստ խորհեսցի։ Եւ զայս զարձեալ ոչ ի ձեռն գանձուց, և ոչ ի ձեռն բանից պատրողաց այժմ մեզ հնարաւորութիւն է կատարել, եթէ ոչ որպէս կամք ևն ինձ այժմ գործել։ Եւ այն է նիւթ կատարման խորհրդոյս և հնարք որոգայթիցս, գեղեցիկն ի կանայս և խոհեմն, քոյր նորա Տիգրանուհի։ Զի այսպիսիքս իսկ արտաքուստ և եկամուտ հարաւատութիւնք համարձակ զգաւելն ի ձեռն երթևեկութեան անյայտաբար ընդարձակ մարթեցուցանիցեն վարժել. կամ յանկարծօրէն իւրոց մտերմաց, ընչիւք և խոստմամբ պատուոց, տալ հրաման խողխողել սրով և կամ հնարիւք դեղոց, և կամ զմտերիմս նորա և զկուսակալս գանձիւք ի նմանէ ի բաց մերկանալ, և այսպէս իբրև զանզօր տղայ ի բուռն առցուք»։

Եւ ազդոյ համարեալ բարեկամացն զայսպիսի խորհուրդ՝ նիւթեն և զգործն։ Ի ձեռն միոյ ուրումն ի խորհրդակցացն տուեալ բազմութիւն գանձուց՝ ի ձեռն թղթոյ, օրինակաւս այսուիկ, յուղարկէ։

Ե. Թուղթ Աժդահակայ. յետ ոռոյ եւ յօժարութիւն Տիգրանայ, յուղարկումն Տիգրանուհեայ ի Մարս

«Գիտէ սիրելի եղբայրութիւնդ քո, ոչ ինչ օգտակարագոյն ի կեանս աշխարհիս ի դիցն մեզ պարգեւեալ քան զսիրելեաց բազմութիւն, և այս՝ իմաստնոց արդեօք և հզօրագունից. զի այսպէս և արտաքուստ ոչ ի վերայ համարձակին խռովութիւնք, և եկեալքն վաղվաղակի հերքին. իսկ ի ներքս ոչ զմուտն յումեքէ գտեալ այսպիսւոյ չարութեան՝ հալածեալ լինին։ Արդ՝ զայսպիսի շահ օգտութեան, որ ի բարեկամութենէ լինի, տեսանելով՝ խորհեցայ ևս հաստատուն և խորագոյն զսէրն որ ի միջի մերում է, հաստատել. զի երկոքեան յամենայն կողմանց ամրացեալք՝ ողջ և անշարժ զսէրութիւն մեր կալցուք։ Եւ այս լինի ի տալն քում զօրիորդդ Հայոց մեծաց, զքոյր քո Տիգրանուհի, ինձ կնութեան. թէ արդեօք և բարի համարեսցիս դմա, զի թագուհեաց թագուհի լիցի։ Ողջ լեր, թագակից մեր և սիրելի եղբայր»։

Եւ առանց յերկարելոյ զբանս ասացից։ Գայ առաքեալն և կատարէ յաղագս օրիորդին գեղեցկի. զի յանձն առեալ Տիգրանայ՝ տայ զքոյր

իւր Տիգրանուհի Աժդահակայ կնութեան։ Եւ չև ևս գիտելով զառ ի նմանէ դաւաճանութիւնն՝ յուղարկէ զքոյր իւր որպէս օրէն է թագաւորաց, Զոր առեալ Աժդահակայ, ոչ միայն վասն նենգին որ ի սրտի իւրում, այլ և վասն գեղեցկութեանն, առաջին իւրոց կանանցն կարգէ և պշարութիւնն ի ներքոյ ոտաւն հինու։

Ա. Եթէ որպէս յայտնեցաւ նենգութիւնն եւ գրգռեցաւ մարտն, յորում եւ մահն Աժդահակայ

Զկնի այսորիկ ասէ, թէ ի հաստատել Աժդահակայ զՏիգրանուհի ի տիկնութիւն, ոչ ինչ առանց կամաց նորա ի թագաւորութեան իւրում գործէր. այլ բերանով նորա կարգէր զամենայն, և հրամանի նորա ամենեցուն հնազանդ լինել հրամայէր։ Եւ յօրինեալ զայս այսպես՝ սկսանի նմա մեղմով պատրանս մատուցանել. «Ոչ գիտես, ասէ, եթէ եղբայր քո Տիգրան խանդացաւ զտիկնութիւնդ քո ի վերայ Արեաց, ի կնոջէ իւրմէ ի Զարուհեայ զրգռեալ։ Եւ զի՞նչ լինիցի այն, եթէ ոչ նախ ինձ մեռանել, և ապա լինել զՋարուհի ի վերայ Արեաց և զաստուածուհեաց ունել զտեղի։ Բայց արդ՝ ընտրելի է քեզ զմի յայսցանէ. կամ լինել եղբայրասէր, և կործանումն խայտառակելի յանդիման Արեաց յանձն առնուլ, և կամ զանձին իմանալով զբարի՝ խորհուրդ օգտակար ի մէջ բերել և յաղագս առաջիկայիցն հոգալ»։

Բայց էր ի մէջ այսպիսւոյ խորամանկութեան թագուցեալ և զմեռանելն Տիգրանուհեայ, եթէ ոչ ինչ ըստ կամաց խորհրդի մարապարտացուցեալ։ Այլ իմացեալ խորագիտոյ գեղեցկին զայսպիսի դաւաճանութիւն՝ պատասխանի առնէ սիրոյ բանս Աժդահակայ, և արագագոյն ի ձեռն մտերմաց պատմէ եղբօրն զնենգութիւնն։

Եւ ձեռնարկէ այնուհետև ի գործն ի ձեռն պատգամաւորութեան, գալ նոցա ի տեսութիւն միաբանութեան ի տեղի միջոց սահմանաց երկոցունց թագաւորութեանցն. իբր բան ինչ և գործ հարկաւոր հասեալ, որ ի ձեռն գրոյ և հրեշտակութեան կատարել ոչ է կարողութիւն, եթէ ոչ և դէմք երկոցունց հանդէպ լինիցին։ Այլ գիտելով Տիգրանայ զառաքելոյ իրին կատարումն՝ ոչ ինչ յորոց խորհէրն Աժդահակ՝ ծածկէ, այլ ի ձեռն գրոյ յայտնէ որ ինչ ի նորայն խորութեան սրտի։ Եւ յայտնեալ այսպիսւոյ չարութեան՝ ոչ ինչ էր այնուհետև բան և խորամանկութիւն, որ զայսպիսիս առագաստէր պշարութիւն. այլ յայտնի այնուհետև գրգռէր խաղմն։

Եւ ժողովէ արքայն Հայոց ի սահմանացն Կապադովկացւոց, և որչափ ընտիրք Վրաց և Աղուանից, և զամենայն ընտիրս Հայոց Մեծաց և

Փոքունց։ Եւ խաղայ ամենայն զօրութեամբ իւրով զկողմամբք Մեդացւոց։ Վտանգ այնուհետեւ հարկ առնէ Աժդահակայ՝ պատահել պատերազմաւ հայկապինն ոչ փոքր ինչ ամբոխիւ։ Եւ երկայնէր հակառակութիւնն մինչեւ յամիսս հինգ. քանզի հիւանդանայր գործն արագ և առողջ, յորժամ զմտաւ ածէր Տիգրան յաղագս քեռն իւրոյ սիրելւոյ։ Զի այսպէս իմն զկնի իրացն հնարէր յարդարել, զի ապրելոյ ճար լիցի Տիգրանուհեայ։ Պատահէ և այս, և ժամ մարտին մերձենայ։

Բայց գովեմ զքաջ նահատակն իմ և զնիզակաւորն և զամենեսին բոլոր անդամովք համեմատն և ի գեղեցկութիւն հասակի աւարտեալ. քանզի առոյգ, ամենայնիւ ըստ իրեարս պատշաճեալ, և ուժով ոչ զոք ունելով իւր զոյգ։ Եւ զի՞ երկայնեմ զբանս. քանզի ի լինել մարտին նիզակաւ օրինակ իմն որպէս զջուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն՝ շամփրէ զԱժդահակ յընդարձակ տէգ նիզակին, և յամփոփել միւսանգամ զձեռնն՝ արտաքս զկէս մասն թոքոցն հանդերձ զինուն ի դուրս բերէ։ Բայց մարտն էր սքանչելի. զի քաջք դիպեալ քաջաց՝ ոչ վաղվաղակի թիկունս ի միմեանց դարձուցանէին. վասն որոյ յերկարեալ քարշէր գործ պատերազմին մինչև ի ժամս ձիգս։ Իսկ վախճան գործոյն առնէր մահն Աժդահակայ. և այսպիսի դիպուածս ի բարեբախտութիւն յաւելեալ՝ փառս յաճախէր Տիգրանայ։

Է. Յաղագս թէ յոտն արկեաց զոյր իւր Տիգրանուհի ի Տիգրանակերտ. եւ վասն Անուշայ, առաջին կնոջն Աժդահակայ, եւ բնակութեան գերուցն

Պատմի և այս, թէ զկնի այսպիսի իրաց կատարման՝ յուղարկէ Թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծաւ ամբոխիւ ի Հայս, յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զգաւառսն զայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ։ Եւ զոստանն անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն ի զարմից սորա ասէ լեալս, իբր Թագաւորական զարմս։

Իսկ զԱնոյշ, զառաջին կինն Աժդահակայ, և զբազումս ի սերմանէն Աժդահակայ աղջկունս, հանդերձ պատանեկօք և բազմութեամբ գերեացն, որչափ թէ աւելի քան զբիւր մի, բնակեցուցանէ յարևելեայ ուսոյ մեծի լերինն մինչև ի սահմանս Դողթան, որ են Տամբատ, Ասկիողայ, Դաժգոյնք, և որ այլք առ եղերք գետոյն գաստակերտք, յորոց մինն է Վրանջունիք, մինչև հանդէպ ամրոցին Նախճաւանու. և զերիս աւանսն, զխրամ և զՋուղայ և զխորշակունիս իսկ ի միւս կողմանէ գետոյն. զբոլոր դաշտն, որոյ գլուխն Աժդանական, մինչև ցնոյն ինքն

ամուրն Նախճաւանու։ Բայց զնախասացեալ կինն Անույշ բնակեցուցանէ որդւովք իւրովք յանդորրութեան սպառուածի փլածին մեծի լերինն։ (Զորմէ լեալ ասեն յահագին իմն շարժմանէ. զոր պատմեն՝ որք բազմաշրջութեամբ հրամանաւ Պաղոմեայ ասպարիսօք զբանակութիւնս մարդկան չափեցին, այլ և մասն ինչ գծով և զանբնակս յայրեցածէն մինչև ցՔիմիւռն)։ Իսկ պաշտօնեայս տայ Անուշայ ի նոյն Մարաց, որ առ ոտամբ լերինն բնակեցան։

Յայտնեն զայս ճշմարտապէս և թուելեացն երգք, զոր պահեցին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն գինեվէտ զաւառին Գողթան. յորս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդւոց նորա, յիշելով այլաբանաբար և զղարմիցն Աժդահակայ, Վիշապատունս զնոսա կոչելով. զի Աժդահակդ՝ ի մեր լեզուս է վիշապ։ Այլ և ճաշ ասեն գործեալ Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի, և խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշապաց։ Այլ և Արտաւազդայ ոչ գտեալ, ասեն, քաջի որդւոյն Արտաշիսի, տեղեկիկ ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝ նա անց, ասէ, գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ. որ է ի դաշտին՝ որ անուանեալ կոչի Շարուրայ։ Այլ և տենչայ, ասեն, Սաթինիկ տիկին տենչանս՝ զարտախուր խաւարտ և զտից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ։

Եւ արդ՝ ո՞չ արդեօք առաւել աստանօր զարմասցիս ի վերայ մերոյ ճշմարտապատմութեանս, թէ որպէս յայտնեցաք զանյայտ իրս վիշապաց, որք են յԱզատան ի վեր ի Մասիս։

5. ԵՐՎԱՆԴ ԹԱԳԱՒՈՐ

Ա. Թագաւորել Երուանդայ եւ կոտորել զորդիսն Սանատրկոյ, եւ զերծանել Արտաշիսի փախստեամբ

Յետ մահուանն Սանատրկոյ արքայի շփոթի իմն թագաւորութիւնն։ Քանզի Երուանդ ոմն, որդի կնոջ Արշակունւոյ, թագաւորէ յութերորդ ամի Դարեհի վերջնոյ։ Եւ ունին զրոյցք յաղագս նորա այսպէս։ Կին ոմն յազգէ Արշակունեաց, անձամբ հարստի և խոշորագեղ, վարար, զոր ոչ ոք դիմագրաւեաց առնուլ կնութեան, ծնանի երկուս մանկունս յանկարդ խառնակութենէ, որպէս Պասիփայէ զՄինոտաւրոս։ Եւ ի զարգանալ մանկանցն՝ կոչեն անուանս Երուանդ և Երուազ։ Եւ ի չափ հասեալ Երուանդայ՝ լինի սրտեայ և անդամովք յաղթ։ Սա ի բազում իրս վերակացու առաջնորդութեամբ առաքեալ ի Սանատրկոյ, գտանի երևելի, մինչև ամենայն նախարարացն Հայոց առաջին լինել. և խոնարհութեամբ և առատաձեռնութեամբ զամենայն ոք յանգուցեալ յինքն յարե-

ցոյց։ Եւ ի մեռանելն Սանատրկոյ՝ միաբանեալ թագաւորեցուցին զնա, առանց արանց յազգէն Բագրատունեաց լինել թակադիր։

Բայց ի թագաւորելն իւրում Երուանդ, կասկած ունելով յորդւոցն Սանատրկոյ՝ կոտորէ զամենեսեան։ Բուի թէ վրէժս հատուցաւ սպանման որդւոցն Արգարու։ Բայց մի ոմն տղայ, Արտաշէս անուն, զոր առեալ ստընտուի նորա՝ փախեաւ ի կողմանս Հերայ, ի հովուավանս Մաղխազանի, լուր առնելով դայեկի նորա Սմբատայ, որդւոյ Բիւրատայ Բագրատունւոյ, ի Սպեր գաւառի, ի շէնն Սմբատաւանի։ Արդ՝ իբրև լսէ Սմբատ որդի Բիւրատայ զբօթն Սանատրկոյ և զգոյժ կոտորման որդւոց նորա՝ առեալ զերկուս դստերս իւր, զՍմբատանոյշ և զՍմբատուհի՝ նստուցանէ ի Բայբերդի, արս քաջս թողլով ի վերայ ամրոցին. և ինքն հանդերձ միով կնաւ իւրով և սակաւ արամբք գայ անցանէ ի խնդիր մանկանն Արտաշիսի։ Որում իրազգած եղեալ արքային Երուանդայ՝ հետայոյզս առաքէ. վասն որոյ բովանդակ ժամանակս ընդ երեսս լերանց և դաշտաց այլակերպեալ շրջելով հետի հանդերձ մանկամբն՝ անուցանէ ի հովուավանս և յանդէորդս, մինչև պարապ գտեալ ժամ՝ անցանէ առ Դարեհ արքայ Պարսից։ Եւ քանզի այր քաջ էր Սմբատ և ծանօթ յառաջագոյն՝ պատուի մեծապէս ընդ զօրագլուխսն Պարսից, սապէս և մանուկն ընդ որդիս թագաւորին, տեղի բնակութեան առեալ զԲատ և զՈղոմն կոչեցեալ գաւառս։

Բ. Որ ինչ չան Երուանդայ վասն ի բուռն ածելոյ զմանուկն Արտաշէս, եւ ի բաց թողլոյ զՄիջագետս

Բայց Երուանդայ զմտաւ ածեալ, թէ որպիսի չար նորա թագաւորութեանն սնանի ի Մարս՝ խէթ ի սրտի լեալ՝ ոչ հեշտալի էր նմա քուն։ Հանապազ ի յարթնութեան յայն հոգալով, նաև ի քուն անուրջս ահագինս նմին իրի տեսանէր։ Վասն որոյ ի ձեռն հրեշտակաց և պատրագաց խնդրէր հաշտեցուցանել զարքայն Պարսից՝ տալ ի ձեռս զԱրտաշէս, ասելով թէ «Արիւն իմ և հարազատութիւն, ընդէ՞ր սնուցանես զՄարերդ Արտաշէս հակառակ ինձ և իմոյ թագաւորութեանս, լսելով բանից Սմբատայ յեղուզակի, որ ասէ, թէ որդի է Արտաշէս Սանատրկոյ. և զորդի հովուաց և զանդէորդաց ջանայ առնել Արշակունի, և արիւն քո և հարազատութիւն համբաւելով զնմանէ։ Նա չէ որդի Սանատրկոյ, այլ ընդ խաբս գտեալ Սմբատայ զմար ոմն տղայ՝ բաջաղի»։ Նոյնպէս և առ Սմբատ յղէր բազում անգամ, թէ «Ընդէ՞ր այդքան սնոտի աշխատութիւն կրես. խաբեալ ի ստնտուէդ՝ սնուցանես զորդի Մարիդ հակառակ ինձ»։ Եւ լսէ ոչ սիրելի բանս պատասխանեաց։ Յայնժամ առա-

քէ Երուանդ և սատակէ զքաջսն ի Բայբերդի. գերեալ զդստերս Սմբատայ՝ պահէ յամրոցին յԱնի ոչ վատթարապէս։

Բայց թիկունս առնելով Երուանդայ զՀռոմայեցիս՝ ոչ ինչ վտանգի ի թագաւորութեանն Վեսպիանու և Տիտոսի, թողուլ ի նոսա զՄիջագետս։ Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց ի Միջագետաց. և հարկս ևս առաւելագոյնս ոայր ի Հայոց Երուանդ։ Իսկ գործակալացն Հռոմայեցւոց մեծապէս հանդերձեալ զքաղաքն Եդեսիայ՝ ի նմա հաստատեն զտունս գանձուց հարկացն ժողովելոց ի Հայոց, ի Միջագետաց և յԱսորիստանեայց։ Եւ ժողովին ի նմա զամենայն դիւանս, և կարգեն դպրոցս երկուս, մի՝ զբունն իւրեանց զԱսորին, և միւս ևս զՅոյնն. և զդիւանն հարկաց և զմեհենականն, որ կայր ի Սինոպ Պոնտացւոց անդր փոխեն։

Գ. Յաղագս լսելոյ Երուանդայ զգալն Արտաշիսի, եւ գումարել զօրս ի պատրաստութիւն պատերազմի

Լուր հասանէ առ Երուանդ յՈւտէացւոց գաւառին, եթէ գումարեաց արքայն Պարսից զօրս բազումս ի ձեռն Սմբատայ, զի ի վերայ քո խաղացեալ ածցէ զմանուկն Արտաշէս ի թագաւորութիւն իւր։ Զայս լուեալ Երուանդայ՝ եթող անդէն զբազումս ի նախարարացն կողմնապահս, և ինքն գնաց ի քաղաքն իւր փութանակի, կուտել առ ինքն զզօրս Հայոց, զվրաց և զկողմանցն կեսարու, այլ և զՄիջագետացն՝ աղերսիւք և տրուէք։ Եւ էին աւուրք գարնայնոյ. վասն որոյ երագ ժողովեցան զօրքն ամենայն. նա և Արգամ, տանուտէր ազգին Մուրացեան, որ ի ծննդոցն Աժդահակայ, ամբոխ հետևակաւ։ Քանզի էր Երուանդայ դարձուցեալ ի նա զգահն երկրորդական, զոր հանեալ էր ի նոցանէ Տիգրանայ և տուեալ իւրում Քեռոնն Միհրդատայ. իսկ յետ մահուանն Միհրդատայ՝ ոչ լինէր ումեք տուեալ, մինչև Երուանդայ դարձուցանել զնա առ Արգամ։ Եւ ոչ միայն նմա, այլ և ամենայն նախարարացն տայր պարգևս և պատիւս, և զօրացն ամենեցուն պարգևէր առատապէս։

Գ. Եթէ ո՛րպէս ընդ մուտն Արտաշիսի յիւր աշխարհն յաջողեցաւ գործն

Իսկ Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսիւ աճապարէր հասանել ի պահմանս Ուտէացւոց։ Ընդ առաջ նորա ելին զօրք այնր կողմանն, նա և նախարարքն զորս եթող Երուանդ։ Զայն իբրև լուան այլ նախարարքն Հայոց՝ լուծանէին լքանէին և զաւուրս յԵրուանդայ խորհէին. նա և զայն ևս տեսանէին, եթէ զօրքն Հռոմայեցւոց ոչ հասին նմա ի թի-

կոնաս։ Իսկ Երուանդ առաւել ևս յորդագոյն տայր զպարգևան, և բաշխէր միոյ միոյ ումեք ի նոցանէ զգանձսն. և որչափ շատ տայր՝ շատ ևս առելի լինէր։ Քանզի դիտէին ամենեքեան, եթէ ոչ առ առատութեան տայ, այլ առ երկիւղի վատնէ։ Եւ ոչ այնչափ սիրելի զայնոսիկ առնէր, որոց շատն տայր, քան թէ թշնամի զայնս՝ որոց ոչն տայր պերճագոյնս։

Ե. Երուանդայ պատերազմ ընդ Արտաշիսի եւ փախուստ, եւ առումն Էրզրումի նորին եւ մահ

Բայց Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսիւ ելանէ առ ափն ծովուն Դեղամայ, զթիկամբքն Արագածն կոչեցեալ լերին. աճապարէին հասանել ի բանակն Երուանդայ։ Առ ոչինչ համարեալ զբազմութիւն զօրացն նորա՝ միայն ակնածէին ի Մուրացենէն Արգամայ, զի այր քաջ էր և բազմայ տէր տիգաւորաց։ Եւ ճամբարն Երուանդայ էր բացագոյն ի քաղաքէ նորին աւելի քան երեք հարիւր ասպարիսաւ ի հիւսիսոյ, ի վերայ գետոյն Ախուրեան։ Զայս իբրև լսէր Երուանդ՝ հանէր ընդ առաջ զբազմութիւն զօրացն, և ճակատէր ոչ հեռի յիւրմէ բանակէն։ Իսկ Արտաշիսի առաքեալ պատգամ առ Արգամ նահապետ Մուրացեան հանդերձ բազում երդմամբք՝ թողուլ ի վերայ նորա զոր ինչ գտեալ էր յԵրուանդայ, և կրկին այլ յաւելուլ, միայն զի զԵրուանդ թողեալ ի բաց գնասցէ։

Եւ իբրև հանդէպ ճակատուն Երուանդայ ելին նշանք Արտաշիսի՝ Արգամայ առեալ զբազմութիւն հետևակացն՝ ի կողմն ելանէր։ Եւ Սմբատ հրամայէր զիտողսն պղնձիս հնչեցուցանել. և յառաջեալ զճակատն իւր՝ իբրև զարծուի յերամս կաքաւուց խոյանայր։ Իսկ նախարարքն Հայոց, որ յաջ և յահեակ թևսն էին, ի նա խառնեալ միանային։ Եւ զօրքն վրաց, հանդերձ արքայիւն իւրեանց Փարսմանաւ, թէպէտ և յանդուգն յարձակմամբ յառաջեալ բախէին՝ արագապէս դառնային ի միւս կողմն փախուցեալ։ Եւ անդ էր տեսանել կոտորած անհնարին զգնդին Երուանդայ և զզօրաց Միջագետաց։ Եւ ի խառնակել այսպիսի ճակատուց՝ պատահեն Արտաշիսի արք քաջք Տաւրացիք, որոց զոգիս ի բաց եդեալ, Երուանդայ պայմանեալ՝ սպանանել զԱրտաշէս։ Որոց դիպեալ ի հետի ընդ մէջ անցանէ Գիսակ որդի սանտուխն Արտաշիսի, և սատակեալ զնոսա, ուր և կէս դիմաց նորա ի վայր բերեալ սուսերաւ, զյաղթութիւն ստացեալ՝ մեռանի ի վերայ այսպիսեացս։ Եւ մնացեալ զօրքն ի փախուստ դառնային։

Իսկ Երուանդ ձիովն իւրով բովանդակ ասպարէզս անցեալ՝ գալանէ ի խանս կարգեալս ի բանակէն իւրմէ ի քաղաքն իւր, հնծեալ ի նոր ձիս հանգոյց ի հանգուցէ փախչել։ Եւ քաջին Սմբատայ զհետ մտեալ՝ սաստկագոյնս վարէր զնա ի դիշերի մինչև ցդուռն քաղաքին։ Եւ Մբոյց զօրացն անցեալ ի կողմն երուանդական գնդին, նսեմաւ ի վերայ դիականցն բանակէին։ Իսկ Արտաշիսի հասեալ ի յերուանդայ շրջապատեալ առագաստն, ի կաշեայ և ի կտաւեայ պարսպին, էջ, և ի խորանի նորա բնակեցաւ զայն գիշեր։ Եւ այգուն եղելոյ՝ տիրաբար արարեալ, զսպանեալս թաղել հրամայեաց. և անուանեաց զհովիտն, ուր ի վերայ դիականցն բնակեցան՝ Մարաց մարգ, և զտեղի ճակատուն՝ Երուանդավան, որ կոչի մինչև ցայսօր ժամանակի. այս ինքն եթէ յայսմ տեղւոջ վանեաց զերուանդ։ Եւ ինքն չուեաց ի քաղաքն Երուանդայ. յառաջ քան զմիջօրեայ հասեալ ի դաստակերտն Երուանդայ, և միաբան գոչմամբ հրամայեաց աղաղակել զօրացն՝ «Մար ամատա», որ թարգմանի Մարս եկն, յիշեցուցանելով զքշնամանսն, զոր յղէր Երուանդ առ թագաւորն Պարսից և առ Սմբատ, Մար զնա կոչելով։ Յայս ի սոյն ձայն անուանեցաւ դաստակերտն Մարմէտ, իբր ի կամաց Արտաշիսի՝ բառնալ զանուն Երուանդայ ի տեղւոջէն. այս պատճառ ։ անուանակոչութեան դաստակերտին։

Բայց Սմբատայ գիշերային զհետ Երուանդայ եկեալ սակաւ վաշտականաւ՝ զդուռն քաղաքին պահէր մինչև ի գալն Արտաշիսի և զօրացն ամենեցուն։ Եւ ի մարտնչել քաջացն ընդ ամբոխին՝ անձնատուրք եղեն մարդիկ ամբոխին, և բացին զդուռն քաղաքին։ Իսկ մի ոմն ի զինուորացն մտեալ եհար վաղերբ զգլուխն Երուանդայ, և ցրուեաց զուղիւղն ի յատակս տանն. և այսպիսի ջախմամբ վախճանեցաւ, կալեալ զթագաւորութիւնն ամս քսան։ Բայց Արտաշիսի չիշեալ, թէ խառնուած Արշակունւոյ է Երուանդ՝ հրամայէ զդի նորա թաղել մահարձանօք։

6. ԱՐՏԱՇԵՍ ԵՒ ՍԱԹԵՆԻԿ

Ա. Թագաւորել Արտաշիսի եւ առնել բարիս իւրոց երախտաւորացն

Յետ մահուանն Երուանդայ մտեալ Սմբատայ զարքունականսն յաղէր զդանձսն. և գտեալ զթագն Սանատրկոյ արքայի՝ դնէ ի գլուխն Արտաշիսի և թագաւորեցուցանէ ի վերայ ամենայն երկրիս Հայոց ի քսան և իններորդի ամի Դարեհի Պարսից արքայի։ Իսկ Արտաշիսի առեալ զթագաւորութիւնն՝ տայ պարգևս զօրացն Մարաց և Պարսից, և արձակեաց յաշխարհն իւրեանց։ Տայ և առնն քաջի և պատուականի

Արգամայ պիտոտացեալ գահն երկրորդական, և պսակ յակնթակապ, և գինդ յերկոսին ականջան, և կարմիր զգեստ միոյ ոտինն. տարգալ ունել ոսկի և պատառաքաղ, և ոսկեղինօք ըմպել նուագօք: Եւ ոչ ինչ ընդհատ յայոց պատուոց տայ դայեկին իւրում Սմբատայ, բայց միայն յերկուց գնդացն և ի կարմիր կօշկէ. և աւելի քան զհայրենական զիւր թագակապ ասպետութիւնն և զիշխանութիւնն արևմտեայ զօրուն՝ հաւատայ ի նա զամենայն զօրս Հայոց, և զբոլոր աշխարհիս զգործակալս և զհամօրէն տունն արքունի: Եւ զներսէս զորդի որդւոյ իւրոյ ստընտուին Գիսակայ, ազգ զնա սիրելով՝ անուն կոչէ զնահատակութեանց հօրն-Դիմաքսեան. քանզի, որպէս ասացաքն՝ զկէս դիմացն սուսերաւ ի վայր բերին ի վերայ Արտաշիսի:

Պատմի սորա ի նոյն աւուրս սերեալ ազգ և զորդիսն Տուրայ, պատանիս հինգ հանդերձ տասամբ, յանուն հօրն իւրեանց Տրունիս. ոչ վասն արութեան ինչ գործոց, այլ միայն վասն քաջութեան հօր նոցա, զոր առնէր ի տանէն արքայի առ Սմբատ, քանզի ընտանի էր Երուանդայ, սակս նորին և սպանաւ ի նմանէ:

Բ. Յարձակումն Ալանաց ի մեզ եւ պարտումն, եւ խնամութիւն Արտաշիսի ընդ նոսա

Զայսու ժամանակաւ միաբանեալ Ալանք լեռնականօքն ամենայնիւ, յինքեանս արկանելով և զկէս Վրաց աշխարհին՝ մեծաւ ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր: Ժողովէ և Արտաշէս զիւրոց զօրացն բազմութիւն, և լինի պատերազմ ի մէջ երկոցունց ազգացն քաջաց և աղեղնաւորաց: Սակաւ ինչ տեղի տայ ազգն Ալանաց, և գնացեալ անցանէ զոր առնէր ի տանէն արքայի առ Սմբատ, քանզի ընտանի էր Երուանդայ, սակս նորին և սպանաւ ի նմանէ:

Բ. Յարձակումն Ալանաց ի մեզ եւ պարտումն, եւ խնամութիւն Արտաշիսի ընդ նոսա

Զայսու ժամանակաւ միաբանեալ Ալանք լեռնականօքն ամենայնիւ, յինքեանս արկանելով և զկէս Վրաց աշխարհին՝ մեծաւ ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր: Ժողովէ և Արտաշէս զիւրոց զօրացն բազմութիւն, և լինի պատերազմ ի մէջ երկոցունց ազգացն քաջաց և աղեղնաւորաց: Սակաւ ինչ տեղի տայ ազգն Ալանաց, և գնացեալ անցանէ զոր առնէր ի տանէն արքայի առ Սմբատ, քանզի ընտանի էր Երուանդայ, սակս նորին և սպանաւ ի նմանէ:

Բայց քանզի զորդի Ալանաց արքային ձերբակալ արարեալ զօրացն Հայոց ածեն առ Արտաշէս՝ զխաղաղութիւն խնդրէր արքայն Ալանաց, տալ Արտաշիսի զինչ և խնդրեսցէ. և երդմունս և դաշինս ասէր հաստատել մշտնջենաւորս, որպէս զի մի՛ ևս մանկունք Ալանաց ասպատակաւ հինից ելցեն յաշխարհս Հայոց: Եւ ի չառնուլ յանձն Արտաշիսի առ ի տալ զպատանին՝ գայ քոյր պատանւոյն յափն գետոյն ի դարաւանդ մի մեծ, և ի ձեռն թարգմանաց ձայնէ ի բանակն Արտաշիսի. «Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս, որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց. եկ հաւանեաց բանից աչագեղոյ դստերս Ալանաց՝ տալ զպատանիդ. զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝ զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն, կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել, և շնամութիւն յաւիտենական ի մէջ երկոցունց ազգաց քաջաց

հաստատել»։ Եւ լուեալ Արտաշիսի զայսպիսի իմաստութեան բանս՝ գնաց յեղր գետոյն. և տեսեալ զկոյսն գեղեցիկ, և լուեալ ի նմանէ բանս իմաստութեան՝ ցանկացաւ կուսին։ Եւ կոչեցեալ զդայեակն իւր զՄբատ՝ յայտնէ նմա զկամս սրտի իւրոյ, առնուլ զօրիորդն Ալանաց ի կնութիւն իւր, և դաշինս և ուխտս հաստատել ընդ ազգի քաջացն, և զպատանին արձակել ի խաղաղութիւն։ Եւ հաճոյ թուեցեալ Մբատայ, յղէ առ արքայն Ալանաց՝ տալ զտիկին օրիորդն Ալանաց զՍաթինիկ ի կնութիւն Արտաշիսի։ Եւ ասէ արքայն Ալանաց. «Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս հաղարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Ալանաց»։

Զայս տեղի առասպելաբանելով վիպասանքն յերգելն իւրեանց ասեն. «Հնծաւ արի արքայն Արտաշէս ի սեամն գեղեցիկ, և հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն, և անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն, և ձգեալ զոսկեօղ շիկափոկ պարանն՝ ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց, և շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին, արագ հասուցանելով ի բանակն իւր»։ Որ և հշմարտութեամբ ունի այսպէս։ Քանզի պատուեալ է առ Ալանս մորթ կարմիր՝ լայքա շատ և ոսկի բազում տուեալ ի վարձանս՝ առնու զտիկին օրիորդն Սաթինիկ։ Այս է ոսկէօղ շիկափոկ պարանն։ Դոյնպէս և զհարսանեացն առասպելեալ երգեն, այսպէս ասելով. «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն»։ Քանզի սովորութիւն իսկ էր թագաւորացն մերոց, փեսայութեամբ ի դուռն տաճարին հասանել՝ դահեկանս ճապաղել իբրև զհիւպատեանն Հռոմայեցւոց. սապէս և թագուհեացն յառագաստին՝ մարգարիտ։ Այս է հշմարտութիւն բանիցս։

Սա առաջին եղեալ ի կանանցն Արտաշիսի՝ ծնանի նմա զԱրտաւազդ և զայլս բազումս, զորս ոչ կարևոր համարեցաք այժմ անուամբ յիշել. բայց զկնիսն յորժամ ի գործ ինչ հասանիցեմք։

Գ. Սպանումն Արգամայ եւ որդւոց նորա

Ի չափ հասեալ Արտաւազդայ որդւոյ Արտաշիսի՝ եղև այր քաջ, անձնահաճ և հպարտ. և նախանձ բերելով ընդ ծերունւոյն Արգամայ՝ հրապուրեաց զհայր իւր ցասնուլ Արգամայ, որպէս թէ թագաւորել ի վերայ ամենայնի խորհիցի։ Այսպէս ընկեցեալ զնա ի պատուոյն՝ ինքն առնու զերկրորդութիւնն։ Յետ այսորիկ երթալով Արտաշիսի ի ճաշ Արգամայ, կասկած իմն անկեալ, իբր թէ դաւել զարքայն խորհիցին՝ յարուցանեն որդիքն արքային ապշոպ, և անդէն իսկ ի հացին քարշեն զալիսն Արգամայ։ Եւ խռովութեամբ մեծաւ եկեալ յԱրտաշատ Արտաշէս

արքայ՝ դարձեալ արձակեաց զորդի իւր զՄաժան մեծաւ գնդաւ, և զբազումս յազգէն Մուրացեան սպանանել հրամայեաց, և զապարանսն Արգամայ այրել. և զհարճ նորին, որ կարի չքնաղ էր գեղով և մնացեալ գնացիւք ոտից, զոր կոչէին Մանդու, ածել ի հարճութիւն Արտաշիսի։ Զոր դարձեալ նուաճեալ յետ երկուց ամաց, ի բաց տալ հրամայէ զինչսն բայց ի հարճէն։

Իսկ Արտաւազդայ ոչ շատացեալ առնուլ ի բաց ի նոցանէ զերկրորդութիւնն պատիւ՝ յաւելու ևս հանել և զնախճաւան, և ըստ հիւսիսոյ երասխայ զամենայն դիւղս, յորում և ապարանս և բերդս ի նոցանէ շինէ իւր ի ժառանգութիւն։ Այսմ ոչ կարացեալ համբերել որդւոցն Արգամայ՝ ընդդիմանան նմա պատերազմաւ. բայց յաղթեալ արքայորդւոյն՝ սատակէ զամենայն ծնունդս Արգամայ հանդերձ հարբն, և որք միանգամ երևելիք էին յազգէ Մուրացեան. և զրաւէ յինքն զշէնս և զամենայն իշխանութիւնս նոցա։ Եւ ոչ ոք ապրեաց ի նոցանէն, բայց միայն աննշանք ոմանք և կրտսերք փախուցեալ առ Արտաշէս ապրեցան ի դրան արքունի։ Այս Արգամ է, որ յառասպելին Արգաւանն անուանի, և այս պատճառ պատերազմին ընդ Արտաւազդայ։

Դ. Երէ ո՛րպիսի էր Սմբատ, եւ զի՛նչ յԱլանս գործեաց. եւ բնակել Արտազու

Սիրելի է ինձ ասել և վասն առնն քաջին Սմբատայ. քանզի արդարև ըստ առասպելին ոչ ինչ կարի հեռի ի ճշմարտութենէն. որ ունէր հասակ անդամոց համեմատ քաջութեանն, և առաքինութեան ոգւոցն որսորդ, և գեղեցկութեան ալեօք վայելչացեալ. սակաւ ինչ արեան նիշ ունելով յաչսն՝ որպէս դրակոնտիկոն ի վերայ ոսկւոյ և ի մէջ մարգարտոյ ծագէր. և ի վերայ շոյտ անձին և մարմնոյ՝ զգոյշ յամենայնի, և տուչութիւն յաջողուածոց ունէր ի մարտս առաւել քան զամենայն ոք։ Զի յետ այնչափ արութեանց՝ օգնական եղբօրն Սաթինկան յաշխարհն Ալանաց հանդերձ զօրու երթայ հրամանաւ Արտաշիսի։ Քանզի մեռաւ հայր Սաթինկան, և այլ ոմն բռնացեալ թագաւորեաց աշխարհին Ալանաց, և հալածէր զեղբայրն Սաթինկան. զոր վանեալ հերքէ Սմբատ, և տիրացուցանէ ի վերայ ազգին զեղբայրն Սաթինկան, և զերկիր հակառակորդացն աւերէ. զամենայն միահամուռ ածէ գերի սաստիկ յԱրտաշատ։ Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարևելից կուսէ Մասեաց—որ կոչէր Շաւարշական գաւառ, ի վերայ պահելով զբնիկ անունն Արտազ. քանզի և աշխարհն ուստի գերեցանն՝ Արտազ կոչի մինչև ցայսօր ժամանակիս։

Ե. Աւերումն Կասբից, եւ գրգռութիւն ընդ Սմբատայ զարմից Արտաշիսի եւ ընդ միմեանս

Յետ մեռանելոյ վերջնոյ Արշակայ թագաւորի Պարսից, թագաւորեցուցանէ մերս Արտաշէս զհամանուն իւր զԱրտաշէս որդի նորին ի վերայ Պարսից աշխարհին: Եւ ոչ կամեցան հնազանդել նմա բնակիչք լերինն, որ անուանեալ կոչի յիւրեանց լեզուն պատիժահար գաւառ, որ է Դեղմանց լեառն, և ծովեզերեայք, և այսր ևս քան զնոսա. նա և Կասբից երկիրն յայն սակս ապստամբեն ի մերոյ արքայէն: Վասն որոյ առաքէ ի վերայ նոցա Արտաշէս զՍմբատ ամենայն զօրօքն Հայոց, ինքն արքայ յուղարկ երթալով աւուրս եօթն: Իսկ Սմբատայ երթեալ հնազանդէ զամենեսեան. բայց զերկիրն Կասբից աւերեալ՝ առեալ քան զԱրտազեան գերի ածէ ի Հայս. ընդ որս և զՋարդմանոս անուն թագաւոր նոցին: Վասն որոյ արժանի ըստ վաստակոցն պարգեւ նմա Արտաշէս զմասն արքունի, որ ի շէնս Դողթան, և զՈւղտու ակունսն, և առ այսոքիւք՝ և զաւարն ամենայն նմա թողու: Ընդ որ նախանձեալ Արտաւազդ՝ կամեցաւ սպանանել զՍմբատ. և յայտնեալ խորհրդոյն, բազում խռովութիւն վասն այնր լինէր հօրն: Իսկ Սմբատայ տեղի տուեալ գնաց զկողմամբք Ասորեստանի, իւրովք կամօք թողլով զիշխանութիւն զօրացն Հայոց, ընդ որ խանդայրն Արտաւազդ: Հրամանաւ Արտաշիսի բնակէ ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդրիք, ի յԱլկի նստուցեալ զբազմութիւն գերւոյն. քանզի էր ի ծերութեան կին արարեալ յասորեստանեայց հուպ յայն կողմանս, զոր յոյժ սիրեաց վասն այնորիկ և զնորին կողմամբք բնակեցաւ:

Իսկ Արտաւազդ յետ գնալոյն Սմբատայ առնու ի հօրէն՝ որում ցանկայրն, զիշխանութիւն զօրացն ամենեցուն: Եւ նախանձ բերելով ընդ նմա եղբարցն ի գրգռութենէ կանանց իւրեանց. վասն որոյ կարգէ Արտաշէս զՎրոյր՝ հազարապետ, զայր իմաստուն, և բանաստեղծ, և հաւատայ ի նա զամենայն գործս տանն արքունի. և զՄաժան կարգէ քրմապետ ի յԱնի դիցն Արամազդայ: Բաժանէ Արտաշէս և զիշխանութիւն զօրուն ընդ չորս. զարևելեան զօրն թողու ի վերայ Արտաւազդայ, և զարևմտեանն տայ Տիրանայ, զհարաւայինն ի Սմբատ հաւատայ և զհիւսիսայինն ի Զարեհ: Եւ Զարեհ էր այր սէգ և յորս երէից նահատակ, իսկ առ պատերազմունս վատ և տաղտուկ. զորոյ զփորձ առեալ Քարձամայ ուրումն արքայի Վրաց՝ ապստամբեցուցանէ զերկիրն, և կալեալ զՋարեհ, ի բանտի դնէ ի Կաւկաս: Ընդ որում պատերազմեալ Արտաւազդայ և Տիրանայ հանդերձ Սմբատաւ՝ դարձուցանեն զեղբայրն ի մեծէ կարակմէ:

Զ. Պատերազմ ընդ զօրս Դոմետիանոսի ի Բասեան

Ազմուկ շփոթից իմն լեալ յարևմուտս, ընդ որ վստահացեալ Արտաշէս՝ նշկահեալ ընդդիմանալ Հռոմայեցւոցն տէրութեանն, ոչ տալով հարկս։ Իսկ Դոմետիանոսի կայսեր ցասուցեալ՝ զօրս ի վերայ Արտաշիսի առաքէ. որոց հասեալ ի կողմանս Կեսարու, զՏիրան և զղօրսն արևմըտեան առաջի արկեալ՝ ածեն տագնապաւ մինչև ի քաջ ընդարձակ հովիտն Բասենայ. յորում ընդդէմ դիպեալ Արտաւազդ արևելեայ և հիւսիսային զօրօքն, հանդերձ ամենայն որդւովքն արքայի, և պատերազմեալ՝ սաստկապէս վտանգին։ Յորոյ ի վերջս պատերազմին հասեալ Սմբատ հարաւային զօրօքն՝ ընդ մէջ անցեալ ապրեցուցանէ զորդիսն արքայի, յաղթութիւն և զրաւ պատերազմին արարեալ։ Զի թէպէտ և ծիրագուն էր՝ երիտասարդապէս յարդարեաց և մղեաց զճակատն, և հետամուտ եղեալ հալածեաց զղօրսն Հռոմայեցւոց մինչև ի սահմանս Կեսարու։

Զայս կամելով երգել յառասպելսն՝ Դոմետ զոմն ասեն եկեալ, որ է ինքն կայսրն Դոմետիանոս. ոչ ինքն եկեալ այսր, այլ զհրամանն նորա և զղօրս այլաբանելով յանուն նորա կոչեն։

Բայց ըստ բախտի եղեալ Արտաշիսի՝ մեռանի ի նմին ժամանակի Դոմետիանոս ի Հռոմ, և զկնի նորա Ներուաս ոչ աւելի թագաւորեալ քան զմի ամ։ Ընդ որ առաւել հպարտացեալ զօրացն Հայոց և Պարսից՝ քան զմի ամ։ Ընդ որ առաւել հպարտացեալ զօրացն Հայոց և Պարսից՝ ասպատակ ևս ի Յոյնս արարին։ Ընդ սոսա հայելով Եգիպտացւոց և կողմանցն Պաղեստինացւոց՝ արգելուն և նոքա զհարկիլն Հռոմայեցւոց։

Է. Յաղագս Տրդատայ եւ նորին գործոց, եւ մանուանն Մաժաճայ յեղբարցն

Զայսու ժամանակաւ թագաւորեալ լինի Հռոմայեցւոց Տրայանիոս, և խաղաղացուցեալ զամենայն արևմուտս, դիմէ ի վերայ Եգիպտացւոց և Պաղեստինացւոց. և նուաճեալ զնոսա ընդ իւրով ձեռամբ, խալալայ յարևելս ի վերայ Պարսից։ Աստ աճապարեալ Արտաշէս մեծապէս ընծայիւք իջանէ ընդ առաջ նորա, զմեղանս յանձն առեալ, հանդերձ հարկօք անցելոց ամացն լինի առաջի նորա. և թողութիւն ի նմանէ գտեալ, դառնայ յաշխարհս Հայոց։ Եւ Տրայիանոսի անցեալ ի Պարսս, և զամենայն զկամս իւր կատարեալ՝ դառնայ ընդ Ասորիս։

Ընդ առաջ նորա իջեալ Մաժան՝ Մատնութիւն զեղբարցն առնէր. «Դիտեա՛, ասէ, արքայ. եթէ զԱրտաւազդ և զՏիրան վտարանդիս ոչ արասցես, և զղօրսն Հայոց Ջարեհի ոչ հաւատասցես, հարկքն անաշխատ առ քեզ ոչ եկեսցեն»։ Զայս արար Մաժան՝ քէն պահելով վասն Սմբատայ, զի և զնա նորա էր սնուցեալ. ընդ նմին և զՏիրան խորհեցաւ

հանել, զի ինքն լիցի քրմապետ միանգամայն և սպարապետ արեմտից։ Զորմէ ոչ ինչ փոյթ արարեալ Տրդատայ, արձակէ ունայն։ Իսկ Արտաւազդայ և Տիրանայ իմացեալ զխորհուրդն նորա՝ դարան գործեալ յորս սպանին զՄաժան, զոր տարեալ Թաղեցին ի Բագնացն աւանի իբրև զքրմապետ։ Իսկ Արտաշէս յայնմ հետէ անսայթաք հարկեաց Տրդատայ նու, և յետ նորա Աղրիանոսի կայսեր զամենայն աւուրս իւր։

Ը. Թէ ո՛րպէս բազմամարդացոյց Արտաշէս զաշխարհս, եւ սահմանս հաստատեաց

Յետ ամենայն առաքինութեանց և գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զսահմանս դիւղից և ագարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով աղգս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս։ Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս, և պնակաձև փոսել զմէջսն, ծածկելով յերկրի. և չորեքկուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ։ Ընդ որ նախանձեալ Արտաշրի որդւոյ Սասանայ՝ զնոյն նման հրամայէ առնել և ի Պարսից աշխարհին և յիւր անունն անուանել, զի մի՛ ևս յիշեսցի անունն Արտաշիսի։

Բայց ասի, ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային, յաղագս շինութեան երկրիս։

Թ. Յաղագս մահուանն Արտաշիսի

Դեղեցիկ իմն պատմէ և Արիստոն Փեղղացի յաղագս մահուանն Արտաշիսի։ Քանզի ի ժամանակին որպէս ապստամբեցին Հրեայք յԱդրիանոսէ Հռոմայեցւոց թագաւորէ, և նոյն պատերազմ ընդ Բուփոսի եպարքոսի, առաջնորդութեամբ առն ուրումն աւազակի, որում անուն էր Բարքոբայ, այս ինքն աստեղ որդի, որ էր գործովք չարագործ և սպանող, բայց անուամբ իւրով մեծաբանեալ պարծէր, որպէս թէ յերկնից ծագեաց նոցա փրկիչ, իբր նեղելոց և գերեաց։ Եւ այնքան ապստամբացոյց զմարտն, մինչև ի նա հայելով ի բաց կացին ի հարկելոյ Հռոմայեցւոց Ասորիք և Միջագետք և Պարսք ամենայն. քանզի էր և լուեալ, եթէ եմուտ յԱդրիանոս ախտ ուրկութեան։ Բայց մերն Արտաշէս ոչ երկմտեաց ի նմանէ։

Եւ եղև ընդ նոյն ժամանակս հասանել Ադրիանոսի ի Պաղեստինէ և սատակել զապստամբսն պաշարմամբ ի քաղաքի մի փոքր, հուպ

յերուսաղէմ. վասն որոյ և ամենայն ազգին Հրէից հրամայեաց մերժել ի հայրենի աշխարհէն որ և ոչ ի բազում հեռաստանէ հայեսցին յերուսաղէմ: Եւ ինքն շինէր ղերուսաղէմ, զաւերեալն ի Վեսպասիանոսէ և ի Տիտոսէ և յիւրմէ. և անուանեաց Հեղիայ յիւր անուն, որպէս և կոչէրն իսկ Ադրիանոս՝ արեգակն: Բնակեցոյց ի նմա հեթանոսս և քրիստոնեայս, որոց եպիսկոպոս է Մարկոս ոմն: Ընդ այն ժամանակս առաքեաց զօր ծանր զկողմամբք Ասորեստանի. և մերոյն Արտաշիսի հրամայեաց երթալ ի Պարսս հանդերձ իւրովք զիւգոստաւոք. զորոյ զհետ քարտուղարութեամբ լեալ այս այր, որ զայս պատմութիւն ետ մեզ, հանդիպի Արտաշիսի ի Մարս, ի Սոհունդ անուանեալ տեղւոջ:

Եղև հիւանդանալ նմա ի Մարանդի, ի Բակուրակերտ աւանի. և զԱբեղոյ զոմն նահապետ Աբեղենից տոհմին, զայր շոյտ և շղոմարար և սուտակասպաս, ի նորին խնդրոյ արձակէ յեկեղեաց յերիզայ, ի մեհեանն Արտեմիդեայ, խնդրել ի կռոցն բժշկութիւն և զբաղում կեանս: Որոյ ոչ ժամանեալ դառնալ՝ հասանէ վախճան Արտաշիսի: Եւ գրէ, եթէ ո՛րչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք և հարճք և մաերիմ ծառայք. և ո՛րպիսի շուք բազմադիմիս արարին առ ի պատիւ դիոյն, քաղաքականաց կարգօք և ոչ որպէս զբարբարոսս: Դագաղքն էին, ասէ ոսկեղէնք, գահոյքն և անկողինքն բեհեղեայ. և պատմուճանն որ զմարմնովն՝ ոսկեթել. թագ կապեալ ի գլուխն, և զէնն ոսկւով առաջի եդեալ. և զգահոյիւքն շուրջ՝ որդիքն և բազմութիւն ազգականացն, և առ այսոքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք, և նահապետքն և նախարարութեանցն գունդք և միանգամայն զօրականացն վաշտք, ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին. և առաջի պղնձիս հարկանելով փողս, և զկնի կուսանք ձայնարկուք սևազգեստք և աշխարող կանայք, և զհետ՝ բազմութիւն ռամկին: Եւ այսպէս տարեալ թաղեցին: Եւ շուրջ զգերեզմանսն լինէին կամաւոր մահունք, որպէս վերագոյնն ասացաք: Եւ սորա այսպէս սիրելի եղեալ աշխարհիս մերոյ, թագաւորեալ ամս քառասուն և մի:

7. ԱՐՏԱՎԱԶԴ

Ա. Արտաւազդայ թագաւորութիւն, եւ հալածել զեղբարս իւր եւ զհօրս, եւ մահ հանդերձ այլաբանելով

Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա, և հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտայ և Առբերանոյ, զի մի՛ բնակեսցեն յԱյրարատ ի կալուածս արքայի. բայց միայն

զՏիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ գոյր նորա։ Որ յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն, իւրոյ, անցեալ զկամրջան Արտաշատ քաղաքի, որսալ կինճս և իշավայրիս զակամբք Դինայ, և աղմկեալ ի ցնորից իմն խելագարանաց, ընդ վայր յածելով երիվարաւն՝ անկանի ի խոր իմն մեծ, և խորասոյզ լեալ անհետի։

Ջամանէ երգիչքն Դողթան առասպելաբանեն այսպէս. եթէ ի մահուանն Արտաշիսի բազում կռուորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց. դժուարի, ասեն, Արտաւազդ՝ ասելով ցհայրն. «Մինչ դու դնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ»։ Վասն որոյ անիծեալ զնա Արտաշիսի՝ ասաց այսպէս. «Եթէ դու յորս հեծցիս յԱղատան ի վեր ի Մասիս, զբեղ կալցին քաջք, տարցին յԱղատան ի վեր ի Մասիս. անդ կայցես, և ոչոյս մի տեսցիս»։

Զրուցեն զամանէ և պատաւունք, եթէ արգելեալ կայ յայրի միում, կապեալ երկաթի շղթայիւք. և երկու շունք հանապազ կրծելով զշղթայսն՝ ջանալ ելանել և առնել վախճան աշխարհի. այլ ի ձայնէ կռանահարութեան դարբնաց զօրանան, ասեն, կապանքն։ Վասն որոյ և առ մերով իսկ ժամանակաւ բազումք ի դարբնաց, զհետ երթալով առասպելին՝ յաւուր միաշաբաթուջ երիցս կամ չորիցս բախեն զսալն, զի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազդայ։ Բայց է ճշմարտութեամբ այսպէս, որպէս ասացաք վերագոյն։

Այլ ոմանք ասեն և ի ծնանելն զսա դիպեալ պատահարաց իմն. զոր համարեցան կախարդել զսա կանանց զարմիցն Աշղահակայ. վասն որոյ զնոսա բազում չարչարեաց Արտաշէս։ Եւ զայս նոյն երգիչքն յառասպելին ասեն այսպէս. եթէ «Վիշապազունք դողացան զմանուկն Արտաւազդ, և զև փոխանակ եղին»։ Բայց ինձ արդարացեալ թուի լուրն այն, թէ ի ծննդենէն և եթ մոլութեամբ լեալ, մինչ նովիմբ և վախճանեցաւ։ Եւ առնու զթագաւորութիւնն Տիրան եղբայր նորին։

ՄԻՋՆԱԴԱՐ

IV—VIII ԴԱՐԵՐ

8. [ՏՐԴԱՏ ԵՎ ԳՐԻԳՈՐ]

Ա. [Տրդատը ճաղրում է Գրեգորի քագավորին]

Ծաւուրս ժամանակացն այնոցիկ զօրաժողով լինէր իշխանն Դ֊թաց, և բազում գունդս զօրաց ժողովեալ՝ գայր տալ մարտ պատերազմի ընդ իշխանին Յունաց։ Պատգամս յղէր օրինակաւս այսուիկ, եթէ «Ընդէ՞ր բնաւ ելանելոք խառնամխի ի պատերազմ՝ սպառել զզօրս մեր, և վըտանգ և տագնապ միանգամայն աշխարհի հասուցանելոք. ես աւասիկ ախոյեան ելանեմ քեզ ի մերոց զօրաց աստի, և դու ինձ ի յունականց այտի. հասցուք եկեսցուք ի մարտի տեղի. եթէ ես զքեզ յաղթահարեցից՝ Յոյնք ինձ հնազանդեսցին ի ծառայութիւն. և թէ դու ինձ յաղթեսցես՝ մեր կեանքս քեզ նուաճեսցին և հնազանդեսցին. և առանց արեան և կոտորածոյ լիցի շինութիւն կողմանցս երկոցունց»։

Եւ իբրև զայն ամենայն լուաւ թագաւորն Յունաց՝ երկեաւ. քանզի օրինօք կազմութեամբ, գունդ առ գունդ ճակատել ոչ առնուին յանձն, և ըստ պատգամին պատշաճի ոչ կարէր ունել յանձին, քանզի տկար էր յոսկերաց զօրութեամբ. սրտաթափ եղեալ զարհուրեցաւ, քանզի ոչ գիտէր, ինչ ասացէ բանիցն պատասխանի։

Յայնմ ժամանակի հրաման տայր թագաւորն՝ հրովարտակս և դեսպանս առնել առ իշխանս և զօրս զօրութեան իւրոյ, զի ուր և իցեն՝ առ նա հասանիցեն վաղվաղակի։ Յայնմ ժամանակի իշխանք և զօրք և նախարարք առ նա հասանէին վաղվաղակի։ Առեալ և Լիկիանէ զբուն գունդն որ ընդ իւրով ձեռամբն էր՝ փութայր հասանէր ի տեղի պատերազմին՝ յանդիման լինել թագաւորին, և Տրդատէս ընդ նմա։

Եւ մինչ դեռ գային գունդք զօրացն՝ դէպ եղև նոցա գալ մտանել ի նեղագոյն տեղի մի, յառուամէջս այգեստանւոյն, ի փողոցամէջս համ֊

քաւրօցայն, առ դրունս քաղաքին. քանզի դդրունս քաղաքին ագխեալ էր, զի ժամ էր հասարակ դիշերոյ: Իբրև ոչ գտաւ խար երիվարաց զօրուն բազմութեան դարման կերակրոյ մինչև ի մէջ դիշեր՝ հայեցեալ տեսանէին ի զուարթափակ քաղաքորմի միջոց, զի խոտահամբար մթերեալ էր. և ոչ ոք կարաց ձգել զձեռն իւր վասն որմոյն բարձրութեան: Յայնժամ Տրդատէս ելեալ և իջեալ՝ հոսէր ընկենոյր բարդս բարդս ի մէջ զօրացն մինչ ի լուսին բաւականի: Նա և զհամբարապանսն իսկ և բաղումս ի շանց յայսկոյս որմոյն ընկենոյր ի մէջ զօրացն, և ինքն անդրէն ելեալ իջանէր:

Զայն ամենայն ոյժ պնդութեան տեսեալ Լիկիանէս զարմացաւ: Իսկ իբրև այգն զառաւօտն մերկացաւ՝ դրունք քաղաքին բացան, և զօրքն ամենայն առ հասարակ ի ներքս մտանէին. և Լիկիանէս յանդիման լինէր թագաւորին, և ամենայն մեծամեծքն և սպարապետքն և զօրապլուխքն և իշխանքն:

Ապա կաց պատմեաց թագաւորն իշխանացն զամենայն պատգամս թագաւորին Պ֊ոլսոյ: Յայնժամ խօսել սկսաւ Լիկիանէս ընդ արքային և ասէ. «Մի ինչ զարհուրեսցի սիրտ տեառն իմոյ. զի գոյ աստ այր մի ի դրան քում, զի իբրդ այդ նովաւ վճարին. Տրդատէս անուն նորա, ի տոհմէ թագաւորին Հայոց աշխարհին»: Եւ կաց պատմեաց զերեկորին զգործս քաջութեան նորա: Յայնժամ հրամայեաց, և ածին զՏրդատիոս յանդիման թագաւորին. և պատմեաց նմա կարգաւ զամենայն: Յայնժամ ժամ ետուն կազմութեան մարտի՝ առ ի ժամ վաղուի զմիմեանս տեսանել պատերազմաւ:

Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս. և զարդարեցին զՏրդատիոս ի զարդ կայսերական, արկեալ զնովաւ զնշան թագաւորութեանն. և ոչ ոք գիտէր վասն նորա. հրաման ել ամենեցուն, թէ ինքն իսկ կայսրն իցէ: Եւ նորա առեալ զգունդն զօրաց բազմութեան՝ ի ձայն փողոյ տագնապաւ յառաջ մատուցանէր մինչև յանդիման Բշնամեացն: Իբրև յանդիման եղեն միմեանց կայսերակերպն և թագաւորն՝ մարտակ ի կուշտ արարեալ երիվարացն ի միմեանս հասանէին. անդ յաղթահարէր կայսերակերպն զթագաւորն. ձերբակալ արարեալ՝ ածեալ յանդիման առաջի կայսերն կացուցանէր:

Յայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիոս, և մեծամեծ պարգևս ետ նմա. թագ կապեաց ի գլուխ նորա և ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա, և կայսերակերպն զարդու շքեղացուցեալ մեծարեաց զնա. և գումարեաց ի ձեռս նորա զօրս բազումս յօգնականութիւն նմա, և արձակեաց յիւրական աշխարհն Հայոց:

Եւ յետ մարտին յաղթութեան քաջութեանցն զոր արար՝ դարձեալ լինէր ի կողմանցն Յունաց Տրդատ արքայ Հայոց մեծաց: Խաղաց գնաց

թագաւորն ի կողմանս Հայոց, և նկն եղիտ անդ զօրս բազումս Պարսից, զի զաշխարհն յինքեանս գրաւեալ էին ի ծառայութիւն. զբազումս կոտորէր, և զբազումս փախստականս արարեալ ի կողմանս Պարսից արկանէր. և զհայրենեացն տէրութիւն յինքն նուաճեաց, և զօրացաւ ի վերայ սահմանաց նորա։

Բ. [Գրիգորը Խոր Վիրապում։ Տրդատը ավերում է Պարսկաստանն ու Ասորեստանը]

Խօսել սկսաւ թագաւորն և ասէ. «Քանի՞ցս անգամ տուեալ է քեզ խրատ և պատուէր, զի մի երկրորդեսցես առաջի իմ զհատուածս բանիցդ առաչպելաց զոր յօդեալ և ուսեալդ ես, զոր ոչդ վայել է քեզ խօսել. վասն որոյ ես խնայեցի ի քեզ՝ իբրև ի վաստակաւոր, զի եկեսցես ի կարգ ուղղութեան՝ պաշտել զդիսն։ Զորոց դու առեալ զնոցա պատիւն՝ ամպէտ կարդաս արարիչ. և որ են իսկ ճշմարտիւ արարիչ՝ թշնամանես, և զՀնծն Անահիտ, որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց. և ընդ նմին և զմիծն և զարին Արամազդ, զարարիչն երկնի և երկրի. ընդ նմին և զայլ աստուածսն կոչեցեր անշշունչս և անմտունչս. և ի մեզ ես ձգտեցար դնել թշնամանս, համարձակեցար ասել ձիս և ջորիս։ Եւ քանզի զամենայն թշնամանս յաճախեցեր, մինչ իշխեցեր ես մեզ ասել անասունս՝ արդ ես արկից զքեզ ի տանջանս և եղից դանդանաւանդ ի կղակս քո. զի զիտասցես եթէ ի սին բանից քոց, զոր յաճախեցեր առաջի իմ ասել՝ վաղվաղակի եղեն քեզ արդիւնքն։ Եւ այս, ասէ, մեծ է ինձ, որ խօսեցայս ընդ քեզ և մեծարանս եղի քեզ, և դու հատուր ինձ պատասխանի իբրև ընկերի»։

Եւ ետ կապել զնա ձեռս յետս, և արկանել դայլ ի բերան նորա. և ետ կախել շառաչեղս աղի ի վերայ ողին նորա, և տալ գելոցս կրծից նորա, և արկանել առասանս ի կապս կրծից գելարանացն, կապել և համբառնալ ի բարձրաւանդակ տանիս ապարանից որմոյն մենքենայիւք։ Եւ կայր պրկեալ կապեալ այնպէս զաւուրս եօթն։ Եւ յետ եօթն աւուրն ետ հրաման, և լուծին զնա ի չարաչար և ի դառն կապանացն, և ածին կացուցին առաջի նորա։

Եւ մինչդեռ խորհէր Տրդատիոս խօսել և այլ ողոքով ընդ նմա, և յղել պատգամ և խոստանալ կեանս և պատիւս, որում ոչ ինչ էր լսելոց,—«եթէ այնմ ես ոչ լսիցէ՝ ասէ, և այլ ևս յաւելից, և ի տոկ կատեցից».—յառաջ մատուցեալ ոմն ի նախարարացն, որում անուն էր Տաճատ, փեսայ Արտաւանայ սպարապետի արքայի՝ սկսաւ խօսել և տալ տեղեկութիւն և ասել այսպէս վասն նորա, թէ «Վասն զի չէ պարտ կե-

նաց՝ վասն այնորիկ ոչ կամի կեալ և զլոյս տեսանել: Զի այսքան ժամանակք են, որ առ մեզ բնակեալ է, և ոչ գիտէաք զսա. այլ զա է որդի Անակայ մահապարտի, որ սպան զհայր քո խոսրով, և արար խաւար Հայոց աշխարհիս և ի կորուստ մատնեաց զայս աշխարհ և ի գերութիւն. արդ՝ չէ պարտ կեալ դմա, զի որդի վրիժապարտի է դա»:

Եւ չետ այսչափ հարցից և տանջանաց, գանից և բանտից, գելարանաց և կախաղանաց, դառն նեղութեանց և ամենայն կտտանաց, որով կտտեցին զնա, բազում համբերութեամբ յանձն իւր տարեալ վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. այդ՝ իբրև այնմ ևս հասանէր թագաւորն ի վերայ իրացն, եթէ արդարև որդի Անակայ Պարթևի է, որ սպան զխոսրով հայր նորա՝ հրաման տայր կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք և կապեալ պարանոցաւ խաղացուցանել զնա յԱյրարատ գաւառ, և տալ զնա ի ղեկակ բերդին Արտաշատ քաղաքի, և իջուցանել ի վիրապն ներքին, որ անհնարին էր խորութեամբ, մինչև անդէն մեռցի: Եւ եղև նա յայնմ վիրապի ամս երեքտասան: Եւ ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ի ձմերոց յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, ի Հայոց աշխարհ յարևելս:

Իսկ թագաւորն Տրդատ զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն աւերէր քանդէր զերկիրն Պարսից թագաւորութեանն և զաշխարհն Ասորեստանի, աւերէր և հարկանէր ի հարուածս անհնարինս: Վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս ի բանս կարգի առակաց, թէ «Իբրև զսէգն Տրդատ, որ ի սիգալովն աւերեաց զթումբս գետոց, և ցամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուց»: Վասն զի սէգ իսկ էր առ հանդերձս և այլ ուժով պնդութեան, հարստութեամբ, բուռն ոսկերօք և յաղթ մարմնով, քաջ և պատերազմող անհնարին, բարձր և լայն հասակաւ. որ զամենայն ժամանակս կենաց իւրոց պատերազմեալ և առնէր մարտից յաղթութիւն: Մեծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանայր, և զհոյակապ շքեղութիւն յաղթութեան ընդ ամենայն աշխարհ կացուցանէր. հարկանէր ի հարուածս զինամիսն, և խնդրէր զբնս վրիժուց իւրոց հայրենեացն. առնոյր աւար բազում ի կողմանցն Ասորւոց, և թափէր կապուտ սաստիկ անհնարին ի նոցանէն: Արկանէր ի սուր զգօրս Պարսից, և թափէր կողոպուտ անհնարին. լինէր առաջնորդ առն և ձիոյ զօրացն Յունաց, և մատնէր նոցա զբանակս նոցա. հանէր զգօրս Հոնաց սաստիկ յոյժ, և գերէր զկողմանս Պարսից:

Եւ զայն ամս երեքտասան, որ եղև Գրիգորիոս ի բերդին բանդին և ի խոր վիրապին, կին ոմն այրի, որ էր ի բերդին յայնմիկ, հրաման առեալ յարհաւրաց՝ զի աւուրն նկանակ մի արարեալ պատրաստական ընկենուլ ի ներքս ի խոր վիրապն. և այնու կերակրեալ լինէր նա ի հրամանէն Աստուծոյ զայն ամս որ եղև նա անդ: Իսկ յայն վիրապ, ուր

ընկեցին զնա՝ պահեալ լինէր նա կենդանի շնորհիւ Տեառն իւրոյ։ Իսկ այլ մարդիկ, որ միանգամ իջուցեալ էր անդր՝ ամենեքեան մեռեալ էին վասն դժնդակ չարաշունչ դառնութեան տեղւոյն, վասն կարակում տրղմին, օձախառն բնակութեան և խորութեանն։ Վասն չարագործաց իսկ էր շինեալ զայն տեղի և ի սպանումն մահապարտացն ամենայն Հայոց։

Գ. [Տղատր խոզ է դառնում և Գրիգորի օգնությամբ կրկին մարդու կերպարանք առնում]

Արդ՝ աւուրս վեց ի խոր տխրութեան և յանհնարին տրտմութեան կացեալ թագաւորն առ անձուկ սիրոյ գեղոյն Հռիփսիմեայ. ապա յետ այսորիկ ժամ տուեալ որսոյ՝ ամենայն զօրաց ածել կուտել զպառականն, խուճապական սփռեալ, երագաղ տուեալ, թակարդ ձգեալ, կամեցեալ որս առնել, երթեալ ի դաշտն Փառական Շեմակաց։

Այն ինչ ի կառս ելեալ կամէր թագաւորն ըստ քաղաքն ելանել՝ անդէն վաղվաղակի պատուհաս ի Տեառնէ ի վերայ հասանէր. և հարեալ զթագաւորն այսոյն պղծութեան՝ ի կառացն ի վայր կործանէր։ Եւ անդէն մոլեգնել սկսաւ, և իւրովի ուտել զիւր մարմինն. նա և ըստ նմանութեանն Նաբուգոդոնոսորայ արքային Բաբելացւոց, ելեալ ըստ մարդկային բնութիւնս արտաքս՝ ի նմանութիւն վայրենի խոզոց, իբրև զնոսա ընդ նոսա ի մէջ նոցա երթեալ բնակէր։ Եւ այնուհետև մտեալ չեղէգն, խոտաճարակ լեալ անհնարին անզգայութեամբ, մերկ զանձն ընդ դաշտսն կոծելով։ Զի թէպէտ կամեցան արգելուլ անդէն ի քաղաքին՝ ոչ կարացին, մի՝ վասն բնական ուժոյն, և մի՝ վասն զի էր և ոյժն դիւաց որ ի նմայն հարեալ էին։

Նա և ամենայն մարդիկն, որ ի քաղաքին էին՝ նոյն օրինակ դիւաբախք մոլեգնէին. և անհնարին կործանումն ի վերայ աշխարհին հասանէր։ Եւ ամենայն ընտանիք թագաւորին, ծառայք և սպասաւորք առ հասարակ, հարուածովք հարեալք լինէին. և անհնարին սուգ վասն հարուածոցն լինէր։

Յայնմ ժամանակի տեսիլ երևեալ յԱստուծոյ ի վերայ քեռ թագաւորին, որոյ անուն էր Խոսրովիդուխտ։ Արդ՝ եկեալ խօսէր ընդ մարդկանն, պատմէր զտեսիլն և ասէր. «Տեսիլ երեւեցաւ ինձ յայսմ գիշերի. այր մի ի նմանութիւն լուսոյ եկեալ՝ պատմեաց ինձ, եթէ «Ոչ այլ ինչ գոյ բժշկութիւն հարուածոցդ, որ եկին հասին ի վերայ ձեր՝ եթէ ոչ յղեսջիք դուք ի քաղաքն յԱրտաշատ, ածել անտի զկապեալն Գրիգորիոս. նա եկեալ ուսուսցէ ձեզ դեղ ցաւոցդ բժշկութեանն»։

Արդ՝ իբրև լուան մարդիկն՝ սկսան ծիծաղել զբանիւքն զոր ասաց. սկսան խօսել ընդ նմա և ասեն. «Եւ դո՛ւ ուրեմն մոլեգնեցար. դև ուրեմն հարաւ ի քեզ: Ձիա՞րդ է, զի այս հնգետասան ամ է, զի ընկկցին զնա յանհնարին խոր վիրապն, և դու ասես եթէ կենդանի է. արդ և ոսկերսն իսկ ո՞ւր իցեն. զի նոյն օրին, իբրև իջուցին զնա անդր՝ յօձիցն իսկ տեսչնէն նոյնժամայն սատակեալ իցէ»:

Իսկ կրկնեաց դարձեալ ևս կնոջն զնոյն տեսիլ, և հնգկնեաց սպատնալեօք, զի եթէ ոչ պատմեսցէ ստէպ ստէպ՝ մեծամեծ տանջանս ընկալցի, և հարուածք մարդկան և թագաւորին ևս քան զևս սաստկասցին մահու և պէսպէս տանջանօք: Եւ մտեալ անդրէն խոսրովիդուխտն՝ մեծաւ երկիւղիւ և զգուշութեամբ ասաց զբանսն հրեշտակին:

Իսկ նոքա վաղվաղակի յղէին անդր նախարար զոմն աւագ, որոյ անուն Օտայ կոչէր: Եւ գնաց նա ի քաղաքն Արտաշատ՝ հանել զնա ի խոր բանդէ վիրապին: Արդ՝ իբրև եկն հասս Օտայն ի քաղաքն յԱրտաշատ՝ ընդ առաջ ելանէին նմա քաղաքացիքն՝ հարցանել զպատճառս գալոյն: Եւ նա ասէ ցնոսա, թէ «Վասն կապելոյն Գրիգորի եկեալ եմ, տանել զնա»: Իսկ նոքա զարմացեալ առ հասարակ ասէին. «Ո՞ դիտէ թէ կայցէ. զի բազում ամք են, զի ընկկցին զնա անդր»: Իսկ նա պատմեաց զիրս տեսլեանն և զգործն զինչ եղեն իսկ:

Եւ եկին բերին կարս պարանաց երկայնս և ստուարս, և կցեցին իջուցին ի ներքս: Աղաղակեաց Օտայ նախարարն ի ձայն մեծ և ասէ. «Գրիգորիոս, եթէ կայցես ուրեք՝ եկ ի դուրս. զի տէր Աստուածն քո, զոր պաշտէիրն դու՝ նա հրամայեաց հանել զքեզ այսր»: Եւ անդէն յոտն կացեալ՝ վաղվաղակի շարժեաց զպարանն, և բուռն հարեալ ունէր:

Իսկ սոցա դիտացեալ՝ ձգեալ հանին զնա ի վեր, և տեսին զի թըխացեալ էր մարմին նորա իբրև պածուղ սևացեալ. և անդէն հանդերձս մատուցեալ զգեցուցին նմա, և խնդութեամբ առին գնացին յԱրտաշատ քաղաքէ, տանել ի Վաղարշապատ քաղաք: Յայնմ ժամանակի առ վրտանգի տարակուսի ցաւոցն՝ ելեալ թագաւորն յերամէ խոզիցն՝ դիւին առեալ ածէր ընդ առաջ նորա մերկ խայտառակ: Եւ նախարարքն արտաքոյ քաղաքին սպասէին նոցա:

Արդ՝ իբրև տեսանէին զնոսա ի բացէ, զի գային Գրիգորիոս օտայիւն հանդերձ, և այլ բազում մարդիկ, որ գային ընդ նոսա յԱրտաշատ քաղաքէ՝ ընդ առաջ խաղացեալ, մոլեգնելով և ուտելով զմարմինս իւրեանց՝ դիւահարէին և փրփրէին առաջի նորա:

Իսկ նա վաղվաղակի ծունր եդեալ յաղօթս կայր, և նոքա անդրէն ի զգաստութիւն դառնային: Եւ նա անդէն հրամայեաց, զի արկցեն զանձամբք իւրեանց հանդերձս և ծածկեսցեն զամօթ իւրեանց: Եւ մա-

տուցեալ թագաւորն և նախարարքն՝ բուռն հարեալ ունէին զոտից սրբոյն Գրիգորի և ասէին. «Խնդրեմք ի քէն, թող մեզ ցյանցուման մերոց զոր մեք ընդ քեզ արարաք»։

Դ. [Հերաձոսությունը պատվում է]

Առնոյր այնուհետև խորհուրդ հաւանութեան ընդ թագաւորին և ընդ իշխանսն, նախարարօքն և զօրօքն հանդերձ՝ վասն խաղաղութեան հասարակաց, քակել, կործանել, բառնալ զգայթակղութիւնսն ի միջոյ, ի բաց կորուսանել. զի մի՛ ումեք լիցի խէթ և խութ այնուհետև ընդ ոտս անկանել և խափան առնել՝ ելանել յաղատութիւնն վերին։ Այլ զի քաջալերեալք ամենեքեան հասանիցեն ի բարեացն կատարումն, ի նըշանակեալ նպատակն երանելւոյն Պաւղոսի, թէ «Միաբան հասցուք ի չափ հասակին Քրիստոսի», որոյ աղատութիւնն յերկինս է. ակն ունել փրկչին մեծին Աստուծոյ, և պարծանք ի խաչն, և գովութիւն ի փառս Աստուծոյ։

Իսկ անդէն վաղվաղակի թագաւորն ինքնիշխան հրամանաւ, և ամենեցուն հաւանութեամբ, զործ ի ձեռն տայր երանելւոյն Գրիգորի, զի ցյառաջագոյն զհայրենական հնամեացն նախնեացն և զիւր կարծեալ աստուածսն չաստուածս անուանեալ՝ անյիշատակ առնել, ջնջել ի միջոյ։ Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի վաղարշապատ քաղաքէ՝ երթալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբագինսն Անահտական դիցն, և որ յերազամոյն տեղիսն անուանեալ կայր։ Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց, անուանեալ Դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նմա ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին։

Ուր և երևեալ կերպարանեալ դիւացն ի նմանութիւն առն և ձիոյ բազմութեան, կազմութեան գնդի և հետևակազօրու, մկնդաւորք և ուռնաւորք, առաջի ընթացեալք ի կերպարանս մարդկան նմանութեան, նիզակօք և նշանօք, ի ղէն և ի զարդ վառեալք, մեծաւ գոչմամբ զաղաղակ հարեալ՝ փախստեայք յԱնահտական մեհեանն անկանէին, ուստի ընդ հասեալսն մարտ եղեալ կռուէին. նետս անոյժս քարավէժս թանձրատարափս ի վերուստ ի շինուածոցն ի խոնարհ զմարդկան ցնդէին. զորս և սակաւ մի զարհուրեցուցեալ, զնորահաւատ մարդիկն։ Իսկ սուրբն Գրիգոր իբրև տեսեալ զայն՝ զնշան տէրունական խաչին առնոյր և դիմէր ի դուռն մեհենին. և ամենայն շինուածք մեհենին ի հիմանց դղրդեալ տապալեցան. և լուցեալ յանկարծօրէն փայտակերտն հրդեհեցաւ ի տէրու-

նական նշանին զօրութենէ, և ծուխն ծառացեալ մինչև յամպս հասանէր։

Եւ ամենայն դէքն ի փախուստ դարձեալ՝ առաջի մարդկանն երեվեցան, զօձիս զգլխով արկեալ, և զճակատ հարեալ, և զձիշ բարձեալ՝ մեծագոչ լալեօք ասէին, թե «վա՜յ մեզ, վա՜յ մեզ, վա՜յ մեզ, զի յամենայն երկրէ փախստական արար զմեզ Յիսուս որդին Մարիամու, զտեառն մարդկան. և ասէի ևս ի ձեռն կապելոյս և մեռելոյս ևհաս մեզ փախստական լինել։ Արդ՝ յո՞ղիմեալ փախիցուք, զի փառք նորա լցին զերկնեղեր։ Այլ երթամք մեք ի բնակիչս լերինն Կաւկասու, ի կողմանս հիւսիսոյ. թերևս անդ հնար լեցի և ապրել մարթասցուք։ Զի առանց հանգստեան զօդես կոծեալ՝ անջատ զմեզ ի բնակութենէ մարդկան՝ կատարել զցանկութիւն կամաց մերոց նոքօք»։

Եւ զայս ասացեալ առաջին ամենեցուն. զի մարդիկն որ լուան՝ առաւել ևս հաստատեցան ի հաւատս ամենեքին. իսկ սևագունդ զիւացն աներևոյթք եղեալ, չքոտեալք ի տեղւոյն իբրև զծուխ պակասեցան։ Իսկ մարդկանն հասելոց անդէն քանդեալ զհիմունս մնացեալս աւերէին, զգանձսն մթերեալս՝ աղքատաց, տառապելոց և չքաւորաց մասն հանէին։ Եւ զդաստակերտսն և զսպասաւորսն քրմօքն հանդերձ և նոցին գետնովքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան։

Եւ ապա յանձն արարեալ զնոսա ամենապահ շնորհացն Աստուծոյ, և ինքն առեալ զթագաւորն՝ խաղայր գնացեալ երթայր, զի և յայլ կողմանս ամենայն սահմանացն Հայաստան աշխարհին սերմանեսցեն զբանն կենաց։ Եւ երթայր հասանէր ի Դարանաղեաց գաւառն, զի և անդ զանուանելոցն զսուտ աստուածոցն զբագինսն կործանեսցեն, որ էր ի գետն Թորդան, մեհեան անուանեալ սպիտակափառ զիցն Բարշամինայ. նախ զնա կործանէին, և զպատկեր նորին փշրէին. և զգանձսն ամենայն, զոսկւոյն և զարծաթոյն, աւար հարկանէին, և զայն աղքատաց բաժանեալ բաշխէին։ Եւ զգետնն ամենայն դաստակերտօքն հանդերձ և սահմանօքն յանուն եկեղեցւոյն նուիրէին, և զամենափրկիչ նշանին օրինակ և անդ կանգնէին։

«Իսկ երանելւոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկեալ զգաւառսն, հանդերձ միամիտ սատարութեամբ թագաւորին՝ գերէր զամենեսեան ի հայրենեացն աւանդելոց ի սատանայապաշտ զիւական ի սպասաւորութենէն ի հնազանդութիւն ծառայութեան Քրիստոսի մատուցանէր։ Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ, և զամենեսեան յաստուածապաշտութիւն կրթեալ, որ և յայտնի իսկ բնակչաց գաւառին նշանք մեծամեծք երևեալ, կերպակերպ նմանու-

թյամբք դիւացն փախստական լինելով անկանէին ի կողմանս» խաղատեաց. և իբրև զնոսա ևս հաստատէր՝ ապա երթեալ հասանէր յամուր տեղին անուանեալ Անի, ի թագաւորաբնակ կայանսն հանգստոցաց գերեզմանաց թագաւորացն Հայոց: Եւ անդ կործանեցին զբագինն Զևս դիցն Արամազդայ, հօրն անուանեալ դիցն ամենայնի: Եւ անդ կանգնեալ զէրունական նշանն, և զաւանն ամրականաւն հանդերձ ի ծառայութիւն եկեղեցւոյն նուիրէին:

Եւ ապա յետ այսորիկ անդէն ի սահմանակից գաւառն եկեղեաց ելանէր: Եւ անդ երևեալ դիւացն ի մեծ և ի բուն մեհենացն Հայոց թագաւորացն, ի տեղիս պաշտամանցն յԱնահտական մեհենին, յերէզն աւանի. ուր ի նմանութիւն վահանաւոր զօրու ժողովեալ դիւացն մարտնչէին, և մեծագոչ բարբառով զչէրինս հնչեցուցանէին: Որք փախստականք եղեալք, և ընդ փախչելն նոցա կործանեալ բարձրաբերձ պարիսպքն հարթեցան: Եւ որք դիմեալ հասեալ էին զգաստացեալ զօրքն, սուրբն Գրիգոր թագաւորաւն հանդերձ, փշրէին զոսկի պատկերն Անահտական կանացի դիցն. և ամենեքին զտեղին քանդեալ վատնէին, և զոսկին և զարծաթն աւար առեալ: Եւ անտի ընդ գետն Գայլ յայնկոյս անցանէին, և քանդէին զնանէական մեհեանն դստերն Արամազդայ ի Բիլն յաւանի: Եւ զգանձս երկոցուն մեհենացն աւարեալ ժողովեալ՝ ի նուէր սպասուց սուրբ եկեղեցւոյն Աստուծոյ թողուին տեղեօքն հանդերձ:

Եւ այսպէս ի բազում տեղեաց բառնային զգայթակղեցուցիչսն անմռունչս, զձուկնալսն, կռփեալսն կռփեալսն, քանդակեալսն, անպիտանսն, անօգուտսն, վնասակարսն, արարեալսն անմտութեամբ ցնորելոց մարդկան, դարձեալ սրտի մտօք ի հաւատսն հաստատեալք: «Արքայն մեծասաստ իշխանութեամբ տայր հրաման՝ սատանայակուր և դիւամոլ ազգացն կողմանցն այնոցիկ՝ թափել և ջերծանել յունայնավար հնացելոցն անօտիագործ պաշտամանցն, և հնազանդ լինել ամենահեշտ լծոյ ծառայութեանն Քրիստոսի»:

Ապա փութացեալ հասանէր ի գաւառն Դերջան, ուր և անդ յառաջասցի լնուլ զառաքելական քարոզութեանն զարուեստ մշակութեանն երկովք, և զերծուցանել զնոսա ի գարշելի «դիւցական սատանայակիր բարուցն ճիւաղութենէ, զխուժադուժ կողմանսն աշակերտելով, զխոշորագոյն և զխեցբեկագոյն բարս հեթանոսութեան շրջել ի զգաստութիւն աստուածծուսոյց իմաստութեանն. և ծանօթս աւետարանական աւետեացն, յարդարեալս ընդելս կացուցանէր»:

Գայր հասանէր ի Մրհական մեհեանն անուանեալ որդւոյն Արամազդայ, ի գիւղն զոր Բագայաւիճն կոչեն ըստ պարթևարէն լեզուին: Եւ զայն ի հիմանց բրեալ խլէին, և զգանձսն մթերեալս աւար հարկանէին

և աղքատաց բաշխէին, և զանդիան նուիրէին ևկեղեցւոյ. և զբնակիչս աշխարհին հաստատէր ի դիտութիւն ճշմարտութեան: Եւ յայնմհետէ փոյթ ի վերայ ունէր «զառընթերակաց արքունիսն հանդերձ մեծամեծ աւագանւովն և ամենայն ազատագունդ բանակաւն աստուածեղէն իմաստութեամբն վարդապետել»:

Եւ իբրև ևկն ևհաս ի սահմանս Հայոց՝ լուաւ Գրիգորիոս, թէ Վահէվանեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ, մեհեանն մեծագանձ, լի ոսկւով և արծաթով, և բազում նուէրք մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ. ութերորդ պաշտոն հոչակաւոր, անուանեալն Վիշապաքաղն Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց, ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի մեծի լերինն Տաւրոսի, որ և անուանեալ ըստ յաճախաշատ պաշտամանն տեղեացն՝ Յաշտիշատ: Զի յայնժամ դեռ ևս շէն կային երեք բագինք ի նմա. առաջինն՝ մեհեանն Վահէվանեան, երկրորդն՝ Ոսկեմօր Ոսկեծին դից, և բագինն իսկ յայս անուն անուանեալ Ոսկեհատ Ոսկեմօր դից. և երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղկան դից, Սննեակ Վահագնի կարդացեալ, որ է ըստ յունականին Ափրոդիտէ: Արդ՝ դիմեաց գալ սուրբն Գրիգորիոս, զի քանդեսցէ և զայն ևս, զի տակաւին իսկ տգէտ մարդիկ խառնակութեան զոհէին յայս բագինս մնացեալս:

Եւ մինչ դեռ զշինուած մատրանն կազմէին՝ հրաման ետ Գրիգոր զօրականին և իշխանացն որ ընդ իւրն էին, զի ելցեն և մրճօք տապալեսցեն զշինուածս բագնացն: Որք ելեալ շատ ջանացան, և ոչ կարացին զդուրս բագնացն գտանել՝ թէ ի ներքս մտցեն, զի ծածկեցին զևքն ի նոցանէն. և ի կողմանէ արտաքուստ ջանացան, և ոչ գծեաց անդ երկաթ գործւոյն. ապա փութացան հասին իշխանքն և պատմեցին նման զամենայն:

Իսկ նա առնոյր զնշան տէրունական խաչին, և ելեալ ի ձորակէն ևկաց յանդիման բարձրաբերձ տեղեացն շինուածոցն և ասէ. «Հրեշտակ քո, Տէր, հալածեսցէ զնոսա»: Եւ ընդ բանիցն հողմ ուժգին բղխեաց ի խաչանիշ փայտէն, զոր ունէր ի ձեռին իւրում սուրբ եպիսկոպոսն: Եւ երթայր հողմն ուռուցեալ լերինն հաւասար, և չոգաւ հարթեաց, տապալեաց, ընկէց զամենայն շինուածան բագնացն: Եւ այնչափ կորոյս, զի յետ այնորիկ ոչ ինչ ոք յայնմ տեղւոջ նշմարանս կարէր գտանել, ո՛չ քարի և ոչ փայտի, ո՛չ ոսկւոյ և ոչ արծաթոյ, և ոչ բնաւ երևէր, թէ լեալ ինչ իցէ անդ: Եւ անթիւք կոտորեցան մարդիկ պաշտամանն քրմութեան որ ի տեղւոջ անդ էին, և անհետ եղեն ոսկերք նոցա. և որք տեսինն՝ անթիւ մարդիկ հաւատացին: Եւ ասէ սուրբն Գրիգոր. «Արդ տեսէք, թէ ո՛րպէս ջնջեցան գայթակղութիւնքն ձեր, զի և չէին իսկ ինչ. այլ ծառայեցէք յայսմհետէ տեառն Աստուծոյ որ արար զերկինս և զերկիր»:

9. ՏԱՂ ԳԵՂԵՑԻԿ

Բան մըն կասեմ ես քրիստոնեայ
Եղբարք, ասիք, ինչո՞ւ վերայ։
Լուսաւորիչն լուս կուտայ
Դէմ ի Հայեանց հօտին վերայ։

Ճրգնել էր սուրբն ու կաղօթեր,
Քարող կուտար երկրի վերայ,
Իւր օգնութիւնն շատ լինայ
Երուսաղեմ քաղքին վերայ։

Խապար տարան դեմ Տրդատայ,
Սուրբ մեծն ելեր երկրի վերայ,
Ու կաղն ղկուրըն լուսաւորէ,
Խաչ կու հանէ ապալ կուտայ։

Տրդատ ելաւ ատից վերայ,
Քանց քառսուն եղն ուժով կենայ.
Հեծաւ ըղձին ու ժըմցըցուց,
Հասաւ ի հոն սահմի վերայ։

Բրռնեց ըզսուրբն ի յայն տեղէն,
Զարշարանօք կապեց ըզնա.
Տարաւ իղիր այն յատակին
Ու փակ իղիր քարն ի վերայ։

Տաս երկու տարի, եղբարք,
Սուրբն այն տեղին քարող կուտայր.
Սուրբն իւր զօրօքն էր զօրացեր,
Օձն ի բոլոթըն ժուռ կուգայր։

Խապար տարան լուսաւորչին,
Հայե թէ ինչ բաներ կըլլայ.
Գնացեք հանեք խոր Վիրապէն,
Այն տեղն որ սուրբըն կաղօթեր։

Ականջ դըրեք ու իմացեք,
Աստուածախօս ձայնըն կուգայ։

Ահա ելաւ սուրբն ի հորուն,
Օձերն ի հետ ելան նորա։

Հրամանք երեր սուրբըն նոցա,
Բաժընկենցան յերկրի վերայ։
Այն երկու քոյրըն Տըրդատայ
Որ իր յերկիրըն կու կենայր.
Վերցան ի յոտքն ընկան նորա,
«Մեր մէկ եղբօրըն ճար արա»։

Հրամանք երեւ սուրբըն նորա,
Տրդատ այլվի մարդ լիննայ,
Անխախտելի անբոք մարմին
Յականջ նըշան ի թող նորա։

Լոյսն այլ ելաւ գերեզմանէն,
Պահ մըն խաղայր հողուն վերայ,
Երթայր կըպչեր ի սուրբ խորանն
Ուր կանթեղնին վառած կենան։

10. [ՏԻՐԱՆ ԹԱԳԱՒՈՐ]

Բայց դեռ բարեկամութիւն էր ՚ի մէջ թագաւորացն երկոցունց, ՚ի մէջ թագաւորին Հայոց և Պարսից։ Նստէր յաշխարհին աստղատեսական որում անուն կոչէր բարձգահին իւրում Շապուհ Վարաղ։ Սրդ մինչ դեռ ևս յոյժ խաղաղութիւն էր ՚ի մէջ թագաւորացն երկոցունց, անկաւ ՚ի տեառնէ խռովութիւն ոչինչ բանիւք՝ արամբ միով անարգաւ, որ ոչ ինչ պակաս քան զդև էր մոլորութեամբ, որոյ անուն Փիսակ կոչիւր. որ սենեկապետն էր արքային Տիրանայ, ազգաւ սիւնի։ Սա դեսպանագնացեալ էր առ Վարաղ Շապուհ, զոր թողեալն էր սահմանապահ արքային Պարսից յաստղագիտական աշխարհին։

Զայնու ժամանակաւ ձի մի էր երիվար արքային Տիրանայ, զորմէ կարի զարմանային։ Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն. սա լի էր քաջութեամբ, անուանի և հոյակապ, մեծ և բարձր երկայն քան զամենայն ձիս, և տեսնելով քան զայլս գեղեցիկ, զանազան՝ որ համեմատ նմա այլ ոչ գտանէր։ Զորմէ յերթալն իւրոյ դեսպանութեանն՝ սենեկապետն արքային Փիսակ մատնեաց զձին վարազայ, վասն զի բարեկամացեալ էր ընդ նմա. և ՚ի նմանէն ինքն թուղթ առեալ, բերեալ մատու-

ցանէր արքային Հայոց։ Զորմէ չհաւանեալ, տալ ոչ առնոյր յանձն։ Այլ վասն զի կասկածէր յառնէն զի գոյժ խռովութիւն ինչ ՚ի մէջ թագաւորացն երկոցունցն արասցէ, ՚ի խնդիր անկանէր՝ զնոյն գոյն ձի, զնոյն նշան, զնոյն պատկեր, բայց ՚ի մեծութենէ՝ զի այնչափ ուրեք ոչ գտանէր, զնոյն նման զնոյն կերպարանս ճարտուկ ճանճկէն գտեալ, և հանդերձ հրովարտակօք և պատարագօք ՚ի ձեռն մոլևկան Փիսակայն առ իշխանն յԱտրպատական առ Վարազն արձակէր։ Եւ միտս դնելով խորհուրդ առնէր. զի ասասցես, ասէ, եթէ այս ինքն է զոր խնդրեցերն, զի առ սէր ոչ խնայեաց ՚ի քէն։ Իսկ նա յորժամ հասեալ առ Վարազն, յայտ առնէր զիրս խնայութեանն, ՚ի գրգռութիւն ջանացեալ՝ ոչ կամէր բժշկել զնենգախօսութիւնն իւր. այլ ևս քան զևս սրեալ զչարախօսութիւնն իւր, ասելով եթէ այնչափ ՚ի հեռ և ՚ի նախանձ, ՚ի չարականութեան և ՚ի թշնամութեան, ՚ի յատելութեան և ՚ի չկամութեան, յերկմտութեան և յաներկիւղութեան առ թագաւորն Պարսից և առ ամենայն զօրսն Պարսից արքայն Հայոց Տիրան, մինչ անգամ վասն կաշոյ միոջ խնայ արարեալ՝ թագոյց, և զքեզ ծաղր արարեալ, և այլ ընդ այլոյ զմիտս գողանալ քո. զոր յիմ ձեռն ետ ածել, առ քեզ առաքեաց։ Եւ ոչ այդ միայն է, ասէ. այլ ՚ի կայսր և ՚ի զօրս նորա յուսացեալ, խորհի հանել զթագաւորութիւն Պարսից յազգէն Սասանայ. զի ասէ, թէ մեր լեալ է և հարցն մերոց այն տէրութիւնն։ Արդ ասէ, թէ չեմ ծուղալոց՝ մինչև դարձցի պատիւ հարցն նախնեաց. զնախնի զթագաւորութիւնն այսրէն առ որդի և առ դաւակ նոցա յազգս իմ և ՚ի տունս իմ և յանձն իմ դարձուցանեմ։ Եւ այսչափ և այսպիսի բանիւք գրգռէր զնա Փիսակն անօրէն ՚ի վերայ տեառն իւրոյ բնակի, և նիւթէր զմահ ՚ի վերայ իւրոյ թագաւորին։

Ապա իբրև զայս ամենայն լուաւ Վարազ Շապուհ ատրպատական մարզպան ՚ի կատաղախօս ՚ի շնաբերանն Փիսակայ, վաղվաղակի նամակ ամբաստանութեան գրեալ Վարազայ յարքայէն Հայոց մատուցանէր Ներսեհի արքային Պարսից։ Եւ այնչափ զայրացոյց գրգռեաց յուզեաց դրդեաց սրամտեցոյց բարկացոյց զթագաւորն Պարսից ի վերայ արքային Հայոց, որ ապա առ հրաման ի նմանէ, զի չև է հնար գտանել մարթել ճանապարհս, մեքենայիւք գաղթակղութիւնս դնել՝ որսալ ըմբռնել զարքայն Հայոց։ Եւ մինչ դեռ խաղաղութիւն էր ՚ի մէջ թագաւորանց երկոցունց, բարկութիւն տեառն գրգռեաց յուզեաց զվրէժս, զի խնդրեսցին սուրբ արիւնք մահուան երկուց մեծացն քահանայիցն առաջնորդացն յանօրէնն Տիրանայ։

Ապա յայնմ ժամանակի Վարազն արձակէր դեսպան առ արքայն Հայոց, ՚ի հաշտութիւն խաղաղութեան դաւով խօսել ընդ նմա. գանձուկ սիրոյ պատճառեալ, համարձակութիւն խնդրէր՝ գալ նմա առ նա։ Իսկ

իբրև լուաւ զայն Տիրան արքայն Հայոց, փութապէս վաղվաղակի մեծաւ ուրախութեամբ առ ինքն կոչել հրամայէր։ Եւ մինչ չև նա եկեալ էր, խորհէր արքայն ընդ իւր ծառայսն ներքինիսն սպասաւորսն իւրում սենեկի. ասէ. Արժան է մեզ, այր որ գայ առ մեզ՝ պրօսուցանել և ուրախ առնել որսովք և բաղմականօք, և ամենայն պէսպէս վայելչութեամբք։

Այլ ոչ եթէ այնչափ ինչ արժան է զմեծ ինչ որսոյ տեղիս ի մերում Երկրի ասա նմա տեսանել՝ վասն չարակնութեան յաշաղանաց չարաբարութեան նենգութեանն ազգին պարսկաց. այլ նմանեցուցէք տեղիս դոյզնագիւտ որսոց ինչ՝ որով լոկ պրօսուցուք զնա, և մի որսասցուք զառատ ինչ որսոց զտեղիս, և զի մի մեծ ինչ նախճիրս որսոց կոտրեալ առ՝ի ցոյցս առնելոյ։ Այլ վարկպարապի արասցուք, ասէ, վասն դառնացող չար ազգին չարութեանն դառնացող ազգին։ Այլ յերկրին Ասպահունեաց, յոտինն մեծի լերինն Մասեաց, տեղին զայն որսասցուք. տեղւոյն՝ որում անուն կոչի քաղաք Աղիորսք։

Ապա եկն հասս Շապուհ Վարազն երիւք հազարօքն, և յանդիման եղև թագաւորին յերկրին Ասպահունեաց. և մեծապէս մեծարեցաւ՝ի նմանէ։ Եւ այն բանքն, որ վասն որսոյն՝ի թագաւորէն ասացաւ, վաղվաղակի յունկն զօրավարին Պարսից հասանէին՝ի բերանոյ շորիկն շոգմոգն տիրաննեկն և տիրադրուժն տիրասպանուն տիրամատնիչն Փիսակայ, յայն յաշխարհակորոյս յառնէ անտի. և աւուրս սակաւս ուրախ լինէին՝ի միասին։ Այլ իշխանն Պարսից զբշնամութիւնն, զոր ունէր՝ի ներքոյ, խորամանգեալ ծածկեալ մեքենայեալ առագաստեալ բերէր, և առնէր սպաս զդաւն կատարել։

Եւ՝ի ժամանակին յայնմիկ այնպէս դիպեցաւ, յայնմ ժամանակի զօրավարքն չէին անդ, այլ սարտուցեալ էին. և այլ մեծամեծք նախարարացն, և աւագ տանուտէրք ազատանին. սոյնպէս և զօրքն արքունի յիւրաքանչիւր տունս յիւրաքանչիւր կայեանս յիւրաքանչիւր դադարս դադարեալ էին։ Եւ ոչ ոք էր՝ որ մնացեալ էր առ թագաւորին, և ոչ գունդ և այր և ձի. բայց միայն սակաւ սպասաւորօք հանդերձ, և որսոցն պատականօք, և ռահվիրայ մարդկան, և խառնաղանջ խորանապահ զօրուն, և ռամիկսպաս զօրօքն, և տիկնան հանդերձ և արքայորդին մանուկն Արշակ։ Այսպէս սակաւուք դիպեալ՝ի ժամանակին յայնմիկ, զի թէպէտ և տեսեալ հարուստ գնդաւ եկեալ զօրավարն Պարսից, զի էին ընդ նմա սպառազէնք վառեալք արք իբրև երեք հազարք, ոչ ինչ խիթացեալ զգուշաւ անկասկած լինէր։ Քանզի տեսանէր զնա իբրև՝ի պատճառս խաղաղութեան եկեալ, մեծաւ պատարագօք և պատուական ընծայիւք և մեծաշուք մեծարանօք։

Եւ իբրև ոչ ինչ բաղում աւուրք ընդ մէջ եղեն, յընթրիս կոչեն՝ի հաց հրաւիրեալ զարքայն. ՚ի պատիւ մեծարանաց կոչէր։ Ապա իբրև

ընդ դինիս մտին, քաջ արբեալ լինէին թագաւորն և որ ընդ նմայն էին, զօրն դարանակալ յանպատրաստից յանկարծօրէն յայլակարծուց զնոսա յանկարծուստ յիւրաքանչիւր բազմականի ՚ի վերայ հասեալք ըմբռնէին, և վահանափակ շերտաւորացն պատէին զթագաւորն Տիրան։ Եւ կալեալ կապեալ զոտս և զձեռս նորա ի կապս երկաթիս, և զբանակն՝ զոր գըտանէր՝ աւար հարկանէր. և զգանձս և զստացուածս զկին և զորդիս թագաւորին, զոր գտին ՚ի բանակին, խաղացուցին յերկրէն Ապահունեաց։

Իբրև եկին հասին ՚ի գետ մի, որում անուն Դալարիս կոչէին, յորժամ եկն եհաս զօրավարն Պարսից ՚ի ներքս ՚ի գետն Դալարիս, ածէր կապեալ զարքայն Տիրան ընդ իւր։ Եւ ասէ Վարազ. Աղէ՝ տեսեք ածուղ, որով երկաթ շողացուսցուք, զի զաչս խարեսցուք զարքային Հայոց։ Եւ անդէն բերին ածուղ, որով խարէին զաչսն Տիրանայ։ Ապա ինքն խօսել սկսաւ Տիրան, և ասէ. Փոխանակ զի իմ երկու աչքս լուսաւորքս խաւարեցան յայս տեղւոջս, արդ փոխանակ Դալարեացս անուան, Ածուղ անուն լիցի սմա մինչև ցյաւիտեանս ժամանակաց. և այս երևոյթ նըշանակս մնասցէ յիմ յիշատակի։ Այլ ինձ յուշ եղև և գիտեմ՝ թէ այն զի խնդրեցաւ յինէն վրէժ չարեաց մեղացն իմոց, փոխանակ զի խաւարեցուցի ես զաշխարհս՝ որում թագաւորեալ էի՝ յերկուց լուսաւոր վարդապետացն, և կարծեցի շիջուցանել զլոյսն ճշմարտութեանն քարոզութեանն երկուց հաւատարմացն, վասն այսորիկ խաւարեցաւ լոյս տեսանելեաց աչացս իմոց։

Եւ յայնմ ժամանակի վաղվաղակի փութանակի չու առնէր յԱծուղ գեղջէն, խաղայր գնայր ճեպով իշխանն արքային Պարսից հանդերձ Տիրանաւ արքայիւ և ամենայն գերութեամբն յերկիրն Պարսից, և երթայր յաստրեստան առ տերն իւր յարքայն Պարսից։ Լու եղև այս ամենայն կործանումն գունդ չարեացն յանկարծօրէն թշուառութեանն հասելոյ։ Ապա ժողով լինէր նախարարացն և իշխանացն, գործակալք և զօրագլուխք, պետք է և ամենայն աշխարհաժողովք բազմութեանն եկելոց կուտելոցն։ Թէպէտ և ժողովեցան կազմեցան գունդ եղեն, պատրաստութեամբ զհետ կրթէին Վարազայ, ոչ ինչ կարացին հասանել։ Սակայն հասանէին առնուին զկողմ ՚ի Պարսից աշխարհէն. առ հասարակ մարդակոտոր առնէին, և զաշխարհն յայրեաց և յաւար դարձուցանէին։ Եւ ինքեանք դառնային, և ՚ի մի վայր ժողովէին, կոծ եղեալ աշխարհանօք լային զիւրեանց բնական տէրն զարքայն Հայոց. սոյնպէս և զկորուստ աշխարհին, և զանձանց անտէրչութիւն կործանմանն վարանացն աղիողորմ գործէին։

11. [ԴՆԵԼ, ՏԻՐԻԹ, ՓԱՌԱՆՁԵՄ, ԱՐՇԱԿ]

Ա. [Դնել և Տիրիթ]

Ձայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ որումն, մի 'ի նախարարացն նահապետին Սիւնեաց, որում անուն Փառանձեմ կոչէր. զորմէ կարի անուանեալ էր գեղեցկութեամբ և պարկեշտութեամբ: Ապա Դնել պատանեական եղբորորդին արքային էառ զնա 'ի կնութիւն իւր: Եւ համբաւ գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ, և համբաւ գեղոյ նորա յաճախեալ բազմանայր և հնչէր: Ապա առ համբաւ ցանկութեան անուանն տրփեալ լինէր մ[illegible] ևս հօրեղբօրորդին Դնելոյ, որում անուն Տիրիթ կոչէր: Վասն որոյ անգանէր 'ի գաղտագողանս, մինչ զի զնուն իւր տեսանել կարասցէ: Եւ յորժամ կարացն տեսլեանն՝ որում ցանգայր, այնուհետև հնարս խնդրէր առն կնոջն կորստեան, ո՛ գիտէ՝ զկնի նորա նմա հնար լիցի յափշտակել:

Ապա Տիրիթն 'ի հնարս նենգութեան մտանէր, և բազում վարձէր իւր ջգնականս և սատարս, որով զիւր չարախօսութիւնն յառաջ վարել կարասցէ: Եւ քսիս սուտութեան զԴնելոյն նենգութեամբ առ թագաւորն Արշակ մատուցանէր՝ թէ Դնել թագաւորել կամի, և զբնդ սպանանել. և ամենայն մեծամեծք և նախարարք և ազատք սիրեն զԴնել, և ամենայն աշխարհիս նախարարք կամին զտէրութիւն նորա 'ի վերայ իւրեանց առաւել քան զքո: Արդ, ասեն, գիտեա և տես, արքայ, զի՛նչ գործեսցես. որպէս և կամիս, զիարդ մարթասցիս ապրել: Եւ այսպիսի բանիւք գրգռէին զթագաւորն Արշակ, մինչև հաստատէին 'ի միտս թագաւորին զիւրեանց ասացեալսն:

Ապա ոխացեալ թագաւորն ընդ պատանեկին Դնելոյ, և բազում անդամ հալածական առնէր զնա. և նիւթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս: Ապա զնաւասարդաց ժամանակօքն առնէր խորհուրդ թագաւորն Արշակ, կոչել առ ինքն զպատանեական Դնել և սպանանել: Ապա առաքէր զվարդան զեղբայր սպարապետին զնահապետ ազգին Մամիկոնեան տոհմին, զի մեծաւ երդմամբ և նենգութեամբ կոչել կարասցէ, զի մի՛ խորհուրդն յայտնեսցի. գուցէ փախիցէ և ապրիցի. այլ զի պատրանօք և հրապուրանօք ածիցէ մինչ 'ի տեղին մահուն: Եւ էր բանակ թագաւորին 'ի Շահապիվանի 'ի բուն բանակի տեղոյն Արշակունեացն 'ի ներքոյ Սիւնեացն և 'ի վերայ ասպարիսացն:

Բ. [Դնելի սպանությունը և Փառանձեմի ողբը]

Եւ առաքեալ զվարդանն, զմեծ նահապետն յարքայէն Արշակայ, եկն եգիտ զպատանեական Դնել 'ի մօտաւոր տեղւոջն, այս ինքն 'ի գեւղն

Առաւուտոյ անուանեալ։ Մեծաւ ուխտիւ և բազում պատրանօք զպատանեակն Գնել հանդերձ իւրով կնաւն և զրամբն հաւանեցուցանէր երթալ հասանել ՚ի բանակն արքունի. իբրև այն թէ ՚ի մեծարանս ինչ զնա կոչիցէ թագաւորն, բազում խնդանօք տարեալ հասուցանէր՝ եթէ թագաւորն Արշակ ոչ կամեցեալ զսօնս նաւասարդաց առանց քո անցուցանել, զի հաճեալ և քաղցրացեալ է ընդ քեզ, վասն զի ըստ բանից չարախօսացն ոչ ինչ գաւաւ ՚ի քեզ չարութիւն. և եհաս ինքն ՚ի վերայ, զի զուր այժմ աւեր զքեզ՝ որ ՚ի նմանէն մեծ սիրոյ արժանի եր։

Ապա չուեաց ամենայն կազմութեամբն իւրով Գնել, երթեալ հասանէր ՚ի բանակն արքունի զգիշերն ամենայն բազում փութով տագնապաւ։ Վասն զի վաղիւն հասելոյ առաւօտուն օրն լուսանայր կիւրակէն։ Եւ յայնմ աւուր տօն դիպեցաւ յիշատակի մեծին Յովհաննու, որ ՚ի Գրիգորէ և ՚ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր։ Ապա յայնմ յիշատակ աշխարհաբնակք մարդկան՝ որ ժողովեալն էին, և բազում եպիսկոպոսք՝ որ յայլոց գաւառաց. և ապա մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յղեաց զիւր աթոռակիցն զԽադ, և զիւր արքիդիակոնն եպիսկոպոսին՝ որում անուն Մուրիկ կոչէր. զի երթիցեն նոքա, պէտք զինչ և իցեն ժողովոյն՝ ընդ նորա վճարեսցեն։ Եւ ինքն անդէն մնաց յարքունական բանակին, զի զնոյն հաղորդութեանն և անդ կատարեսցեն։ Եւ յայնմ դիշերի ցայգապաշտօն մեծ եղև ՚ի բանակին առ կաթողիկոսին։

Իսկ իբրև առաւօտն ծագեաց, հասանէր վաշտն Գնելոյ ՚ի բանակն արքունի. և մինչ Գնելն արքունական բանակին լինէր միջամուխ, աղդ լինէր թագաւորին եկն նորա։ Ապա ելանէր հրաման յարքունուստ, արտաքս ունել և տանել սպանանել։ Եւ մինչ դեռ գայր նա ընդ բանակամէջն, և էր հնծեալ յերիվարին իւրում, իբրև մերձ եղև ՚ի հրապարակն արքունի, և անդ ՚ի յարքունուստ հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք նիզակաւորք վաղրաւորք սակրաւորք սունաւորք և սպարակիւք հետևակք, որք մատուցեալք բուռն հարեալք ընկենուին յերիվարէ անտի զպատանեակն Գնել. և ձեռն յետս կապէին զնա, և առեալ գնային ՚ի տեղի կառափելոյն։ Եւ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուաւ, ՚ի նմին ՚ի նորին վաշտու էր ընդ առն իւրում։ Իսկ իբրև տեսանէր թէ կալան զայր իւր և կապկպին, վաղվաղակի ընթացաւ յեկեղեցասխորանն ժողովուրդն, ուր պաշտօն մարդկան բանակին առ աստուած կատարէր, մինչ դեռ առաւօտին աղօթքն մատչէին. և անդ Ներսէս մեծ եպիսկոպոսապետն։ Իսկ կինն հասեալ առ արքեպիսկոպոսապետն, գոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տարապարա կորուստն, ճչեալ մեծաձայն։ Վաղ հասիր, ասէ, դեռ զամուսինն իմ զուր առանց վնասու և յանցանաց խողխողեն։ Իսկ նորա խափանեալ զպաշտօնն, ընթանայր ՚ի խորանն ար-

քունի, հասեալ ՚ի դրացն ՚ի ներքս առ թագաւորն անգանէր։ Իսկ թագաւորն իբրև տեսանէր զմեծ քահանայապետն, դիտացեալ դբարեխոսութիւն համոզելոյն վասն առնն մահուանն դի մի՛ մեռցի, յայնժամ թագաւորն զիւր սամոյրսն զդլխովն ածեալ, ՚ի փոյթ կնջանն մտեալ, զիւր զէմս երեսացն ծածկէր, քնոյ պատճառ եղեալ՝ զի նորա բանսն մի՛ լուիցէ։

Իսկ սուրբն Ներսէս մատուցեալ բուռն հարկանէր զթագաւորէն. խօսէր ընդ նմա, և ասէր...

Իսկ թագաւորն սալացեալ, ոչ ինչ լսէր. զերեսսն վտաւտօքն ծածկեալ ոչ բանայր, և ոչ կամէր առնել բանիցն պատասխանի. այլ ընկողմնեալ պատեալ ծածկեալ կայր ՚ի գահոյն, զի և շարժել անգամ ոչ տղէր։ Իսկ մինչ դեռ նա զայս և այսպիսի բանս ողոքոյ ընդ թագաւորին խօսէր, գայր արտաքուստ դահճապետն Երազմակ, մտանէր ՚ի խորանն արքունի, սկսանէր պատմել՝ զի ՚ի գլուխ հանի կատարեցի, ասէ, զամենայն զհրամանս արքունի. առի զնացի զԳնել, տարայ մինչև յորմ Սիւսին սպանի, և անդէն թաղեցի։ Ապա խօսել սկսանէր սուրբն Ներսէս, և ասէր. Արդարև իսկ իբրև օձի քարբի, զի խնու զականջս իւր՝ զի մի՛ լուիցէ նա զձայն թովչի ճարտարի, և մի առցէզդեղ ՚ի դեղատուէ իմաստնոյ, սոյն օրինակ և դու խցեր զականջս, և կափուցեր ղլսելիս, զի մի՛ լուիցես զօգտակարս բարբառոց դաստուածեղէն բանիցն խրատուն. այլ զգաղանաց առեալ զբարուցս, սկսար լինել մարդախանձ։ Վասն այնորիկ որ ՚ի վերայ նոցա ասացաւ, լիցի այն ՚ի վերայ քո... Այլ դու, Արշակ, փոխանակ զի զգործս Կայէնի գործեցեր, զանէծսն Կայէնի զգեցջիր. անկշիր կենդանւոյն ՚ի թագաւորութենէդ քումմէ, և չարշարեսցիս առաւել քան զՏիրան զհայրն քո, և դառն մահուամբ վկեանս քո յերկրէս մեծ նեղութեամբ վճարեսջիր։

Եւ զայս ամենայն խօսեցեալ ընդ թագաւորին քահանայապետին մեծին Ներսէսի, դնաց ՚ի թագաւորէն, և այլ ոչ դարձաւ անդրէն յայն բանակ։ Իսկ զպատանեական Գնել առնուին գնային մօտ ՚ի Սիւսն արքունի, և անդէն կառափէին ՚ի սարակ լերինն. որում տեղւոյն Լսին անուանեալ է, մօտ յորմածս արգելոցացն որոյն էրիոցն, ընդդէմ մուրտաստանին աղբերացն բազմոցացն արքունի, յանդիման բանակատեղ բնին։

Ապա Հրաման եղև յարքայէն. Ամենայն մարդիկն որ իցեն ՚ի բանակին, մեծ և փոքր առ հասարակ, մի՛ ոք իշխեսցէ չերթալ. այլ ամենայն ոք առ հասարակ երթիցեն դիցեն աշխար կոծոց, և լացցեն զԳնել մեծ սեպուհն արշակունի զսպանեալն։ Իսկ ինքն թագաւորն գնացեալ ՚ի լալիսն, նստեալ լայր զեղբօրորդին իւր, զոր ինքն եսպան։ Երթեալ նստէր մօտ առ դին, լայր ինքն, և տայր Հրաման՝ կոծ մեծ և աշխար

դնել շուրջ զսպանելով դիակամբն: Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զհանդերձան պատառեալ, զդէսս արձակեալ, մերկատիտ ՝ի մէջ աշխարանին կոծէր. ձայն արկանելով ճչէր, յողբս արտասուաց յաղիողորմ դուժի առ հասարակ զամենեսեան լացուցանէր: Իսկ թագաւորն Արշակ ՝ի լալիան տեսանէր զկինն սպանելոյն, առփէր և ակն դնէր՝ առնուլ զնա իւր կնութեան:

Իսկ այն որ զննդութիւն քսութեանց նիւթեաց, և դաւով ՝ի վերայ իւրոյ հարապատին սպանութիւնս կատարեաց, վասն նորին կնոջն արար զայն. զի մեծապես սիրով հարեալ էր ՝ի նմա: ՋՏիրիթն ասեմ, որ յաւաջագոյն հարեալ ՝ի կնոջն յայնմիկ, վասն որոյ զննդութիւնս սպանութեանցն թագաւորան գործեաց: Իսկ մինչ դեռ ՝ի նմին կոծն սաստկացեալ էր, Տիրիթն սկսանէր ժոյժ չունելոյ տափանացն: Պատգամ յղէր առ կին մեռելոյն, ասէ՝ զի մի կարի զանձն քո աշխատ առներ այդչափ, զի այր բարի ես եմ քան զնա. ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զնա ՝ի մահ, զի զքեզ առից ինձ կնութեան: Արդ մինչ դեռ կոծ մոլութեան զդիակամբն ջայլէին, զայսպիսի պատգամս առաքէր Տիրիթն: Բողոք բառնայր՝ թէ լուարուք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղև. զի որ ինձ ակն եդ վասն իմ, զայրն իմ ետ սպանանել: Զհերն փետէր, ճչէր ընդ կոծելն:

Ապա իբրև մեծ իրքն համարձակ յայտնեցան ՝ի լսելիս ամենեցուն, և ՝ի ձայնարկուքն ամենայն, եղև նա մայր ողբացն, և ձայնարկունքն ամենայն ՝ի ձայն ողբոցն սկսան նուագել զիրան տրփանացն Տիրիթայ, զակն դնելն, զքսութիւնն, զհնարս մահու նիւթել, զսպանումն, ձայնիւքն մրմնջոցն ՝ի վերայ սպանելոյն ՝ի մէջ կոծոյն բարբառէին գեղգեղեալ խանդաղատութեամբ: Ի նուաճել իւրեանց ձայնից, իրքն յայտնեալ հռչակ հարկանէր: Զոր իբրև լուա թագաւորն Արշակ, և եհաս ՝ի վերայ իրացն, զարմացեալ լինէր արմանայր ընդարմանայր, ստրջացեալ ՝ի միտ առնոյր զիրան: Ապա խօսել սկսանէր թագաւորն, ծափս զծափի հարեալ մեծաւ զղջմամբ ընդ իրան՝ զոր գործեաց, ասէ. Վասն զի ՝ի կնոջն Գնելոյ զանարժան սիրով հարաւ Տիրիթն, առ այնմ զչարիսն նիւթեաց զքսութիւն, զմահուն գոռութիւն զուր և տարապարտ. և զմեզ ևս արդար արեանն շաղախեաց վասն իւրոյ պղծութեանն. զեղբայրն իւր ետ կորուսանել, և զանհնարին չարսին և զանէծս որ ոչ անցանեն՝ ետ մեզ ժառանգել:

Գ. [Արշակը իրեն կին է առնում Փառանձեմին]

Ապա իբրև հասանէր թագաւորն յիրացն հաստատութեան ՝ի վերայ, և ճշգրտէր զիրան, խլխլեալ անսայր բանին առ ժամանակ մի: Իսկ իբրև

զմեռեալն ծածկեցին անդէն ՚ի տեղւոջն՝ յորում սպանաւն, և աւուրք հարուստ անցին ՚ի վերայ իրացն գործելոց, պատգամ յղէր Տիրիթն առ թագաւորն։ Կամ լիցի, ասէ, քեզ արքայի, զի հրաման տացես՝ զՓառանձեմ կին Գնելոյ թող առից ինձ կնութեան։ Զոր իբրև լուաւ արքային, ասէ. Արդ հաստատ գիտեմ զոր լուայն թէ ստոյգ է, վասն կնոջն իւրոյ եղև մահն Գնելոյ։ Եւ անդէն արքայն մահ խորհէր, սպանանել զՏիրիթ ևս փոխանակ ընդ մահուն Գնելոյ։ Զոր իբրև լուաւ Տիրիթ, զահի հարեալ յարքայէն՝ դիշերի փախստական լինէր։ Ապա աղդ լինէր թագաւորին Արշակայ փախուստն Տիրիթայ. տայր հրաման թագաւորն Արշակ ազատագունդ բանակին զհետ լինել Տիրիթայն. զի իբրև հասցեն նմա, անդէն ՚ի տեղւոջն սպանցին։ Բազումք և քաջք զհետ լինէին փախուցելոյն Տիրիթայ. ապա երթեալ հասանէին ՚ի գաւառին Բասենոյ ՚ի մէջ մայրեացն. ՚ի տեղւոջն՝ յորում հասանէին, անդէն զՏիրիթ սպանանէին։

Եւ յետ այսորիկ էառ իւր Արշակ զկինն սպանելոյն զՓառանձեմն։ Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն, նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ. ասելով՝ թէ թաւ է մարմնով, և թուխ է գունով։ Ապա իբրև կինն ՚ի նա ոչ յանգոյց զմիտս իւր, առաքեաց արքայն Արշակ յերկիրն Յունաց, և խնդրեաց էած անտի կին ՚ի կայսերական տոհմէն աղգաւ, զի անուն էր նորա Ողոմպի։ Եւ ուժգին սիրով սիրեաց զնա, և նախանձուկս արկանէր նովաւ առաջին կնոջն. և կինն Փառանձեմ ոխացաւ ընդ Ողոմպին, և խնդրէր սպանանել զնա։ Բայց ծնաւ ապա Փառանձեմ թագաւորին ուստր մի, և կոչեցին զանուն նորա Պապ, և սնուցին զնա, և ՚ի չափ հասուցին։ Եւ իբրև ջրթափեաց և եղև հուժկու, հաւն զնա պատանդ ՚ի դուռն կայսերն յերկիրն Յունաց։

Իսկ Փառանձեմն ՚ի մեծ նախանձու և ոխութեամբ զնայր ընդ Ողոմպինոյն, և խնդրէր սպանանել զնա դեղովք։ Իբրև ոչ ինչ հնարս մեքենայից չկարէր գտանել, վասն զի անձինն իւրում կարի զգուշ կայր, մանաւանդ ՚ի կերակրոց և ջրմպելեաց, բայց զիւրոց նաժշտացն կերակուրս արարեալ և կամ զնոցին պարզեալ զդին ճաշակէր, և եթե ոչ ինչ գտանէին հնարք դեղել զնա մահուան դեղօքն, ապա զրան հրէց ոմն արքունի՝ որ էր ՚ի ժամանակին յայն, որում անուն Մրջիւնիկ, յԱրշամունեաց տեղեացն ՚ի նահանգէն Տարօն գաւառէն, զնա ՚ի բանս արկանէր Փառանձեմն անօրէնն։ Զանարժանս զանկատար զանջնջելի ղշարեացն մեղացն չմոռացկան տանջանացն կատարեաց զգործօն զանարժանըս զանտես զանլուր, այս ինքն ընդ կենաց դեղն զդեղ մահուն խառնելով. որ ուրեք երբէք այսպիսի գործք յումեքէ ՚ի վերայ երկրի ոչ գործեցան։ Ընդ տէրունական ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն ընդ հացն օրինաց խառնէին զդեղն սատակման. հրէցն, Մրջիւնիկ անուն, տալով չեկեղեց-

ւոջն Ղոմպիայ տիկնոջն ընձեռել զմահուն գործ, և սպանանէր: Ըստ չարեացն կատարելոց զՓառանձեմայն ամենայն չարիօք լցեալ զկամս կատարէր. և յանօրէնն Փառանձեմայն պարգև առեալ չերիցուն զգեստն՝ ուստի իսկ ինքն էր ՚ի նահանգէն Տարօն գաւառէն, որում անուն Գոմկունք կոչին:

Այլ սուրբ կաթողիկոսն Ներսէս այլ ոչ ևս յաւել տեսանել զերեսս թագաւորին Արշակայ մինչև յօրն նորին կորստեան. այլ փոխանակ Ներսիսի զՁոնակ ոմն անուն, և կացուցին փոխանակ նորա գլուխ քրիստոնէութեանն. և էր սորուկ ՚ի սորկաց արքունի: Ապա հրաման տայր թագաւորն՝ կոչել զամենայն եպիսկոպոս Հայոց աշխարհին, զի ևկեսցեն ձեռնադրեսցեն զՁոնակն ՚ի կաթողիկոսութեան Հայոց: Եւ ոչ մի ոք ոչ հաւանեաց գալ. բայց միայն Աղձնեաց և Կորդուաց եպիսկոպոսք եկին, և զՁոնակն ձեռնադրեցին կաթողիկոսութիւն ըստ հրամանի թագաւորին: Եւ էր Ձոնակն այր զգօն, և ոչ ինչ ունէր լեզու յանդիմանութեան կամ խրատու, այլ հաւանեալ էր թագաւորին զինչ և նա գործիցէ:

12. [ԱՐՇԱԿ ԵՎ ՇԱՊՈՒՀ]

Ա. [Շապուհը մեծարում է Արշակին, վասակը սպաւնում է Շապուհի ախոռապետին]

Յայնմ ժամանակի կոչէր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զթագաւորն Հայոց զԱրշակ. և մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով և մեծաւ փառօք, բազում գանձու ոսկւով և արծաթով, ամենայն մեծութեամբ թագաւորութեանն: Եւ իբրև զեղբայր որպէս զորդի գրգեալ եղև ՚ի նմանէ, և երկրորդական զմեծ տունն տայր նմա յատրպատական աշխարհին. և ՚ի միասին ՚ի միում տախտի գահուն ՚ի ժամ ուրախութեանն բազմէին, զմիացոյն զմիանշան զհամահանդերձ զարդու: Եւ զմիօրինակ զթագն օր ըստ օրէ ինքեան և նմա թագաւորն Պարսից զարդ պատրաստէր. զոյգ երկոքին ՚ի միասին որպէս զեղբարս հարազատս անբաժինս յղփացեալք էին ՚ի միում ուրախութեան, և յանպատում ուրախութեան ուրախ լինէին:

Ապա եղև դէպ օր մի յաւուրց, եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ շրջել զասպաստանաւ միով զարքային Պարսից. իսկ ախոռապետն արքային Պարսից նստէր ՚ի ներքս ՚ի տան ասպաստանին: Իբրև տեսանէր զթագաւորն, ոչ ինչ առ լուս կալեալ մեծարեաց զնա, և ոչ ինչ շուքս ինէր նմա. այլ և անարգանս ևս դնէր թշնամանաց, ասելով ՚ի պարս-

կերէն լեզու՝ թէ այծից Հայոց արքայ, եկ նիստ ՚ի խրձան խոտոյ ՚ի վերայ։ Զոր բանս իբրև լսէր սպարապետն զօրավարն Հայոց մեծաց, որում Վասակն կոչէր ՚ի մամիկոնեան տոհմէն, մեծաւ բարկութեամբ և բազում սրտմտութեամբ բարկանայր. ՚ի վեր առեալ զսուսերն, զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ՚ի տեղւոջն զախտառապետն արքային Պարսից գլխաւէր ՚ի ներքս յասպաստանի անդ։ Զի ոչ կարաց լսել և յոյժ ունել զիւրոյ թագաւորին զանարգանս. զիւր մահն առաջի եղեալ լաւ հաշուէր բազում անգամ, քան զտեսանն իւրոյ լսել զվատթարութեան թշնամանս։ Իբրև ՚ի Պարսից աշխարհի էին, յայլոց ՚ի տեղի և ՚ի նոցուն հրապարակի աներկիւղ և անկասկած յանկարծօրէն զայսպիսի զգործ կարաց գործել։ Իսկ թագաւորն Պարսից յորժամ զայս լսէր, բազում շնորհ ունէր զօրավարին Վասակայ, ընդ քաջասրտութեանն զարմացեալ և ընդ բազում աներկիւղութիւնն։ Եւ բազում պարգեաց և պատուոյ արժանի առնէր, զքաջութիւն և զտիրասիրութիւնն գովեալ։ Վասն այնր իրաց մեծաւ սիրով սիրէր զնա և ըստ արժանի իւրում պատուէր զնա. մեծարէր զամենայն աւուրս հաշտութեան և խաղաղութեանն, որ ՚ի մէջ նոցա էր։

Ապա մինչ դեռ անդէն ևս էր արքայն Հայոց առ արքային պարսից, և մեծ սէր էր ՚ի մէջ նոցա և մեծ խաղաղութիւն, երկնչելով երկեաւ թագաւորն Պարսից Շապուհ, եթէ գուցէ ստեսցէ սիրոյն նորա Արշակ արքայ Հայոց, և լիցի միաբան ընդ կայսերն Յունաց, և կամ կողաքակ ինչ լիցի ՚ի նմանէ։ Եւ ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն, և կացցէ յուխտին միաբանութեան ընդ նմա։ Վասն այսորիկ երդումն պահանջէր ՚ի նմանէն, մինչև կարի ստիպեալ բռնադատեաց զնա։ Հաւանեաց, ասէ, և երդուիր ինձ յօրէնս քո, զի մի՛ ստեսցես ինձ։ Իսկ իբրև կարի բռնադատեցաւ և ՚ի նեղ անգամ և շտապեալ տագնապեցաւ, եաւն հրաման ածել զերիցունս եկեղեցւոյն Տիսպոնի քաղաքի, որում անուն զլխաւորին Մարի. և բերին զաւետարանն սուրբ, և տայր երդումն արքայն Պարսից Շապուհ արքային Հայոց Արշակայ՝ երդնուլ յաստուածեան աւետարանն, զի այլ մի ևս ստեսցէ նմա. այլ կացցէ յուխտի նորա, և պահեսցէ զդաշինս նորա։ Եւ վասն զի պատգամաւոր իրացս այսոցիկ էր տանուտէրն նահապետն մամիկոնեան տոհմին երէց եղբայր Վասակայ սպարապետին, որում անուն Վարդան կոչէր, մեծապէս արքայ Շապուհ յակն առեալ սիրէր զնա։ Իսկ իւր եղբայրն Վասակ զօրավարն Հայոց նախանձ բերէր ընդ երիցու եղբօրն իւրում ընդ Վարդանայ։ Կամեցաւ խանդար առնել ՚ի մէջ Արշակայ թագաւորին Հայոց, և փախչել. այլ ասէր Շապուհ, թէ՝ ձեր սրտի մտօք էր տուեալ զերդումն, զիա՞րդ կարէր ըստ հաւանութեան ելանել երդմանցն և կամ փախչել։ Այլ, ասէ, գիտեմ զի կախարդութեամբ խաբեցէք զիս. և որ ունի զօրէնսն ձեր, զնա սիրեցէք. և նենգութեամբ նմա խորհրդա-

կից եղևալ, յինէն փախուցէք։ Եւ կամիք դուք զտէրութիւն Արշակունեաց ՚ի վերայ ձեր, և զնոյն խնդրէք։

Եւ երդնու Շապուհ արքայ յարեգակն և ՚ի ջուր և ՚ի կրակ, եթէ ոչ միում մարդոյ, որ յայդմ օրէնս քրիստոնէութեան է, ոչ տամ ապրել. և հրաման տայր զամենեսեան տանել սպանանել։ Եւ տանէին զզլխաւորն նոցա զՄարի երէց, և զայլ երիցունսն և զսարկաւագունսն, աւելի քան զնենթանասուն այր. ՚ի մի գուբ զամենեսեան զնոսա փողոտէին։ Եւ զաւտարանն սուրբ՝ յոր երդուաւ թագաւորն Արշակ՝ կապէր պատէր երկաթի սարեօք, և իւրով մատանեաւ կնքեալ, ՚ի դանձնատան հրամայէր. և տայր հրաման պահել զդուշութեամբ։

Բ. [Արշակ թագավորը անխնա կոտորում է նախարարներին]

Այլ ահա ՚ի ժամանակին՝ յորժամ մերժեցաւ յարքունական բանակէն սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս, և ոչ ոք գոյր ընդդիմացեալ թագաւորին՝ որ տայր նմա զյանդիմանութեան զխրատն, այնուհետև ըստ կամաց չարութեանն իւրոյ գնացեալ լինէր նա. և զբազումս ՚ի նախարարացն կոտորեաց, զբազումս ազգատ արարեալ անճիտեաց, և զբազմաց տունս հատանէր յարքունիս։ Բայց զտոհմս կամսարականացն՝ որ էին գաւառաց տեարք, Շիրակայ և Արշարունեաց, ազգատ առնէր. և զգաւառսն ունէր յոստան։

Բայց յաղգէն յայնմանէ մանկիկ մի փոքրիկ, անուն Սպանդատատ, թագուցեալ ապրեցուցանէր սպարապետն զօրավարն Հայոց Վասակ, որ յետոյ լինէր ժառանգ աշխարհին։ Թագաւորն Արշակ հրաման տայր՝ յԱրշարունեաց գաւառին շինել իւր բերդ մի ամուր, Արտագերս անուն։ Եւ զգաւառն յուսեսա ՚ի պատրաստութիւն համբարաց թողոյր բերդին, վասն զի կարի ամուր էր բերդն այն։

Գ. [Արշակը օգնում է պարսիկներին, սրի է հաշում հունաց զորքը, բայց Անդոկի դավաճանութեամբ փախչում է պարսից թագավորից]

Այլ զառաջինն իբրև փախեաւ թագաւորն Արշակ յարքայէն Շապհոյ, և անարգեաց զնա յետ երդմանցն իւրոց, զառաջինն Շապուհ արքայն Պարսից ոչ ինչ խաւտութեամբ ջանացաւ ընդ նմա. վասն զի մարտ դեռ բազում սաստկացեալ էր ՚ի մէջ իւր և ՚ի մէջ թագաւորին Յունաց։ Եւ իբրև հաղ քան զհաղ յաւել լինել պատերազմ, իսկ թագաւորն Հայոց Արշակ զառաջինն ընդ միտս իւր մեծամտեալ էր, և նայեէր տեսանել՝ թէ ո՛վ ՚ի նոցանէն կոչեսցէ զնա ՚ի թիկունս օգնականութեան յաղագս գործոյ պատերազմին։ Ակն ունէր, երթալ կամելով յօժարութեամբ ՚ի

Բիկունս կայսերն Յունաց. իսկ նոքա ոչ կոչեցին զնա, և ոչ շուք ինչ եղին նմա և ոչ մեծարանս:

Իսկ թագաւորն Պարսից Շապուհ յղէր առ նա հրեշտակս խաղաղութեան. յուշ առնէր նմա զառաջին երդումն, ասելով՝ եթէ կամ լիցի եղբօր դի եկեսցես օգնեսցես ՚ի գործ պատերազմիս, զի՛ ՚ի Բիկունս հասցես քո գնդաւտ. ասէ. Թէ դու ՚ի մեր կոյս լինիս, գիտեմք զի մեր լինելոց է յաղթութիւնն: Ապա յորժամ զայս լսէր Արշակ արքայ Հայոց, մեծաւ ուրախութեամբ կամեցաւ երթալ ՚ի Բիկունս օգնականութեան, զօրավիդն լինել Շապհոյ թագաւորին Պարսից: Ապա տայր հրաման թագաւորն Արշակ վասակայ իւրում սպարապետին, գունդ գումարել, զօրս պատրաստել: Եւ նա վաղվաղակի կատարէր զհրամանս թագաւորին. չորեքհարիւր հազար զօր կուռ վառեալք, որ ընտիրք և պատերազմողք էին, լի արիութեամբ արուեստաց նահատակութեանն: Նիզակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք, անվրէպք, կորովիք, վաղրաւորք, սակրաւորք, որք ոչ դիտէին զերկեւղ զանգիտելոյ յարանց յախոյանց. համակ հեծելազօրք զրահաւորք, պատենազէնք, սաղաւարտաւորք, դրօշաւորք, կապմ նշանաւորք բազմաձայն փողարօքն:

Խաղաց գնաց թագաւորն Արշակ բազմակոյտ նախարարօքն, չուեաց ընդ Աղձնիս ընդ իւր իշխանութիւնն. չոգաւ թափեցաւ յերկիրն արուածաստանի դէմ յանդիման մըծբնացւոց քաղաքին, որ էրն տեղի ճակատուն պատերազմին: Ապա երթեալ տեսանէին զժամադիր արարեալ միմեանց վասն իրաց պատերազմին կողմանցն երկոցունց: Իսկ զօրքն Յունաց հասեալք, մածեալք բանակեալք էին իբրև զաւազ առ ափն ծովու բազմութեամբք: Իսկ զօրքն Պարսից չեւէին հասեալ ՚ի ժամադիր տեղի պատերազմին: Իսկ զօրքն արքային Հայոց կանուխ քան զՊարսսն ՚ի տեղի ճակատուն հասանէին, և զտեղի առեալ կային: Ապա տապել սկսան զօրքն Հայոց ընդ իւրեանց նիստ խափանածոյն. և ոչ առնուին յանձն մնալ կամ անսալ զօրացն Պարսից, այլ կամեցան յարձակել դիմել հասանել ՚ի վերայ թագաւորին Յունաց ինքեանք առանց Պարսից զօրացն, անձամբք վճարեալ զգործ պատերազմին: Եւ այր ամենայն զօրացն Հայոց ինքնակամք իւրաքանչիւր արձակ արձակ խաղային. ևս առաւել զօրավարն նոցին Վասակ քան զամենայն զօրսն ելեալ առնէր, կապակոտոր լինէր, չմնայր հաւանութեան մինչև զօրքն Պարսից եկեսցեն, այլ զի միայն ինքեամբք վճարեսցեն զգործ պատերազմին:

Ապա միահամուռ զօրքն Հայոց անկանէին առաջի և խնդրէին յիւրեանց թագաւորէն Արշակայ, զի մի պահեսցէ զնոսա մինչև եկեսցէ արքայն Պարսից Շապուհ, այլ վասնորոյ իրիք եկեալ իցեն, վաղագոյն նոցա զպատերազմն առ յանդիման արարեալ համարձակեսցէ յարձակել քան

զանսալն յօտար աշխարհին. առաւել մղձկէին, թի լաւ հաշուէին զմեռանելն առաւել քան զյամելն յօտար աշխարհին: Ապա թոյլ տայր նոցա թագաւորն Արշակ, և յանդիմանէր նոցա զգործ պատերազմին: Ապա կարգէր կազմէր պատրաստէր զամենայն զզօրսն Հայոց վասակ զօրավարն սպարապետն Հայոց մեծաց: Վարէր զինէր ժամակալ լինէր Վասակ. հանդերձ ամենայն պատերազմող զորօքն այրայրատեան գնդան ելանէր անկանէր 'ի վերայ բանակին: Առ հասարակ ընդ սուր հանեալ կոտորէին, այնպէս զի ոչ ապրեցուցանէին 'ի նոցանէ և ոչ զմի: Եւ առնուին զկապուտ զաւար յունական զօրուցն, զի ոչ գոյր չափ կամ թիւ որչափ լցան դանձօք. և անհամար կարասեաւ մեծաւ աւարացն յզդփացան:

Եւ յետ այսորիկ զտեղի ունէր արքայն Հայոց հանդերձ իւրովք զօրօքն, մինչև գայր հասանէր Շապուհ արքայն Պարսից ամենայն անթիւ և անչափ զորօքն Պարսից: Իբրև եկն ետես քաջութիւն գործոյն հայասատան զօրացն, զի զճակատ մղեալ, զպատերազմ յարդարեալ, զյաղթութիւն կազմեալ և զգործ վճարեալ, կայր զարմացեալ մեծապէս. և պատուէր զԱրշակ արքայ Հայոց մեծապէս, և զամենայն մեծամեծս Հայոց. սոյնպէս և զսպարապետն Հայոց զՎասակ:

Ապա խօսել սկսանէր թագաւորն Պարսից Շապուհ ընդ զօրս իւր՝ թէ զինչ պարգեւս բարեաց, կամ զինչ հատուցումն կարեմք մեք հատուցանել արքային Հայոց Արշակայ, զի զայսպիսի գործ գործեաց, կամ զայսպիսի քաջութիւն արարեալ, կամ զայսպիսի թշնամիս եհար և զայսպիսի պատերազմ մղեաց, կամ այսպիսի ճակատու յաղթեաց և զայսպիսի անուն ստացաւ մեզ: Զի եթէ մեք լեալ էաք, ամենայն Արեաց զօրք հանդերձ այսպիսի աջողութեամբ գայր 'ի ձեռն, քաջ թէ զոյդ հասարակ այսպիսի գործ 'ի միասին կարէաք գործել. արդ Հայոց արքայ իւրով զօրութեամբն ընդ մեր նահատակեալ, զայսչափ քաջութիւնս արար, զոր ոչ ոք կարէ առնել ամենևին: Արդ զորպիսի՞ հատուցումն բարեաց կարասցուք մեք առնել նմա: Եւ այսպիսի անգեալ էր 'ի խորհուրդս, թէ զինչ այն ինչ իցէ զոր տայցեմ ես նմա: Ապա տային պատասխանի նախարարքն իւր Շապհոյ արքային Պարսից, և ասեն ցնա՝ թէ զինչ և կամիս, իւր կամիս, կարող ես հաճել զնա. ոսկի քո շատ և արծաթ կերպաս և մարգարիտ, զինչ և միանգամ դու կամիս շնորհել նմա, տուր նմա: Ապա տայր պատասխանի Շապուհ թագաւորն Պարսից իւրոց իշխանացն, և ասէ. Արդ ոչ եթէ սէր ինչ է, զոր դուքդ ասացէք. այլ եկայք, անքակ սէր արասցուք մեք ընդ Արշակայ արքային Հայոց, զի մինչև յաւիտեան անբաժան լիցի նա 'ի մէնջ: Տացեմ զդուստր իմ կնութիւն Արշակայ արքայի Հայոց, և տայ նման տուն մեծ. զի յորժամ

գնասցէ ՚ի Հայոց գալ առ մեզ, այնպէս տացուք նմա տուն, զի ՚ի Հայոց մինչև ՚ի Տիզբոն մինչև առ մեզ համակ յիւրում տան ազգի, մինչև առ մեզ եկեսցէ: Թագաւորին զայս արասցուք. իսկ զօրավարին Վասակայ կամ այլոց մեծամեծացն և զօրավարացն տացուք ոսկի և արծաթ, կերպաս և մարգարիտ: Եւ հաճեցան մեծամեծքն և խորհրդակիցք թագաւորին Պարսից ընդ այս խորհուրդ. և հաստատէին զասացեալսն՝ թէ արժան է զայդ առնել:

Իսկ թագաւորն Պարսից Շապուհ մեծաւ ստիպով ստիպէր զթագաւորն Հայոց զԱրշակ, զի առցէ զնասցէ զնա ընդ ինքեան յԱտրպատական, զի անդ մեծափառ պատուով և փեսայութեամբ մեծարեսցէ զնա: Իսկ Արշակ և ամենայն զօրք իւր տաղտապէին երթալ զհետի ճանապարհն. զի ամենայն ոք յանձնիւր տուն յիւրաքանչիւր տեղի զօրէն բարուց հայաստան մարդկան անձկացեալ էին: Եւ եղև իբրև ՚ի վերայ հասանէր իրացն Անդովկ նահապետն Սիւնեաց գաւառին, եթէ Շապուհ թագաւորն Պարսից կամի տալ զդուստր իւր կնութեան Արշակայ թագաւորին Հայոց, մեծապէս երկեաւ, և բախեցաւ նորա կասկած մտացն իւրոց: Զի եդ ՚ի մտի իւրում՝ թէ յորժամ առցէ Արշակ կին իւր զդուստր թագաւորին Պարսից, յայտ է այնուհետև՝ թէ անարգի զուստր նորա: Վասն զի Փառանձեմ դուստր Անդովկայ, որ էր կին լեալ Գնելոյ, ՚ի ժամանակի անդ էր կին Արշակայ թագաւորին Հայոց. կասկածէր նա՝ թէ գուցէ յորժամ այլ առցէ, զնորայն անարգեսցէ:

Անկանէր այնուհետև Անդովկ ՚ի հնարս հնարել, և ՚ի ծուխս խորհրդոց, գտանել պատճառս՝ զի ո գիտէ կարասցէ ցրուել զսէրն մեծ, որ էր անկեալ ՚ի մէջ թագաւորացն երկոցունց: Նախ բազում ոսկի զօրավարին Հայոց Վասակայ Անդովկն մատուցանէր. սոյնպէս և զամենայն մեծամեծսն կաշառէր, զի հնարեսցի քակել զմեծ սէրն, որ էին ՚ի մէջ թագաւորացն երկոցունց: Եւ ամենայն մեծամեծքն ձեռն յանձին հարկանէին, առեալ ոսկւոյն կաշառօք խաւարեցան: Ապա զմի ոմն յաւագաց թագաւորին Պարսից ՚ի ներքին ՚ի բուն խորհրդականացն ՚ի բանի իւրում առնէր Անդովկն զհնարաւորութեամբն, զնենգաւորութեանն դաւաճանութեամբ, մեքենայութեամբն, զի բանս ակեսցէ ընդ թագաւորին Պարսից ընդ Շապուհ և ընդ Արշակ: Եւ տայր նմա Անդոյկ ոսկի բազում և անհամար, և զնէր բանս ՚ի բերան, զի իբրև կերպարանս գուշակի արասցէ ասել ցարքայ Արշակ, թէ ապրեցո զանձն քո, զի ճշգրիտ խորհուրդ խորհեալ է թագաւորին Պարսից ունել զքեզ և սպանանել: Եւ յորժամ դու զայս ասասցես, ասէ, և զմեզ հրամայեսջիր կոչել ՚ի խորհուրդն. և զքո բանս աւագանին հաստատեն:

Ապա գայր մտանէր խորհրդակից արքային Պարսից առ արքայն Հայոց. խօսել սկսանէր ընդ նմա զբանս ՚ի բերան եդեալ Անդովկայն

չարագործի, և ասէր՝ թէ արքայդ Հայոց Արշակ, ապրեցո զանձն քո. զի խորհուրդ խորհեալ է թագաւորին Պարսից Շապհոյ ունել զքեզ և սպանանել: Կայր հիացեալ և զարմացեալ արքայն Արշակ ընդ բանսն ընդ այնոսիկ, և ասէ. Ի մեծի վաստակոցն իմոց ՚ի վերայ այս հատուցումն ՚ի նոցանէն: Ապա հրաման տայր կոչել զառաջեաւ իւրով արքայ Արշակ զամենայն զմեծամեծս իւր, և զամենայն խորհրդակիցս իւր, զվաստակ սպարապետն, և զԱնդովկն զաներ իւր, և որ միանգամ էին նախարարքն. և պատմէր նոցա զոր միանգամ լուաւ ինքն ՚ի պարսկէ անտի: Ապա և նոքա ընդ մի բերան ասէին ընդ նմա, թէ մեք զայդ վաղ լուաք, զքեզ չիշխեցաք ասել. այլ իրգդ այդ հաստատ են: Բայց արդ, արքայ, գիտեա տես զիա՞րդ ապրեցուսցես զանձն քո և զմեզ: Ապա արքայ Արշակ բազում պարգեւս զանձուց ոսկւոյ և արծաթոյ տայր պարսկին այնմիկ, որ ասաց նմա զբանս զայսոսիկ: Եւ ինքեանք կազմեցան պատրաստեցան. խորհուրդ խորհեցաւ Արշակ թագաւորն Հայոց, և յառնէին ՚ի գիշերի որ միանգամ մարդ էր ՚ի բանակին Հայոց. հեծան ՚ի ձիս, և փախեան: Եւ առ հասեղ թողին զխորանս և զվրանս զկահ և զկարասի և զկազմած իւրեանց, և զբանակն իւրեանց, և գնացին գաղտուկ. և ոչ ոք ՚ի բանակէն Պարսից գիտացին զայն մինչ ցայգ ցառաւօտն:

Եւ իբրև եղև ժամ այգորելի առ թագաւորն Պարսից, և ամենայն թագաւորք և իշխանք մեծամեծք իւր այգորեալ գային արքային Պարսից, բայց միայն ոչ ուրեք ՚ի մէջ երևէր թագաւորն Հայոց Արշակ հանդերձ իւրովք մեծամեծօքն: Ապա տայր հրաման Շապուհ թագաւորն Պարսից իւրոցն, երթեալ տեսանել՝ թէ զինչ իրք իցեն ՚ի բանակին Հայոց թագաւորին Արշակայ, զի այնչափ ժամս յամեաց գալ յայգորել թագաւորին Պարսից Շապհոյ: Ապա երթեալ տեսանէին, զի թափուր կայր բանակն առանց մարդոյ. զի թողեալ էր իւրեանց զխորանս և զվրանս և զհովանոցս և զսրահակս զգահոյս և զանկողինս և զկահ և զկազմածս և զկարասի իւրեանց, և զգանձս իւրեանց անգամ. բայց միայն զզէնս իւրեանց որ բարձեալ էին ընդ ինքեանս, և գնացեալք: Եւ որք չոգան ՚ի բանակն, գային զամենայնն պատմէին Շապհոյ արքային Պարսից: Եւ իբրև լուաւ Շապուհ արքայն Պարսից, քանզի այր իմաստուն էր, գիտացեալ ՚ի կարծիս իմաստութեան իւրոյ զիրսն՝ որ ինչ եղևն, անդէն ասաց՝ թէ այն փախուստ թագաւորին Հայոց յիմոց աստի եղեալ է. զի ՚ի մէնջ ՚ի մերմէ ՚ի զրանէ աստի էին, ասէ, որք փախուցին զայրն զայն զԱրշակ: Ապա իւրոց աւագացն ՚ի մեծամեծացն դեսպան ձիով զբազումս յղէր զհետ թագաւորին Հայոց, հանդերձ երդմամբ ՚ի սէր միաբանութեան և յանդիմանութեան. զի դարձցին և զչարախօսութեան զբանս ՚ի մէջ ածեալ կշտամբեսցին: Եւ ոչ կամեցաւ արքայն Հայոց ունկնդիր լինել բանիցն

պատգամաւորացն Թագաւորին Պարսից Շապհոյ, և ոչ զարձաւ այլ անդրէն յերկիրն Պարսից: Ապա յայն օրէ հետէ և անդր յուզեցաւ պատերազմ գրգռութիւն մարտից ճակատուց 'ի մէջ Թագաւորին Հայոց Արշակայ և 'ի մէջ Թագաւորին Պարսից Շապհոյ ամս աւելի քան զերեսուն:

Դ. [Հայոց և պարսից զորքերի նակատամարտը]

Յայնմ ժամանակի Թագաւորն Պարսից Շապուհ ժողովեաց զզօրս իւր անթիւ և անհամար իբրև զաւազ առ ափն ծովու. և փիղս բազումս, զի ոչ գոյր նոցա թիւ: Ընդ երիս բաժանեալ զզօրսն, երկուց զնդացն զԱնդիկան և զՀազարաւուխտ զօրագլուխս կացուցանէր. և միում զնդին ինքնին Թագաւորն լինէր զօրագլուխ: Եւ հրաման տայր Թագաւորն զօրացն՝ ընդ երիս տեղիս խաղալ մտանել արշաւել յաշխարհն Հայոց: Ապա այս բանք վաղագոյն ազդ լինէին առ Թագաւորն Հայոց Արշակ, և առ զօրավարն նոցին Վասակ. ապա և սոքա բազում զօր յաշխարհէ ժողովեցին, զի ոչ գոյր համար բազմութեանն: Եւ թէ բիւր աճապարեցին, սակայն զօրքն Պարսից արշաւէին յերկիրն Հայոց, և ընդ երիս ասպատակէին:

Ապա Թագաւորն Արշակ և զիւր զօրսն բաժանէր ընդ երիս. և տայր զմի գունդն Վասակայ սպարապետին, և զերկրորդ գունդն 'ի ձեռն Բագասի եղբօր նորին, որ 'ի գործ արութեան քաջ էր անհնարին, բայց 'ի գործ իմաստութեան բախած էր. և զմիւս գունդն իսկ Թագաւորն Արշակ առնոյր: Եւ տայր հրաման՝ յառաջ խաղալ պատրաստել, առ դիպան պատահել զօրացն Պարսից: Ապա գայր սպարապետն Վասակ, գտանէր զառաջին առաջն զօրացն Պարսից զՀազարաւուխտն, զի հասեալ էին 'ի գաւառն Վանանդայ, 'ի տեղւոջն՝ որ անուանեալ կոչէր յՆրևեալ. և բախէր ընդդէմ զօրացն Պարսից մարտիւ պատերազմաւ: Ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից, դարձան 'ի փախուստ, ցրուեցան սփռեցան: Հասանէր զօրավարն Վասակ, արկանէր զզօրսն ամենայն փախստէից Պարսից. ոչ ապրեցուցանէին և ոչ զմի, և թափեցին աւար բազում և զփիղսն:

Ի նմին ամսեան 'ի նմին շաբաթու 'ի նմին աւուր հասանէր Բագոս, հանդերձ զորօք՝ որ ընդ իւրև էին, գտանէր զառաջ երկրորդ զօրացն Պարսից և զԱնդիկան զօրագլուխ նոցա, զի հասեալ մածեալ բանակէին 'ի վերայ ձկնատենիցն Առեստեայ: Ապա վաղ զգացին զօրքն Պարսից զհասանել Բագոսին, և պատրաստեցան 'ի մարտ պատերազմի ընդդէմ զօրացն Հայոց: Ապա հասանէր Բագոս ամենայն գնդաւն. ընդդէմ յարձակէին ճակատուն Պարսից, անդէն հարկանէին սատակէին զամենայն առ հասարակ զզօրսն Պարսից, և գլխովին զԱնդիկան սպա-

նանէին։ Ապա դիպէր Բագոսն գնդին փղացն, և տեսանէր զմի ՚ի փղաց անդի մեծապէս զարդարեալ, և զարքունական նշանս ՚ի վերայ արձակեալ։ Համարեցաւ զթագաւորն ՚ի փղին յայնմիկ. իջանէր յերիվարէն, հանեալ զսուսերն իւր յարձակէր ՚ի վերայ փղին. զէն վերացոյց, եմուտ ի ներքոյ փղին հարկանէր զներտս փղին, և անդէն ընկենոյր զփիղն ՚ի վերայ անձին իւրոյ, և սատակէին երկոքեան. զի ոչ ժամանէր ելանել ներքուստ ՚ի փղէն։ Յայնմ ճակատու, բայց միայն զի մեռաւ զօրագլուխ զօրացն Բագոսն, այլ ՚ի Պարսից զօրացն ոչ ապրեցուցանէին յայնցանէ և ոչ մի։

Իսկ ՚ի նոյն ամի ՚ի նմին շաբաթի ՚ի նմին իսկ աւուր, քանզի ՚ի մի օր եղեն ճակատքն երեքեան, արդ հասանէր թագաւորն Արշակ, հանդերձ զօրօքն՝ որ ընդ իւրն էին. գտանէր զինքնին թագաւորն Շապուհ, զի հասեալ մածեալ բանակէին ՚ի գաւառն Բասենոյ ՚ի տեղիսն՝ որ անուանեալ կոչի Ոսխա։ Ապա անկանէր գիշերի արքայն Արշակ ՚ի վերայ բանակին Պարսից, և անդէն ընդ սուր հանէր զամենեսեան. բայց միայն միաձի մազապուր ճողոպրէր թագաւորն Շապուհ, փախուցեալ անկանէր յաշխարհն Պարսից։ Ապա յայնմ ժամանակի յերիցունց գընդացն միմեանց դիպէին աւետաւորքն յաղթութեանցն. բայց ՚ի Բագոսէ, զի մեռաւ միայն ՚ի միում ճակատուն, այլ և ոչ մի ՚ի նոցանէն ոչ ծախէին. յաստուծոյ եղև մեծ աջողութիւնն յաղթութեանն։ Եւ սոքա ՚ի կողմանս Պարսից ասպատակէին, և հարկանէին մինչև ՚ի կողմանս՝ որ կոչին Խարտիպան։ Եւ լցան գանձիւք բազմօք և ընդու և զարդու և բազում աւարաւ և անչափ մեծութեամբ, և հարստացան անցին ըստ չափ։

Ե. [Պարսիկներն ասպատակում են Հայաստանը]

Ապա յետ այսորիկ Մերուժան վատանշան գրգռէր զթագաւորն Պարսից զՇապուհն ի վերայ թագաւորին Արշակայ մեծաւ բարկութեամբ։ Ապա զօրաժողով լինէր թագաւորն Պարսից Շապուհ. և լրտեսս արձակէր, դիտել զարքայն Հայոց զԱրշակ։ Եւ մինչ նա դեռ զգուշացեալ Արշակ արքայն Հայոց հանդերձ իւրովք զօրօքն զատրապատական սահմանօքն, զի անդ սպասէր զօրացն Պարսից, նոցա առաջնորդ կալեալ զՄերուժանն՝ ընդ այլ կաթել ասպատակ յաշխարհն Հայոց առնէին։ Զի ընդ Աղձնիս և ընդ Ծոփս մեծ, ընդ Անգեղ տունն և ընդ գաւառն Անձտայ ընդ Ծոփս Շահունոց, ընդ Մզուր գաւառն և ընդ Դարանաղէ, ընդ Եկեղեաց, զկողմանս այնց գաւառացն Շապուհ թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զօրօքն ասպատակել հեղեալ ծաւալէր բազմութեամբ իւրև զջուրս բազումս։

Այրացաւեր առնէին, և զանթիւ մարդիկ արկանէին ՚ի սուր սուսերի իւրեանց. զկանայս և զմանկտի հանէին ընդ ցից սայլից, զկէսս զոր ՚ի ներքոյ կամացն արկեալ կասուին: Եւ զարանց բազմութիւնս տային ՚ի կոխումն փղաց. և զառանց թուոյ զմատաղ մանկտոյն, զայն ՚ի գերութիւն վարէին. և զբազում ամուրս քանդէին, և զբերդսաւերէին զամուրս: Եւ առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ՚ի գաւառին Աղձնեաց յիշխանութեան բդեշխին. քառասուն հազար երդ, զայն նոյն հետայն ՚ի գերութիւն խաղացուցին. և ինքեանք ՚ի Ծոփս մեծ արշաւեցին: Եւ անդ էին բերդք, զոր առին. և էր, զոր ոչ կարացին առնուլ: Եւ գային պահ արկանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդաւն, որ է յԱնգեղ տանն գաւառին. զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն արշակունեաց. բազում գանձք մնացեալ կային ՚ի նախնեացն ՚ի հնոց ժամանակաց հետէ: Զուան պահ արկին զբերդաւն. ապա իբրև ոչ կարէին առնուլ վասն ամրութեան տեղւոյն, թողուին և գնային: Եւ զբազում բերդօք զանց առնէին, զի ոչ կարէին մարտնչել ընդ ամուրսն. բայց միայն մատնեցաւ ՚ի ձեռս նոցա ամուր բերդն Անի ՚ի Դարանաղեաց գաւառին անդ, զի չարագործն Մերուժանն հնարաւորութեամբ մեքենայէր ամուր բերդին այնմիկ: Ելանէին ՚ի վեր, և կործանէին զպարիսպ նորա, և իջուցանէին անթիւ զանձս ՚ի բերդէն: Եւ բանային զգերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց զարանց քաջաց զարշակունոյ, և խաղացուցանէին ՚ի գերութիւն զոսկերս թագաւորացն. բայց միայն զգերեզման շիրմին Սանատրկոյ արքային ոչ կարացին բանալ վասն անհնդեղ սկայագործ հաստաշինած ճարտարագործ արարածոցն: Ապա գնացեալք անտի ՚ի բաց մերժէին, ընդ այլ դիմեալ՝ ասպատակս կապէին, ընդ կողմանսն Բասենոյ յառաջ խաղային և ինքեանք, կամէին ՚ի թիկանցն կուսէ անկանել հասանել ՚ի վերայ զօրացն թագաւորին Հայոց:

Ապա մինչ դեռ այս ամենայն լինէր, գուժական հասանէր առ թագաւորն Արշակ, և ասեն նմա. Դու աւադիկ առաջոյ սպասես թշնամեացն, նստիս յԱտրպատականի. իսկ թշնամիքն զթիկամբն անկեալ կոտորեցին զաշխարհս և արդ դիմեալ գան ՚ի վերայ քո: Ապա իբրև զայս լսէին թագաւորն Հայոց Արշակ և զօրավարն նորին Վասակ, հանդէս առնէին զօրացն իւրեանց: Եւ գտան ՚ի ժամանակին անդ ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ արք գործոց իբրև վաթսուն հազար, ընտիրք և պատերազմողք. որ միամիտք և միասիրտք էին միաբանութեան գործոցն պատերազմին, հասանել մարտնչել ՚ի վերայ որդւոց և կանանց իւրեանց, և ՚ի վերայ աշխարհին դնել զանձինս իւրեանց մինչև ՚ի մահ և ՚ի վերայ աշխարհին գաւառացն բնակութեան, հասանել մարտընչել ՚ի վերայ եկեղեցեացն իւրեանց, ՚ի վերայ ուխտին պաշտամանն

սրբոյ եկեղեցեաց իւրեանց, ՚ի վերայ հաւատոց ուխտին անուան աստուածոյ իւրեանց, փոխանակ բնակ տերանց իւրեանց արշակունւոց։ Զի անգամ ոսկերք թագաւորացն մեռելոց և բաղում ժողովուրդք խլեալք յիւրաքանչիւր տեղեաց, փոփոխեցան յօտարութիւն։

Ապա Վասակ սպարապետն հանդերձ վաթսուն հազարօք յառաջ խաղայր, դարձեալ ընդ կրուկ թողոյր զթագաւորն Արշակ յամուր տեղւոջ ուրեմն յերկրին Մարաց, հանդերձ սպասաւորօքն։ Եւ ինքն գայր հասանէր ՚ի միջնաշխարհն Հայոց ՚ի գաւառն Այրարատու. և հասանէր գտանէր զզօրսն Պարսից, զի հասեալ մածեալ էին բազմութեամբ իբրև զաւազ առ ափն ծովու, բանակեալ զգաւառաւն այրարատեան։ Ապա հանեալ Վասակ հանդերձ գնդովն՝ որ ընդ իւրն էին, անկանէր ՚ի վերայ բանակին թագաւորին Պարսից ՚ի գիշերի յեղակարծումն ժամանակի։ Եւ անդէն առ հասարակ ընդ սուր հանէին զզօրսն ամենայն Պարսից. բայց միայն թագաւորն միածի ճողոպրեալ մազապուր փախչէր։ Զհետ հալածէին զմնացեալսն փախուցեալսն արտաքոյ իւրեանց սահմանացն, և թափէին ՚ի նոցանէ աւար բազում և անթիւ, զի ոչ գոյր նոցա չափ համարոյ։ Եւ առ հասարակ արկանէին զնոսա ՚ի սուր սուսերի իւրեանց, և թափէին ՚ի նոցանէն զոսկերս թագաւորացն իւրեանց, զոր պարսիկք խաղացուցեալ տանէին ՚ի գերութիւն յաշխարհն Պարսից։ Զի ասէին ըստ իւրեանց հեթանոսութեանն ըստ օրինացն, թէ վասն այսորիկ բարձեալ տանիմք զոսկերս թագաւորացն Հայոց յաշխարհն մեր, զի փառք թագաւորացն և բախտն և քաջութիւն աշխարհիս աստի գնացեալ ընդ ոսկերս թագաւորացն յաշխարհն մեր եկեսցեն։ Ապա թափէր Վասակ զգերութիւնն ամենայն զհայաստան աշխարհին. և զոսկերս թագաւորացն Հայոց, զորս թափեաց Վասակ, հանեալ թաղեցին յամուր ՚ի գեւղն՝ որ Աղձն անուանին, յԱյրարատ գաւառին՝ որ կայն ՚ի խինձս ՚ի գոգս ՚ի ծոցս յանձուկս ՚ի դժուարս լերինն մեծի, զոր Արագածն կոչեն։ Եւ ինքեանք փոյթ արարեալ զաշխարհ նուաճել, յարդարել կարգել յօրինել շինել զամենայն զգերութիւնս յաւերածոյն և այրեցածոյն։ Բայց յայնմ նուագի ևս ապրէր Մերուժանն չարագործն, փախուցեալ ընդ արքային Պարսից։ Եւ յայնմ հետէ պահ ունէին իւրեանց աշխարհին. արքայն Արշակ հանդերձ զօրաւարսն Վասակաւ յերկոսին դուրս սահմանացն զգուշանային մինչև զամենայն աւուրս կենդանութեան իւրեանց։

Ջ. [Արշակը կոտորում է Շապուհի բանակը]

Ապա զօրաժողով լինէր Արշակ արքայ Հայոց, և կուտէր առ ինքն զօրս բազումս իբրև զաւազ բազմութեամբ, և խաղայր ՚ի վերայ աշխարհին Պարսից։ Ապա առնոյր Վասակ զգունդն Հայոց, և զՀոնսն հանդերձ **Ալանօքն** կոչել յօգնականութիւն, և հասանէր դիմէր յօգնականու-

թիւն թագաւորութեանն Հայոց ՝ի վերայ Պարսից: Այլ թագաւորն Պարսից հանդերձ ամենայն իւրովք զորօքն ՝ի ժամանակ անդ յայնմիկ քանզի և նա խաղացեալ գայր ՝ի վերայ հայաստան երկրին ընդդէմ սոցա, ապա սոքա փութացեալք հասանէին յԱտրպատական. և գտանէին զբանակն արքային Պարսից ՝ի Թաւրէշ բանակեալ:

Հասանէր վասակ սպարապետն հանդերձ քսան բիւրուքն, անպանէր ՝ի վերայ բանակին Պարսից: Միաձի ճողոպրեալ թագաւորն փախչէր, և առնուին յաւարի զամենայն կարասանն Պարսից. և զամենայն զօրսն Պարսից բազմութեանն կոտորեցին, և առին աւար բազում ՝ի բանակէն, զի ոչ գոյր նոցա թիւ: Ասպատակ տուեալ առնուին զամենայն աշխարհն յայնկոյս երկիրն. քանդեալ բրէին զերկիրն, մինչև ՝ի հիմանց կործանէին. և խաղացուցանէին զգերութիւն երկրին քան զաստեղս բազմութեամբ: Եւ զամենայն զայր երկրին հանէին ընդ սուր. և ինքեանք զգուշացեալք սահմանօք երկրին իւրեանց, պահ արկեալ պահէին մեծաւ զգուշութեամբ:

է. [Շապուհը խաբեությամբ իր մոտ է կանչում Աւշակին, փոռնում է հայկական հողի ու ջրի վրա և բանտարկում]

Ապա Շապուհ արքայ պարսից մեծաւ ազաչանօք և պատարագօք հրովարտակօք և սիրով զԱրշակ առ ինքն կոչէր, զի յայնմ հետէ արասցեն ՝ի մէջ իւրեանց սէր և խաղաղութիւն և բարեկամութիւն մեծ: Իսկ Արշակ արքայ թէպէտ պատերազմ կամէր տալ, այլ ոչ կամէին յանձն առնուլ այսմիկ ամենայն զօրքն աշխարհին Հայոց: Ապա թէ կամաւ կամաւ՝ թէ ոչ կամաւ, սակայն եդ սիրտ՝ խոնարհութեամբ հրովարտակս առ Շապուհ արքայ Պարսից, որպէս վայելէ ծառայի առ տէր իւր, տալ: Եւ առաքէր յիւրմէ նմա պատարագս հաշտութեան:

Ապա յետ այսորիկ դարձեալ առաքեաց առ Արշակ արքայ Հայոց Շապուհ արքայ Պարսից, և ասէ. Իսկ եթէ հաճ եմք ես և դու ընդ միմեանս, եկ տեսցուք զմիմեանս. և յայսմ հետէ իբրև զհայր և զորդի լիցուք ընդ միմեանս: Ապա թէ ոչ տեսանես դու զիս, խնդրես զպատերազմ ՝ի մէջ իմ և ՝ի մէջ քո: Իսկ Արշակ խնդրէր հաւատարիմ երդումն ուխտիւ ՝ի նմանէն, զի յայսմ հետէ անկասկած երթիցէ առ նա: Եւ նա եւ բերել՝ ըստ օրինացն հաւատարիմ երդմանց թագաւորութեանն Պարսից՝ աղ, կնքել վարազ նկարագիր մատանեաւ, և յղեաց: Զի թէ իցէ և զայն երդման ևս զհետ ոչ եկեսցէ, ապա կաղմ լիցի տալ ճակատս պատերազմի ՝ի մէջ իւրեանց:

Իսկ զայն ևս յորժամ տեսին և լուան ամենայն մարդիկն երկրին Հայոց, ստիպեցին բռնաբռսեցին զիւրեանց թագաւորն զԱրշակ և շտա-

պեցին, զի յարիցէ գնասցէ երթիցէ յանդիման լիցի թագաւորին Պարսից Շապհոյ։ Յայնմ հետէ թէ կամաւ կամաւ՝ և թէ ոչ կամաւ, յարեաւ թագաւորն Հայոց Արշակ, առ ընդ իւր զզօրավարն սպարապետն Հայոց զդայեակն իւր, խաղաց գնաց յերկիրն Հայոց յերկիրն Պարսից առ Շապուհ արքայ Պարսից. չոգաւ յանդիման եղև թագաւորին Պարսից Շապհոյ։ Իբրև տեսին զնոսա, արկին զերկոսեանն զարքայն Արշակ և զսպարապետն Վասակ, և պահէին զնոսա արձակ ՚ի մէջ ապատագունդ փուշտիպան զօրացն։ Եւ կոչեաց արքայ Շապուհ զարքայ Արշակ, և իբրև զծառայ իւր պատուհասեաց զնա. և նա յանցաւոր և մահապարտ զանձն իւր առ նա համարեցաւ։ Դարձեալ անդրէն ՚ի նոյն գունդ փուշտիպանաց եառն զԱրշակ արքայ ՚ի պահեստ։

Ապա կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ զդիւթեն և զաստեղագէտսն և զքաւդեայսն. խօսէր ընդ նոսա և ասէր՝ եթէ ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, և նա համակ անարգեաց զիս։ Եւ եղի ընդ նմա ուխտ խաղաղութեան, և երդուաւ ինձ յիւրեանց օրէնս քրիստոնէութեանն ՚ի գլխաւորութիւն այնմ, զոր աւետարանն կոչեն. նախ այն երդմանն ստեաց։ Ես նմա բիւր բարիս խորհեցայ որպէս հայր որդւոյ կատարել նմա, և նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց։ Իսկ ես կոչեցի զերիցունս եկեղեցոյն Տիսփոնի քաղաքի, և կարծեցի թէ նոքա նենգութեամբ ինչ եառն նմա զերդումն և եառն ինձ ստել։ Եւ պատուհասեալ զնոսա որպէս զմահապարտս, իսկ ասաց ցիս Մարի երէց գլխաւորն նոցա. ասէին՝ թէ մեք արդարութեամբ տուաք նմա զերդումն, բայց եթէ նա ստեաց, նոյն աւետարանն ածէ զնա առ ոտս ձեր։ Եւ ես նոցա ոչ լուայ. և եառ հրաման՝ եւթանասուն զնոսա ՚ի մի գուբ փողոտել, և զուսումնակիցս նոցա հանել ընդ սուր։ Զաւետարանն՝ յոր երդուաւ Արշակ արքայ, որ է գլխաւորութիւն ուսմանց նոցա քրիստոնէութեանն, կապեցի շղթայիւք. և կայ ՚ի գանձի իմում։ Բայց բանքն Մարեայ երիցոյ ուշ եղեն ինձ. և չիշեցի զի ասէր՝ թէ մի՛ սպանաներ զմեզ, այլ ես գիտեմ՝ զի նոյն աւետարանն ածէ զԱրշակ արքայ ՚ի ծունկըս քո։ Ահաւասիկ բանք արդարութեամբ կատարեցան, զոր ասէրն։ Բայց Արշակ արքայ Հայոց այս երեսուն ամ է Արեաց՝ զի եառն ընդ նմա ճակատս, և յաղթել և ոչ մի ամ ոչ կարացաք. և ելեալ է եկեալ ոտիւք իւրովք։ Բայց թէ գիտէի՝ թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում և ՚ի հնազանդութեան բարեաւ ուխտիւ, մեծապէս մեծարանօք արձակէի զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն։

Իսկ քաւդեայքն եառն նմա պատասխանի և ասեն. Թող մեզ այսօր, և վաղիւն պատասխանի արասցուք քեզ։ Իսկ ՚ի վաղիւ անդր ժողովեցան եկին ամենայն քաւդեայքն և աստեղագէտքն, և ասեն ցարքայն. Այժմ զի եկեալ է առ քեզ թագաւորն Հայոց Արշակ, զիա՞րդ խո-

սի ընդ քեզ, կամ ո՞ինչ ձայն ածէ, կամ ո՞րդ ունի զանձն։ Ասէ արքայն. Իբրև զմի ՚ի ծառայիցն իմոց համարի ինքն, հող ոտից իմոց ջանայ լինել։ Ասեն նորա. Ա՛ռ արա զոր ասեմքս քեզ. պահեա դու զնոսա ասէն, և առաքեա դու դեսպանս յերկիրն Հայոց, և տուր բերել անտի հող ՚ի սահմանացն Հայոց իբրև բեռինս երկուս և կահոյր մի ջուր։ Եւ հրաման տացես հարկանել զկէս խօրանի յատակ ՚ի բերեալ հողոյն Հայոց. և տացես քեզէն զձեռանէ արքային Հայոց Արշակայ և տարցես նախ յայն տեղ՝ որ բնակ իսկի իցէ հողն, և հարցցես ցնա բանս։ Եւ դարձեալ տացես դու զձեռանէ նորա, և տարցես ՚ի հայաստական ՚ի հարեալ հողոյն. և լուիցես դու բանս ՚ի նմանէ, և ապա դիտասցես դու՝ եթե կա՛յ յուխտի քո և պահէ՞ զդաշինս քո թե ոչ, յետ արձակելոյ քո զնա ՚ի Հայս։ Ապա թէ ՚ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի, դիտասջիր՝ զի որ օր հասանէ յերկիրն Հայոց, զնոյն ձայն ածէ ընդ քեզ, և զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ, զնոյն ճակատս և զնոյն թըշնամութիւն յուզէ։

Ապա թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ ՚ի քաւդէիցն, տաճիկ ուղտաւոր արձակէ ՚ի Հայս արս զհողոյ և զջրոյ, զի եկեսցեն բարձցեն նմա զհմայսն։ Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ, զորմէ յղեացն։ Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ, զկէս յատակին իւրոյ խորանին հարկանել ՚ի բերեալ հողոյն Հայոց, և զջուրն ցանել ՚ի վերայ նորա։ և զկէսն ՚ի նոյն հողն զիւրոյ բնակութեան երկրին թողուլ։ Եւ նա ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջս իւրով, և զայլ մարդիկն ՚ի բաց հրամայեաց կացուցանել. և զձեռանէ առեալ՝ շրջէր ճեմելով։

Եւ երթեւեկեաս առեալ ընդ խորանն, ասէ ցնա յորժամ ՚ի պարսիկ ՚ի հողոյն ՚ի վերայ ճեմէին՝ թէ ընդէր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, և կամեցայ տալ քեզ զդուստր իմ ՚ի կնութիւն, և որդի ինձ առնել զքեզ. իսկ դու խստացար ընդ իմ, և քովք կամօք՝ առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս թշնամի. և այս լի երեսուն ամ է, զի պատերազմեցար ընդ իս։

Ասէ Արշակ արքայ, թե մեղայ քեզ և յանցեայ. զի ես եկի և կոտրեցի, և յաղթեցի թշնամեաց քոց. և ակն ունէի ՚ի քէն պարգև կենաց, և թշնամիք իմ հրապուրեցին զիս, և արկին երկիւղուկս ՚ի քէն, և փախուցին ՚ի քէն։ Եւ երդումն իմ, զոր երդուայ քեզ, յառաջ ածին զիս. և եկի աւասիկ առաջի քո։ Եւ աւասիկ ծառայ քո ՚ի ձեռս քո կամ. զինչ և պէտք է քեզ, արա զիս, զինչ և կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ։

Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա, շրջէր ճեմելով, ՚ի չքմեղս առեալ զնա ածէր ՚ի հայակողմն ՚ի հողն հարեալ յատակն։ Իսկ իբրև յայն տեղի հասանէր, և զհայ զհողն կոխէր, մեծամեծս ըմբոստա-

ցեալ հպարտացեալ՝ այլ ձայն շրջէր. սկսանէր խօսել և ասել. Ի բաց կաց յինէն ծառայ չարագործ տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ Թողից զքեզ և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և զմահն Արտեւանայ արքային: Զի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ Թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ:

Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարէր զասացեալսն, խոնարհեր բուռն հարկանէր զոտից նորա, մեծապէս ապաշխարելով զղջմամբ զասացեալ բանսն: Իսկ յորժամ առեալ զձեռանէ զնա տանել 'ի հայ հողն, ևս խստագոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ միւսանգամ հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարութիւն դառնայր: Յայգուէ և երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա. զի իբրև 'ի վերայ հարեալ հողոյն տանէր, խըստացեալ ամբարտաւանէր. իսկ 'ի վերայ բուն գետնոյն յատակին՝ և կայր, 'ի ղղջումն դառնայր:

Իսկ իբրև երեկոյ եղև ժամ ընթրեաց թագաւորին Պարսից, քանզի սովորութիւն էր Հայոց թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա 'ի նորին տախտին արկանել բազմական, օրէնք էին՝ զի թագաւորն Պարսից և թագաւորն Հայոց 'ի միում տախտի բազմէին 'ի միում գահոյս: Իսկ այն օր նախ զտող բազմականացն թագաւորացն, որ անդն էին, զամենեցունց կարգեցին. հուսկ յետոյ զկնի ամենեցունց 'ի ներքոյ բոլորին զԱրշակայ բազմականն առնէին, ուր զհայ հողն յատակն հարեալ էր: Նախ ամենեքեան իբրև բազմեցան յիւրաքանչիւր չափու, յետոյ ածէին բազմեցուցանէին զարքայն Արշակ: Արդ եկաց բազմեալ ուռուցեալ վայր մի. իսկ յոտն եկաց, ասէ ցթագաւորն Շապուհ. Իմ այդ տեղի, ուր դուդ ես բազմեալ. յոտն կաց այդի, Թող ես այդր բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է. ապա եթէ յաշխարհն իմ հասից, մեծամեծ վրէժս խնդրեցից 'ի քէն:

Ապա տայր հրաման Շապուհ արքայ Պարսից, բերել շղթայս և արկանել 'ի պարանոցն Արշակայ և յոտս և 'ի ձեռս նորա երկաթս, և խաղացուցանել զնա 'ի յԱնդմըշն՝ զոր Անուշ բերդն կոչեն, և պնդեալ զնա մինչև անդէն մեռցի:

Ը. [Շապուհ մոբթազերծ է անում Վասակին]

Եւ եղև 'ի վաղիւ անդր եառ հրաման Շապուհ արքայ, ածել զառաջեաւ իւր զվասակ Մամիկոնեան զզօրավարն սպարապետն Հայոց մեծաց. սկսաւ պատուհասել զնա, քանզի էր Վասակ անձամբ փոքրիկ, ասէ ցնա արքայն Պարսից Շապուհ. Աղուէս, դու էիր խանգարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ. դու ես այն՝ որ կոտորեցեր զԱրիս այսչափ

ամս, և զի՞ գործես. զմահ աղուեսու սպանից զքեզ: Իսկ Վասակ տուեալ պատասխանի, ասէ. Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր պչապի մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առուծ էի, և արդ աղուէս: Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի. մի ոտնս 'ի միոյ լերին կայր, և միւս ոտնս իմ 'ի միոյ լերին կայր. յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ 'ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի: Ապա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ և ասէ. Ազէ՝ տուր ինձ գիտել, ո՞վ են լերինքն այնորիկ՝ զորս դուն ընդ ոտն տանէիր: Եւ ասէ Վասակ. Լերինքն երկուք, մի դու էիր, և մի թագաւորն Յունաց: Այն մինչ տուեալ էր ինձ աստուծոյ, զքեզ ընդ գետին տանէի և զթագաւորն Յունաց, մինչև օրհնութիւն հօրն մերոյ Ներսէսի հանգուցեալ էր 'ի վերայ մեր, և աստուծոյ զմեզ 'ի ձեռանէ չէր թողեալ. մինչև գնորա բանն արարաք, և խրատ նորա եկայ առ մեզ, գիտացաք տալ քեզ խրատ. մինչև մեղէն աչօք բացօք անկաք 'ի խորխորատ: Արդ զինչ և կամիս, արա: Ապա ետ հրաման թագաւորն Պարսից մորթել զզօրավարն Հայոց Վասակ, և զմորթն հանել և լնուլ խոտով, և տանել ընդ նոյն բերդ յԸնդմըշն՝ որ Անյուշն կոչեն. ուր արգելին իսկ զթագաւորն Արշակ:

Բ. [Փառանձեմը տարվում է Պարսկաստան և սպանվում]

Ապա արձակեաց արքայն Պարսից Շապուհ 'ի վերայ աշխարհին Հայոց երկուս ոմանս յիշխանաց անտի իւրոց, միումն Զիկ անուն և միումն Կարէն, հինգ հարեւր բիւրով. զի եկեսցեն բրեսցեն քանդեսցեն զաշխարհն Հայոց: Եւ եկին հասին 'ի վերայ երկրին Հայոց: Ապա իբրև ետես տիկին աշխարհին Հայոց, կինն Արշակայ թագաւորին Հայոց Փառանձեմ, զզօրս թագավորին Պարսից, եթե եկին լցին զաշխարհս Հայոց, առեալ ընդ իւր մարդիկ իբրև մետասան հազար ազատս ընտիրս սպառազէնս պատերազմողս, և հանդերձ նոքօք դիմեաց եմուտ 'ի բերդն Արտագերից՝ որ 'ի յերկրին արշակունեաց՝ յերեսաց զօրացն Պարսից: Ապա եկին հասին ամենայն զօրքն Պարսից, շուրջ զբերդսն նստէին, պահ արկանէին. պատեցին պաշարեցին: Իսկ նոքա 'ի ներքս ամրացեալք, յուսային 'ի տեղւոյն ամրութիւնն. և նոքա լակիշ ածեալ, նստէին արտաքուստ շուրջ զծորօքն: Եւ նստան շուրջ զբերդսն ամիսք երեք-տասան, և առնուլ զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր էր տեղին: Աւերեցին քանդեցին զերկիրն ամենայն. ելանէին առնուին աւար զերկիրն ամենայն, շուրջ 'ի գաւառացն և յաշխարհացն ածէին զգերի մարդկանն և զանասնոյ 'ի լակիշն իւրեանց. այլուստ բերէին համբարս, և ուտէին. և զբերդն պաշարեալ պահէին:

Իւկ Պապ որդին Արշակայ ոչ դիպեցաւ անդ ՚ի Հայոց աշխարհին, ղի առ թագաւորն Յունաց դիպեցաւ: Զի թէպէտ և զայս ամենայն լուան ազատագունդ բանակն Հայոց, չոգան իւրեանց խնդրել թիկունս օգնականութեան. և էր նոցա զօրագլուխ Մուշեղ որդին Վասակայ սպարապետին: Եւ չոգան նոքա առ իւրեանց արքայորդին. մինչ դեռ նոքա ընդ թագաւորին Յունաց խօսէին, հաւանեցուցանէին զնոսա թիկունք լինել իւրեանց: Իսկ յերկիրն Հայոց ստէպ առաքէին դեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ, ղի ժուժկալ լինիցի բերդին, և մի ձեռս տացէ ՚ի պարսիկս: Եւ դեսպանս ստէպ ստէպ յորդւոյ նորա ՚ի Պապայ զմիմեանց գիկն ՚ի շաբաթու շաբաթու հիճալ հասանէին. և գաղտ ընդ գաղտնի դուռն ուրեմն մեքենաւորութեամբ ՚ի բերդն մտանէին, տային քաջալերս տիկնոջն. և յերկարեաց ՚ի բերդին ամիսս երեքտասան պաշարումն: Այլ որք գային և երթային, ստէպ ստէպ գային՝ թէ պինդ կաց, ղի հասեալ է Պապ որդի քո և գունդ կայսերական ի թիկունս օգնականութեան: Եւ յերկարեաց խրախոյսն որ հասանէր, ղի ասէին. Վայրիկ մի ևս սակաւիկ մի ևս կալցիս ժոյժ, և ահա հասեալ է օգնականութիւն:

Եւ եղև յետ չորեքտասաներորդ ամսեանն հարուածոց՝ որ յԱստուածոյ հասին ՚ի վերայ գաղթականին բերդնորդեացն, ղի մահ անկաւ ՚ի վերայ նոցա՝ որք ՚ի բերդին էին, ղի ՚ի տեառնէ հասին պատուհասք: Առաջի տիկնոջն Փառանձեմայ ուտէին և ըմպէին և ուրախ լինէին որք էին ՚ տաճարին. յանկարծակի ՚ի միում ժամու հարիւր այր, և ՚ի միւսում երկերիւր, և էր՝ ղի հինգ հարիւր այր մեռան ՚ի բազմականին՝ յորժամ բազմեալ կային. և օր ըստ օրէ սատակէին: Յորժամ սկսան, զամիս մի ոչ յերկարեաց՝ ղի սատակեցան առ հասարակ. ղի էին արք իբրև մեռածան հազար, և կանայք իբրև վեց հազար. ղի ամիս մի ոչ կացին, ղի ամենեքեան՝ որ էին ՚ի բերդին՝ առ հասարակ սատակեցան:

Հայց մնաց ՚ի բերդին Փառանձեմ տիկին, երկու նաժշտօք: Ապա ևկն եմուտ գաղտ ՚ի ներս ՚ի բերդն Հայր մարդպետ ներքինին, և թշնամանեաց զտիկինն մեծապէս իբրև զբոզ մի: Սկսաւ դնել թշնամանս ազգին արշակունեաց, ղի վատախորհուրդք են վատանշանք, կորուսին զաշխարհս ևս. իրաւի անց ընդ ձեզ այդ, և այլ ղի անցցէ: Եւ գաղտուկ, և փախեաւ: Իսկ տիկինն Փառանձեմ իբրև եառն՝ եթէ միայն մնացի, երթայց ղդուռն բերդին, և թողացոյց զօրսն Պարսից մտանել ՚ի բերդն: Եւ ևկին կալան զտիկինն, և իջուցին ՚ի բերդէն: Ելանէին ՚ի բերդն ՚ի վեր զօրավարն Պարսից, գերէին զգանձս թագաւորին Հայոց, որ կային ՚ի բերդին. և սկսան կրել իջուցանել զամենայն գանձսն, որ կայր ՚ի բերդին: Զինն տիւ և զինն դիշեր համակ իջուցին զոր գտին յԱրտագէրսն բերդին, հանդերձ տիկնաւն խաղացուցին...

Եւ եղև իբրև չոգան տարան զտիկինն Փառանձեմ յերկիրն Պարսից, և զայլ ամենայն գերութիւնն Հայոց և զգանձսն կալան առաջի թագաւորին և զտիկինն Փառանձեմ, շնորհ մեծ ունէր թագաւորն Պարսից իւրոց զօրավարացն։ Եւ իբրև կամեցաւ թագաւորն Պարսից Շապուհ թշնամանս առնել աղգին աշխարհին Հայոց և թագաւորութեանն, ետ հրաման ժողովել զամենայն զզօրս իւր և զմեծամեծս իւր և զիշխանսն և զամենայն մարդիկ աշխարհին իւրոյ՝ որ ինքն իշխէր, և ի մէջ ամբոխին ածել զտիկինն Հայոց զՓառանձեմն։ Եւ հրամայեաց ի հրապարակին իմն առնել հրապոյրս մեքենայից, որով հրամայեաց զկինն արկանել, և արձակել տիկնոջն Փառանձեմայ ի խառնակութիւն պոռնկութեանն անասնական պղծութեանն։ Այսպէս սատակեցին զտիկինն զՓառանձեմ։ Իսկ զայլ գերին զամենայն տարան բնակեցուցին, որ յԱսորեստան, որ յերկրին խուժաստանի։

ԺԴ. [Արշակ թագավորի մահը]

Այլ յայնմ ժամանակի դեռ տակաւին ևս կայր կենդանի Արշակ արքայ Հայոց յերկրին իշխանութեանն թագաւորութեանն Պարսից ի կողմանս խուժաստանի յԱնդմըշն բերդին. այս ինքն որ անուն Անյուշն բերդն կոչեն։ Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի արշակունին թագաւորն Քուշանաց, որ նստէր ի Բաղխ քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ սասանականին Շապհու և թագաւորին Պարսից։ Եւ Շապուհ թագաւորն զամենայն զզօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զորս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն Հայոց զամենայն այրուձի գումարեալ՝ խաղացոյց ընդ ինքեան. և զներքինին անգամ թագաւորին Հայոց Արշակայ տանէր ընդ ինքեան ի գործ պատերազմին։

Եւ էր ներքինի մի Հայոց թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանութեան և մեծի պատուի, և անուն Դրաստամատն։ Իսկ իբրև եղև պատերազմ ընդ թագաւորին Քուշանաց և ընդ թագաւորն Պարսից, չարաչար տարածէին զզօրսն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս կոտորեցին ի զօրացն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս ձերբակալ արարին, և զկէս փախստականս հալածական առնէին։ Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիրանայ թագաւորին Հայոց և Արշակայ որդւոյ նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ դանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Ծոփաց ի Բնաբեղ բերդին դանձքն լեալ էին ընդ նոսա, և բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն։ Եւ քանզի այս գործակալութիւն և

մարդպետութիւն, որում հայրն կոչէին ներքինեաց՝ գործ լեալ էր ՚ի բնէ ժամանակաց ՚ի թագաւորութեանն արշակունոյ, և զայս Դրաստամատն ներքինի զիշխանն զԱնգեղ տանն գերեալ տարեալ էր յերկիրն Պարսից ՚ի ժամանակին՝ յորժամ կոլան զԱրշակ արքայն Հայոց։

Եւ այս Դրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վատթարեցին Քուշանքն զՇապուհ արքայն Պարսից։ Եւ Դրաստամատ գործեաց անհնարին քաջութիւն այնչափ կռուաւ ևս ՚ի վերայ Շապհոյ արքային, և ապրեցոյց զնա ՚ի մահուանէ. և բաղումս ՚ի Քուշանաց անտի կոտորեաց, և զրաղում զախոյանից զգլուխս բերէր զառաջեաւ։ Եւ զՇապուհ թագաւորն Պարսից փրկէր ՚ի նեղութենէն պատերազմին թշնամեաց անտի, ուր արգելին զնա ՚ի խուռն պատերազմին ՚ի զօրաց անտի։ Իսկ իբրև եղև յորժամ դարձաւ Շապուհ թագաւորն Պարսից յերկիրն Ասորեստանի, և մեծ շնորհակալութիւն առնէր ներքինւոյն Դրաստամատայն վաստակոցն, և ասէր ցնա Շապուհ թագաւորն Պարսից. Խնդրեա դու ինչ ցինէն. զինչ և խնդրեսցես, տայ քեզ և ոչ արգելից։ Եւ ասէ Դրաստամատ ցթագաւորն. Ինձ ՚ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զբնակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց։ Եւ առ մի օր, իբրև ևս երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա ՚ի կապանացն, և ես իշխեցից լուանալ զգլուխ նորա և օծանել, և ագուցանել նմա պատմուճան, և արկանել նմա բազմականս, և դնել առաջի նորա խորտիկս, և տալ նմա գինի, և ուրախ առնել զնա արուեստականօքն մի օր ճիշդ։ Եւ ասէ թագաւորն Շապուհ. Խիստ են խնդրուածքդ, զոր խնդրեցեր. զի յաւուրց ժամանակաց՝ յորմէ թագաւորութիւնս Պարսից կանկնեալ է, և բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է չիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ զոք է թագաւորաց, չիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ է, թող թէ զնա զայր թագաւոր և զիմ ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զհակառակորդն. քան մինչ աշխատ արարեր զմեզ, և դու աւադիկ զանձն ՚ի մահ եդիր և չիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք թագաւորութեանս Արեաց ՚ի սկզբանէ։ Բայց զի վասն՝ քո մեծ վաստակք են առ իս, զոր ինչ խնդրեցերն՝ երթ՝ տուեալ լիցի քեզ. բայց քեզ արժան էր զօգուտ քո անձիդ խնդրել կամ աշխարհս կամ գաւառս կամ գանձս։ Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինօք Արեաց թագաւորութեանս. երթ, տուեալ լիցի քեզ որ ինչ ցինէնս խնդրեցեր փոխանակաց քոց։

Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ. և հրովարտակ՝ արքունի մատանեաւն, զի գնացեալ երթիցէ նա ՚ի բերդն յԱնդմըշն, և զիարդ և կամքիցէ նորա, զոր օրինակ և խնդրեացն՝ արասցէ կապելոյն Արշա-

կայ, որ յառաջ թագաւորեալն էր ՚ի Հայս։ Եւ չոգաւ Դրաստամատն հանդերձ փշտիպանաւն և հրովարտակաւն արքունի յԱնուշ բերդն, և եահս զտէրն բնակ. և արձակեաց զԱրշակ ՚ի կապանացն երկաթեաց ՚ի ձեռակապացն և յոտից երկաթոց և յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն. և լուաց զգլուխ նորա, և լոգայոյց զանձն նորա։ Եւ ապոյց նմա պատմուճան ազնիւ. և էարկ նմա բազմականս, և բազմեցոյց զնա, և եդ առաջին նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց, և եդ առաջի նորա դինի որպէս օրէն էր թագաւորացն. սթափեաց զնա և մխիթարեաց, և ուրախ առնէր զնա գուսանօք։

Եւ ՚ի ժամ ազանդեր մատուցանելոյ՝ եդին առաջի նորա միրգ, խնձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ. և եդին դանակ նմա, որպէս զի հասցէ և կերիցէ զիարդ և կամեսցի։ Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն, և մխիթարէր զնա։ Իսկ յորժամ արբեցաւ, և դինին եկն զակամբ նորա, արբեցաւ հպարտացաւ և ասէ. Վա՛յ ինձ Արշակայ. այսպէս և այս, և յայսմ չափու և այս անցք անցին ընդ իս։ Եւ զայս ասացեալ, զդանակն՝ զոր ունէր ՚ի ձեռինն, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար ՚ի սրտի իւրում. և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն ՚ի նմին ժամուն մինչ դեռ կայր ՚ի բազմականին։ Իսկ յորժամ զայն եահս Դրաստամատն, յարձակեցաւ եհան ՚ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում կշտին. և անդէն մեռաւ և նա ՚ի նմին ժամուն յայնմ։

13. [ՊԱՊ ԱՐՔԱՅՈՐԴԻ]

Ա. [Պապի վերադարձը Հայաստան]

Ապա յետ այսր ամենայնի Մուշեղ որդի Վասակայ ժողովեաց զամենայն ազատագունդ մարդկանն մնացելոյն՝ որ միանգամ մնացեալ էին, և չոգաւ հանդերձ նոքօք առ թագաւորն Յունաց։ Եւ եցոյց զպաղատանս աշխարհին Հայոց, և զամենայն անցս տառապանաց՝ որ անցեալ էր ընդ նոսա, և խնդրեաց ՚ի կայսերէն զՊապ զորդի Արշակայ թագաւոր ՚ի վերայ Հայոց աշխարհին։ Մեծ թագաւորն Յունաց թագաւորեցոյց զՊապ զորդին Արշակայ ՚ի վերայ աշխարհին Հայոց, որպէս և խնդրեաց նա ի նմանէ. և մեծապէս թիկունք լինէր արքայն Յունաց. զՏերենտ անուն ստրատելատն և զԱդէ ոմն կոմս արձակէին ընդ արքային Պապայ յերկիրն Հայոց վեց հարիւր բիւրու։

Եւ եկին հասին ՚ի սահմանս Հայոց. և Մուշեղ լինէր զօրավար սպարապետ Հայոց փոխանակ Վասակայ հօր իւրոյ։ Եւ գային ՚ի մի

վայր ժողովէին ամենայն ցրուեալք փախուցեալք թագուցեալք, որ էին յերկրին Հայոց. գային ՚ի մի վայր բովանդակէին, և լինէին ՚ի խնդիր սրբոյն մեծի հայրապետին Ներսէսի թագաւորն և ամենայն մարդիկ աշխարհին Հայոց, մեծամեծք գաւառակալք և գաւառատեարք: Որք եկեալք ժողովեալք, զկաթողիկոսն գտեան Ներսէս խնդրէին. զի գիտէին թէ նա կարող է աղօթս առնել, և խնդրել յաստուծոյ վասն շինութեան ամենայն աշխարհին Հայոց, և փրկել ՚ի թշնամեացն. և դարձեալ զինչ և խնդրէր յաստուծոյ, տայր աստուած նմա. և միւս ևս, զի իմաստութեամբ իմն կարէր սոցա զօգտակար խրատն մատուցանել: Վասն այսորիկ ոչ եթէ փոքր ինչ էր խնդիրն այնպիսւոյն առն լինել, որ կարէր նոցա զօգուտ խրատու իմաստութեան շնորհել, և ըստ ժամանակին զիպացն պատահելոյ՝ միտս օգտակարս դնել, որովք զճանապարհս՝ որ կայրն առաջի՝ գնալ մարթասցեն:

Ապա ինքն թագաւորն Պապ երթայր հասանէր գտանէր զեպիսկոպոսապետն Ներսէս հանդերձ աւագանովն Հայոց. աղաչէր զնա, զի հայր Հայոց ամենայն օգտին խրատու առաջնորդ՝ և խնդրեսցէ ևս վասն նոցա: Ապա մեծաւ ջանիւ հաղիւ հաւանեցուցին զնա երթալ նմա ընդ նոսա ՚ի բանակն արքունի. զի յաւուրց ժամանակին ՚ի մահուանէն Գնելոյ մինչև յայն ժամանակն թագաւորութեանն Պապայ ոչ էր երթեալ նա ՚ի բանակն արքունի: Ապա յայնմ ժամանակի մեծաւ աղաչանօք տարան զնա ՚ի բանակն արքունի ընդ ինքեանս. և նա էր նոցա վերակացու և խրատատու, կարգիչ և առաջնորդ. և հանապազ խնդրէր վասն նոցա յաստուծոյ: Եւ էր իմաստութեան իրաց առաջնորդ, և հանապազ կցորդ հոգւոց և բարձիչ վշտաց աղօթիւք իւրովք. և յամենայնի ամենայնիւ երբէք հայր երևեալ:

Ապա կարգէր կազմէր յօրինէր Մուշեղ սպարապետ զամենայն պղունդս Հայոց զօրացն, և առնէր հանդէս ամենայն զօրացն գնդին՝ որ հասին ՚ի ձեռս նորա տասն հազար: Եւ ածէր զամենայն հանդէսն կարգեալս և պատրաստեալս վառեալս ՚ի պատերազմ, զդրօշս փողփողեալս և նշանս արձակեալս. և ցուցանէր զհանդէս զօրացն Հայոց սպարապետն Հայոց Մուշեղ առաջի իւրեանց թագաւորին Պապայ, և մեծի քահանայապետին Ներսէսի, և առաջի Տէրենտի և Ադէի զօրագլխացն Յունաց: Եւ մեծ շնորհակալութիւն առնէր նման թագաւորն Պապ Հայոց, մեծամեծ պարգևս շնորհեր զօրավարին Մուշեղի. և սոյնպէս զօրագլուխքն Հռոմոց շնորհակալ լինէին նմա: Սոյնպէս և եպիսկոպոսապետն Ներսէս օրհնէր զզօրավարն Մուշեղ, և ասէր. Տէր Քրիստոս օրհնեսցէ զքեզ, և յաջողեսցէ քեզ, և տացէ քեզ զյաղթութեանն շնորհս զամենայն աւուրս կենաց քոց. ՚ի ձեռն քո և ՚ի ձեռն ազգի քո փրկեսցէ զերկիրս Հայոց մինչև յաւիտեան:

Ապա զօրավարն Հայոց Մուշեղ գունդ կազմեաց պատրաստեաց, և յառաջեաց հանդերձ Հայոց գնդաւն. առաջապահ անցանէր առաջի թագաւորին Պապայ և զօրացն Յունաց կայսերական գնդիւն: Ապա ՚ի Դարանաղեաց գաւառին լկնեալ յարձակեցաւ Մուշեղն: Իբրև զայր առաջապահն հասանէր ՚ի միջնաշխարհն Հայոց, սպանանէր Մուշեղ զզօրագլուխան Պարսից զԿարէնն և զՋիկն, և զամենայն զզօրսն արկանէր ՚ի սուր սուսերի իւրոյ, և ոչ մի զոք ապրեցուցանէր: Եւ մինչև ՚ի բուն ՚ի սահմանսն ՚ի Դանձակ Ատրպատականի զերկիրն յիւր վտարեալ, բռնացեալ ունէր:

Եւ եկն եմուտ թագաւորն Պապ յերկիրն Հայոց, և թագաւորեաց ՚ի վերայ նորա. և թափեաց յինքն զամուր ամուր բերդիցն, զոր կալեալ էր պարսկացն. և բերդն Դարօնից, որ է յերկրին Կոգայ, ուր կային գանձք արշակունեացն սաստիկ յոյժ: Քանզի դիպեցան մտերիմք բերդակալքն. զի թէպէտ ՚ի ժամանակէն՝ իբրև տարան զթագաւորն Հայոց զԱրշակ ՚ի Պարսս՝ յայնմ հետէ ժամանակէ մարտեան ընդ բերդին ընդ այնմիկ պարսիկք, և ոչ կարացին առնուլ, մինչև եկն Պապ թագաւորն յերկիրն Հայոց. զի պահեցաւ գանձն և եհաս ամբողջ ՚ի Պապ թագաւորն մինչև եկն: Եւ զօրսն Յունաց յԵռանդ և ՚ի Բախիշն ընդ ամենայն երկիրն Հայոց բաշխէին ընդ ամենայն գաւառսն. բայց միայն Մերուժանն չարագործ փախչէր միածի:

Իսկ Մուշեղ զօրավարն հայաստանեաց շրջէր ընդ երկիրն, և աւերէր զատրուշանսն Մազդեզանցն: Իսկ զՄազդեզունսն, որ միանգամ ՚ի բուռն արկին, զամենեսեան տայր հրաման սպարապետն Մուշեղ ունել և հրով խորովել: Եւ բազում բերդակալս բերդացն չարամահս առնէին, և զբազում պատուաւոր տեարս՝ որ պատուականք էին առաջի թագաւորին Պարսից՝ ունէր ձերբակալս Մուշեղ, և տայր մորթել և լնուլ խոտով և կանգնել ՚ի վերայ պարսպացն: Ընդ բազում տեղիս զայս առնէր ՚ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ:

Եւ շինէին զամենայն աւերեալսն ՚ի թշնամեացն, և ղեկեղեցիսն նորոգեցին. և թագաւորութիւնն հաղ քան զհաղ նորոգէր, և իրք ժամանակին հաղ քան զհաղ յառաջադէմ աջողէին: Եւ սուրբն Ներսէս իմաստուն հայրապետն առաջնորդէր և լուսաւորէր, խրատէր և կարգէր՝ և շինէր աղքատաց հանգիստ, որպէս և ինքն ՚ի բնէ իսկ սովոր էր. և զվարս թագաւորութեանն իսկ յօրինէր ամենաբարի կրօնիւք, որպէս և տեսեալ էր իւր առ հնօքն թագաւորօքն: Եւ առաւել զկարգս եկեղեցւոյ պաշտամանն եպիսկոպոսաց երիցանց և սարկաւագաց, և շինուածս եկեղեցւոյ և վկայանոցաց զամենայնն նորոգեաց ուսոյց և յարդարեաց:

Զօրավարն Հայոց Մուշեղ զգունդ իւր կազմէր, և երթայր ՚ի սահ-

մանան՝ կալ անդ, զգուշացեալ զսահմանօքն երկրին իւրոյ՝ պահել զիւր աշխարհն հրամանաւ իւրոյ թագաւորին Պապայ։

Բ. [Մուշեղը չախչախում է պարսից զորաբանակը]

Ապա Մուշեղ որդի վասակայ, ստրատելատն Հայոց մեծաց։ ընդ-րեաց իւր արս ընտիրս միամիտս ազատս ազգայինս քառասուն հազար, միաբանս, միակամս, և կազմեաց զնոսա ձիով և թոշակաւ և զինու. և առեալ զնոսա ընդ իւր, երթալ նստել 'ի սահմանս Ատրպատճայն, և պահել զաշխարհն Հայոց։ Ապա յայնմ ժամանակի կազմեաց պատ-րաստեցաւ Շապուհ արքայ Պարսից ամենայն կազմութեամբ զօրուք իւրովք, եկն հասս յերկիրն Ատրպատականի. և Մերուժանն առաջնորդ զնդին բանակի նորա, և բուն բանակն ուրեմն թագաւորին 'ի Թաւրէշն բնակեալ էին։

Եւ հասանէր սպարապետն զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր 'ի վերայ բանակին քառասուն հազարաւ, և անդէն ձեռն 'ի գործ արարեալ կոտորէր։ Ապա միաձի մազապուր թագաւորն Պարսից Շապուհ ճողո-պրեալ փախչէր. և զամենայն կարևան բանակին առ հասարակ ընդ սուր հանէր Մուշեղ հանդերձ զօրօքն Հայոց։ Զի զբազումս կոտորէին, և զբազումս յաւագանոյն Պարսից ձերբակալս առնէին, և առնուին զգ-գանձս թագաւորին Պարսից յաւարի. և ըմբռնէին զտիկնանց տիկինն հանդերձ այլովք կանամբքն։ Եւ զամենայն մաշկաւարզան 'ի բուռն ար-կանէր Մուշեղ սպարապետն, և զամենայն աւագանին՝ արս իբրև վեց հարիւր՝ հրամայէր մորթել զօրավարն Հայոց Մուշեղ, և լնուլ խոտով. և տայր բերել առ Պապ արքայն Հայոց։ Առնէր զայս 'ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ։

Բայց զկանայսն Շապհոյ թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ զնոսա ումեք. այլ ժա-մաւարս տայր նոցա կազմել ամենեցուն, և հանեալ արձակէր զամե-նեսեան զհետ առն նոցա Շապհոյ արքայի։ Եւ 'ի պարսկացն ընդ նոսա արձակէր, զի երթիցեն առ Շապուհ թագաւորն Պարսից ողջս և անա-րատս։ Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութիւնն Մու-շեղի և ընդ քաջութիւնն և ընդ ազատութիւնն, զի ոչ արար ինչ նմա չաղագս կանանցն թշնամանաց։ Եւ էր 'ի ժամանակին յայնմիկ երիվարն Մուշեղի, ճերմակ ձի մի. իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առ-նոյր գինի 'ի մատունսն ըմպել, յորժամ ուրախութեանն իւրոյ խրախու-թիւնս առնէր զօրացն իւրոց, ասէր. ճերմակաձին գինի արբցէ։ Եւ եա նկարել զառաջ 'ի պատկեր զՄուշեղ ճերմակաւն. և 'ի ժամ ուրախու-

թեանն իւրոյ դնէր զգաշտն առաջի իւր, և չիշէր հանապազ զնոյն բանս ասելով՝ թէ ճերմակաձին զինի արբցէ։

Այլ Մուշեղ և ամենայն զօրքն Հայոց անչափ առին զաւար ՚ի բանակէն Պարսից, և անչափ լցան դանձօք և ստացուածովք. և բազում աւարամասն Պապայ պահէին թագաւորին իւրեանց. և զօրացն Հայոց՝ որ անդէն առ թագաւորին Պապայ էին մնացեալ՝ հանին աւարամասն և զօրավարացն Յունաց՝ որ էին առ թագաւորին Հայոց. սոյնպէս և ամենայն զօրացն տային բաշխիչ ՚ի մեծամեծ աւարացն ածելոցն։ Այլ իբրև դարձան զօրքն Հայոց յաշխարհն իւրեանց, բազումք ՚ի զօրացն Հայոց ամբաստանէին առ թագաւորին Պապայ զՄուշեղէ զսպարապետէն, թէ ընդէր արձակեաց զկանայս թագաւորին Պարսից զՊշնամուն և թագաւորին Հայոց Պապայ. վասն այսր իրաց ոչ ինչ սակաւ լինէր Պշնամութեամբ ընդ Մուշեղի մինչև ՚ի բազում ժամանակս։

Գ. [Պապ և Ներսես]

Իսկ թագաւորն Հայոց Պապ, զի թէպէտ և սպան զհայրապետն աշխարհին Հայոց զՆերսէս, սակայն ոչ յագեցաւ մահուամբ նորա, այլ ջանայր այսպէս՝ թէ զինչ միանգամ կարգք իցեն ուղղութեան ՚ի Ներսիսէ եղեալ յեկեղեցւոջն, եղծեսցէ և խանգարեսցէ։ Եւ սկսաւ նախանձ վարել ընդդէմ յառաջագոյն կանոնելոցն ՚ի նմանէ. և սկսաւ հրաման տալ յայտնապէս յաշխարհին աւերել զայրենոցան և զորաբանոցան՝ զոր շինեալ էր Ներսէս ՚ի գաւառս գաւառս, և աւերել զկուսաստանան ՚ի գաւառս գաւառս և յատանս յատանս պարսպեալս և ամրացեալս՝ որ նորին Ներսիսի էր շինեալ վասն ամրապահս առանգոյն զգուշութեան։ Քանզի յիւրում կենդանութեան երանելոյն Ներսիսի էր շինեալ. շինեաց զայս կուսաստանս յամենայն գաւառս. զի որ միանգամ կուսանք և հաւատացեալք իցեն՝ անդր ժողովեսցին ՚ի պահս և յաղօթս, և կերակրել յաշխարհէ և յիւրաքանչիւր ընտանեաց։ Զայն աւերել հրամայէր Պապ թագաւորն, և զկուսանսն հաւատացեալս տայր հրաման ՚ի խառնակութիւն պղծութեան։

Եւ յամենայն աւանս էր շինեալ նորին Ներսիսի և հիւանդանոցս. յամենայն կողմանց և ոռճիկս և դարմանս կարգեալս, և արս հաւատարիմս թողեալ տեսուչս հիւանդացն և աղքատացն. նոյնպէս և այնոցիկ յանձն արարեալ որք երկիւղածքն էին յաստուծոյ, որք զառաստանացն յաւիտենականացն և զալստեանն Քրիստոսի սպասէին։ Զվերակացուսն հալածէր թագաւորն յիւրաքանչիւր տեսչութենէ, և զտեղիսն ՚ի բաց աւերէր։ Զոր վերակացուսն կարգեալ էր յաղագս չքաւորացն և աղքատաց տեսուչ, զնոսա ՚ի բաց հալածէր. և հրաման տայր ամենայն

աշխարհի իշխանութեանն իւրոյ։ Աղքատքն բայց եթէ ՚ի մոյր ելցեն. այլ անդր ոք ինչ մի իշխեսցէ տանել, եթէ ոչ նոքա եկեսցեն ժռեսցեն աղաչեսցեն, ապա թէ զտանել հարիւ ինչ կարասցեն։ Եւ զկարգս պաղոյն և զտասանորդացն՝ որ ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղեցին, վասն այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ՝ զի մի՛ ոք տացէ։

Եւ յաւուրսն Ներսիսի հայրապետի ոչ ոք իշխէր ՚ի նմանէ հանել կամ թողուլ զկին իւր զամուսին յամենայն երկիրն Հայոց, զոր միանգամ քօղով կամ պսակաւ հարսանեացն օրհնութեամբ առեալ էր. և ոչ այլ առնել միւս անգամ իշխէր ոք համարձակել։ Եթէ յանկարծ մեռանէր ոք, ոչ ոք իշխէր անյուսութեամբ արտաքոյ կարգի կանոնի եկեղեցւոյ լալ զմեռեալն. և ոչ կոծ ոք դնէր կամ աշխարանս մեռելոյն, և ոչ ձայնս ոք արկանէր ՚ի վերայ մեռելոյն յաւուրսն Ներսիսի. այլ լոկ արտասուօք և ըստ արժանի սաղմոսիւք և օրհնութեամբ, կանթեղօք և մոմեղինօք լուցելովք զմեռեալսն յուղարկէին։ Իսկ յետ մահուան նորա այնուհետև ամենայն մարդ առին հրաման համարձակութեամբ ՚ի թագաւորէն, թողուլ զկանայս զամուսինս իւրեանց. էր ոք մի այր տասն կին փոխէր. և առ հասարակ յանօրէնութիւն դարձան միանգամայն։ Ապա յետ մահուան Ներսիսի յորժամ զմեռեալսն լային, փողովք և փանդռօք և վնօք զկոծսն պարուցն կաքաւելով, զտիգսն հատեալս, զերեսս պատառեալս, արք և կանայք պղծութեամբ ճիւաղութեամբ պարուք դէմ ընդ դէմ հարկանելով, և կամ ասիս հարկանելով, զմեռեալսն յուղարկէին։

Իսկ յամսն Ներսիսի զաղքատս բնաւ ամենևին ՚ի մոյր ոչ տեսանէր ընդ ամենայն սահմանսն Հայոց. այլ անդէն ի հանդստեան նոցին, այս ինքն յօրկանոցսն, ամենայն մարդիկ տանէին զամենայն պիտոյս նոցա. անդէն իսկ անկարոտ յամենայն ումեքէ լցեալ էին։ Իսկ յետ մահուն քահանայապետին թէ առնէր ոք հանդիստ աղքատացն, մեծ պատիժս կրէր ՚ի թագաւորէն։

Իսկ յամսն Ներսիսի զաղքատս բնաւ ամենևին ՚ի մոյր ոչ տեսանէր մանկեկեղեցւոյն մեծապես պայծառացեալ էր, և բազմութիւն սրբոց պաշտօնէիցն կանոնելոցն։ Եւ յիշատակ սրբոց վկայից յաւուրս նորա յամենայն տեղիս Հայոց մեծախումբ ժողովք հանապազ պայծառանային, և պատիւ հարցն եպիսկոպոսաց յամենայն գաւառս Հայոց յաճախէր ըստ արժանի իւրեանց. և կարգք վանականաց և ՚ի շէնս և յանշէնս առ հասարակ ծաղկեալ։ Այլ ամենայն եղծեալ ապականեալ խանգարեցաւ յետ մահուան նորա։

Իսկ յաւուրս քահանայապետութեանն Ներսիսի ամենայն գաւառք Հայոց յամենայն ՚ի շէնս և ՚ի գեղս յամենայն կողմանս Հայոց առ հասարակ ՚ի հրամանէ քահանայապետին էին շինեալ օտարատունք հիւանդանոցք օտարանոցք. և ամենայն մարդիկք երկրին Հայոց էին

պտղաբերք և ողորմածք առ ի յիշել զաղքատս և զնեղեալս զտառապեալս և զօտարս, զհարստահարս, զնշդեհս, զպանդուխտս, զհիւրս զանցաւորս. և էր նոցա կարգեալ վերակացուս սրբոյն Ներսիսի, և դարմանս ի տեղեաց տեղեաց։ Իսկ յետ մահու նորա աւերեաց զայն ամենայն թագաւորն Պապ, և անարգեաց զպատիւ եկեղեցւոյ. և բազում ինչ կարգ և կանոնաց ուղղութեան յօրինուածոց՝ զոր եդ Հայրապետն Ներսէս, և անցեալ դարձեալ ի մոռացօնս զամենայն կարգեալն տապալէր։ Յետ նորա ելիցն յաշխարհէս բազում գաւառք Հայոց և բազում մարդիկ ի հնութիւն դիւապաշտութեան դարձան, և ընդ բազում տեղիս Հայոց կուռս կանգնեցին ի համարձակութենէ թագաւորին Պապայ. զի ոչ գոյր յանդիմանիչ, և ոչ ոք էր այն՝ յորմէ խիթային. զինչ և կամէին գործել, համարձակութեամբ գործէին. բազումք պատկերս կանգնեալ, երկիր պագանէին։

Եւ հատ ևս յարքունիս Պապ թագաւոր զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիւ քահանայապետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց։ Զի յետքն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, և զերկուսն միայն թողոյր երկուս հողս։ Եւ ըստ հողոյն թողոյր երկուս երկուս առ գետ մի երէց և սարկաւագ, և զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն։ Զի նմա այսպէս թուեցաւ՝ եթէ զայն չար ինչ կամացն հեճուկս Ներսիսի առնիցէ ի կենդանեաց առ մեռեալս, վասն թշնամութեանն՝ զոր ունէր ընդ նմա։ Եւ զայն ոչ ածէր զմտաւ՝ թէ զանձն կորուսանէ։ Եւ ի ժամանակին նուաղէին ամենայն կարգք եկեղեցւոյ պաշտամանն սպասուցն յամենայն երկիրն Հայոց։

Դ. [Պապի սպանությունը]

Եւ շրջեաց զմիտս իւր թագաւորն Պապ և խոտորեաց զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց, և կամեցաւ խառնել զսէր իւր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից։ Եւ սկսաւ թիկունս իւր առնել զարքային Պարսից, և արձակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան։ Եւ առաքէր հրեշտակս առ թագաւորն Յունաց, եթէ Կեսարիաւ հետ՝ և տասն քաղաք մեր լեալ է, արդ ի բաց տուր. և զԱւտհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց. արդ եթէ ոչ կամիս խանգար ինչ առնել, տուր ի բաց. ապա թէ ոչ, կռուիմք մեծաւ պատերազմաւ։ Այլ Մուշեղ և ամենայն իշխանքն Հայոց շատ եղին ի մտի արքային, զի մի քակեսցէ զուխտ յերկրէն թագաւորութենէն Յունաց. և ոչ անսաց նոցա, և յայտնեաց զբշնամութիւն իւր՝ զոր ունէր ընդ թագաւորին Յունաց։

Այլ իշխանքն Յունաց և զօրքն նոցին տակաւին էին յերկրին Հայոց. և անուն իշխանացն՝ միումն Տէրէնտ, միւսումն Անդէ: Եւ յղեաց դեսպան մի գաղտուկ Թագաւորն Յունաց առ իշխանսն զօրացն իւրոց՝ որ էին յերկրին Հայոց, և հրաման տայր սպանանել զԹագաւորն Հայոց զՊապ: Եւ եղև իբրև ընկալան զայս հրաման 'ի Թագաւորէն Յունաց իշխանքն իւր՝ որ էին 'ի Հայոց երկրին, սպասէին մահու 'ի դէպ՝ սպանանել զԹագաւորն Հայոց զՊապ: Եւ եղև 'ի դիպան ժամանակի իբրև գիտացին Տէրէնդն և Անդէն զօրավարքն զօրացն Յունաց՝ թէ միայն է Թագաւորն Հայոց Պապ, և ամենայն մեծամեծքն և զօրքն Հայոց չէին անդ. և էր Թագաւորն Հայոց Պապ բանակեալ 'ի դաշտին 'ի Բագրեւանդ գաւառի 'ի Խու անուն տեղւոյն, և բանակ զօրացն Յունաց բանակեալ էր անդէն մօտ առ բանակին Հայոց արքային. ապա զօրավարն Յունաց հաց մեծապէս գործեալ՝ յղնբրիս հրաւիրեալ կոչեցին զմեծ Թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեան նորա, որպէս օրէն էր զայր Թագաւոր 'ի հաց մեծ կոչել. և առնէին կազմութիւն պատրաստութեան:

Եւ եկեալ Թագաւորն Պապ յղնբրիս, մտեալ բազմեցաւ յուտել և յըմպել: Եւ իբրև մտանէր արքայն 'ի խորանն Տէրէնդի զօրավարին Յունաց, և լեգէոն սպարակիր հետևակն վահան 'ի ձեռն, սակուր զգօտւոյ, շուրջ 'ի ներքոյ զօրմովք խորանին պատեալ պսակէին. սոյնպէս և արտաքոյ կազմէին 'ի ներքոյ կուռ վառեալք, և 'ի վերոյ հանդերձք զգեցեալք պատրաստէին: Իսկ Թագաւորն Պապ համարէր 'ի միտս իւր Թէ 'ի պատիւ ինչ նորա զայն առնիցեն: Եւ մինչ դեռ յղնբրիսն ուտէր, սակրաւոր զօրքն 'ի թիկանց կուսէ նորա կարգեալք պսակեալք կային շուրջ զնովաւ յամենայն կուսէ: Իբրև ընդ դինիս մտին, որպէս զառաջին ուրախութեանցն նուագն մատուցին արքային Պապայ, և առ հասարակ Թմբկահարք և սրնգահարք քնարահարք և փողհարք իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւք բարբառեցան: Եւ վահանաւոր լեգէոնին հրաման եառն. և մինչ դեռ Թագաւորն Պապ զուրախութեան գինին ունէր 'ի մատունս իւր, և նայէր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն, ահեակ ձեռամբն յարմուկն՝ յոր յեցեալ բազմեալ էր՝ ունէր տաշտ ոսկի 'ի մատունս իւր, իսկ աջ ձեռնն եդեալ էր 'ի դաստապան նրանին՝ զոր կապեալն էր յաջու ազդերն իւրում, և մինչ դեռ բերանն 'ի բաժակին էր յըմպելն, և աչօքն յառաջ կոյս պշուցեալ հայէր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն, հրաման լինէր ակնարկելով զօրացն Յունաց: Եւ լեգէոն սակրաւորքն երկու 'ի թիկանց կուսէ կային 'ի սպասու ոսկիկամբ վահանօքն յանկարծօրէն կից 'ի վեր առեալ զսակուրսն, զարկանէին Թագաւորին Պապայ. մին կշիռ զուլն հարկանէր սակրան, և միսն ևս սակրաւորն զաջ Թաթ

ձեռինն՝ որ կայր ի վերոյ դաստապանի նրանին՝ հարկանէր, կտրէր և ի բաց ընդենոյր։ Անդէն ի բերանս տապալէր թագաւորն Պապ. և գինին տաշտիւն և արիւնն պարանոցին նովաւ հանդերձ ի վերայ բաժակալ սկըտեղն անկանէր առ հասարակ. և անդէն սատակէր թագաւորն Պապ։ Ընդ շփոթելոյ տաճարին խռովութեան՝ Գնել տէր գաւառին Անձևացեաց յոտն կացեալ յիւրմէ բազմականէն, հանեալ զիւր սուսերն՝ հարկանէր զմի ի լեգէոնաց անդի սպանանէր, յայնցանէ՝ որ հարին զթագաւորն։ Ապա Տէրէնդ զօրավարին Յունաց զիւր սուսերն հանեալ ածէր, տարակաց ի գլխոյն Գնելոյ զսկաւառակն գլխոյն ի վերայ աշացն ի բաց ընդենոյր։ Եւ այլ ինչ որ ոչ կարաց յանդգնել ասել ինչ ընդ նոսա և ոչ ինչ։

Ե. [Վարազդատ թագավորը սպանում է Մուշեղ զորավարին]

Այլ իբրև տեսանէին զթագաւորն Հայոց Վարազդատ մեծ նախարարքն Հայոց՝ թէ մանուկ բանսերթուկ է, զչար ի բարոյ որոշել չգիտէ, սկսան այնուհետև ըստ կամաց իւրեանց վարել զթագաւորն. որպէս և կամէին, բանիւք իւրեանց տանէին և բերէին զնա։ Նա առաւել ունկն դնէր մանկտոյն՝ որ ի տիոց հասակակիցք էին նորա, առաւել քան զծերոցն իմաստնոց՝ որք կարող էին զօգտակար խրատն մատուցանել նմա։

Այլ Բատ, որ նահապետն էր ազգին Սահունեաց տոհմին, դայեակ սնուցիչ թագաւորին Վարազդատայ, կամեցաւ նա զգործ զօրավարութեան սպարապետութեանն Մուշեղայ յինքն յափշտակել ի նմանէ։ Վասն այսորիկ սկսաւ քսիս մատուցանել զնմանէն առ թագաւորին Վարազդատայ առ իւրում սանուն, և ասել՝ թէ ի սկզբան ի՝ նախնեացն հետէ զձեր արշակունեաց տոհմին մամիկոնէից է կորուսեալ, զի հակառակորդք ձեր դոքա լեալ են ի բնէ անտի. և համակ զերկիրս Հայոց դոցա է կերեալ, մանաւանդ Մուշեղի. մանաւանդ զի այր չար է և նենգաւոր։ Զի սիրելի է թշնամեաց ձերոց, և ատելի սիրելեաց ձերոց. և համակ ընդ ձեզ նենգաւ է գնացեալ, երկմտութեամբ և դժխեմութեամբ։ Զի ո՞չ այն Մուշեղ է, որ ի թագաւորութեան ժամանակ Պապայ ի պատերազմունս Պարսից քանիցս անգամ ձեռնահաս եղև սպանանել զՇապուհ արքայն Պարսից, և ոչ եսպան, այլ արձակեաց զթշնամին. և երբեմն զկանայս Շապհոյ թագաւորին ի բուռն էարկ, և խնամոտ զթով ժանուարօք արձակեաց զնոսա զհետ Շապհոյ։ Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ զՈւռնայր արքայ Աղուանից ի բուռն էարկ, և սպանանել ոչ կամեցաւ, այլ արձակեաց զթշնամին։ Ո՞չ այդ այն Մուշեղն է, զի զարքայն Պապ հրամանաւ դորա և դորին խորհրդովդ զօրավարքն Յունաց սպանին. զի դա ոխացոյց և զրգռեաց զարքայն Յունաց ի վերայ թագաւորին Պա-

պայ, մինչև ետ սպանանել: Այլ արժան է մեռանել 'ի ձեռաց քոց, և՛ չէ պարտ կեալ դմա. այլ թէ ոչ աճապարեսցես, արքայ, այժմ զհայ երկիրս խորհի լնուլ քաղաքօք, և զօրանիստ առնէ ասա բնակութեան զօրացն Յունաց: Եւ այնուհետև կամ թագաւորն Յունաց հանէ 'ի քէն զթագաւորութիւնս Հայոց. կամ այս Մուշեղ սպանանէ, և ինքն թագաւորէ: Եւ այսպիսի բանիւք զաղտնի հանապազ զթագաւորն գրգռէին, մինչև հաւանեցաւ ըստ կամաց նոցա զսպարապետն զզօրավարն Հայոց սպանանել:

Ապա խորհուրդ արարին, թէ որպէս ըմբռնել կարասցին զնա. քանզի մեծապէս երկնչէին 'ի նմանէն: Թէ զգայ, ասէն, մեծ պատերազմ առնէ. և ոչ ոք կարէ զդէմ քաջութեան նորա ունել, բայց հնարիւք մեքենաւորութեամբ ինչ լինիցի հնար: Այսպէս սպասէին նմա: Եւ եղև յաւուր միոջ հրաման ետ Վարազդատ արքայ Հայոց ընթրիս մեծ գործել և մեծ պատրաստութիւն առնել. և կոչել հրամայեաց զներիսն զամենայն աւագս պատուականս և զմեծամեծս, և զզօրավարն Մուշեղ: Պատրաստեաց Վարազդատ արս ընտիրս հզօրս, զօրեղք, զի կազմ կայցեն գործոյն, հարկանել յանկարծօրէն յանպատրաստից յեղակարծումն ժամու 'ի վերայ Մուշեղի: Զնոսա քաջ ուրախ առնէր մեծապէս, և շատ գինի տայր ըմպել, և բազում առնէր զբօսումն ուրախութեան: Արքայն Վարազդատ տայր նշանս յառաջագոյն այնոցիկ, զոր էր սպանօղն պատրաստեալ, եթէ յորժամ գիտիցես՝ թէ քաջ արբեալ իցէ, և զմտօք զառանցեալ յարբեցութենէ սպարապետն Մուշեղ, ես յարուցեալ իբրև 'ի ճեմիշն երթալոյ պատճառաւ, և դուք պատեսջիք զնովաւ: Եւ եղև իբրև անցին զառանցին 'ի գինւոյն՝ ըստ չափ անցանելով, և թագաւորն Վարազդատ պահէր զանձն 'ի գինւոյն. իբրև գիտաց Վարազդատ՝ թէ արդ յարբեցութենէ մտաց ինչ զգան, ինքն յարուցեալ իբրև յապարահէ զանց առնելոյ պատճառաւ, և աւագանին ամենայն բազմականացն յատն կացին առ հասարակ, իբրև նմա պատիւ ինչ առնել: Եւ յանկարծ արքն, որոյ էր տուեալ հրաման, երկոտասան այր կից զոյգ զկնի կոզմանէ զնմանէ բուռն հարկանէին, վեց այր 'ի մի բազուկն Մուշեղի, և վեց այր 'ի միւս բազուկն: Եւ ընդ ոտն կալ թագաւորին, նայեցեալ ընդ նա՝ եթէ այս ընդե՞ր է. և թագաւորին պատասխանի տուեալ, ասէ. Երթ առ Պապ արքայ, հարց և տես՝ թէ ընդէ՞ր է այդ: Եւ թագաւորն 'ի դուրս կոյս գնացեալ ելանէր, և ասէ Մուշեղ. Ի վերայ բազում իմոց վաստակացն արեան և քրտան, և սլաքօքն զքիրտն ջնջելոյ, ա՞յս հատուցումն եղև ինձ: Բայց իբրև նհաս ինձ մահս, թէ 'ի վերայ ձիոյ դիպեալ էր...: Զայս միայն բանս ժամանեաց ասել, և այլ ոչ ինչ ոչ: Եւ անդէն Բատ Սահռունի, դայեակն արքային Վարազդատայ, զնրանն՝ զոր յիւրում ազգերն ունէր՝ հանեալ, անցոյց ընդ փողս զօրավարին Մուշեղի.

և անդէն ՝ի բաց եհատ զգլուխ նորա։ Եւ բարձին զնա, և տարան ըզմարմին նոր ՝ի գեւղն իւր։

14. [ՏՄՐՈՆԻ ՊԱՏԵՐԱԶՄ]

Ա. [Տղատ և Գեղեհոն]

Եւ իբրև առաւաւտ եղև, զաւրքն սկսան կազմել փողոց թագաւորի//ն, զի յԱրձանն ելցէ։ Եւ թագաւորն հիւսիսոյ հրամայեաց իւր զաւրացն զառաջսն ունել. Զի սպառազինաւք արգելուլ կամէր զթագաւորն, որոց յառաջել արգելուին առ գլուխ Արձանին, և զբազում ժամս ոչ կարաց անցանել ի վեր։ Զոր տեսեալ սրբոյն Գրիգորի, յարտասուս եղեալ ասէ. Մկրտիչ Հովհաննէս Կարապետ Քրիստոսի, չտեսանե՞ս զինչ գործեն։ Արդ հաս յաւգնականութիւն և արա զաւրս զայս նշանաւոր յաղթս։ Եւ առեալ զնշխարս առաքելոցն՝ տեառնապրեաց ի վերայ նոցա։ Եւ առժամայն ոյժ տուեալ Տրդատայ, քաջառնաբար ձայն տուեալ՝ յաւգնականութիւն կարդալով զսուրբ Կարապետն, և կտրեալ զռազմ առաջապահիցն, անց ի գլուխ բլերն։ Եւ որք ի գիշերին թաքուցեալ էին, յարուցեալ ի մէջ զայն//զաւրքն, և կոտորեալ փախստական արարին և իջուցին ի հարաւակողմն անտառն, որպես ի թակարթ արկեալ յանխնայ կոտորեցին, և անուանեցաւ տեղին այն Թակարթս։

Իսկ զաւրքն հիւսիսոյ որպես ի դիպող ժամանակի գտեալ յարձակեցան ի վերայ գեղջն, և գեռ հանէին զմեզ յամրոցէն. զոր տեսեալ Դմ արանցն, որ ի վերայ գեղջն էին, յարուցեալ փախստական արարին զղաւրսն ի ներքոյ գեղջն, զոր ոմանք յայգորդացն գլաջարդ արարին զգլուխ երիվարացն և բաղումք ի հեծելոցն ի վիմացն մեռան։ Իսկ զաւրքն մեր ցրուեալ զնոսա ընդ յայգէմէջսն՝ սակաւք պրծան, և անկան ի տեղւոջն Ո և Զ այր։ Իսկ Թակարդս ՈՀՃ այր, զոր պարսաւորքն կոտորեցին ՀՃ և Զ այր, միահամուռ Դմ և Մ և ՇԲ։

//Եւ ապա դարձեալ թագաւորն ի փոքր կոտորածէն, եւ ի գլուխ Արձանին և հարեալ զաղդարար փողսն՝ մնաց մինչև ամենայն զաւրքն ժողովեցան ի մի վայր։ Իբրև եկին հասին ի տեղին և զսուրբն Գրիգոր իջուցին յանտառն և պահէին զնա արք երեք հաղար։ Իսկ թագաւորն հիւսիսոյ առեալ զզաւրս իւր գնաց ի Հաշտենից տափարակ տեղիսն։ Եւ առաքեաց թուղթ առ Տրդատ, եթէ եկ և վաղիւն տացուք պատերազմ. և եղիցի աւր յաւիտենական այսաւր ի միջի մերում։ Զի կամ տացես զիշխանսն իմ յիս և հարկս հնդետասան տարոյ, ապա թե ոչ՝ քանդեալ զերկիրդ քո սրով և գերութեամբ, որպէսզի ծանիցես զդէմս ոզու-

թեան քո, զոր եղեր առաջի զաւրաց քոց: Արդ ըստ այսմ արա զպատասխանիդ: Եւ ընթերցեալ զթուղթն, ոչ արար նման // պատասխանի, այլ յարուցեալ գնաց երեսուն հազար արամբք ի պատերազմ. և երթեալ յանդիման նոցա իջանէր ի Մուշեղամարգն Հաշտենից: Եւ ի վաղիւն սկսան ռազմ կազմել և փողոցս պատերազմին թողել Բ դրունս և դռնապանս տեղեացն զբագրատունեաց իշխանն կացուցանէր: Իսկ զաջ զաւրուն թևն տայր ի ձեռս իշխանին Սիւնեաց և զահեակն ի ձեռն իշխանին Անդեղ տանն: Իսկ զգահերեց իշխանն կացուցանէր թիկնապահ իւր. և այնպէս յաւրինեցան երկոքեան ճակատք և պատրաստեցան ի խմբել:

Եւ իբրև ամենայն զաւրքն սկսան դէմ իրերաց անցանել, ձայն բարձեալ արքայն հիւսիսոյ ասէր. Արքայ հայոց, յառաջ մատիր: Եւ իբրև եկին իրերաց, սկսան իբրև զմրճաւորս քարահատաց կամ իբրև զուռ//նաւորս մինն առնոյր և միւսն իջուցանէր: Զի արքայն հիւսիսոյ զաւրաւոր էր իբրև զՏրդատ և ահաւոր: Եւ բազում կոփեալ միմեանց և ոչինչ եղև: Բայց սկսաւ պակասել արքայն հիւսիսոյ, և գիտաց, եթէ վնասելոց եմ: Եւ զի ճոպանաւոր էր, աճապարեաց և ձգեաց զճոպանն և արկ ընդ յաջ թևկն և ընդ պարանոցն և այնչափ փութանակի դարձաւ և կրթեալ զճոպանն, մինչ զի բնաւ չկարաց շարժել զձեռս իւր Տրդատ: Եւ մտրակեալ զերիվարն յուր զկնի Գեղեհոնի այնչափ փութապէս, մինչ զի չետ քայլ և ոչ ժ քայլ առաջի իւր: Իբրև եհաս նմա՝ ասէ. Կատաղի շուն, խառնեցեր զկնի քո ջղացն: Եւ անդեն բարձեալ զաջ ձեռն ի վեր իջուցանէր զսուրն իր վերայր ձախոյ թիկանն և անցուցանէր ընդ պատուին. և զողն երիվարին հանդերձ գլխ//ովն յերկուս կտրեալ յերկիր ընկէց: Եւ այն էր զարմանալի, որ գլուխն և աջ ձեռն և աջ ոտն և երիվարին ողն ընդ մէջն հերձեալ ընդ միմեանս թաւալէին: Զոր իբրև տեսեալ իշխանին Անգեղ տանն ի վերայ ածեալ զահեակ թևն և ձայն տուեալ ասէր. Սիւնեաց իշխան, ի մէջ ած զգունդ այծուցդ, զի անկաւ հոնն: Իսկ նա ընդ մէջ ածեալ եհատ զզաւրսն և էանց յաջ թևապետն հիւսիսոյ և ասէ. Աստեղահաջ, յառաջ մատիր և մենամարտեսցուք: Եւ աճապարեալ հիւսիսայինն՝ կտրեաց զգլուխ երիվարին Սիւնեաց իշխանին: Իսկ նա վտանգեալ փութապէս էած զսուրն և կտրեաց զոտն երիվարին իշխանին հիւսիսոյ. և երկոքեանն յերկիր անկեալ՝ բուռն զմիմեանց հարին: Եւ ոմն ի ծառայից Սիւնեաց իշխանին մղեաց զոմն ընկէց յերիվարէ իւրմէ, և մատուցեալ // զերիվարն ասէ. Հեծիր տէր: Եւ աճապարեալ անկաւ զերիվարան. և դարձեալ կտրեաց զգլուխն և ընկէց ի մաղախ իւր: Իբրև եառես իշխանն Անգեղ տանն զիրսն և զզաւրսն, զի ի փախուստ եղէն, ապա ձեռն ի գործ արկեալ բախեցին զպատերազմ ընդ իրեարս. զոր և թագաւորն զհետ մտեալ՝ մինչ ի մուտս արեգականն

յանխնայ կոտորեցին որք դիմադարձ գտան։ Իբրև ի նուրբ տեղիս դիմեալք աւթևանս առնէին առ եղր գետոյն, որ անցանէր ընդ մէջ գաւառին Հաշտենից։ Եւ բանակեցան նոքա յայնմ կողմանէ և սոքա յայսմ կողմանէ։ Եւ իբրև այգն զառաւաւտն մերկացաւ, պատրաստեցան մրնացեալ զաւրքն հիւսիսականացն, և յարձակեցան ի վերայ Հայոց զաւրացն. և սկսան կոտորել։ Եւ այնչափ յանդգնեալ, մինչ զի դիշխանն // Ծոփաց ի մէջ առեալ բաղումք պատեցին զնովաւ։ Եւ ի նեղ արկեալ մինչ զի աղաղակեալ ասէր. Ո՞ւր ես, իշխանդ Սիւնեաց, հաս ինձ յաւգնականութիւն։ Եւ նորա հասեալ հալածելոց զղաւրսն ի նմանէ. և իբրև նոքա դի խոցեալ էին չարաչար ընդ յերանաւք նորա, առեալ տարան ի բանակն և անդէն մեռան։ Իսկ ընդդեմ դարձեալ զաւրապետն Գեղունհոնի թագաւորին Տրդատայ, և նորա բարկացեալ յարձակեցաւ ի վերայ նորա և ընդ յերկուս ճեղքեաց։ Եւ ինքն առաջի եղեալ փախստական արար զնոսա մինչև ի կողմանս Հարքայ։

Բ. [Մուշեղը ջարդում է պարսից զորաբաժակը]

Ընդ նոյն ժամանակս սպանին զՈրմիզդ Պարսից արքայ և Ջամբ խոսրով որդի նորա։ եկն փախստական ի Հռոմս առ Մուրիկ։ Եւ կնքեալ քաղկեդոնական հաւատովն և դարձաւ զաւրաւք ի Պարսից գործատորան. և առնու զերկիրն։

Արդ՝ մինչ ի Յունաց գոյր խոսրով, առեալ զՄուշեղ տարաւ նոյն իշխանն Տարաւնոյ ի Դուին և Հայոց Մարզպան հաստատեաց։ Եւ տուեալ ի ձեռս նորա զղաւրս Հայոց ԼՒ. և ինքն առեալ զղաւրսն Յունաց ՀՈ, գնացին ի Բալխաստան. և ընդ Հայոց զաւրսն հպարտացան բանակիլ. //գնացին անցին աւուր միոյ ճանապարհ ի դաստակերտս և անդ իջին։ Իսկ Նիհորճէն Որմիզդ գումարեալ զզաւրս Պարսից ութսուն հազար, եկն ի վերայ Մուշեղայ։ Եւ նորա քաջալերեալ զղաւրսն Հայոց՝ հազիւ հաւանեցոյց մտանել ի պատերազմն։ Եդ բանս ի բերան զաւրացն զսուրբ Կարապետն կոչել յաւգնականութիւն։ Եւ միաբան զայս ասացեալ՝ յարձակեցան ի վերայ Պարսից. և ետ տէր ի ձեռս նոցա զթշնամին։ Զոր գիտացեալ Մուշեղայ, թէ նա թագաւորն է, մարտեաւ ընդ նմա. և սկսան բախել իրերաց, զոր յոյժ վաստակեցաւ Մուշեղ։ Եւ վեր ամբարձեալ զմուրճն՝ իջուցաներ ի վերայ գագաթանն և ուղեղն ցնդեալ ընդ քիթն իջանէր։ Եւ կտրեալ զգլուխն՝ եդ ի մաղախ իւր. և յորդորեալ զղաւրսն ի պատերազմ. և զաւրացեալ // առաջին եդ զնոսա ի փախուստ, և կալան ԽՀ իշխան կենդանւոյն, և համար կոտորածին ոչ երևեցաւ՝ վասն բազմութեանն։ Իսկ արս Ռ ընդ իշխանացն ըմբռնեալ՝ մեծաւ յաղթութեամբ դարձան ի կոտորածէն։

յանխնայ կոտորելոյն որք դիմադարձ գտան։ Իբրև ի նուրբ տեղիս դիմեալք աւթեանս առնէին առ եղր գետոյն, որ անցանէր ընդ մէջ գաւառին Հաշտենից։ Եւ բանակեցան նոքա յայնմ կողմանէ և սոքա յայսմ կողմանէ։ Եւ իբրև այգն զառաւատն մերկացաւ, պատրաստեցան մրնացեալ զաւրքն հիւսիսականացն, և յարձակեցան ի վերայ հայոց զաւրացն. և սկսան կոտորել։ Եւ այնչափ յանդգնեալ, մինչ զի դիշխանն // Ծոփաց ի մէջ առեալ բազումք պատեցին զնովաւ։ Եւ ի նեղ արկեալ մինչ զի աղաղակեալ ասէր. Ո՞ւր ես, իշխանդ Սիւնեաց, հաս ինձ յաւգնականութիւն։ Եւ նորա հասեալ հալածեաց զզաւրսն ի նմանէ. և իբրև նոքա էին չարաչար ընդ յերանաւք նորա, առեալ տարան ի բանակն և անդէն մեռաւ։ Իսկ ընդդեմ դարձեալ զաւրապետն Դեղեհոնի Թագաւորին Տրդատայ, և նորա բարկացեալ յարձակեցաւ ի վերայ նորա և ընդ յերկուս ճեղքեաց։ Եւ ինքն առաջի եղեալ փախստական արար զնոսա մինչև ի կողմանս Հարքայ։

Բ. [Մուշեղը ջարդում է պարսից զորաբանակը]

Ընդ նոյն ժամանակս սպանին զՈրմիզդ Պարսից արքայ և Ջամբ խոսրով որդի նորա։ Եկն փախստական ի Հռոմս առ Մուրիկ։ Եւ կնքեալ քաղկեդոնական հաւատովն և դարձաւ զաւրաւք ի Պարսից գործաւորսն. և առնու զերկիրն։

Արդ՝ մինչ ի Յունաց գոյր խոսրով, առեալ զՄուշեղ տարաւ նոյն իշխանն Տարաւնոյ ի Դուին և Հայոց Մարզպան հաստատեաց։ Եւ տուեալ ի ձեռս նորա զզաւրս Հայոց ԼՈ. և ինքն առեալ զզաւրսն Յունաց ՀՈ, գնացին ի Բալխաստան. և ընդ Հայոց զաւրսն հպարտացան բանակիլ. //գնացին անցին աւուր միոյ ճանապարհ ի դաստակերտս և անդ իջին։ Իսկ Նիհորճէն Որմիզդ գումարեալ զզաւրս Պարսից ութսուն հազար, եկն ի վերայ Մուշեղայ։ Եւ նորա քաջալերեալ զզաւրսն Հայոց՝ հազիւ հաւանեցոյց մտանել ի պատերազմն։ Եդ բանս ի բերան զաւրացն զսուրբ Կարապետն կոչել յաւգնականութիւն։ Եւ միաբան զայս ասացեալ՝ յարձակեցան ի վերայ Պարսից. և նա տէր ի ձեռս նոցա զիշնամիսն։ Ջոր գիտացեալ Մուշեղայ, թէ նա Թագաւորն է, մարտեաւ ընդ նմա. և սկսան բախել իրերաց, զոր յոյժ վաստակեցաւ Մուշեղ։ Եւ վեր ամբարձեալ զմուրճն՝ իջուցաներ ի վերայ գագաթանն և ուղեղն ցնդեալ ընդ քիթն իջանէր։ Եւ կտրեալ զգլուխն՝ եդ ի մաղախ իւր. և յորդորեալ զզաւրսն ի պատերազմ. և զաւրացեալ // առաջին եդ զնոսա ի փախուստ, և կալան ԽՐ իշխան կենդանւոյն, և համար կոտորածին ոչ երևեցաւ՝ վասն բազմութեանն։ Իսկ այս Ո ընդ իշխանացն ըմբռնեալ՝ մեծաւ չաղթութեամբ դարձան ի կոտորածէն։

Վահան, դու գիտես զաւուրս կենաց իմոց. զի այս ճի ամ է, զի ես ի պատերազմ եմ մղեալ և սլաքով եմ սրբե(ա)լ զարիւնն ի ճակատէս փոխանակ քրտան։ Եւ ութսուն Ց ռազմ անձամբ իմով եմ կարգեալ և մղեալ. այժմ ծեր եմ և դողդոջուտ, և աւգնական իմ աստուած է և դու և ո՛չ այլ ոք, զի որդին իմ մեռաւ Բժ անամեայ։ Արդ դիր, որդեակ, դայս ի մտի քում, որ եթէ ի վերայ եկեղեցոյ աստուծոյ մեռանիս, մարտիրոս ես, (իսկ եթէ ի վերայ մարմնաւոր ընչից իջանես ի մարտ) և այն քաջ //ութեան անուն, զի ես այլ ժառանգ ոչ ունիմ. և երկիրս քեզ եղիցի և զաւակի քում։ Արդ արի գնա և իմաստութեամբ որսա գնա. և սուրբ Կարապետն եղիցի քեզ աւգնական և պարիսպ. և աղօթք սուրբ նրաւնաւորացն՝ յաջմէ և յահեկէ։

Իսկ Վահան յանձին կալեալ զիրսն՝ սկսաւ դեսպանս կազմել և առ նա յուղարկել, զի հաշտեսցի և գնասցէ։ Իսկ նա ասէ. Ո՛չ, այլ մինչև զիշխանն Մուշեղ կալեալ առ արքայն Պարսից տանիմ։

Իսկ Վահան արձակել/ա/լ ասէր. Եթէ զերկիրս ինձ տաս իշխանութեամբ, ես տամ զիշխանն Մուշեղ ի ձեռս քո, զի ես առ քեզ կամիմ գալ ապստամբութեամբ ի նմանէ, և հատանել զերկիւղ ի պատեհութիւն։ Եւ նա արձակեալ կոչեաց, զի յաւժար էր իրացն. և ինքն իջեալ էր ի Մուշն աւան, իսկ Մուշեղ՝ յամ//ուրն Ողկան։

Եւ այն զաւրք, որ զկրաւնաւորսն կոտորեցին, անցեալ յԱստղաձմրոցն, կացին աւուրս երկու, ոչ ինչ կարացին առնել։ Ապա երթեալ գնացին առ Միհրան, և ծանուցին զամենայն ձև ամրոցին։ Իբրև եկն Վահան առ Միհրան, և նա խնդրեաց ի նմանէ զԱստեղաւնս ամրոցն։ Ասէ Վահան. ոչ այդպէս, տէ՛ր, այլ տուր ի ձեռս իմ չորս հազար այր, որ գնամք ի վերայ ամուր բերդիցն, ուր մտերիմք նորա և գանձն, գուցէ բռնացեալ չտան ի ձեռս իմ՝ ապստամբ զիս կարծելով, այլ այժմ երթիցուք նախ յԱւձ քաղաք՝ և ապա այլ ուրեք։

Իսկ Միհրան տուեալ ի ձեռս նորա չորս հազար այր ընտիր առն և ձիոյ։ Եւ իբրև գնացին մինչև ի դուռն Աւձ քաղաքի, ի ներքս նենգութեամբ դարան մահու// պատրաստեալ՝ ի ձեռս գալ զաւրացն։ Եւ առ վաղիւն բանս առեալ քաղաքին ի ներքս առնուլ զզաւրսն Պարսից. և զի նուրբ էր մուտ քաղաքին՝ ի ժամուն սակաւք մտանէին։ Եւ որք ընդ դուռն անցանէին, զայն ի տունս առեալ ի զգեստից կողոպտէին և զգլուխն կտրեալ արտաքոյ պարսպին յաներևոյթ տեղիս ընկենուին. և ի չորս հազարէն Ծ այր թողեալ էր ի խարձս կոչեցեալ գեղն։ Եւ պատուէր տուեալ էր՝ թէ յորժամ ի ձեզ զոք յուղարկեմ, ի Միհրան գնացէք և այլ զաւր ածէք։ Եւ այնպէս արար։ Եւ նոքա գնացին ի Միհրան և առին ԲՌ այր ընտիր և եկին առ Վահան։ Եւ նա այնպիսի գործ հնարեաց, զոր ոչ կարացին գիտել Պարսիկքն։

Արդ՝ յորժամ մերձեցան ի դուռն քաղաքին, Վահան զպարսի//ից զերիվարսն և զհանդերձն տուեալ քաղաքացեացն՝ ի դուրս կոչել զնոսա։ Եւ խրատ տուեալ, թէ յորժամ նոքա զձիւք հային, դուք միաբան ի քաղաքն դիմեցէք. և ի ներքս մտեալ զյաղթութեան փողն հնչեցուցանելով, և զդուռն ի բաց թողէք, զի նոքա կարծեսցեն եթէ առին զքաղաքն։ Եւ արարին այնպես։ Եւ իբրև տեսին պարսիկք, զի դիմեցին ի քաղաքն միաբան, խնդացին յոյժ։ Դիմեցին և նոքա ի քաղաքն և սկսան մտանել։ Իսկ Վահան փութով յառաջ եկեալ զաւրացն աւետիս տայր և քաջն ի պարսից զաւրացն աւետաւոր առաքէր առ Միհրան, եթէ զքաղաքն առաք. և ինքն դարձաւ զհետ Պարսից զաւրացն։ Իբրև բազումք մտին ի քաղաքն և այլքն դեռ մտանէին, սկսան կասկած առնուլ զիրացն // և կամէին յետս դառնալ։ Իսկ Վահանայ զհետ մտեալ ի մուրտսն լնուլ. և ինքն աստի և քաղաքացիքն անտի՝ ի այր մաւրահղձ արարին. և զայլսըն ի քաղաքն արգելեալ՝ կտրեալ տային, և զգլուխն ի պարիսպն հանել։ Եւ համար արարեալ յաւուր յայնմիկ ՋՈ, ե միայն պակաս։ Եւ հրամայեաց զամենեցուն զքիթն կտրել։ Եւ ինքն առեալ զզաւրս իւր Շ, երթեալ առ Մուշեղ։ Յ այր թողեալ յանցս Մեղտեայ, և երկու հարիւր այր աշտենաւորս ի Սանասայ ի ծմակն թողեալ, և ինքն Մ այր առեալ գնաց ի Մուշն աւան առ Միհրան։ Եւ մտեալ ի սենեկն՝ խաւսեցաւ ընդ նմա այսպէս և ասէ. ես փախստական եկի առ քեզ ի քո զաւրացն, զի ո՛չ ի քաղաքն թողին և ո՛չ աւարամասն ետուն մեզ. այլ և զիմ զաւրսն ի քաղաք//ն արգելեցին. և ես փախստական ահաւասիկ գամ։ Իսկ Միհրան խորհեցաւ յուղարկել ի վերայ նոցա Ռ այր։ Եւ նա ասէ. Եւ ի քէն ապստամբեալ են. և զաւար քաղաքին և զկապուտ առեալ՝ կամին Յոյնս անցանել։ Իսկ Միհրան բարկացեալ առաքեաց ի վերայ նոցա ԲՌ այր։ Եւ Վահան խրատ տայր զաւրացն ի գիշերի մի անցանել ընդ գետն Մեղտեայ, այլ իջաւանս առնել և վաղիւն ապա գնալ։ Գուցե ոք թշնամի յարձակեցի և դուք չեք ընդել վայրուցն։ Եւ ասէ ցնոսա. Ո այր գնացէք ընդ ծմակն և հազար՝ ընդ դաշտն։ Եւ ետ նոցա առաջնորդս. և ինքն էլ ի Միհրանայ յուղարկել զնոսա։ Իբրև գնացին յայն տեղի ուր բաժանէին, առաքեաց Ճ այր զհետ նոցա, որ ընդ ծմակն գնասցեն ինքն Ճ այր առեալ՝ զկնի նոցա։

Իբր //և գնացին չեզր գետոյն Մեղայ, յայս կոյս իջոյց զնոսա ի քուն առնել և ինքն պատրաստի արարեալ զդարանակալսն՝ հրամայեաց ծառայիցն կտրել զերիվարսն արաւտի պատճառանաւք. և զնոսա յանհոգս արարեալ՝ յանկարծակի հնչեցուցին զփողսն յետոյ և առաջոյ։ Եւ ի մեջ առնի զնոսա և իսկոյն բարձին զգլուխս նոցա և ի գետ ընկեցին, և մի ոք ո՛չ կարաց զերծանել։ Եւ զերիվարսն հրամայեաց ի ծմակն

տանել: Մինչ նոքա զայն պատերազմն վճարեցին, և յառաջ եկին յայսոց, և նոքա դեռ չէին եկեալ ի ծմակն. և կացին մնացին մինչև նոքա եկին. զի զայն խրատ տուեալ էր Վահանայ: Իբրև յանհոգս եղէն, ապա կալեալ զխնձո կարմնճին, և ձայն սաստիկ հնչեցուցին շուրջանակի զնոքաւք. և սկսան յանխնայ կոտորել. և մի ոմն ի դին թաք//ուցեալ՝ հեծեալ յերիվարն փախեաւ ի Մուշ. զորոյ զհետ մտեալ երկու ոմանց և անցեալ ի գետոյն յայն կոյս, ըմբռնեցին, ջախջախեցին զգլուխ նորա. և միւս ընկերն առեալ տայր աւազ ցմիւսն. Պարսից խորտակարարդ, առ զաղս: Եւ կոչեցաւ անուն տեղոյն Առաղս մինչև ցայսաւր, որ և աւան իսկ շինեցաւ ի Վահանայ: Իսկ Վահանայ մաւրին տուեալ զնոսա, զոմանս այլ ոչ կարաց հանել անտի, այլ հեղձան, և որք ի ցամաքն էին՝ զքիթսն կտրեցին և պահէին. և զգլուխսն ի մուրատն և ի դաշտն ընկենուին. և ժողովեալ զերկու հազար երիվարսն եւս տանել յՈւղնուտն բերդ:

Եւ ինքն ի վաղիւն եկն առ Միհրան: Եւ հրամայեաց ծառայից իւրոց պատրաստել ճաշ և զՄիհրան կոչել: Իսկ նա վասն խաւթութեանն ի սենեկն եմուտ և զնա միայն թողոյր ի//ներքս: Եւ Վահանայ զռնապան լեալ և զեկեալ իշխանսն դարձուցանէր ի զրանէն ասելով. Հայոց մարզպանն չկարաց դալ ի ճաշ, և զիս չէ ի թողուլ: Իսկ նոցա ժողովեալ ի տաճար մի ընդ զինի մտին: Եւ Վահանայ առեալ զմախաղն, ուր քիթքն կային և եւս բերել ծառայի մի առաջի իւր: Իսկ տեսեալ Միհրանայ՝ զարհուրեցաւ և ասէ. Ջինչ է այդ, զրուց տուր ինձ: Եւ նա կարգաւ պատմեաց նմա ստուգիւ, և մի բան ոչ թաքուցեալ ի նմանէ, զոր արարեալն էր: Եւ նորա բարկացեալ առ զտէգն որ ի ձեռն ծառային և կամէր հարկանել զՎահան: Եւ նորա ձգեալ զձեռն իւր ի սուրն, որ կայր առաջի և կտրեաց նախ զիւր քիթն և եղ առաջի ասելով. զո՞ւ ես նախատել զաստուածդ, զո՞ւ ես, որ զկրաւնաւորան իմ՝ զսիւնան աշխարհի զենել եաւուր: Եւ պատառ//եալ զփորն, և եւս ծառային հանել զլերդն և դնել ի բերանն: Եւ հարեալ զդանակն ի փորսն՝ եւս թողուլ ի ցից: Եւ մինչ լոկ որ զթլփատսն կտրեաց, ասէ. ուր բանիդ նշան ի պարսիկն և պատուէր որ յԱպահունիս, և ես ապրեցուցանեմ զքեզ: Եւ նորա տուեալ բանիդ նիշ և պատուէր, բազում երդմամբ ասացեալ, զոր նա և նա միայն գիտէին: Եւ իբրև ասաց զիրսն, ապա կտրեալ Վահանայ զգլուխն. և ծառայիցն առեալ զարիւնոտ զգեստն պահէին, և զգենոյնն մաքրէին յարենէն: Եւ կողմնացուցեալ ի մահիճսն՝ քնոյ պատճառանաւք ծածկեցին: Եւ ինքն ելեալ կոչեաց զպարսիկ դպիրն Միհրանայ ի սենեկն և եւս գրել ի նա ողջոյն և բանիդ նիշ եթէ՝ յետ Բ-ուց աւուրց եւ ի բլուրդ որ ի վերայ Կոթ ձորի, Ռ արամբ միայն, զի // տեսցուք զմիմեանս: Եւ գրեաց դպիրն որպէս ասաց Վահան, և եղ զմատանին Միհրանայ ի վերայ, և կոչեալ ի հաւատարիմ ծառայիցն արս Ծ և եւս տանել առ Վաշիր, որ

ղՀաղար այրն ունէր ընդ յինքեան։ Եւ առեալ զթուղթ գնացին։ Իսկ Վահան կոչեաց զնուիրակն և ասէ. Երթ կոչեա զայս անուն իշխան։ Եւ կոչեաց։ Նւ իբրև գայր իշխանն մտանէր ընդ փողոցն խաւարտչին, Զ այր աստի և անտի կային, և մինչդեռ մտանել կամէր ի սենեկն, աճապարեալ ունէին զփողոցն, զի մի ձայն բարձցէ ի միւսն, դանակովն ի սիրտն հարեալ, ձգէին ի միւս յարկն, որ և զնուիրակն և զդպիրն վասն սպատճառի ոչ ետ տանել ի բանդ։ Եւ ինքն խաբեութեամբ կոչեաց զիշխանսն ի խորհուրդ, և նենգիւ այնպէս առնէր. և սպան յաւուր յայնմիկ իշխանս ՁՉ։ Իբրև վճարեցան // իշխանքն, գնաց ինքն ի տաճարն, ուր զաւրքն էին ժողովեալ. և զիւրն և զայլ աւտար գաւառի մարդիկն ետ արտաքս հանել։ Եւ ինքն սկսաւ վտանգել զնոսա բանիւք՝ եթէ արժա՞ն էր ձեզ զմարգարեայ զպսակն մարդպանին գողանալ։ Արդ՝ հրամայեալ է ձեզ զամենեսեան մերկացուցանել, մինչև ցուցանէք։ Եւ հանեալ զամենեցուն զհանդերձս, արգել զնոսա ի տաճարի անդ։ Եւ ի միւս տաճարին այլ՝ արս ՌՋԹ։ Եւ փակեալ զդրունս տաճարացն, ետ բերել զգլուխն Միհրանայ. և Կախեալ ընդ յերդն, և ցուցանէր նոցա և ասէ. Այս այն գլուխն է, որ խորհեալ էր զսուրբ Կարապետն հիմն ի վեր առնել և զկրաւնաւորսն հրով այրել։ Եւ հրամայեաց վառել զերկոսեան տաճարսն և ասէ. Դուք ինձ վնաս էք ի տալ յառնել, որ զտաճարս այրել էք // ի տալ։ Բայց թէ կամի աստուած և սուրբ Կարապետն, ես զայս փայտս, որ յապաշաւել եմ, սակայն ընդ ձեզ և ընդ ձեր թագաւորին կառափն հանեմ, զի ես աշխատել եմ և շինել, և դուք մերկ էք և ցրտացած. արդ վասն իմ մեղացն թողութեան և վասն իմ հարանցն ջեռարուք այսաւր և մի ամաչեք. և տունդ այդ գերեզմանն ձեզ եղիցի, շնորհելով պարսից արքայի։ Եւ բորբոքեալ բոցն ճարպովն, մինչ զի քաղաքն արբեալ եղէն ի հոտոյ ճենճերաց նոցա։ Եւ ինքն ժողովեալ զկապուտ նոցա և զդանձ՝ ետ տանել յամուրն Ողկան։ Եւ զիշխանն Մուշեղ ետ ածել ի քաղաքն։ Եւ ինքն առեալ երեք հազար այր գնաց ընդ առաջ Վաշիրայ. և երթեալ ի վերայ լերինն, ընդ յերիս դեհս դարան գործեաց։ Եւ զդպիրն և զնուիրակն առաքեաց առ Վաշիր, զի կոչեսցեն անդ։ //Եւ նոքա երթեալ կոչեցին զՎաշիր, զի իջեալ էր յեզր Նիայ ծովու։ Բայց նուիրակն և դպիրն ոչ ինչ գիտէին չիրացն, զի Վահան ոչ ետ մատել ի զաւրսն, այլ առանձին յետոյ. և յորժամ զտաճարսն այրեաց, զնոսա ի պատճառս իրաց յայլ վայրս առաքեաց, զի մի գիտասցեն զիրսն։ Նաև զհանդերձս իշխանացն տեսեալ՝ կարծէին եթէ Միհրանեանքն են։ Արդ իբրև գնացին, և զՎահանայ ասացեալսն պատմեցին որպես թէ յերեսաց Միհրանայ, և առեալ Վաշիրայ արս հազար և հարիւր, եկն ի վերայ լերինն։ Եւ իբրև մերձեցան ի տեղին, եթող Վաշիր արս Ծ ի բացեայ՝ վասն այլ թշնամեաց։

Եւ եկեալ եմուտ ի վրանն առ Վահան, կարծելով թէ Միհրան է։ Իբրև եհաս ընդ Վահան, ասէ. Վաշիր, ո՞վ ընդ եղիր ի մտի. ի պարսից հա-
ւա՞տն // կամիք դարձուցանել զերկիրս հայոց։ Եւ հրամայեաց արգելուլ զզաւրան ի հեռուստ։ Եւ զՎաշիր գանեաց, մինչև նշան բանից առցէ զաւրան կոչելոյ. և ի հարուածէ ցաւոցն եհ բանից նշան առ զաւրապետն և իշխանս գալ ի տեղին փութով։ Եւ հե գրել թուղթ պարսիկ գպրին՝ կաշառելով զնա, զի այնպես գրեսցէ որպէսզի գայցեն վաղիւն, զի յոյնք գան ի վերայ մեր։ Եւ առեալ զմատանին Վաշիրայ և յուղարկեաց յայն զաւրան, որ հեռին էին։ Եւ դարձուցին կոչնական զաւրացն, որ յետոյն էին և եհ կոչել զիշխանսն մի մի ի խորանն և կտրել զգլուխսն. և ոչ գիտացին, մինչև ոմն զերծեալ անկաւ ի բանակն իւր։

Իբրև եհաս Վահան, եթէ յայտնեցաւ իրքն, աղդ արարեալ այնոցիկ, որ ի զարանսն էին, յարուցեալ նոցա յետուստ կողմանէ, փախստա-
կ//ան արարին ի բերդս կոյս Կոթ ձորոյ։ Եւ որ բուն յետինքն էին ի զարանի յայն, յարեան իսկ. և արք բերդին ընդդէմ եկեալ քարամբք և գլովք յանխնայ կոտորեցին, և փախստական եղեն արք հարիւր յԱպահունիս, զոր իմացեալ զարանակալացն՝ յարեան ի վերայ և կալան զնոսա։

Եւ արդ ի վաղիւն սկսան զաւրքն գալ ի նոյն տեղի լերինն։ Իսկ Վահան ընդ յառաջ գնացեալ ասէր. Իջէք ամենեքեան և թողէք զերի-
վարս արածել մինչև յերեկոյ և յերեկոյն իջանեմք ի վերայ զաւրացն Յունաց։ Եւ արարին այնպէս։ Եւ զարանակալք դիմեցին ի վերայ նոցա, և կտրեցին զերիվարսն ի զաւրացն, և փախստական արարին ընդ յԱրածնի, և հանին ի Քարքէ։ Իսկ զաւրքն Պարսից տեսեալ զիրսն, աղա-
ղակեցին միաբան. Վայ մեզ, // կորեաք։ Եւ եդաւ անուն գաւառին Կո-
րեայ լերինն։

Իսկ Վահանայ առեալ զզաւրսն՝ իջուցանէր զնոսա ի ձորն բուն. յարեան ի վերայ զարանակալքն աստի և անդի. ի մէջ առեալ կոտորե-
ցին զնոսա, ոչ ողորմելով ումեք։ Եւ թողուլ հրամայեաց արս ի՝ զրուց-
ատար լինել Պարսից արքային։ Եհ տանել և զգլուխն Միհրանայ առ թա-
գաւորն ասելով. Այս մարզպան յորժամ եկն յերկիրս մեր, և զաւրքն հակառակե/ա/լ միմեանց՝ գունդ խնդրեցին և ոչ կարացին գտանել. ապա՝ զի յոյնք ձեր թշնամիք էին, ի նոսա ոչ իշխեցաք գնալ. և ձեզ ընդ յակամբ էաք, և ձեր զաւրուդ գունդ ոչ կայր, ապա կտրեցուք զգլուխդ զայդ և խաղացաք։ Արդ, լուաք, եթէ ի Շահաստանէ եկեալ էք ի Բուստր քաղաք՝ յերկիր տափարակ և տաշտաձև, // և գիտեմք, որ գնդի խաղայք. առէք զգլուխս քեռորդոյդ ձերոյ և եղիցի ձեզ գունդ ազ-
գայդ յաղգս։ Իբրև գնացին ի արքն և տարան զգլուխն Միհրանայ առա-
ջի թագաւորին, խոովեցաւ և ամաչեաց զամաւթն յաւիտենից։

Դ. [Գայլ Վահան և Սմբատ, Վաղթանկ և Ասուր]

Իբրև խաղաց թագաւորն Պարսից ի վերայ Յունաց երկրորդ անգամ, ապա ի միտ արկեալ զմահն Միհրանայ քեռորդոյ իւրոյ և առաքեաց զՎաղթանկ նորին հաւրեղբայրն երեսուն հազարաւ ընտիր առն և ձիոյ։ Որք իբրև եկին ի գլուխ Տարաւնոյ, տեսին տեղի մի ընդարձակ և վայելուչ, շինել սկսաւ քաղաք և տնկել այգիս և բուրաստանս. եւ ի վերայ լերինն Տորոսի և շինեաց անդ ամրոց և կոչեաց Գահար, զի անդ գահավէժ եղէն ոմանք ի վայրենի գազանաց, կարծելով եթէ հեծեալ է։ Ած և ի Պարսից զկին իւր զՊորպէս և եդ զանուն քաղաքին Պորպ, ըստ կնոջ անուանն։ Սա եւ ի վերայ Գոռոզ լերինն, շին//եաց աւան որդոյն իւրոյ՝ Գրգռոսի, կոչեաց Գրգռոս։

Սա յղեաց առ Վահան և ասէ. Քաջ և հզաւր բազկի Վահանայ Սկայի, դիցն աւգնականութեամբ ողջոյն։

Թէպէտ ընդ մահ եղբաւրորդոյն իմոյ տրտմեցաք, սակայն ընդ քո իմաստութեանդ զարմացաք։ Եւ արդ՝ ես եկեալ եմ վասն սիրոյ. արի, եկ դու յիս, և երդուիր, որ այլ չմտանես ի չարութիւն և ապրեաց։

Իսկ նա յուղարկեաց պատասխանի աւյսպէս.

Վատ և թոյլ անձինդ Վաղթանկայ, ի խոչքորոց դասուց, որ զաղբս հաշակեն, ողջոյն։ Թէպէտ և ընդ Միհրանայ մահն խնդացի, բայց զքո անմտութիւնդ լացի, որ զնորա մահն լսեցեր, և զիմ կորովութիւնս ծանե/ա/ր, զոր ետ ինձ աստուած։ Թէ սէր եկիր արկանել, զկինդ ընդէ՞ր ածեր ի հետ, մի՞թէ որդիս խնդրես // յերանաց մերոց։ Կամ եթէ սիրոյ պատճառանաւք եկիր, զիմ քաղաքդ ընդէ՞ր շինեցեր, կամ զբերդ։ Այլ գիտեմ, զի սուտ ես, իբրև զշուն կծկիս. զկնանս քո առաջի մահու եղեր. յերկրէս եւ, արի և գնա խաղաղութեամբ. ապա թէ ոչ զմահն, որ ընդ քեզ անցուցանելոց եմ, զայն ամենայն երկիր տեսանէ։

Իսկ նորա բարկացեալ առաքեաց ի վերայ նորա Ջ հազար այր ի Մուշ։ Եւ ոմանք ազդ արարին Վահանայ, եթէ գայ Ռահան ի վերայ քո վեց հազարով։ Իսկ նորա զիշերագնաց եղեալ՝ գնաց առ ակն, որ Ծրծմայոտն է, ուր իջեալն էին։ Եւ յանկարծակի եհար զնոսա սրով։ Եւ ոչ ժամանեցին ըմբռնել զերիվարսն, քանզի որդի նորա Սմբատ ի մէջ անցեալ կտրեաց չորս հազար երիվար, անցուցեալ յայն կոյս Արածնոյ ի կողմն Հաշ//տենից։ Եւ երկու հարիւր ձի զառաջին յաղթութեանն աւարտամասն յուղարկեաց սուրբ Կարապետին, զի անդ կնքեցին զնա։ Իսկ Վահանայ տուեալ զնոսա մաւրացն՝ զբազումս կոտորեաց. և երկու հարիւր այր մերկացուցեալ ի մաւր անդր ընկղմեաց։

Իսկ Վաղթանկայ ի ցասումն բարկութեան դարձեալ վասն Վահանայ, առաքեաց դարձեալ զԱսուր ութ հազարաւ ի վերայ նորա, որք

ելեալ բանակեցան յեղբս Մեղեայ և առաքեցին առ Վահան այսպէս. Այ չարաբարոյ գայլ Վահան, մինչ գիտես եթէ ծառայելոց ես Արեաց արքային, ընդէ՞ր այդպէս յանդգնեալ անամաւթիս. արդ՝ արի եկ առ մեզ և լեր հարկատու, ապա թե ոչ՝ մեռանիս իբրև զշուն // Եւ նորա զայն լուեալ առեալ վեց հազար այր և զՍմբատ զորդի իւր, և գնաց ի պատերազմն: Եւ իբրև կացին հանդէպ իրերաց, սկսաւ Ասուր թշնամանել զՎահան և գայլ կոչել: Իսկ նա ասէ. Յիրաւի է այդ անուն իմ, քանզի գամ կոտորիմ, գնամ և այլ գամ: Եւ սկսան մարտնչել ընդ միմեանս:

Իբրև խմբեցաւ պատերազմն, ակն կալաւ Սմբատ որդին Վահանայ ի վերայ Ասուրոյ և պատահեաց նմա: Իսկ Ասուրայ տեսեալ, թէ պատանի է, քամահեաց զնա և ասէ. Քարապաշա հարճորդի, ի բաց կաց, զի ի պատերազմող արան անցանեմ: Իսկ նա ասէ. Որդի սատանայի՛, յիրաւի է անուն քո Ասուր, զի սուր քո չէ ինչ, և մարտուցեալ ընդ կըտրիճս՝ ծանիցես պպարտութիւն քո: Եւ յանկարծ զէնս վերացո//ուցեալ՝ կարեաց զգլուխ երիվարին Ասուրայ, և գնա յերկիր ընկէց. և յարձակեալ ի վերայ նորա, կտրեաց զգլուխն և ի վեր կալեալ ասէր. Փառք քեզ Քրիստոս, փառք, փառք քեզ սուրբ Կարապետ, որ յաղթեցեր հակառակորդիս: Մինչ դեռ նա զայս ասէր, պատեցին զՎահան արք ինն և որպէս յանտառս յանխնայ կոփէին: Իսկ Վահանայ սկսաւ պակասել և. ձայն բարձեալ ասէր. Ո՞ւր ես Սմբատ որդեակ, հաս յաւգնականութիւն: Զի էր Վահան ամաց ութսնից: Իսկ Սմբատայ քաջաբար ի վերայ յարձակեալ ասէր. Աւգնեա մեզ, սուրբ Կարապետ: Եւ անդէն եհար զգլուխ որդոյն Ասուրայ և հանդերձ թիկամբն ի վայր ընկէց, և զայլն փախստական արար ի հաւրէն իբրև զքաջ արծիւ: Եւ հայրն զաւրացեալ և յառաջ կաց(եալ) // մատնեաց սէր ի ձեռս նոցա զզաւրսն Պարսից, և փախստական արարին մինչև ի մուտս արեւուն. և յայն հազարէն ԳՌ միայն գնացին առ Վաղթանկ: Եւ նորա լուռ եղեալ մինչև ցմիւս ամն: Եւ ի նոյն ամին վաղջանեցաւ քաջն Վահան, վրէժխնդիրն ի վերայ եկեղեցեացս: Եւ եւս տանել դինքն ի վանս Գլակայ և կայ ի թաղման ի դուռն Կարապետին:

Ի նոյն ամի զաւր գումարեալ Վաղթանկայ ԻՌ, առաքեաց առ Սմբատ, եթէ կամ եկ, որ պատերազմինք և կամ հնազանդեա և տուր հարկըս: Իսկ նորա ժողովեալ ինն հազար այր, գնաց ի վերայ նորա յԱնտաք: Եւ թողեալ զհինգ հազարն ի բլերն, որ կոչի մահու ագարակ և ինքն գնացեալ ընդդէմ նորա, գրգռեաց զնա: Եւ առաքեաց Վաղթանկ ԾՌ այր ի վեր//այ նորա՝ կարծելով եթէ այն միայն են: Եւ եկին զաւրքն ի գիշերի և պատեցին զնորաւք. և նա կամէր ի գիշերի ելանել ընդդէմ նոցա, բայց արգելին զնա քահանայք դրան իւրոյ: Իսկ նա ասէ. Վստահ

եմ յաստուած, թէ որովհետև ծառայել եմ սուրբ Կարապետին միամտութեամբ, ոչ թողու զմեզ ի ձեռանէ: Եւ ելեալ ի մէջ գիշերի ի վերայ զաւրացն Պարսից ջահիւք՝ յանկարծակի երևեալ այր մի հերաւոր, և ի հեռաց նորա լոյս փայլատակէր: Զոր տեսեալ քաջին Սմբատայ ասէր. Քաջալերեցարուք, որդեակք, և մի երկնչիք, զի սուրբ Կարապետն մեզ ի թիկունս հասեալ կայ և ընդ մեր ինքն պատերազմի: Եւ մի՛ ոք անհաւատալի գիրսն համարեսցի, զի ինքեանք սկսան մարտնչել ընդ միմեանս և զմիմեանս սատակել. զի տէր // պատերազմէր ընդ նոսա: Եւ այնչափ կոտորեցին զնոսա, մինչև հեղեղատք արեանց ելին, որ և Թիլ կոչեցաւ անուն տեղոյն այնորիկ:

Իբրև վճարեցին և կոտորելոյ զայնչափ բազմութիւնն, երկու հարիւր այր թողեալ զրոյցատարս այլոցն, վասն առն, որ տեսին ի գիշերին, զի և թշնամիքն ևս տեսին: Եւ ինքն յուղարկեաց զերիվարսն ի Մուշ յորդին իւր, որ կոչէր զպապուն անունն Վահան Կամսարական, զի զհետևակս քաղաքին հեծեալս արասցէ փութով: Եւ կազմեալ նորա հեծեալս երկու հազար և հինգ հարիւր, և հանէ առ Սմբատ իշխանն: Իսկ նորա խոյս տուեալ աւուրս ութ և պատրաստեաց զզաւրս իւր: Եւ յետ ութ աւ ուրն եկն եհաս Վաղթանկ ի դաշտի անդ: Եւ վաղիւն կազմեցան ի պատերազմ:

//Իսկ Սմբատ կտրեաց ի գիշերին ԲՌ արս հեծելոց և անցոյց ի տեղի թագուեան զպարսկէն ետուստ կողմանէ, և ի բլերն յայն կողմանէ ԲՌ: Եւ յերկուս կողմանէ այլ ռազմ գաղտ կազմեաց: Եւ ինքն զութ հազար այրն ռազմ բաժանե/ա/լ և ընդ առաւաւտն կազմեցան. զի մի գաղտ դարանս գիտասցեն, փութապէս ի դիմի հարեալ շարժեաց ի վերայ իւր:

Իբրև ճակատեցան ի պատերազմ ընդ յիրեարս, զառաջինն յաղթահարեցին զՍմբատ. իսկ նորա ի բլուրն ելեալ ասէր. Ո՞ւր եք քաջք, յառաջ մատիք: Եւ յամենայն կողմանց ի վերայ յարձակեցան և ի մէջ առին զզաւրսն պարսից: Եւ խմբեցաւ պատերազմ այնչափ, մինչ ոչ դոյր հնար ճանաչել զմիմեանս, բայց միայն ի ձայն փողոցն և ի տեսս դրաւշիցն: Արդ՝ իբրև ի դիմի հարան Վաղթանկ և Սմբ//ատ, ասէ Վաղթանկ. Կաց, հարճորդի, թէպէտ և զբազումս ջնջեցեր, սակայն այսաւր չպրծանիս ի ձեռաց քաջ արանցս, որք գէշ գէշ պատառեն զձեզ սուրք մեր: Եւ Սմբատ ի ներքս անցեալ՝ եհար և կտրեաց զսենապան բարձից նորա, և կարեվէր խոցեաց և ընկենուլ կամեցաւ զՎաղթանկ: Իսկ նա զտէգն ձգեալ եհար զկուրծս նորա. և ցցեալ ի ներքս, ոչ կարաց անցուցանել: Եւ Սմբատայ ձայն բարձեալ ասէ. Կարապետ, յայտնեա զքեզ և այսաւր ծառայից քոց, զի վասն քո մեռանիմք ի վերայ հաւատացե-

լոց Քրիստոսի։ Եւ բախեալ տիգաւ ի թիկունս նորա և անց ընդ գրահսն ի ներքս, և եհան ընդ սիրտ նորա. և հանեալ զսուրն կարեաց զգլուխ նորա, և ոչ կարաց ունել, զի բազում մարդկաւ վազեաց գլուխն Վաղթանկայ։ Իսկ իմ // ոմն ի ծառայիցն էառ գլուխն և փախեաւ։ Եւ հասեալ Սմբատայ եհար մրճովն ի վերայ գագաթանն և գոգեաց սաղաւարտն, և գլխոյն ոսկրն ի ներքս պատառեաց. և տեղի տայր սաղաւարտն մրճին Սմբատայ, որ և հազիւ կարաց հանել։ Եւ նորա հանեալ ընկէց զգլուխն և ինքն մնաւ։ Եւ միւս այլ ծառայ առեալ զգլուխն փախեաւ։ Եւ Սմբատ զհետ մտեալ ասէ. պարսիկք, մի անմտանայք, զի մինչ յայս անկաւ, որ սրտացաւ ծառայքդ էք, զգլուխդ առեալ փախչիք, ապա գիտասջիք՝ թէ ձեզ այդպէս պարտ է լինել։ Եւ ծառային դարձեալ ձգեալ զգլուխն՝ եհար զկուրծսն Սմբատայ և ասէ. Տար խորովէ և կեր. վայ ձեզ որ այլ վաղ ոչ սպանիք։ Իսկ Սմբատայ առեալ զգլուխն և զհետամտեալ ծառային ասէ. Այ տիրատեաց պարս//իկ, զգլուխ քո ընդէ՞ր ոչ եառուր փոխանակ տեառն քո։ Արդ՝ որովհետև այդպես տիրատեացք էք, ես բառնամ զգլուխ քո ի քէն։ Եւ եհար զգլուխ նորա և ընկէց. և դարձաւ մեծաւ յաղթութեամբ ի բլուրն։ Եւ զաւրքն շուրջանակի պատեալ ի վայր լցին զպարսիկք. և մի ի նոցանէ ոչ մնաց, բայց միայն այնոքիկ, որ առ ուղտքն էին, արք չորեք հարիւր, զոր ոչ հրամայեաց սպանանել, բայց առ ի նոցանէ Ռխդ ուղտ. և ութ հազար ձի և ջորի։

Իբրև վճարեցաւ պատերազմն, հրամայեաց ի ձորս և ի հեղեղատսն լնուլ զնոսա։ Եւ կոչեցաւ անուն բլերն Մահու բլուր։ Իսկ Սմբատայ առեալ զզաւրն, գնայ ի վերայ քաղաքին Պորպայ՝ ի գիշերի։ Եւ մտեալ զաւրացն ի տունս՝ զորս պարսիկ լեզու//աւ գտանէին, սատակէին։ Եւ զքիթսն կտրեալ և ի շար արկեալ՝ բերին առ Սմբատ. և համարեալ զքիթսն, գտան սպանե/ա/լ պարսիկ ընդ այր, ընդ կին և ընդ մանկտի իդր։

Իսկ զորդին Վաղթանկայ և զկինն առեալ տարան ի յԱյծից բերդ ի պահել զնոսա։ Եւ ինքն յղեաց առ պարսից թագաւորն խոսրով և ասէ. Կամ տուր ինձ հինգ տարոյ հարկ, որ քո զաւրքդ զիմ երկրիս զխոտն և զհացն կերան. և զփայտին, զոր այրեցին, և զջրոյն, զոր արբին, և զտաճարին գինն, զոր իմ հայրն Վահան այրեաց վասն քո զաւրացն, և զսապոնին գինն կո դահեկան, որ զքո զաւրացն զգիշահոտ և զարիւնաթաթաւ հանդերձն լուանալ տուաք և ագաք։ Ապա թէ ոչ՝ գամ ճ մարդով ի վերայ քո // զամենայն պարսիկս գերեալ ի Տարաւն ածեմ, և ի քո կուռսդ շուն խառանեմ, որ փոխանակ դոցա հաջեն ի ձեզ։ Արդ՝ փութով զոր ասացիդ յուղարկեա. ապա թէ ոչ՝ տե՛ս եթէ զինչ անցք անցուցանեմ ընդ քեզ։ Իսկ նա պատասխանի ոչ գրեաց։

Եւ մինչ այս այսպէս գործեցաւ, Սմբատ և իշխանն Պալունեաց, թաքեան ի ձորս ուրեք. և առաքեցին զոմն ի Մեղտի, թէ փութացէք գալ ի վերայ դոցա: Եւ ինքեանք առաքեցին արս ճ՝ գրգռել զզաւրսն. զորս իբրև տեսին զաւրքն Պարս//ից, դառն եառն զհետ, և մի մի հասանէին: Իբրև հասին հարիւրքն առ Սմբատ և ելին ի բլուրն, և զաւրքն Պարսից սկսան բազմանալ ի վերայ Սմբատայ և Վարագայ. և նոցա ծունր կրկնեալ յաւգնականութիւն կոչելով սուրբ Կարապետն, ասելով այսպէս. Ցիշեա զմեզ, սուրբ Կարապետ և զմեր երախտիսն, և որպէս աւգնեցեր ի Հեռաստանէ, աւգնեա և ի մալտոյս: Եւ եհաս ի թիկունս աւգնականութիւնն աստուածոյ:

Եւ փողոց տուեալ ի վերայ բլերն Սմբատ յաջ թևն և Վարազ յահեակ, և սկսան արեամբ թաւթաւել ինքեանք և երիվարք իւրեանց: Եւ մածեալ սուրն ի ձեռին Սմբատայ և ոչ կարաց հանել, զի մածաւ արիւն ընդ սուրն, և ընդ ձեռնատեղին կոտորեցաւ: Իբրև տեսին պարսիկքն զի մածեալ էր ձեռն ընդ սուրն և կոտորեալ, // և չկարաց փոխել այլ սուր, ձայն տուեալ միմեանց ասեն. Փութասջիք, զի մածաւ սուր քաջին, և սուրն, որ ի ձեռին նորա, կոտորեցաւ: Եւ պատեցին զնա յանխնայ. իբրև զչոր փայտ, որ ի ճեղքելն ճարճատէ, այնպէս ճարճատէին ի վերայ գլխոյ նորա զէնք նոցա: Իսկ նա ասէր ձանիւ բարձր. վայ քաջութեանդ ձերոյ և սրութեանդ, զի ոչ կարացէք հերձուլ զգլուխ իմ: Զայս ասաց, զի յիշելիք լիցի բանն: Բայց գիտաց եթէ կարի սաստկանայ, ձայն բարձեալ ասէ. Ո՞ւր ես, բազուկ քաջ և հզաւր ընդդէմ թշնամեաց, գաւազան իմոյ ծերութեանս, իշխանդ Պալունեաց, յառաջ մատիր իբրև զքաջ արծիւ, զի անգեղք և բուէճք պատեցին զիս: Իսկ նորա թողեալ զահեակ թևն յորդին իւր ի վահան, որ զվահանովիտն շինեաց, և որպէս զարծ//իւ կանչեաց ի վերայ նոցա, որ և ի դողման հարեալ երիվարացն, և անդէն ի թիկունս հասեալ աւգնականութեամբն աստուածոյ, և բախեալ զտէգն ի վերայ պարսկին թիկանն, և անդէն եհան ընդ յողն յերիվարին. և այլ ոչ ժամանեաց հանել, և անդէն մեռաւ:

Իսկ Սմբատայ ելեալ յեզր պատերազմին, հրամայեաց բերել պարսիկ մի. և ետ զենուլ ի վերայ ձեռինն, զի իջցէ ջերմ արիւնն և թուլացուսցէ զբռնատեղին: Եւ նորա փոխեալ այլ սուր և հեծեալ յայլ երիվար: Իբրև հեծաւ, ետես զի վեց հազար այր պատեցին զնոսա, և ի մէջ առին զհինգ հարիւրն: Եւ գիտաց, եթէ կացեալ են երիվարքն, եհար զմի պարսիկն և ընկէց, և ասէ. Հեծիր, իշխանդ Պալունեաց: Եւ նորա հեծեալ. և այնպէս արարեալ ի մէջ ահաւոր պատերազմին՝ // փոխէին զերիվարս իւրեանց. զի որչափ զաւրքն բազմանային, նոքա

յանհոգս լինէին ի մէջ նոցա. այնչափ կուտեցան ի վերայ, որ տեղի անգամ ոչ գտանէին որք յեզերսն էին։

Եւ սկսան ոմանք երկմտել ի զաւրացն Սմբատայ։ Իսկ ըստ տեսչութեանն աստուծոյ տեսին զմիւս Սմբատ, զի գայր, որ էր իշխան Հաշտենից. և ածէր զՎահան Կամսարական, զորդին Սմբատայ, և վեց հազար այր ընդ նմա։ Զոր տեսեալ Վարազայ իշխանին ասէ. Քաջ որդի Վահան, ո՞ւր էիր, որ այլ վաղ չեկիր յաւգն։ Իսկ Վահան ձայն բարձեալ ասէ հանդերձ արտասուաւք. Կա՞յ այն տառապեալ հայրն իմ ծերունի, եթէ փոխեցաւ առ տէր ի հանգիստ։ Իսկ Սմբատ լուեալ ասէր. Սուրբ Կարապետն ինձ ի թիկունս հասանէր, և ես ի պարսից մեռանէի՞։ Իսկ նորա գոհասցեա//լ յաստուծոյ, և դիմի հարեալ և կտրեալ փողոց, անց ի ներքս. և պարզեաց զմիւս թևն նա և միւսն իշխանն Հաշտենից։ Եւ յինքեանս առին և սկսան կռտորել զպատերազմագլուխսն. և ի վերայ շրջեալ բոլորեցին. և ի մէջ առեալ զզաւրս Պարսից և սկսան կռտորել յանխնայ մինչև ի մուտս արևուն։ Եւ մնաց ի Պարսից Գճ այր, որք ընդ միջոցս ելեալ փախստական եղէն. և զի մնացին երիվարք նոցա, երթեալ մտին ի ձոր մի և թաքեան. ննջեցին խոյս տուեալ մինչև ցմիւս աւրն աւրհասարակ. զոր եկեալ զաւրացն Հայոց զարթուցին զնոսա և ջուր ցանեցին և տարան ի Մեղտի, որ և անուանեցաւ ձորն այն Թմրաձոր։ Իսկ Սմբատ հրամայեաց զմեռեալ դիակունսն կուտել ի վերայ իրերաց ի բլեր մի, և անուանեցաւ Վարազակայ // բլուր։ Եւ ինքեանք եկեալ իջին ի վանացն գետն. ընդ յառաջ յերգս առեալ նման միմեանց. որ և յետոյ ի հոտել դիակացն շէր հանեալ ասէին։

Կերան գազանք զմարմինս դիակացն և դիրացան.

Կուզ կերեալ ուռեան իրրև զարջ.
Եւ աղուէս հպարտ եղև քան զնռեւծ.
Գայլ քանզի շատակեր էր՝ պայթեաց.
Եւ արջ, զի զոր ուտէն՝
Ջմնայ առ ինքն, ի սովոյ մեռաւ.
Անգեղք, զի ագահ էին, նստան
Եւ այլ ոչ կարացին վերանալ.
Մկունք զի շատ տանէին ի ծակս իւրեանց՝
Մաշեցան ոտք նոցա։

Զայս ամենայն ասացին. և ի դէպ եկն վասն իրացն. որ և կոչեցաւ գեղջն Շերանիկք անուն։

15. [ԹԵՈԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆԻ ԵՎ ՎԱՐԴ ՊԱՏՐԻԿ]

(Ա)շխարհին Հայոց տիրեաց Թէոյթոս Ռըշտունի ի տանէն Մանաճեղի, և կալաւ զաշխարհն Հայոց ամս. Խե։ Եւ ուղարկեաց զՎարդ որդին իւր յերկիրն Հոռոմոց և էբարձ զհարկատրութիւն Հոռոմոց զոր տային Հայքն, ետուն Տաճկաց, քանզի զաւրացաւ տունն Պարսից և յաղթահարեաց զտունն Բաղտադայ և Հուրմիզտպտքար թագաւորեաց ի տունն Պարսից. և կազմեաց զաւրք և յելեաւ ի վերայ երկրին Վասպուրականի. և բազում աւերումն ած յերկրին Ճվաշու և ըԴերամ և զԱրտաշ և զՀացիւն և զԿոգովիտ այրեաց առհասարակ և էառ զամուրն Արծափաց։ Եւ բազում կանայք որ անդ կային գերեաց։ Եւ ապա Թէոդոս զհետ մտեալ էհաս նոցա եղր գետոյն Երազխայ, զբազումս ի նոցանէ էսպան և զայլսն փախստական արարեալ, և թափեաց զաւարն զոր առել էին և բազմութիւն գերեացն դարձոյց։

Եւ դարձեալ ի մի այլ տարին հասին ի վերայ աշխարհին Հայոց և բազում աւեր արար(ին) և ոչ կարացին թափել։ Եւ զօրացան ազգն Պարսից և ոչ տային հանկչել աշխարհին Հայոց։ Եւ ի տարակոյս մատնեցաւ Թէոդոս Ռըշտունի. և ապայ հասաւ նմա ցաւ հիւանդութեան։ Առաքեաց և կոչեաց զորդին իւր Վարդն, քան//զի պատրիկ արարեալ էր զնայ Կոստընդին արքայն Հոռոմոց և մեծարեալ ունէր զնայ պատուով քան զամենայն մեծամեծս իւր և զեգիպտացոց, զի ունէր այնժամ զեգիպտոս Կոստընդին արքայն Հոռոմոց, զի նա յաղթահարեաց զորդիքն Ալէի զոր ծնան ի Ֆատմայէ, զԱպուտալիպ և զեղբայր նորին զԱփռան։ Եւ էառ զեգիպտոս, բայց զերուսաղէմ ոչ կարաց առնուլ, զոր շինեաց Մուրիկ արքայն Հոռոմոց։

Եւ յորժամ եկն Վարդ պատրիկն առ հայրն իւր Թէոդոս և նայ վատուժել եր ի ցաւոցն։ Եւ նայ ասէ. «Օրհնեալ Վարդ որդեակ, որ հասար ի աւր վաղճանի իմոյ»։ Եւ նայ եկաց և պատմեաց զամենայն մեծարանս, զոր արար Կոստադին արքայն Հոռոմոց, որդին Լէվոնի։ Եւ ասէ Թէ//ոդոս. «Լուր որդեակ Վարդ, ես երդամ զճանապարհն, որ այլ ոչ դառնամ, այլ դու զոր ասեմ քեզ, դու մի արհամարհեր. կտրէ զուխտն քո զոր ունիս ընդ Հոռոմք, և դիր քեզ ուխտ ընդ արքայն Պարսից, քանզի դրացիք էն դոքայ քեզ, եւ զհարկն զոր ի տունս Հոռոմոց է տալի, տուր տունըն Պարսից և նոցա հնազանդեաց և շինեսցի աշխարհն Հայոց»։

Եւ յորժամ զայս ասաց, ելաւ հոգի նորա և մեռաւ։

Եւ ապայ նա այսորիկ պատերազմ եղեւ ընդ տունն Պարսից և ընդ տունն Հոռոմոց։ Եւ ուղարկեաց Վարդ պատրիկ առ արքայն Պարսից և եդ ուխտ ընդ նմա և ասէ. «կազմէ զօրքդ և գնայ երկիրն Հոռոմոց և ես տամ զնոսայ ի ձեռս քո և հարկանիցես զնոսայ որպէս և կամիս»։

Եւ երդումն արարին միմեանց ճշմարտութեամբ։ Եւ ապայ ժողովեաց զաւրս բազումս Սահակ որդին Հուրմիզդայ արքային Պարսից և եկն էհաս ի երկիրն Հոռոմոց և աւար էհար զԹէոդոսպաւլիս, որ է Կարնոյ քաղաք, և զԴերչան և զԵկեղեաց և եկեալ հասեալ ի Կոլանիայ և բնակեցաւ յեղբր գետոյն։ Եւ Վարդ Պատրիկն յղարկեաց առ Սահակ որդին Յուրմիզդայ արքային, «երդամ և բերեմ զարքայն Հոռոմոց և բանակեցուցանեմ զնոսայ առ եղր գետոյն և տամ կապել կարմունչ և յանցուցանեմ զամենայն ասս պատերազմողս այս կոյս, և խնդրեմ պահել զանց կարմունչին։ Եւ յորժամ յանցանեն այս դեհ գետոյդ, փախիք առաջի նոցա և նոքա վստ(ա)հացեալ գան զհետ ձեր, դուք դիմի դիք և դարձիք յետ ի վերա նոցա և ես քաշեմ զխեվս կարմունչին և այսպէս հարէք զնոսա»։

Եւ գնաց Վարդ պատրիկն առ արքայն Հոռոմոց և ասէ. «այս ջուրք այլ գետոյ կապէ ի վերայ կարմունչ. և տուր անցանել արանց պատերազմողաց այն դէհ և թող ընդ(ր) մարդիք քո որ պահեն զկարմունչըն. զի թէ յաղթեն նոցա Պարսիկն և փախուցանեն, նոքա պատրաստ գտանեն զկարմունչն և անցանեն այս կոյս գետոյս»։ Եւ արար արքայն Կոստանդին զամենայն զոր ասաց նմա Վարդ պատրիկն և անցուց այն դէհ գետոյն մարդիկք իբրև երէք բիւրս. Եւ ասաց ընդ Վարդ պատրիկն թէ. «դու պահէ զխեվս կարմունչիս»։ Եւ Պարսիկ զաւրքն փախեան (ա)ն առաջին նոցա և ի բազում տեղիս քիմի (է)ին դրել զօրքն Պարսից. և դարձան ի վերայ զօրացն Հոռոմոց և հարին զնոսա։ Եւ նոքա փախստական դիմեցին ի կարմունչն անցանել։ Եւ Վարդն՝ որպէս էր պահանորդ կարմունչին, քաշեաց և ընկեաց զկարմունչն և ինքն ի Պարսիկս դարձաւ։ Եւ բազումք ի զօրացն Հոռոմոց մեռան յաւուրն յայնմիկ և դարձան զօրքն Պարսից մեծաւ աղթութեամբ և Վարդ պատրիկ զհետ նոցա։

16. [ՏԱՃԱՏ ԱՆԶԵՎԱՑԻ ԵՎ ԱՇՈՏ ԱՐԾՐՈՒՆԻ]

Եւ Տաճատ Անձևացին էր այր քաջ և անուանի, և սիրէր զնայ Մահմատ Թագաւորն Բաղտատայ։ Եւ էին Մահմատայ. Բ. որդիք։ Եւ իբրև մեծացան որդիք նորայ ոչ սիրէին զմիմեանս։ Եւ կոչեաց Մահմատ որդիքն իւր և ասաց. «որդիք իմ, կամիմ առնել խաղաղութիւն ի մէջ ձեր, բաժանել զքաղաքս Բաղտատ, զի մի դեհ գետոյն մինն որդուս

և միուս դեհն մեկալ որդուս»: Յայնժամ ասէ կրտսերն որդին. էթէ «ոչ առնում բաժին ի յաշխարհէս, այլ տուր ինձ գան(ձ)ս և հանդերձս, զձիս և զչորիս, ծառայս և աղախնայս, զի ցանկամ ելանել և տեսանել զերկիր»: Ասէ հայրն. «(...) լինիս որդեակ, ոչ է պարտ աւագաց այնպէս առնել, զոր դու կամիս և մտաւք արկանես»: Եւ նայ ոչ կամեցաւ լսել ձայնի հաւր իւրոյ. և ապայ առեալ գանձ, հանդերձ, ձի և ջորիս, ծառայս և աղախնայս և եկեալ գնաց և հասաւ ի յերկիրն Անձաւեաց ի տեղի, որ Շահաստան կոչի, և բանակեցաւ անդ ի դաշտին Շահաստանի:

Եւ գիտացուցին Տաճատայ և ասեն. «բազում զաւրք են եկեալ և բանակեալ ի Շահաստանին»: Եւ նայ հեծեալ և գնաց սակաւ մարդով երևան հեծելին տեսանել թէ ո՛վ են: Եւ որդի արքային հեծեալ էրիվար և որսայր ի լերինն: Ի դեհն հանդիպեցան էրիրաց, և ձի արկել որդի արքայի մի ոմն ի մարդկացն Տաճատայ հարեալ զնայ խոցով բոլմպին և սպան զնայ: Եւ ապայ ետոյ գիտաց Տաճատ զսպանումն որդ(ոյ) արքային և վախեաց: Եւ ապայ արուցեալ առ զգանձն զոր թողին: Եւ փախեան զաւրքն որդոյ արքային և թողին զձիս և զչորիս և զամենայն ինչս նորա:

Եւ նա էառ զամենայն ինչսն և գնաց ամրացոյց զամրութիւն բերդին իւրոյ, և զծառայս իւր և զհաւատարիմս իւր եդիր յամենայն բերդերն իւր, և ինքն փախստական գնաց ի յերկիրն Հոռոմոց առ արքայն Փօկաս: Եւ ճանաչ զնայ և մեծարեաց և կացոյց զնայ կատապան ընդդէմ Տարսոյ: Եւ երբ արքայն Բաղտատայ լսել զմահ որդոյն իւրոյ, զոր ըսպան Տաճատ, յղարկեաց զաւրք բազումք և աւիրեաց զաշխարհն Անձաւացից և հրով այրեաց, բայց ամրոցացն ոչ կարաց յաղթել:

Եւ բազում սուք եղև ի վերայ որդոյ արքա(յ)ին, և կացոյց զիր մին այլ որդին թագաւոր ի վերայ Բաբելացւոց: Եւ ապայ ետ. ե. ամի պատերազմ եղև ընդ Հոռոմք և ընդ արքայն Բաբելոնի: Եւ ժողովեաց թագաւորն Հոռոմոց զաւրք բազումք և յետ ի ձեռն Տաճատայ Արծրունոյ և ասէ. «գնայ ընդդէմ զաւրացն Բաբելացւոց»: Եւ նա առեալ բազմութիւն զաւրացն և գնաց և ընդդէմ միմեանս հասան ար իրար: Եւ պատերազմեցան ի դաշտն Տարսոյ, և յաղթեցին զաւրքն Հոռոմոց զաւրացն Տաճկաց և հալածեցին զնոսայ և ի հետ անցան կոտորեցին զբազումս ի փախըստեանն:

Եւ մինչդեռ երթային զհետ՝ գտաւ ինքն Տաճատ զորդի թագաւորին, զի դադարեալ էր ձի նորայ. և նա իջել նստել մէն: Երեկ Տաճատ գտաւ զնայ միայն և ասէ. «ո՞վ ես դու». և նա ասէ. «ես եմ արքայն զաւրացս, զոր հարին Հոռոմք»: Եւ Տա[illegible] իջեալ ի ձիոյն և հագոյց զնայ հանդերձ Հոռոմի և առեալ էբեր [illegible] իւր: Եւ գնաց

ինքն առ արքայն և մեծարել պատվով ի արքային Հոռոմոց՝ դարձավ ի տուն իւր։ Եւ առեալ զորդի արքային Բաբելացոց և զընդանիսն իւր գնաց յերկիրն Անձաւեաց, տիրացաւ բերդերին իւր, զի նոքայ պահէին զեր, և ինքն առել որդի արքային Բաբելացոց գնաց ի Բաղտատ։

Եւ առեալ իշաւանս նըստուց անդ որդին ամիրապետին և ինքն գնաց ի դուրն արքունի։ Եւ գտել զնայ, որ տեր եր դրանն՝ և նայ ասէ. «դո՞ւ ես տէր դրանս այս». և նայ ասէ, «այոյ, ես եմ»։ Ասէ Տաճատ. «ես եկել եմ Հոռոմոց աշխարհէն. զի ծառայեմ արքային»։ Եւ նայ ասէ. «Բարի է, և ես կարքեմ զքեզ ի դր //ան արքունի»։

Եւ տարաւ զնայ առաջի արքային։ Եւ նայ հրամայեաց նըմայ ի նըստել։ Եւ էր արքայն հագել սև, և ոտէ սև ի գլուխ նորա։ Էհարց Տաճատ ընդ հճեպն և ասէ. «զի՞ է, զի արգայտ ես հագել և է սգաւոր»։ Եւ նայ ասէ. «ո՞չ գիտես թէ զինչ անցք անցին»։ Ասէ Տաճատ, «ես ոչ գիտեմ»։ Ասէ հճէպն. «.Բ. որդիք էին թագաւորին և կամեցաւ արգայս բաժանել զՊաղտատ ի մեջ .Բ. որդոյն, և կրսեր որդին ոչ կամեցաւ առնուլ բաժին ի քաղաքէս, և արար արքայն զկամս նորա, երեւ գանձըս, ծառայս և աղախնայս, ձիս և ջորիս։ Եւ գնաց ի Հայք, յերկիրն Անցեւացոց, իսկ անաւրէն Տաճատն եհաս ի վերայ և սպան զնայ, և առ զգանձս և զամենայն ինչս նորայ և ինքն փախեաւ և գնաց ի աշխարհն Հոռոմոց։ Եւ այլ աւելի չար եղև արքային. զմին այլ որդին, որ տէր էր կացուցեալ իր փոխան Պաղտատայ՝ եղև պատերազմ ընդ մեզ և ընդ Հոռոմք և ելեալ որդի արքային ի պատերազմ զհետ զաւրացն իւր, հարին զաւրքն և սպանին զնայ ի պատերազմին»։

Եւ Տաճատ ասէ. «Դուք ի՞նչ գիտէք, թէ սպանին զնայ ի պատերազմին»։ Եւ ասէ հճէպն. «եկին մարդիկք ի փախստականացն, եթէ մեք տեսաք, զի հարին և սպանին զնայ»։ Եւ ասէ Տաճատ. «Լսէ ինձ զոր ասեմ քեզ, ես գիտեմ զի չեն սպանել զորդին արքային, զի գամ ես ի Հոռմ երկրէն։ Ես այն աւր ի պատերազմն էի։ Այլ և ես գիտեմ, զի կալած է նայ, և որ ունին զնայ արքեւք, և արքայն Թող տայ ինձ նշան և ես երթամ բերեմ նշան ի նմանէ, զի հաւատասցէ ինձ»։

Եւ ըշտապով մտաւ հճէպն և պատմեաց արքային զամենայն զոր լուաւ ի Տաճատա։ Եւ կոչեաց արքայն զՏաճատ և արտասուեաց և գոռոչեաց և եհարց լալով և ասէ. «ա՜յ բարի այր, թէ ապա ստո՞յք են խաւսքդ քո, զոր ասացեր ծառային իմոյ»։ Եւ նայ ասէ, «Հաւատայ, արքայ, զի ճշմարիտ են և անսուտ»։ Եւ սիրեաց արքայն զՏաճատ այն աւրն։ Եւ ոտն կացեալ Տաճատ մեծարեց զարքայն և ասէ. «կեր հաց և արբ գինի և ուրախ լեր, ես գնամ և բերեմ նշան որդոյն քո»։ Եւ ասէ արքայն. «աղաչեմ զքեզ, և թէ զորդ են խաւսք քո, մի՛ ստեր, ահայ գանձք ի մեծամեծաց իմոց առաջի քո, տո՛ւր և թափէ զորդին

իմ, և մի՛ խնայեր ամենայն ինչս իմ»։ Եւ երդուաւ նմա Տաճատ և ասէ. «Հաւատա ինձ, արքայ, կենդանի է որդին քո, և ես գիտեմ և աչաւք իմովք տեսի զի կենդանի է»։ Եւ հաւատաց նմայ արքայն և ոչ եթող զնայ այն աւրն մինչև յիրիկունն, և ապա երբ իրիկունն եղաւ՝ կերաւ Տաճատ և ելաւ ի արքունեցն։

Կոչեաց Տաճատ զհճէպն և ասաց նմա, թէ «ես եմ Տաճատն և ունիմ որդի թագաւորին», և պատմեաց նմա կարգաւ զոր արար։ Եւ ասէ Տաճատ. «երթամ բերեմ զնայ, և դու հեռացոյ զմոմեղէնն, որ ընդ մութն տեսանէ թագաւոր զորդին իւր, և ես դնեմ զձեռն որդոյ իւրոյ ի ձեռն արքային»։ Եւ այնպէս արարին, որպէս ասաց Տաճատ։ Եւ գնաց Տաճատ իջևանքն իւր, ուր թողել էր զորդին թագաւորին, և ասաց նմա զամենայն զոր ասաց հայր իւր, և առեալ զնայ եբեր ի դուռն արքային։ Եւ եկեալ հճէպն ի դուռս տեսել զորդի թագաւորին՝ անկեալ երկիր պագանէր նմա, և ամենայն ծառայքն արքային տեսանէին զնայ և զարմանային։ Եկեալ հճէպն՝ եբեր մոմեղէնն և հեռու պահել, և Տաճատ առեալ զձեռանէ որդոյ արքային և մտել ի նեա, և էր տունն մութն, տարեալ զձեռն որդոյն եդ ի ձեռն արքային և ասէ. «Լո՛ւր, արքայ, ես եմ Տաճատ, և այս է որդին քո Մուսէ, որ ասացին թէ սպանած է և, ա՛մ, երանի քեզ զի ահա որդիդ քո կենդանի է»։ Եւ ասէ արքայն. «բերէք զլոյս, որ տեսանեմ»։ Եւ բերին մոմեղէնս բազումս առաջի արքային։ Եւ որժամ նեաս զորդին իւր՝ ճանաչեց, և անկաւ ի գիրկս նորա և նուաղեցաւ։ Եւ առեալ վարդէջուր ցանեցին զերեսաւքն նորա, և նա եբաց զաչսն և սգաստացաւ, և նայեցաւ և դարձեալ նվաղեցաւ։ Եւ այլ ցանեցին զերեսաւքն նորա։ Տեսաւ զՏաճատ և կոչեաց առ ինքն և էպաք զնայ և ասաց. «աւրհնեալ ես դու Աստուծոյն քո զոր պաշտես»։

Եւ պատմեաց Տաճատ զամենայն զոր արարեալ էր։ Եւ ասէ արքայն. «այս աւր եառ զորդիս իմ ինձ, ա՛մ, դայ քեզ լիցի որդի և ամենայն աշխարհն Հայոց հարկատու լիցի քեզ, զի մեր է հարկն նոցա, և ամենայն զաւրք իմ ի ձեռս քո, և էթէ մարդ ընդդէմ դառնայցէ քեզ՝ առ զամենայն զաւրս իմ և հալածեաց զթշնամին քո»։ Եւ տվեալ նմայ գանձս բազումս և արձակեաց զինքն։

Եւ նայ եկ//եալ ի աշխարհն Հայոց՝ եառ տանել զսիգեղ թագաւորին առ իշխանն Բագրատունեաց Աշոտ և առ Սմպատ Տարաւնեցին, և ամենայն աշխարհն ընդ հարկիւ արարեալ։ Եւ այսպէս. Ջ. տարինայ եղև հարկատու ամենայն աշխարհին Հայոց։

Ապայ ի հաւթն տարին մարդ մի վաճառական ի քաղաքէն Բաղտատայ, որ կոչէր իր անուն Սէթ, որդի Ապուսէթայ, եր[illegible] հասաւ ի

աշխարհն Խութանաց, և նոքայ հարևալ ի վերայ նորայ և սպանին զնայ և խլեցին զգանձն նորա և բաղումս ի նոցանէ սպանին։ Ապայ որ մնացեալ էին գնացին բախըստական առ արքայն Բաբիլացւոց։

Եւ նայ զարկեաց առ Տաճատ և ասէ. «ժողովէ զաւրս Հայոց և Միջագետաց և գնա ց//վարս Խութանի և ա՛ռ զքէն ծառա(յ)ին իմոյ Սեթայ որ սպանին»։ Եւ նայ զարկեաց առ Աշոտ իշխանն Վասպուրականի և առ Աշոտ Բագրատունի և առ Սմպատ Տարաւնեցի և միաբանեց զաւրս Հայոց և կամեցաւ գնալ անցանել ի Խաւթ և ի Սասունք։ Եւ զաւրքըն Տաճկաց ընդ որ անցանէին՝ այրէին և աւերէին, կրակ ձգէին յեկեղեցեաց Հայոց, և սպանանէին քահանայս և գերի տանէին զկանայս և զորդիս։

Եւ երբ տեսաւ զայն Աշոտ Բագրատունի՝ և ասէ ընդ Աշաւտ Արծրունի և առ Սմպատ Տարաւնեցի. և ասէ ցնոսայ. «մեծ բարկութիւն զոր կու գործեմք, և զի՞նչ առնէ Աստուած մեզ, զի խաչապաշտ եմք մեք և որպէս այլազգիս յապականեցաք զաշխար//հս Հայոց. յեկեղեցիքս այրին և աւիրին, և զքահանայսն սրախողոխ առնեն։ Զհաճի Աստուած ընդ սայ»։

Եւ ապայ չարեցան և գաղտ ի գիշերի սպանին զՏաճատ։ Եւ եղեալ առաւաւտուն գտան զզ Տաճատ սպանած։ Ասացին ծառայքն նորա թէ առ նախանձու սպանին զզՏաճատ, և ապայ չկարացին գնալ ի յերկիրն Խուզայինաց, զարձան ամենայն ոք ի յերկիրն իւրեանց։ Եւ զաւրքն Տաճկաց գնացին ի Պաղտատ և պատմեցին թագաւորին Մահմատայ յաղագս Տաճատայ և ասեն, թէ նախանձու սպանին զՏաճատ։

* * *

Եւ նայ հրամայեաց ձայնել ի Պաղտատ քաղաք, թէ «մարդ որ գնայ ի աշխարհն Հայոց՝ ես տամ զաւրք և գանձ բաղում, և աւերէ զՀայք և առնու վրէժ արեանն Սէթայ»։ Եւ երբ .Զ. օր ձայնեցին զայս ի Պաղտատ. և ի .Դ. աւրն առաջ եկաց ծառայ մի, որոյ անունն էր Բուկայ, և լեալ էր գերի ի Յաղբագ գաւառէ ի գեղջէն որ Մուխվանս կոչեն, որդի իրիցու։ Յառաջ եկաց ի դրան արքային և ասէ. «իմ ձեռք արայ զայս։ Կոչեաց զնայ ամիրապետն և ասէ. «զի՞նչ է անուն քո». և նայ ասէ «Բուկայ»։ Եւ ժողովեց անթիւ զաւրս և անչափ գանձս և ետ ի ձեռն նորա։

Եւ եկն ի աշխարհն Վասպուրականի և հրձիգ արար զամենայն աշխարհն։ Իսկ իշխանն Աշաւտ առեալ զիւր ազատքն և զաւրքըն և զկանայս իւրեանց և մտանէին յամրոցն Նկանայ։ Եւ էլ Բուկայ՝ պատեց զնայ և նըստաւ ի վերայ նորա, և եդիր պատ//երազմ ընդ ամրոցն,

և չկարաց յաղթել։ Ապայ եթող ի վերայ զաւրս բաղումս, և ինքն առեալ զայլ զաւրս և ասպատակ արար յերկիրն Հայոց և զամենայն աշխարհն հռձիք արար և աւերեաց զամենայն յերկիրն։ Եւ ապայ ելեալ հասաւ ի Խով(թ) և ի Սասունք և չկարաց նոցայ յաղթել։ Եւ նոքայ բաղում վնաս արարին զաւրացն Տաճկաց և սպանին զորդին Տաճատայ, զի նայ էր առաջնորդ Բուկայի։

Եւ ինքն Բուկայ յետ .Ջ. տարոյ դարձաւ և էրեկ ի վերայ բերդին Նըկանայ և էառ, զնայ, և տարաւ գերի զիշխանն Աշոտ Արծրունի և զգվերորդիքն նորայ՝ զիշխանակ և .Խ. մարդ ազատացն նորա և .Բ. որդի նորա, որոց անուանքն են Համազասբ և Դէրէն։ Եւ տարաւ զնոսայ ի քաղաքն Սամուր, և եդիր ի զնտան և կացեալ անդ ամս .ԺԶ.։

Եւ ապայ հասան ի վերայ աշխարհին Տաճկաց Մաղրիպիկսն և աւար առին զամենայն աշխարհն Տաճկաց, և եկին հասան ի դուռն քաղաքին Սամառայ։ Եւ էր ամիրայն ի տարակուսի։ Եւ ելեալ մայր ամիրային ի պարիսպ քաղաքին և ասաց ընդ զաւրագլուխն թշնամեաց, թէ «աշխարհն Բաբելացոց աւերեցեր և ըզՊարսից, և եկեալ ես հասել ի դուրս քաղաքիս մեր, և զիս իմ տանէս հանե՞լ կամիք»։ Եւ ապայ զաւրքըն Մաղրիպաց սկսան հայհոյել զնայ։ Լսեց զայն իշխանն Աշոտ և յղարկեաց առ ամիրայն Սալքայ և ասէ ընդ նայ, թէ «լվայ ըզխաւսս թշնամեաց քոց և զաւէր աշխարհիդ քո. թէ տաս ինձ հրամանք՝ երթամ ես և ազատք իմ և պատերազմինք ընդ նոսայ, և յուսամք ի Աստուածն որ յաղթեմք նոցայ»։

Եւ նայ որժամ լսեց ըղբանն նորայ՝ ծաղր առնէր զնոսայ։ Եւ ապայ լսեց մայրն ամիրային՝ զնաց առ որդին իւր և ասէ, թէ «զիա՞րդ ոչ հաւնիս և արձակես զիրենքս»։ Եւ նայ լսեալ մայրն իւր և արձակեաց ի տուն բանդին, հանել ետ զնոսայ և տանել ի բաղանիսն, և ետ նոցայ հանդերձս։ Եւ իբրև ելան ի բաղանեացն՝ բերին զնոսայ առաջի ամիրային, և հրամայեաց նստել նոցայ։

Եւ ասէ ամիրայն ցԱշոտ իշխանն. «լսեմ թէ արք պատերազմող էք դուք». և ասէ Աշոտ իշխանն. «զի՞նչ էի յերկիր իմ, կարծեմ թէ էի պատերազմող, և թէ չէի մտել ամրոց բերդին՝ կամ մեռել էի և կամ չէր մարդ կալել դիս»։ Եւ ասէ ամիրայն. «արդ կամի՞ս երթալ ի պատերազմն ի թշնամիքն իմ»։ Ասէ իշխանն, «երթամ, ամիրայ»։ Ասէ ամիրայն. «կան իմ զաւրք ի քաղաքս և են պատերազմողք և քաջք, այլ զքեզ կամիմ կազմեմ առաջնորդ և զաւրագլուխ նոցա»։ Ասէ Աշոտ, «լուր ինձ, ամիրայ, զոր ասել կամիմ, դու աջողացոյ զաւրս քո, ես և ազատքն իմ ելանենք յառաջ։ Եւ դուք տեսէք թէ յաղթեմք նոցայ՝ դու հրամայէ քո զաւրացդ ելանել, ապայ թէ նոքա զմեզ յաղթեն՝ որ մնայ ի մէնէ փախչինք և անկանինք ի քաղաքս, և մի տար զիս [illegible] առաջ-

նորդ զաւրաց քոց»: Եւ ասէ ամիրային. «բարի են բանք քո, ա՜մ, արի գնա ի տուն գանձուց իմոց և ընտրեցէք ազատաց քոց սուսերս և բռունսլըս և զրեհս և սաղաւար//տս, զոր և սիրէ սիրտ քո, և առ զձիս ազնիւս, զոր և հաճիս, և ասպարս զոր և կամիս»:

Եւ արար Աշոտ զոր ասաց ամիրային: Եւ էր աւրն կիրակի, և իշխանն Աշոտ ունէր մասն ի սուրբ խաչէն Վառագայ և թագուցեալ էր զնայ ի վերայ գլխոյն: Եւ ապայ հագան և զանճառեցին ինքն և ազատք իւր: Դարձաւ դէպի արևելքն և եդ ծունր և ասաց. «տէր Աստուած, օգնեայ ինձ, և նշան սուրբ խաչի օգնեայ ինձ»: Եւ հեծան և ելան ընդ դուրն քաղաքին, և կանչեաց ի վերայ զաւրացն, հալածեաց զրազմութիւն նոցա: Ի նման առիւծոյ գոչէր Աշոտ իշխանն և Իշխանակ յերկրորդի նորա նման արծիւոյ անցանէր թէվէ ի թեվ: Եւ ապայ ելան քաղաքին զաւրք և առին զար և զաւար Մաղրպացն, և դարձաւ Աշոտ ի քաղաքն մեծ յաղթութեամբ:

Եւ ամիրայն հրամայեց հանել զնայ ի վերայ ասպարի և շուրջ ածել և արկել գանձս ի վերայ նորա և բազում տուրս բերել առաջի նորայ: Եւ ասէ ամիրային ցԱշոտ իշխանն. «դու այր քաջ ես և անչափ բարութիւն գործեցեր դու առ իս, և իմ չարին զոր քեզ արարել եմ՝ դու զանձդ ի մահ եղիր և թափեցել զաշխարհն իմ և քաղաքս, ա՜մ, կամիմ զի կացցես առ իս պատվով և հարկաւք, և զորդիդ քո Դէրէնդ արձակեմ ի աշխարհն քո և տամ գանձս բազումս: Դու ասա կաց, զի ես գիտեմ որ այլ դառնան թշնամիքն, և եթէ խաղաղութիւն լինի արձակեմ զքեզ»: Ասէ Աշոտ իշխանն ցամիրայն. «ողորմեայ ինձ և արձակեայ զիս և յոր //ման հասանէ հրաման քո՝ ես դամ և մեռանիմ առաջի քո»: Ասե ամիրայն. «ոչ կամիմ թողուլ զքեզ, զի ես գիտեմ, որ առանց պատճառի ի մին այլ տարի գան նաքայ. լո՜ւր ինձ, զի ես համարիմ զքեզ որպէս հայրն իմ»:

Եւ ապայ կոչեաց զԴէրէնն և էրետ նմայ գանձ բազում և էտ նմայ հեծնել բազում և ուղարկեաց զնայ: Եւ երեկ Դերէնն մտաւ ի Վասպուրական և արար սկիզբն շինելոյ զաշխարհն:

Եւ անցել տարի .Ը. դարձեալ եկին Մաղրիպիքն անթիւք և դարձեալ աւերեցին զաշխարհն և եկին հասան ի դուրն քաղաքին: Եւ կոչեաց ամիրայն զիշխանն Աշոտ և զազատքն նորա և զանճառեցուց զնոսայ: Եւ ասէ ամիրայն. «լուր իշխան Աշոտ, եթէ յաղթես այսհետ՝ ուղարկեմ զքեզ մեծութեամբ ի աշխարհն քո»: Եւ յորժամ կամէին ելանել ի պատերազմն՝ ասէ Աշոտ ընդ ազատք իւր. «եթէ աջողէ մեզ Աստուած և յաղթեմք զթշնամեացս, թող չի դառնանք ի քաղաքս, այլ գնանք ի աշխարհն մեր»:

Եւ ապայ ելան ընդ դուրն քաղաքին և եկեալ Հասան ի բանակն յայլազգեացն և ճակատեցան ընդդէմ նոցա։ Եւ այլք կացին բազում ի զաւրաց ամիրային զհետ Աշոտի։ Յայնժամ իշխանն Աշոտ առեալ զիւր աղատագունդն և կայր ի զատ ի զաւրաց քաղաքին իբրև .Ծ. նետընկեց։ Ելանէր այլազգեաց մարդ մի բռնմպաւոր և կոչէ անուանէ զիշխանն Աշոտ և ասէ. «ես եմ Ապուհալիթ, Իսմայելի որդին, գիտեմ զքեզ որ իշխան Վասրականին ես Աշոտ, դու առաջին հետն հարեր զանյաղթելի զաւրքն Մաղրիպայ և սպաներ զեղբայրն իմ, և կամիմ ես որ մեռանիմ կամ առնում զվրէժ արեան եղբաւրն իմոյ»։

Յայնժամ իշխանակ քվերորդին Աշոտոյ ասէ ցԱշոտ. «Տուր ինձ հրաման որ երթամ ես առ նայ»։ Եւ ասէ իշխանն. «մի որդեակ, քանզի չես բաւական գնալ առ նմայ, զոր ես կամ և տեսանեմ. գնամ ես, այլ դուք պատրաստ կացիք, թէ նայ ինձ յաղթէ՝ դուք շուտով հասիք ինձ աւգնականութիւն»։ Եւ գայր այրն ի մատս առ իրենքն։ Ապա առաջ ելեալ իշխանն Աշոտ և ի ձայն բարձր ասէ. «աւգնեայ ինձ սուրբ նշան վարագայ այս մեծ աւուրս պատերազմիս», և ունէր ձի թամպով ազնիւ և բռումպ ի ձեռինն։ Եւ երբ Հասան մատ իրար՝ ձգեց այրն այլազգի գխի(շ)ան իւր և էհար զաչ դէհ կշտին իշխանին Աշոտի, և ոչ կարաց անցուցանել ի մարմինն նորայ. իսկ իշխանն Աշոտ զարկել բռամբն ի վերայ խշտին՝ կոտորեաց զնայ և քաշեց զդուրն իր կամաց վրայ՝ զարկել ի ձախ յուսոյն, և զգլուխն աջ ձեռամբն ի գետինն ընկեց։

Եւ յորժամ զայն տեսան զաւրք թշնամեացն իւր՝ ի փախուստ դարձան յառաջի նոցայ։ Եւ զհետ մտել մինչև արևանքն՝ անխնայ կոտորելոցին զայլազգիսն, և կալան իրենց ձիան, էր որ .Բ. և էր որ .Ծ.։ Յանժամ ասէ Աշոտ. «եկայք որդիք, անուն Վարագայ սուրբ նշանիս, պի Լթէ հասանեն մեզ՝ կամ մեռանիմք կամ գնամք ի աշխարհն մեր»։ Եւ մեկնեցան ի զաւրացն ամիրային իշխանն Աշոտ ազատաւքն իւրովք և ամենայն ողջ մն//ացեալ գնացին, և ոչ ոք համարձակեցաւ զհետ երթալ նոցայ։ Եւ նոքա .Ծ. աւրն հասան ի աշխարհն Վասպուրականի։

Եւ գնացին զաւրքն ամիրային և պատմեցին, թէ գնաց Աշոտ ազատովքն իւրովք։ Եւ ասէ ամիրայն, թէ «պատրաստեցաւ յինէն, թէ արդևլէի գնայ, բայց ես կամէի մեծ պատվով ուղարկել գնայ յաշխարհն իւր։ Ա՜մ, թող Աստուած բարով տանի գնայ երկիրն իւր, ես առնեմ գնայ ըստ արժանեաց քաջութեան իւրոյ փոխարէն»։ Եւ աջողացոյց գանձ բազում և հանդերձս պատուականս և զձիս .ղ. սարաւք և զջորիս բարձած ամենայն պատուական ընչից իւրոց, և ի աւարէն որ առին և զրէհս և զսաղաւարտս ի ամենայն զանաճառէն այլազգեացն։

Եւ գրեց հրովարտակ այսպէս. «ով քաջ և անհասանելի առիւծ իշ-

խան Աշոտ, և ազատագունդն ընտրածք ի փիւրոց, ես կամէի մեծ պատվով և շատ բարով և ծանդր մեծութեամբ ուղարկել զքեզ յաշխարհն քո, և, ա՜մ, գնա և շինէ աւերած յերկիրն քո, և տամ ձեզ զամենայն պետք և գանձք, որ և սնկիք դուք»: Եւ եկին աշխարհն Հայոց, բերին զամենայն ինչ զոր ուղարկել էր ամիրային:

Եւ յորժամ լուաւ Դերենն զգալն հարւն իւրոյ՝ էառ զաւր ընդ դէմ նորայ: Դիտացուցին Աշոտի իշխանին, թէ գայ զաւրաւք որդին քո ընդ առաջ քո: Եւ նայ որժամ լսեց՝ ձի ուղեց և զրահ և սաղաւարտ, իսկ այլքն զարմանային և ասէին. «իշխան, որդին քո է, զիա՞րդ խնդրես զանճառս պատերազմի»: Եւ նայ ասէ. «որդիք, մի խաբիք, աւաքութիւն է. չի կարեմ այլ վարել ի կապանք և ի բանտ մտանել: Այս. Ի. ամ է որ ի նեղութիւն և արքելք եմ կացել, և այլ չեմ բաւական»:

Եւ պատմեցին զայս Դերենի զոր արար հայրն նորա և նայ պատրաստեցաւ և դարձոյց զամենայն զաւրքն իւր ի խադամակերդ բերդ, և ինքն առ սակաւ մարդ՝ գնաց ընդ առաջ Աշոտո իշխանին հարւն իւրոյ: Եւ մինչ դեռ հեռի էր՝ իջաւ ի ձիոյն և ընդացաւ հետևակ ընդ առաջ նորայ, մինչև հասաւ ի սուրբ խաչն, զոր կանկնեաց սուրբ առաքեալն Ուդա եղբայրն Տեառն: Եւ իբրև տեսաւ զհայրն իւր՝ անկաւ առաջի նորայ: Եւ ասէ հայրն. «բեր զքեզ առ իս» և համբուրեաց զնայ և ասէ. «հեծիր, որդեակ Դէրենն, ինչի՞ գուն ես»: Եւ ասէ Դերենն ցհայր իւր. «լուր իշխան, զարմացել եմ, թէ դուք յորժամ լսեցիք զգալն իմ առ ձեզ՝ ձի ուղեցիք և զանոյճառ, զի՞նչ էր այն»: Եւ ասէ իշխանն. «աւաղութիւն է, որդեակ, պատրաստ կալն»: Եւ եկին ի քաղաքն Խանդամաշէն:

Ապայ երեկ այն մարդն, որ ունէր զամենայն տուրսն զոր ուղարկել էր ամիրային, տէրն Սամառոյ: Ուրախ եղև իշխանն և մեծարեց զնոսայ և դարձոյց զնոսայ: Եւ ապայ սկսաւ շինել աշխարհն աւգնութեամբ ամիրային, զի ամենայն Մարաց և Պարսից և Բաբելացոց տիրեաց տունն Սամառու:

17. ՆԱՐԵԿԱՑԻՆ

Նարեկածին խաց կտանէր,
Մշակտիր պիրին չիւրի խրկիցին,
Նստան վխաց հաշակեցին,
Մէղար չիլին քակուռ արին,
Ջնարեկեծին չարբեցին:
Նարեկեծին էկաւ, կանչից մշակտիրուն,

«Էկեք ձի խաց ճաշակեցէք»։
Մշակտիր ասին.—կինա վեար խացին, մենք կ'կանք։
Նարեկեծին զմեզար էպաց,
Տեսաւ լիք քակուռ էրած,
Նարեկեցին քոչիր էզար գետըն,
Չմեզար խաչակնքից.
Մշակտիր էկան տեսան,
Քակուռ խացնի դարցի.
Մշակտիր զարմանք մնացին։
Նարեկածին Թորկից կինաց Ղարզիդու կապան.
Տեսաւ խովիւ մեռի.
Ոչխար մշմուր ի մնացի,
էլաւ, յանտեղ եօթ տարի խովիւութին էրաւ,
Չհախն առից, իտու, հեթմ քիր շախից,
—Հեթիմ շախող Նարեկեծի։
Գեառ, կէլ խըտրուց կէրըծին,
էկին, տեսան, զարմանք մնացին։
Նարէկեծին Թորկից, կինաց Մշու էրկիր,
Կինաց մեկ մարտու նոքարութիւն.
Մարտն էլ շատ անախտում պարտքնտեր էր,
էլաւ գիւր կալ էրաւ,
Պարտընտէրքիր էկան, ժողուան, էկին յանգեղ
էլաւ, Թորկից, մտաւ ուր տուն, էլաց։
Նարէկեծին կանչից էն մարտիրուն
—Խաց կ'տանէ՞ք ձի փարը տեղ։
Էսաց.—Որ տիւ խաց տաս, մենք շատ ալվար ինք,
Նարեկեծին քոչն էզար գետըն,
Շեղքն էլ խաչակնքից,
էլաւ, բիրադի փարը տեղը խաց էտու,
Բիրադի կայիլ էլան, Թորկին, կէացին։
Նարեկեծին էկաւ, կանչից.
—Աղա, խուր ո՞րտեղնի, մինք գխաց խուրինք։
Ըսաց.—դէ, կինա դէն, տիւ էկիր իս վեար
Իմ սրտին մանանեղ կ'ցանիս։
Ըսաց.—Տիւ իլի, տիսի, բիրադի կայիլ էլած, կեացած։
Կնիկ էլաւ, տեսաւ շեղք աւալ շեղքնի.
էլաւ, կանչից.—Մարտ իլի, զաղուն կրի տուն։
էլաւ, կանգնաւ, զաղուն կրիցին,

Ջխուրիր բիրադի լցին։
—Պարտքնատէր պարտքից ազատող Նարեկեծին,
Վեար Նարեկեծուն զարմանք մնացին։
Էլաւ Թորկից, էկաւ մեանչ մէկ գեղի։
Կնաց. տեսաւ նուրափեսէն մեռիր վեար աթոռին,
Խեր, մեր նստած դառնիկն կըլան։
Նարեկածուն հանդեայ յրեղկեցին։
Դեղայ էրաւ մի Ստեղծողին,—
Նուրափեսան յարաւ վեար ուր աթոռին,
Խեր, մեր շատ ուրախացան վեար աստանուրին։
Թորկից էկաւ, խոսաւ Նարեկ,
Մեռել յարուցող սուփ Նարեկածին։
Սիսայ վարդապիտնիր լսան, զարմանք մացին,
Պիրին, ընարեկեծին ջարբիցին.
Զչափուկ լիք ջիւր արին,
Նարեկածուն հադեայ յրեղկեցին։
Նարեկեծին էրկու էղբնիկ մուրթից,
Վարդապտիրուն կանչից,
—Էկեք, ձի խաց ճաշակեցեք։
—Նեա տիւ ի՞նչ էրիր։
—Իս չէր պիտի թ՝օրն էր ուրպաթ,
Հրաման էրեք՝ թըղ էրթան։
—Մինք կարողութին չունինք,
Տիւ էրիր իս, տիւ հրաման էրա՝ թըխ էրթան։
Նարեկեծին քիւչիր էղար գետըն,
Զէղնընէն խաչակնքից
էրկուս թռան, կինացին.
Վարդապիտքեր տեսան, զարմանք մնացին։
Էլաւ, զչափուկ ջիւր էլից,
Վերայ կրակ էտի.
Վեար կրակըն բեամբակն էտի,
Ասաց.—առէք ձի առաջնորթըն հադիա տարեք։
Էլան, առան, կեացին,
Առաջնուրթ էլաւ, տեսաւ՝
Նեա ջիւր զկրակն էր ընցուցիր,
Նեա կրակ զբեմբակն էր ընցուցիր,
Շատ անախուն զարմանք մնացին։—
Սըրփ զանեղան, սըփ Նարեկածին։

18. [ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԿՈՒՄԸ]

Այս ժամանակները տնօրեն Սարգիսը սկսեց երևան բերել իր նենգությունը. նա խորհուրդ տվեց Մոնոմախին և ասաց. «Եթե բարեկամության պատրվակով քեզ մոտ՝ Կոստանդնուպոլիս հրավիրես Գագիկին, ապա խաբեությամբ դու կկարողանաս նրա ձեռքից խլել Անի քաղաքը»: Մոնոմախ կայսրը, լսելով այդ, շատ ուրախացավ. նրա սրտում ծլեց չարության հունդը՝ վերացնել հայոց թագավորությունը: Նա հայոց Գագիկ արքային մեծամեծ երդումներով հաստատված մի նամակ գրեց: Կայսրն այն աստիճան էր ցնորվել, որ որպես միջնորդ և երաշխիք Հայաստան ուղարկեց նույնիսկ Քրիստոսի ավետարանը և Քրիստոսի սուրբ խաչի նշանը. և այդ ճանապարհով էր հայոց թագավորին հրավիրում՝ ի բարեկամություն և ի տեսություն: Գագիկը լսելով այդ մասին, չհամաձայնվեց գնալ խաբեությանն ընդառաջ, քանզի իրեն հայտնի էր հոռոմոց նենգամտությունը: Դրա վրա խարդախ Սարգիսը և ազատներից մեկ ուրիշը, որոնք Մոնոմախին խոսք էին տվել, մեջ ընկան և համոզում էին Գագիկին գնալ, ասելով. «Ով թագավոր, ինչո՞ւ ես վախենում և չես գնում, երբ առկա են այսպիսի երդումներ և միջնորդ՝ ավետարանը և Քրիստոսի Սուրբ նշանը: Դու մեզ վրա մի կասկածիր, մենք պատրաստ ենք քեզ համար զոհվելու»: Նրանք միջնորդ դարձրին տեր Պետրոսին և սարսափելի երդումներ տվեցին, աստծո որդու մարմնի և արյան սուրբ խորհուրդը բերեցին և կենարար արյան մեջ գրիչը թաթախելով՝ հայրապետը և հայոց բոլոր իշխանները երդման գիր շարադրեցին: Դրա վրա հայոց Գագիկ թագավորը գնաց Կոստանդնուպոլիս՝ Մոնոմախ կայսեր մոտ: Բովանդակ քաղաքը դղրդաց, դուրս եկավ հայոց արքա Գագիկին ընդառաջ և թագավորին արժանավայել ձևով, առոք-փառոք տարան կայսեր մոտ: Մոնոմախը մի քանի օր մեծարեց նրան: Այն ժամանակ նենգ աստվածուրացները, ովքեր սոսկալի երդումը հաստատել էին աստծո արյամբ, Անի քաղաքի քառասուն բանալիները ուղարկեցին Մոնոմախ կայսեր, հետն էլ մի նամակ, թե Անի քաղաքը և ողջ Արևելքը քո (սեփականությունը) դարձան: Կայսրը կանչեց Գագիկին, նրա առջև դրեց քաղաքի բանալիներն ու նամակը և ասաց. «Անին և բովանդակ Արևվելքը ինձ տվեցին»: Գագիկը հասկացավ չարանենգ գործի մասին, արտասվալից հառաչեց և ասաց. «Թող Քրիստոսը դատաստան տեսնի իմ և ինձ նենգողների նկատմամբ»: Գագիկն ասաց Մոնոմախին. «Հա-

յոց երկրի տերն ու թագավորը ես եմ, ես քեզ չեմ տալիս Հայաստանը, որովհետև դու ինձ խաբեությամբ Կոստանդնուպոլիս բերեցիր»: Գագիկը այդպես անսասան մնաց երեսուն օր, բայց երբ տեսավ, որ ելք չի գտնում, Անին հոռոմոց հանձնեց. Մոնոմախը դրա դիմաց Գագիկին տվեց Կալոն Պեղատը և Պիզոն, բայց նրան չթողեց գնալ Անի, այլ կարգադրեց, որ նրա ընտանիքը հոռոմոց երկիրը բերեն: Գագիկը մնաց պանդուխտ հունաց անողորմ և չար ժողովրդի մեջ: Սակայն ուր էլ հասներ Գագիկը, նա շատ մեծ փորձանք էր բերում հույների գլխին, ամեն տեսակի խայտառակության մատնում նրանց, քանզի որպես թագավոր ահ էր ներշնչում հոռոմներին: Այնուամենայնիվ, նրա սրտում մեծ սուգ էր իր հայրենի գահի (կորստյան) պատճառով, գահի, որ նենգությամբ հափշտակեց հերձվածողների աստվածուրաց և նենգ ժողովուրդը:

Երբ եկավ հայոց 493 թվականը (10 մարտ 1044—9 մարտ 1045 թ.), Մոնոմախ կայսրը հունաց բովանդակ երկրում զորահավաք կատարեց և հսկայական զորք ուղարկեց Արևելք՝ Անի քաղաքը պահանջելու: Նա հրամանատար նշանակեց Պատակամանոսին, մի ներքինու, որը բազում զորքերով հասավ Անիի դռան առջև: (Մոնոմախն) ուղում էր հզոր և քաջ Գագիկի փոխարեն հայոց երկրի պահապան նշանակած լինել մի կնամարդու և Գագիկին այլևս չթողեց գնալ Արևելք: Անի քաղաքում գտնվող հայ ժողովուրդը մերժեց քաղաքը տալ, նա իր թագավորին էր պահանջում, հայհոյում ու նախատում հոռոմոց ամբողջ ժողովուրդը: Ողջ քաղաքը մի մարդու պես Անիի դարպասից դուրս եկավ պատերազմի և հոռոմոց զորքերին փախուստի մատնեց, ջարդ տվեց ու հալածական արեց, թալանեց նրանց ամբողջ ճամբարը: Հայոց զորքը մեծ հաղթանակով վերադարձավ Անի քաղաք: Խայտառակ եղած հոռոմոց զորքը գնաց իր երկիրը, իսկ Պատակամանոսը ձմեռեց Աղթիքում: Երբ հայոց զորքն իմացավ, որ հայոց թագավորն այլևս Արևելք չպիտի գա, և հայ նախարարների նենգությունը պարզ դարձավ հայոց ողջ երկրին, /Անի/ քաղաքի ամբողջ բնակչությունը հավաքվեց հայոց առաջին թագավորների գերեզմանոցում և այնտեղ ողբաց հայ ժողովրդի անտերունչ դառնալը: Բոլորն աղիողորմ ողբում էին և իրենց թագավորության գահը, իրենց թագավոր Գագիկին, ողբում էին Բագրատունյաց ամբողջ տոհմը և սոսկալի անեծքներ թափում Գագիկին դավողների գլխին: Բայց երբ քաղաքի /բնակչությունը/ ու ողջ զորքը ճարահատյալ համաձայնեցին, այն ժամանակ նամակ գրեցին հոռոմոց զորահրամանատար Պատակամանոսին և, երդումով նրան Անի քաղաքը հրավիրելով, Անի քաղաքը հանձնեցին հոռոմների ձեռքը: Խարխլվեց ու փուլ եկավ Բագրատունյաց տոհմի տերությունը:

19. [ՔԱՋ ԹՈՒՆԻԿ]

Երբ եկավ հայոց 469 թվականը (10 մարտ 1047—8 մարտ 1048 թ.), Տելհարխը բազմաթիվ զորքերով նորից եկավ և հարձակվեց Դվին քաղաքի վրա։ Նա մեծ վնաս և աղետ պատճառեց այդ գավառին, սրի քաշեց ու գերեվարեց տաճկաց ողջ ժողովուրդը. ապա խաղաղությամբ վերադարձավ հունաց երկիրը։

Այս թվականին Թոռնիկ անունով մի հայ պատրիկ, քաջ և հզոր պատերազմող, որ Ադրիանուպոլիս քաղաքից էր, Մոնոմախի դեմ ապստամբություն բարձրացրեց։ Բովանդակ արևմուտքում և գոթերի երկրում զորահավաք անելով, նա հսկայական զորքով եկավ Կոստանդնուպոլսի վրա և քաղաքը գցեց մեծ տագնապի և դժվարին կացության մեջ. կայսրը չհամարձակվեց պատերազմի դուրս գալ։ Կոստանդնուպոլիս քաղաքի բնակչությունը այնքան դզվեց պատերազմից, որ նույնիսկ քար ու կրով շարեց քաղաքի դարպասը։ Թոռնիկը կատաղի պատերազմ տվեց և հիմնահատակ ավերեց քաղաքից դուրս գտնվող Սուրբ Անարծաթից (Հեղեցին) անգամ, սուրբ վկաների եկեղեցու բոլոր քարերը նա օվկիանոսը թափեց։ Մոնոմախ կայսրը և Կոստանդնուպոլիս քաղաքի բոլոր իշխանները ահ ու սարսափի մեջ ընկած վիճակից դուրս գալու ելք չէին գտնում. նրանք ի վիճակի չէին ընդդիմակայել Թոռնիկի քաջությանը։ Պատրիարքը, բոլոր իշխաններն ու կայսրը մտածեցին Թոռնիկի դեմ նենգություն բանեցնել. նրանք ահավոր, բայց կեղծ ու խաբեպատիր երդումներով հաստատված մի գիր շարադրեցին, թե Թոռնիկին կեսար են հռչակում, որ Մոնոմախի մահից հետո Թոռնիկը կլինի կայսր։ Ահա այսպիսի գիր շարադրեցին և իրենց նենգությունը երդումներով հաստատեցին։ Նրանք ասում էին, թե «Գրքերում գտել ենք (գրված), որ Մոնոմախի մահից հետո դու կնստես կայսրության գահին»։ Պատրիարքը, քահանաները և իշխանները գնացին Թոռնիկի մոտ և նրա առաջ կրկնեցին երդումը, որով սեր ու խաղաղություն եղավ։ Նրանք հաշտված Թոռնիկին Կոստանդնուպոլիս բերեցին, բայց մի քանի օր անց, ուրանալով իրենց տված երդումը, ուրանալով միջնորդ կոչած աստծուն (Հոռոմոց ազգը սովոր է երդումով մեջտեղից վերացնել երկրի բոլոր մեծամեծներին), քաջ Թոռնիկի աչքի լույսը խավարեցրին։

20. [ՍԵՆԵՔԵՐԻՄ ԹԱԳԱՎՈՐ]

Երբ հասավ հայոց 465 թվականը (17 մարտ 1016—16 մարտ 1017 թ.), աստվածային ցասումը թափվեց բոլոր քրիստոնյա և սուրբ խաչին երկրպագող ժողովուրդների գլխին, քանզի զարթնեց մ...

շունչ վիշապը՝ իր մահաբեր հրով և հարվածեց սուրբ երրորդությունը պաշտողներին։ Այս թվականին սասանվեցին առաքելական և մարգարեական (վարդապետության) հիմքերը, քանզի թեևավոր օձեր վրա հասան, ցանկանալով տարածվել ողջ քրիստոնյա աշխարհով մեկ։ Սա արյունարբու գաղանների առաջին հանդես գալն էր։ Այդ օրերին անհավատների խուժադուժ ժողովուրդը, որոնք թուրք են կոչվում, արշավելով մտան Հայաստանի Վասպուրական գավառը և սկսեցին անդթաբար սրի քաշել քրիստոնյաներին։

Փորձանքի լուրը հասավ Սենեքերիմ թագավորին։ Նրա ավագ որդի Դավիթը, հավաքելով ազատների զորքը, հարձակվեց թուրքերի ճամբարի վրա։ Նրանց միջև տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ։ Մինչև այն ժամանակ ոչ ոք չէր տեսել թուրքական հեծելազոր. հանդիպելով տեսան նրանց տարօրինակ արտաքինը. նրանք աղեղնավոր էին, կանանց նման հերարձակ։ Այն ժամանակ հայոց զորքը նետերից պաշտպանվելու փորձ չուներ։ Հայ կտրիճների գունդը՝ թրերը պատյանից հանելով, քաջաբար հարձակվեց այլազգիների վրա, կռվի բռնվեց և շատերին կոտորեց, իսկ այլազգիները նետաձգությամբ հայ զինվորներից շատերին խոցելով վիրավորում էին։ Շապուհը, տեսնելով կատարվածը, ասաց Դավթին. «Ով թագավոր, նահանջիր թշնամիների առաջ, որովհետև մեր զորքի մեծ մասը նետահար է եղել։ Գնանք և այլազգիների օգտագործած այսպիսի զենքի դեմ նոր զրահ պատրաստենք՝ նետերից անխոցելի»։ Բայց Դավիթը, նայելով իր բարձր դիրքին, փքվեց ամբարտավանությամբ և ուշադրություն չդարձրեց Շապուհի խոսքերին՝ թողնել պատերազմը և վերադառնալ։ Դրա վրա Շապուհը գազազած, հարձակվեց Դավթի վրա և բռունցքով ուժեղ հարված իջեցրեց նրա թիկունքին, ստիպեց վերադառնալ։ Շապուհը քաջ մարդ էր, հզոր պատերազմող, նա Դավթի դաստիարակն էր, դրա համար էլ նրանից չէր վախենում։ Ահա այսպես նա Դավթին զորքով հանդերձ ետ դարձրեց։ Նրանք գնացին Ոստան քաղաքը և Սենեքերիմ թագավորին պատմեցին այլազգիների արտաքինի մասին։ Սենեքերիմը, լսելով դա, շատ ազդվեց. նա ոչ կերավ, ոչ խմեց, այլ, տրտմությամբ լի մտքերի մեջ խորասուզված, ամբողջ գիշերը անքուն անցկացրեց։ Նա նստեց, քննության ենթարկեց ժամանակագրությունները, աստվածախոս մարգարեների, սուրբ վարդապետների ասույթները և դրքերում գրված գոտավ գինվորների և զորականների հանդես գալու ժամանակի մասին, նրա համար պարզ դարձավ, որ ողջ երկիրը կորստյան ու ավերի է ենթակա։ Նա գրքերում գտավ գրված, թե «Այն ժամանակ փախչելու են արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ և

երկրի վրա հանգիստ չեն գտնելու, որովհետև դաշտերն ու լեռները արյամբ են ողողվելու»։ Ապա և Եսայի (մարգարեի) ասույթը, թե «Նրանց ձիերի սմբակները ամուր են»։

Այն ժամանակ (Սենեքերիմը) որոշեց իր հայրենի երկիրը տալ Հույների վասիլ արքային ու (փոխարենը) ստանալ Սեբաստիան, և անմիջապես նամակ գրեց կայսեր։ Վասիլ Կայսրը տեղեկանալով այդ մասին, գոհ մնաց ու նրան տվեց Սեբաստիան։ Եվ Սենեքերիմը տվեց Վասպուրական երկիրը՝ 72 թեմաբերդ և 4000 գյուղ, բայց վանքերը՝ 115 վանք, չտվեց, այլ պահեց, որպեսզի իր համար աղոթեն։ Այդ բոլորը նա գրավոր հանձնեց Վասիլին։ Վասիլ կայսրը դիմեց Սենեքերիմին, որպեսզի նա Դավթին թագավորական հանդիսավորությամբ իր մոտ ուղարկի։ (Սենեքերիմը) ուղարկեց իր որդուն, նրա հետ նաև ազատների որդիներին և տեր Եղիշե եպիսկոպոսին, գանձերով և զանազան իրերով բարձված բեռնակիր 300 ջորի և 1000 արաբական ձի։ Ահա այսպիսի հանդիսավորությամբ Դավիթը մուտք գործեց Կոստանդնուպոլիս։ Քաղաքը դղրդաց, բոլորը դուրս եկան նրան ընդառաջ, զարդարեցին փողոցներն ու պալատները, և (Դավթի) վրա բազում դրամ ցրիվ տվեցին։ Վասիլ կայսրը, տեսնելով Դավթին, շատ ուրախացավ, տարավ Սուրբ Սոֆիա (տաճարը) և որդեգրեց նրան. (բոլորը) պատվում էին (Դավթին) որպես կայսերորդի։ Կայսրը, տալով նրան բազում նվերներ, ուղարկեց հոր մոտ, որին տվեց Սեբաստիան, բազմաթիվ գավառներով հանդերձ։ Սենեքերիմը իր ամբողջ ընտանիքով և ժողովրդով ելավ եկավ Սեբաստիա։ Հայոց երկիրը թագավորներից և իշխաններից դատարկվեց։

21. [ՎԱՍԱԿ ՍՊԱՐԱՊԵՏ]

Այդ օրերին հայոց մեծ իշխան Ապիրատը՝ Հասանի որդին, անցյալում Աշոտի կողմն անցած լինելու համար երկյուղելով Հովհաննես թագավորից, ապստամբություն է բարձրացնում և տասներկու հազար ձիավորներով փախչելով նրանից, գնում է Դվին քաղաքը՝ պարսից Ապուսուար ղորավարի մոտ, և Ապուսուարը բազում օրեր մեծարում է նրան։ (Բայց) այն ժամանակ Ապուսուարի մոտ են գալիս որոշ ղրպարտիչներ և ասում, թե «Այսպիսի քաջ և հզոր մի մարդ, որ մեծ դորքով քեզ մոտ է եկել, քեզ էլ, տաճկաց ողջ երկիրն էլ կկործանի»։ Դրա վրա ամիրան, ոխ կապելով իր սրտում, մյուս ղորականներից գաղտնի Ապիրատին բարեկամական զրույցի է հրավիրում և ծածուկ սպանում այս քաջ, հզոր և բովանդակ Հայաստանում հռչակված մարդուն։

Իսկ Սարի անունով մի իշխան, որը Ապիրատ մեծ իշխանի զորավարն էր, վերցնելով նրա կնոջն ու որդիներին և հեծյալ զորքը, գնում է Անի քաղաք: Հովհաննես Թոգավորը անչափ շատ սգաց հայոց Ապիրատ իշխանի անարդար կորուստը, իսկ նրա Ապուլջահապ, Վասակ, Սարե որդիներին և բոլոր ընկերներին նա պարգևեց գավառներ և պաշտոններ:

Այս ժամանակ դևլմիկների թագավորը, զորահավաք անելով, անսպասելիորեն գալիս հասնում է հայոց Նիգ գավառը, Բջնի ամրոցի մոտ, ուր մեծ ուրախությամբ հանգստանում էր հայոց սպարապետ Վասակը իր սիրելի որդի Գրիգորի և անվանի այլ ազատների հետ: Վասակը նայելով քարքարոտ ճանապարհին, տեսավ, որ հետիոտն դնացողներից մեկը շտապում է, ասաց. «Այս մարդը բոթաբեր է»: Մարդը հասնելով Բջնի բերդի դարպասին, աղաղակեց և ասաց. «Ողջ Նիգ գավառը գրավվել է»: Անմիջապես առյուծի պես մռնչաց Վասակ քաջ զորավարը և, բարձրանալով՝ հագավ իր զրահապատ զգեստները: Նրան հետևեցին նաև յոթ ազատներ և դիպվածով այնտեղ գտնվող մյուս հեծյալները: Ազատները շարվեցին Վասակի եռևից: Եվ սլացավ քաջ և անվանի Փիլիպեն, նրա հետ և Գորգն որ և Ջորավանել և ուրիշներ. նրանք քաջ մարդիկ էին, պատերազմներում՝ հաղթող: Վասակը չէր կարողանում սպասել մինչև զորքը գումարվի. նա իր հրամանատարության ներքո հինգ հազար հոգի ուներ: Ապավինելով իր ուժին, նա հինգ հարյուր հոգով առյուծի պես առաջ նետվեց դեպի Նիգ գավառը, իր ընտանիքն ու Բջնի ամրոցը հանձնելով իր Գրիգոր որդուն: Վասակը հասավ մի վանք, որտեղ ինքը և ամբողջ զորքը հաղորդություն ստացան և անկեղծորեն խոստովանեցին Հիսուս Քրիստոսի հանդեպ գործած իրենց մեղքերը: Ճանապարհին նրանք հանդիպեցին մի գյուղի և ականատես եղան, թե ինչպես այլազգիները գլխովին կոտորել էին գյուղի (բնակչությանը), ինչպես նրանք շրջապատել էին եկեղեցին և անխնա սրախողխող էին անում ներսում ապաստանած հավատացյալներին: Քաջ Վասակը, տեսնելով դա, առյուծի պես մռնչաց և հարձակվեց այլազգիների զորքի վրա և կոտորեց երեք հարյուր հոգի. մնացածները, փախուստի դիմելով՝ միացան այլազգիների (հիմնական) զորաբանակին: Հայոց մեծաթիվ բանակը հարձակվեց այլազգիների զորքի վրա: Տեսնելով, որ այլազգիների զորքը անթիվ-անհամար է, բոլորը միասին, աչքի առջև ունենալով մահը, սրտապնդվեցին պատերազմի և, ինչպես գայլերը այծերի մեջ, և արծիվները՝ թռչունների երամների, ահա այդպես խիզախորեն դիմեցին պատերազմի և շատերին խողխողելով դիաթավալ գետին տապալեցին: Այդ միջոցին այլազգի-

նների զորքի միջից դուրս եկավ մի քաջ մենամարտիկ՝ սևամորթ խափշիկ, որին Յոթ Գայլ էին անվանում, որովհետև այն, ինչ յոթ գայլ կարող էին անել ոչխարի հոտի մեջ, սա ավելին էր անում պատերազմի դաշտում։

Ահա գալիս է խափշիկը սև ամպի նման որոտալով. նրա զրահը բոցի պես փայլում էր. նա կանչում և հանվանեի փնտրում էր Վասակին։ Նայեց քաջ Եմրանը և տեսավ նրան, որ գալիս էր ինչպես մրրկյալ լեռ. դիմելով Վասակին, ասաց. «Ահա անպարտելի և քաջ մի մարդ, որի նմանը երկրի վրա դեռ չի ծնվել»։ Վասակը պատասխանեց. «Ով դու առյուծասիրտ և քաջդ Եմրան ինչո՞ւ վախեցար նրա տեսքից. ահա, ես դուրս եմ գալիս նրա դեմ և նրան կտամ այն նույն պարգևը. ինչ Դավիթը տվեց Աստծուն անարգող Գողիաթին»։ Հենց այդ պահին վրա խուժեց այդ մարդ-գազանը և փորձեց քաջ Վասակին իր նիզակի ծայրին առնել։ Վասակը, փութով անցնելով նրա նիզակի տակից, պողովատիկ թրով հարվածում է նրա սաղավարտին և քաջ խափշիկին երկուսի բաժանելով, մարմնի մասերը փռում գետնին։ Դրա վրա (հայերը) սրտապնդվեցին կռվելու և կատարելու անհնարինը։ Մարտի թեժ պահին, երբ սուսերներից խոցվածները շատացան, քաջ Եմրանը կորավ. երկարատև և դժվարին մարտում ազատների խմբավորումները ցիրուցան եղան և մեկը մյուսի մահը չկարողացավ տեսնել։

Մնալով միայնակ, քաջ Վասակը գազազած առյուծի նման մըխրճվեց այլազգիների զորքի մեջ և (ճեղքելով) դուրս եկավ։ Կատաղի մարտից հոգնած, նա գնաց բարձրացավ Սերկևիլի կոչվող լեռը և պատերազմի տանջանքներից հանգստանում էր ժայռերի հովին։ Փախստական գյուղացիները տեսնում են նրան և ոճրագործ Կայենի նման մեկը, գտնելով նրան վշտահար քուն մտած, ուժգին հարված հասցնելով՝ ժայռից ցած է գլորում։ Ահա այսպես մեռավ քաջ Վասակ Պահլավունին։

22. [ԳԱԳԻԿ ԵՎ ԹՈՐՈՍ]

Ա. [Գագիկը սպանում է Մարկոսին]

Շահնշահ Գագիկը ելավ գնաց և հասավ Գամիրքի Կեսարիա քաղաքը։ Նա դեռ վաղուց շատ էր զայրացած հույների դեմ, դրա համար ցասումնալից հարձակվեց Կեսարիայի մետրոպոլիտի վրա, որի անունը Մարկոս էր, քանզի այս չար ու պիղծ հերետիկոսը (հայերին) շատ էր անարգում։ Անօրենն այն աստիճան էր լրբացել, որ նույնիսկ իր շան անունը Արմեն էր դրել։ Հայոց արքա Գագիկը վաղօրոք լսել էր այդ

բոլորի մասին և շատ գայրացել, բայց լինելով հոռոմոց շրջապատում, ոչինչ չէր կարողանում անել: Մետրոպոլիտը համայն հունաց երկրում անուն էր հանել, նա մեծ էր և ահարկու, բայց նա շատ էր անարգում մեր հայ ազգը և բոլոր շներին Արմեն էր անվանում: Սա, երբ իմացավ, որ կայսրը ուզում է հոռոմ մկրտել (հայոց) թագավորազուններին, աննկարագրելի վորձանք բերեց հայոց գլխին: Գագիկը որտեղ որ իջևաններ, հայոց բոլոր զինվորներին հրաման էր տալիս խայտառակել հոռոմոց երևելի կանանց: Նա նրանց անարգում էր, քանզի որոշել էր այլևս ոտք չդնել Կոստանդնուպոլիս, այլ գնալ պարսից սուլթան Աբասլանի մոտ և տիրանալ հայոց երկրի թագավորական գահին: Սուլթանը բազմիցս էր հրավիրել Գագիկին, բայց քրիստոնեական հավատքը թույլ չէր տալիս գնալ: Գագիկը երբ մոտեցավ մետրոպոլիտին, ցանկություն հայտնեց նրա մոտ իջևանել: Գագիկի ներկայացուցիչները գնացին, և, դիմելով հերետիկոս Մարկոսին, ասացին. «Հայոց Գագիկ արքան ուզում է այսօր քեզ մոտ իջևանել»: Կիր Մարկոսը, լսելով այդ, ուրախացավ և հրաման տվեց իր ամբողջ տունը զարդարել, կամ-ակամ, քահանաներով հանդերձ, գնաց Գագիկին ընդառաջ և մեծ պատիվներով նրան բերեց տեղավորեց իր տանը: Մարկոսը մեծ ճաշկերույթ տվեց, բայց Գագիկը ամբողջ օրը շատ էր գայրացած: Երբ գինու ազդեցության տակ սկսեց ուրախանալ, Գագիկն ասաց Կիր Մարկոսին. «Լսել եմ, որ դու մի զորեղ շուն ունես, մենք ուզում ենք նրան տեսնել»: Մարկոսը գլխի ընկավ, թե ինչի համար է նա այդ բանը կամենում և չլսելու տվեց: Երբ Գագիկն իր ասածը կրկնեց, կանչեցին շանը, բայց նա չէր գալիս, որովհետև չէին համարձակվում Արմեն անունով կանչել: Գագիկն ասաց. «Անունը տվեք, որ գա»: Այն ժամանակ Մարկոսը գինու ազդեցության տակ շանը կանչեց և ասաց. «Արմեն, Արմեն»: Շունը եկավ. նա առյուծի էր նման: Գագիկը, տեսնելով նրան, ասաց. «Այս շան անունն Արմե՞ն է»: Մարկոսը շատ ամաչեց և ասաց. «Քաջ է, դրա համար է, որ Արմեն ենք ասում նրան»: Գագիկը պատասխանեց. «Հիմի կտեսնենք ով է քաջ, Արմե՞նը, թե՞ հոռոմը»: Նրանք պատրաստել էին մի պարկ, և Գագիկի ազդանշանով թիկնապահները շրջապատեցին շանը և մեծ դժվարությամբ գցեցին պարկի մեջ: Կիր Մարկոսը, կարծելով, որ ուզում են շանը իրենց հետ տանել, գայրացավ և սկսեց գոռալ սպասավորների վրա: Գագիկը ժպտաց, ձեռքով նշան արեց սպասավորներին, որոնք շրջապատեցին անօրեն Մարկոսին և բռնությամբ ու քաշքշելով պարկի մեջ գցեցին, Արմեն կոչեցյալի մոտ: Գագիկն ասաց. «Տեսնենք ով է ուժեղ և քաջ. հոռոմ մետրոպոլի՞տը, թե՞ նրա կողմից Արմեն կոչված շունը»: Գագիկը հրաման տվեց սաստիկ ծեծել շանը, որը կատա-

ղած հարձակվեց Մարկոսի վրա և ատամներով բզկտեց նրան։ Օրվա մեծ մասը այդպես ծեծում էին շանը, իսկ նա գաղաղած թափում էր պիղծ հերետիկոս Մարկոսի արյունը։ Մարկոսն ուժեղ ու աղիողորմ աղաղակում էր։ Ահա, այսպիսի ահավոր պատերազմ էր գնում պարկի մեջ և ատամների կրճտոց ու սրտի հառաչ էր դուրս գալիս պարկից, այսպիսի տանջանքներից սատակեց չար և պիղծ անարգիչը, դառնալով շան ճարակ։ Այնուհետև Գագիկը հրամայեց ավարի մատնել (Մարկոսի) տունը. նա մեծահարուստ էր և շատ անվանի։ Հափշտակելով ոսկու և արծաթի անհամար գանձեր, նրա վեց հազար ոչխարը, քառասուն լուծ գոմեշը, քսան լուծ եզը, Գագիկը ձիերի և ջորիների մեծ երամակով վերադարձավ իր տունը։ Ահա, Գագիկի հոռոմոց մեջ կատարածը, մի բան, որ ոչ նախկինում, ոչ էլ հետագայում որևէ մեկը համարձակվեց անել։ Նա այլևս ոտք չդրեց Կոստանդնուպոլիս, ոչ էլ ուշադրություն դարձրեց հոռոմոց կոչին։

Բ. [Գագիկի մահը]

Նույն թվականին սպանվեց Գագիկ շահնշահը՝ Աշոտի որդին, Գագիկի որդու, Սմբատի որդու, Երկաթի որդու, Բագրատունիների տոհմից։ Այս ժամանակ հայոց Գագիկ արքան, զինելով իր զորագունդը, գնացել իջել էր Տարսոն քաղաքը, վասպուրականցի հայ քաջ իշխան Ապլղարիպի՝ Խուլ Խաչիկի որդի Հասանի որդու մոտ։ Գագիկը բարեկամական նպատակներով գնացել էր Ապլղարիպի մոտ (վերջինս Գագիկին կանչել էր խնամության նպատակով)։ Բայց ինչ-ինչ պատճառներով խնամիության գործը գլուխ չեկավ, և Գագիկը առյուծի պես մռնչալով վերադարձավ։ Նա մեծ, հզոր և քաջ մարդ էր։ Նա ձերբակալեց գավառի բոլոր իշխաններին և շղթայակապ իր առջևից էր քաշում։ Հազար հոգով նա եկավ Արժախասի դաշտը, Կիզիստրա կոչվող բերդը, որը պատկանում էր երեք հոռոմ իշխան եղբայրների՝ Մանդալեի որդիներին։ Գագիկը, իր զինվորներին ճանապարհի մյուս կողմում թողնելով, երեք հոգով գնաց ուղիղ դեպի նրանց, ովքեր նախապատրաստություն էին տեսել և հիսուն հոգի տեղադրել Գագիկին դարանակալելու։ Երբ Գագիկը մոտեցավ բերդին, երեք եղբայրներն եկան և երեսնիվայր երկրպագեցին նրան։ Գագիկը, տեսնելով նրանց, կանչեց ողջագուրվելու։ Երեք եղբայրները մոտենալով նրան, բոլորը միասին բռնեցին Գագիկի վզից և ձիուց ցած գլորեցին. Գագիկի հետ եկող մարդիկ թողեցին փախան։ Այդ միջոցին դարան մտածները դուրս եկան և Գագիկին բռնեցին։ (Գագիկի) զինվորները, լսելով կատա-

վածի մասին, ցրվեցին։ Գագիկին տարան բերդ։ Ութ օր անց հայոց բովանդակ երկիրը՝ Աբասի որդի Գագիկը, Սենեքերիմի ողջ տոհմը՝ Ատոմն ու Ապուսահլը, և հայոց մյուս բոլոր իշխանները ելան բերդի դեմ։ Մի քանի օր կռիվ մղեցին, բայց ոչինչ չկարողացան անել, որովհետև բերդը շատ անառիկ էր։ Գագիկին ձերբակալողները չէին համարձակվում նրան ազատ արձակել, որովհետև շատ էին վախենում նրանից։ Այդ միջոցին անօրեն Փիլարտոսը, դիմելով նրանց, ասաց. «Դուք ինչպե՞ս հանդգնեցիք նման բան գործել թագավոր մարդու նկատմամբ։ Երկու դեպքում էլ՝ արձակելու կամ չարձակելու, դուք ձեր գլխին փորձանք կբերեք»։ Այն ժամանակ աստվածասպան հոռոմները աղեղի լարով խեղդամահ արեցին հայոց թագավորին և նրա դիակը մեկ օր պարսպից կախած թողեցին, որից հետո հանեցին և բերդից դուրս թաղեցին։ Վեց ամիս անց (Գագիկի) քաղաքից Բանիկ անունով մի մարդ եկավ, որը Գագիկ թագավորի մարմինը գիշերով, գաղտնաբար հանեց և տարավ նրա քաղաքը, ազգականների մոտ։ Ողջ հայ ժողովուրդը մեծապես ողբաց նրան։ (Գագիկին) թաղեցին իր Պիղու վանքում։ Մնաց իր ավագ որդի Հովհաննեսը։ Ահա, այդ օրվանից վերացավ Բագրատունիների հայոց թագավորությունը, իրականացավ հայոց կաթողիկոս սուրբ Ներսեսի մարգարեությունը, թե՝ «Կբնաջնջվի թագավորությունը հայոց երկրից»։

Գ. [Թորոսն առնում է Գագիկի մահվան վրեժը]

Այդ տարին աստված մի հզոր մարդու՝ հայոց մեծ իշխան Թորոսի՝ Ռուբենի որդի Կոստանդնի որդու ձեռքով վրեժխնդիր եղավ Գագիկ շահնշահի՝ Աշոտ Բագրատունու որդու անմեղ արյան համար։ Թորոսի օրոք հայոց Գագիկ արքային սպանողները բնակվում էին Կոնդոռոսկավիս կոչվող շատ ամուր և բարձր, ամեն կողմից անառիկ բերդում։ Մանդալեի որդիները, երեք եղբայրներ, դեռ կենդանի էին, որոնցից մեկը, Թորոսի հետ ունեցած խնամիական կապերի պատճառով, մտերմական հարաբերությունների մեջ էր նրա հետ. նրանք խոստացել էին բերդը Թորոսին հանձնել, քանի որ այն սահմանակից էր Թորոսի գավառին՝ Ձկնջուր կոչվող և Դամիրքին լեռնահայաց վայրում։ Այդ տարին հայոց իշխանը փոքրաթիվ զորքով բարեկամական նպատակով ելավ գնաց նրանց մոտ։ Իջնելով այդ սահմանները, նրանց գրություն ուղարկեց՝ տեղեկացնելով իր գալստյան մասին։ (Գագիկին) սպանողներից մեկը նվերներով եկավ Թորոսի մոտ. վերջինս պատվեց նրան։ Ժամանողը, որպես փոխադարձ նվեր, Թորոսին տվեց մի թանկարժեք դանակ և մի հագուստ։ Նրանք կերան ու խմեցին։ Թորոսն ասաց նը-

ցան. «Դուք ինձ բերդն եք խոստացել, տվեք այն և իմ համայն տիրույթներից որ մեկում ուզեք հաստատվեցեք»: Բայց նա ուրացավ անցյալում տված խոստումը և ասաց հայոց իշխանին. «Մենք չենք կարող բերդը հանձնել, քանզի այն մեր հայրենական (կալվածքն) է և տոհմի բնակատեղին»: Թորոսը հասկացավ, որ խաբել են իրեն և, վերադարձնելով ստացած նվերները, զայրացած ասաց. «Ելիր գնա քո տունը, բայց այսուհետև զգուշացեք ինձանից»: Աստվածասպանն ելավ գնաց իր տունը: Թորոսն էլ նրա ներկայությամբ ճամփա ընկավ դեպի իր տունը, բայց երբ սպանողը չքվեց, նա իր զինվորներով գիշերը մոտեցավ բերդին. հետևակազորին դարան դրեց, իսկ ինքը՝ հեծյալներով հեռացավ դեպի ագարակները, մտադիր լինելով ասպատակել շրջանը: Առավոտյան բերդաբնակ ժողովուրդը բերդից դուրս եկավ, բայց, տեսնելով դարան մտած (զինվորներին), փախուստի դիմեց: Թորոսի զինվորները սկսեցին բարձրանալ բերդ տանող զառիվերով: Բերդաբնակ ժողովուրդը, տեսնելով նրանց, փակեց բերդի դուռը, իսկ նրանք, տիրանալով դռանը դրսից, կռիվ սկսեցին և բերդի ձեղունի վրա կրակ գցեցին. այն սաստիկ բորբոքվեց: (Բերդի) բնակիչները, տեսնելով դա, բացեցին մյուս կողմի դուռը և փախան: Թորոսի զինվորները գրավեցին բերդը, բռնեցին փախստականներին, ապա տեղի ունեցածի մասին գնացին զեկուցեցին Թորոսին: Նա շատ զարմացավ և ուրախացած եկավ Կոնդռոսկավիս բերդը: Ներս մտնելով, նա ստուգեց նրանց գանձատունը, քանզի ողջ գավառի ոսկին և արծաթը այնտեղ էր պահվում. Թորոսն ասաց Մանդալեի որդիներին. «Ինձ բերեք հայոց թագավոր Գագիկի թուրը և հանդերձները»: Նրանք բերեցին: Թորոսը, տեսնելով դրանք, դառնագին արտասվեց: Լաց եղան և բոլոր զինվորները: Թորոսն այնուհետև հրամայեց ցույց տալ իրենց գանձերը, բայց նրանք համառությամբ ցույց չէին տալիս. դրա վրա սկսեցին նրանց խոշտանգել: Եղբայրներից մեկը պահապան զինվորներին խնդրեց իրեն տանեն քարաժայռը՝ ջուր թափելու: Նրան տարան, բայց նա իրեն բարձր ժայռից ցած գցեց և չարաչար սատակեց: Մյուս եղբայրն սկսեց սպառնալ Թորոսին, լրբորեն ասելով. «Դու հայ մարդ ես, իսկ մենք՝ հոռոմ իշխաններ. դու հոռոմոց կայսեր ի՞նչ պատասխան պիտի տաս, որ դատաստան ես տեսնում հոռոմ մարդու հետ»: Թորոսը գազազեց, նրա երեսի գույնը փոխվեց: Նա երկաթե մի մահակ վերցրեց և, գազանի պես նրա վրա հարձակվելով, ասաց. «Ո՞վ էիք դուք, որ հզոր մարդուն, հայոց օծյալ թագավորին սպանեցիք, կամ ի՞նչ պատասխան տվեցիք հայ ժողովրդին», և լալախառն սկսեց անխնա հարվածել նրան, մինչև որ դառն մահվամբ սատակ[illegible]
հետև նա գոհություն հայտնեց աստծուն, որ իրեն արժան[illegible]

յոց արքա Գագիկի արյան վրեժն առնելու. Թորոսի հոր հայրը՝ Ռուբենը, Գագիկի զինվորներից էր: Այնուհետև նա նրանց ողջ տունը տակնուվրա արեց և բազմաթիվ գանձեր, դիպակներ, արծաթե հրսկայական խաչեր, ոսկեձույլ և արծաթե (սրբա)պատկերներ առնելով գնաց վահկա (բերդը): Նա (Մանդալյան) երրորդ եղբորը իր հետ տարավ, իսկ (նրանց) բերդի պահպանության համար կայազոր հաստատեց:

23. [ԻՇԽԱՆ ԽԱՉԻԿ]

... վասպուրական գավառում սպանվեցին հայոց մեծ իշխան Խաչիկը և նրա մանկահասակ որդին՝ Իշխանը: Հերի և Սալմաստի (այլազգիները), հավաքվելով, ավարի էին առել Թոռնևան գավառը: Այդ բանի լուրը հասել էր Խաչիկին, թե այլազգիների զորքը մտավ քո գավառը: Նա քաջ մարդ էր, պատերազմներում՝ հաղթող, առյուծի ծնունդ, սակայն ծերացել էր և թողել պատերազմական գործը: Նա հառաչում էր, ափսոսում, որ իր որդիներ քաջ Հասանն ու ճնճղուկը զորքերով հանդերձ Միքայել կայսեր հետ արևմուտք էին գնացել: Դրա վրա հայոց իշխան Խաչիկը չկարողացավ համբերել և յոթանասուն հոգով հարձակվեց այլազգիների վրա, իսկ Իշխան անունով որդուն, այն պատճառով, որ տասնհինգամյա մի տղա էր, նա փակեց տանը: Երբ Խաչիկը հասավ այլազգիներին, տեսավ, որ (նրանք) մեծաթիվ են, բայց կոչ անելով իր մարտիկներին, կռվի բռնվեց, ուժգին հարվածեց նրանց և գետին տապալեց: Այդ պահին նա տեսավ, որ իր տղան, փակված տեղից փախչելով, պատերազմի է գալիս: Խաչիկը սրտակոտոր եղավ, որովհետև տղան դեռ փոքր էր և գեղեցիկ: Ահա Իշխանը իբրև առյուծի կորյուն եկավ և մեծ ավյունով մտավ մարտի մեջ: Խաչիկը նրան բռնեց և տուն ուղարկեց, բայց նա նորից փախավ և դիմեց պատերազմի, բայց լինելով անփորձ, անզգույշ վարվեց: Երբ այլազգիներն իմացան, որ նա քաջ (Խաչիկի) որդին է, նրան շրջապատեցին, բռնեցին և սպանեցին: Խաչիկի մեջքը կոտրվեց՝ տեսնելով այդ բանը, սուրը ձեռքից ընկավ: Այլազգիների զինվորները տեսնելով դա, հարձակվեցին, ձերբակալեցին նրան և սպանեցին. մնացածները, փախուստի դիմելով, գնացին իրենց տները: Մի քանի օր հետո Արևմուտքից ժամանեցին Խաչիկի որդիները: Լսելով իրենց հոր և մանկահասակ եղբոր մահվան մասին, սև հագան և աղիողորմ ողբացին: Այն ժամանակ Հասանը կանչեց մի քուրդ ռայիս, որ իր դրացին էր, նրան տվեց հազար դահեկան և ասաց. «Մտիր Հեր և Սալմաստ և ասա, թե Թոռնևանում և բովանդակ շրջանում մարդ չի մնացել, ի՞նչ եք պա-

բաց նստել։ (Այնտեղ) ոչխարների բազմաթիվ հոտեր և ծառաներ (անտերունչ) թափառում են»։ Ռայիսն այդպես էլ արեց։ Հավաքեց շուրջ տասնհինգ հազար այլազգի, որոնք եկան մտան նշված վայրը։ Ռայիսը այդ բանն իմացրեց Հասանին և Ճնճղուկին։ Հասանը հավաքեց իր հինգ հազար զինվորներին և սաստիկ կատաղությամբ, խոցված գազանի պես հարձակվեց անհավատների ճամբարի վրա։ Հասանն արտասվալից ձայն տվեց այլազգիներին և ասաց. «Որտե՞ղ է իմ հոր Խաչիկին սպանողը, թող առաջ գա»։ Դուրս եկավ մի սևամորթ, հզոր այլազգի և ձայն տալով ասաց. «Ես եմ առյուծ Խաչիկին սպանողը, ահա ինձ մոտ են նրա պատերազմական ձին, նրա զգեստը, նրա դրոշակը և թուրը»։ (Խաչիկի) որդի Հասանը, տեսնելով դրանք, լաց եղավ. պատյանից քաշելով թուրը, նա առյուծի պես խուժեց այլազգիների մեջ և, հարվածելով նրան, երկու կտոր արեց, գետին տապալեց։ Առնելով (Խաչիկի) ձին և դրոշակը, նա անվնաս դուրս եկավ։ Հասանի նման գոչեց և Ճնճղուկը ու ասաց. «Ո՞վ է իմ Իշխան անուն եղբորս սպանողը, թող ասպարեզ գա տեսնեմ նրան»։ Դուրս եկավ մի քաջ պարսիկ, որ ձայն տալով ասաց. «Ես եմ Իշխանին սպանողը, ահա նրա սպիտակ ձին, նրա դրոշակը և թուրը»։ Ճնճղուկը կայծակի պես նրա վրա սլացավ, սատկացրեց նրան և, առնելով ձին և դրոշակը, եկավ Հասանի մոտ։ Հասանը ձայն տվեց զինվորներին և, արիաբար մարտ տալով, այլազգիներին փախուստի մատնեց։ Նրանցից չորս հազար հոգու կոտորեցին, որից հետո խաղաղությամբ ու մեծ ուրախությամբ վերադարձան և փոխեցին իրենց սգավորի զգեստները։

24. ԱԻԱ՛Խ, ԸԶԼԷՈՆՆ ԱՍԵՄ

Աւա՛խ, ըզԼէոնն ասեմ,
Աւա՛խ, ըզԼէոնն ասեմ,
Որ տաճկաց ձեռք ընկել նա գերի։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամե՛ն, տեր Յիսուս։

Սուլթան ի մետան ելել,
Սուլթան ի մետան ելել,
Իր ոսկի գունտն կու խաղայ։
Իմ լոյս, ու սուրբ կոյս,

Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամէ՛ն, տեր Յիսուս։

Խաղաց, իր ընկերն երետ,
Խաղաց, իր ընկերն երետ.
— Առ խաղայ ու տուր տատայիդ
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս։

— Խաղայ, խաղըն քեզ վայել,
Խաղայ, խաղըն քեզ վայել,
Ես ու իմ տատան քեզ գերի։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս։

— Լէոն, դու տաճիկ լինիս,
Լէոն, դու տաճիկ լինիս։
Ջքեզ անեմ տաճկաց թագավոր։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս։

Լէոն ի բերթին նստել,
Լէոն ի բերթին նստել,
Դրսաըրակն՝ աչիշ ու կուլայ։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս։

— Քերվան, որ ի Սիս կերթայ,
Քերվան, որ ի Սիս կերթայ,
Դուք ղապար տանիք պապայիս։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս։

Ոնց որ պապան ալ զայն լըսեց,
Ոնց որ պապան ալ զայն լըսեց.
Շատ հեծել քաշեց երամով։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս։

Եկաւ, ի սուլթան ելաւ,
Եկաւ, ի սուլթան ելաւ.
Շատ գետեր էհան յարենէ։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս։

Իյաւ զիր Լէոն որդին,
Իյաւ զիր Լէոն որդին
Ու հասաւ սըրտին մուրատին։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս։

25. [ԼԵՎՈՆԻ ԵՐԳԸ]

Իսկ թագաւորն Հայոց իբրև գիտաց զգալ Թուրքին ՝ի վերայ երկրի իւրոյ. յայնժամ ժողովեաց զօրս իւր և ետ ՝ի ձեռս իւր թագաժառանգ որդոց իւրոց պարոն Լևոնի և Թորոսին. և ինքն գնաց սակաւ մի զօրօք առ տաթարն, որ կայր իջեալ ՝ի մէջ Աբլստանին և կոկոսնոց. և անդյամեալ աւուրս ինչ՝ ոչ գիտելով զերկպառակութիւն զօրաց իւրոց. և մինչ հոգաց առ գլխաւորս Տաթարին գալ և օգնել զօրաց և ինքն երեկ ը աւուրս յառաջ, ապա լսեաց զգալն Թուրքին և զբեկումն զօրացն երկմտից, որ ետուն զթագաժառանգ որդիսն իւր ՝ի ձեռս անօրէն գայլոցն, և ինքեանք փախեան յամուրս իւրեանց. զի զգեղեցիկ որդի թագաւորին զպարսն Թորոս պատերազմին սրախողխող արարին յիւրում երիվարին, և պարսն Լևոն ըմբռնեալ բազում զօրօք Թուրքացն և տարան ծառայ ՝ի Մսըր և զայս լուեալ մեծախելք թագաւորն Հեթում

բեկաւ սիրտն ՚ի կարի և յանհնարին տրտմութիւնէ, որ յանկարծահաս դիպեցաւ և ոչ կարէր կանգնել զսիրտ իւր, մինչ եկն ՚ի սուրբ և ՚ի գեղահռչակ ուխտն միանձնանց ՚ի յԱկանց անապատն. և աստ մխիթարեալ սակաւ մի եղեն եղբարց սուրբ ուխտիս կեցեալ աւուրս ինչ մինչ նլաւ Թուրքն յերկրէս. զի անօրէնն զօրք Թուրքին զամէն պատուիրեալսըն ՚ի սուլտանէն արարին. և զՍիս քաղաքն այրեցին՝ որ էր նստոց Թագաւորին հայոց. և զգովելի մեծ եկեղեցին՝ որ ՚ի մէջ որսայն փայտ ձգեալ այրեցին, և զշիրիմս Թուգաւորաց քակեցին. և զբազումս կոտորեցին ՚ի քրիստոնէից և զբազումս գերեցին ՚ի յերկրէն և ՚ի գեղորէից. և ապա յետ աւուրց ինչ գնաց զօրք Թուրքին բաղում գանձիւք և աւարաւ յաշխարհն իւրեանց, Թողեալ զաշխարհս Հայոց կիսաւէր: Իսկ որք առին զպարսն Լևոն և գիտացին Թէ սոսկ որդին է Թագաւորին, տարան ուրախութեամբ առ սուլտանն. և տեսեալ սուլտանն ուրախացաւ, բայց ընդ պարոն Թորոսի սպանումն յոյժ տրտմեցաւ. բարկացաւ սպանողացն, և սպանողքն ասացին՝ Թէ մեք ոչ գիտացաք, Թէ որդի Թագաւորի է. զի զբազումս սպան ՚ի մեզանէ, և զբազումս խոցեաց, ապա յետոյ մեք չան ՚ի վերայ եղեալ՝ սպանաք զնա: Յետ այսորիկ խօսեցաւ սուլտանն ընդ Լևոնի և ասէ. «քո հայրն ինձ ծառայ ասէր, և ոչ առնէր սէր. ծառայ այժմ ես եմ Թէ դու»: Զայս և այլ բազում բանս խրախտանօք խօսէր ընդ Թագաւորորդւոյն. և ապա յետոյ յոյժ մեծարանօք պատուեալ և սիրեալ և ասացեալ բանս մխիթարականս չվախել ոչինչ, այլ կալ ուրախութեամբ աւուրս ինչ, և ապա դարձուցանել զնա առ հայրն իւր՝ Թագաւորն հայոց: Եւ զայս ասացեալ Ֆնտուխտար սուլտանին առաքեաց զպարոն Լևոնի ՚ի Մսըր: Իսկ բարեպաշտ Թագաւորն Հեթում առ ոչինչ համարեալ զայս ամ անցս աղետից առ ժամանակ մի վասն նենգաբարու և երկմիտ իշխանացն, շահելով զբարս նոցա ուրախութեամբ սրտի. առ իւր ունելով զայլ մանր ուստերս և զդստերսն՝ մխիթարիւր ՚ի նոցանէ ստա մխիթարութեամբ վասն շահելոյ զբարս իշխանացն, և գիտենալոյ զխորամանգ միտս նոցա սիրով. զի որ գէր գիր յիշխանացն վասն պակասութեան որդւոցն և սևօք կապէր և առ Թագաւորն առաքէր. Թագաւորն գրէր պատասխան և կտրմիր կապեալ ՚ի Թուղթն այնպէս առաքէր. և զայս և ձեռքն միայն գծէին և շարժէին. բայց զսիրտն ինքն և աստուած միայն գիտէին, Թէ որպիսի կրակով լցեալ էր, զի ոչ տեսանէր զայնպիսի գեղեցկապատակեր և զծաղկալից որդիսն իւր առաջի իւր, ոչ երեկոյ և ոչ ՚ի վաղիւն, և ոչ ՚ի ժամ ճաշոցն յուտել և յըմպել. և ընդ միտ ածել զանմխիթար աղէտս գեղեցիկ որդոցն, զԹորոսի գեղեցիկ պատկերն և զվայելուչ հասակն որ ՚ի սրոյ բաժանեցաւ յանօղորմ և արեանարբու անօրինացն. նոյնպէս և զԼևոնի անհիւ և անգոհիւ լինելն ՚ի մէջ այլազգացն ՚ի ծառայութիւն՝ զայս ամ

զմտաւ ածեալ բարեպաշտ թագաւորն հայոց, այրէր անհնարին կրակով. և գալարէր աղիքն յաղագս սիրոյ որդոցն որ ոչ տեսանէր, և թաւալէր ընդ երկիր անմխիթար սգով. բայց գաղտ և 'ի ծածուկ, զի մի գիտասցին նախանձոտ և տիրասպան իշխանքն և ուրախացին ընդ տրտմութիւն թագաւորին. և այս գործեցաւ յաւուրս ամառնային եղանակին յետին ամսին 'ի տօնի սրբոյ աստուածածնին. և թագաւորն Հեթում համբեր տուեալ կրակով լցեալ սրտին՝ եկաց մինչև 'ի տօն սրբոց առաքելոցն, ծածկելով զտրտմութիւն իւր յաներկեղ իշխանացն, և ապա հրամայեաց կոչել զամենայն իշխանսն՝ զոր 'ի հեռի և զոր 'ի մօտ, վասն պատճառի ջուր օրհնելոյ 'ի քաղաքն Մսիս. և ժողովեցան ամենայն իշխանքն՝ որք կային ընդ թագաւորութեամբ նորա 'ի քաղաքն Մսիս, և յորժամ գիտաց թագաւորն զգալուստ ամենայն իշխանացն, ապա հրամայեաց գալ առաջի իւր և նստել. և յորժամ ամէնն եկին և նստան, հրամայեաց սպասաւորացն թագաւորն, «թէ այլ են պակաս՝ կոչեցէք». և նոքա ասացին. «սուրբ թագաւոր՝ ամէնն այսեն՝ որ քեզ առաջի կան». և թագաւորն ստիպէր կոչել զպակաս իշխանսն և զպարոնայսն: Իսկ սպասաւորք թագաւորին ոչ կարէին իմանալ զմիտ թագաւորին. ապա իշխանքն ասացին զթագաւորն, թէ «զոր դուք հրամայեցէք և կոչել՝ ամէնն աստ է, և չէ ոք պակաս»: Իսկ թագաւորին զայրագին սրտիւ հայեցեալ յայսկոյս և յայնկոյս, և ապա հրամայեաց կիսաձայն և արտասուալից աչօք. «թէ երբ ամէնն աստ են, ապա ո՞ւր են Լևոն և Թորոսն»: Յայնժամ սկսան իշխանքն անմխիթար և ծանր սգով ծեծել և վայ և եղուկ ասել, յիշելով զգեղեցիկ որդիք թագաւորին իւրեանց, զմիսն 'ի ծառայութիւն 'ի մէջ այլազգեաց. և զմիսն սրախողխող եղեալ 'ի ձեռաց անօրինաց. և այսպիսի աղիողորմ արտասօք լային և ոչ միայն իշխանքն, այլ քահանայք և վարդապետք եկեղեցոյ, յերգ արկեալ զողբն երեմիայ մարգարէին՝ որ ասէ. ո՞ տայր զգլուխս իմ շտեմարանս ջուրց, և զաչս իմ աղբիւրս արտասուացն, զի նստեալ լայի զբեկումն ժողովրդեան իմոյ: Եւ այսպէս վարդապետքն և քահանայքն և իշխանքն լային, և ոչ ոք կայր 'ի միջի նոցա որ մխիթարէր զնոսա, այլ կային տարակուսեալ 'ի ծանր սուգն բեկեալ սրտիւք: Իսկ Մեծախելք և մեծահոգի թագաւորն Հեթում ինքն յինքեան հանգնեաց զբեկեալ և զտրտմեալ սիրտն իւր. և ապա խօսեցաւ բանս մխիթարականս 'ի սիրտս իշխանացն և քահանայիցն և վարդապետացն, այսպէս ասելով. «գիտէք ամէն իշխանքդ վարդապետքդ և քահանայքդ, որ վարդանանց պատերազմ վասն քրիստոնէից եղև, այնչափ բազմութիւն հեծելոցն վասն քրիստոնէից նահատակեցան և երկնաւոր պսակացն արժանի եղեն. նոյնպես և որդիքն իմ: Թորոս վասն քրիստոնէից պատերազմեցաւ և վասն քրիստոնէից նահատակեցաւ և

խառնեցաւ ՚ի գունդս սրբոց վարդանանցն, և նոցին պսակացն արժանի եղև. զնա այլ մի լայք, այլ երանեցէք զնա. զի սիրեաց զնա քս և իւր սրբոցն պսակացն արժանի արար, և զարիւն նորա ընդ արեան մարտիրոսացն խառնեաց ժառանգելով ընդ նոսա զերկնից արքայութիւն որ ՚ի քս յս: Իսկ Լևոն երէց որդին ՚ի Մսըր է ՚ի ծառայութիւն ՚ի մէջ այլազգեացն. ինձ լաւ է Լևոնի ծառայութիւն, և Թորոս իւր արեամբն ՚ի վերայ քրիստոնէից սպանած, քան ես այս ամէն երկիրս ձեր արեանդ և խղճիդ տիրացած. վասն զի դուք ոչ գիտէիք թէ այս ցեղ չէր հանդիպեալ ինչ՝ կայր հայոց երկիրս առաջի»: Զայս և այլ բազում բանս մխիթարականս խօսեցաւ Թագաւորն և դադարեցոյց զիշխանս ՚ի լալոյ և ՚ի սգոյ: Իսկ բարեմիտ և բարեկամ իշխանք Թագաւորին, նաև քահանայք և վարդապետք և եպիսկոպոսք, որ էին ժողովեալ առ Թագաւորն վասն ոծնի սրբոյ յայտնութեան. մխիթարեցան ՚ի Թագաւորէն վասն սգոյ Թագաւորորդեացն. նոյն և նոքա խօսեցան մխիթարական բանս բազում, և կանգնեցին զսիրտ Թագաւորին. և արարին զոծն սրբոյ յայտնութեան ՚ի միասին ուրախութեամբ, մխիթարելով զԹագաւորն: Իսկ Թագաւորն ոչ կարէր դադարեցուցանելոյ զսիրտն ՚ի թառանչելոյ և յոգոյ հանելոյ վասն Լևոնի որդւոյ իւրոյ, որ էր ՚ի Մսըր ծառայ, և ոչ գոանէր հնարս, թէ որպիսի հնարիւք կարէ զերծուցանել զնա: Եւ ապա դարձեալ կոչեաց զիշխանսն առաջի իւր Թագաւորն, և եհարց զնոսա, թէ որով հնարիւ կարէ հոգալ վասն ազատելոյ Լևոնի որդւոյ իւրոյ: Իսկ իշխանքն յանգէաս եղեալ մեղադրեցին Թագաւորին և ասացին «թէ շիհ ինչ գոանէ մեզ որ դու վասն շիհայ զքո որդիքն կորուսեր, և զմեզ նոցա խղճին տիրացուցեր. այն լաւ չէ՞ր թէ այն լեալ, քան մեք ամէն ի գրոյց է ծաղր եղաք»: Իսկ Թագաւորն հրամայեաց իշխանացն լռել յանօգուտ խօսիցն, և լսել ՚ի նմանէ զոր ինչ պատուիրեալ էին նմա ՚ի ծածուկ հայոց իշխանքն՝ որ կային ՚ի դուռն Ապաղայ զանին. զի ընդ աւուրսն ընդ այնոսիկ էին տաճիկ ամիրայք հոգացողք և բիղիքչիք զանին, բարեկամք Մսրցոյն ՚ի ծածուկ, չարակամ Թագաւորին հայոց և ամենայն քրիստոնէից. և տաճիկ ամիրայքն և հոգացողք զանին գրեալ էին առ սուլտանն Մսրայ ՚ի ծածուկ. «թէ ջանայ ցիր՝ որ սիրով մէկ գնօղ Թափես ՚ի հայոց Թագաւորէն, և այն նմա կորստեան և իւր երկրին հերիք է և բաւական. և մեք ասենք և հոգանք առ զանն՝ որ զհայոց Թագաւորդ իւր ամէնն երկրովն աղի բռնէ և հեծել յղարկէ և կոտորէ զամէնն»: Իսկ բարեպաշտ Թագաւորն հայոց զայդ ամենայն գիտացեալ էր յառաջագոյն, և լուեալ ՚ի ձեռն ծածուկ գրոյ հայոց իշխանացն՝ որ կան յարևելք՝ և են բարեկամք և յոյժ սիրողք այս Թագաւորութեանս. զի գրեալ էին հայոց իշխանքն առ բարե-

պաշտ թագաւորն Հնդոց բանս մխիթարականս վասն որդոցն և վասն երկրին. և ՚ի վերջն զայս թէ «ո՞վ սուրբ թագաւոր, բան որ մենք ենք լսել լաւ է քեզ այդ. որ քո մին որդին վասն քրիստոնէից մեռաւ, և մինն ծառայ գնաց, և այս տաճիկ շներս յամօթ եղան, որ ՚ի յայս դուռս կան, քան թագաւորութիւնդ ամէնն անցած, և երկիրդ ընդ մին աւերած և քրիստոնեայքդ կոտորած: Վասն զի այս տաճիկ շներս ամէն օր կու ասեն ը զանս, թէ հայոց թագաւորն ու Մսրայ սուլտանն մին են և մի խօսօք են. և մեք հայոց իշխանքս երդուեալ ենք զանին առաջի՝ թէ տաճկանիդ սուտ են, մի աւտար դոցա: Եւ այժմ զայդ լսեցին և յամօթ եղեն տաճկանիս, ու զանին սիրտն լաւացաւ ՚ի հետ քեզ միահետ. ապա թէ լեալ էր որ խաբուել էիր, և լուր մին դարտակ տուն էիր տուեալ թող թէ շէն, գեղ. որպես նա ուզէր. յայնժամ քո թագաւորութիւնդ ամէն անցեալ էր, և մեք յամօթ եղեալ: Իսկ յորժամ զայս ամենայն լսեցին իշխանքն ՚ի թագաւորէն հիացան ամէնն և մեղայ ասացին թագաւորին վասն ոչ դիտելոյ զայս ամենայն պատճառս բանիս, և ապա յետ այսորիկ հարցեալ խրատ ցիշխանսն թագաւորն հայոց առաքեաց դեսպանս առ սուլտանն Մսրայ իմանալ վասն որդւոյն իւրոյ Լևոնի. թէ ի՞նչ է կամքն սուլտանին. ի՞նչ տայ և գնէ զորդին: Իսկ սուլտանն Մսրայ Ֆընտուխտարն, թէպէտ էր տաճիկ, բայց յոյժ աղէկասիրտ էր և խոնարհամիտ. զի թագաւորորդին Լևոն խիստ աղէկ էր տուեր պահել կենօք և ամենայն իրօք. և յորժամ լսեաց զդեսպանացն գնալն, ուրախացաւ և ասաց. «Թէ պիտի որ զԼևոնս տանիք իւր հայրն և յիւր թագաւորութիւն. իմ սիրելի ընկեր կայ՝ առ Տաթարն ծառայ, ու ձեր ձեռօք ՚ի վեր ՚ի գալ՝ որ գնա ուղէք ՚ի Տաթարէն. ձեզ չի խնայեն, գնա բերէք. Սղոր է անունն, և զԼևոնս տարէք»: Զայս լուեալ թագաւորն հայոց ՚ի դեսպանացն, և իսկոյն զուգեաց բազում զանձս և պատուական ինչս և գնաց յարևելք առ Աբաղայ ղանն, և ասաց զամենայն պանդատ, զինչ արար մորցին ընդ նա և ընդ երկիրն իւր. ասաց և պխնդիրք սուլտանին վասն Սղոր ծառային՝ և ոչ կարաց թափել առ ժամայն. բայց եկն և առաքեաց զեղբօր որդին իւր, և ըստ աջողելոյն այ գնաց և եբեր զՍղոր ծառայն յերկիրս: Իսկ ընդ աւուրս ընդ այսոսիկ եկն սուլտանն Մսրայ ՚ի վերայ Անտաք քաղաքին և էառ զԱնտաք և քակեաց զնա ՚ի հիմանէ և յանխնայ կոտորեաց և գերեաց, որ ոչ պատմի զի՞նչ արարին այլազգիքն ընդ հաւատացեալսն քրիստոնէի: Եւ յորժամ առաքեաց թագաւորն առ սուլտանն թէ բերաք զՍղուրն, յոյժ ուրախացեալ և բազումն ընծայիւք առ ժամայն առաքեաց զԼևոն, և առքա զՍղուրն յղարկեցին բազում ընծայիւք: Իսկ ՚ի գալն պարոն Լևոնի յոյժ ուրախութիւն եղև թագաւորին և իշխանացն [illegible] նոյն և վանորացս և ամենայն քրիստոնէից՝ որ ընդ ամենայն [illegible]

26. [ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՎԻՊԵՐԳԵՐ]

Ա. [Սուգ դստեր Մեծ իշխանի]

«Ի՞նչ ես նըստել մունջ քո բանին,
Վեր կաց, դուրս եկ, թե ի՞նչ խոսին։
Խեղճիկ, էն էր քո արժանին,
Որ դու լինիս կին Թաթարին.
Դու պետք էիր ըլնիլ տիկին,
Տիկնանց տիկին մեծ իշխանին,
Եւ ոչ էսպես անօրինին
Ձեռը կապած ըլնիս գերին։

Դուստրն

Ի՞նչ ես ասում հարըդ կտրած,
Ջեմ հասկանում ասա դու բաց։

Աղախին

Էսօր աստղըդ Թրուաւ կորաւ,
Լուս արևըդ խաւարեցաւ.
Վայ իմ գլխիս, վայ քեզ Շուշան,
Գերի գընացիր Թաթարըստան.
Լոյս հաւատըդ պէտք է մոռնաս
Մուհամէդի կրօնքին դառնաս։

Դուստրն

Լեզուդ սևնայ, բերանդ չորնայ,
Ի՞նչ համբաւ է, ասա ինչ կայ։

Աղախին

Մեծ իշխանըն քեզ տըւել է
Թաթար խանին հետըն տանէ։

Դուստրն

Աղճիքացիրք, եկէք եկէք
Կորած գլխիս դառը լացէք.
Սև էր դառել օր ծընընդեան
Որ ես ծընայ Թըշուառական։

Մէրիկ, վեր կաց գերեզմանէդ,
Համբաւ լըսէ աղճըկանէդ
Իմ սև բաղդն էնպէս արեց,
Թաթարըստան մինակ քըշեց,
Անգութ օրհաս հոգին հանէ,
Գետինն պատռէ ինձ ներս տանէ։

Աղախին

Վաթսուն տարի եմ ես ձեր դրան,
Հէրըդ, պապերըդ են իմ կըռան,
Ծընած, սընած, իշխան եղած,
Էսպէս մին ցաւ ես չեմ տեսած։
Ականջըդ բաց, լսէ խրատիս.
Մըտիդ ձըգես էս պառաւիս.
Ուր որ գընաս, ինչ տեղ ըլնիս,
Հաստատ մընաս լուս հաւատիս։
Ջըմռռանաս Հայոց աղգիս,
Միշտ հանապատ նըրան օգնիս։
Ամենայն ժամ միտքըդ ձըգես,
Հայրենացըդ պիտոյ ըլնիս։
Էհ, Տէր ընդ քեզ, գընաս բարև,
Քրիստոս պահէ քո լոյս արև։

Բ. Յովհաննէս և Աշայ

Այս ի՞նչ կրակ էր՝ դիս այրեց,
Կամ ի՞նչ խաւար էր՝ դիս պատեց,
Ես վէմ անխախտ էի՝ խախտեց,
Պողպատ ամուր՝ զէտ ջուր հալեց։

Եկաւ, անցաւ ու ճոխ քայլեց,
Ճոճաց և մէջքըն կոտորեց,
Դարձաւ ի յետ, խոլոռ նայեց,
Անձս տեսավ ու զահընդեց։

Օրն էր շաբաթ լոյս կիրակի,
Վերի վանից ի վայր կու գի,
Բուրվարն ի ձեռս ու խունկն ի լի,
Սաղմոսարան յանդս ունէի։

Հետ կու գայի, հետ կարդայի,
Թ՝ երթամ՝ հասնիմ ճաշու ժամի.
Եկի, առի հանց կրակի,
Ոչ գրէի, ոչ կարդայի։

Մէկ մի հեծեր պօղ պէտաւի,
Եկաւ, անցաւ քաջ մուհալի
Աչեր ունէր՝ Թաւրէզ տանի,
Ուներն պախլքըս կու տանի։

Խնծոր ձգեց, մոխիկ չարի,
Մեկ մ՝ այլ ձգեց, ցածցայ, առի.
— Սէն մուսուրման, մօլլայ ղըզի,
Պէն Յովաննէս, քէշիշ օղլի,
Խնծորդ ի յիս ի՞նչ բան ունի։

— Եօրու, եօրու—կեաւուր օղլի,
Կեօթուր պիղտէն մուհալ սօղի,
Պէն մուսուրման—մօլլայ ղզի,
Սէն Յովաննէս—քէշիշ օղլի,
Զիրար սիրենք խօշ կու լինի։

Յովաննէսին մայրն է ազայ,
Հագեր վալայ, վրան՝ ջուպայ,
Ջօրն ի վաներն ի ժուռ կու գայ,
Ու խունկ ու մոմ կու խոստանայ.

— Սարկաւագնի՛, ասէք. «Մեղա՛յ,
Հաբեղանի. «Տէր, ողորմեա»,
Միթէ իւր խելքն ի վերան գայ,
Թ՝ իմ Յովհաննէս ի տուն դառնայ։

— Ծօ, Յովաննէս, ծօ՛, իմ ազայ,
Դարձի՛ր ի տուն, ասա. «Մեղա՛յ».
Աշան տաճիկ է, վենէհար,
Ես հայ բերիմ քեղի համար,
Քան զԱշան՝ է այլ ազէկ լինայ։

— Այ իմ մարիկ, մի՛ տխմարնար,
Չի կայ նման գէմ Աշային.
Աշան թուխ է, ունքն՝ կամար,
Քաֆիր եմ, թէ դինքն ուրանամ։

— Ծօ՛, Յովաննէս, ծօ՛, ի՛մ տղայ,
Դարձիր ի տուն, ատա. «Մեղայ».
Հոն քո տէրտէրն կու ճօրայ,
Թէ Աշան ընկեր՝ ի հետ նորա։

— Ա՛յ իմ մարիկ, ես քեզ ծառայ,
Թէ իմ տէրտէրն կու ճօրայ,
Նայ ես զԱշան ցցնեմ նորա,
Քան զիս ու այլ խե կու լինայ։

— Ծօ՛, Յովաննէս, ծօ՛, ի՛մ տղայ,
Դարձիր ի տուն, ատա. «Մեղայ».
Դու մէկիկ ես, այլ ճար չը կայ,
Այլ լինելու ճարակ չը կայ։

— Ա՛յ իմ մարիկ, ես քեզ ծառայ,
Չկաթդ, որ կերայ, հալալ արա,
Չխելքս առին ու խե եղայ,
Յիսնէ ի քեզ այլ ճար չըկայ։

Աշան նստեր փանճարային
Ու խիստ տրտում, ափն՝ երեսին,
Թ՛— Այսօր ծեծեց իմ հայր զատին.
«Է՞ր կու սիրես զՀայուն որդին»։
Տես, թէ կելնէ՞, մկկ մի կու գա՞յ.
Ականջըն խո՛ւլ Յովաննէսին։—

Խե Յովաննէսն, երբ զայն լսեց.
Բռնեց զճանփան ի յոտվնին.
Ու գլխիբաց, գոտկն յափին,
Գնաց, կանգնեց առջև խանին,
Բարև երետ Թագաւորին.
Նոքա շուտով զբարևն առին.

Բռնեց ըզպօզ ձիուն ապին,
Կաֆայ ասաց ամէն ձարին։

Աշան կանգներ ի վերայ բերդին,
Մըտիկ կանէր Յովաննէսին.
Քովն է կանգներ դեղին հագնողն,
Ինքն՝ զկանանչն ու զծիրանին։

— Ծո՛, Յովաննէ՛ս—մտիկ արայ.
Ի վերայ բերդին ի՞նչ կու խաղայ.
Դեղընվոր, ես քեզ ծառայ.
Կանաչվորին զանունն ասա,
Թէ չէ՝ լինիմ շահին բաղայ,
Թուչիմ, նստիմ թևիդ վրայ։

Պապուս անունն ասեն մօլլայ,
Աղբօրս ասեն քաղքի շահնայ,
Եւ զիմ անունն ասեն Աշայ,
Մէկալ քրոջըս՝ Ողուզպայ,
Զիմ մօրս անունն ասեն Ցաթմայ,
Ու հօրս ասեն զաւտի մօլլայ։

Խև Յովհաննէս, ես քեզ ծառայ,
Դու իս խոցուս Հար մն արայ,
Թէ չէ հոգիս քաւկառաւ, մեռայ,
Իմ մեղքս քոյ վիզ կու մնայ։

Ծո՛, Յովաննէ՛ս, մզկիթ մտնուլ պիտիս,
Մատնիկդ ի վեր կալնուլ պիտիս,
Հետ մօլլանուն ժուռ գալ պիտիս,
Ապա ծոցուս տէր կու լինիս։

— Աշա՛յ, ալրտ ինձ հարամ լինայ,
Թէ այդ բաներդ հանց կու լինայ.
Աշա՛յ, գոնուս յօրդ ի մահուն,
Զինչ չանացիր հետ իմ ճանփուն։

Ութը կանոն տղմոս ուսայ,
Զան ալ ի քո սիրուտ մոռացայ,

Որ մի չասի, թէ. «Տէ՛ր, մեղա՛յ».
Ամէնն՝ «Ալլա՛հ» ու «Շէյտուլլա՛հ»։

— Ծօ՛, Յովաննէ՛ս—փոքր ի պօյաց,
Փոքր ի պօյաց, ծանր խելաց.
Աշան փորձեց, բան մն ասաց,
Ջը լռեցիր դու մէկ խօսաց։

Գնա՛, շինէ եկեղեցի,
Որ գամ, մտնում կոշկովս ի ներս»,
Պսակ դնեն, զմեզ օրհնեն,
Թող քո սրտին կամքն լինայ։

Գ. Մոնթ

Մեկ պըստիկ մարդիկ մ'կեր
Անապատայ վանք կը մնէր.
Օր կորեկէ կուտ մը կուտէր,
Կէտն աղբըտաց բաժին կխանէր.
Տըկլոզ քեամկով կեաղ կը կրէր,
Պէօպիկ ոտնով փուշը կը քեաղէր.
Ինք կ' գրէր, ինքը կկարդէր,
Ջիմ իրիկուն աղօթք կանէր։

— Օրն էր շաբաթ—լոս կիրակին,
Բաժկին պակսաւ պատարագին.
Ջում խարմեղէնս մոռացի։
Գլխիկս դրի կընքիմը առի.
Ոտնակուտոր ճամխէցն իկի,
Կիւլ ախբրիմ ըռաստ եկի։

Երեք խաւտ գող իմ դէմս էլան,
Մէկն ասաց.—Ջարնենք, կորցուցենք։
Մեկն ասաց.—Ջարնենք, թիւլցուցենք։
Մէկն ասաց.—Ոչ զարնենք-կորցուցենք,
Ոչ զարնենք-թիւլցիւցենք,
Սալլուն Փաշի սէրն իսկենք վէրէն,
Քեառսուն տարի թօղ տպայ վէրէն։

Կաոր մը տեղ ես գնացի,
Սաղմոսարանս կըլորիցի.
Կաոր մը տեղ ես գնացի,
Ավէտարանս խորիցի.
Կաոր մը տեղ ես գնացի,

Ժամագիրքըս թաղիցի.
Կաոր մը տեղ ես գնացի,
Ջում խարմէղէնս մոռացի։

Քեարվան մ՝ իրե Անթայ դաշտէն.
Մէջ էն քեարվընին՝ ջորի մի կէր,
Վէր էն ջորուն՝ սընտուկ մը կէր,
Մէջ էն սընտըկին՝ կութի մը կէր,
Մէջ էն կութիւն՝ աղջիկ մը կէր։

— Աղջի՛կ, աղջի՛կ, անունդ ի՞նչ ի։
— Կրօղի տարած, տավէդ ի՞նչ ի.
Իմ խէր չի տար. պատռէդ ի՞նչ ի.
Իմ անունս՝ Բալչուն Փաշայ։

— Սալչուն Փաշայ, ես քե գերի,
Կրակդ ինկի սիրտս՝ կայրի,
Պալանաբոց բէրնէս կէլնի։

— Ծօ՛, Օվանէս, կեավուր օղլի,
Պան մուսուրմանն, սան էրմանի.
Քիոյ սէրն մօտ ծի ի՞նչ բան ունի.
Որ իմ խէրն իմնայ՝ քե կըսպաննի,
Արունդ խետ պէօշ դինուն կխմի։

— Մէրի՛կ, մէրի՛կ, Մօրմօրեայ,
Կթխէն ձեռք կը շողշըղայ,
Աղուն վէրէն էֆըոֆտայ,
Կէօ ես խըմայ, կէօ ես մեռայ։
Վաղ Ավանէս էօրտիւից գայ՝
Ինոր ճուվապ վո՞վ կու տայ։

— Քեայ սևաւոր, ծուռ մասկարայ,
Որ Ավանէս էօրտիւից դայ,
Կտաճկրցընեմ, կանեմ մէօլայ,
Ուրբաթն օրեր կճամխեմ կարդայ։

— Էն լայեղ չի, որ էլնի մէօլայ,
Էն լայեղ ի էլնի ճիոշկիկ քախանայ,
Բուռվառն ի ձեռն, խունկ ի վրայ։

— Ա՜խ, Օվանէս, մօր մէկ որդի,
Կրօղի մախն քի չը խորդի,
Ժամու շապիք կարիցի,
Փիլոնն ի մէջ փաթիւթիցի։

— Մարէ՛, սօլերդ խակի, որ ճռվռայ,
Լաչիդ իսկի, որ վռվռայ,
Էլի գնա դէմ շուկային,
Տե՛ս, սիրու բան ի՞նչխ կէլնի։

XV—XVIII ԴԱՐԵՐ

27. ՏԱՂ ՊԻԼՊՈՒԼԻ ԵՎ ՎԱՐԴԻ

Առաւօտուն քամին ելէր՝ մաղէ ղիս,
Քո սէրն ինձի կլուակ եղէր՝ դաղէ ղիս,
Երբ մեռանիմ՝ տար, քո ձեռօք թաղէ ղիս։
Մի՛ թափիր, վա՛րդ, մի՛ բացուիր, վա՛րդ,
Ես զարիպ եմ, չունիմ աշխարհ, երամ, հա՛յ,

Առաւօտուն ամպն էր իջներ լեռներուն,
Պուլպուլն խիստ որտում է քո թոռմելոյն,
Սիրոյ դարտէն չի վախենար մեռնելոյն։
Մի՛ թափիր, վա՛րդ, մի՛ բացուիր, վա՛րդ,
Ես զարիպ եմ, չունիմ աշխարհ, երամ, հա՛յ։

Առաւօտուն ցօղն էր իջեր, թացուեցայ,
Քրիստոսի տղորմութեամբն լցուեցայ,
Արեգական շողն ծագեաց, բացուեցայ։
Մի՛ թափիր, վա՛րդ, մի՛ բացուիր, վա՛րդ,
Ես զարիպ եմ, չունիմ աշխարհ, երամ, հա՛յ։

Առաւօտուն ցօղն էր իջեր լեռներուն,
Պուլպուլն չատր զարկեր վարդի քովերուն,
Քո սէրն, իմ սէր՝ ի յանատակ ծովերուն։
Մի՛ թափիր, վա՛րդ, մի՛ բացուիր, վա՛րդ,
Ես զարիպ եմ, չունիմ աշխարհ, երամ, հա՛յ։

28. ՏԱՂ ՊՈՒԼՊՈՒԼԻ

Պիւլպիւլն էր կայնէր քարին ճօթին,
Կուտ կուտէր, այրիւն կու հեղար.
Իմ տէրս վէրեէս անցաւ,
Ըսաւ, թե.—Ի՞նչ դու լաս, ի՞նչ չես լար,
Ի՛մ հաւք թևաւորս։

— Զագերս ի ծօցես տարեր են.
Ես՝ մէ ղէրիպ բնքէրմէչի—
Ան պաղչին պատին թառեցա.
Էրնէկ կու տայի ան մարդուն,
Օր ա՛ն պաղչին բանչիքն ի վրան,
Բացեց ու պաղչան մտաւ,
Վարդ քաղեց,
Թէփսին շարեց,
Յետ ղրկեց Լարին նամօլա.
Առաւ ու բարձին դրեց,
Շեղմէքին էրեսն ի վրան։

Փուշն անկաւ ոսկի սնտուկ,
Մէջն կար ղէրիպ հնճղուկ.
Ոսկի սնտուկը կոտրեցաւ
Ղէրիպ հնճղուկը թռաւ,
Վարդին թէրին թառեցաւ,
Փո՛ւշ ունի, պոջը արիւնաւ։

Անգէտն իմ շալակս եմ առեր.
— Թո՛ւ,—կըսէ,—յոտիս կը ցաւի։—
Չարհուրած աչերս լացուցի,
Յենարատ ձեռներս չարդեցի։
Անո՛ւշ։

29. ՏԱՂ ՍԻՐՈՅ ԵԻ ՊՈՒՊՈՒԼԻ

Պուլպուլ կայնէ քարին ճօթին,
Կուտ կուտեր, այրոյն կու հեղար։
Մեր տէրն եկաւ, վերևէն անցաւ.
— Ի՞նչ գու լաս, իմ հայր թագաւոր։
— Ի՞նչ լամ, ի՛մ հայր թագաւոր.
Չագերս ի ծօցես տարեր են։

Գույն հաղար-հաղար ծաղկունք.
Ես քարի բօքարմէի,
Ան պաղչին բանլիք վերան,
Բացեց ու պաղչան մտաւ,
Վարդ քաղեց, թափսին շարեց,
Յէտ ղրկեց՝ յեարին նաւօրեալ։
Առաւ ու բարձին շարեց՝
Շէկմէի յերեսն ի վերան։

Ովն ի կար ոսկի սնտիկ,
Մէջն ի կար ղարիպ ճնճղիկ.
Կօտրեցաւ ոսկի սնտիկ,
Թըռաւ էն ղարիպ ճնճղիկ.
Թըռաւ ու պախչան մտաւ,
Վարթենին թերնին ճօճեցաւ։
Ըսի, թէ.—Վարթենին թերինին վերան մի՛ ճօճար,
Փո՛ւշ ունի, ուտիտ կարունէ եղէ։
Դիտունին վեր մի՛ լիներ։
Անգետնու սիրելի, շալակս եմ առեր,
Դեռ կասէ.—օտվիս կը ցաւի։
Ծարուրած աչերս լացուցեր.
Հեներած ձեռգիս չարդեցեր։

30. ՈՂՔ ԲԼԲՈՒԼԻ

Բլբուլն էր նստել վարդուն,
Հէնց կու լէր՝ ինչ մարթ մեղաւոր.
Հրեշտակ յերկընքօվն անցաւ.
— Է՞ր գոյ լաս, ի՛մ հաւք թեայտոր։

— Տարին տասներկու ամիս
Իմ սիրած յարն կու տանիս.
Վախիմ, թէ դիս էլ տանիս.
Խեղճ իմ մեր, որ որդի չունի։

Իմ մեր, որ որդի բերա՝
Աստմ.—Ես մեռայ, տարէք—թաղեցեք,
Իմ յար տանէ դուր չը գայ,
Ձեզ հալալ, տարէք, թաղեցէք.
Փըթած փետ ի՞ր չբերէ...

31. ԿԷՁ ՄԸ ԿՐԱԿ...

Կաքուիկ նստեր վեր քարին,
Օր կուլար՝ արցունքն էր արին։
— Սև կաքուիկ, ինչո՞ւ կուլաս։
— Ինսո՞ր չի լաս, որ ձագերս են տարած,
Ձագերս բուներնէն տարած,
Իմ սիրտս են էրած.
Ո՛չ գիտեմ՝ ավճինները տարած,
Ո՛չ գիտեմ՝ հարսւին հովը քշած։

— Սև-կաքուիկ—դուն ո՞ւր տի թառիս։
— Բանձր խաւախին վրայ կ՝թառիմ։
— Սև-կաքուիկ, թէ աւոր տէր գայ, ո՞ւր։
— Ուռիին ու մորիին վրայ՝ խարտեաս կթառիմ։
— Թէ հոն էլ չթողե՞ն։
— Կէձ մը կրակ կըլլիմ՝
Ես դիս կը վառիմ...

32. ՎԱՅՐԻ ՀԱՒՈՒԿ ՄԻ...

Վայրի հաւուկ մի բռնած և բերած և դրած դինքն ի նեղ զնդան.
Լալով ասեր, թե—Լացէ՛ք բաժանիլ յընկերացս, որ չեմ յիմ երամս.

Սրտայբեկեալ և միջակոտոր, ճար չունիմ, ի՞նչ լինիմ գերիս.
Ջի՞նչ լինիմ ղարիպս։

Եթէ հարիւր հազար գոյնզգոյն փետուր բերած՝ ինձ խիլաթ կու տան՝
Զուրախանայ սիրտ բանելոյս չընկերացս, որ չեմ յիմ երամս.
Սրտայբեկեալ և միջակոտոր, ճար չունիմ, ի՞նչ լինիմ գերիս։
Ջի՞նչ լինիմ ղարիպս։

Եթե հարիւր հազար կորիճ էր բերած ինձ՝ հեծնալ ձիաւոր՝
Զուրախանայ սիրտ բաժանելոյս չընկերացս, որ չեմ յիմ երամս.
Սրտայբեկեալ և միջակոտոր, ճար չունիմ, ի՞նչ լինիմ գերիս,
Ջի՞նչ լինիմ ղարիպս։

Եթէ մէլիս էր ծեփած ոսկով, զարդարած անգին մարգարտով՝
Զուրախանայ սիրտ բաժանելոյս չընկերացս, որ չեմ յիմ երամս.
Սրտայբեկեալ և միջակոտոր, ճար չունիմ, ի՞նչ լինիմ գերիս,
Ջի՞նչ լինիմ ղարիպս։

Եթէ զբլբուլն ու զդումբին էր բերած ինձ՝ երգուսաց գուսանս՝
Զուրախանայ սիրտ բաժանելոյս չընկերացս, որ չեմ յիմ երամս.
Սրտայբեկեալ և միջակոտոր, ճար չունիմ, ի՞նչ լինիմ գերիս,
Ջի՞նչ լինիմ ղարիպս։

Եթէ շաքարն էր մաղած և շաղած նշով՝ ինձ կերակուր կու տան՝
Զուրախանայ սիրտ բաժանելոյս չընկերացս, որ չեմ յիմ երամս,
Սրտայբեկեալ և միջակոտոր, ճար չունիմ, ի՞նչ լինիմ գերիս,
Ջի՞նչ լինիմ ղարիպս։

Ապայ՝ լինի, որ թռչիմ ազատ, վերանամ, խառնիմ յիմ երամս,
Եւ օրհնեմ զաստուած անդադար ՚ւ իջնում յիմ մուղամս,
Զարթնում ի քնոյ ղերդ տղայ տխմար, որ կրկին և օրհնեմ
զաստուած, որ հասայ երամս,
Յայն ժամ ուրախանայ սիրտ բաժանելոյս չընկերացս, որ հասայ
յերամս։

33. ԵՍ ԷԻ ԱԶԱՏ ԱԶԳԷՆ

Ես էի ազատ ազգէն,
Վա՜յ, աւա՜ղ, վա՜յ,

Եւ այժմ եմ այլոց գերի.
Եկայք, լացէ՛ք ինս
Եւ ողբացէք ինս։
Միշտ հոգամ՝ դի թափեցայց,
Ճար չունիմ, ճար,
Արդ իցէ՞ թէ փրկեցայց.
Եկայք, լացէ՛ք ինս
Եւ ողբացէ՛ք ինս։
Օտար եմ յայսմ երկրի,
Վա՜յ, աւա՜ղ, վա՜յ,
Եւ աղքատ, նայ և այրի.
Եկայք, լացէ՛ք ինս
Եւ ողբացէք ինս։
Ակն ածեմ յայս կոյս, յայն կոյս,
Ճար չունիմ, ճար,
Ափշեալ եմ ի խիստ կոծոյս,
Եկայք, լացէ՛ք ինս
Եւ ողբացէ՛ք ինս։

Կողոպտեաց ինս թշնամին,
Վա՜յ, աւա՜ղ, վա՜յ,
Եվ արար կոխան ոտից,
Եկայք, լացէ՛ք ինս
Եւ ողբացէ՛ք ինս։
Ոչ-ոք է, որ ինձ օգնէ,
Ճար չունիմ, ճար,
Եւ տէրն իմ՝ ինս թողեալ է,
Եկայք, լացէ՛ք ինս
Եւ ողբացէք ինս։

Պատեալ են չուրք ինս անձամբս.
Վա՜յ, աւա՜ղ, վա՜յ,
Պաշարեալ են հայեցմամբ,
Եկայք, լացէ՛ք ինս
Եւ ողբացէ՛ք ինս։
Զելս աստի յուղեմ գտանել,
Ճար չունիմ, ճար,
Բարեկամ չունիմ՝ օգնել,

Եկայք, լա՛ց ք ինս
Եւ ողբացէ՛ք ինս։

Զցաւս անձին չկարեմ թուել,
Վա՛յ, աւա՛ղ, վա՛յ,
Եւ այլ ոչ արտաբերել,
Եկայք, լացէ՛ք ինս
Եւ ողբացէ՛ք ինս։
Տոչորիմ սրտի փխձկեալ,
Վա՛յ, աւա՛ղ, վա՛յ,
Հառաչեմ հոգոց հանեալ,
Եկայք, լացէ՛ք ինս
Եւ ողբացէ՛ք ինս։

Թէ ուստի ի յո՞ր հասի
Վա՛յ, աւա՛ղ, վա՛յ,
Երբ յիշեմ, անձրս խռովի.
Եկայք, լացէ՛ք ինս
Եւ ողբացէ՛ք ինս։
Զգանկատս ես ո՞մ յայտնեմ,
Ճար չունիմ, ճար,
Բայց եղբարցդ իմոց պատմեմ,
Եկայք, լացէ՛ք ինս
Եւ ողբացէ՛ք ինս։

34. ՄԻ ԹԱՓԻՐ, ՎԱՐԴ

Առաւօտուն քամին ելնէր՝ մաղէր ինս, մաղէր ինս,
Քոյ սէրն ինձ կըրակ եղև՝ դաղէր ինս, դաղէր ինս.
Երբ մեռանիմ՝ տար, քոյ ձեռօք թաղէ ինս, թաղէ ինս։

Մի թափիր, վա՛րդ,
Մի՛ թափիր, վա՛րդ,
Մի թափիր, վա՛րդ.
Ա՛խ, այրեցայ ես քոյ դարդէն.
Մի թափիր, վա՛րդ,
Մի՛ թափիր, վա՛րդ.
Ես դարիպ եմ,
Զունիմ աշխարհ, երամ, հա՛յ, երամ, հա՛յ։

Ահա ելնում, որ ի քնոյ հովերն, հա՛յ, հովերն,
Քոյ սէրն ինձի անհատական ծովերն, հա՛յ, ծովերն,
Բըլբուլն չադիր էր զարկել վարդի քովերն։

Մի՛ թափիր, վա՛րդ,
Մի թափիր, վա՛րդ,
Մի՛ թափիր, վա՛րդ,
Ա՛խ, այրևցայ ես քոյ դարդէն.
Մի՛ թափիր, վա՛րդ,
Մի՛ թափիր, վա՛րդ,
Մի՛ թափիր, վա՛րդ,
Ես զարիպ եմ,
Զունիմ աշխարհ, երամ, հա՛յ, երամ, հա՛յ։

35. ՏԱՂ ԲԼՊՈՒԼԻՆ ՎԵՐԱՅ ԱՍԱՅԵԱԼ

Առաւօտուն թռչունքն ամէն
Ուրախութեամբ եղանակէն,
Դու՝ զարիպ, մնացեր ես մէն.
Զրուցէ՛, բլպո՛ւլ, զրուցէ՛,
Զրուցէ՛, նազլը՛, զրուցէ՛,

Ահա եղև քեզ, նման սուք,
Որ ինձ կարկո՛ւտ է եկեր, բո՛ւք,
Անտէր մնացի, զարիբուկ.
Զրուցէ՛, բլպո՛ւլ, զրուցէ՛,
Զրուցէ՛, նազլը՛, զրուցէ՛։

Յէ՞ր լնիս վարթին կարօտած,
Տխուր դիմօք և շուվարած,
Զաչքդ արտասւօք պահէս ի թաց.
Զրուցէ՛, բլրո՛ւլ, զրուցէ՛,
Զրուցէ՛, նազլը՛, զրուցէ՛։

Ես եմ տրտում, աչերս ի լաց,
Սիրական հարս առին ձեռաց,
Կու մորմոքեմ կըսկծանաց,
Զրուցէ՛, բլպո՛ւլ, զրուցէ՛,
Զրուցէ՛, նազլը՛, զրուցէ՛։

Աշնանըն վարթն է վերացեր,
Իր թփիկըն դատարկ մնացեր,
Բլպուլ ըղտերդ ես յիմացեր.
Զրուցէ՛, բլպո՛ւլ, զրուցէ՛,
Զրուցէ՛, նազլը՛, զրուցէ՛:

Ես՝ ի հարաւ եմ, դու՝ հիւսիս,
Ես ի քեզ հայիմ, դու՝ ի յիս,
Դու այլ ինձի պէս դերտ ունիս.
Զրուցէ՛, բլպո՛ւլ, զրուցէ՛,
Զրուցէ՛, նազլը՛, զրուցէ՛:

Գարուն որ գայ՝ ուրախանաս,
Հասնիս խնդման և դուրանաս,
Վարթին սիրուն պայծառանաս.
Զրուցէ՛, բլպո՛ւլ, զրուցէ՛,
Զրուցէ՛, նազլը՛, զրուցէ՛:

36. (ԿԱՆՉԷ՛, ԿՌՈ՛ՒՆԿ, ԿԱՆՉԷ՛...)

Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, ձայնդ բարակ է,
Որտեղ զարիպ մի կայ՝ սիրտը կըրակ է,
Զարիպութիւն տեղը խիստ անճարակ է.
Կըռո՛ւնկ, էրդաս անդին, ըսե՛ս մօրերուն:

Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛ բացր լեռներուն,
Զարիպութիւն կէրդամ, վախեմ մեռնելուն,
Ֆալաքը պիս գատեց քօրպայ կառներուն.
Կըռո՛ւնկ, էրդաս անդին, ըսե՛ս մօրերուն:

Կըռո՛ւնկ, իջած տեղն չայիր-չիման է,
Որտեղ զարիպ մի կայ՝ սիրտն կուման է,
Ամէնին՝ լուս արև, ինծի՝ տուման է,
Կըռո՛ւնկ, էրդաս անդին, ըսե՛ս մօրերուն:

Զարիպն տըրտմեր ու գնացեր է ուն (...այ),
Երկու ձեռքն էրեսին դրել ու կու լայ.
«Վախեմ՝ զարիպ մէռնիմ, պիս, այ օ՞վ տի լա».
Կըռո՛ւնկ, էրդաս անդին, ըսե՛ս մօրերուն:

Ղարիպին աչեր խոցուէր ի լացէ,
Որդեղ որ կերդայ՝ ճանբան ի թաց է,
Շապիքը կըտրտեր, մըսիկը բաց է.
Կրո՜ւնկ, էրդաս անդին, ըսե՛ս մօրերուն։

37. ՉԿԹԽԱՅՆ Ի ՉԵՌՏ Ա.Ո ԵԻ ՉՀԱՅԵՐԷՆՍ Ա.ՍԱ.

Սարերն ամէն ձիւն եկեր,
Սարերուն վ'ելքն վերացեր,
Աշունն ի բաղչեն մտեր,
Ծառ զիւր տերևն ուրացեր։

Ծառուն ես հարցում արէ.
«Քո ուէհան ճղերդ, ի՞նչ եղան»։
Ծառն էլ մուջաբաթ եբեր
Ու ասաց յիւր սրտէն ի վեր.

«Մէկ բեր յԱդամայ ի վեր,
Ո՞վ մեռեր՝ նայ այլւի եկեր,
Էդ իմ ըուէհան ճղերն,
Թէ թափէր է, նայ այլւի եկեր»։

Ծառն էլ զիս դժար զահրեց,
Նայ ես էլայ ի բարձր սարեր,
Մտիկ սարերուն արի,
Նայ ամէնք տրտում են դարձեր։

Հարցում ես նոցն արի,
Կանչեցի, տէ. «Բա՜րձր սարեր».
Նայ ինձ ճուապ չի տուին,
Որ ամէնք տրտում են եղեր։

«Սարէ՛ր, ձեր արևն ասեմ,
Ասլն ի՞նչ է, չէր եք տրտմեր»։
Դարձան ու ճուապ տուին,
Թէ. «Մահն ի վեր մե՛զ է անցեր»։

Ծառուկն ի բազչիցն ի հետ
Ինքն կանչեց, թէ. «Բարձր սարեր,
Յորի՞ն դուք հանցկուն կասէք,
Հանտ եկեր ծիծառն էլ ի վեր։

Ծիծառն է եկեր ՝ւ անցեր
Ու գարնան հոտն հոտուտեր.
Յորտեղ գնացած հաւ կայ,
Նայ ամէնն բարով են դարձեր»։

Սարերն էլ խնդում ելան
Ու գարնան արաղ են արեր.
Յէսօր մեզ հազար երնէկ,
Ծառն մուշտուլուխ մեզ եբեր։

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

XIX ԴԱՐ

38. ՔԱՐՈՂ ԽԱՉ

Մեկ շաբաթ օր լոյս կիրակին
Խոտղներ ժողվան կո գնացին,
Գնացին խասան մըչ են դաշտին,
Մեկ պողչն խաչ մ'ել շինեցին,
Ջորս գլոխ խնձոր դարկեցին,
Գիչի թավով փաթաթեցին,
Քոչ մ'ել քոչան մեկ-մեկ բերան
Տեր ողորմեա՛ կանչեցին.
Երկնուց մասունք մեջ իջուցին,
Ծառա կըլնեմ սուրբ Քարող խաչին։

Խաբար տարան մեծ քահանին,
Էտենց բան մի ելել մեր խայոց Աղգին,
Գնանք պիրենք դնենք մըջ մեր Տաճարին,
Յերեկ խով կբռնի վըր մեր գեղին,
Գիշեր լոյս կիտա մեր տաճարին.
Ծառա կըլնեմ սուրբ Քարող խաչին։

Մեծ քահանեն վերցեց սարկավագ
Գնաց դեմ Քարող խաչին,
Քարող խաչ թռավ եկավ ձեռ քահանին
Պագնեց դրեց վըր ուր գլխին.
Ծառա կլնեմ ևլն։

Մե քառասուն տարվան շուն գղիր կէր մեջ էն գեղին,
Խաբար տարավ Քյուրդ պարոնին,
Մէ խաչ իլեր խայոց ազգին,
Էն չի բաբաթ խայոց ազգին,
Էն բաբաթ ի քեռ դիվանին,
Յերեկ խով կբռնի վըր քեռ բերդին,
Գիշեր լոյս կիտա քեռ դիվանին.
Ծառա կլնեմ ևլն։

Քյուրդ պարոն ելավ ճամբեցց Մահմատ,
ճամբեցց Ալին,
Գնացին խասան տուռ գեղի ռէսին,
Աստուած օրհնի էն գեղի ռէսին,
Ասաց առէք ձեր սոլերի գին
Դարձէք գացեք վըր ձեր խետին,
Էն բաբաթ չի Քյուրդ պարոնին,
Էն բաբաթ ի խայոց ազգին.
Ծառա կլնեմ ևլն։

Առեց Մահմատ, չառեց Ալին
Գացին խասան դուռ լուսբարին,
Թափկով դարկին էն լուսբարին,
Կատղավ Ալին, կատղավ ուր ձին,
Ատամ էրավ թևի կաշին,
Ծառա կլնեմ ևլն։

Խաբար տարան Քյուրդ պարոնին,
Կատղավ Ալի, կատղավ ուր ձին,
Ատամ էրավ թևի կաշին.
ծառա կլնեմ ևլն։

Քյուրդ Պարոն էլավ կանգնավ վըր ուր բերդի բադանին,
Կանչ մ' էլ կանչեց վըր շհարին,
Էլեք ղոշուն կապեք գնացեք դեմ Քարոզ խաչին,
Գնացին խասան մըջ էն դաշտին,
Յառջինն դարձավ վըր ետինին,
Յետինն դարձավ վըր յառջինին,
Էն ղոշունին բմբռ բերին,
Ծառա կլնեմ ևլն։

Խաբար տարան Քյուրդ Պարոնին,
Քեո ղոշուն գնացեր խասեր մըջ էն դաշտին,
Յառջին դարձեր վըր Լաինին,
Ետին դարձեր վըր յառջինին,
Էն ղոշունին բմբռ բերին։
Ծառա կլնեմ ալն։

Քյուրդ Պարոնի բերդ կառղավ վըր ուր խմին,
Քյուրդ պարոն կառղեր մըջ ուր բերդին,
Զին էլ կառղեր մըջ ուր Թավլին,
Տղան կառղեր օրորոցին,
Օղլուշաղ կառղեր մըջ ուր օթախին.
Կաթն ի կառղեր մըջ ղաղանին։
Ծառա կլնեմ ալն։

Քառսուն կռուան գոմեշ ունիմ՝
Էն էլ մառաղ Քարոզ խաչին,
Քառսուն անծին երինջ ունիմ՝
Էն էլ մառաղ Քարոզ խաչին,
Քառսուն անծին շիջակ ունիմ՝
Էն էլ մառաղ Քարոզ խաչին
Քառսուն գյուգյում ոսկի ունիմ՝
Էն էլ խոստում Քարոզ խաչին։

Իմ բերդ կանգնի վըր ուր խըմին,
Տղեն կանգնի օրորոցին,
Քյուրդ Պարոն կանգնի մըջ ուր բերդին,
Օղլուշաղ կանգնի մըջ օթախին,
Զին էլ կանգնի մըջ ուր Թավլին,
Կաթն էլ կանգնի մըջ ղաղանին.
Ծառա կլնեմ ալն։

Խավան չեկավ էն խոստումին,
Քյուրդ պարոնի բերդ տուեց էրան,
Աշխարհ Թափան սեյրան,
Էն գղիր խյուրընդացավ կեր ընկավ գղրի բերան,
Մեռավ տարան խորեցին ջամդակ,
Շներ խանին տարան կերան,
Ծառա կըլնեմ սուրբ Քարոզ խաչին։

39. ԿԱՐՈՍ ԽԱՉ

Քեառսուն խոտաղ իրար ինգեան,
Կնացին խասան մեջ կէս դաշտին.
Ուրենց միջին խորխուրդ արին,
Մեյ պեողէ խաչմ՝ շինիցին։
Ջորս ծերեր խնձորիցին,
Տվին իրար խամբյուրիցին,
Տարան դրին կարոս ածվին։
Կարոս խաչ Թռավ, կնաց մեջ տաճարին,
Յերեկ խով կաներ վէր էն գեյղին,
Գիյշեր լեոս կամար կապեր վէր քյումբէթին։

Գեյղի գյղիր խաբար տարավ քյուրտ պարոնին,
Ասաց՝ մէյ պանմ՝ կա խայոց աղգին,
Էն չի վելեր խայոց աղգին,
Էն կը վելի քեո դիվանին և քեո էօդին։

Քյուրդ պարոն «Կարոս» խաչ խլեց
Իպէ, իդի մեջ ուր էօդին,
Կատղավ Ալին, կատղավ ուր ձին,
Դարձավ կերավ ուր ձիու ցին։

Կատղավ մանուկն ուրուրոցին,
Կատղավ խանում մեջ ուր էօդին,
Կատղավ պարոնը մեջ ուր դիվնին,
Կատղավ գղիր մեջ ուր փայխին.
Դարձավ կերավ միսն ուր անձին։

Քյուրտ պարոն տեսավ, ասաց՝
Քեառսուն կտիր ոչխար ունեմ,
Կուրպան կանեմ «Կարոս» խաչին,
Դայմիշ չելնի իմ խանումին։

Քառսուն գեոմեշ լծկան ունեմ,
Էն էլ կուրբան «Կարոս» խաչին,
Դայմիշ չելնի իմ մանուկին։

«Կարոս» խաչին մեռնեմ ուր խրաչքիցն,
Բժշկի իմ մանուկին, իմ խանումին,

Մուրատ իտուր քյուրտ պարոնին,
Մուրատեց խանում մեջ ուր էօդին,
Մուրատեց մանուկն ուրուրոցին.
Կատղավ գյղիր մեջ ուր տախտին։

40. ԿԱՐՈՍ ԽԱՉ

Մեկ շաբաթ օր, լուս կիրակին
Քառասուն հոտաղ ժողովուեցին
Գնացին, հասան մեջ կես դաշտին,
Իրենց միջին խորհուրդ արին,
Չոքան, լացին, Աստուած կանչին,
Բողէ ուրձէն խաչ շինեցին,
Չորս գլուխներ խնձոր զարկին,
Թըղենի թփով փաթաթեցին,
Կայնան դիմաց, խաչ հանեցին,
Տուին իրար, համբուրեցին,
Տարան, ղըրին կանափոցին,
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Չոք մ'էլ չոքան, մէկ մէկ բերան
«Տեր, ողորմեա» կանչեցին
Չոքան, լացին, աղաչեցին,
Աստուծմէ շատ խընդրեցին,
«Դու շնորհք տաս Կարոս խաչին»։
Շնորհք եկավ Կարոս խաչին,
Բողէ խաչ արծաթ դարձուցին,
Խնձորներ ոսկի դարձուցին,

Կայնան դիմաց, խաչ հանեցին,
Մէկ մէկ ծունըր աղոթք արին,
«Տեր, ողորմեա» կանչեցին,
Մասունք երկնուց մեջն իջուցին,
Թռավ, գընաց մեջ Կարոս ածուին,
Գիշեր լուս կաներ վեր Կարոս ածուին,
Ցերեկ հով կաներ վեր Կարոս ածուին,
Անուն Կարոս խաչ կոչեցին.
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Երազ գնաց տեր Օհանին,
«Արի տար ինձ եկեղեցին.
Գիշեր մեծ լոյս տամ տաճարին,
Յերեկ հով անեմ՝ աշխարհին»։
Նլավ պատմեց մեծ իշխանին,
«Խաչ մէ եղեր հայոց ազգին,
Անուն դըրած Կարոս՝ խաչին,
Բերենք, դընենք մեր տաճարին»։
Յերեկ հով կանի մեր աշխարհին
Գիշեր լոյս կըտա մեր տաճարին։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Աստուած աղեկն անէ իշխանին,
Նլավ, կանչեց ժողովըրդին,
Նլան, եկան, ժողովուեցին,
Մեծ քահանան առավ սարկավագ,
Նոթ քահանա, նոթ վարդապետ.
Խաչ խաչվառով Թափոր արին,
«Տեր, ողորմեա» կանչեցին,
Եկան, կայնան դեմ Կարոս խաչին։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Զոքան, լացին, Աստուած կանչեցին,
Կարոս խաչ Թռավ գիրկ Տեր Օհանին,
Ոսկի քարոզ վարդապետին,
Պագավ, դըրավ վեր իր գըլխին։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

«Տէր, ողորմեա» ասացին,
Առան, տարան Կարոս խաչին,
Տարան, դըրին սուրբ տաճարին,
Յերեկ հով կանէր վեր աշխարհին,
Գիշեր լոյս կամար կապէր վեր տաճարին։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Մեկ շուն գըղիր կար մեջ գեղին,
Ուրացավ հայոց լոյս հավատ,
Գընաց, ասաց Քուրդ Պարոնին,
«Խաչ մէ եղեր հայոց ազգին,

Անուն դըրած Կարոս՝ խաչին,
Գիշեր լոյս կըտա վէր տաճարին,
Յերեկ հով կանէ վեր աշխարհին,
Էն վայել չէ հայոց ազգին,
Էն վայել է քո դիվանին,
Ակն ու գոհար քո խանումին,
Յերեկ հով բըռնի քո բերդին
Գիշեր լոյս տա քո քաղաքին»։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Խելքն ընկավ Քուրդ Պարոնին,
Ելավ, կայնավ վեր պարըսպին,
Կանչեց Մահմադ, կանչեց Ալին,
Ասաց. «Խաչ մ'է ելեր հայոց ազգին,
Գնացեք, բերէք Կարոս խաչին,
Էն վայել չէ հայոց ազգին,
Էն վայել է իմ դիվանին,
Ակն ու գոհար իմ խանումին,
Յերեկ հով անէ իմ բերդին,
Գիշեր լոյս տա իմ քաղաքին»։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Ելան, գնացին Մահմադ, Ալին,
Փէտ մի զարկին գեղականին,
Խաբար տարան մեծ իշխանին,—
Աստուած օրհնի էն իշխանին,
Կանչեց Մահմադ, կանչեց Ալին,
Ասաց. «խընդիր կանեմ Քուրդ Պարոնին,
Աղաչանք կանեմ Քուրդ Պարոնին,
Էն բան չունի հայոց խաչին,
Կուզի ոսկի, էս է ոսկին,
Կուզի արծաթ, էս է արծաթ,
Խաչ որ կայ՝ է ոսկի, արծաթ,
Ձեռ մի զարկեք Կարոս Խաչին»։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Առավ Մահմադ, չառավ Ալին,
Յօժար չեղան Մահմադ, Ալին,

Գնացին, հասան դուռ Լուսարին,
Թափկով զարկին էն Լուսարին,
Ելավ բերավ սինով ոսկին,
Ասաց. «Առէք ձեր սոլերի գին,
Դարձեք, գնացեք վեր ձեր հետին,
Ձեռ մի զարկեք Կարոս խաչին,
Էն վայել չէ Քուրդ Պարոնին,
Էն վայել է հայոց ազգին»։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Խելք չընկավ Մահմադ, Ալին,—
Գնացին, կայնան դուռ տաճարին,
Տաճարի դուռ ձին կապեցին,
Թափկով զարկին դուռ տաճարին
Գնացին մըտան մէջ տաճարին,
Ելան, կայնան բէման քարին,
Ձեռ ձրգեցին Կարոս խաչին։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Կատղավ Ալին, կատղավ ուր ձին,
Դարձավ, կերավ իր ձիու ցին,
Կատղավ Մահմադ, կատղավ իր ձին,
Ատամն առավ թևի կաշին.
Ինչպես կտրի ձին իր գարին,
Լըցին մէջ մազե խարարին,
Ուղարկեցին Քուրդ Պարոնին,
Խաբար տարան Քուրդ Պարոնին,
Կատղեր Մահմադ, կատղեր Ալին։
Ծառա կըլնիմ սուրբ Կարոզ խաչին։

Էն հավատուրաց շուն գղիր,
Խելքի ձգեց Քուրդ Պարոնին,
Ասաց. «Էն բան չէ Կարոս խաչին,
Էն բան է հայոց ազգին»։
Խելքն ընկավ Քուրդ Պարոնին,
Ելավ, կայնավ բերդի բրջին,
Ձեն մի տուավ մեջ իր բերդին,
Կանչ մէլ կանչեց մէջ իր քաղքին,
Ասաց. «Ելէք, զորք կապեցեք,

Գընացէք դեմ Կարոս խաչին։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Ծլավ, եոթ գունդ զորք ժողովեց,
Ճամբա դըրավ վեր Կարոս խաչին,
Գնացին, հասան մէջ կէս դաշտին,
Առջին դարձավ վեր եաինին,
Եաին դարձավ վեր առջինին,
Ատամ առան իրենց կաշին,
Իրար տուին սըրին, թըրին,
Լեշե բերդեր շինեցին,
Արնե գետեր կապեցին,
Ամենքն իրար կոտորեցին,
Էն զորքերի վերջը բերին։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Մէկ խաբրաբեր պրծավ, գընաց,
Խաբար տարավ Քուրդ Պարոնին,
Ասաց. «Աստուած քո տուն քանդի,
Գնացինք, հասանք մէջ կէս դաշտին,
Եաին դարձավ վեր առջինին,
Առջին դարձավ վեր եաինին,
Ատամ առան իրենց կաշին,
Իրար տուին սըրին, թըրին,
Լեշե բերդեր շինեցին,
Արնե գետեր կապեցին,
Ամենքն իրար կոտորեցին,
Մեր զորքերի վերջը բերին,
Ես խաբրաբեր պըրծա, եկա»։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Խելք չընկավ Քուրդ Պարոնին,
Ասաց. «Էն բան չէ Կարոս խաչին,
Էն բան է հայոց ազգին,
Խաչն որ կայ, է արծաթ, ոսկին,
Էն վայել չէ հայոց ազգին,
Էն վայել է իմ դիվանին,
Ակն ու գոհար իմ խանումին»։

Ելավ, կայնավ բերդի բըրջին,
Ձեն մ' էլ առավ մէջ իր բերդին
Կանչ մ' էլ կանչեց վեր իր քաղքին։
Ասաց. «Ելէք, զորք ժողվեցեք,
Գնացեք դեմ հայոց աղգին։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Բերդ երերաց վեր յուր հիմին,
Կատղավ Պարոն մէջ իր բերդին,
Ձին էլ կատղավ մէջ ախոռին,
Կատղավ մանուկ օրորոցին,
Կատղավ խանում մէջ իր օդին,
Կաթն էլ կատղավ մէջ պըղնձին,
Կատղավ գըղիր մէջ իր գոմին,
Դարձավ, կերավ միսն իր անձին։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Ձիղջն ընկավ սիրտ Քուրդ Պարոնին,
Ելավ, ընկավ վեր իր չոքին,
Ասաց. «Քառսուն կարաս ոսկի ունիմ,
Խոստում կանեմ Կարոս խաչին,
Ես կայնիմ մեջ իմ բերդին։
Քառսուն կըռուան գոմեշ ունիմ,
Խոստում կանեմ Կարոս խաչին
Տըղէն կայնի օրորոցին.
Քառսուն անծին երինջ ունիմ,
Խոստում կանեմ Կարոս խաչին,
Խանում կայնի մեջ իր օդին։
Քառսուն ճյուղ կտիր ոչխար ունիմ,
Խոստում կանեմ Կարոս խաչին,
Իմ բերդ կայնի վեր իր հիմին։
Քառսուն գութան դաշտ կու բանի,
Էն էլ մատաղ Կարոս խաչին,
Ձին էլ կայնի մէջ ախոռին,
Քառսուն նախիր դաշտ կարածի,
Էն էլ մատաղ Կարոս խաչին,
Կաթն էլ կայնի մէջ պըղընձին»։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

Մատաղ չանցավ մոտ Կարոս խաչին,
Հավան չեղավ էն խոստումին,
Քուրդ Պարոնի բերդ ավերեց,
Աշխարհ թափան, էկան վերան.
Հիվանդացուց էն շուն գըղրին,
Կերն ընկավ գըղրի բերան,
Մեռավ, տարան լէշ խորեցին,
Շըներ հանին, տարան, կերան։
Ծառա կըլնիմ Կարոս խաչին։

41. ԿԱՐՈՍ ԽԱՉ

Մէկ շաբաթ օր լեռս կիրակին,
Քեառսուն խոտաղ իրար ժողվան,
Գնացին խասան մէջ կես դաշտին,
Մեջկներ խորհուրդ արին
Պողե խաչ ըմ շինիցին։
Չորս ծերեր խնդորիցին,
Գեղի թաֆով փաթուլիցին,
Կար-կանաչով շուշփաւիցին,
Քոլողներ դրին գետին,
Ուրենց Աստուած կանչիցին,
Չէոքան խաչի դեմ խաչխանիցին,
Դարձան էկան խանբուրիցին։
Վէր էն պողէ խաչին՝
Էրկնուց գորքն ու շնոխքն ելուցին։
Ծառա կ'էլնեմ էն սուրբ խաչին.
Քէառսուն ձեռնով խաչ վերուցին,
Էկան խասան մեջ կես դաշտին,
Ծառա կ'էլնեմ էն սուրբ խաչին,
Թռավ գնաց մեջ Կարոս ածուին։
Քէառսուն խոտաղ վեր էսա խրաշքին
Չէոքան գետին ծունդր մերկու աղոթք արին,
Ուրենց Աստուած կանչիցին։
«Կարոս խաչ, Կարոս խաչ» կանչիցին,
Մոտացան խաչ խամբուրիցին,
Խաչի անուն «Կարոս» դրին։
Ծառա կ'ելնեմ Կարոս խաչին,

Մեռնեմ ուր շատիկ խրաշքին։
Ուր անխաոնելի սուրբ զորութինին։
Կարոս խաչին մեռնեմ ուր խրաշքին,
Էրազ գնաց էն գեղի մեծ քախանին,
Ասաց.—«Արե դիկ տար դիր մեջ տաճարին,
«Ցերեկ խուվ կանեմ վեր ձեր գեղին»։
Ծառա կելնեմ Կարոս խաչին,
Մեռնեմ ուր շատիկ խրաշքին,
Ուր անխաոնելի սուրբ զորութինին։
Մեծ քախանեն ուր երազ բարի լուսին,
Էլավ պատմեց՝ էն երկրի մեծ իշխանին,
— «Խաչ մէլեր ի խայոց ազգին
«Իկե ինգե մէջ մեր գեղի քեավշանին
«Իկե ինգե մէջ կես դաշտին, մէջ Կարոս ածուին,
«Ինոր համար անուն դրած Կարոս խաչին,
«Որ երեկ գիշեր էկավ իմ երազին,
«Ասաց—«Ձիկ տարեք դրեք մեջ տաճարին,
«Գիշեր լեոս կուտամ ձեր տաճարին,
«Ցերեկ խուվ կանեմ վեր ձեր գեղին։
Ծառա կելնեմ Կարոս խաչին,
Մեռնեմ ուր շատիկ խրաշքին,
Ուր անխաոնելի սուրբ զորութինին,
Աստուած բարին տա էն իշխանին,
Ամր արաց ուր ջուղամաթին։
— «Էլեք էրթանք խետ մեծ-քախանին,
Խետ սարկավագին, խետ դպրին,
«Աղոթք անենք դեմ երկնքին,
«Էրթանք մոտ էն Կարոս խաչին,
Առնենք բերենք մէջ մեր գեղին.
Տանենք դնենք մէջ տաճարին...»։
Ծառա կելնեմ Կարոս խաչին,
Մեռնեմ ուր շատիկ խրաշքին,
Ուր անխաոնելի սուրբ զորութինին։
Մեծ քախանէն սուրջաո կեամկին,
Մեծ իշխանն թուրն կողքին,
Մարդ կնիկ, ճիժ պիժն էն գեղին,
Ջուղամաթով էլան գնացին,
Որ բիրեն Կարոս խաչին։
Խասան մոտ Կարոս ածուին,

Խստում արին, «տեր ողորմեա» կանչիցին,
Մէկ էլ տեսան Կարոս խաչ ուր խրաշքով,
Թռավ նստավ գիրկն մեծ քախանին,
Որ պագնց գրեց վէր ուր գլխին,
Ասաց.—«Ծառա կէլնեմ Կարոս խաչին.
«Մեռնեմ ուր շատիկ խրաշքին,
«Ուր անխաոնելի սուրբ զորութնին...»
Խաչ ավետրնով, խունկ բուրվառով,
Առին բիրին Կարոս խաչին,
Բիրին դրին մէչ Տաճարին։
Ծառա կէլնեմ Կարոս խաչին,
Մեռնեմ ուր շատիկ խրաշքին,
Ուր անխաոնելի սուրբ զորութնին։
Գիշեր լեոս կամար կապեց վեր էն գեղի գումբերին
Ցերեկ խով կամար կապեց վեր էն գեղին։
Խեռ լսողաց շուն գղիր ըմ կեր մեջ էն գեղին,
Որ քառսուն տարի ծառայեր էր էն գեղին,
Խարիր իսուն տարի ընցեր էր վէր ումրին,
Անիծած գղիր գնաց մոտ քյուրդ պարոնին,
Մատնեց մեր շատախրաշ Կարոս խաչին։
Ասաց.—«Բան ըմ կա մեր խայոց աղգին,
«Էն չի վելի խայոց աղգին,
«Էն կը վէլի քյուրդ Պարոնին։
«Խաչ ըմ կա մէչ մեր տաճարին,
«Էն չի վելի մեր տաճարին,
«Էն կը վելի քեռ դիվանին,
«Գիշեր լեոս կուտա քեռ դիվանին,
«Ցերեկ խով կանի վէր քեռ խանըմին,
«Գիշեր լեոս կուտա քեռ քեռշկ-սարին»։
Խելքն ինկավ քյուրդ պարոնին,
Էլավ կայնավ վեր բադունին,
Կանչըմ կանչեց խայոց ջաղամաթին,
Ասաց.—«Խաչ ըմ կա խայոց աղգին,
«Գիշեր լեոս կուտա ձեր տաճարին
«Ցերեկ խով կանի վեր ձեր գեղին,
«Էն խաչ չի վէլի խայոց աղգին,
«Էն կը վէլի քյուրդ Պարոնին,
«Էն խաչ չի վէլի ձեր տաճարին,
«Էն կը վելի իմ դիվանին...»։

Ծառա կէլնեմ Կարոս խաչին,
Մեռնեմ ուր շատիկ խրաշքին,
Ուր անխաոնելի սուրբ զորութինին։
Էն գեղի մեծ քախանէն ու մեծ իշխան,
Էլան երամով ժողվան էկան,
Թասով արծաթ, ոսկի ժողվին բիրին,
Չէոքան առջև քյուրդ պարոնին,
Աղաչիցին՝ լալով ասին,
— Առ քէ արծաթ, առ քէ ոսկին,
Դայմիշ մէլնե Կարոս խաչին,
Դյուշման մէլնե Կարոս խաչին,
Խաչ կը վելի խաչապաշտին
Խաչ չի վելի մուսուլմանին...։
Ծառա կելնեմ Կարոս խաչին,
Մեռնեմ ուր շատիկ խրաշքին,
Ուր անխաոնելի սուրբ զորութինին։
Պարոն քըռխավ վեր մեծ քախանին,
Քըռխավ վեր մեծ իշխանին, վեր երամին,
Ասքեար արաց վէր էն գեղին,
Կատղավ ասքեար մեջ կես դաշտին,
Առաջինն դարձավ վէր եաինին,
Եաին դարձավ վեր առջինին,
Ջանդկէ բերդ կայնավ մէջ կէս դաշտին,
Խաբար տարան քյուրդ պարոնին,
— Քեո ասքար խասավ մէջ կէս դաշտին
Առջին դարձավ վէր եաինին,
Եաին դարձավ վեր առջինին,
Ջանդկէ բերդ կայնավ մէջ կէս դաշտին,
Արուն՝ գետ դարձավ մէջ կէս դաշտին։
Ծառա կելնեմ Կարոս խաչին,
Մեռնեմ ուր շատիկ խրաշքին,
Ուր անխաոնելի սուրբ զորութինին։
Կատղավ Ալին, կատղավ ուր ձին,
Դարձավ կերավ ուր ձիու ցին,
Կատղավ խանըմ մէջ դիվանին,
Կատղավ մանուկն ուրուրոցին,
Կատղավ գղիր մէջ ուր տախտին,
Դարձավ կերավ միսն ուր ջանին։

Էսա որ տեսավ քյուրդ պարոն,
Փեռշման ելավ ուր ասածին, ուր արածին,
Ժողվեց ուր ջաղամաթ գնաց առջև Կարոս խաչին,
Ջաղամաթով չեռքան առջև Կարոս խաչին,
Քյուրդ պարոն ձեռն իտիր ականջին,
Սիրտ պլավ, արցունք լցուավ մէջ ջուխտ աչքին.
Դառնիկ ձէնով կանչ ըմ կանչեց Կարոս խաչին.
«Քեառսուն լծկան գեոմեշ ունեմ,
Կուրբան կանեմ Կարոս խաչին,
Դայմիշ չէլնի իմ խանըմին։
Քեառսուն կտիր ոչխար ունեմ,
Կուրբան կանեմ Կարոս խաչին,
Դայմիշ չէլնի իմ մանուկին։
Քեառսուն գյուղյում ոսկի ունեմ
Խաչխամբյուր տամ Կարոս խաչին,
Դայմիշ չէլնի իմ Մարալին,
Դայմիշ չէլնի իմ քեոշկ-սարին։
Ծառա կելնեմ Կարոս խաչին,
Մեռնեմ ուր շատիկ խրաշքին,
Ուր անխասնելի սուրբ զորութինին։
Որ ձեն դարձավ քյուրդ պարոնին.
Կատարեց մուրազն անորենին,
Խրաշք նշանց իտուր էն այլազգին։
Մուրադեց Ալին մէջ ուր քեոշք-սարին,
Մուրադեց խանըմ մեջ դիվանին,
Մուրադեց մանուկն ուրուրոցին,
Մուրադեց Մարալ մէջ ուր փայխին։
Ծառա կէլնեմ Կարոս խաչին,
Չի թող մէկ քեար վէր ուր քեարին,
Որ պատուցուց էն շուն գլրին,
Ասին տարան լեշ խորիցին,
Շներ խանիցին տյուս լըփըռտիցին։
Ծառա կէլնեմ Կարոս խաչին,
Մեռնեմ ուր շատիկ խրաշքին,
Ուր անխասնելի սուրբ զորութինին։
Խայ ու քյուրդ երամով ժողվան գնացին,
Չեռքան առջև Կարոս խաչին,
Խնդիրք արին, Դիլաք արին,
Ժամ պատարագ, մատաղ արին,

Ուրենց քեաղցրիկ Աստուած կանչիցին,
Որ շնորհք իտու, խրաշք իտու Կարոս խաչին։
Ծառա կէլնեմ ուր սուրբ ղորքին,
Անխախտ մնաց մէջ տաճարին,
Գիշեր լեոս կամար կապեց վէր գումբեթին
Յերեկ խավ կամար կապեց վէր էն գեղին։
Ջուղամաթով տանք ողորմին,
Էն լեոս խոգի քեառսուն խոտղին,
Որ սաբիր ելան Կարոս խաչին,
Մեռնեմ ուր շատիկ խրաշքին,
Ուր անխաանելի սուրբ ղորութինին,
Ծառա կելնեմ Կարոս խաչին։

42. ԿԱՐՈՍ ԽԱՉ

Օրն էր շաբաթ լոս կիրակին,
Գեղի խոտղներ ժողվան դաշտին,
Ժողվան մեչկներ խորուրթ արին,
Պերին փետե մ՝ խաչ շինեցին,
Թևկեր ճառճատկով կապիցին,
Առին կապլով փաթուիցին,
Առին պարխով մեկ նախշիցին,
Ծաղ ու ծաղկով շուշպայիցին,
Ուր չորս թևեր խընձորիցին,
Մեկ իսպայի տեղ տընկիցին,
Նոր քոլողներ ուրանց առին,
Առին, խաչի տեմ չոքեցին,
Աղոթք արին, երկիր պաքին,
Արթար խուկով աստված կանչին,
Ջոքևչոք առէչ գընացին,
Գընացին՝ խաչ խամփուրիցին,
Աջու ծեռնով խաչն առիցին
Աղոթելով գեղ պերիցին։
Երկնուց ղորքը շընորհք իչավ,
Իչավ վերեն էնա խաչին,
Խաչն էր խամփարցավ ի վերին,
Իչավ մեչ Կարոսի ածվին,
Խորոտ, խամեղ կարոս ածվին,

Մեռնեմ ուրան սուրփ անունին,
Խոտողներն աղօթիցին,
Խաչի անուն Կարոս տրին։
Մեռնեմ ուրան խուր-խրաշքին,
Երազ գնաց գեղի քոխվին,
Ասաց, ղիկ տար ի տաճարին,
Վոր պահպանեմ ի ծեր գեղին։
Քոխվեն ելավ բարի լուսին,
Պատմեց գեղի ճոչ մելիքին.
— Խաչ մի եկեր խայոց աղգին,
Ինչ դաշտ մել Կարոս ածվին,
Եկավ գիշեր իմ երազին,
Ասաց ղիկ տարեք ի տաճարին,
Գիշեր լոս տամ ի տաճարին,
Ցերեկ խով անեմ վեր գեղին...
Մելիք կանչեց ուր ջամյաթին,
Կանչեց դըպիր, քահանին,
Աղօթք արին տեմ երկընքին,
Ասին, երթանք Կարոս խաչին
Առնենք, պերենք մել մեր գեղին,
Տաննենք տընինք մել տաճարին։
Քահանեն խետ սարկավաքին,
Սուրփ խաչ-ավետարան ծեռին,
Ճոչ մելիք խետ ուրան քոխվին,
Ճամայաթով գեղի խալխին,
Քըշոց խաչվառ առին գացին,
Որ պերեն սուրփ Կարոս խաչին։
Որ խասան մոտ Կարոս խաչին,
Ծունկ չոքեցին, աղօթք արին,
Ելան ճամյաթ աչու ծեռնով,
Կարոս սուրփ խաչը վերուցին,
Խաչ, ավետրան, խունկ-փուրվառով,
Բերին, տրին մել տաճարին.
Գիշեր լոս տար մել տաճարին,
Ցերեկ խով տար ի վեր գեղին։

Քուրդ մազդար մի կար էն գեղին,
Գնաց մատնեց քրդու բեգին,
Ասաց.—Պամ կա խայոց աղգին,

Որ տրեր են մեչ տաճարին.
Գիշեր լոս տա մեչ տաճարին,
Ցերեկ խով տա ի վեր գեղին.
Են վայել չի խայոց ազգին,
Են վայել ի քրդու բեգին.
Բերես տընես մըչ դիվանին,
Գիշեր լոս տա քո դիվանին,
Ցերեկ խով տա քո էլյաթին։

Խելքը առեց քրդու բեգին,
Խրկեց կանչին ճոչ մելիքին.
Կանչին քոխվա, քահանին,
Հոքմը արեց,—ծեղնև կուզեմ
Որ պի պերեք կարոս խաչին։
Խայեր ինչքան ազաչեցին,
— Դայմիշ մելներ կարոս խաչին,
Կը տանք քուլուր արծաթ-ոսկին,
Դայմիշ մելներ կարոս խաչին,
Խաչ կը վելի խաչապաշտին,
Խաչի չի վելի մուսուլմանին։

Քըռխավ բեգը վեր Մելիքին,
Խավատ քյաշեց խայոց ազգին.
Հոքմ արեց իր խալամքերին,
Ճառթել խայեր տարբուդաղին,
Ջոռով բերել կարոս խաչին,
Մեռնեմ կարոս խաչի զորքին,
Որ խուլամներ վըրա տըվին,
Ջը ճանչցան մեկ ըզ մեկին,
Առչին տառցավ վեր հիտենին,
Հետին տառցավ վեր առչըվին,
Տվին իրար, ճառթին փըռին,
Արուն վազեց մեչ ի դաշտին...

Խաբար գնաց քրդու բեգին,
Ասին,—Քո զորք մեչ էն դաշտին,
Առչին տառցավ վեր հետինին,
Հետին տառցավ վեր առչըվին,

Ջանդակ թափվել վեր են դաշտին,
Արուն վազի լըման գետին...

Քըրդու բեգն էր քաշեց ուր ձին,
Հոքմը արեց ուր էլյաթին,
Որ կոտորեն խայոց ազգին,
Որ տիրանան Կարոս խաչին։
Բեգ որ եկավ խնծավ ուր ձին,
Ծին կատղավ զարկեց կնտին,
Սարսափն առավ քրդու բեգին,
Կատղավ, փրփուռ տըվավ բերնին։
Կատղավ խանըմ մնչ սարային
Կատղավ տղեկ մնչ լանտիկին,
Կատղավ մուֆտի, մոլա, ֆախկին,
Կըզկըտին միան ուրանց ջանին...

Էսա որ տեսավ քուրդու բեգ,
Փոշման էլավ ուր արածին,
Մեղա եկավ Կարոս խաչին,
Առեց էլյաթ ուր ճամյաթին,
Գնաց առճև Կարոս խաչին,
Թափան առճեռ մեղաեցին,
Լացով, ոխբով աղաճեցին...
Բեգը լացով երկիր ի պաք,
Ծենով կանչեց Կարոս խաչին.
— Քառսուն գութան լըծկան ունիմ,
Մատաղ կանեմ Կարոս խաչին,
Դայմիշ չելնի իմ էլյաթին,
Քառսուն սուրու ոչխար ունիմ,
Մատաղ կանեմ Կարոս խաչին,
Դայմիշ չելնի իմ զավակին։
Քառսուն գուգում խաղնա ունիմ,
Մատաղ կանեմ Կարոս խաչին,
Դայմիշ չելնի իմ մալ-մըլքին։
Քառսուն ծիթխաց ճաղաց ունիմ,
Մատաղ կանեմ Կարոս խաչին,
Դայմիշ չելնի իմ քուլֆաթին։

Մեռնիմ կարոս խաչի զորքին,
Խրաշք իշանց քուրդ անորին,
Կատարեց փափագն այլազգին,
Փրկեց, ներեց քրդու բեգին.
Փրկեց խանըմն ի սարային,
Փրկեց զավակն ի լանտըկին,
Փրկեց մուֆտի, մոլա, ֆախկին,
Մեռնեմ զորացն կարոս խաչին,
Էնա մատնող մազդար քրդին,
Սատկեցուց մեչ ուր օջախին,
Շնէր կախվան լեշ քաշիցին,
Ցրվին, կերան կըզկըզիցին։

Խայը-քուրդ ժողվան գնացին,
Զոքան առչև կարոս խաչին,
Աղաչիցին, պաղատիցին,
Իրանց մրատ դիլաք առին։

Ծառա կըլնիմ սուրփ զորութինին,
Անխախտ մնաց մեչ տաճարին,
Գիշեր լոս տար մեչ տաճարին,
Յերեկ խով տար ի վեր գեղին։

Խավսարական տանք օղորմի,
Էնա գեղի խոտըղներին։
Խաղար բերան տանք օղորմի,
Էն լոս խոկի խոտըղներին,
Իջաթ արին կարոս խաչին,
Մեռնեմ իրա սուրփ խրաշքին,
Զորքն էր շատ կարոս խաչին,
Որ փրկիչ էր խայոց աղգին։

43. ԿԱՐՈՍ ԽԱՉ

Հոտըղներ ժողվան խաչ մը սուքին,
Տարան դրին մըջ բարդոցին,
Պաշտում ու պատարագ էնին,
Կրակ ընկավ բարդոց վառին։
Լուրը գնաց գյուղի ռեսին,

Ժողովեցան էկան տեսին,
Բարդոց վառավ էղավ մոխիր,
Մոխրի մէջեն խաչ մը տեսին,
Տարան դրին մըջ հըր ժամին,
Գիշեր լուս կիտեր մըջ ժամին,
Ցերեկ հով կեներ վըր ժամին,
Ես կը մեռնիմ շատ զորավոր Կարոս խաչին։

Լուրը տուին Ալի Աղին,
Խաչ մը կա մըջ ժամին,
Անի կը վայլե քու քոշք սարին,
Ալի աղեն լուրը ղրկեց Տեր Օհանին,
Խաչը թող տա դնիմ մըջ իմ քոշքին.
Ցերեկ հով էնե վըր քոշքիս,
Գիշեր լուս իտա մըջ քոշքիս։
Տեր Օհանը չտուավ խաչին,
Ալի աղեն հեծավ քառսուն ձիավորին,
Եկավ հասավ ժամու դրին.
Փետ մը ղըրկեց Տեր Օհանին,
Առավ բանլիք, բացեց դռնին,
Գնաց հասավ բեմի քարին,
Ձեռքը քաշուավ կպավ սրտին։
Ոտքը նետեց բեմի քարին,
Ոտքը քաշուավ կպավ սրտին։
Ձիավորներ ետին դարձավ վըր առջնին,
Առջին դարձավ վըր ետընին,
Սկսան իրար ջարդին։
Լուրը եկավ Ալի աղին,
Ճիժը կատղի մըջ օրոցին,
Կնիկ կատղավ վըր օրոցին,
Ալի աղեն ըսավ՝ ես կը մեռնիմ
Շատ զորավոր Կարոս խաչին։

Քառսուն ժընժլով պուղա ունիմ,
Ճապա կենիմ Կարոս խաչին.
Քառսուն անձին երինջ ունիմ,
Ճապա կենիմ Կարոս խաչին.
Քառսուն անձին շշակ ունիմ,
Ճապա կենիմ Կարոս խաչին,

Սաղցավ Ալին վըր ուր ձիին,
Սաղցավ կնիկ վըր օրոցին,
Սաղցավ ուր ճիժ մըջ օրոցին,
Ես կը մեռնիմ շատ զորավոր Կարոս խաչին։

44. ԱՍԼԱՆ ԱՂԱ

Ասլան աղէն մեծ թագավորու տղա էր
Ինչ ղինք մորութ էլավ, անարատ էր,
Մեռնիլ չէր գիտը ինչ կէր։
Ախէր մեր էլան, պիրին, փսակիցին,
Մեկ լավ, ընտիր աղջիկ էնու խամար պիրըն,
Անուն էլ Մարգրիտ։
Քսան ու չորս երկրի երևելի իշխանքտիր
Ժողվեցին, էկան աթոնիս,
Տասնվերկու տարից Ասլան աղեն փսակիցին։
Քեառսուն օր էնու խարսնիս ուրախութեն էրին,
Ծառ, ճոշ, սար, քեար. ուրախութին էրին.
Ինչ որ կեր Ասլան աղի խարսնիս՝
Էդա քեառսուն օր կ'ուտին, կ'խմին, կ'խաղան։

Էլավ տյուս, կան էկավ քեաղքի մեջ,
Կան էկավ, տեսավ մեանչ փողնին մեկ աղքատ մարդ
Ջինք խաբար առից,—էսա մարդ վո՞վ ի մեռացիր,
Ընձի շանք տուեք, տը զենիկ մեռուցիմ։
Ասին.—Էսիկ Գափրիլ Հրեշտակն ի մեռուցի։
Էսաց.—Իսն իմ Ասլան աղէն, թագավորու տղեն,
Էն վո՞վ քեան կտրիճ, որ մեռուցեր զիմ աղքատ մանչ
փողուցին։

Մէկ մարդ էնու պատասխան իտու էսաց.
— Էնի Գափրիելն էր կտրիճ,
Ոտ ըմ գետ էրկինք, մէկն կ'դնէր գետըն,
Համ կմեռուցեր զախքատ, համ զզանգին
Մնաթ չունէր հել մեկ թագավորից։
Ասլան աղէն կանչից էսաց.
— Իս մընաթ չունիմ Գափրիլ հիշտակից,
Իս կ'ըլնիմ, խեծնիմ զբոզ-բեդավին,
Կ'դնիմ քամակ զին սադաֆին,

Կ'կախիմ մոտէն որքերնը ոսկին,
Կառնիմ իմ ձեռ թուր կէծակին,
Կ'ըլնիմ կ'կանգնիմ մեանչ իմ բաղչին,
Որ Գափրիլ շատ կարիճ ը,
Թըխ կնա իմ դեմ կանգնը.
Որ իմ դէմ կանգնը, խիտ կ'կռուիմ,
Կզարկիմ, զհրիշտակ կ'սպանիմ,
Իմ աղքատը փուխ կ'խանիմ։
Գափրիլ հրեշտակ երկնուց էջավ գետըն,
Ասլան աղի դիմաց կանգնավ։
Ասլան աղեն որ խոծավ բող-բեղավին,
Բռնից ուր ձեռ թուր կեծակին,
Դավի կանգնավ էն սուփ հրիշտակին։
Հրիշտակ, որ երկնուց իջավ,
Խատ Ասլան աղին բռնից լախիդին։
Իրիք օր, իրիք գիշիր կռիվ էրավ խատ Ասլան աղին,
Ասլան աղեն թուր սրտով կզարկեր Գափրիլ հրիշտակին։
Իրիք օր, իրիք գիշեր ինչ լըմացավ,
Տէրն քեաղցրացավ,
Գափրիլ հրիշտակ վեար Ասլան աղին բարկացավ,
Ասլան աղեն թուր ձախից.
Գափրիլ հրիշտակ Ասլան աղին սրտով էզար,
էլ չպախից,

Յուշն գլխուց տարավ։
Պիրըցին, թալըցին մեանչ ուր տեղաց.
Էնդեղ էսաց.—Գափրիլ, իս քի բախտ, քի Աստըծուն,
Իս չէր գիտը, որ մեռնիլ կեր աշխարհ։
Էսաց.—Ճար չկայ քյու խոգին տառնիմ։
Շատ ըորջա իննկավ, էսաց։
— Իմ խոգին մ'առնի, իս չհելիմ, հալա քսան տարեկան իմ։
Եսաց.—Զըլնը, նա մեկ մարդ կ'պերիս խոգին տա քյու
խոգու փոխան,

Յա քյու խոգին կ'առնիմ։
Ասլան աղեն լալով կանչից.
— Եաման խերիկ, իսն իմ Ասլան աղեն չհել տղա,
Գափրիլ հրիշտակ զիմ խոգին կ'առնը, մաջալ չկա,
Պիրիս քյու խոգին տաս իմ խոգու փոխան։
Խեր էն դեղ պատասխան իտու, էսաց.
Նս իմ խոգին չեմ իտա քյու խոգու փոխան։

Ես կմնամ սաղ, տյու կինա դատաստան։
Ասլան աղեն կանչից մոր.
— Ո՛վ քաղցրիկ մերիկ իսն իմ քյու տղեն, որ մեկ սրտին։
Քենե կուզիմ քյու խուգին իմ խուգու փոխան։
Մէր կա՞ս.—Ես չիմ իտա իմ տղա—
Տղա խոգին քյու խոգու փոխան,
Տյու ջահիլ կ'մեռնիս, արտար կերթաս դատաստան,
Էլ Գափրիլ հրիշտակ աչքեր ուլուրից վերա
Ասլան աղեն յախու հենց մեռավ
Տեղաց տեղ, «վա՜յ վա՜յ կենի»։
Ճար կտրավ էսաց.—Եաման Գափրիլ մի կնիկ ունիմ,
Ինու մոտեն էլ խաբար առնիմ,
Թի իտու, իտու, չիտու՝ իմ խոգին առ։
Կանչեց.—Ով Մարգրիտ, Գափրիլ հրիշտակ գիմ
խոգին կ'առնը,
Կասի՝ եան մեկ խուգի պիրիս քյու խուգուն փոխան,
Եան չէ՝ կառնիմ քյու խոգին տղա—
Տղա կ'տանիմ դատաստան։
Մարգրիտն էր կանչից, էլաց.
— Ասլան աղեն, քի կ'մեռնիմ,
Իսն իմ էրկու տարուան խարս,
Իմ խոգին կ'տամ քյու խոգու փոխան
Վաղ տյու կ'երթաս, ըզը չ'կանչին որպավարի վեար
աշխարին։
Ասլան աղեն ցավ իթող, Ասլան աղեն ժրավ նստավ։
Ցավ ինկավ կնկան, կնիկ պատկավ։
Գափրիլ հրիշտակ գենու խոգին քաշից, էխան վեար
չոքիրուն։
Հրիշտակ էլավ երկինք։
Միայն Տեր խարցնից, էսաց.—Ի՞նչ կա հրիշտակ։
Հրիշտակ էսաց.—Միայն Տեր, տյու դիտիս, քի այան ը։
Հրիշտակ իջավ գետըն, ղհոգին քաշից, էխան վեար
սրտին։
Կնկան էսաց—խալալ սրտով քյու խոգին կ'տա՞ս էնու
փոխան։
Կնիկ էսաց.—Ես խալալ սրտով իմ խոգին տուիր
իմ իմ մարդու փոխան։
Էլ էլավ մոտ առաջի Աստուած։
Էսաց.—Ի՞նչ կա Գափրիլ։

Էսաց.—Իմ Տեր, Տյու գիտիս, քի այան ը։
Էլ իջավ գետըն, խոգին քաշեց, էխան վեար բոկին։
Էլ կնկան մոտեն խարցնից.
— Տյու քյու խոգին խալալ սրտով կտա՞ս քյու
մարդու փոխան։
Էսաց.—խալալ սրտով տուիր իմ իմ մարդու փոխան։
Ինչ էլավ վեար բոկին, էլ էլավ մոտ առաջի Աստուած։
Էսաց.—Դափրիլ ի՞նչ կա։
Էսաց.—Քի այանը, Տեր, Տյու գիտիս։
Էսաց.—Հայդե կինա, էսաց, խարիր քառսուն տարի
էն էրկըսին էլ ումր տուի էն կնկա խաթրը խամա,
էնու սերթընը խաթրը խամա,
Ինչ մարդուն ըցկան կ'սիրե։
Էլան խարիր քառսուն տարի մնացին աշխարհ,
Կերան, խման, ուրախություն էրին,
Յանդեախ նուր իմացավ, որ մեռնիլ կէր։
Էլավ, փառք իտու Աստըծուն,
Կերան, խման չուր խարիր քեառսուն տարի,
Արտար մեռին, քեացին արքաութիւն։

45. ԱՍԼԱՆ ԱՂԱ

Ասլան աղեն նստի նշխուն յողեն,
Կուտի ուր խաց, կ'խմի ուր գինին,—
Աստանվուր կենի մեանչ աշխրին,
Փաքի չունի աստանվորի մալին։
Պակսավ խաց, պակսավ գինին,
Կանչից ուր նոքարին.
— Առ զփարեն, կինա մեանչ բազարին,
Առ զխաց, առ զգինին,
Շուտ էրի, խասի իմ սողբթին,
Նոքար կինաց մեանչ բազարին,—
Աղքատ մեռիր մեանչ փուղուցին։
Ելավ զգլխու փուշին էտու քհանին,
Մեջաց յիզար էտու պատանքին,
Առից զխաց, առից զգինին,
Յուշ էկավ, խասավ Ասլան աղի սողբթին։
Ասլան աղեն ըսաց.—ինչո՞ւ յուշ էկար
խասար իմ սողբթին։

Ըսաց.—Կուրբան կըլնիմ քեզի, Ասլան աղեն,
Իս կեացի խասա մեանչ բազարին,
Մեկ աղքատ ըմ մեռիր էր մեանչ փուղուցին.
Գլխու փուշին տուի քահանին,
Մեջաց յիզար տուի պատանքին,—
Ձախքատ տարան պախիցին,—
Յուշ էկա, խասա քյու սողբթին։
Ասլան աղի աչքիր դադրավ վեար պյունին,
Ասաց.—Ան վուվն ի առիր զիմ աղքտի խուգին,
Թը կերի՝ թըխ կեա, առնի զիմ քաղցրիկ խուգին։
— Ասլան աղեն կուրբան կ'ըղնիմ քեզի,
Գափրիլ հրեշտակն ի երկնային,
Առի զախքտի խուգին։
Ասլան աղեն կանչից վեար ուր նոքարին,
Ասաց.—Տյուսն ի քեշի բոզ-բէդավին,
Վերա տի զինը սադաֆին,—
Էնու դավին ի՞նչ ի առնի իմ աղքտի խուգին։
Ասլան աղեն իջավ մեանչ մեյդանին,
Կանչից Գափրիլ հրիշտակ երկնային,
Էսաց.— Տյու բան ի՞նչ ունիս իմ աղքտին,
Որ կառնիս զիմ աղքտի խուգին,
Էրի ըստա առ զիմ քեաղցրիկ խուգին։
Գափրիլ հրիշտակն երկնային
Կռիվ էրավ խատ Ասլան աղին,
Կռիվ էրին չում կեսօրին։
Գափրիլ հրիշտակ Յուշիկ կզարկեր Ասլան աղին,
Ասլան աղեն սրտե դարբ կ'զարկեր հրիշտակին։
Կեսօրին հրիշտակ աչքիր շլից վեար Ասլան աղին.—
Ասլան աղէն ավալ-թավալ էկավ, ինկավ վեար ուր
դեռշակին։
Խերիկ էսաց.—Կուրբան կըլնիմ քի, Ասլան աղեն,
Ի՞նչ ավալ-թավալ էկիր, ինկիր իս վեար քյու դեռշկին։
Էսաց.—Կեացիր իմ կռիվ խատ Գափրիլ հրիշտակին,
Իկիր կուզի զիմ քեաղցրիկ խուգին։
Ըսաց.—Տյու տու քյու բոզ-բեդավին.
Տյու տու քյու զին սադաֆին,
Տյու տու քյու թուրն ի քրմանին,
Տյու տու քյու եոթ բյուրջի ոսկին,
Տյու տու քյու եոթ բյուրջի արծըթեղեն,—

Տյու մի տա քյու քեաղցրիկ խուգին։
Էսաց.—Դափրիլ հրիշտակին ի երկնային,
Թմահ չենի աստանվորի մալին,
Խոգի մ' կ'ուզի իմ խոգու փոխանկին։
Խեր էսաց.—Իրիք խարիր տարի ումր իմ արիր,—
Նուրափեսա իմ վեար ոսկը աթոռին,
Իմ խուգին չիմ իտա քյու խուգու փոխանին։
Մեր էկավ, էսաց.—Կուրբան կ'ըլնիմ քի, Ասլան աղեն,
Ինչ ավալ-թավալ էկիր, ինկիր իս վեար քյու դեռշակին։
Էսաց.—կեացիր իմ կռիվ խատ Դափրիլ հրեշտակին,
Իկիր կուզի ղիմ քաղցրիկ խուգին։
Ըսաց.—Տյու տու քյու բոզ-բեդավին,
Տյու տու քյու ղին սադաֆին,
Տյու տու քյու թուրն ի քրմանին,
Տյու տու քյու եոթ բյուրջի ոսկին,
Տյու տու քյու եոթ բյուրջի արծըթեղեն.—
Տյու մի տա քյու քեաղցր խուգին։
Էսաց.—Դափրիլ հրիշտակն ի երկնային,
Թմահ չենի աստանվորի մալին,
Խոգի մ'կուզի իմ խոգու փոխանին։
Մեր էսաց.—Իրիք խարիր տարի ումր իմ արիր,
Նուրախարս իմ քեոխն իրիսին,
Իմ խոգին չիմ իտա քյու խուգու փոխանին։
Կնիկ էկավ, էսաց.—Կուրբան կ'ըլնիմ քի, Ասլան աղէն,
Ինչ ավալ-թավալ էկիր, ինկիր իս վեար քյու դեռշակին։
Էսաց.—Կեացիր իմ կռիվ խատ Դափրիլ հրիշտակին,
Էկեր կուզի ղիմ քեաղցրիկ խուգին։
Էսաց.—Տյու տու քյու բոզ-բեդավին,
Տյու տու քյու ղին սադաֆին,
Տյու տու քյու եոթ բյուրջի ոսկին,
Տյու տու քյու եոթ բյուրջի արծըթեղեն,—
Տյու մի տա քյու քեաղցրիկ խուգին։
Էսաց.—Դափրիլ հրեշտակն ի երկնային,
Թմահ չենի աստանվորի մալին,
Խոգի մ' կ'ուզի իմ խուգու փոխանին։
Ասաց.—Ես չէր գիտը, թը խոգին կ'ուզին խուգու
փոխանին,—
Խալալ սրտով իմ խոգին տուիր իմ քյու խուգու փոխանին։

Գափրիլ հրիշտակ պխոգին քաշից չուր վեար սրտին.
Էսաց.—Քյու խոգին մի տա էնու խոգու փոխանին.
Խեր էկավ՝ չետու, մեր էկավ՝ չետու,
Տյու ի՞նչու կ՝տաս էնու խոգու փոխանին։
Էսաց.—Ես խալալ սրտով իմ խոգին տուիր իմ էնու
խոգու փոխանին.—
Վաղը պը չ՝ըսին տատ որպավարին։
Գափրիլ հրիշտակ կինաց էրկինք,
Խարցմունս էրավ Տիրոջ մոտն,
Էսաց.—Խեր էկավ՝ չետու, մեր էկավ՝ չետու
տղու խոգու փոխանին,
Կին էկավ՝ խոգին կ՝տա էնու խոգու փոխանին,
Էսաց.—Կինա տո Հայրի խոգին, մայրի խոգին,
Խինգ խարիր տարի ումր իմ տըվի,
Բըխ աստանվուր էնին վեար աշխրին։

46. ԿԱԳՈՒԱՆ ԱՍԼԱՆ

Կագուան Ասլան քսան մեկ տարեկան,
Ունէր իրեք խարիր վացցուն վեց աղքատ մըչ
աստնուորիս.
Կը խմեր նուան գինի, քեֆ խոշութին կաներ,
Չի գիտեր մեռնել կա մըչ աստնուորին։
Օրերաց մէկ օրը՝ մեկ աղքատ էկավ, ասաց.
— Կագուան Ասլան, քու աղքատն ի մեռեր մանչ
վողուցըն։
Կագուան Ասլան թուղից խաց, թուղից նուան գինին,
Ասաց.—Ո՞վ ի առէր իմ աղքտի գառնիկ խոգին։
Խեծավ բողբեկին. քշեց գինաց մանչ դաշտին։
Ասաց.—Ո՞վ ի առեր իմ աղքտի գառնիկ խոգին։
Աստծուն շատ դժար էկավ. Գաբրիել խրիշտակ օղորկեց։
Էկավ, ասաց.—Կագուան Ասլան, յո՞ւր կերթաս։
Ասաց.—Կերթամ, չըմ գիտի, ով ի առիր իմ աղքտի
գառնիկ խոգին։
Ասաց.—Ես իմ առիր քու աղքտի գառնիկ խուգին.
Ասաց.—Ի՞նչու առիր իմ աղքտի գառնիկ խուգին,
Արի մայդան, ես դյու, կռիվ էնինք։
Տուեցին, կռիվ արեցին մինչև իրիկուն.
Գաբրիել խրիշտակ չի խմըշեր որ զարկեր,

Կագուան Ասլան սրտեն կը զարկեր։
Էկավ մինչև իրիկուն, Դաբրիել խրիշտակ շատ նեղացավ.
Յաչքեր շուռ տուեց, ոտքիր բռնից, մինչև գլխի գագաթը
մղաց։
Գլուխը ցավաց, սիրտը ցավաց, չուքեր թուլցավ,
Չյուր մշակներ մտան թիվքիր, տարան թալցըն մանչ ուր
տեղաց։
Դաբրիել խրիշտակ խիծավ իրա ձին, խագեավ իրան շորիր.
Ձեռ առավ իրան կապոյտ վարուցը,
Կագուան Ասլան գլխի վերև կանգնավ.
Ասաց.—Պտի ավանդեմ քյու քեաղցրիկ խոգին։
Խուգին քաղուից մինչիվ չուքիրը.
Կագուան Ասլան չի գիտեր մեռնիլ կա մանչ աստնուորիս,
Ասաց.—Կանչիմ իմ մեր գա,
Բալքի յուր խուգին տա իմ խուգու փոխանին։
Մեր իկավ, ասաց,—Մերիկ.
Դաբրիել խրիշտակ կուզի իմ քեաղցրիկ խուգին.
Արի, քյու խուգին տու իմ քեաղցրիկ խուգու փուխանին։
Էսաց.—Իս ինչ անիմ, ուրդի.
Իրիք խարիր վացցուռվեց տարի ումր արեր իմ.
Մանչ աստնուորիս չուր Հարսն իմ, քուզ իրիսիս ի,
Իմ քեաղցրիկ խուգին չըմ ըտամ քյու խուգու փոխանին։
Մերը թուղից գինաց։
Կագուան Ասլանի խուգին քաղուից, էլավ պուրտը,
Էսաց,—կանչըցեք իմ խեր գա.
Բալքի յուր խուգին տա իմ քեաղցրիկ խուգու փոխանին։
Խեր էկավ. էսաց.—Ուրդի, ի՞նչ կասիս։
Կասի.—Դաբրիել խրիշտակ կուզի իմ քեաղցրիկ խուգիս։
Արի, քյու խուգին տու իմ քեաղցրիկ խուգու փոխանին։
Է՛, ուրդի՛ս,
Իրիք խարիր վացցուռ վեց տարը ումր իմ արեր մանչ
աստնուորիս.
Թագ գլխիս ի.
Իս չըմ իտա իմ քեաղցրիկ խուգիս քյու խուգու
փոխանին.
Նուր կեանք տանիմ մանչ աստնուորիս։
Խէր թուղից, գինաց։
Կագուան Ասլանի խուգին քաղուավ.
Իլավ մինչիվ դոշը։

Իրա ճար-իլաճը կտրավ.
Բարեկամ չունէր աշխարքի էրեսին,
Մարգրիտ անուն նշանլու ուներ.
— Կանչէք, ասաց, Մարգըրտին գա.
Բալքի յուր խուգին տա իմ քեաղցրիկ խուգու փուխանին։
Իս կեանք ինիմ մանչ աստնուորիս.
Կանչըցըն, յուր նշանլու-աղջիկ Մարգըրիտ էկավ.
Տըսավ Կագուան Ասլան դառ վիճակի մէջ ի.
Սիրտ փլավ, Աստուած կանչըց, էսաց.
— Կագուան Ասլան, էրկինք, գետին, Աստուած վկա ըլնը.
Իս իմ խուգըն տամ քյու քեաղցրիկ խուգու փուխանին։
Մարգրտի խուգըն քաղուից.
Կագուան Ասլան յիտ դարձավ։
Գաբրիել խրիշտակ էլմ էսաց.—Մարգըրիտ,
Ջիկա աստնուորիս լավ լավ տղէք, մեկը բռնը.
Քյու խուգըն մը տա Կագուան Ասլանի խուգու փուխանըն.
էսաց.—Ո՛չ, Կագուան Ասլանի դարտ իմն ի.
Լյուսնակ, էրեգակ, Աստուած վկա ըլնի,
Իս իմ խուգըն տամ Կագուան Ասլանի խուգու փոխանըն.
էգուան օր չասըն, «դառնիկ որբևարի Մարգրիտ».
Աստծուն շատ դժար էկավ.
Իրիք խարիր վացցուն ու վեց տարը ումր տուեց.
Նշանլու Մարգրտին ու Կագուան Ասլանին.
Խոր-մոր խուգըն առավ յուր խուգու փոխանըն.
Նուրեն կեանք արավ մանչ աստնուորիս.
Կագուան Ասլան ու Մարգրիտ
Օղորմի իրանց։

47. ԱԼԵՔՍԱՆՈՍ

Բուրճ մի թամամ ոսկի ունիմ,
Մեոկ էլ թամամ արծաթ ունեմ,
Փառք իմ փառոք ստեղծողին։
Գաբրիել խրեշտակը իջավ, ասաց,
— Եփրեմաց թագվոր,
Անանեաց թագավորի կին,
Քեո բուրճ բատան էզարկ գետին,
Աղքատներաց ցրուի՛.
Աստուած քե տա միջոց որդիմ,

Անուն դնես Ելեքսանին։
Եփրեմաց թագվոր Հավատարիմ չերաց.
Անանեաց թագվորի կին Հավատարիմ էրաց.
էլավ բուրճ բաւան էղարկ գետին.
Քաղաք քաղքով ժողուել էտու.
Աղքատներաց ցրուեց։
Ին օր ին ամիս պահեց փորին,
Աստուած էրեց ին օր թմավ,
Անանեաց թագվորի կին
Ջոք եղար գետին,
Բերեց Ելեքսան որդին։
Դարբել խրնշտակ ասաց.
— Ո՛վ Անանեաց թագվորի կին,
Քեավոր կանես Ոսկեբերան սուրբ Օվաննսին,
Ծառայ կելնիմ ստեղծողին։
Եոթ օր թմավ սուրբ Օվաննս,
Ոսկեբերան քեավոր արին՝
Անուն դրին Ելեքսանին։
Ելեքսան մեկ տարեկան,
Այա Սոֆի պիր հաշնտան,
Ելեքսան երկու տարեկան,
Այա Սոֆի իքի հաշնտան,
Ելէքսան երեք տարեկան,
Այա Սոֆի ուչ հաշնտան.
Այա Սոֆի ուչ հաշնտան,
Ելէքսան չորս տարեկան,
Այա Սոֆի բեշ հաշնտան,
Ելեքսան խինգ տարեկան
Այա Սոֆի ալթի հաշնտան,
Ելեքսան եղավ եոթ տարեկան.
Տարան մըտ սուրբ Օվաննս Ոսկեբերան աշկերտութեն,
էնի էրաց վարպետութեն։
Տասնուխինգ ավուր վերեն,
Ջուապ էրաց Եփրեմաց թագավորին,
Ասաց.—էն օր Աստուած քի տուեր ա,
Ծառա կելնիմ ստեղծողին.
Մենք շանց կտանք քրեական (քերական),
էնի կառնի ղշարական.
Մենք շանց կտանք ղշարական,

Էնի կառնի կտակարան.
Մենք շանց կտանք կտակարան,
Էնի գլխեց չորս գլոխ ավետարան։
Ջուսպ տարին Անանեաց Թագավորին.
— Քեո ելիքսան խասեր, էղև խալսարական։
Անանեաց Թագավորի կին.
Քեաղաք քաղքով ժողուել էտուր.
Կոյս Մարգարիտ նշան էդիր։
Մի չար դյուշման էրի, դէմ առավ.
Ասաց.—Ելիքսան, մեկիկ որդին,
Դավի չաննես խըտ չար բանին,
Ականջ մեններ քեո ծնողին։
Ջուսպ դնաց Ոսկեբերան սուրբ Օվանեսին։
— Ոսկեբերան սուրբ Օվաննես,
Ականջ չէնա ուր ծնողին.
Ականջ կենա քեո դյուշմընին,
Օճախ ընկնի ձեռ դյուշմընին։
Ասաց.—Ով Ելէքսան մէկիկ որդին,
Ականջ մեններ քեո դյուշմընին,
Էրա կեանք աստվուորին։
Ասաց.—Ես դավի չունեմ չար բանին,
Ջեմ մնար մըտ ծնողին։
Անանեաց Թագվորի կին
Ջոք էզար գետին,
Ասաց Ոսկեբերան Սուրբ Օվանէսին.
— Ծառա կըլնեմ քեո ստեղծողին,
Հետ կանանչ մեռոն էս,
Հետ մըտ Աստուած փառավորես,
Տյու խրատ տաս Ելէքսանին,
Օճախ չընկնի ձեռն օտարին։
Ասաց.—Ելէքսան, մեկիկ որդին,
Ականջ էրա քեո ծնողին։
Բերին եոթ օր, եոթ գիշեր խարսնիս արին
Տարան եոթ դարկեախ գեղեցին,
Մեջ սենեկին կոյս Մարգրիտ դրին։
Խասավ կես գիշեր, Ելէքսան
Ասաց.—Կոյս Մարգրիտ,
Իր մատնիք առ մըջ քեո ճկըթին,
Ես կայնեմ իմ եկեղեցին.

Շոտ կը խաոնենք էն չար բանին։
Խավ խոսացին կոյս Մարգրտի
Քեոն տարեր էր, զաչք բացեց.
Կորուսեր էր մէկիկ որդին։
Առավոտուն ժամ ձէննեցին,
Անանեաց թագավորի կին
էլավ չարազ էլից թաս ու թեփռին,
Ասաց.—էրթամ, տեսնիմ խարս ու փեսին։
էկավ-կայնավ շեմաց վերեն, բան չկեր,
Կերթա մըջ գըարկըխին՝ բան չկա,
Կերթար մըջ սեննեկին,
Կոյս Մարգրիտ շեփոր կենե մըջ սեննեկին։
Ասաց.—Ավեր խոր տուն.
Տյու խավան չե՞ս իմ բուրճ բատնին,
Տյու խավան չե՞ս իմ քոչքսարայան,
Թէ խավան չես իմ մեկիկ որդուն,
Որ շեփոր կենես մըջ սեննեկին։
Ասաց.—Խաթուն կիսուր, տյու վեր արի,
Ասաց «Կոյս Մարգրիտ
Իմ մատնիք առ քեո ճկըթին
Ես կայնեմ իմ եկեղեցին,
Շոտ կըխաոնենք էն չար բանին»։
Քունս տարավ անուշ բարձին.
Կորուսեր ի քեո մեկ որդին։
Մոր ծծեր լացին մըջ ծոցին
Ծնկներ առին չուր գետին,
Ասաց.—Ի՞նչ տեսնեմ,
Կորուսեր է իմ մեկ որդին։
Եոսունուերկու տարի
Կուս Մարգրիտ մնաց մըջ սեննեկին։
Անանեաց թագվորու կին
Ուր բուրճ բատան էզար գետին,
Աղքատներաց ցրուել էտու.
Որ կնտընի ուր մէկ որդին։
Ելեքսանոս ելավ ճամբախ.
Դեմ առեց նովովըրին,
Ասաց.—Նովովոր, եոթ օր կա թմի,
Մեկ աման ջուր կարմիր փարչով՝
Մեկ գարե խաց ձի խասուցես,

Էրթամ, աղոթք անեմ,
Կես քե, կես իմ ուստին (չասաց ձի խամար)։
Ելավ, եոթ օր էղավ եոսունուերկու տարի,
Առավոտուն խաչկան ծունտր էդիր,
Ասաց.—Ինչ ջուապ տամ ստեղծողին,
Աղքատ մոռցեր եմ կես ծովային։
Կառնի փառչմ,—պաղ ջուր,
Մեկ գարեխաց
Կերթա ծովու կղզին.
Դեմ կառնի Ելեքսանին։
Ասաց.—Աղքատ, մոռցեր եմ քե
Կես ծովային,
Ինչ ջուապ տամ ստեղծողին։
Ասաց.—բան չկա,
Անոթցեր իմ, խողն իմ կերեր,
Ծարավցեր իմ, շաղն իմ լիզեր,
Աղոթք իմ արեր կես քե,
Կէս իմ վարպետին,
Ասաց.—Ով նովովոր (նովովոր էնու վարպետն էր),
Ծառա կելնիմ քեո նովին,
Եոթ օր ձի մոհլաթ տաս,
Էրթամ տեսնիմ իմ խոր բուռճ բատանին,
Քեոշք ու սարին,
Նոր խալալ սրտով
Իմ քեասաի պարզեմ, խոգիս տամ։
Էրի եոթ օր ման էրի.
Եոսուն ու երկու տարի ոչ լուացուեր էր,
Ոչ թախթըփեր էր.
Առջևու մազեր էրկնցեր էր,
Ջում ոտաց իրիսն էր խասեր,
Իտու մազեր չում կրնկներ էր խասեր։
Էրի խի, Անանեաց թագավորի կին նստեր կուլայ,
Աղքատներ կուշտ աղոթք կանեն.
Կասի.—Անանեաց մեջ աղոթք անեմ,
Բալքի գտնես քեո մեկիկ որդին։
Ասաց.—Եոսունուերկու տարի աղոթք կանեմ
Տեղմ տուեք, էն էլ թո անի։
Ելավ գնաց.
Ինչ ծունտր կը դներ,

Խաչ կը հաներ,
Բերնեն լոս կը բոխեր։
Խալայեղներ էկան գանգատ
Անանեաց Թագվորի կնկան,
Ասացին.—Անանեաց Թագվորի կին,
Էն ինչ կրակ բերան էր,
Բերիր քցիր մըղչ մե,
Բերան կը բանա, կը խփա,
Քեռ մեկիկ որդուն կանիծա։
Անուն էրաց խալաեղներուն,
Տարան եցքին տաք սալերուն
Ծեծին ուփին,
Տարան Թողին տակ փողոցին,
Ջասաց՝ ես իմ քեռ մէկիկ որդին։
Խաց կուտին, կը լուին ժանգոտ Թեփսին,
Տանին լակեր կուտին, կասին.
— Անանեաց Թագվորի կին
Քի զատի խրկեր.
Գլոխ ինչ վիր վիրուցեր,
Կը լցին գլխուն,
Կիգեր խորոտ մազերաց տակ։
Գեղնաց գեանգատ
Անանեաց Թագվորի կնկան,
Ասաց.—Անանեաց Թագվորի կին,
Խրատս տուր քեռ խալաեղներուն,
Կը լուան խորոտ Թեփսին,
Կը բերին լցին խորոտ մուրսին։
Անանեաց Թագվորի կին.
Գեղլեոխ կը վերու.
Օրան կենա, կասի.
— Քեալա օղեր, քեալա բողեր,
Տյու էր կը լուաք խորոտ Թեփսին,
Տանէք, լցնք ինոր մուրսին.
Բեժ ու բեժլեխ էլեքսանին,
Չէ ծիրանին Ելեքսանին։
Էլման գեղնաց, դեմ փողոցին աղոթք էրաց.
Էլման պիրեցին, լակ լցին գլխին.
Էլ չգեղնաց գեանգատ.
Եոթ օր որ Թմավ.

Էլման պիրեցին լակ լցին գեըլխին։
Տեսան, աղքատ խանգեր ա մըջ փողոցին.
Ջուսպ տարին Անանեաց Թագվորի կնկան,
Ասին. Աղքատ մեռեր մըջ փողոցին,
Լուս կամար ա կապեր վեր ինոր։
Էլավ էկավ Եփրեմաց Թագվոր,
Անանեաց Թագվորի կին.
Ջեաղաք քեաղքով Թուփ էլան, Թափան գլխին.
Տեսան աջ ձեռ խփուցեր ա։
Ինչ էրեցին, ձեռ չբացուավ։
Եփրեմաց Թագվոր ասաց.
— Բիրեք քեալփաթին, ձեռ բանանք։
Անանեաց Թագվորի կին ասաց.
— Աման, քեալփաթին մի Թալեք ինոր ձեռ.
Էնի կը մանի իմ էլէքսանին։
Գեացին Ոսկեբերան Սոսիբ Օվաննես բերին,
Ջալալաց հեքիմ բերին.
Ասաց.—Անանեաց Թագվորի կին,
Խապար չունիմ էսա բանին,
Խապար էրեք Սողոմոն իմաստունին։
Գեացին Սողոմոն իմաստուն բերին.
Սողոմոն իմաստուն ասաց.
— Թէ բանա ինոր ձեռ
Մէ կուս կը բանայ։
Մեղեցին, մեղեցին...
Կուս Մարգրիտն է էոսունվերկու տարի
Մէջ սենէկին, գեացին բերին.
Մև փեշ ոսկի լցին.
Մև փեշ խունկ, մոմ կպուցին.
Ձեռ տուեցին.
Ֆռացուցին մեջ խալայեղներաց,
Որ գոնին մեկիկ որդին։
Կուս Մարգրիտ ցրուեց ոսկին,
Գեընաց ինոր մոտ, չոք իզար գեաին։
Ձեռ բացուավ, Թուղթ ինավ ֆըռ մեջ գեոգին։
Սողոմոն իմաստուն Թուղթ առավ, կարդաց.
— «Էրանեկ, իմ մոր անուն Անանիա.
Ջերանեկ իմ խոր անուն Եփրեմիա,

Իմ աներոջ՝ Զաքարիա.
Իմ զոքնչիս՝ Խոռոմսիմա,
Իմ քեավորոջ՝ Ոսկեբերան Սուրբ Օվաննես.
Իմ նշանած՝ կուս Մարգրիտ.
Չէք հավատար—ես ձեր էլեքսանն եմ մեկիկ որդին»։
Կուս Մարգրիտ ասաց.
Ծառա կըլլեմ քեռ գերեզմանին.
Եոթ օր թամավ, ձի կը տանին խնտ քեռ կշտին։
Անանեաց թագվորի կին ասաց.
— Զաղայի խալավ կառնք իմ էլեքսանին։
Սողոմոն իմաստուն ասաց.
— Ինոր մազեր խորենք ինե.
Էնի ընդունելի ա մըտ Աստուած։
Եփրեմաց թագվորի կին ականջ չերաց։
Զաղայի խալավ կառել իտու
Կտոտոդի ձեռքեր չորցավ.
Կարոդի աչքեր կուրցավ,
Մազէ շորեր փաթութեցին, էրին պատանք.
Խրեշտակ Աստծուն էկավ, ասաց.
— Քե ոտավ, գլխով տանիմ դրախտ։
Եոթ օր լուսարարութեն էրեց կուս Մարգրիտ.
Յելէքսանոս մեկիկ որդու գերեզմանին,
Եոթ օր թմավ, մեռավ
Խորեցին խըտ ինոր։

48. ԱԼԵՔՍԱՆ

Եփրեմ թագավոր շատ ուներ մալու խաղնա,
Չունէր մին պտուղ.
Աստավ. «Ով Քեյվանի Աննայի,
Արի զոր ու գիշեր աղոթք անենք,
Աստուած տա մեզի մին պտուղ»։
Օխտը զոր ու գիշեր ժամ ու աղոթք արան,
Աստուած տուավ ընդոնց մին պտուղ.
Դրան լալի ղուճաղը։
Լալի ղուճաղից փախնում էր խարաբաների մեջը,
Յեխե տաճար էր շինում, փետե նավ,
Լալեն էկավ ասավ. «Ով Եփրեմ թագավոր
Քո Ալեքսան շատ գիժ ա, շատ անխելք ա,

Ղուճաղիցս փախնում խարաբանների մեջը,
Յեխե տաճար ա շինում, փետե նով».
Ասավ. «Ո՛վ լալա, ո՛վ ունի իմ Ալեքսանիս բաբը».
Ասավ. «Մէ ջուլհակ ունի քո Ալեքսանի բաբը».
Եփրեմ Թագավորն ասավ.—խազնի դուռը բաց արեք։
Մէ խուրճին ոսկի լցավ, գնաց ջուլհակի դուռը։
Ջուլհակն ասավ. «Ո՛վ Եփրեմ Թագավոր,
Իմ մեղքն ինչ ա, հկեր ես իմ դուռը»։
Եփրեմ Թագավորն ասավ.
— Քեզի ունիս իմ Ալեքսանիս բաբը.
Ջուլհակն ասավ. «Թէ որ ինձ էլ չունենամ,
Ուրիշ տեղից կճարեմ քո Ալեքսանիդ բաբը»։
Ալեքսանի բաբը առան, բերան,
Օխտը զոր ու գիշեր հարսնիք արան.
Տարան, դրան օխթն օթախի մեջը։
Ալեքսանը պոլթա տուավ, ասավ.
«Տեր դու ավատես ընձի էս մեղքիցը։
Նես Մարքրիտ քողքն էրեսեն դեն քցավ,
Ասավ.—Ալեքսան քո խերն ընձի բերեր ա քեզ համար,
Քե բերեր ա ընձի համար.
Արի ուտենք, խմենք անենք աշխարքի քեֆը։
Ալեքսան մատի մատնիքը հանավ,
Տուավ նես Մարգրտին ասավ.
— Օխթը տարուց սորա ես քոնն եմ, դուն իմն ես,
Ձեռ տուավ, շինած դռները բացավ
Գնաց, տեսավ ճամբին մի ճրագի շոհլ ա էրևում.
Տեսավ մի աղքատ նստած ա.
Ասավ.—Ո՛վ աղքատ,
Քո շորերը տուր ընձի, իմ շորերը առ քեզի.
Ասավ.—Ո՛վ Ալեքսան, քո խերն իմանա,
Իմ խողս տոպրակով դուս կածի։
Ասավ.—Դիժ անխելք, տար ուրիշ երկիր, ծախի,
Իմ ջանիս դուա արա։
Առավոտը լուսացավ, մե քեվանի Աննային.
Տեղիցը ելավ, տեսավ, մեկ լացի ձեն ա գալի։
Տեսավ, օխթն օթախի մեջիցն ա գալի.
Գնաց տեսավ նէս Մարգրիտ քողքն էրեսին ջուր ա արե.
Ասավ.—Հեր ես լացում, դիժ ու անխելք,
Մալս ա պակաս եա խազնես»։

Ասավ.—Ի՞նչ եմ անում մալ ու խաղնեդ.
Կես գշերուանից յո՞ւր ա, Ալեքսան որդիդ.
Մեծ քեյվանի Աննային ձեռը տարավ.
Սիպտակ վարսը կիտավ առաջը.
Էլավ գնաց, ասավ.—Ո՛վ Եփրեմ թագավոր,
Ո՞ւր ես քնե, էլի, կես գշերուանից
Ո՞ւր ա քո Ալեքսան որդիդ.
Եփրեմ թագավոր վեր ելավ,
Սիվտակ միրուսը դուրս տուավ, կիտավ առաջը.
Կալի դռները կապել տուավ,
Ժողովուրդը կիտուավ առաջը, ասավ.
— Ո՛վ Եփրեմ թագավոր.
Քո վախեդ ով կարա, քո որդիդ պահե,
Դուս գանք, էլի քո որդիդ կը ճարուի։
Խաղնի դուռը բաց արան,
Մի խուրճին ոսկի լցան, գնացին տեսան,
Ճանապարհին մի աղքատ ա նստած, ասավ.
— Ո՛վ Աղքատ, ասավ, ըստեղից էկավ իմ Ալեքսանիս
հոտը.
Դու իմ Ալեքսանիս տեսա՞ր։
Էդ աղքատը Ալեքսանն էր, աղքատն ասավ.
— Ալեքսան ըստեղէն անցավ, ասավ,
«Իմ խեր ծող էիա օխտը աղքատատուն շինի.
Օխտը տարուց ետո Ալեքսանը քոնն ա, դու Ալեքսանին»։
Եփրեմ թագավոր ոսկին ծողավ աղքատին.
Էկավ աղքատատուն շինավ,
Աղքատներուն հաց տուավ, շոր տուավ,
Մութը կոխեց, Ալեքսանը գնաց մե դուչկարի մոտ ասավ.
— Ինձի համար մի նավ շինի.
Ասավ.—Մութն ա։ Ոսկին կիտավ առաջը.
Ասավ.—Էս խաղնի շոյլովը շինի։
Ալեքսան մտավ նավի մեջը, ընկավ ծովի մեջը.
Օխտը տարի մնաց էդ ծովի մեջը.
Սատանեն էկավ, սատանություն արավ, ասավ.
— Ո՛վ Ալեքսան, ո՞ւր ես մնացե, սև ջուրն էկավ.
Քո խոր տունը տարավ։
Ալեքսան էկավ խոր դռնիցը անցավ.
Տեսավ մեծ քեյվանի Աննան,
Գլոխը դրեր ա նես Մարգրտի ծնկան.

Նէս Մարգրիտն ասավ.—մեծ քեյվանի Աննա.
Ըստեղանից էկավ իմ Ալէքսանիս հոտը,
Ասավ.—Մերդ մեռնի, Ալեքսան յո՞ւր ա.
Օխտը տարուա հետ դու Ալեքսանին ես.
(Չին իմանում օխտը տարին թամամեր ա).
Ելեքսանը գնաց, նստավ աղքատատանումը,
Հաց բերան չկերավ, շոր բերան չխագավ,
Ասավ.—Տեր դու ընձի ազատես էս մեղքիցը։
Աղքատներ էկան, ասին. «Ո՛վ Եփրեմ թագավոր,
Մեկ աղքատ ա էկե, ոչ ուտում, ոչ խմում,
Աստծուն քյուֆուր ա տալի՞։ Ասավ,—գնացեք,
Կալի դուռը խանեք, դրեք ականճի մեջը։
Տարան դրին անկաճի մեջը. Ալէքսան էլի ասավ.
— Տեր, դու ազատես ընձի էս մեղքիցը.
Էկան ասին, ընդունց բեթար ա ասում.
Ասավ՝ խանեք, դրեք աչքի մեջը։ էլ նա ասավ.
— Տեր դու ազատես ընձի էս մեղքիցը,
Էկան ասին, «Ո՛վ Եփրեմ թագավոր,
Ընդուց բեթարն ա ասում։
Ասավ.—Գնացեք քյուլիկը քանդեք,
Դրեք քյուլուկի մեջը։
Թաքի կես քշեր սաղ ա մնացեր,
Կես քշերից հատ մեռեր էր.
Սաղ ձեռքը մնացեր դուս, ձեռի մեջը գիր կար,
Էկան խապար բերին,—Եփրեմ թագավոր,
Աղքատը մեռեր ա, ձեռքին մի գիր կա.
Ինչ անում են չի բացվում։
Եփրեմ թագավոր էլավ գնաց.
Ինչքան ժողովուրդ կար էլան գնացին,
Չկարացան ընտուր ձեռի մեջի թուղթը հանին։
Եփրեմ թագավորն ասավ.
— Ընձի ունեմ նէս Մարգրիտ,
Կարելի ա էն արդար էլնի».
Նէս Մարգրտին կանչին՝ էկավ,
Ձեռքը բացավ, թուղթը ընկավ,
Թուղթը կարդացին, նոր իմացան.
Որ իրանց Ալեքսանն ա։
Թուղթը որ կարդացին,
Նէս Մարգրիտ ընտե մեռավ.

Թագավորը ընկնում ա դրա ոները.—Աման, հրեշտակ ջան, մեղք արի, հլա ջահել ջիվան էմ։

Հրեշտակն ասում ա.—Ընչանք մի մարդի ֆոգի չտաս քո ֆոգու տեղը, ես քեզ բայ չեմ թողա։

Թագավորը ասում ա.—Մի պառավ հեր ունեմ, յավաշ կանչեմ գա, նա իրա ֆոգին իմ ֆոգու տեղը կտա։

Կանչում ա հորը, ասում ա.—Ա՛յ հեր, ես մեղք եմ, հլա ջահել եմ, արի քու ֆոգին տուր իմ ֆոգու տեղը թող սա հնռանա։

Հերը ասում ա.—Ա՛յ որդի ընչան և քեզ հերու եմ, համար հլա ապրել եմ ուզում։ Ես խի՞ եմ քու տեղը մեռնում (կյանքը ինձ համար շատ քաղցր ա), չեմ ուզում (մեռնեմ), թե ուզում ա թող քու ֆոգին տանի։

Թագավորը հրեշտակին ասում ա հերս ռազի չելավ, համա մերս էն սհաթը ռազի կլնի. նա հո չի թողա իրա ազիզ բալին մեռնի, ինքը պառավ կնիկ, սաղ մնա։

Էն սհաթը կանչիլ ա տալի իրա պառավ մորը՝ ասում ա.—Ա՛յ մեր, Գաբրիել հրեշտակը եկել ա, հոգիս առնում ա, համի ասում ա. «թե կուզես մի ուրիշ մարդու ֆոգի տու, ես էթամ», ընչկնի, այ մեր, մեղք եմ, ջահել ջիվան եմ, ինձ ազատա, արի դու իմ տեղակ մեռի, այ տես, ֆոգիս մինչև ծնկներս ա հանել։

Է՛հ այ որդի.—ասում ա մերը,—դրուստ ա դու մեռնես ես լաց կլնեմ, դարդ կանեմ, համա ես հլա ուզում եմ ապրեմ, տենամ էս աշխարքի վերջը ինչ ա ըլնում։

Խեղճ տղի սրտին դանակ տայիր, արին չէր կաթա (բափի), ճարը կտրած, որ էնա քիչ էր մնում, որ ֆոգին բերնովը դուս գա, կնկանը կանչիլ ա տալի։

—Ա՛յ կնիկ,—ասում ա,—հրես Գաբրիել հրեշտակը ուզում ա իմ ֆոգին առնի, դու չես գա իմ տեղակ մեռնի։

—Վա՛յ ֆողն իմ գլխին,—ասում ա կնիկը.—բա դու մեռնես, ես սաղ մնամ, չէ ախպեր, սաղ կյանքս քեզ եմ տվել, մնում ա մի ֆոգիս, ըն էլ առ քու ձեռովը, ինձ տար թաղա, լավն էն ա ես մեռնեմ, դու սաղ մնա։

Էս որ լսում ա Գաբրիել հրեշտակը, մնում ա սառած, էն սհաթը աներևույթ ա ըլնում դրանց աչքիցը։ Դու մի ասի, էթում ա աստուն խաբար տա։ Էթում ա աստուն պատմում ա իրա աչքով տեսածը, անգաջով լսածը։ Աստած էլ, որ լսում ա հրամայում ա Գաբրիել հրեշտակին էրկսի կյանքն էլ իրանց բաշխի։

Անց ա կենում մի սհաթ, էրկու սհաթ մարդ ու կնիկ մնում են սառած իրար երեսի մտիկ անելով։ Մին էլ տեսնում են՝ հրես երկինքը

ախպատակեց, մի թևավոր բան վեր էկավ։ Վեր ա գալի, իրանց կողքին կանում ա, տեսնում էն էն Դաբրիել հրեշտակն ա, էնա խեղճ մարդի սիրտը դողն ընկնում ա, թե էս ոնց բան ա, խեղճ կնիկը իրա տեղակ պտի մեռնի. համա Դաբրիել հրեշտակն ծիծաղում ա, ասում ա.—Աստուծ ձեր էրկսի ֆոգին էլ (կյանքն էլ) ձեզ ա բաշխում, համա էլ ուրիշ անգամ չխառնվեք աստու հրամանի (կարգադրած բաների) մեջ։

Հենց էն խոսքն էն լսում, լսելու բաշտան հրեշտակը անհետացավ (ընում)։

Նոր թագավորն ու թագուհին էրում են պալատումը թագադան քեֆ, ուրախութեն սարքում, աղքատներին բոլ փող բաշխում, օխտն օր, օխտը գշեր ուտում են, խմում քեֆ անում։

Նոր աստանից իրեք կարմիր խնձոր ա ընկնում՝ մինը հեքաթ ասողին, մինը լսողին, մին էլ սաղ ալամ աշխարին։

50. ՍԻՐՈՒ ՀԵՔԻԱԹը

Տղեմ՝ դուզեր պսակվի՝ նագեհան մահ գելնա յառնջ.

— Քու պսակի օր,—կըսե,—դու պտի մեռնիս։

Տղեն կը զարզընդի, ձեն չը հանե, կէրթա, կը հասնի Բլեջնա սարի տակ, կը տեսնա հանդի վըր օդեղեն աթոռքին նստուկ է սիվտակ մուրքով հալվոր մե, գավազանն ի ձեռ, ըդոր յերեսեն լուս կը կաթա։ Հալվոր կը հարցու.

— Տղա, յորի՞ն իս դեղնի, յուր կէրթաս։

— Ես,—կըսե,—մահեն կը փախնիմ, հալ ու հեքիաթ՝ իմ բան բուրդ է։

Հալվոր կը քնծըղա, զգլուխ կը ամբամբցու, զուր մուրուք կը շփե, կը դառնա տղին։

— Օղորդ է, էդ խոպուկ-գոթեցուկից ղըռ մարդ չը կոցեր է ուր գլուխ պրծուցի, համա քըզի կըսիմ, ըդոր մուրուք իմ ձեռն է, ես է կըսիմ, թե ֆլան մարդու հոգին առ, ֆլան մարդ՝ թըզ կառճ ապրի, ֆլան մարդ՝ յերկեն։

— Դու ո՞ն իս, պապե։

— Ընձի ժամանակ կըսին։

— Օր հմալ զորութեն կա քու ձեռք, պապե, քու յոտն իմ յընկի, զիսի ազատե, կը տեսնաս՝ ջըհել տգա իմ, մուրազի տեր, յորի՞ն ընձի վատութեն կէնէ, ի՞նչ իմ էրի ուրին։

Հալվոր կը խղճա, կըսե.

— Քանի որ զբըղի վախեցուցեր է, դու լե փախեր իս, էղի դարբեդար, գնա, համա, իմ աջ դեն, հարիր քելքի վրեն, ալուճի ծառի տակ,

կըննկու աչքի պես ղուլալ յախբուր մի կա, գնա, ըդոր ջուր խմե համ քու վախ կը կտրի, համ համբերութիեն գիկա վրեդ, կէրթաս քու ճամպեն։ Աստված հըտ քըզի, գնա։

Տղեն կը պագե հալվորու ձեռք, շնորհակալ կէղնի, կէրթա ջուր կը խմե, ուր վախ կը կտրե, համբերութիեն գիկա վրեն, գընկնա ճամպա, կէրթա, կէրթա, կը հասնի ծովու յեզր՝ քաղաք մե, քանիմ տարի կը դասի-բանի, բոլամա փարա կը վաստըկի, կը դառնա գիկա։ Տուն կը մտնա թե չէ, տիթ, մահ կը կանե յառնջ։

— Փախեր էր, հա՞. էդ ո՞ն է կոցի իմ ձեռքեն խլըսի, օր դու խլըսեր, դե, գհոգիդ տուր։

Մամն ուրին կը թալե մեջտեղ։

— Իմ ջըհել տղին,—կըսե,—յորի՞ն կը մեռցուս, կառնիս՝ գիմ հոգին առ։

Մահ կը քաշե ըդրա հոգին՝ յոտներուց չուրի բոկ, մամ չը դիմանա զոռին, կըսե.

— Յաման, իմ հոգին մ'առնի։

Պապն ուրին կը թալե մեջտեղ։

— Իմ մեկուճար, իմ տան սուն ու ճրագ տղին մը մեռցու, կառնիս՝ գիմ հոգին առ։

Մահ կը քաշե ըդրա հոգին՝ չոքերուց չուրի լեզվի ծեր, պապ չի դիմանա զոռին, կըսե.

— Քու արևու սադաղեն՝ իմ հոգին մ'առնի։

Էն վախտ տղեն կըսե.

— Չըմ մեղդըրի ըդոց, համ էլ իմ մեղք գիկա վըր ըդոց։ Քանի օր էկեր իս՝ արի էրթանք մըտ իմ հարսնըցուն, թե էնի լե ուր հոգին չը տվեց, ես կամ ու կամ, գհոգիս առ։

Կէրթան մըտ տղի հարսնըցուն։ Աղջիկ օր կը տեսնա զտղին, մահին ըսկի բանի տեղ չը դնե, համա կը վազե, կը փաթվի, տաք-տաք կը պագե, համալ կը գրկվի տղին, կըսիս, մեկ հոգի ու մարմին ին։

— Է,—կըսե մահ,—հերք է, իմ ժամանակ թըմըլավ, մկա ի՞նչ կըսիս։

— Ի՞նչ գուզիս,—կը հարցու աղջիկ։

— Ջտղի հոգին։

Աղջիկ կըսե.

— Ըդրան մ'առնի, գիմն առ։

Մահ կը քաշե ըդրա հոգին՝ էղընգներուց չուրի գլխի մազեր, աղջիկ կըսե.

— Յորի՞ն դիսի կը տանջիս, կառնիս՝ մեկ անգամեն աւ, մինակ թե, առնելուց յառեջ հաղ մը լե թողնիս դիմ նշանած պագիմ, իմ կարոտն առնիմ, էնդուց դեն՝ դու գինաս։

Մահն զաղջըկա հոգին կառնե, հմա շատ կը զարմանա վըր աղջկան, կիշե տղին, կիշե աղջկան, գսիրտ կը կակըղցու, ըղրա հոգին յետ կիտա, կը թորկե կէրթա։ Տղեն ու աղջիկ ուրախ-դուրախ գիկան տուն, իրեք օր, իրեք գիշեր հարսնիք կէնին, կը հասնին ուրանց մուրազին։

Էրկնքեն իրեք խնձոր յիջավ. մեկ՝ հարսին, մեկ՝ փեսին, էն մեկ լե՝ սիվտակ-մորուս հալվորուն, օր չուրի աշխըրի վեռջ՝ էղեր է, կէղնի ու կը մնա։ Ամեն։

51. ՄՈԿԱՅ ՄԻՐՋԵՆ

Գնաշտ էրեր ենք մալաք ամեն,
Թուղթ մել էրի Ջղիրու տարգին,
Եկեր խասավ Մոկայ Միրզեն,
Էն կարդայ քաղցրիկ լեզուեն,
Կախուավ մութեն քեաղվավ կարմիր երեսեն։
Գյուս բերեք էն բոզ տանեն,
Սաֆար կերթամ Ջղերու դարգեն,
Գնայ խասավ չուր Ջղերեն,
Եկին թափան շհար ղրմեն,
Մոկայ Միրզեն կարժեր շըհար ղրմեն։
Խերիք չտեսներ կոլոտ խոջեն,
Առեց փարեն գնայ շուկէն,
Եատու առեց բաշլեն,
Դանակ տեղից մեկ երեսեն,
Եատու կերավ Մոկայ Միրզեն,
Կախուավ մուրուսեն, քեաղվավ կարմիր երեսեն։
Երկինք խասանք չուր Բռնաշեն,
Կուժ ու կթղեն կապած նաշեն,
Խաբար տարեք խերկան մերկան,
Թանկ նաղլխան չտան երկան։
Եկենք խասանք Խնկու տարիեն,
Մեկ հանադեն ջանադեն
Կխադեն էն մեկ խադ։
Եկինք խասանք չուր Միջաթադ,
Խաբար տարեք խերկան մերկան,
Կացեք բարով խազար տարով,

Բանկ նազլխան Թող տան էրկան,
Տարան տրին մըջ կողերուն,
Դյուռն էլ բացին հարավ քեամուն,
Կացեք բարով խազար տարով։

52. ՄՈՒԿԱՑ ՄԻՐՋԵՆ

Թուղթ մ'էկավ Ջղիրու քեաղքեն,
Էկավ, դեպավ Մուկաց Միրզին,
Միրզեն կեարդաց քեաղցրիկ լիզուեն,
Քեամից մազդեն, շլից աչքիր,—
Խազար ափսոս Մուկաց Միրզեն։

Կանչից էսաց ուր մշակին.
— Տյուս քեաշի բոզ-բիդաֆին,
Վերա տիրեք գինը սադաֆին,
Իս տերթամ խասնիմ չուր Ջղիրին.—
Խազար ափսոս Մուկաց Միրզեն։

Մուկաց Միրզեն խասավ Ջղիրին,
Քեաղաք ժողվան, էկան Թամաշա,—
Խազար ափսոս Մուկաց Միրզեն։

Բեմուրադ կէներ կոլոտ խոջեն,—
Ըլավ, առից փարեն, էջավ շուկէն.
Առից մեկ բաշըլէն։

Տանկի իրիս դեղից, կաժից ըզբաշըլին.
Կաժ մ'ինք կերավ, մէկ իտու Մուկաց Միրզին,—
Բեմուրադ կեներ կոլոտ խոջէն։
Կախավ լամէն Թափավ մազիր,
Շրջուավ բալաք աչքիր.—
Բեմուրադ կեներ կոլոտ խոջեն։

Մուկաց Միրզեն խեծավ գձին,
Էկավ, խասավ Պռնաշեն,
Կուժն ի կթխեն կախած նաշեն,
Բէմուրադ կեներ կոլոտ խոջեն։

Ջհաբ տարէք Մալաքեավեն,
Թը խաղա Խան-աղեն,
Թը խաղա Ջան-աղեն,
Բեմուրադ կեներ կոլոտ խոջեն։

Էրկուս կ'խաղան մեկն ի խաղեն,
Տարան, խասան Մալաքեավեն.
Մուկացիք էկան ժողվան մոտ Մուկաց Միրզեն,—
Բէմուրադ կեներ կոլոտ խոջէն։

53. ՄՈԿԱՑ ՄԻՐԶԵՆ

Օրն էր ուրբաթ,
Լուս ի շաբաթ,
Գեաշտ էրիր ենք Մալաքեավեն.
Թղթիկ մ'եկավ Ջըղիրու քաղքեն
Առին, բերին Մալաքեավեն,
Տուին ի ձեռ Մոկաց Միրզէն։
Հաղա՜ր ափսոս Մոկաց Միրզեն։

Առեց կարդաց քաղցրիկ լեզուեն,
Էրավ մազդեն,
Շըլեց աչքեր, կախեց չանեն,
Քաղուավ գոյն կարմիր երեսեն։
Հաղա՜ր ափսոս Մոկաց Միրզեն։

Կանչեց, ասաց յուր մըշակին,—
Դուս քաշի բոզ-Բեդավին,
Վըրա դրեք թամքը սադաֆին,
Սաֆար կերթամ չուր Ջըղիրեն։
Հաղա՜ր ափսոս Մոկաց Միրզեն։

Գնաց, հասավ չուր Ջամբարեն,
Խաթուններ թափան փանջարեն,
Թափան Մոկաց Միրզի թամաշեն
Ջըկեր յուր նըման բոլոր դունիեն։
Հաղա՜ր ափսոս Մոկաց Միրզեն։

Գնաց, հասավ չուր Ջըղիրեն,
Եկան, ժողվան քաղաք ղըմեն.

Մոկաց Միրզեն՝
Կարժէր քաղաք ղըմեն։
Հազա՜ր ափսոս Մոկաց Միրզեն։

Խեր չը տեսներ կոլոտ փաշեն,
Բաժն էր կոլոտ, բըրչամ երկեն,
Կանչեց Մոկաց Միրզեն
Տարավ յուր օդեն։
Բեմուրադ կեներ կոլոտ փաշեն։

Առեց փարեն, իջավ շուկեն
Եառու, առեց մեկ բաշըլեն,
Առեց, բերավ, դանակ դեղեց մեկ երեսեն,
Կաժեց՝ կաժ մ՚ինք կերավ,
Մեկ եառու՝ Մոկաց Միրզեն։
Բեմուրադ կեներ կոլոտ փաշեն։

Հեծավ ղձին Մոկաց Միրզեն,
Քամեց մաղդեն,
Շըրջավ բալակ աչքեր, կախավ լամեն,
Թափավ մըրուսեն,
Թափավ մազեր կարմիր երեսեն,
Թափավ բեղեր նազիկ պըռկեն,
Թափավ դեղին ջուր սիպտակ լեշեն։
Բեմուրադ կեներ կոլոտ փաշեն։

Եկանք, խասանք չուր խընկու դարեն,—
Բարով հասանք չուր խընկու դարեն.—
Տեսանք ժուռ ժուռ նաշը ներքուց բերեն.
Հազա՜ր ափսոս Մոկաց Միրզեն,
Բեմուրադ կեներ կոլոտ փաշեն։

Եկանք, հասանք չուր Բրռնաշեն,—
Բարով հասանք չուր Բրռնաշեն։—
Կուժն ու կըթխեն կապած նաշեն՝
Պուտ պուտ արյուն թափեր գետին։
Հազա՜ր ափսոս Մոկաց Միրզեն,
Բեմուրադ կեներ կոլոտ փաշեն։

Խաբար տարեք Մալաքեավէն.
Թող խաղա հանաղէն,
Թող խաղա ջանաղէն։
Հաղա՜ր ափսոս Մոկաց Միրզէն,
Բեմուրադ կեններ կոլոտ փաշէն։

Խաբար տարեք Մալաքեավէն,
Խաբար տուեք Բերդի խաթունին,
Թող գա վար յուր թախթէն
Հանե թաղէն, հագնե ղհին,
Ինչի՞ Բերդի խաթուն է էն։
Հաղա՜ր ափսոս Մոկաց Միրզէն,
Բեմուրադ կեններ կոլոտ փաշէն։

Եկանք, հասանք Մալաքեավէն,
Եկանք, մըտանք Միջաթաղ.
Մեկ հանաղէն, մեկ ջանաղէն,
Երկուս կը խաղան էն մէկ խաղ։
Խաբա՜ր տարեք հերկան, մերկան,
Թանգ Նաղլուխան թող տան երկան։

Եկան, ժողվան Մոկացիք,
Եկան մոտ Մոկաց Միրզէն.
Տարան դըրին մեջ պողերուն,
Դուռն էլ բացին հարավ քամուն։
Կացեք բարով
Հաղա՜ր տարով,
Թանգ Նաղլուխան
Թող տան երկան։

54. ՄՈԿԱՑ ՄԻՐՋԷՆ

Օրն էր ուրբաթ լուսու շաբաթ,
Թղթիկմ բիրըն ճղիրու խիտ.
Առըն, բիրըն Մոկաց շուկեն.
Տարան, տուըն ձեռ, Մոկաց Միրզին։
Մոկաց Միրզեն առըց, կարդաց քեաղցրիկ լեզուեն,
Էրավ մաղդեն, կախից ուր մըզինք,
Իմ սաֆիրեն, չուր ֆզիրեն,

Ախէր չտեսներ կոլոտ խոճեն.
Բաժն էր կոլոտ, բրչամ էրկեն։
Քեշեցեք դյուս բոզ բատըլեն.
Վերա դրեք գին սատավեն,
Իմ սաֆարեն չուր ճղիրեն։
Քեշեցին դյուս բոզպատըլէն,
Վերա դրըն գին սատավեն,
Էլավ, խեծավ Մոկաց Միրզէն.
Ախեր չտեսնեի կոլոտ խոճեն։
— Մենք բարով, ես տերթամ չուր ճղիրեն։
Գնացընք, խասանք չուր Ջամպարեն,
Խաթունքտիր էլան, թափան փանջարեն,
Ախեր չտեսներ կոլոտ խոճեն,
Բաժնէր կոլոտ, բրչամ էրկեն.
Խազար ափսոս Մոկաց Միրզեն
Ջրկեր քյու նման հրնկի դյունեն։
Կանչից Մոկաց Միրզին կոլոտ խոճեն.
Առից տարավ յուր յոտէն.
Առից փարեն, էջավ շուկեն.
Առից բոզ բաշըլեն,
Դանակ դեղից մեկն իրեսեն,
Կաժըց բոզ բաշիլեն,
Կաժմ էն կերավ, մեկ Մոկաց Միրզեն.
Ախեր չը տեսներ կոլոտ խոճեն,
Ջրկեր քեո նման հրնկի դյունեն։
Թափավ դեղին ջուր, սրպատակ լըշեն,
Թափավ մազիր կարմիր իրեսեն.
Թափավ պեղիր նազուկ պռկեն՝
Թափավ լամեն, կախուավ չանեն՝
Ախեր չտեսներ կոլոտ խոճեն,
Բաժն էր կոլոտ, բռչամ էրկեն,
Խազար ափսոս Մոկաց Միրզեն,
Ջրկեր քյու նման հրնկի դյունեն։
Էսաց.—Քեշեցեք դյուս բոզ բազըլեն.
Վերա դրեք գին սատավեն,
Էլնը, խեծնե Մոկաց Միրզեն,
Ախեր չը տեսներ կոլոտ խոճեն,
Ջրկեր քյու նման հրնկի դյունեն։
Քեշեցին դյուս բոզ բազըլեն,

Վերա դրին վին սատավէն,
Էլավ խեծավ Մոկաց Միրզեն,
Իկինք, խասանք չյուր խնկու դարեն՝
Բարով խանք չյուր խնկու դարեն։
Տեսանք ժուռ ժուռ նաշմ ներքուց բիրըն.
Խեր չըտեսներ կոլոտ խոճեն,
Խաղար ափսոս Մոկաց Միրզեն,
Ջրկեր քյու նման հրնկի դյունեն։
Էկընք, խասանք չյուր Բռնաշեն,
Բարով խասանք չյուր Բռնաշեն.
Կուժ կթխեն կախած նաշեն՝
Պուտ պուտ էրան կաթեր գետըն,
Խեր չըտեսներ կոլոտ խոճեն
Խաղար ափսոս Մոկաց Միրզեն։
Խապար տարեք իմ բերդի խաթունին,
Ասէք, թըխ գեա վեար ուր թախտին.
Խանէ թաժէն, խաքնի վխին.
Էլ նա չի, ան բերդի խաթուն.
(Մինչև էկավ Մալաքենի, մեռավ, սաղ չխասավ տուն)։

55. ՄՈԿԱՑ ՄԻՐՋԱ

Օրն էր ուրբաթ, լուսնէր շաբաթ,
Գեաշտ էն գեացած չուր Մալաքեավէն,
Խեն ու տաճիկ խընտրաց ղըմեն։
Թըղթեկ ըմ բերին ճըղիրու տանեն,
Բերին տուին Մոկաց-Միրզեն,
Առից կարդաց քեաղցրիկ լիզուեն,
Ըսաց.—«Տյուս քեաշեցեք բեող-բեդավեն
«Զիկ սաֆուր ի չուր ճըղիրեն.
«Դու խէր չեներ կոլոտ-խոճեն,
«Չէրթեր մատներ զձեռն անորեն,
«Զիս չըտաներ չուր ճըղիրեն...»։
Մոկաց Միրզեն գնաց խասավ չուր ճըղիրեն,
Քաղաք ղըմեն ժողվան էկան զյուր թամաշեն
Մոկաց Միրզեն կարժեր քաղաք ղըմեն,
Մոկաց Միրզեն առին տարան քեոշկ ու սարեն,
Լցուավ ուր սիրտ, արցունք կաթավ թուխ աչքերեն,
Ախ ըմ քեաշեց սրտի խորքեն,

Ըսաց «Դու խէր չէներ կոլոտ-խոճեն
«Մոկաց Միրզեն չը բերեր չուր ճըզիբեն...»։
Բեմուրաղ կեներ կոլոտ-խոճեն,
Առից փարեն գնաց շուկեն,
Էտու փարեն՝ գնից գըաշուլեն։
Դանակ գեղից մէկ իրիսեն,
Առից դանակ կաժից գըաշուլեն,
Քեաղցր կաժն ինք կերավ, գեղոտ տուից
Մոկաց Միրզեն,
Մոկաց Միրզեն առից կերավ գկաժ բաշուլեն
Թափավ մորուս, կախուավ լամեն...
Խազար ափսո՜ս Մոկաց Միրզեն,
Չը կէր քու նման հնդի դյունեեն...
Ափսո՜ս, խազար ափսո՜ս Մոկաց Միրզեն։
Լսան Մուկացիք, լալով գնացին Միր-Մահմադի
քեոշկ ու սարեն,
Բարձին Մոկաց Միրզի լեշ, առին բերին ճըզիբեն,
Սըիք գըմեն թափան փանջարեն,
Ժողվան Մոկաց Միրզի թամաշեն,
Ըսին «Դու խէր չէներ կոլոտ-խոճեն,
«Չը մատներ ջիվան Մոկաց Միրզեն,
«Խազար ափսո՜ս Մոկաց-Միրզեն,
Չը կեր քո նման հընդի դյունեեն...»։
Լեշ բերին խասուցին չուր Բռնաշեն,
Կուժ ու կըխեն կախին նաշեն,
Պուտ պուտ արուն կաթեր լեղեն
Խալխը թափան իր թամաշեն
Լացին ըսին «խազար ափսոս
Մոկաց Միրզեն
Չը կեր քո նման հընդի դյունեեն...»
Լեշ բերին խասուցին Մալաքեավեն,
Գեղացիք ժողվան էկան՝ իր թամաշեն,
Լացին ըսին, «Բեմուրաղ կեներ կոլոտ-խոճեն,
«Դու չը մատներ Մոկաց Միրզեն,
«Խազար ափսո՜ս Մոկաց-Միրզեն,
«Չը կեր քու նման հընդի դյունեեն,
«Ափսո՜ս, խազար ափսո՜ս Մոկաց Միրզեն...»։
Լեշ բերին խասուցին Աբրահամանց
Աբրահամանց Բեսա դիմաց,

Էրկու քուրեր խանեցին խաղ,
Մէկու անուն էր Խան-Աղա, մեկուն Ջան-Աղա,
Լացին խաղցին, խաղցին լացին, ըսին.
«Խազար ափսո՜ս մեր ջիվան ախպեր Մոկաց Միրզեն,
«Չըկէր քու նման հընդի դյունեեն,
«Բեմուրաղ կեններ կոլոտ-խոճեն,
«Չը մատներ մեր ախպեր Մոկաց Միրզեն,
«Չը տաներ խասուցեր չուր ճըղիրեն,
«Ախսո՜ս, խազար ափսո՜ս Մոկաց Միրզեն,
«Չը կեր քու նման հընդի դյունեեն...»։
Խաբար տարէք Ալ-Խաթունին,
Խանա ղեժաժեն խազնա ղխին,
Չյուր սիրական Մոկաց Միրզեն,
Մատնեցին զճեռն անօրեն,
Առին տարան չուր ճըղիրեն,
Բեմուրաղ կեններ կոլոտ-խոճեն,
Որ չը մատներ մեր Մոկաց Միրզեն։
Խազար ափսո՜ս Մոկաց Միրզեն,
Չը կէր քու նման հընդի դյունեեն։
Մոկաց Միրզեն բերին թաղեցին սարի վերեն,
Վէր ուր քաղցրիկ գերեզմանին լուս իջալ երկնքեն,
Աստուած սիրեք հիշեք Մոկաց Միրզեն,
Ըսեք.—«Խազար ափսո՜ս Մոկաց Միրզեն,
Չը կեր քու նման հընդի դյունեեն,
Ախսո՜ս, խազար ափսո՜ս Մոկաց Միրզեն...»։

56. ՄՈԿԱՑ ՄԻՐՉԱ.

Թուխտ մի պերին Ջըղիրու տընեն,
Պերին ավին Մոկաց Միրզին։
Առեց կարթաց, ասաց.—քաշեք,
Քաշեք հազրեք բոզ-բեղավեն,
Մի դեվեթ կա ի Ջըղիրեն։

Վա՜յ չըխերվեր կոլոտ խոջեն,
Որ չըմատներ ծեռն անօրեն,
Որ չը երթեր չուր Ջըղիրեն,
Խազա՜ր ափսոս Մոկաց Միրզեն։

Ելավ խեծավ բոզ-բեդավեն,
Քըշեց կընաց Մոկաց Միրզեն,
Կընաց խաոսավ չուր Ջըղիրեն,
Ջունք ռինտ էր Մոկաց Միրզեն,
Ալամ թափեր ուր թամաշեն։

Վա՛յ բեմուրատ կոլոտ-խոջեն
Խեր չը տիսնար ուր ումըրեն,
Որ չխապեր Մոկաց Միրզեն,
Որ չը պերեր չուր Ջըղիրեն։

Առին տարան Մոկաց Միրզեն,
Տարան դիվան, քոշկ ը սարեն,
Սիրտ վկայեց Մոկաց Միրզին,
Որ մատնելի ծեռն անորեն,
Էնա պեպախտ կոլոտ խոջեն։

Վա՛յ անամոթ մատնիչ խոջեն,
Ի՞նչըխ խըմշեց Մոկաց Միրզեն.
Ի՞նչըխ մատնեց ծեռն անորեն,
Քաշեց պերեց չուր Ջըղիրեն։

Թալին քեչիկ նստան վերեն,
Ուր սիրտ լցվավ Մոկաց Միրզեն,
Արցունք կաթավ ուր աչքերեն,
Ախ մի քաշեց խուկու խորեն,
Հապաս էկավ ի Ջըղիրեն։

Վա՛յ չը խերվեր կոլոտ խոջեն
Որ չը պերեր Մոկաց Միրզեն,
Որ չը մատներ ծեռն անորեն
Խապեր պերեր ի Ջըղիրեն։

Տարցավ, խային կոլոտ խոջեն,
Տարցավ իշավ կնաց շուկեն,
Առավ պերեց ըզ բաշուկեն,
Դեղեց տանակն մեկ երեսեն,
Քաշեց կյաժեց ըզ բաշուկեն...

Վա՛յ անիծվեր կոլոտ խոջեն,
Խեր չը տիսներ ուր ումըրեն,

Որ չը խապեր Մոկաց Միրզեն,
Որ չը պերեր ըզ Զըզիրեն։
Քյաշեց կյաժեց ըզ բաշուզեն,
Քաղցըր էաս իրան բաժին,
Դեղած իտու Մոկաց Միրզին,

Ելան լալով քոշկ-սարայեն.
Առին լեշը Մոկաց Միրզին,
Իչան օվեն էն Զըզիրեն,
Պըռնին կըտուր ը փանջարեն։

Վա՜յ չըխերվեր կոլոտ խոջեն,
Որ չը մատներ Մոկաց Միրզեն,
Խազար ափսոս Մոկաց Միրզեն,
Չըկեր ուր պես Հընդու դունչեն։

Բարցին լեշը բոլ-բեզավին,
Եկան խասան չուր Բրռնաշեն,
Պուտ-պուտ արուն կաթեր նաշեն,
Միս քրքրվեր թափեր լեշեն...
Ալամ թափեր զուր թամաշեն,
Խազա՜ր ափսոս Մոկաց Միրզեն,
Չըկեր ավաղ Հընդու դունչեն.
Վայ չը խերվեր կոլոտ խոջեն,
Որ չը մատներ Մոկաց Միրզեն։

Լեշ խասուցին Արբախումենց,
Բեստա սարի ճամբեխ տիմաց,
Չան աղեն էր խաղեր խանեց,
Ասաց խաղաց, խաղաց ի լաց,
Ալ-խաթունին խաբար կընաց։

Ափսոս չիվան Մոկաց Միրզեն,
Չը կեր ուր պես Հընդու դունչեն.
Բեմուրատ կեններ շուն խոջեն,
Ջուր չը մատներ Մոկաց Միրզեն։

Բերին թաղին Մոկաց Միրզեն,
Թաղին էնա սարի վերեն.
Թաղին իչան, իրեք օրեն,
Լուս պայծառ իշավ ուր վերեն.

Տուք էլ հիշեք Մոկաց Միրզեն։
Խապա՜ր ափսոս Մոկաց Միրզեն
Ջը կեր ուր պես Հընդու դունչեն,
Վա՜յ չը խերվեր կոլոտ խոջեն,
Որ չը մատներ ծեռն անորեն։

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

57. ՍԱՐ ՈՒ ՁՈՐ ՍԱՍՍԱՆՄԻՇ ԷԼԱՆ, ՁԱՐՄԱՑԱՆ

Սար ու ձոր սասանմիշ ելան, զարմացան,
Պասքովիչ սարդարին վռատի տակն ընկան,
Մեր Մասիան, Ալագյազն քնադաղ ելան.

Անիրավ՝ ես բաղին բաղմանչի ունի։
Անիրավ՝ ես բաղին բաղմանչի ունի։
Յարալու սրտիս եղ քարը մի քցի։

Մատաթովն Ղարսաբաղ առավ՝ ազատեց,
Կրասովսկին Աբարան վռոնատակ տվեց,
Սաղ Իրանն Պասկովչին չոքեց, ծունր դրեց.
Ղզլբաշն մուկ դառած՝ գլխին վայ տվեց.
Բեկենդորֆն սարդարին ջախըփուրթ արեց,
Ասլանի գլուխն արծվին ռուսն մատաղ արեց.
Անիրա՜վ հայերի արինն մի՜ խմի,
Միտք արա ես բաղին բաղմանչի ունի. Անիրավ և այլն։

Սրբազան Ներսեսի խաչին դուրբան գնամ,
Հոգևոր Յեփրեմի տիրոջն դուլ դառնամ,
Սուրբ Գեղարդն մեռոնի դորքն մալում ելան.
Թշնամին քառացավ. հայքն ուրախացան.
Հայ աղգի աղոթքը յերկինքը հասան։
Անաստված՝ հայից ձեռք քաշի՜, կորի՜։
Անիրավ՝ հայերի արինն մի՜ խմի, միտք արա՜ և այլն։
Մենք քամակ քամակի կառանք, վեր կկենանք,
Ոսին մեր աշխարքը, կյանքն դուրբան կառանք։
Հասան-խանն կառվի պես քարեքար ընկավ,
Շահզադի դոնշունը ցիր ու ցան ելավ.
Մեր խաչին՝ անհավատ՝ արի, ճանաչի.

Անաստված՝ հայիցը ձեռք քաշի՛, կորի՛։
Անիրավ՝ հայերի արինն մի՛ խմի, միտք արա՛ և այլն։

58. ԳՈՎԵՍՏ ԳԵՆԵՐԱԼ ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՅԱՆԻ

Եկավ հասավ Վանա ծովուն,
Ուրախութիյուն բերեց հայուն,
Ուրախութիյուն Տեր-Ղուկասով,
Դրախտական Տեր-Ղուկասով։

Օրդուն քաշեց սարի հովին,
Դուշմանի հետ քցեց դավին,
Դեպ օսմանցուն եկավ պատեց,
Ջաբախանը ճամբեն փակեց։

Յաղթութիյունով առաջ անցավ,
Քանի շահարներ անց կացավ,
Կայսեր պալատն ուրախացավ,
Դրախտական Տեր-Ղուկասով։

Հայն երեսին հանեց խաչը,
Կանչեց Լուսավորչա աչը,
Աստուած խրկեց առյուծ քաջը,
Դրախտական Տեր-Ղուկասով։

59. ԵՐԳ ՋԵՅԹՈՒՆԻ

Արեն ելավ Ջեյթունցիներ,
Դեհ ձի հեծնենք, առնենք զենքեր դիմենք յառաչ,
Քանի այսպես գլուխ ծռած, (կրկ)
Բռնավորին մենք վիզ պարզած։

Բավ է եղբարք հերիք համբերենք,
Հերիք տաճկին լուծը կըրենք,
Քանի այսպես խեղճուկ ենք մենք, (կրկ)
Ջենք ունենար թագ, խոսք, օրենք։

Ջեյթունցիներ մեր զբոսանք,
Է պատերազմ և արշավանք,

Սուր, թուր, գնդակ և հրացան, (կրկ)
Մեր խաղալիքն է հավիտեան։

Կեցցե Զեյթուն, ապրի Զեյթուն,
Թող չի տեսնե ըսարկություն,
Քանի ունի մեզ պես որդիք, (կրկ)
Կեցցե Զեյթուն, ապրի Զեյթուն։

Զեյթունցիներ մենք քաջ ունինք,
Տաճիկներուն վըրեժ ունինք,
Մեր մայրենի սուրբ կաթի տեղ, (կրկ)
Կաթիլ կաթիլ արյուն հոսին։

Կեցցե Զեյթուն, ապրի Զեյթուն,
Թագն ու պսակ ամեն հայուն,
Զեյթուն լինի մայրաքաղաք, (կրկ)
Եւ Կիլիկիա ազատ երկիր։

60. ՏԵԼԻ ՔԵՇԻՇԸ ԿԸՍԵ

Տելի-քեշիշը կըսե.—«Ես կոուի ելայ,
Անգլ ու ազատ իջուցի պիականց վրայ,
Չար մարդերու մի՛ հայիր, ո՛վ Եուսուֆ փաշա,
Զեյթունցվոց աղոթքը Աստուծո, հետ կապուած է»։

Եաղուպեան կըսե.—Դուն իմ վիճակս գիտես,
Քանի-քանի առյուծներ դուրս կելլան խմբես,
Աչքս արյուն լեցուեր է, չեմ վախնար մահես
Պատերազմը հարսանիք կընդունենք մենք Զեյթունցիք։

Սուրենեան կըսե.—Աշրեթ, մի՛ արտասուեք.
Օգնութեան պատրաստ ենք, ի զուր մի կարծեք։
Ենի-ոյունիս կըսե.—դուք վիշտ մի՛ քաշեք,
Ասկե ետք կռիվն իմս է, Զեյթունցիք։

Շուվրոեան կըսե.—Ով Եուսուֆ փաշա,
Թեճիրցվոց առջև խայտառակ ես եղեր,
Զեյթունցվոց հետ գլուխ չես կինար ելլեր.
Ձեր անունը երկինք հասավ, Զեյթունցիք։

Աշըգ խալիին եմ՝ խղճուկ մուրացկան
Թեֆիրլի աշրևթը եղավ թշուառական,
Ձեյթունը շուտով հասավ օգնութեան,
Դանտլ լեռը ձեր փառքն եղավ, Ձեյթունցիք։

61. ՏԱՐԱՆ, ՏԱՐԱՆ

Խնուս գեղի մեջտեղը
Հրամայեց մեծ շեխը,
Թորկեց ինձ լաց ու շիվան
Յարիս տարավ մեծ շեխը։
Տարան, տարա՛ն պիմ յարը,
Տարան պիմ մին ու ճարը։
Խապար արեք Սարոյին
Տարա՛ն խորոտ Վառոյին։

Երոջս ծամերն էր ոսկի
Տայմա չէր իգար խոսքի,
Ջո՛ւ հա՛ զոռ քաշեց տարավ
Են մեծ Շեխը անհոգի։
Տարա՛ն, տարա՛ն պիմ յարը,
Տարա՛ն պիմ մին ու ճարը,
Խապար արեք Սարոյին
Տարա՛ն խորոտ Վառոյին։

Վառո էր յարիս անուն
Խոզ քաշեր իմ գլխուն,
Տարա՛ն, տարա՛ն պիմ յարը.
Տարա՛ն պիմ մին ու ճարը։

62. ԱՐԱԲՈՅԻ ԵՐԳԸ

Սասունա սար փչե ուր հով,
Արև կշտեդ ընցնի ամպով,
Ջուր եփ քնիս երազներով,
Ջարթի՛ր, լաո՛ մռնիմ քըզի,
Ե՛լ քե մռնիմ, օգնե խայուն։

Բոբիկ երթամ Մարմառ-քումբեթ
Սոթ-Անունն էղնի քո խեաո,

Թուրքի արուն կաթա թրեդ,
Ջարթի՛ր, լառ՛ մռնիմ քըզի,
Ե՛լ քե մռնիմ, օգնե խայուն։

Բոբիկ ոտքով չուր Աղթամար
Էրթամ յիլամ քըզի խամար,
Քե խետ հղնի սուրբ Տիրամար։
Ջարթի՛ր, լառ՛ մռնիմ քըզի,
Ե՛լ քե մռնիմ, օգնե խայուն։

Թուրքի դհեն էղնի Պողոս,
Խայու խայրիկ քե բարեխոս,
Թուրդի օրհնե մըր Քրիստոս։
Ջարթի՛ր, լառ՛ մռնիմ քըզի,
Ե՛լ քե մռնիմ, օգնե խայուն։

Գրող տանի Թուրք Աբոյին
Սպաներ է ջոջ Ափոյին,
Իլլաջ մացեր Արաբոյին։
Ջարթի՛ր, լառ՛ մռնիմ քըզի,
Ե՛լ քե մռնիմ, օգնե խայուն։

Ջուր ե՞ր մնալ էլու դռներ
Էրթամ գռնիմ գիմ խեղճ գառներ,
Սուքեմ գիմ բաղչայի ծառեր։
Ջարթի՛ր, լառ՛ մռնիմ քըզի,
Ե՛լ քե մռնիմ, օգնե խայուն։

Դեն իրիշկե գալող ո՞րն է,
Քաջ Արաբո բաղդավորն է,
Կարմիր իրացանց գինուորն է։
Ջարթի՛ր, լառ՛ մռնիմ քըզի,
Ե՛լ քե մռնիմ, օգնե խայուն։

Խեղճ մշեցին մնաց լալով,
Եռու երկրներ ման գալով,
Մեռավ Թուրքի պարտքը տալով։
Ջարթի՛ր, լառ՛ մռնիմ քըզի,
Ե՛լ քե մռնիմ, օգնե խայուն։

Ոտքի կայնի կարիճ խեբան,
Ձորքով գնա առաջ ուբան,
Սալաթ Մելրու բաժին ղուրբան
Ձարթի՛ր, լառ՛ մռնիմ քըզի,
Ե՛լ քե մռնիմ, օգնե խայուն։

Սեֆիլ, շիվար մացած խայեր,
Էղած անտեր, բնավեր հավքեր,
Տեր, դու փրկե, պահե արթուն.
Ձարթի՛ր, լառ՛ մռնիմ քըզի,
Ե՛լ քե մռնիմ, օգնե խայուն։

63 .ԵՍ ՄԵՆԱԿ ՉԵՄ

Մայրիկ մի երթար փաշի սարեն
Կը նորոգվի սրտիս ևարեն,
Մի լար մայրիկ ևս մենակ չեմ,
Մի լար հոգիս ևս մենակ չեմ։

Ժամու զրոնեըն էր բոյալի
Հակոբի ձեռքն էր սուրմալի,
Մի լար մայրիկ ևս մենակ չեմ,
Մի լար հոգիս ևս մենակ չեմ։

Սելեր եկան գոռգոռալով
Մայրեր եկան բոռբոռալով,
Մի լար մայրիկ ևս մենակ չեմ,
Մի լար հոգիս ևս մենակ չեմ։

Սասնոյ սարեր բուսան կակաչ
Դեորգ կարեց խալիլի ականջ,
Մի լար մայրիկ ևս մենակ չեմ,
Մի լար հոգիս ևս մենակ չեմ։

64. ԱՂԲԻՆՔՑԻ ԿՏՐՒՃՆԵՐԸ

Մշեցի ճամբորդ ենք հեռու տեղերեն,
Շատ բարև բերինք հայոց գեղերեն,

Վարագայ սուրբ խաչեն ալ ունինք ձեզի լուր,
Խղճացեք հայ աղգիս, տվեք մեկ մեկ թուր։

Թե չոգնեք մեզի, կեղնենք ցիրուցան,
Տվեք հայ մարդիկ մեկ մեկ հրացան,
Միջքով գորընդեղ, սրտով կարիճ ենք,
Ունենք հաստ թևեր, արագ կը վազենք։

Հերիք մնացինք եսիր խղճալի,
Տվեք մեզ հայեր մեկ մեկ այնալի,
Քար կը հալցնենք, ջուր անենք երկաթ,
Մինչև ե՞րբ մնանք վատ տաճկին ռայաթ։

Եսիրության մեջ մեր սիրտ կը հալի,
Տվեք մեզ հայեր, մեկ մեկ սուրմալի,
Անդոկ, Ծովասար, Կեվին, Մարաթուկ
Կանչեք մինչև ե՞րբ մեռուկ մնաք դուք։

Եկեք, կանգնեցեք, մենք առաջ վազենք,
Միայն թե հայեր տվեք մեզի ղենք,
Շուտով մեր վրից լուծ, շղթա խզենք,
Միայն թե հայեր, տվեք մեզի ղենք։

Անոթի ենք, ծարավ, աղ լե չը մնաց,
Կուտենք խոտ, արմատ, չենք ուզի ձեր հաց,
Հայեր ձեղնից միայն կուզենք ծակ երկաթ,
Էնով Մուշ, Սասուն կեղնին, օ՞ֆ, ազատ։

65. ԱՂԲԻՆՔՑԻ ՄԱՐՏՈՑԻ ԵՐԳԸ

Մշեցի ճամբորդ ենք հեռու տեղերեն,
Շատ բարև բերինք հայոց գեղերեն,
Վարագա խաչեն բերինք ձեզի լուր
Խղճացեք հայ աղգիս, տվեք մեկ մեկ թուր։

Թե չոքնեք հայեր, կըլլանք ցիրուցան,
Տվեք, խնդրում ենք, մեկ մեկ հրացան,
Սրտով կտրիճ ենք և ուժով մարդիք,
Ունինք հաստ-հաստ թև, արագ կը վազինք։

Հերիք մնացինք հսիր, խղճալի,
Տվեք (մեզ) հայեր մեկ մեկ այնալի։
Քար կը հալցնենք, ջուր անենք երկաթ.
Ափսոս կը մնանք վատ տաճկին ոտքեր։

Եսիրության մեջ մեր սիրտ կը հալի,
Տվեք մեզ, հայեր, մեկ մեկ սուրմալի,
Անդոկ, Ծովասար, Կեփի, Մարաթուկ
Կանչեք, մինչև երբ մեռուկ մնաք տուք։

Ելեք կանգնեցնեք, մենք առաջ վազենք,
Միայն թե հայեր, տվեք մեզի զենք,
Բեզբանք նստելով, մենք կռիվ կուզենք,
Միայն թե հայեր տվեք մեզի զենք։

Շեր մեր առջևեն փախնի քանց կատու,
Ափսոս, չը մնանք տաճկին հարկատու,
Մեր սուրբ Մարաթուկ էլնի ձեզ վկայ,
Աշխարք քանց մեզի կտրիճ մարդ չկա։

Շուտով մեր վզից լուծ, շղթա խզեն,
Միայն թե, հայեր, տվեք մեզի զենք.
Անոթի, ծարավ, աղ լէ չը մնաց,
Կուտինք արմատ, խոտ, չենք ուզի ձեր հաց,
Հայեր ձեզանից կուզինք ծակ երկաթ,
Էնով Մուշ, Սասուն կըլլան, ա՛խ, ազատ։

66. ՍԱՍՈՒՆՑՈՑ ԲՈՂՈՔԸ

Է՛, աղբըրտանք վոլա թուլմուլ եք վըղըծակ
Մըք կըտրեցինք ու կըտըրուեցանք,
Դըք է՞ր կանաք ու շուարեցաք,
Կինա՞ք շուրվա ապուր է կը ըզդիաք,
Մըր աղբըրներ ու տիրացուներ,
Վըր/ժապետներ ու վըրժաճետներ,
Ըզատ երկիրներ գինի կըխմեք,
Մըկ երկիր կը սուքեք, մեկ լէ կավրեք,
Կը ցնծաք ու խընտաք՝ արծիվ եք,
Թա վըր կըռիվ տեսնեք՝ անծեղ եք,

Մընակ մըժլով Սասուն կաղըտիք,
Ըղորտ ավրուավ մըր երկիր ու սարեր,
Կարնցին մըր քուֆլաթն ու ճժեր,
Տարան ղհարսներ ու ջհնլ աղչիկներ,
Ամմա էմլե մըք կանք ու կը կենանք,
Էմլե կապրինք ու կը մեռնինք,
Լը դուք, վըր օրվայ եք աղբրտանք,
Մըր վրեն էկան քսան աշիրաթ,
Տասը հազար լը ասքեար ու զապուխ։
Մըր բերդն էր Անդոք ու Կեփին,
Ցրոֆըռ քար ու չուխտակ ծեր Մարաթին,
Դուշմընի ձեռք այնալի սև կոթ,
Լը մըր ձեռք չախմախլի գըռկոթ։
Մըք չունինք հըց, կերանք ալնի խոտ,
Ընք ուներ հըց ու միս աղոտ,
Ու ըպա ես հալով ու խուդրաթով,
Ջուղինք Թուրքին հալել ու մալել,
Ու հեսրաթեն ամեն օր քաշել,
Մըք մեռանք առոք ու փառոք,
Լը դուք մամոնի ձեռոք։

67. ԱՐԱԲՈՅԻ ԵՐԳԸ

Ջարթե՛ք, զարթե՛ք ձըր Սասու սիրուն,
Իմալ արուն գոլել Թրուն,
Լոխպել անորեն Թքրուն,
Վարազի ճանկ Թաթով կիգա։
Ջըր սասու սիրուն, դեն իրիշկեք,
Առեք զենքեր, զըխեր հագեք,
Թոթվեք ձեռնի, սիրտը պագեք,
Տեսեք ինչ խըվաթով կիգա։

Ջղի մեռնիմ Սասնո ծռեր,
Էն ո՞րն ա կիգա մըր լեռներ,
Քսան Թուրքի գլոխ Թեռներ—
Դրած զառդավաթով կիգա։
Ախլախնձոր-տեփուր երես,
Դուշմանի կյանքը Թորկեր է կես,
Նարինջ ձին տակ—ասլանի պես,

Խորոտ-շախշիաթով կիգա։
Սասնա վիշապ-ազնավուր բեա,
Զար աչք քոռանա՝ չտեսնի խեթ,
Ալիգըռանցի Լևոնի հետ,
Արծվի Ղոլ զանատով կիգա։

Արընով է սորվել լողը
Բարութով է կտրել դողը,
Թուրքի մահը թուրքին հաղթողը,
Ձենքով, զառ զիննաթով կիգա։
Մեկ հարցուցեք գալողն ո՞րն է
Քաջ Աղաբո բախտավորն է,
Կարմիր իրիցանց զինվորն է,
Առաքելսի-զարդով կիգա։
Ոտքի կայնի կտրիճ խերան,
Ձորքով գնա առաջ ուրան,
Սալաթ Մեհրին բաժին դուրբան,
Աղաբոս գովլաթով կիգա։
Աղաբոյիս բաժնի բողան
Բարութ գուլլեն ուր բնաղուն,
Կը թափա ձըր վախկոտ արուն,
Հայ անարատ կաթով կիգա։

68. ԿՏՐԻՃ ՍԱՍՈՒՆՑԻՔ

Մընք սրտով կտրիճ ու բաժով պարթև,
Ունինք հատ հատ թև, ու վաղինք թեթև.
Հեսրութենի մեջ մըր սիրտ կհալի,
Տուեք մըզի, հա՛յեր, մեկ-մեկ այնալի։

Մընք քար կը հալցունք, ջուր դարձունք ղերկաթ,
Ափսոս չինք մնանք վատ Տաճկին ըռիաթ,
Հեսրաթենի մէջ մեր սիրտ կհալի,
Տուեք մըզի, հա՛յեր, մէկ-մէկ սիւրմալի։

Անտոք, Ծովասար, Կեփին, Մարաթուք—
Կանչին.—Հարի ե՞ր մեռուկ մնաք դուք.
Բեզրանք նստելով, մընք կռիվ կուզենք,
Միայն թե, հա՛յեր, տուեք մըզի զենք։

Շիր մըր առչևին փախնի քընց կատու,
Ափսոս չի՞նք մնանք Տաճկին հարկատու.
Սրտերսի վատ, քաչ տղեք կան շատ,
Ունինք լուս հավատ, յորի՞ չինք աղատ։

Մըր սուրբ Մարափեն եղնի ձեղ վգա,
Աշխարք քընց մըղի կորիճ մարդ չկա.
Հանչե կը կանչինք ու յառաչ վաղինք,
Շուտով մըր վըղեն լուծ, շղթան խղինք։

Անոթի, ծարավ, աղ լէ չմնաց,
Կուտինք չոր արմատ, չընք յուղի արծաթ,
Մենակ մընք կուղինք ձրընե ծակ էրկաթ,
Ընտրով մընք Սասուն ու դՄուշ կաղատենք։

69. ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐՈՒ ԳԱՆԳԱՏԸ

Սասուն վաղեր արևան գետեր,
Ձենքեր չունինք առանք փետեր,
Մըր դարտը դուք հեչ չեք քաշեր,
Հայե՛ր, հայե՛ր, հայե՛ր։

Անգութ տաճիկ հըտ քրդերուն
Ավրեցին մըր տեղ ու տուն,
Մըր չիվաններ տարան գերի
Թորկին մըր տներն ավերի։

Հարս ու աղչիկ բռնին թուանք,
Տընով տեղով մենք քանդուանք,
Մեռավ մամ, պապ, ճժեր մեռան
Սովեն թև թիկունքներս կեռան։

Սասուն ձեռնե գնաց կասեք,
Ջուր տեղ մարդու մի բամբասեք,
Ջոր հաց տուեք, քանի մը գենք,
Էլ ուրիշ բան ձեղնե չուզենք։

Քըղի մեռնինք սուրբ Տիրամեր,
Դու մի թորկի մըղիկ անտեր,

Խղճուկ խըղլար, կանչէ ու լաց,
Բալքի քու ձեն լսե աստուած։

70. Ա.Յ ՀԱՎԱՐ, ԲԱՅԱԶԻՏ ՎԱՌԵՑԻՆ

Էս ի՞նչ կրակ, Տեր-Աստուած,
Ա՛յ հավար, Բայազիտ վառեցին,
Մատղաշ ճժերն են էրած,
Ա՛յ հավար, սև խապար՝ էրեցին։
Ճելոքն էկան ամպի պես,
Ա՛յ հավար, սև խապար զալմներ.
Գյուղեն թափեն կարկտի պես
Ա՛յ հավար, Բայազիտ կորեցին։
Մեր զմանուկ կ'ուրանա,
Ա՛յ հավար, սև օրեր, սև հողեր.
Արյուն առվի պես կ'երթա,
Ո՛վ Աստուած, ա՛յ հավար, վառեցին։
Բոցեր կելլեն վեր ու վեր,
Ա՛յ հավար, սև խապար մըլիցին,
Ջեներն երկինք է լցուեր,
Ա՛յ հավար, մըլիցին վառեցին։
Ա՛խ, հինգ հարյուր էլ քաջ կորիճ,
Ա՛յ հավար, վա՛յ հասեք, վառեցին,
Ամենքն ինկած քաջ կորիճ,
Ա՛խ ափսոս, վա՛յ կսկիծ, վառեցին։
Ամենքն մնացին անդադաղ,
Էս ի՞նչ կրակ, էս ի՞նչ բոց,
Ջինար պոյին ձեր մատաղ,
Ա՛յ հավար, սև՛ օրեր, սև՛ հողեր։
Ձեր սգավոր մայր մեռներ,
Էս սև օրեր չ'տեսներ,
Ա՛յ հավար, սև՛ օրեր, վառեցին,
Էնոնց սրտեր կոտրտուեր,
Ա՛յ հավար, մըլիցին գյուղեցին,
Ա՛խ Աստուած, սևլվորներ կորեցին։

71. ԵՍ ԱՂԵԿՆ ԵՄ

Ես Աղեկն եմ՝ Ջամբրլեցի, մէկ չիվան,
խանում եվա ջան,

Բռնին տարան էստուց չուր Երևան,
Դուն կեցիր բարով,
Ես կերթամ լալով,
Լալով, ողբալով,
Քոչ ու բարխանով,
Սարեր ման գալով,
Լալով, ողբալով,
Քոչ ու բարխանով
Սարեր ման գալով։

Ձեռ ու ոտըս կապին բերդը դըրեցին,
Ջուխա, շալուար լալով տունը բերեցին։
Օրե՜ր, գարնան անո՜ւշ օրեր,
Ա՜խ, ո՞ւր եք կորեր,
Օրե՜ր, գարնան անո՜ւշ օրեր,
Ա՜խ, ո՞ւր եք կորեր։

Բերդիցը դուրս ելա, Ալագեազ տեսա,
Արարած աշխարքը դըրախտի պես ա.
Ապարան աչքերիս դուման ա դառել,—
Իմ կեանքն ու արևը եաման ա դառել։
Ոչխարն էսղին կարածա՝ էնդին դառները,
Կանաչել են ծաղիկները, ծառները,
Արի, երթանք քո ման գալած արտերը,
Քեզի տեսա, նորացան իմ դարդերը։

72. ՂՈՒԼԻՃԱՆՑԻ ՀԱՐԹՆ ՔԵՀԻՆ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Կես գիշերին գլխուդ հաննեցին օյին,
Ալամ կայնավ թամաշայի քու բոյին,
Տութսաղ բռնին արընտիրոջ Ավոյին
Արդեզ գնաց Աջամ շահին, Յարթեն ջան։
Ջիվանս մեռավ գնաց
Մուրազը փորը մնաց,
Տեսնողը էնպես գիտէ
Թե շատ խորունկ է քնած։

Յարթենն որ կար՝ հաքիմներու բարա էր,
Արծաթ քեամար, արխալուղը խարա էր,
Ձեռս տարա, թառլան սիրտը յարա էր
Բարակ մեջքիդ ջիվան բոյիդ, Յարթեն ջան։

Ով որ քցեց էս օրին,
Սև քարը գնեմ փորին,
Էնպես մարդի բալեքը,
Դիար բե դիար կորին։

Զափսոսացին Յարթենին ջահել-ջիվան,
Նըհախ տեղըդ բուկը քցեցին չուան,
Հախ տերն էնէ էնպես մարդոցը դիվան,
Արդեդ գնաց Աջամ շահին, Յարթեն ջան։

Գյուլուլեն դիպնի սրտին,
Դարման չը գտնի դարտին,
Աստծու հուր կրակը—
Վառե տնաքանդ մարդին։

Դուշմաննները հասան իրանց մուրազին,
Քեաֆուրները խուճուճ ճալվերը խուղին,
Փետ չը մնաց՝ զարկին ջուխտակ ումուղին,
Բարակ մեջքիդ, ջիվան բոյիդ, Յարթեն ջան։

Աչքերից մայիֆ նստի,
Ըսկի լավ օր չը տեսնի,
Բեռասըդ վայիս մարդը
Իր մուրազին չը հասնի։

Արունք էրած քամբախ դռներն արխանդ է,
Յարթեն քիհի արնի ջառամեն շատ թանգ է,
Կլոր սուրաթ, կարմիր էրես, ջուխտ բանկ է.
Արդեդ գնաց Աջամ շահին, Յարթեն ջան։

Քեզ ձեռք վերցնող մարդի,
Ջիվանն ռաստ գայ դարտի,
Աստըծու Ղազաբին գայ,
Թև ու թիկունքը ջարդի։

73. ԱԲԱՐԱՆՅԻ ԱՂԵԿԻ ԵՐԳԸ

Գեղովի թոփ էղան մեկ գիր գրեցին,
Քառասուն հոգու մեջ Աղեկին գրեցին,

Օրեր, օրեր, օրեր,
Դուք ուր եք կորեր։

Թևերս կապեցին—տուֆաստղ էրեցին,
Աբգուհալ—խնդիրս, եաման ա դառել,
Օրեր, օրեր, օրեր,
Դուք ուր եք կորեր։

Մեկ գիր գրեք ղրկեք իմ ծնողներիս,
Անուշ եղբարներիս—կարոտ քուրերիս,
Մե իլլաջըմ էրեք էս սև օրերիս,
Ջորս բոլորս պարիսպ—բոդան ա դառել։
Օրեր, օրեր, օրեր,
Դուք ուր եք կորեր։

Ես Աղեկն եմ Ջամռլեցի մէկ ջիվան,
Թևերս կապին, տուֆաստղ տարան Երևան,
Մեկ դատաստան չկա, հոգևոր դիվան,
Ջորս բոլորս քեամանդ, սալտատ ա դառել։
Օրեր, օրեր, օրեր,
Դուք ուր եք կորեր։

74. ԽԱՆՈՒՄ ԵՎԱ ՋԱՆ

Բերդիցը դուրս ելայ Ալագեաղ տեսայ,
Խանըմ Եվա ջան,
Աբարան աչքերիս դուման ա դառել,
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,
Լալով ողբալով, քոչ ու Բարխանով,
Խանըմ Եվա ջան։

Ոչխարն էս դին կարծայ՝ էնդին գառները,
Խանըմ Եվա ջան,
Կանչըցերա ծաղիկները ծառները։
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,
Լալով ողբալով, քոչ ու բարխանով,
Խանըմ Եվա ջան։

Արի էրթանք քու ման գալած արտերը,
Խանըմ Եվա ջան,
Քեզի տեսա՝ թաժացավ իմ դարտերը։
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,
Լալով ողբալով, քոչ ու բարխանով,
Խանըմ Եվա ջան։

Ձեռ ու ոտս կապին, բերդը դրեցին,
Խանըմ Եվա ջան,
Ջուխա, շալվար լալով տունը բերեցին։
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,
Լալով, ողբալով, քոչ ու բարխանով,
Խանըմ Եվա ջան։

Ես Աղեկն եմ Ջամռլեցի, մեկ ջիվան
Խանըմ Եվա ջան
Տուքսաղ էղա բսաոց չուրի էրևան։
Դուն կեցի բարով, ես կերթամ լալով,
Լալով ողբալով, քոչ ու բարխանով.
Խանըմ Եվա ջան։

75. ԲԵՐԴԻՑ ԴՈՒՐՍ ԵԼԱ...

Բերդիցը դուրս ելայ. Ալագեազ տեսայ,
Խանըմ Եվա ջան.
Աբարանը աչքիս տուման ա դառել,
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,
Լալով ողբալով, քեռչ ու բարխանով,
Խանում Եվա ջան։

Ոչխարը էսդին կարծէ, էնդին գառները,
Կանաչել ա ծաղիկները, ծառները,
Արի էրթանք քու ման գալած արտերը,
Քեզի տեսա թազացավ իմ դարդերը։

Ձեռս ու ոտս կապին՝ բերդը դրեցին,
Ջուխայ, շալվար լալով տունը բերեցին,
Ես Սուրենն եմ Ղազախեցի մէկ տղայ,
Տուքսաղ եղայ երեք տարի մեղա չէկայ։

76. ՇԵԽ ՍԱՖՈՆ

Խնուս գեղի մեջ տեղը,
Խրամայեց մենծ շեխը,
Թորկեց գիս լաց ու շիվան,
Նարսի տարավ մենծ պեխը։
Տարան, տարան գիմ եարը,
Տարան գիմ մեկուճարը.
Խապար էրեք Սարոյին,
Տարան խորոտ վառոյին։

Իմ եարն անմեղ ճնճղուկ է,
Նարա սրտիս դեղուկ է,
Մենծ պեխի սուր խանչալից,
Ջիմ սիրտ ճեղուկ-ճեղուկ է։
Տարա՜ն, տարա՜ն գիմ եարը...

Նարիս ծամերն էր ոսկի
Դագմա չըր իգայ խոսքի,
Ջոռ հա գոռ փախցուց տարավ
Էն մեծ պեխը անխոգի։
Տարա՜ն, տարա՜ն գիմ եարը...

Անուն վառո էր եարիս,
Խող քաշեցի գիմ խալիս,
Էն մեծ պեխի կեռ թուրը,
Կտրեց թելեր գիմ սրտիս։
Տարա՜ն, տարա՜ն գիմ եարը...

Մացի եռևեն լալով,
Գլխուս ծամեր թափ տալով,
Մեռա էն օրեն ետև,
Քար ու քոէք ընկնելով։
Տարա՜ն, տարա՜ն գիմ եարը...

77. ՏԱՐՈՆԻ ՋՈՒԼՈՒՄ

Հազար ին հարիւր տասն և ինգ թուին,
Սև սուգ պատեց Հայոց ազգին,

Թյուրք թշնամիներ անթիվ զորքով,
Ջնջեցին Տարոն, ավա՜ղ հրով, սրով։

Տարոն քանդուեցավ, գյուղերը վառան,
Տուներուն մեջ հայերը մեռան,
Շատ կին ու աղջիկ բըռնի տարուեցան,
Տարուեցան ավա՜ղ, գաղով այրվեցան։

Մնացածները լեռները փախան,
Հաց ու ջուրի տեղ խոտերը կերան։
Երիտասարդներ և պատանիներ չուանով կապուեցան
Կապուեցան ավա՜ղ սուրի անցան։

Ժամ ու դպրոցներ բոցի մեջ կորան,
Կիներ ու մանուկներ բոցերուն մեջ մեռան։
Ծերերը խաչին վրա բարձրացուցին,
Խաչեն վար առին, ավա՜ղ գետերուն մեջ լեցուցին։

78. ՍԻՓԱՆԱ ՉՈՐՍ ԿՈՂՄ

Սիփանա չորս կողմ սար էր,
Ձալըմ թոփչին նշնդար էր,
Այնքան զարկեր, մարդ կվառեր,
Ձուլում-ղուլում դատաստան էր,
Ոչ հալ ունենք, էվել-հավատ,
Քար կը հալինք, դարձունք երկաթ,
Էդ շուն թուրքին չեղնինք հայաթ,
Ձուլում-ղուլում դատաստան էր։

Ձեռքեր ժաժիմ՝ թվանք չկա,
Մեջքս նայիմ՝ պատրոն չկա,
Ձար թշնամին եղնես կուգա
Տեր իմ աստված, դու մեր տերն ես,
Էդ ղուլումից ազատ անես,
Ձուլում-ղուլում դատաստան էր։

Վերև նայիմ՝ աստղ կփիլա,
Գետին նայիմ՝ ջուր ու տիլ ա,

Մեկ որդու տեր նստա դիլա,
Ջուլում-ղուլում դատաստան էր։

Արև էլավ, մինչև մտավ,
Երիտասարդ ջանդակ ընգավ,
Հայ գերութենեն չազատվավ,
Ջուլում-ղուլում դատաստան էր,
Էդ շուն տաճիկ մարդասպան էր։

79. ՂԱՐՍԱ ՀՈՂ ՈՒ ՋՈՒՐԸ

Ղարսա հող ու ջուրը արնով շախված էր,
Երիտասարդները անտեր թաղված էր,
Տան միչին ծակված էր, սուն չկար,
Եխպարս գերի էր մե խատ լուր չկար։
Հագածս չուլքի էր, վոխշարի բուրդ էր,
Քեռուս տարող, մայրիկ, անորա թուրք էր.
Ջանգերը ղարկեցին, ժողովուրդ քումմեցին,
Լցին մարաք, մայրիկ, կրակ տվեցին։

80. ԲԱՅԲՈՒՐԹ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Լսեք ձեզ պատմեմ կռվի մեկ մասը
Բայբուրթա լեռներից հասավ վնասը.
Շատերը զոհ գնացին մնաց մեկ մասը
Բարդ քարի վրա չմնա Բայբուրթ։

Առավոտ լուսին ատակ գնացինք,
Ով սիրելի քեզնից կարոտով մացինք.
Հայրենիք հիշելով բազում ողբացինք,
Բարդ քարի վրա չմնա Բայբուրթ։

Ես Պետրոսն եմ Երևանա գավառից
Զրկվեցա հայրից, մայրից և կյանքից.
Վերջը զոհվեցի թուրքի գնդակից
Բարդ քարի վրա չմնա Բայբուրթ։

81. ԲԱՅԲՈՒՐԴՈՒ ԼԵՌՆԵՐԵՆ

Լսեք, ձեզի պատմեմ կռվի մի մասը,
Բայբուրդու լեռներեն էկավ վնասը,
Մեր պոլկը գոհ գնաց, մնաց մի մասը,
Քարդ քարի վրե չմնա, Բայբուրդ։

Դեռ լույս չէր ծագել թոփերը խոսան,
Ղարսա կողմեն մէզի ինդատ չհասավ,
Օլթվա կողմեն էլ թուրքերը եկան,
Քարդ քարի վրա չմնա, Բայբուրդ։

Մե կողմեն պլիմոտ, մե կողմեն թոփեր,
Կարծես թե երկնքեն կարկուտ կթափեր,
Գեներալ Բարաթովը զորքին կխաբեր,
Քարդ քարի վրա չմնա, Բայբուրդ։

Բայբուրդու սարերը հադան ալ արուն,
Սալդատներու համար բացվավ սև գարուն,
Ախ ճիտը տակը գար Բարաթովներու,
Քարդ քարի վրա չմնար, Բայբուրդ։

82. ԲԱՍԵՆՅՈՒ ԽԱՂԸ

Արագափին ծնված տղա, բասենցի տղա,
Մօրդ օրշննքն ու զենքը առ, շուտ կռիվ գնա,
Թե մեռար քաջի պես, կփրկես մեզի,
Սաղ Բասենը մոր պես կողբա քեզի։
Թե սաղ մնաս խաչի, ս. խաչ սարի զորքով,
Վրեդ խաղ կը կապենք ու դու կապրիս փառքով,
Արագի ափի տղա, Բասենի կարիճ տղա,
Առ էս թուրն ու գեմի՝ Սասնա սարը գնա։

ՀԱՍԱՆ ՂԱԼԻ ԵՐԳԵՐ

83. ՀԱՍԱՆ ՂԱԼԱ

Ես խեչոն եմ Նախշըվանցի,
Յավերս մերոնց պատմեցի.
Կամադուշիկ՝ գերմանացի

Խեղճ Խեչոյին ըսպանեցին։
Թիակս տարեք հայ ընկերներ,

Քաշքաշում են շուն տաճիկներ,
Գոյնե իմ աստղ խալարներ,
Ընդի շուտ հասցրիք իմ մորս։

Իրեք հարիր հոքիկներով,
Ջինվաձ էին մուսիններով,
Մեչն չարդին արաբներով
Խեղճ Խեչոն եմ վայ կանչելով։

Անդրանիկը դուշեց ուռա,
Դարձավ ասեց,— սալդաթն ո՞ւր ա,
Փաշեն ասեց,—Կավկազ իմն ա,
Վերան դառնաս Հասան-Ղալա,
Խեղճ հայերուն դարդ ու բալա։

Հասան Ղալեն տեխս քար էր,
Մայրիկ գինա բալեն սաղ էր,
Հայրիկ չուներ էնտեղ թաղեր,
Վերան դառնաս Հասան-Ղալա,
Խեղճ հայերուն դարդ ու բալա։

Հասան Ղալեն բանցռ սար էր
Միչի կռվող շատն հայ էր,
Տո մայրիկ չան անորա են.
Վերան դառնաս Հասան-Ղալա,
Խեղճ հայերուն դարտ ու բալա։

Հասան Ղալեն քար ու քրռա,
Թուխի գյուլուլեն մեչ կը ֆըռռա,
Ջուրն ու արուն կը գըռգռա,
Թուրն ու խանչալ կը ֆըռֆռա.
Վերան դառնաս Հասան Ղալա,
Խեղճ հայերուն դարտ ու բալա։

Հասան Ղալի դռներ կապուտ,
Գյուլլեն կիգա քարե կարտուտ,

Բերին դրին ինչպես թարուտ
Վերան դառնա Հասան Ղալեն
Խեղճ հայերուդ դարտ ու բալեն։

Հասան Ղալեն տեխս թաց ա,
Քամին դարկա դոշս բաց ա,
Խըշտիկ զարկող անասուած ա,
Վերան դառնաս Հասան Ղալա
Խեղճ հայերուն դարտ ու բալա։

Հասան Ղալի դռներն ա բաց,
Թուրքն կիգա ոտքերն ա թաց,
Վերան դառնաս Հասան Ղալա,
Խեղճ հայերուն մի ճար արա։

Հասան Ղալի բոլոր մնշա,
Գյուլլեն միչին կը խըշխշա։
Սրտիս յարեն կը տըժժա,
Վերան դառնաս Հասան Ղալա,
Խեղճ հայերուն մի ճար արա։

84. ՀԱՍԱՆ ՂԱԼԵՆ

Հասան-Ղալեն քար ու քոա,
Թոփի գյուլլեն մեջ կըֆուռա.
Ջոքիս յարեն կըմրմռա։

Հասան-Ղալի ջուրը պաղ էր,
Մայրը գիտեր որդին սաղ էր,
Ջգիտեր որ հողի տակ էր
Յանա-յանա, դիլխոր բան ա։

Հասան-Ղալեն դուրան դուղ էր,
Են շան թուրքը կռիվ կուզեր,
Ջոր ու գիշեր դուրսը սառա,
Հասան-Ղալու բերդը չառա։

Դիրքս մտա, տեղս թաց էր,
Քամին զարգեց վրես բաց էր,
Խշտիկ զարգող անասուած էր,
Յանա-յանա, դիլխոր բան ա։

Հասան-Ղալու դռներ բացին,
Կամանդիրն էր գերմանացին,
Յանա-յանա դիվխոր բան ա։

85. ՀԱՍԱՆ ՂԱԼԱ

Վալեն եկավ Հասան Ղալեն,
Մեռներ Օմար փաշի բալեն.
Յարս Թոդեց տանը լալեն,
Կյանքիս վայիս Հասան Ղալա։

Հասան Ղալեն քար ու քրռա,
Գյուլլեն մեջը կը ֆըռֆըռա,
Գյուլլի յարեն կը մըռմըռա,
Կյանքիս վայիս Հասան Ղալա։

Հասան Ղալեն բանդր սար էր,
Ջորս բոլորը անմայ քար էր,
Կռվողների շատը հայ էր,
Վերան դառնաս Հասան Ղալա։

Դիրքը մտած ժամանակըս,
Լալով գրեցի նամակս.
Կարթացեք, առեք փափագըս,
Վերան դառնաս Հասան Ղալա։

Դիրքը մտա տակս թաց էր,
Քամին զարկեց վրես բաց էր,
Խըշտիկ զարկողն անաստված էր,
Կյանքիս վայիս Հասան Ղալա։

86. ՀԱՍԱՆ ՂԱԼԱ

Ասին, աստված մեզ պաշտպան էր,
Ջելոն եկավ եսիր տաններ,
Մենք ինչ աննենք, շատ կոպաններ,
Վերան տառնար Հասան-Ղալեն։

Թուրքը եկավ հազար-տասնութ,

Դյուլեն եկավ ինչպես կարկուտ,
Թուրքի թոփն էր վացուն վեց փութ,
Անտեր մնար Հասան-Ղալեն։

Թուրքը եկավ օլթին առավ,
Կրակն ընկավ ջանս վառավ,
Էտ ինչ գուլում սիթամ տառավ,
Քյամբախ տառներ Հասան Ղալեն։

Հասան-Ղալեն պանցր սար էր,
Ջորս պոլորը անմայ քար էր,
Կովողների շատը հայ էր,
Վերան տառներ Հասան-Ղալեն։

Քշեր ցերեկ տուռը վառանք,
Հասան-Ղալի պետքը առանք,
Կեսից ավել թամուղ մեռանք,
Անտեր մնար Հասան-Ղալեն։

Հասան-Ղալի տուռը պացին,
Կամանդուշներ գերմանացի,
Մերեր-քուրեր նստան լացին,
Վերան ըլներ Հասան-Ղալեն։

Ալլոպլան վերը պաներ,
Պուլեմոտը գյուլլեն մաղեր.
Շրապնելը մեզ կը վառեր,
Անտեր մնար Հասան-Ղալեն։

Թողեք Ղալեն, փախավ բալեն,
Մեռներ էմիր-փաշի բալեն,
Հայրս մնաց տանը լալեն
Վերան տառնար Հասան-Ղալեն։

Թուրքը էկավ դավա-բոյին,
Ըռուսն էլավ՝ Դերի-Ջորին,
Խշտիկն էր սալդաթի բոյին,
Քամբախ տառնար Հասան-Ղալեն։

Հասան-Դալի ճամփեն օլոր,
Ջինվոր պերին արնակոլոր,
Պերին լցին բալնիցի տուռ,
Վերան տառնար Հասան-Դալեն։

87. ԱՐՏԱՇԻ ԵՐԳԸ

Ես Արտաշն եմ Կաղզմանցի,
Ամեք պոլկից առաջ գացի,
Ջրկվեցա ու դուրկ մնացի,
Յարալու եմ, դառնալու չեմ։

Քաֆուր տչեք խարախաշ են,
Պոլկովնիկ Թևես քաշեր,
Նասիլկեն Արտաշի նաշ էր
Յարալու եմ, դառնալու չեմ։

Դիրքը փորի, տեխս թաց ա,
Քամին կը զարկա դոշս բաց ա,
Խշտիկ զարկող անասուած ա,
Յարալու եմ, դառնալու չեմ։

Հերն ու մերս Թունդրա բոցին,
Սիրեկանիս ձեռքը ծոցին,
Նորմանուկ օրորոցին,
Յարալու եմ, դառնալու չեմ,
Վերան դառնար Հասան-Դալեն։

88. ՀԱՍԱՆ ԴԱԼԱ

Հասան Դալեն բանձր սար էր,
Ջորս բոլորը մարմառ քար էր,
Կռվողների մեջ կան հայեր.
Վերան դառնար Հասան-Դալեն,
Մեռնի էնվեր փաշի բալեն։

Գյուլլեն էկավ ինչպես կարկուտ,
Դուշմնի Թոփն էր 66 փութ,
Փաշեն կատղած, սիրտը անգութ.

Վերան դառնար Հասան-Ղալեն,
Մեռնի էնվեր փաշի բալեն։

Դուշման էկավ Դավա-Բոյին,
Ըռուսն էկավ Դելի-Ջորին,
Խըշտիկն էր սալդաթ բոյին.
Վերան դառնար Հասան-Ղալեն,
Մեռնի էնվեր փաշի բալեն։

Հասան-Ղալին բերդը ամուր,
Ունի պարիսպ էրկբթի դուռ,
Կըշտեն կանցնի Արագի ջուր.
Վերան դառնար Հասան-Ղալեն,
Մեռներ էնվեր փաշի բալեն։

Դիշեր ցերեկ դուռը վառանք,
Կրակի դեմ քյաբաբ դառանք,
Հասան-Ղալի բերդը առանք.
Վերան դառնար Հասան-Ղալեն,
Մեռնի էնվեր փաշի բալեն։

89. ԱՐՄՏԼԵՑԻ ՕՍԵՓԻ ԽԱՂԸ

Ես Օսեփն եմ բարակ ֆիդան
Մայվան բաժակ խմել կուտան,
Ըսեք հօրս իմաց չըտան
Մնաք բարով, ես գնում եմ։
Սաբախտավա թնդրաբոցին
Լուս էրեխեքս օրորոցին,
Սրբունի ձևոքը մնաց ծոցին,
Մնաք բարով, ես գնում եմ։

Հասան-ղալու ջրի վրա,
Թուրքը բացեց թոփ ու կրակ,
Գյուլլեն սրտիս մեջը մտավ,
Մնաք բարով, ես գնում եմ։

Սրբուն ջան, շատ սուգ մի էնե,
Ջուխտ բալեքիս լավ խնամե,

Կռիվը սուգ ու շիվան է,
Մնաք բարով, ես գնում եմ։

Ես Օսեփն եմ Արմբուլեցի,
Հասանղալու քով զարկվեցի,
Ջահել կյանքես շուտ զրկվեցի,
Մնաք բարով, ես գնում եմ։

90. ՀԱՍԱՆ ՂԱԼԱ

Հասան-ղալա, Հասան-ղալա,
Շադին էղար դարդ ու բալա։
Հասան-ղալեն քար ու քոա,
Մաախս յարեն կըմըռոա,
Թուփը մեջը կը գըռգռա,
Վերան դառնաս, Հասան-ղալա։

Հասան-ղալու ջուրը աղի,
Հացն ու կերակուրը լեղի,
Հազարներ մեռան անտեղի,
Վերան դառնաս, Հասան-Ղալա։

Մեր գեներալ Բարաթովը,
Հասանք Հասան-ղալու քովը,
Անթիվ սալդաթ տվինք զոհը,
Վերան դառնաս Հասան-ղալա։

Հասան-ղալու բերդը ղային,
Ջորքի կորպուսնոն էր խային,
Տարավ ջարդեց ռսին, հային,
Վերան դառնաս, Հասան-ղալա։

Հասան-ղալու բերդը սար էր,
Շատ մեռնող էլ մեկուճար էր,
Դիակը սարին հավասար էր,
Վերան դառնաս, Հասան-ղալա։

Հասան-ղալեն դարձավ արուն,
Մեզի բերեց մէկ սև գարուն,

Ասկյարն ու նեմեցն էին գալում
Վերան դառնաս, Հասան գալա.

Ես Ապարն եմ Արմըալեցի,
Էս սև խաղը ես կապեցի,
Էդ հողն ու ջուրն անիծեցի,
Վերան դառնաս, Հասան-գալա։

ՍԱԼԴԱԹԻ ԽԱՂԵՐ

91. ՍԱԼԴԱԹԻ ԽԱՂԸ

Թող բարով կործանվեր Նիկոլի թախտը,
Էլի նկավ սալդաթ տանելու վախտը.
Կապեք շորերս,
Էկան օրերըս։

Մերիկ գաթա թըխի, դի տանեմ հետս,
Ամեն դիրք մտնելուս քեզ քցեմ միտս,
Ա՜խ, մացեք բարով,
Ես կերթամ տարով։

Էն անդեր մաշինեն շվվաց ու գնաց,
Իմ յարիս աղլուխը ձեռումը մնաց.
Մացինք չոլերին,
Վա՜յ մեր օրերին։

Ջաջուռա սարն ընցանք չկար օթևան,
Տավարնի վագոնը նեղվածկ ի յաման.
Ճամփեքս փուշ ա,
Վաթանն անուշ ա։

92. ՍԱԼԴԱԹԻ ՄՈՐՄՈՔԸ

Մաշինեն գալում էր
Տասներկու վագոն,
Մարըս ընձի բերավ
Քցեց դրակոն։

Վադոն մի ժաժա,
Վադոն բախտըդ ընկնեմ՝
Սիրել եմ թաժա։

Երևանա ծագեց
Կարմիր արևը,
Փոշտե-փոշտա կստանամ
Յարիս բարևը։
Վադոն մի ժաժա,
Վադոն բախտըդ ընկնեմ
Սիրել եմ թաժա։

Կանցելարի դուռը
Կանգնած մնացի,
Ձեռս ծոցս տարա,
Ա՜խ արի լացի։
Վադոն մի ժաժա,
Վադոն բախտըդ ընկնեմ՝
Յարս է թաժա։

Մտա եկեղեցի,
Վառի մոմերը,
Ձեռքս տարի, քաշի
Պեուվի նոմերը։
Վադոն մի ժաժա,
Վադոն բախտըդ ընկնեմ՝
Յարս է թաժա։

93. ՆԻԿՈԼԻՑ ԷԿԱՎ ՍԵՎ ԹՈՒՂԹԸ

Նիկոլից էկավ սև թուղթը,
Քանդվեց մեր պայմանը, ուխտը։
Տանում են, տանում են յար ջան,
Ինձ քեզնից հանում են յար ջան։

Էկան գեղը, արին հաշիվ,
Քյուլլի տղեք քշին կռիվ։
Տանում են, տանում են յար ջան,
Ինձ քեզնից հանում են յար ջան։

Մերեր, քուրեր մացին լալով,
Նշանածներ՝ մղկտալով։
Տանում են, տանում են յար ջան,
Ինձ քեղնից հանում են յար ջան։

Աշխատողներ կռիվ գացին,
Տուն ու խիզան անտեր մացին։
Տանում են, տանում են յար ջան,
Ինձ քեղնից հանում են յար ջան։

94. ԱՉՔՍ ԳՅԵԼ ԵՄ ՍԱՐԻՆ

Աչքս գցել եմ սարին,
Ոտքս տըվել լեռ քարին,
Էրթա ու էլ հետ չըգա,
Քեզ դինվոր գրած տարին։

95. ԾԻՐԱՆԻ ԾԱՌ ԾՌՎԵԼ Ա.

Ծիրանի ծառ ծռվել ա,
Յարս սալդաթ գրվել ա,
Յար ջան, սալդաթ մի գնա,
Քո եղնիկը կը մնա։

96. ՍԻՐՈՒՆ ՋԱՆ, ՍԻՐՈՒՆ ՋԱՆ

Սիրուն ջան, սիրուն ջան,
Դոշդ մի բանա,
Նըշանած դինվոր եմ,
Ես չեմ դիմանա։

97. ՀԱՆԴՈՎԸ ՍԵԼ Ա. ԷԹՈՒՄ

Հանդովը սել ա էթում,
Մարդովը ջուր ա էթում,
Գացեք, ասեք սալդաթին,
Ինձ թողե՝ ո՞ւր ա էթում։

98. ՍԱՐԵՐԸ ՍԱՐՍՈՒՌ

Սարերը սարսուռ,
Ձրերը մամուռ,

Սալդաթատիրոջ
Սիրան ա մրմուռ։

99. ԹԱԳԱՎՈՐԻ ԹԱԽՏԸ

Թագավորի թախտը,
Իմ յարիս բախտը,
Մեծ կռիվն ընկավ,
Իմ ջահել վախտը։
Ադե ջան, ադե,
Դարդերս շատ է։

100. ԲԱԳԸՐՆԱ ՏԵՂՆ ԱՐԱՆ

Բագըրնա տեղն արան,
Վեց տղա ջոկին տարան,
Տերերը կապին վարամ,
Գնա, բարով հետ արի։

101. ԵՐԵՎԱՆՈՒ ՃԱՄՓԵՆ ԴՈՒՉ Ա.

Երևանու ճամփեն դուզ ա,
Թագավորը սալդաթ կուզա,
Թղթերն եկան այլուն-փայլուն,
Որն ազատ էր, որը նշանլուն։

Թագավորի դռան պուզը,
Սալդաթներին քոմին դուզը,
Արևն առավ Կողբա սարին,
Ե՞րբ կըթըմմի երեք տարին։

Արևն դիպավ Կողբա սարին,
Ե՞րբ կհասնեմ ես իմ յարին։
Սալդաթ տանիլը մոմուռ ա,
Տեր իմ աստվածծ, ազատ արա։

Նոր ա ծագե արևը,
Ում հետ գրկեմ բարևը,

Իմանամ՝ դու իմ յարն ես,
Կառնեմ, կելնեմ սարերը։

Կանգնել եմ, սել կըքաշես,
Ջեռքի ճիպոտը նախշես,
Ինձ սիրեցիր չառար,
Ջիթ բլուզդ...

102. ԲԵՋԱՋԼՎԱ ՊՈՅԵԶԴԸ

Անտեր մնա
Բեջալվա պոյեզդը,
Վայ, յարիս տարավ
Հաննեց, վայ աման,
Անտեր Թավրիզը։

Պոյեզդ, մի ժաժա,
Պոյեզդ, մի ժաժա,
Յարիս տարար հանիր,
Վա՜յ աման,
Անտեր Թավրիզը։

Կայնել ես կաժ կըմանես,
Արեգակի նըման ես,
Քելե, յարս ջան, քելե,
Ջինվոր մի մընա։

Քո սիրած անուշ յարին
Աչքով ունքով կվառես,
Էլի, յարս ջան,
Քեզնից գանգատ ես չունեմ։

103. ԿԱՆՑԻԼԱՐԻ ԴՈՒՌԸ...

Կանցելարի դուռը վառում էր ֆանար,
Սիրուհուս մեջքին կար արծաթե քամար։
Մտա կանցիլարը, կանգնած մնացի,
Խաբար տարեք տունը, վինվոր գնացի։

Մեր դարվազի դուռը դիպավ մեծ առուն,
Խանչալով տան սրտիս, չէր կաթի արուն։

104. ՁԻՆՎՈՐ ՏԱՐԱՆ

Ձինվոր տարան Կարոյին,
Ձինվոր տարան գիշերը,
Յարը պագեց թըշերը։

105. ՁՅՈՒՆ ԼԿԵԼ

Ձյուն եկել, դուռն առել ա,
Արև տըվե, հալել ա,
Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ,
Ձինվոր է յարս,
Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ,
Վառե ջիգյարըս։
Մնացել ենք շիվարած,
Դարդը մեզի տարել ա։

106. ՄԱՅՐԻԿ ԵՍ ԳՆՈՒՄ ԵՄ

Մայրիկ, ես գնում եմ, դուն կեցիր բարով,
Դուն իմ յարը պահե ալ քոչքով, զարով,
Ավազ, դեհ զարով։

Վախենում եմ, գընամ մեկ գյուղի յարով,
Մայրիկ, օտար երկիր գնալում եմ ես։

Քհանեքը հանին մետրիկականս,
Գիշեր, ցերեկ կրակն ընկավ իմ ջանս,
Մնաց մորմոքալեն իմ խղճով յարս,
Մայրիկ, օտար երկիր գնալում եմ ես։

107. ԲԱՂՉԻ ՊԱՏԸ...

Բաղչի պատը դրդում ա, դըլե,
Յամման կամար աման դըր։
Իմ առածը էթում ա,

Ուրախություն չտևսա,
Հիմա պինվոր էթում ա։
Բախչի պատը պըդում ա,
Նա՛, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
Իմ առածը էթում ա,
Ուրախություն չտևսա,
Հիմա պինվոր էթում ա։

108. ՋԱՐկեցեք ՈՍկի ցցեր

Ջարկեցեք ոսկի ցցեր,
Թամբեցեք բոլ-բոլ ձիանք,
Փըռեցեք արփըշմն ծածկոց,
Իմ յարիկը հեծնի վրան։

Էրթանք վեր Մսրա թալան,
Բերենք շատ հարսն ու փեսան,
Հարսներ մեր գեղին տանտիկին,
Փեսեք մեր դաշտին նախրորդ։

Շատ քուր ունեմ, շատ ազբեր,
Շատ աննման մեր կտրիճներ,
Իր քորերաց ատլաս շարահի շապիկ,
Աղբըրներաց ոսկեթել գոտիկ։

109. ՋեյրԱՆ ԹՈՓեր կԱՊեցին

Ջեյրան թոփեր կապեցին,
Կարսա վրեն թափեցին,
Կարսա բոլոր խանդաք ա,
Մեջը գյուլի ջանդաք ա։

110. ՍԱԼԴԱՏ ԱԽՊՈՐՍ ՆԱՄԱԿը

Սալդաթ ախպորս նամակը,
Կարդամ իմանամ քաղաքը,
Ախ ե՞րբ գուկա իրեն վադեն
Սալդատները Բասեն շատ են։

Մորս աչքը խավրեց լալեն,
Սալդատ ախպորս նամակը,
Հնչ լուր չկա որդու դալեն,
Կարդամ իմանամ քաղաքը։

Ով որ եղավ կռվի սաբաբ.
Սալդատ ախպորս նամակը,
Միսը էրվի դառնա քյաբաբ,
Կարդամ իմանամ քաղաքը։

Տիրամեր դու խղճա մորս,
Սալդատ ախպորս նամակը,
Ուրախ էրա մեր սև օրը,
Կարդամ իմանամ քաղաքը։

Մեր հանդերը դարձան դարտակ,
Սալդատ ախպորս նամակը,
Ոնչ հոտաղ կա, ոնչ էլ մաճկալ,
Կարդամ իմանամ քաղաքը։

111. ԼՈՒՍՆԱԿ ԼՈՒՍ ՏՈՒՐ...

Լուսնակ լուս տուր, նոր գնա,
Յարիս հույս տուր, նոր գնա,
Յարըս զարիբ երկիր է,
Յարիս քովը շատ մնա.
Լուսնակ լուս տո՛ւր, նո՛ր գնա։

Աշխարքը քու աչքիդ տակ,
Յարիս դու աչէ շիտակ,
Յարիս կռիվ են տարե,
Ախ յարս մեկուճար է,
Լուսնակ լուս տո՛ւր, նո՛ր գնա։

Էրնեկ քու պաղ աչներուն,
Որ կաեսնին շատերուն,
Էսօր Թըմմավ մէ տարին,
Որ տարել են իմ յարին,
Լուսնակ լուս տո՛ւր, նո՛ր գնա։

Անցան Ծնունդ ու Զատիկ,
Նամակ էկել է շատերից,
Յարս նամակ չի գրէ,
Հույս դնեմ ո՞ւմ վրեն,
Լուսնակ հույս տո՛ւր, նո՛ր գնա։

112. ԳԻԼԼԻ ԳԻԼ, ԳԻԼՆ Է ՏԱՐԵ

Գիլլի գիլ, գիլն է տարե,
Լիղուդ բիլբիլն է տարե,
Դայրեդ կրակն է վառէ,
Ջեղնի նոր յար ես ճարե,
Որ էդման քար ես դառէ։

Գիլլի գիլ, գիլն է տարե,
Սիրտդ սելավն է տարե,
Ինչի՞ էլ ջրի չես գա,
Մազյամ քո սիրտը քար է,
Որ էդման չար ես դառե։

Գիլլի գիլ, գիլն է տարե,
Սերըդ կարկուտն է տարե,
Էլ աչքդ չունի արև,
Ով դողացավ սիրտդ տարավ,
Որ մութ-խավար ես դառէ։

Գիլլի գիլ, գիլն է տարե,
Սիրտս աչներդ են տարե,
Առանց քեզ օրս սև է,
Դու գիտես ինչ ես չիդեմ,
Որ դու նոր յար ես ճարե։

113. ՓՆՋԼԻԿ ՏՂԱ...

Փնջլիկ տղա յախեդ մոմեմ,
Սալդատ կերթաս՝ աշխըրքով է։
Լիղուդ դիր բերանըս ծամեմ.
Սիրտըս հիմի ելման ծով է։

Փնջլիկ տղա, մոտըս մնա,
Ես չեմ ուզե սալդատ գնաս,
Ճիտը կոտրեր թագավորի,
Օր չհասնեինք էսման օրի։

Կռիվ եղավ մեր սև բախտեն,
Փնջլիկ տղա յախեդ մոմեմ,
Երնեկ Նիկոլն ընկներ թախտեն
Սալդատ կերթաս աշխրքով է։

Ինչքան մուրազ մնաց թերի,
Փնջլիկ տղա, յախեդ մոմեմ
Շատերի յարն ընկավ գերի,
Սալդատ կերթաս աշխրքով է։

Քեզ կըսպասեմ օխտը տարի,
Փնջլիկ տղա յախեդ մոմեմ,
Ինչքան կարաս դու թեզ արի,
Սալդատ կերթաս աշխրքով է։

Ո՞րտից էս սև կռիվն էկավ,
Փնջլիկ տղա յախեդ մոմեմ,
Էկավ ու մեր գեղը մտավ,
Սալդատ կերթաս աշխրքով է։

114. ԷՍ ՏԱՐՎԱ ԱՐՏԵՐԸ...

Էս տարվա արտերը դարձել են խսիլ,
Թաժա յարմ էլի բռնէ ընկել է եսիր,
Վերևէն անցնիկը այրոպլանը,
Աստված թող ավիրէ գերմանու բանը.
Սև խաղեր կանչեք, ջահել աղջիկներ։

Յարիս տարել են գերմանու հողը,
Որդով չխնդա կռիվ էնողը.
Աշխարը լցվավ արցունք ու արուն,
Մեր գլխուն էկավ լացով սև գարուն,
Սև խաղեր ըսէք անբախտ աղջիկներ։

Գեղը չմնաց ահել ու ջահել,
Ջես կարող էլ մեր հանդերին նայեն,
Սարերը դարտակ, արտերը խոպան,
Սալգատ են տարե մաճկալ ու չոպան.
Սև խաղեր ըսենք, սարի աղջիկներ։

Երբ ծաղիկի էրթանք Քարգլոխ սարը,
Էլ մեր նաևեն չի գա մեր յարը,
Հեռու աշխարք են իմ յարին տարե,
Մեր բախտը սև է, մեր վախտը չար է,
Սև խաղեր կանչենք, սև բախտ աղջկներ։

115. ԱՆՏԵՐ ՄՆԱՐ...

Անտեր մնար կռվի տարին, սև տարին,
Սալգատ էրին, կռիվ տարան իմ յարին։

Սիրտըս հիմի, խարաբա է, ավեր է։
Ջոկին տարան ջահելները, լավերը։

Անտեր դարձան մեր հանդերը, սարերը.
Էրնեկ թե միշտ խավար մնար արևը։

Էլ ո՞ւմ է պետք Համբարձում ու Վարդևոր.
Ծաղիկներն են սրտակտոր, սևավոր։

Ա՛խ աղջիկներ, կանչենք կարոտի խաղեր,
Էս կռիվը մեր սրտերը մոխիր լցրեց ու դաղեց։

116. ԱՄԱ՞Ն ԿՌՈՒՆԿ...

Ամա՞ն կռունկ, էրկու բալիդ արևը,
Յարըս մնաց Արզրումի սարերը։
Յարիս եսիր են տարէ.
Ամա՞ն կռունկ, էրկու բալիդ արևը,
Սիրտըս խոփով են վարէ,
Յարըս մնաց Արզրումի սարերը։

Մուրադ գետի չայիրներն ու գոլերը,
Ամա՞ն կռունկ, էրկու բալիդ արևը,

Անյար սև էն օրերըս,
Յարըս մնաց Արզրումի չոլերը։
Ես չեմ ուզէ, ոնչ Համբարձում, ոնչ Զատիկ,
Ամա՞ն կռունկ, էրկու բալիդ արևը,
Հարի յարըս ապատվի,
Կռունկ, յարիս տար իմ սրտի բարևը։

Ես չեմ ուզէ ոնչ ծաղիկ ու ոնչ գարուն,
Աման կռունկ, էրկու բալիդ արևը,
Սիրտս լիքն է հիմի գունդ-գունդ սև արուն,
Յարըս մնաց Արզրումի սարերը։

Աման կռունկ, մեկ խաբար տուր իմ յարէն,
Աստված պահէ քու ձագերը, քու բալեն,
Էլի եկան գարնան կանանչ օրերը,
Աման կռունկ, մեկ խաբար բեր իմ յարէն,
Իրեք գարուն էղավ յարըս կորեր է,
Ըսիր գարձավ, տարան զարիբ չոլերը։

117. ԱՆՏԵՐ ՄՆԱՐ...

Անտեր մնար Գիլլի-Գիվազով գետը,
Խանչալ ու հռիվոլըս տարավ հետը։
Էլի պարը բոլորավ,
Անտեր մնար Գիլլի-Գիվազով գետը,
Շեկ ախչիկը մոլորավ,
Խանչալ ու հրռիվոլս տարավ հետը։

Էլի էկան հարսնիքներու օրերը,
Անտեր մնար Գիլլի-Գիվազով գետը,
Քուր ջան, ելի հագի հարսի շորերը,
Օսկի սրհաթըս ու զամես տարավ հետը։

Էլեք աշեք, թե երբ կուգա հարսնառը,
Անտեր մնար Գիլլի-Գիվազով գետը,
Ժամի դուռը մատաղ էնենք սև գառը,
Ղաչիշս ու պատրոններըս տարավ հետը։

Էրկու տարի սալդատ էղա էրզնկա,
Անտեր մնար Գիւլի-Գիվազով գնաը,
Գլորվա ծոցըդ ընկա,
Սապոգներս ու գուլպեքս տարավ հնաը։

118. ԵՍ ՈՒ ՅԱՐՍ ՋԱՀԵԼ ԵՆՔ

Ես ու յարըս ջահել ենք,
Յար ջան, մալուլ մի մնա,
Պայման արել, կապել ենք,
Յար ջան, սալդատ մի գնա։

Ես ու յարըս էրինք ուխտ,
Մոմ վառեցինք էրկու ջուխտ.
Խնդրեցինք Տիրամորը,
Սիրով լցնի մեր օրը։

Ես ու յարըս ծարավ ենք,
Սրտերով տաք, հարավ ենք,
Ես ծարավ եմ, նա՝ աղբուր,
Ես էլ նրան մի պաղ ջուր։

Ես ու յարըս ջահել ենք,
Սրտերում սէր պահել ենք,
Մեր պայմանը բարի է,
Վատեն օխտը տարի է։

119. ԵՐԿՆՔԵՆ ԱՆՑՆԻ ԿԸ...

Երկնքէն անցնի կը այրոպլանը,
Ասուլած Թող չհաջողէ գերմանու բանը։

Յարիս կռիվ են տարե,
Երկնքէն անցնի կը այրոպլանը.
Սիրտըս ավեր են արէ,
Ասուլած Թող չհաջողէ գերմանու բանը։

Յարըս ընկել է եսիր,
Երկնքէն անցնի կը այրոպլանը,

Սիրտըս մեջտեղէն կիսին.՝
Աստված Թող չհաջողէ գերմանու բանը։

Իրեք ամիս առաջ խավրեց արևը,
երկնքէն անցնի կը այրոպլանը.
Յարիս էլ չի հասնի սրտիս բարևը.
Աստված Թող չհաջողէ գերմանու բանը։

Հազար էրնեկ էս կռիվը վերջանար,
երկնքէն անցնի կը այրոպլանը,
Գերի յարըս, ա՜խ, սաղ-սալամաթ տուն գար,
Աստված Թող չհաջողէ գերմանու բանը։

120. ՉԱՊԱՍ ԹՈՓ ԷՐԻՆ...

Չապաս Թոփ էրին, Զըռլի, էլլու յար։
Թագավոր, Թախտդ շրջի, Թելլու յար։
Էլլու, էլլու, էլլու յար, էլլու յար։
Թելլու, Թելլու, Թելլու յար, Թելլու յար,
Էս դարդը սիրտըս կուտէ, էլլու յար։
Արտերը դարձան անտեր, Թելլու յար,
Ավեր է գեղը, անսէր, Թելլու յար։

Էլի եկավ Համբարձում, էլլու յար,
Վեվ է մեր հալը հարցնում, Թելլու յար,
Էլ ի՞նչ վիճակ, ի՞նչ ծաղիկ, էլլու յար,
Մեր սիրտը չի ծիծաղի, Թելլու յար։

Տավարը տարա բերը, էլլու յար,
Էլ չկա սարի սէրը, Թելլու յար։
Յարիս նամակ եմ գրէ, էլլու յար։
Մեջը արցունք եմ դրէ, Թելլու յար։

Աշխարքը դարձավ արուն էլլու յար,
Արտերը Թոփն է վարում, Թելլու յար։

Էս ինչ զուլում օրեր են, էլլու յար,
Ջահելները կորել են, Թելլու յար։

Բալեդ մեռնի, թագավոր, էլլու յար,
Էլ չտեսնիս դու լավ օր, թելլու յար։

Էլլու, էլլու, էլլու յար, էլլու յար,
Թելլու, թելլու, թելլու յար, թելլու յար։

121 ԷՍ ՏԱՐՎԱ ԱՐՏԵՐԸ...

Էս տարվա արտերը դարձել են խսիլ,
Թաժժա յարմ էի ճարէ, ընկել է եսիր։

Անիծվեր էդ արնոտ գերմանու հողը,
Հիչ լավ օր չտեսնի կռիվ սարքողը։

Աշխարքն հիմի լցվավ արցունք ու արուն,
Ախ, մեր գլխին էկավ սև ու մութ դարուն։

Մարդ չմնաց, տարան ահել ու ջահել,
Մարդ չի կրնա գեղի արտերուն նայի։

Սարերը սուգ, արտերը լուռ ու խոպան,
Սալդատ տարան հազար մաճկալ ու չոբան։

Երբ ես ծաղկի էրթամ Ալադաղ սարը,
Իմ հտևից էլ չի գա իմ ազիզ յարը։

Խաս շորերս ծալեմ, պահեմ թող մնան,
Մինչ յարըս կռվեն պրծնի ու տուն գա։

Ախչի, էկեք խաղով գովենք մեր յարին,
Էրնեկ կռիվը վերջանար էս տարի։

Հանդը կանանչ է, սարը ծաղիկ է, գարուն է,
Աման աստված, հող ու ջուրը սև է, արուն է։

122. ԼՈՒՍՆՅԱԿ ԼՈՒՍ ՏՈՒՐ...

Լուսնյակ լուս տուր, նոր գնա,
Յարիս հուս տուր, նոր գնա,

Յարբս զարիբ երկիր է,
Յարիս քով երկար մընա։

Աշխարը քո աչքի տակ,
Լուսնյակ լուս տուր, նոր գնա,
Իմ յարին աշէ շիտակ,
Նրան հուս տուր ու գնա։

Էրնեկ քո մեծ աշներուն,
Լուսնյակ լուս տուր, նոր գնա,
Որ կտեսնես շատերուն,
Յարիս հուս տուր, նոր գնա։

Էսօր Թըմմալ մէ տարին,
Լուսնյակ լուս տուր, նոր գնա,
Սալդատ տարան իմ յարին,
Յարիս հուս տուր ու գնա։

Յարիս կըռիվ ևն տարէ,
Լուսնյակ լուս տուր, նոր գնա,
Ա՜խ, խնդճը մեկ ու ճար է,
Յարիս հուս տուր ու գնա։

Անդան Ծնունդ ու Զատիկ,
Լուսնյակ լուս տուր, նոր գնա,
Նամակ է էկէ շատից,
Յարիս հուս տուր ու գնա։

Յարըս նամակ չի գրէ,
Լուսնյակ լուս տուր, նոր գնա,
Հույս դնեմ քո վրեն,
Մեզի հուս տուր, նոր գնա։

123. ԼՈՒՍՆԸԿԻ ԼՈՒՍԸ...

Լուսնըկի լուսը, արտերու բուսը, օյ, օյ,
Յարըս սալդատ է, քնիկը դուսը, օյ, օյ։
Զադըր ևն զարկէ սարին,
Լուսնըկի լուսը, արտերի բուսը, օյ, օյ,

Ե՞ր բիդի անցնի հինգ տարին,
Յարըս սալդատ է, քնիկը դուսը, օյ, օյ։
Ղարիբ կրկիր են տարէ,
Լուսնըկի լուսը, արտերու բուսը, օյ, օյ,
Գարունըս ձմեռ են արէ,
Յարըս սալդատ է, քնիկը դուսը, օյ, օյ։

Սարի հավքերը, թուխ ամպեր,
Լուսնըկի լուսը, արտերու բուսը, օյ, օյ։
Մէ նամակ տամ անհամբեր,
Յարըս սալդատ է, քնիկը դուսը, օյ, օյ։

Հանդի հովեր ու շողեր,
Լուսնըկի լուսը, արտերու բուսը, օյ, օյ,
Տարեք սիրո բարևներ,
Յարըս սալդատ է, քնիկը դուսը, օյ, օյ։

Արտերը՝ անտեր, արևը՝ պաղ,
Լուսնըկի լուսը, արտերու բուսը, օյ, օյ,
Կոտրած սրտով կանչեմ խաղ,
Յարըս սալդատ է, քնիկը դուսը, օյ, օյ։

124. ԿԱՆՉԵ ԿՈՒՆԿ, ԿԱՆՉԵ...

Կանչէ կռունկ, կանչէ՝ քանի գարուն է,
Սալդատ տղոց սիրտը գունդ-գունդ արուն է։

Ախպերս զինվոր է, հեռու երկիր է,
Ղարիբ հաց ու ջուրը աղու, լեղի է։

Ախ, իմ յարն էլ սալդատ է, ղարիբ ղուշ է,
Երկրի փուշն էլ ղարիբ մարդուն անուշ է։

Սարեր, ճամփա տվեք, սալդատ յարըս գա,
Աշխարքն էնոր կուտամ, վեվ աչքալուս տա։

Ծովեր, ճամփա տվեք, իմ սիրտն էլ ծով է,
Գյամի դարձեք ծովի ու սարի հովեր։

Թող յարըս տուն գա, որ ճամփով գուզէ,
Ես էդ ճամփին դառնամ ճրագներ լուսէ։

Ամլիկ գառը մատաղ կէնեմ իմ յարին,
Վարդհեր վանքը ես ուխտ կերթամ էս տարի։

Կանչէ կռունկ, կանչէ՝ քանի գարուն է,
Սալդատ տղոց սիրտը գունդ-գունդ արուն է։

125. ԿԱՔԱՎԸ ՔԱՐԻՆ...

Կաքավը քարին, կանչում է յարին, օյ, օյ,
Իմ փնջած վարդը քցեմ վագոնը,
Տարէք իմ յարին, օյ, օյ։

Պոեզ, ճամփեդ դուրան է,
Կաքավը քարին, կանչում է յարին, օյ, օյ։
Անյար սիրտը վերան է,
Իմ փնջած վարդը քցեմ վագոնը,
Տարեք իմ յարին, օյ, օյ։

Դոլբանդլու մեծ գեղեն եմ,
Կաքավը քարին, կանչում է յարին, օյ, օյ,
Աղնվական ցեղեն եմ,

Իմ փնջած վարդը քցեմ վագոնը,
Տարեք իմ յարին, օյ, օյ։

Մատըս խըրել է մատը,
Կաքավը քարին, կանչում է յարին, օյ, օյ։
Տեսէք՝ չեկա՞վ հարսնատը,

Իմ փնջած վարդը քցեմ վագոնը,
Տարեք իմ յարին, օյ, օյ։

Ղարսա բերդը ամուր է,
Կաքավը քարին, կանչում է յարին, օյ, օյ,
Բերդի բոլորը ջուր է,

Իմ վինջած վարդը բցեմ վազոնը,
Տարեք իմ յարին, օյ, օյ։

126. ՍԱԼԴԱԹ ԱԽՊՈՐՍ ՆԱՄԱԿը

Սալդատ ախպորըս նամակը,
Կարդամ, իմանամ քաղաքը...

Ախպերն ու յարը անուշ են,
Սալդատ ախպորս նամակը,
Ղարիբ մարդը անթև դուշ է,
Կարդամ իմանամ քաղաքը։

Գոմի մեջը կապինք սաքու,
Սալդատ ախպորըս նամակը,
Ախպորըս տարել են Բաքու,
Կարդամ իմանամ քաղաքը։

Էրթամ քաշեմ կաթի սերը,
Սալդատ ախպորըս նամակը,
Որ գա ուտէ իմ ախպերը,
Կարդամ իմանամ քաղաքը։

Ախպորըս մէ նամակ գրեմ,
Սալդատ ախպորըս նամակը,
Մէջը կարոտ, բարև դնեմ,
Որ Հասնի Բաքու քաղաքը։

Ծովեր, հովեր ճամփա բացեք,
Սալդատ ախպորս նամակին,
Սարեր, դուք էլ լավ ցածրացեք,
Որ Հասնի Բաքու քաղաքը։

127. ՍԱԼԴԱԹ ԱԽՊՈՐՍ ՆԱՄԱԿը

Սալդաթ ախպորըս նամակը,
Կարդամ, իմանամ քաղաքը,
Ա՜խ, եբ գուկա իրեն վադեն,
Սալդըտները Բասեն շատ են։

Մեր հանդերը դարձան դարտակ,
Սալդատ ախպորըս նամակը,
Ինչ հոտաղ կա, ոնչ էլ մաճկալ,
Կարդամ, իմանամ քաղաքը։

Մորս աչքը խավրեց լալէն,
Սալդատ ախպորըս նամակը,
Կորցրել է ազիզ բալեն,
Կարդամ, իմանամ քաղաքը։

Վեվ օր էղավ կռվի սապաղ,
Սալդատ ախպորըս նամակը,
Միսը էրվի դառնա քյաբաբ,
Կարդամ, իմանամ քաղաքը։

Տիրամէր դու խղճա մորս,
Սալդատ ախպորըս նամակը,
Ուրախ դարձու մեր սև օրը,
Կարդամ, իմանամ քաղաքը և այլն։

ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳԵՐ

128. ԴԸՆԱՄ ՈՒ ԳՆԱՄ Կ'ԸՍԵՄ

Գնամ ու գնամ կ'ըսեմ,
Ես կերթամ, բարո՞վ մնացեք։
Ծաղիկ մ' ամանեթ կուտամ,
Վարդերմեն մեջը պահեցեք.
Ջուր ուզե՝ գինի տվեք,
Աղվորին խաթրը մ' ավըրեք։
Ամենքդ հավասար նստեք,
Իմ տեղըս ալ խոռ պահեցեք.
Ամենուդ խմածըն անուշ,
Իմը՝ իմ տեղը վաթեցեք։

129. ՋԻՄ ՅԱՐՆ ԷՄԱՆԵԹ ԿՈՒ ՏԱՄ

— Ջիմ յարն էմանեթ կու տամ,
Ի վարդի՛ն մեջըն պահեցեք,

Թերթամ ու շուտով դառնամ,
Ջամանաթս ի տեր հասուցեք.
Թերթամ, խարիսուկ մեռնեմ,
Վարդըն ձեզ, ըղտեր հիշեցեք։

130. ԷԼԵՐ ԵՄ, ԿԵՐԹԱՄ ԿԸ...

Էլեր եմ, կերթամ կը, վե՞վ գիտի հալս,
Մեմ ա ասուլած գիտե դառնալս ու գալս,
Մարիկ, ձեռքս պագնեմ, յար, մնաս բարով,
Արզահիլ կամոքս պաքմ տուր սիրով։

131. ԷՐԹԱԼՈՒ ԵՄ...

Երթալու եմ, պիտի ճանապարհ գընամ,
Արի քեզ տեսնեմ, կարոտ չմնամ,
Խանում եվա ջան, դու մնացիր բարով,
Ես կերթամ լալով, ողբալով։

132. ՅԱԾՑԻ ԼԵՌՆԵՐ...

Յածցի՛ լեռներ, ցածցի՛ քարեր վրայետ անցնիմ,
Նազլու յարս խուրպեթ կերթա, հոբվեն հասնիմ,
Աճապ օր ալ տիլլի՞ ես յարս տեսնիմ։

133. ԱԼ ՄԱՀՐԸՄԱՍ...

Ալ մահրըմաս լվացեր եմ,
Դարիպ էրկիր գընացեր եմ.
Խապար տարեք իմ յարիս,
Դարիպ անտեր մընացեր եմ։

134. ԵՍ ԾԱՐԱՎ ԵՄ...

Ես ծարավ եմ, ջուր չկա,
Սարերին աղբյուր չըկա.
Վախենամ՝ դարիբ մեռնեմ,
Վըրես մեր ու քուր չըգա։

135. ԵՍ ՂԱՐԻԲ ԵՄ...

Ես ղարիբ եմ, տուն չունեմ,
Գիշերները քուն չունեմ.
Սաղ տարին ինձ ձըմեռ ա,
Մեկ օր ինձ գարուն չունեմ։

136. ԵՍ ՇԵՖԹԱԼՈՒԻ ՄՈՐՃ ՄԷԻ

Ես շեֆթալուի մորճ մէի,
Ապառաժ քարը բուանէի.
Եկին քաշեցին տարին,
Ջիս այլոց այգին անկեցին,
Շեքրեն ալ շերպեթ արին,
Ու բերին ինձ ջրեցին.
Եկեք դիս տեղըս տարեք
Ու ձնան ջրով ջրեցեք։

137. ՄԱՐԴ ՈՐ ՄԱՐԴՈՒ ԿԱՆԻԾԻ

Մարդ որ մարդու կանիծի,
Թող ասի՝ կարիբանաս.
Սար քե սնար էլնի,
Ավազի մեջ թուլանաս։

138. ԾԱՌԵՐ, ԴՈՒՔ ԾԻՐԱՆ ՄԻՔ ՏԱ

Ծառեր, դուք ծիրան մի՛ք տա,
Ճղներ՝ դուք էլ բար մի՛ք տա,
Ես ղարիբ եմ, դռնախ եմ,
Դարդերս իրար մի՛ք տա։

139. ԿԱՆՉԵ՞, ԿՈՒՆԿ, ԿԱՆՉԵ՞

Կանչե՞, կռունկ, կանչե՞,
Տակըդ կանաչ է.
Աշխարհքին արեգակը
Ինձի դուման է։

Կանչե՛, կռունկ, կանչե՛,
Ձենըդ բարակ է,
Քու անուշ խաղըդ
Ինձի դարման է։

Կանչե՛, կըռունկ, կանչե՛,
Քանի գարուն է,
Ղարիբներուն սիրտը,
Գունդ-գունդ արուն է։

Կռունկ, ո՞ւրտեղից կուգաս,—
Բարձր լեռներեն.
Կռունկ, եղած տեղըդ
Ջայիր չիման է։

140. ԿՈՒՆԿ ՅԻՒՏ ԿԸ ԿԵԱՍ...

Կռունկ, յի՞ւսա կը կեաս, Բաղդատ չօլե՞ն,
Խաբրիկ ըմ չունի՞ս իմ խորեն, մորէն,
— Քիւ խերն ի մեռի, քիւ մերն ի շիվարի,
Առիր ուր ձէթիկ ձեաքաիր ձըւարիր։

Կռո՛ւնկ, աստված կ՝սիրես,
Թխտիկ ըմ կիրիմ, տաւ քեզի ամանաթ։
Տանես իմ խերանական աշխարք,
Ասես՝ քիւ մեկ տղեն գեռ Հնդըստան։

141. ՂԱՐԻԲ ԵՄ...

Ղարիբ եմ, տեղըս քար ա,
Ղարիբություն դըժվար ա.
Աստված սիրեք, բան չասեք,
Ղարիբն էս ի՞նչ անճար ա։

142. ԷՍ ԳԻՇԵՐ

Էս գիշեր, աշնան գիշեր,
Շողն իջներ զգետին նըշխեր,
Սարերու նախշուն հավքեր,

Անխաղավաճ քունն էն մտեր։
— Ես մենակ, ես բնավեր,
Անտուն, անտեղ, անընկեր,
Ըմեն քու (հայրենիք) հալ ու դարդեր,
Սիրաս ընկեր կրակ դառեր։

143. ՍԻՐՏՍ ՆՄԱՆ ԷՐ...

Սիրտըս նըման էր էն փըլած տներ,—
Կոտրեր գերաններ, խախտեր էր սրներ.
Բուն պիտի դընեն մէջ վայրի հաւքեր.
Երթամ ձի թալեմ էն գարնան գետեր.
Ընդիմ ձրկներու ձագերացըն էր։
Ա՜յ տօ լաճ տընաւեր։

Սև ծով մ'եմ տեսե, սիպտակն էր բոլոր.
Ալին կըզարներ, չէր խաոնի հիրոր։
Ո՞րն էր տեսե մեկ ծովն երկու թավոր,—
Ղարիբի սիրտն է պըզտոր ու մոլոր։
Աստված սիրեք՝ մի ընդիք սըրտիկ սևավոր
Ա՜յ, տօ լաճ տընաւեր։

144. ԱՄՊԵՐ Է ԳԱՐՈՒՆ ԿՈՒ ԳԱ

Ամպեր է գարուն կու գա,
Սև սրտես սրին կուգա.
Գիտեմ քի յարս տունն է,
Ջանը դուրպեվեն կու գա։
Ախ ընեմ սրին կու գա,
Սիրտս սև քարին կու գա,
Ես հոս անտեր տի մեռնիմ,
Վե՞վ գիտե յարս եր կու գա։

145. ԱՆ ԲԱՐՁՐ ՍԱՐԻՆ...

Ան բարձր սարին վրա կաքվուկ մե նստեր,
Կուտ կուտե, սրտունք կու թափե։
— Կաքվուկ, դուն ինչո՞ւ կուլաս,
Թողլ, էրթա զարիպին տերը լա։

— Դուռը չեմ գիտեր Ղարիպիս։
— Էկուր նշանով ցույց տամ։
— Քու ղարիպը վուրտեղ կը կենա։
— Դռնումն է բոյախանա,
Նուշ առե, ամրակ կը ծախե,
Ամենուն արժան, արժան,
Ինձ տեսեր սուղ կը ծախե,
Թուխ աչքեր կիշևոք ըրեր,
Ունքերով վեր կը քաշե։

146. ԲԱՄԲԱԿ ԵՄ ՅԱՆԵՐ...

Բամբակ եմ ցաներ խարբերդի օվան.
Բյուլբյուլ մի փլցուներ ծագերուս յուվան։
Տուն էկո, տուն էկո, սիրածս տուն էկո.
Արմազան պետքը չէ, արևդ առ էկո։
Գոգնոցս ներկեր եմ կենճու տարոնով.
Սրտիկս լեցվեր է գունդ-գունդ արյունով.
Սիրած, աղբյուր շինե ես գամ ջուր խըմեմ.
Ընքվերդ սև դար արա, ես վրան թառիմ։
Դուն էկո, դուն էկո, սիրածս, դուն էկո,
Հաց ու գինի ունինք, արևդ առ էկո։
Ձորերուն ջուրերն են տաքցեր,
Վախեմ սիրածըս մեջն է լողկըցեր,
Աղբար, հերիք պառկես, օրն ու արևն է անցեր,
Մորն ու մանիշակի հոտ սարն ու դաշտ լեցեր,
Տուն դարձիր. գիս ջուրը մի նետեր,
Գայլու կեր մ'ըներ, տուն դարձիր։

147. ԲԱՐՁՐ ՍԱՐԵՐՈՒ ՀՈՎԵՐ

Բարձրը սարերու հովեր
Վար իջեր դռնակն է ծեծեր.
Ու նորուկ, չահելուկ հարսնուկ՝
Որ իջեր, դռնակն է բացեր.
Տեսեր, որ իր մարդը չէ,
Մալուլեր ու ետ է դարձել։
Կեսրակը հարցմունք արեր.
«Հարսնո՛ւկ, քու ո՞ր տեղդ է ցավեր»։

— Մայրիկ, քու որդուդ սիրուն
Իմ ամեն սեղիկս է ցավեր։
«Մի՛ լար, չահելուկ հարսնուկ,
Գիր կանեմ, որդիս կու բերեմ»։
— Գիր անես, որդիդ բերես,
Աստծու լուսուն տիրանաս.
Գիր չանես ու չի բերես,
Կանիծեմ, որ քար կու դառնաս։

148. ԲՂԽՏՈՐ ՋՈՒՐ ԿՈՒԳԵՐ...

Բղխտոր չուր կուգեր սարերաց թևեն,
Արնոտ հոտ կուգեր գետերաց մոտեն.
Յարիկս ճամփեցի էրկեն ճամփերեն,
Կարոտ մընացի յուր անուշ հոտեն։
Ա՜խ, ես չըխերա իմ Ասլու մոտեն,
Ասլիկ ձիկ մոռցավ, գընաց մեր գեղեն.
Ես էլ չըխերայ կարիբիս մօտեն,
Ափսոս որ խաբրիկ մ՝չեկավ ինորմեն։

Ավեր Ըստամբոլ, քամբախ իսքուտար,
Կարիբիս մոտեն չեկավ մեկ խաբար.
Ոչ մեկ կըտոր թուղթ, ոչ մեկ կոր պըլիկ,
Չեկավ ուր մոտից, մոռացեր է ձիկ։

149. ԽԵՐԻԿՍ ԷՐ ՀՈՎԻՎ...

Խերիկս էր Հովիվ, աղբերս գառնարած,
Կարիբ եմ, ճամբեն իտև սարերաց,
Իտև սարերաց, իտև քարերաց,
Կարիբիս մեռնեմ, ուր ճամբըներաց։

150. ԵՐԹԱՄ, ԹՈՒԽ ԱՄՊԻԿ ԼԻՆԻՄ

— Երթամ, թուխ ամպիկ լինիմ,
Գամ, ցաթեմ երդիքդ ի վրա.
Յածնամ ու ցողիկ մի տամ
Քու ճերմակ կրծոցդ ի վրա.
Արթնանաս ու վեր իյնիս.

«Աս ի՞նչ ցող որ չիս կու ցողա...
Ես անտեղ խարիսպ մ՚ունիմ,
Ան կուլա ու հոս կու ցողա։
Ցողա՜ թուխ ամպիկ, ցողա՜,
Ցողալուն ատենն է հիմա»։

151. ԵՐԿԻՆՔ ՈՐՈՏԱ՞Յ...

— Երկինք որոտա՜յ, դողաց,
Աստղն իսկի ի տեղն չմնաց.
Իմ յար, երբ չիսնն ելար,
Բյուր հազար ծաղկունք ի հարաց.
Գրեմ ես բարակ թղթիկ,
Ուղարկեմ շատ պատգամ ի լաց.
«Որտեղ ես՝ բարով կացիր.
Ձքո սիրած չարըդ չմոռանաս»։

152. ԸՆԿԱ ԹԱՂԵ ԹԱՂ...

Ընկա թաղն թաղ, ես թուղթ ճարեցի,
Շողշողուն մատներս դալամ արեցի,
Աչքիս ըրտասունքը թանաք արեցի,
Սրտիս դարդերը մեջը գրեցի.

Գրեցի, ասի հալա իմացիր,
Ես կարըմ չեմ, էլ դու դիմացիր.
Իմ կողմանե դու խիալով կացիր,
Ես քիչ գրեցի, դու շատ իմացիր։

Գրեցի, ասի ամենին տեր կա,
Էդ քու սրտումը էդ ի՞նչ թավուր սեր կա,
Ինձ համա ոնչ լիս, ոնչ էլ քշեր կա,
Ես խորոտ հղնիկ, ինձի տեր չկա։

Ասի ամեն հավք իր բունը մտավ,
Ամենն էլ իրան հնդերը դդավ,
Մենակ ես եմ, ա՜խ, ես մոլորված,
Ես մառմառ քար եմ, տեղիս գլորած։

153. ԼԱԼՎԱՐԱ ՋՈՒՐԸ ՍԱՌՆ Ա

Լալվարա ջուրը սառն ա,
Օտարությունը դառն ա.
Տանըդ դարձիր, իմ աղբեր,
Բոլորքս պըստիկ գառն ա։

154. ԼՈՒՍԻԿ ՄԻ ՓՐԹԱՎ ՔԱՐԵՆ

Լուսիկ մի փրթած քարեն,
Կեսն է խոռ ու կեսն է բոլոր.
Քիչ-քիչ ալ ի վեր եկավ,
Բոլորեր զերդ նոր թագավոր։
— Լուսի՛կ, դուն լուսով կենաս,
Թե կենաս պահիկ մը հուտաս։
Երկու խոսք դանգատ ունիմ,
Այն դանգատիմ, դուն ալվա գնաս։
Գնա՛, խարիսիս ըսե՝
Չի կենայ, թող ելլե ու գա։
— Խոսկունքդ ի գլխուս վրա.
Չի գիտեմ դուռը խարիսիդ։
— Եկուր նշանով ցույց տամ.
Բարձրը պատ ու ծառ շքերուն.
Նատեր է ծառին շքին,
Խատ ու մատ խատեհն ի ափին,
«Խատէհն որ ափիդ ունիս,
Կամ խմե՛, կամ տուր խմողին.
Ան սազդ որ կեօքսիդ ունիս,
Կամ չալե՛, կամ տուր չալողին։

155. ԾԱՐԱՎԵԼ ԵՄ...

Ծարավել եմ, ջուր բերեք,
Ըսպահանու հուն բերեք,
Կըմեռնիմ էս զարիբ տեղը,
Զարիբ զուշա տուն բերեք։

156. ԿԱՆԳՆԵՄ ՔԱՐԻՆ...

Կանգնեմ քարին ու սարին,
Դիր գըրեմ ղարիբ յարին.
Արցունքով գըրեմ, կանչեմ,
Աղու կըարի սենց տարին։

157. ԿԵՐԱԾՍ ԿՈԽԻ ՉԻ ԳՆՈՒՄ

Մի օր ուրախ չեմ մնում,
Քանի յարս ղարիպն ա,
Դիշերները չեմ քնում։

158. ՋՈՒՐՆ Ի ՓԸՌԹԵ...

Ջուրն ի փըռթե վերին սարեն,
Կուգա թափի մարմար քարեն.
Ձեռք մեք իտա սըրտիս յարեն,
Յարս է դարձե ուր կըրակեն։

159. ՅԱՐՍ ԳՆԱՑԵՐ ԿԱՐԻԲՈՒԹԵՆ

Յարս գնացեր կարիբութեն,
Ձիկ որ թողնց չար գերութեն,
Առանց յարոջ իմ հալն ի՞նչ ի,
Ամա՞ն յարիկ, շուտ ետ դարձի։

160. ԿԱՐԻԲՈՒԹԵ՛Ն, ՉԱՐ ԳԵՐՈՒԹԵՆ

Կարիբութե՛ն, չար գերութեն,
Անունը չելներ, ինքը չելներ։
Թո՛ղ իմ յար մոտ ձիկ մըներ,
Որ գամ գեր ձիկ տեսներ։

161. ԻՐԿՈՒ ԱՄԱՌ...

Իրկու ամառ, իրեք ձըմեռ
Հերիք ձիկ անես կիսամեռ։

Գիշեր-ցերեկ քո կարոտով,
Օր չեմ տեսնեմ ցամաք աչքով։

162. ԿԱՐԻԲԻ ՏԻՐՈՋ...

Կարիբի տիրոջ հացն աղու է,
Կարիբներուց կյանք մահու է,
Իրենց օրերն դարդամահով,
Մընան իրարուց կարոտով։

163. ԳԱՐՈՒՆ ԷԿԱՎ...

Գարուն էկավ, ամառ գընաց,
Աչքըս մընաց ճամբըներաց.
Աստուածամոր խընդիր ունեմ,
Դուռ մի բանայ կարիբներաց։

164. ՔԵԶ ԿՈՂՈՐԿԵՄ...

Քեզ կողորկեմ հեռո՜ւ-հեռո՜ւ,
Թող իմանա աշխարհ ալամ,
Թև շատ մընաս, թև քիչ մընաս,
Ա՜խ, կարիբ յա՜ր, սիրուդ կուլամ։

165. ՍԵՎ Է ԱՉՔԵՐԴ, ԿՈՒՆԿ

Սև է աչքերդ, կուռնկ,
Ճերմակ է սիրտդ, կուռնկ.
Ջուխտ գացիր, մենակ կուգաս,
Ո՞ւր է ընկերդ, կուռնկ։

166. ՀԻՎԱՆԴ ԵՄ...

Հիվանդ եմ, հալիկ չունեմ,
Խարիբ եմ, մայրիկ չունեմ,
Ընկեր եմ ծովուց օրթան,
Ելլալու ճարիկ չունեմ։

167. ԵՍ ՂԱՐԻԲ ԵՄ...

Ես ղարիբ եմ, տուն չունեմ,
Գիշերնելը քուն չունեմ,
Սաղ տարին ինձ ձմեռ ա,
Մեկ օր ինձ գարուն չունեմ։

168. ԿԱՆՉԵՄ՝ ՋԱՆ, ԱՐԵ...

Կանչեմ՝ ջան արե՛, սարիր լացուցեմ,
Կանչեմ, դոսթ արե՛, քարիր լացուցեմ...
Շատ կարիր կուրբաթ ճամբեն դարձուցեմ,
Իմ կարիբ տհաննեմ, գերեզման մտնեմ։

169. Ա՛Յ ՆԱՆԻ...

Ա՛յ նանի, քու մերութեն,
Ինձ տըվիր զարիբութեն.
Ղարիբութենը փուշ է,
Գեղի մեջը անուշ է։

170. ԿԱՆՉԵ՛, ԿՈՒՆԿ...

Կանչե՛, կռունկ, կանչե՛ բանձր սարերեն,
Գնացիր եմ զարիբ երկիր, վախեմ մեռնելեն,
Մի՛ լա, մերիկ, մի՛ լա, ես ղարիբ տեղ եմ,
Վաթանիս հողին չըրին ես կարոտցեր եմ։

171. ԿԸԿԱՂՆԵՄ ՍՈՆԱ ՔԱՐԻՆ

Կըկաղնեմ Սոնա քարին,
Կիյեշեմ բարձր սարին,
Ա՛յ անխիղճ խաղայիններ,
Ուզարկեք Թիլլու յարին։

172. ՓՉԵՑԵՔ ՀՈՎԵՐ...

Փչեցե՛ք, հովեր, սարեր ձո՛ւն բերեք,
Իմ ղարիբ յարս առեք տո՛ւն բերեք.

Հինց արևք, որ էս իրիգուն բերեք,
Անքուն աչքերիս քաղցր քուն բերեք։

173. ԾԱՌԻՍ ԾԵՐԸ ԾԱՂԿԵԼ Ա

Ծառիս ծերը ծաղկել ա,
Մազիս ծերը թաղկել ա.
Վախում եմ զարիբ էթամ,
Զարիբության հաղթել ա։

174. ԳԻՇԵՐ ԽԱԼԴԱ...

Գիշեր խալդա, դուս եկա,
Լուսնակ անուշ կըցոլար։
— Լուսնակ, դուրբան, ո՞ւր կերթաս։
— Կերթամ վըր Հըլպը սարուն։
— Կերթաս վըր Հըլպը սարուն,
Խեր խաբրիկ տանես յարուն։

175. ԿԱՆԳՆԵԼ ԵՍ...

Կանգնել ես բախա-բախա,
Սև չուխա, կարմիր յախա,
Քանի դու հեռու մնաս,
Իմ կյանքս ախ ու վախ ա։

176. ԵՍ ԾԱՐԱՎ ԵՄ...

Ես ծարավ եմ, ջուր չկա,
Սարերին աղբյուր չկա.
Վախենամ՝ զարիբ մեռնեմ,
Վըրես մեր ու քուր չըգա։

177. ԼՈՒՍՆԱԿ, ԴՈՒ ԿԱՄԱՑ ԳՆԱ

Լուսնակ, դու կամաց գընա,
Սարի եհանց գընա.
Հեռու տեղ մի յար ունեմ,
Կանգ տուր ու ցածանց գընա։

178. ԿԱՅՆԵԼ ԵՄ...

Կայնել եմ, գալ չեմ կարող.
Լըցվել եմ, լալ չեմ կարող.
Քանի որ գընացել ես,
Անունդ տալ չեմ կարող։

179. ՂԱՐԻԲ ՏԵՂԸ...

Ղարիբ տեղը քարոտ ա,
Ղարիբը անճարոտ ա.
Յարիս ասի՝ դուս արի,
Ասավ՝ սիրտս յարոտ ա։

180. ՂԱՐԻԲ ԵՄ...

Ղարիբ եմ, տեղըս քար ա,
Ղարիբությյուն գըժվար ա.
Աստված սիրեք բան չասեք,
Ղարիբն էս ի՞նչ անճար ա։

181. ԱԽ ԸՍԵՄ...

Ախ ըսեմ, արին կուգա,
Սիրտըս սև քարին կուգա,
Վախիմ թե խարիբ մնռնեմ,
Ոնչ քոր, ոնչ ախպեր կուգա։

182. ՍՏԱՄԲՈԼ ՇԻՆԵՐ ԵՆ...

Ստամբոլ շիներ են վեր Սև ծովերաց,
Ճամբըխներ բռներ ի վեր կարիբներաց.
Կարիբս եմ ճամփեն իտև սարերաց,
Կարիբիս մնռնեմ, ուր ճամփըներաց.
Իմ տղա ոմբրիկ ձիկ էլ քյուլ արաց,
Անգին ի ես էլ, ձի սարխոշ արաց.
Բարով շուտ դառնաս վեր քո տան տեղաց։

183. ՊԱՆԴՈՒԽՏ ՄՇԵՑՈՒ ԵՐԳԸ

Եոթն օր, եոթ գիշեր
Շախկամնի գոտիս թոռմշեր,
Եար մզկի զբոնեն դուրս չելնա
Փշուր մի սիրտ մըզիկ խովնա—
Վայլե, վայլե, վայլե, վայլե...

Երթամ Ստամբոլ,
Դատիմ փարա բոլ,
Իմ եարի խամար
Առնիմ ջուխտ ըմ սոլ,
Արի՛, եար, արի՛,
Խոով մի՛ կենա,
Աստուրիս բան՝
Եար, մզիկ չի մնա։

Առնիմ զտամբուրեն
Ելնամ քու մամու երթիս,
Ջիմ կաքվու անուշ ձեննի լսիս,
Եա՛ր, անուշ քնեդի զարթիս։
Վայլե, վայլե, վայլե, վայլե...

Կայնել ես հիգին
Խաղող կու քաղես,
Շամամ ծծերով՝,
Շաքար կու մաղես,
Ալմաստ բիշագով՝
Ջիմ սիրտ կու դաղես
Արի՛, եար, արի՛
Խոով մի կենա,
Աստուրիս բան՝
Եա՛ր, մըզիկ չի մնա։

Վայ սանխեր կիվկիվ,
Դու գացիր ի Մուշ բարով,
Էլ չըս հիգա հաղար տարով,
Խարս պարկե տղա բերե,

Առջևնիկ լև գուման կու վարև,
Վայլև, վայլև, վայլև, վայլև...

Քամբախ Բուլանըխ,
Ի՞նչ անուշ գեղ է,
Էրկուս մէ շապիկ՝
Փողպատնի նեղ է.
Եարիս մի պագնի
Սրտիս ի դեղ է.
Ա՛րի՛, եար, արի՛
Խռով մի՛ կեար,
Աստուրիս բան՝
Ես՛ր, մըդիկ չի մնա։

Մկլորսի քամբախ երկրին
Խաբրիկ մե էկեր—
Թ՛ Տաճիկ լցուեր գեղ,
Ջըմմեն թալներ ու տարեր,
Վայլև, վայլև, վայլև, վայլև...

Խայե՛ր, վա՛խ, խայե՛ր
Շիվար եք մացեր,
Ջիմնա՞ք մըր էրկրի
Լացերն ու թացեր։
Ա՛րի՛, եար, արի՛
Խռով մի կենար,
Աստուրիս բան՝
Եար, մըդիկ չի մնար։

184. ԱԽՊԵՐՍ ՂԱՐԻԲ Է...

Ախպերս ղարիբ է, ղարիբ երկիր է,
Ղարիբ հաց ու ջուրը, լեղի ու կիր է։
Իմ յարը ղարիբ է, մի ղարիբ ղուշ է,
Երկրի փուշն էլ ղարիբ մարդուն անուշ է։

Սարեր ճամփա տվեք, ղարիբ յարս գա,
Աշխարն էնոր կուտամ, վեվ աչքըլուս տա։

Ծովեր ճամփա տվեք, իմ սիրան էլ ծով է,
Գյամի դարձեք անխիղճ, երկնքի հովեր։

Յարս թող տուն գա, որ ճամփով գուզե,
Ես ճամփեքին դառնամ ճրագներ լուսե։

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՎԻՊԵՐԳԵՐ

185. ՇՈՐՈՐԱ՛, ՍԱԼԱԹ, ՇՈՐՈՐԱ՛

Շորորա, Սալաթ, շորորա,
Նավակն Արշակին կորորա։

Արշակն եկավ, ծովը պընաց,
Խեղճ Սալաթին ցավեր մընաց,
Խաբար տարեք խեղճ Թամամին
Աբրեի տուն ավեր մընաց։

Շորորա՛, Սալաթ, շորորա՛,
Նավակն Արշակին կորորա։

Քամին ելավ երան երան,
Նավը զարկավ ծովու բերան,
Խաբար տարեք իմ մայրիկին,
Մեր տուն ու տեղ մընաց վերան։

Վերև նայեմ.—կապուտ ամպ ա,
Ներքև նայեմ.—ջուր ու շամբ ա,
Վերև Աստուած աղաչեցի,
Ներքև չեղավ ինձի ճամբա։

Երկինք ամպեց, քամին առավ,
Ծովի երես ջուրը սառավ,
Թիակ զարկի, ինչ որ արի,
Նավը տեղեն հետ չը դառավ։

Ես Արշակն եմ Գուլաբեցի,
Գիշեր ցերեկ ծովին գացի

Խաբար տարեք իմ Սալաթին,
Հընար չեղավ, նըստայ լացի։

Աստծուց եկաւ, էս ինչ բան ա,
Ես էս ցաւին չեմ դիմանայ.
Խաբար տարեք իմ Նիկոյին,
Էս նեղ տեղից ինձի հանայ։

Բոք ու դուման ա ձորերըս,
Սև ա դառել իմ օրերըս.
Ափսոս ինչպես կտրիճ տըղեն,
Բողչին մընաց իմ շորերըս։

186. ՇՈՐՈՐ

Ես Արշակն եմ Կոլավերցի,
Հինգ օր գացի Կոլեր մանցի.

Շորորա՛, Սալամ, շորորա՛,
Տարտերս շատ են վիս կորորա։

Կոլի բոլոր մանտըր ուռեր,
Արշակի մեր ճիկըր ծուռ էր.
Վերվըս իշենք բարձր սար-էր.
Ներքվս իշենք մարմար քարեր.
Արշակն իր մեր մեկ ու ճար էր։

Շորորա՛, Սալամ, շորորա՛,
Լաթեր Արշակին կ'որորա։

Քամին եկաւ երան երան,
Գնաց հասաւ Մշու բերան.
Մշու հաւքեր թևավորվան.
Արշակենց տուն սևավորվան։

Շորորա՛, Սալամ, շորորա՛,
Լաթեր Արշակին կորորա։

Ես Արշակն եմ պալայ կապով.

Ջենք խեղդուն տեկմե հալով,
Ես խեղդուայ մեկ ձուկ ապով.

Շորորա՛, Սալամ, շորորա՛,
Լաթեր Արշակին կորորա։

Կոլի բոլոր ուտա մատա,
Գացեք կանչեք վերեց Թող գա,
Հոր մը բանայ, զԱրշակ հանայ։

Շորորա՛, Սալամ, շորորա՛,
Լաթեր Արշակին կորորա։

Ես Արշակն եմ բեռ մը բարով,
Դուռ ու դրկից մանցեք բարով,
Էլ չեք տեսնայ հազար տարով։

Շորորա՛, Սալամ, շորորա՛,
Լաթեր Արշակին կորորա։

Կոլի բոլոր մանտր աւազ,
Արշակի հոր խելքն էր պակաս,

Շորորա՛, Սալամ, շորորա՛,
Տարտերս շատ են գիս կորորա։

187. Ի ՆԱՎԱԿՈՏԵԱՆ Ի ԾՈՎՈՒՆ ՎԱՆԱ

Նավով Աղթամարա ելանք,
Տեխ Ավանայ ճանպարհ ինկանք,
Ոստանա գեմ երբ մենք հասանք
Սև ավար սև արեվ տեսանք։

Թուխ ամպեր երկինք պատեցին,
Աստղ լուսնակ մեկտեղ կորսուցին,
Պինդ պինդ քամիներ փըչեցին,
Ափ ցամաք աչքես խըլեցին։

Գետաց երկինք, գետաց գետին,
Խռովեցավ ջուր կապուտ ծովին,
Ձորս դևիանն կրակտաց երկին,
Սեվ սարսափ իջավ իմ սըրտին։

Երկինք կևա՝ գետին չերևվա,
Գետին կևա՝ երկինք չերևվա,
Սարի պես ղնդըղներ կյուգա,
Խոր անդունդ առջև կըբանա։

Ծով, դյու քոն Ասատուած կխսիրես,
Խեղճ անճարիս դուխ մի անես,
Ձիկ քաղցր արևվես չի հանես,
Քարեսիրտ մահին չի մատնես։

Աման ծովեր, ահեղ ծովեր,
Ձիկ մի տանիք պաղի հովեր,
Ձեզ կաղաչեն իմ արտասունքներ.
Ու սրտիս հազար բյուր ցավեր։

Ծով պատանն ըսկի ողորմ չունի.
Պլած սըրտիս ձենիկ չըլսի,
Արուն երակներես կըպաղի
Սեվ դիշեր աչքերըս կիջնի։

Գնացեք ասեք իմ ծնողին,
Թող նըստի լա իր սև որդին.
Թե Հանես կուր եղավ ծովին
Թռավ դընաց արև կըտըրճին։

188. ԳՈՒԼԱԲԵՑԻ Ա.ՐՇԱԿԻ ԵՐԳԸ

Արշակն եկավ ծովը գնաց,
Խեղճ Սալաթին ցավեր մնաց.
Խաբար տարեք խեղճ Թամամին,
Արբեչի տուն ավեր մնաց։

Քամին եկավ երան երան,
Նավը գարկավ ծովի բերան.

Խաբար տարեք իմ մայրիկին,
Մեր տուն ու տեղ մնաց վերան։

Երկինքն ամպեց, քամին առավ,
Ծովի երես ջուրը սառավ,
Թիակ գարկի, ինչ որ արի,
Նավը տեղեն ետ չդառավ։

Ես Արշակն եմ Գուլաբեցի,
Գիշեր ցերեկ ծովին կացի.
Խաբար տարեք իմ Սալաթին,
Հնար չեղավ, նստա լացի։

189. ԻՎՋԻԼԱՐՑԻ ՍԱԹՈՅԻ ԵՐԳԸ

Ես Սաթոն եմ Իվջիլարցի՝
Ոչ բարին բոստան գնացի.
Ջահել ջանս դուրս դրեցի,
Քոռանար Սաթոյ մայրիկը,
Ջուլում էր Սաթոյ հայրիկին։

Գյունաբախանը տալդա յա,
Բոստան պահելը սալդա յա.
Ռովելը (ատրճանակ) «Ամերիկա» յա...
Քոռանա Սաթոյ մայրիկը,
Ջուլում էր Սաթոյ հայրիկին։

Կրակն ընկավ Ղալդրմեքը,
Վաղոն ոսը քցեց թեքը.
Փախավ մտավ Ագոի շեքը
Քոռանար Սաթոյ մայրիկը,
Ջուլում էր Սաթոյ հայրիկին։

Ղալդրմիցը բերին տունը,
Ջախկալ Օլգան ընկավ կուռը.
Նկարը քաշեցին ծուռը,
Քոռանար Սաթոյ մայրիկը,
Ջուլում էր Սաթոյ հայրիկին։

Նկարչին նկարը քաշեց,
Գյուղուկեն սիրտ ու թոք խաշեց,
Դարդը իր մոր սիրտը մաշեց.
Քոռանար Սաթոյ մայրիկը,
Ջուլում էր Սաթոյ հայրիկին։

190. ԲԱՐԱԿ ՃԱՄՓԵՆ...

Բարակ ճամփեն բերդը կերթա, ադե ջան,
Քյաշքյա Մուկուչ չայիրը չերթար, ադե ջան։

Ջըրտուք էրին, կռիվ էղավ ու արուն,
Բարակ ճամփեն բերդը կերթա, ադե ջան,
Յարիս ղարկին, գեղին էկավ սև գարուն,
Քյաշքյա Մուկուչ չայիրը չերթար, ադե ջան։

Բերդի բոլոր թող չըբուսին ծաղիկներ,
Բարակ ճամփեն բերդը կերթա, ադե ջան,
Ախչի կանչեք սև ու սըգի խաղիկներ,
Քյաշքյա Մուկուչ չայիրը չերթար, ադե ջան։

Սելով բերին, լալով բերին իմ յարին,
Բարակ ճամփեն բերդը կերթա, ադե ջան,
Բերին դրին ժամի դռան սալ քարին,
Քյաշքյա Մուկուչ չայիր չերթար, ադե ջան։

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ

ՎԻՊԱԿԱՆ ԵՐԳԵՐ

191. ԼԵՆԻՆ ՓԱՇԱ

1

Էն վո՞վ ի, վուր ժողովուրթին կը պախի.
Էն վո՞վ ի, վուր ըռըշպարաց քոմագի.
Էն վո՞վ ի, վուր ֆահլաքտերաց խամխարի—
Էնիկ մեկ փաշե մ՝ ի, անուն ուր Լանին։

2

Մասսաբ ըմ կեր, անուն ուր մալշուրիկ.
Լանին անունց դինբաշին ի.
Վով անունց խետ ի, զուր մալ կես կենի խըտ ուրիշաց.
Մալշուրիկ, գուվա՝ ըզմալ էնա խըտ ուրիշաց շիրիգ։

3

Հախշըրի մալ, դովլաթ, գո զըմմեն մոտ զանգինաց,
Կայք, զըկարողութեն, գո զըմմեն մոտ զանգինաց,
Վուսկի, զմուլք, գո զըմմեն մոտ զանգինաց,
Ֆաղիրն ի, ըզուր էրկու տարտակ ծեռնիր...

Զանգին կուտի եղ ը մեղր, նստի ըզուր օդեն,
Հախկաթ չունի ուրան զըգարեխաց, չոռթան.
Զանգին տիի տըփի նոքրու կլխուն, անել տա ըզուր պան,
Հախկաթ չարչըրվի, չալըշի, չուր տուս կա ուր ջան։

Զանգինաց ը սուլթանաց խոսկ մեկ ի,
Ամմա գ'արի վուր, անունք քիչ ին, հախկաթ շատ ի,
Քիչ գըշատ կը տանջա, գանու նաֆ կ'ուտի,
Սիլահ ը կուվաթ անու ծևռին ի։

4

Տանակ ոսկոռաց խասեր չխո...
Լանին փաշեն հախկաի մը տղեմ էր.
Էնիկ Թռավ ըղուր սուլթան ը հուբմաթի հիրես.
— Ես ար կուվիմ ասից տ'ազատիմ գհախկաթ...

5

Հուբմաթ էր, քաշից ուր զուրք ը զուրապիտ.
Զանգիյբտիր արին ուրանց խար ը խաղնեն.
Բագիր, ազանիր չխո խասին բոմագ.
Ատունք ամեն քշին, երիշ էրին գըխ Լանին փաշեն։

6

Լանին փաշեն էր, կանչից ըղուր հախկաթ ֆուզարաքտիր.
Կանչից քասըբ, պանվուր, խեղճ խզմաթքարքիր.
Հինչքան կին ատպիսին, Թափին Լանին փաշին բոմագ.
Փատ ը փատատ, չաք ը դագնագ առած զուրանց սիլահ։

7

Ըսխատին Լանին փաշեն խեծավ ուր ձին, քըշից.
Կլիմ փաշեն խեծավ ուր ձին, քըշից,
Սերկո փաշեն խեծավ ուր ձին, քըշից.
Կիրով փաշեն խեծավ ուր ձին, քըշից,
Կալինին փաշեն խեծավ ուր ձին, քըշից.
Շահումյան փաշեն խեծավ ուր ձին, քըշից,
Միկոյան փաշեն խեծավ ուր ձին, քըշից.
Ղուկաս փաշեն խեծավ ուր ձին, քըշից.
Քամկից լէ զու էրին Ցաղիրաց օրդուն։

8

Հուքմաթ էր, խըտ պանդինաց առան, էկան ուրանց զուրք.
Խամխարքիր առան, էկան ուրանց զուրք,
Ջխո ինգլիզ առավ, էկավ ուրան զուրք,
Ֆռանգսըզ առավ, էկավ ուրան զուրք.
Ամրքյան առավ, էկավ ուրան զուրք.
Ճայփուն առավ, էկավ ուրան զուրք.
Ջին-Մաչին առավ, էկավ ուրան զուրք.
Մսըր-Հիսար առան, էկան ուրանց զուրք.
Օսման-Տաճիկ առավ, էկավ ուրան զուրք.
Աջամ-Պարսիկ առավ, էկավ ուրան զուրք,
Հաբաշ-Ալման առան, էկան ուրանց զուրք։
Ատունք զըմմեն տը ծեծկվին խըտ Լանին փաշին։

9

Ջանգինաց զուրքի մե ղըսմ էր՝, փարով վարցկան,
Ջանգինաց զուրքի մե ղըսմ էր՝ շուխ պախված,
Ջանգինաց զուրքի մե ղըսմ էր՝ վախկուտ-ջանպախ,
Մե ղըսմ լե ուտար, անծանութ մարթեր։

Էն վուր փարով էր էկի, ըզուր կլոխ կը պախեր,
Էն վուր շուխ պախված էր, ըզուր կլոխ կը ծածկեր.
Էն վուր վախկուտ-ջանպախ էր, կը վախեր, կը փախեր,
Մացեր ին ուտար մարթեր, վուր ուրանց վեջ չէր։

10

Էն վուր Լանին փաշի մարթեր ին, մեկ սիրտ, մեկ խոքի,
Զըմմեն էլ զրկված պանվուրքիր ին հախկատ.
Զըմմեն էլ զրկված ըռըշպարքիր ին հախկատ.
Զըմմեն էլ զրկված, անկուռծ, խեխճ, հախկատ,
Հախշըրի զուրկ, սիրտը վառված մարթեր...

11

Զուրք ը ըռհաթ զարկին-զարկվան խըտ իրար.
Ծեծին-ծեծկվան խըտ իրար.
— Է՜յ, վրեժի կախի, կանչից Լանին փաշեն.

Զարկեք, ծե դուշման փուչ էրեք,
Կովնք, ծե աղատութեն ծեռք պերեք։

— Է՛յ, կանչից թաքավուր-սուլթան ուր զորաց.
Զարկե՛ք էտա չփլախ-չփլուխ նախիրաց.
Ոն շատ կոտորի, անու կը տամ գլխաչ ը մինդալ.
Քաղցածնիրաց էտա խուժան կուզա խլել՝
Զիմ թուրը թաչ, գիմ թախտ ու թագ։

Զարկին, ծեծկվան, լուսուն չուր ի էվար.
Զորաց մեչ ինչքան կին պանվուրքիր,
Զորաց մեչ ինչքան կին ըռըշպարքիր,
Ասին.—Մենք վրե՞ զանինք մեր ֆաղիր ախպրտանց.
Պուլուր փախին, անցին գըխ լանին փաշեն։

12

Զարկին, ծեծկվան լուսուն չուր ի էվար.
Զանունք ունին գըթուփ ը գամբարա,
Ատունք՝— քանի մ փշտով ը գարաբինա.
Զանունք ունին մոսին, մատին հրացան,
Ատունք՝ պախ ը եղան, դագանագ,
Զանունք գըպուլըմիտ, չարխ ի ֆալաք,
Ատունք՝ վարուց, չաքըչ, փոցխ ը կերանթի...

Է՛յ,—կանչից լանին փաշեն.
Խեծավ ուր ձին, քըշից հառնչ.
Մինչև ե՞փ, ասավ, ըզմե արուն ծըծիք.
Մինչև ե՞փ, ասավ, էտա հախշար գավթիք.
Մինչև ե՞փ, ասավ, մե իրավունք խլիք,
Մինչև ե՞փ, ասավ, հախշար տիրապետիք...
Ասավ, քըշից հառնչ՝ ըղուր կարմիր բայրաղ պռնած։
Անու եավեն պանվուր կնաց խաղար-խաղար.
Անու եավեն ըռըշպար կնաց խաղար-խաղար
Անու եավեն սանիյաթքար կնաց խաղար-խաղար.
Անու եավեն անտուն, քաղցած խաղար-խաղար.
Անու եավեն անկուռծ եսիր՝ խաղար-խաղար,
Անու եավեն անխուղ-անճուր՝ խաղար-խաղար...

Պռնին զաշխար, ղբսար, ղբքար ղբմմեն դեխեն,
Պռնին ծորիր, քար, ղբկապան ղբմմեն դեխեն,
Պռնին գետիր, մերի, ընդղբ ղբմմեն դեխեն,
Պռնին տաշտիր, դառտ ը պախիղ ղբմմեն դեխեն,
Պռնին արուտ, չայիր-չիման ղբմմեն դեխեն,
Պռնին ղբծով, հախպուր, օթման ղբմմեն դեխեն...

Զարկին, զարկվան, դուման էլավ, հախշար պռնից,
Զարկին, զարկվան, լեշը փռվավ, տապակ-տապակ.
Ըսպանվողաց արուն էլավ, կապից ղբգետ,
Էս արնագետ քար կլտորեր ղբմանա քաշ...
Զարկին, զարկվան՝ մե կողմ հուբմաթ, մե կողմ ըռյաթ.
Զանունք ունին ղբթուփ ը գուլլա, ղբղումբարա.
Ատունք՝ քանի մ՝ փշտով թվանք, ղարաբինա.
Զանունք ունին մոսին, մառտին, խըշտ-հրացան,
Ատունք՝ պախ ը փոցխ ը եղան, շիշ, կերանթի,
Զանունք ունին ղբպուլըմիտ, չարխ ի ֆալաք,
Ատունք՝ ճպուտ, քար ը կռիթ, կացին, ուրաք...

Զարկին, զարկվան չուրի կեսօր, արև թեքվեց,
Էն հուբմաթի ղորաց մեչեն հինչքան կին,
Էն վուր փարով էր էկի, ըզուր կլոխ կը պախեր.
Էն վուր շուխ պախված էր, ըզուր կլոխ կը ծածկեր,
Էն վուր վախկուտ-ջանապախ էր, վախեր, կը փախեր,
Մացեր ին օտար մարթեր, վուր ուրանց վնջ չէր։

13

Կեսօր թեքվեց, լանին փաշի ղուրքը նեղվից...
Ի՞նչ տը աներ փետ ղբփատատ ղբթուփու տեմ.
Ի՞նչ տը աներ կացին, մանգաղ թվանքի տեմ...
Լանին փաշեն խաբար էրեց՝ քոմագ ուզեց.
Լանին փաշեն հավար էցկից, խամխար ուզեց.
Խամխար, քոմագ թափան, էկան չորս դեխերաց.
Էկան, խասան, սև պանվորքիր խազար-խազար.
Անունց եավեն ըռըշպարքիր խազար-խազար.
Անունց եավեն սանիյաթքարնիր խազար-խազար.
Անունց եավեն լութ-քաղցածնիր խազար-խազար.
Անունց եավեն անխուղ-անճուր խազար-խազար...

Քոմագ եկավ, լանին փաշի կուպմ դորացավ,
Հուքմաթաց կուպմ Թուլացավ, խորնավ...

14

Ձարկին, զարկվան դուման էլավ Հախշար պռնից.
Ձարկին, զարկվան, լեշը փռվավ տապակ-տապակ.
Ըսպանվողաց արուն էլավ, կապկց ղըգնա.
Էս արնագետ քար կլտորներ ղըմանաքաշ...

Ձարկին, զարկվան, լանին փաշի զուրքը զոռից,
Ձո՜ւ քաշիցին, աչքը խփուկ Հառնչ վազին.
Էլ չիրիշկին Թոփ ը Թվանք ղըպուլըմիտ.
Դոշով պացին ուրանց Ճամփան մըչ են զորաց.
Վուտքի տակ լաշ տապակ-տապակ կոխին, անցան,
Յոթ խաս զարնվեր, ընգներ, մնկը անցներ Հառնչ,
Ձամդաք Թափեր, քանց փայլիզու խոխվ-խաղալ...

Լանին փաշեն կերթեր Հառնչ՝ պռնած բայրաղ,
— Հա՜յ-հա՜յ, տղաք. հա՜ռնչ անցնք, օրը մերն ի...
Հառնչ անցավ քաղցածնիրաց օդուն մնկեն.
Հուքմաթաց զուրք խառվավ հիրուր, փախավ ցրիվ...
Լանին փաշի զուրքը Թափավ քանց ղը մուրխա.
Քանց բհարու սել ը սելով գետ վարարած.
Քանց զուլանի ֆոթունի պես առդ ը ասման
Քանց զուլանի վարար կարկուտ... վի՜նչ պատուխաս,
Քանց սամ ելի... երկինք կեսինք, իրարու խառնվան...

Մեկ ղիյամաթ փոթավ զաշխար զգավ իրուր,
Լանին փաշեն կերթեր Հառնչ՝ պռնած բայրաղ
Լանին փաշեն երիշ էրաց, առավ ղըմմեն.
Առավ անունց Թոփ ը Թվանք, ջաբախանեն.
Առավ անունց մոսին-մառտին ղըղումբարեն.
Առավ անունց ղըպուլըմիտ, չարխ ի ֆալաք.
Տվից, ցրվից, քանդից, փռից Հախշըրքով մեկ...

15

Հուքմաթաց զուրք վուր մեկն ընգավ, վուր մեկ փախավ.
Մըչ Հախշըրին կորան, կացին, Թողեր կարավ,

Հուքմաթբաշի, էնա ըռսաց ճոշ սուլթանին,
Ջըռ գանդալոշ ը պաց պերան էնա ծարին,
Սաղ-սալամաթ պռնին քաշին մոտ Լանինում։
Լանին ասավ.—Պիչան-սարսաղ, էտ ի՞նչ էրիր.
Քո ի՞նչ պան ի կառավարել մըչ հախշըրին։
Էնա ծար, թե.—Ես քո ոտաց մեռնիմ, Լանին,
Մի՛ սպանիր, հեչրան իմ քե, ձի խնայիր.
Կատր ըմ խոզ ոռւ ցանիմ գավան, ըլնեմ բոստանչի,
Քո սադաղին, խետ իմ խիզնանց ապրինք մինչի...
— Ես չեմ խաբվի, էտա շողոմ խոսքերտ իթարգ.
Ասեց Լանին, քաշեց զըսուր կլոխն իզարկ...
Կլոխն իզարկ, ջամդաք թալից էնա քուլխան.
Փողաննիրաց շներն էկան ինչզադար կին,
Քուչին, էնու լաշը էրին ծվեն-ծվեն...
Էնու կլոխ զարկին երկեն մեկ ըռոտիմ ծեր,
Առան ուրանց ծեռ, պարզիցին վեր.
Հախշար-ալամ պոբոուցին, չուրի նեխավ,
Ետև քցին մըչ քուլլուգին...

16

Սատկավ զըմշել, վուր նսաեր էր հախշրի վզին,
Քանի՛-քանի՛ արունքաեր էր էրի էնի,
Քանի՛-քանի՛ օջախներ էր մարե էնի,
Քանի՛-քանի՛ ճժուկներ էր թողե խեղճ-վուրփ,
Քանի՛-քանի՛ մերեր-քուրեր սևեր խաքած,
Քանի՛ չահել, չիվան կնքտիր որփեվարի,
Քանի՛-քանի՛ կը մխկտին մըչ զընդանաց,
Քանի՛ կռիվ զըշամաթա սարքեց էնի,
Կուզեր զահշար-ալամ զավթի, իրմով էնի...

17

Լանին փաշեն մալշուրիկին տրից զակուն.
Երկրի կարք վերուց, էրեց կլոխն ի վեր։
Էն առաչվա զանգիներաց էրից կատու,
Խլից ամեն ինչ ծեռներաց, թողից անտուն։
Էն առաչվա քասըբներաց էրից փաշա.—
Զըմմեն մեկ-մեկ տատավուր ին մըչ դիվանին։
Էն առաչվա բեգիր, աղեք շիննեց ևսիր.

Զըմմեն պռնից, կոռծից էսկից, քշից ներսից։
Էն առաչվա նոքար, չոբան ղըխզմաթքար,
Զըմմեն տարավ, տվից հուսըմ, տըրից սարքար։
Երկիր ղըմմեն կլոխ էտու պանվուրքերաց,
Երկիր ղըմմեն կլոխ էտու ըոշպարաց,
Երկիր ղըմմեն կլոխ էտու խեղճ նորարաց։
Վով վուր խեղճ էր, նաչար, քաղցած, տարավ հառեչ,
Վով զանգին էր, աղա ու բագ, տփեց գլխին,
Քշեց, կացին մամու խոլթուխ, անտարց մտան
Յան քաղցած, ծարավ, զվռեցին, վհռչը խատան։
Երկիր հիստիկեց լանին փաշեն,
Թողեց ղըմմեն ուրան մարթեր.
Հաշխատավոր առից ուր թևի տակ։

18

Տեր, պարերար ողորմած
Տո քոմագ ըլնես լանին փաշին.
Ը ուր զուրք ը զուրապետաց։
Ամե՞ն...

192. ԼԵՆՈՒ ԽԱՔԱԹ

1

Ուռուսի թաքավոր եփ Լենու խորն ու ախպորը
Դարաղաջ էրեց,
Էն ժուկ Լենի հալա ճժուկ մ էր։
Եփ Լենին գանչցավ ուրան ճանչցավ,
Բաշլաեց ուռուսի թաքավորի տեմ թալաք գարկել,
Վարսալամ, աշխատիլ, որ էնիկ կլխի վրա կա,
Որ ուրան խոր ու ախպոր հարիֆ խանա։

Լենին էր.

Էնկադար գալդա-պուճախներաց գարկեց, գարկավ,
Տեսավ՝ չէ, պան տուս չի կա։
Ըսխըտին ուրան կերպ ը լիբաստ փոխեց,
Տարցավ խուս, առավ ուրան ուրաք,

Սղոց ու ըմմեն ջուռա հաջաթքիր,
Հաշխատեց, կերպ երեց, մտավ թաքավորի պալատ,
Բաշլայեց խուսուբեն անիլ։
Լենին զաստի էնքան հավատարմութեն
ցուց կուտեր իրան, որ տառցեր էր տան տղա։
Էս ֆանդ ը ֆելով վերչ էնիկ իրես առավ,
Ուրեն խամար մուննաթ էրեց,
Որ տուն ըմ տան
Սթար էղի մըչ պալատին։

Պալատե տակի պատվալքերաց մկը տվին էնու,
Որ քշերներ ստար էլի։
Լենու միտք էն էր, որ ուռուսի խոֆած
Քավթա թաքավորին մեկ ծէվով մ ըսպանի,
Ուրան խոր ու ախպոր հարիֆ խանի։

Ըսխտին, որ Լենին պատվալի մեչ տեղ քթավ ուրան,
Քըշերներ բաշլայեց պալատի տակ ծակել, լաղմ տալ։
Մե ժուկ մ'ընցավ,
Լենին սաղ պալատի տակ լաղմեց, քանքան էտու,
Սորա բաշլայեց տրսեն,
Ուրան ընկերներաց մոտեն բոմբ ը դինամիտ պերել,
Լցնել լաղմների մեչ։

Եփ լաղմներ լիփը-լիք բոմբ,
Դինամիտ, բարութ, գուլլա էլից,
Մեկ քըշեր մ'—հա բաբամ, որ տու կաս,—
Մեկ երկեն մ' ֆիթիլ արեց բոմբերաց մեչ,
Տուս էկավ, կրակ էտու, փախավ...
Բոմբեր պացվան,
Նա քի պալատ, պալատի խետ
Սաղ մեկ թաղ մ' էլ զարը զաբար էլավ,
Կիոռծանվավ։
Թաքավոր ուրան քուլը քուլֆաթով,
Ուր պալատականներով մեկտեղ առթվան,
Ջաններըը չհաննամի վասըլ էլավ, գնաց...

Դարի տես, որ թաքավորի ճոչ տղեն—
Էտա քշեր ուրան քեռու մոտ խուր էր էղի,

Էնիկ պոծեր էր։
Մեկել օր եւի հիմցան էտա սիթամ պան էրող
Լենի յա,
Սաղ ջամդար, պոբստաւլ, գարադաւլո, նաչալնիկ,
Սաղնիկ, եսաւլուլ, հինչքան կին,
Թափան, բաշլայեցին ժուռ գալ,
Որ ձեռ եցկին ղվննի։

Սմա, ինչ Լենի էր,
Ուրան հարիֆ խանել են սորա, էտոնղաց փախաւլ,
Մեքաշ ընցաւլ Չին-Մաչինու թաքաւորի խող։
Քաջ, շնորքով, ղոշաղ մարթ էր,
Կնաց Չին-Մաչին թաքաւորի պալատ,
Ուրան ղուլլուղ մ' քնթաւլ, մտաւլ խղմաթքար։
Մե ժուկ ը ժամանակ մ' ընցաւլ.
Օրերեն մեկ օր Չին-Մաչին թաքաւորի ախչիկ—
Սէյր էրթլու վախտ, ուրան աշկ առաւլ Լենուն։
Կայնաւլ՝ վարաւուրդ էրեց,
Հախչիկ հավանեց ղվննի.
Ուրան սիրտ կպաւլ էնու։
Սմա դարի տես, որ Լենի էլ էնու սիրեց,
Էրկու չահելներաց սիրտ կպաւլ հիրուր։
Թաքաւորի հախչիկն էր,
Չարնվածի պես ետ եկաւլ ուր տեղ,
Վերուց Դիվիթ-Ղալամ,
Մեկ նամակ ըմ կրեց Լենուն, թե.
— Լենի, բա չատես,
Իմալ մեկ կը փաթթի ուռի ծառուն.
Իմալ պաղեխ կը փաթթի ղվարթի քոլուն,
Իմալ օձ կը փաթթի լագլագու վիզ,
Էմալ էլ իմ սիրտ փաթթվեր ի քո սրտին.
Իմս կաս, տու ես, չկաս՝ տու ես։
Ագար իմ խեր խաւկաս ընդնի,
Մը վախիր, իմ չան քե հեչրան ի,
Էն վախտ կառնենք հիրուր,
Կը փախնինք Օղգա թաքաւորի խող, ուրիշ մամլաքաթ,
Էնտեղ կապրենք խըտ հիրուր։

Լենի էր, նամակ առնելու պես՝ կարթաց,
Ամեն ինչ հիմցավ,
Սորա բաշլայեց չվար կրել հախչկան, թէ՝
— Չին-Մաչինու թաքավորի հախչիկ,
Ագար քո սիրտ մեկ գանգի զադար ի ձի կպե,
Իմ սիրտ մեկ սարի զադար ի կպե քեզի։
Ամմա, պայց մեկ վախտ մադաթ սաբր էնենք,
Առնենք՝ զալաջալ մեզի ի՞նչ կեղի։
Չունքի քու թաքավոր խեր
Չի պես քասըբ քաթիբի մ՝ հախչիկ չի տար։
Հախչիկ կառնի կիր, կասա,
— Ապեք, թոշ էղի...

2

Թող էառնք ուրանց սեր էսպես կաղտնի վելենն,
Մենք խաբար իտանք ուռուսի ըսպանված
Թաքավորի տղի մոտեն։
Թաքավորաց մոտ զայտա-կանուն կա,
Որ թաքավորի տղեն չուրի չփռակվի,
Իրավունք չունի ուրան խոր թախտը նստի։
Ըսպանված թաքավորի տղին խամար
Վաքիլ-ապեկոն ըմ տրին, չուրի էնիկ փռակվի։
Կանուն էլ կա, որ թաքավորի տղան
Պետք ա անպատճառ
Թաքավորի հախչիկ առնի ուրան թաքուհի։

Էնիկ էլ խաբար, խլավուզներ խրկեց
Հաշխրի չորս պուլոր,
Որ ուրան խամար
Մեկ արժանավոր հախչիկ ըմ քթենին։
Ժուկը մադաթ ընցավ,
Թաքավորի տղան ջըվար էկավ, քի.
— Բա, չասես,
Չինու-Մաչինի թաքավոր մեկ հախչիկ մ՝ ունի,
Որ չուտես, չխմես, ուրան խադ ու խալին,
Գուլ-ջամալին թամաշա էնես։

Ուռուսի թաքվորի տղեն էտա սալըղ առնելու պես,
Կառնի ուրան պատվելի մարթեր,

Իրան կը քըցա Ջին-Մաչինու թաքավորի խողէ
Ջին-Մաչինու թաքավորն ի,
Կուրխընա, առոք-փառոք կընդունա,
Կը պատվա, կը հարկա։
Եփ ուռուսի թաքավորի տղան
Ուրան կալու պաճառ մանշուր կենա,
Ջին-Մաչինու թաքավոր
Մեկ հաշխարքով ուրախ կեղի, կը խընդա, թե՝
Մեկ հախչիկ ի, քեզի դուրբան։
Կողորկա, հախչիկ կը կանչին։
Եփ հախչիկ կը կանչին,
Թաքավորի տղեն մաթ ը մայիլ կը մնա, կասա.
— Իմս կա էտ ի, չկա՝ էտ ի...

Ամմա հախչիկ բեխաբար ի։
Եփ հախչիկ էտա պան կիմանա,
Կը սքվորի, խաբար կտանի Լենուն, թե.
— Բա չասես. էսենց, էսենց...
Լենի կասա.
— Դու դառդ մի արա,
Էնու խոր կլոխ ուտող, էնու կլոխ լե կուտա։
Ես էնորից կոխ ուտողը չեմ,
Քեզի խանգիստ մնա։

3

Լուսուն Ուռուսի թաքավորի տղեն
Ջին-Մաչինու թաքավորին կասա.
— Խանջա քո հախչիկ, որ զիմ նիշան առնա,
Որ ես արխային զիմ թադարեքի խետ եղնիմ։
Կը խանջին հախչիկ։ Խեր կասա ուրան, թե՝
— Ուռուսի թաքավորի տղեն
Քեզի կուզի իրան թաքուհի։
Հախչիկ թե.
— Ես էնու չըմ առնի։
Ես իմ գողալթի սովդուն ունիմ։
Թաքավոր կը հեռսուտա.
Պայց, ամմա հախչկան շատ սիրելու սաբաբին
Պան չի ասա, մինակ կասա թե՝

— Ես խոսք իմ տվեր իմ,
Քեղի իրիք օր ժուկ կիտամ,
Որ քո ախր խոսք ասիս։
Հախչիկ ուր խոր կսեն կը պատմա զվեննու։
Լենի յա.
Համա հենց էն քշեր կթամքա էրկու ձի,
Կառնի ուբ սիրած,
Կփախնի Ջին-Մաչինի խողից,
Կերթան, կանցն Ֆռանգստանի խող։
Էրթլուց հառաչ Լենի մեկ կիր ըմ կը Թորկա
Ուռուսի թաքավորի տղի անունով, թե.
— Ուռուսի թաքավորի տղա, լավ հիմացիր, հա,
Գող գանըմինի թանիյար
Ես էն Լենի եմ, որ քո խորտ,
Ուրան ասկը միլլաթով բոմբ արի, քցի։
Մկա լը քո նշանված կառնիմ, կը փախիմ,
Տղա ես քիր։
Պայծ, ամմա էտուրմով չես պրծնի,
Ես նորեն կը կամ ջանիդ։

Ուռուսի թաքավորի տղեն ի,
Էտա տեղից կը Թողնի
Քոռ ը փոշման, մաղբուն կերթա ետ։

Ըսխտին թաքավորի տղեն ա կերթա,
Լամսու թաքավորի հախչիկ կառնա ուրան թաքուհի,
Սորա կոծվի թաքավոր,
Կը նստի ուրան թախտ։
Պայց, ամմա էն օրվանք
Նա Ջին-Մաչինա թաքավորի հախչկա սուրաթ
Ուր սրտեն կելի,
Նա Լենու քաշած դադ։
Ինչ որ Լենի յա,
Էն լե ուրան հարիֆ ունի հալա. կասա,
— Ջուրի Ուռուսի թաքավորի միլլաթի
Քոքը բինան չկտրիմ,
Եսիկ խանգիստ չեմ էղի։

Ժուկ ը ժամանակ կանցնի,
Չուրի կը գա ճոչ կռիվ։
Ճոչ կռվի վախտ Լենի ուրան դուրուճ կը փոխա,
Կընցնի Ուռուսի խոզ ու կըսկսի ուր ընկերներաց,
Ուր թայֆայի խետ հաշխատել,
Որ Ուռուսի թաքավորին կլխի վրա պիրի։
Վերչ Լենու հաշխատանք կխատնի
Չուրի կռվու սալդաթքերաց մեչ էլ։
Լենի կրիր էր, թե.
— Սալթաղներ հորի՞ն կը կռվիք,
Կը սպանիք, կը սպանվիք
Խաստավիդ թաքավորների,
Խաստափոր խարտոնների, խաստակլոխ խմբապետքերի
խեչրի խամար,
Թողեք ձե դիրքեր, ցրվեք ձե տներ։

Մալխաս վեռչ, նամուսի մըռճեմներաց պես
Լենու մարթեր Ուռուսերի ու թաքվորի
Խիմաց տակ դիշնին, էնքան կը քանտին,
Չուրի որ մեկ օր էլ
Ուռա կը քաշին, երկիր կը զավթին,
Ուրան՝ թաքավորին էլ կը պռնին
Քուլլի քուլֆաթով-միլլաթով։
Լենի էտոնց թամմըդին սրի կը քաշա,
Ուրան հարիֆ կը խանա, նոր կասա.

— Ախա՛, պիմ ջան դինջացավ,
Ես իմ խոր, ախպոր,
Քուլլի հախկաթ ըռահաթի հարիֆ խանի...

Ըռահաթ էր Լենու ու ընկերներաց
Անուն կը տրնին «բալ շարըք»,
Գուվա մեղրի պես քաղցր,
Արևի պես պայծառ։

193. ԼԵՆԻՆԻ ԽԵՔԱԹԸ

Ասեմ ախպորս, հենց որ Նիկոլ Թաքավորի մեր
Կը պրտղա ու կը պերի Նիկոլ.
Ուր խեր շատ կուրախանա,
Որ ասված ուրան ժառանգ-նասլենի տվեց,
Ու չթորկեց մահրում։

Դե արի տես, որ Նիկոլի մեր,
Որ գերմանու թաքավորի ախչիկն էր,
Էն քշեր մըչ ուր քընին երազ կը տեսնի՝
Քանց Սիպիռից մե նորելուկ մանուկ,
Անուն Լենին,
Ուր կլոխ մարթու,
Ամմա մեկ կրակ-կարմիր աժդահա վիշապու պես,
Կը պարզրանա վեր ամպերաց
Ու խըտխտուն կիշնա համա դուռը Պետրոպոլկ,
Թաքավորի ամարաթ,
Ու կիշնա մանուկ Նիկոլի օրոցքին վրա,
Կը փաթըթվի ղօրոցք
Ու կըսկըսա նորամանուկ խեխտել։

Թաքուհին ա, ինչքան ուրան կը թալա,
Տեղից ժաժ կալ, չի կըռնա։
Ինչքան կը բոռա, հավար կը խանչա,
Ուր ծեն ուր բողազից տուս չի կա...
Էնա կարմիր վիշապ կը խեխտա,
Կը սպանա Նասլենուն
Ու կը թորկա կը քաշվա...

Թաքուհին ա,
Խափ ուրան կոխած կը զառթնա,
Կը խանչա ուր իրիկ թաքվոր, թե.
— Թաքավոր ապրած կենաս, մեր նասլենի ժառանգուն
Թե մի խաթա ու փորցանք կա,
Էտիկ Լենինից կըլնի։
Ու կը պատմա ուրան տըսած երազ...
Ղամ-ղուսան կը պատա։
Թաքավոր, թաքուհին չընգինա՝ ինչ էնեն...

Ետով թաքավոր կը խանչա
Ուրան վազիր-վաքիլ, սինոթապետներ.
Ու էնոնց կը պատմա թաքուհու կըսեն...

Սինոթապետներ կընգին վըլվըլա,
Ջառ կեցկեն հըմմեն տեղ, թե՝
— էտա Սիպիոի քաղքի մեչ
Լենին ո՞ն ա, ո՞ն չի։

Տու մի ասա՝ թաքավորի ըսպանող մարթերաց,
Որ Սիպիռական ին էրև,
էնոնց մեկի տղաներիցն ա,
Ու կը քթնան, խաբար կը տան,
Թե՝ էսենց, էսենց, էսենց...

Դև արի տես որ, յաղըլան փողըլմազ։
Ինչանք թաքավոր խրաման կը խանա,
Կը խրկա, որ Լենին ուր խոր մոր խետ պռնեն,
Գրտնեն, ըսպանեն...

Աստու կարող զորութընով
էնտեղ էլ Լենինի մեր երազ կը տենա,
Որ ուր նորամանկան կըլխին
Օրորաց փորցանք ա կալու։

էս խըտին, ասեմ ախպորս,
Լենինի խեր նա,
Ալբիալ կը ժողվա ուր խիզան,
Ուր տան ըռըթբի,
Ծանդր կը թափա, թևտըր կը վերցա,
Կառնա ուր քուլֆաթ,
Գրանից կանցա։
— Հայդե գերման, ո՞ւր ես էկամ...

Թաքավորի միլղաղաբքիր կը խասին Սիպիոի քաղաք.
— Ու հու, լալա քոչըբ, յուրդի գալըդ վերանա,
Նա թաս վար, նա՝ համամ։
Լենինի խեր առե ուր քուլֆաթ ու փախե...

Ըստուն, խաբար, աֆար,
Թել կը թալին աշխարքի չոռս դեխ,
— Բա էսենց, էսենց,
Էսա նիշաններով մարթ ո՞ւր ա փախե։
Ալբիալ վասակներաց կողմն խաբար կը կա, թե՝
— Էտ նիշանգահներով մարթ
Ըռուսեթի Սիպիռի փախե,
Մըկա գերմանու խող կապրա։

Ըստուն ըռուսի թաքավորն ա,
Կը կըրա ուր աներոջ,
Գերմանու թաքավորին, թե.
— Հալը, զազյա, էդպես, էդպես...
Ու կը խընթրա որ, թուխտ առնելու պես
Էնոնց թամմըդին միլ-զազափ տա։

Ըսխըտան գերմանու թաքավորն ա,
Թուխտը առնելու պես, խըտ-խըտուն ամմա հենց էնա քշեր
Քընի մեջ երազ կը տեսնա.
Մըչ երազաց խրիշտակ կասա, թե.
— Էյ, գերմանու թաքավոր, կասա.
Քո ախչիկ ըռուսի թաքավորեն Մեկ էն տեսակ կազան
մի ծնե,
Էնիկ էլուն, որ նստավ ուր խոր թախտ,
Կասա, էլ երկիր արուն-աոցունք կը պռնա...
Մեր մանուկ կուրանա,
Էնպես մեկ զուլումքար թաքավոր կեղի։
Էնի սատանի. բեղլերուվի, զըմշելի
Ու Սադայելի զարմ ա, կասա...
Ամմա ասվածծ, կասա.
Էսա պանիր լավ գինա։
Ըստրան էնու խամար
Ղազաբ ա ըստեղծել Լենինուն,
Իմալ օցի խամար լագլագուն,
Որ ավսալ կա թե չէ՝
Էնու կլուխ ճախճախի...
Ջունքի Լենուն, կասա,
Աստված ստեղծում ա խեղճերաց, անճարներաց,
Նա զուգուրներաց քոմագ, տեր, օքնական...
Վհուչը-վհուչը, կասա,

Լենին կը ճառեր օր Նիկոլին
Ու ուրուն սինոթապետներաց կըլուխ,
Ու ըռուսեթ կը տիրա,
Թաքավորի թախտ կառնա,
Ու ինք՝ Լենին կը նստա.
Կըլնա ֆաղիրներաց թաքավոր,
Աշխարք կանա խաֆսարական,
Կասա, ամմա, պայց թամմուզ զանգիններաց,
Համփաններաց, սինոթապետներաց սուր կը քաշա,
Ուր երկրեն կը խոկա...
Մկա թա տու էնա տղին կպնես,
Ասված քու թախտ թառ ը մառ կանա,
Քեզի կը սպանա, կը ճընջա,
Ջունքի յաղըլան փողումտա։
Աստու մատ էսա պանի մեչ կա...

Գերմանու թաքավորն ա, կը զարդանդա.
Քընեն կելնի, ուր ջան կառնի տողալ...
— Յաման, ես զալաթ եմ էրե,
Կասա ուրան, ուրան։
Ու առանցի մարթու պան ասելու
Մեկ թուխտ ըմ կը կրա ուր փեսին,
Ախչկան, կը խափա, թե.
— Ծեր ասած կատարի,
Լենուն ուր ծնողներաց խետ մորթել տվի,
Պոծավ, կնաց....
Ըսխտին կողտրիկ էլ մարթ կը տընա, թե.
— Մուղաթ մացեք, Լենու մեկ մազ չպակսա,
Թե չէ, կասա, ծե իղ ը թող աշխրքեն կը վերում...

Ժուկ-ժամանակ կանցընի, Նիկոլ կը մեծանա,
Ուր խորհց ետ կը նստի թախտ,
Կըլնի թաքավոր։
Աղորթ որ, կրակ կը տնա,
Աշխարք կավիրա,
Էրուն ոտ կառնա, կերթա։
Նիկոլի արած զուլումներ լեզվով չի ասվա...
Լենին էլ կը մեծնա,

Հուսում կառնա, կավարդա,
Նքա մարթ կը տառնա,
Ու կողտնիկ էնի կանցընի ըռուսաստան,
Ու կըսկսա պանվորներաց մեջ
Ու քասիբ-քուսուբներաց մեչ կողտնիկ աշխատիլ,
Որ բունթ անա,
Թաքավորին թախտից քըցա։

Էսխըտին Նիկոլի մարթեր էսա պան կիմնան
Ու խազար-խազարավոր մարթեր կը պռնին,
Կը սպանին, կը կոտորին, կաքսորին,
Ամմա Լենին կը փախնա
Թազադան գերմանու երկիր։
Էտատեղ ուրիշ փախնողներու խետ
իրան զուվաթ կը խավաքա,
Զուրի կը տեսնա,
Որ տանակ ոսկոռին խասավ,
Էլ խամփերիլ չեղի,
Զուլում ծեր կը տա,
Նոր Լենին կառնա ուր մարթեր
Ու գրանից կանցընա,
Կը մտնա ըռուսաստան։

Աստուծմե էր, Լենու անուն լսելու պես
Թամմուզ զորք-զորապետ կանցան Լենու քամակ։
Զունքի էնա վախտ
Զորք կը վերուն քասըբի, պանվորի մեննեն։
Հենց որ Լենու քոմագ կը շատանա,
Մեշկ կը պընդանա,
Կառնա ուրան զորք-զորապետ,
Համա դուզ կը քըշա Մոսկոֆ։
Խատնելու պես Մոսկոֆ լե, Պետրոպոլ լե, Կիվ լե,
Թամմուզ, թամմուզ քաղաքներ կառնա,
Նիկոլի մարթեր կը ճառթա,
Կը կոտորա, կը խըրկա,
Իրան Նիկոլին էլ սաղ կը պրռնա։
Նիկոլ ըստրան կասա.
— Բալի յաղըլան փողումադ։

Իմ ճակատիս էս էր կըրված,
Ընդուր ճակատին էլ՝ էն։
Նոր, Լենին ա, Նիկոլի կըլոխ կը դանա,
Ինք կը նստա թախտ,
Ու աշխարք խավսարական կը կառավարա...
Էտա ժամանակ քասիբ-քուսուր
Կը խասին ուրանց մուրազին։
Տուք էլ խասեք ձև մուրազին։
Ամեն՝, ինշալլահ։

194. ԼԵՆՈՒ ԽԱՂ

Լենու մասսար մեզ ազատեց,
Կնիկ մարթերաց խավսրեց.
Ես մեռնեմ Լենու զակոնին,
Ամա՛ն Լենին, մադա՛թ Լենին։

Սարք ու կարք արեց մեջ աշխարին,
Ջորնին ավեց ուսում,
Խային, Թուրքին ախպերացուց,
Ամա՛ն Լենին, մադա՛թ Լենին։

Քամին կուգեր, ինչ անուշ էր,
Լենին եկավ խարախուշ էր,
Շուն տաշնակաց պանը պոշ էր,
Ամա՛ն Լենին, մադա՛թ Լենին։

Ջուրը կուգեր պարցր սարեն,
Լենին խաբար էր մեր Չալեն,
Էնիկ մեզի հույս ու ճար ի,
Ամա՛ն Լենին, մադա՛թ Լենին։

Արև ծաթեց ամբի ծերեն,
Լենին մեզի եկավ տերեն
Ամեն պարի մը կը պիրի,
Ամա՛ն Լենին, մադա՛թ Լենին։

Լենին որ կա, շափաղ լոս էր,
Քասըբաց խեյրին կը խոսեր,

Աշխարք խավսարական կուզեր,
Ամա՜ն Լենին, մադա՜թ Լենին։

Սարից կու գեր բալլա-պորան,
Մեր Լենինն էր ոսկի պերան,
Դուշմընի տուն տառնա վերան,
Ամա՜ն Լենին, մադա՜թ Լենին։

Մեր Լենու անուն պարցր ի,
Խոսկ ու ղրուցը քաղցր ի,
Րոզ դուշման նստի, լաց ըլնի,
Ամա՜ն Լենին, մադա՜թ Լենին։

Լենուն մատաղ ըլնի Սումբոն,
Ճժուկներս կուշտ, կը խնդան,
Էնու ջահվար ջանին ղուրբան,
Ամա՜ն Լենին, մադա՜թ Լենին։

195. ՊԱ՛, ՊԱ՛, ՊԱ՛, ԼԵՆԻՆ ԲԱԲԱ

Պա՛, պա՛, պա՛ Լենին բաբա,
Մենշևիկ փախավ, գնաց.
Տաշնակը ետ չմնաց,
Դու հասցուր մեզ շոր ու հաց։

Պա՛, պա՛, պա՛, Լենին բաբա,
Հարստներ մտան ծակը,
Տերտերներն էլ քամակը,
Էդ դու ես մեր քոմակը։

Պա՛, պա՛, պա՛, Լենին բաբա,
Նիկոլի կլոխն աղիր,
Աղա-բեգերը թաղիր,
Լավը վատ ջոկիր, մաղիր։

Պա՛, պա՛, պա՛, Լենին բաբա,
Ախն աշխարհը խարաբա
Շենցուցիր, շինիր աբադ,
Ջուզդի տունը բարբադ։

196. ԼԵՆԻՆՈՒ ՄԱՂ.

Խեղճ ու նաչար շատ լաց արին,
Նիկոլ ընկավ, աշկ պաց արին.
Էն ո՞ն արեց, էն ո՞ն արեց,—
Էսիկ ըրմմեն Լենին արեց։

Պետրոպոլն էկավ լուռը,
Կաթին դիվանխանի դուռը,
Էտ ո՞ն արեց, էտ ո՞ն արեց,
Էսիկ ըրմմեն Լենին արեց։

Ցաղիրներաց ծաթի արև,
Ջանգինքերաց որն ի սև,
Էտ ո՞ն արեց, էտ ո՞ն արեց,
Էսիկ ըրմմեն Լենին արեց։

Գունեց սարը պռնեց ղոշուն,
Համբապետքեր տառցեր ին շուն,
Էտ ո՞ն արեց, էտ ո՞ն արեց,
Էսիկ ըրմմեն Լենին արեց։

Օրդուն Թալեց իրեք դևխից,
Համբապետքեր փախան կեղից։
Էտ ո՞ն արեց, էտ ո՞ն արեց,—
Էսիկ ըրմմեն Լենին արեց։

Քեղարթա սարը դուման էր,
Բալշևիկ կրակի նման էր.
Էտ ո՞ն արեց, էտ ո՞ն արեց,
Էսիկ ըրմմեն Լենին արեց։

Բալշևիկ էկավ գդակ, պոպոզ,
Համբապետներին բռներ ի մոզ,
Էտ ո՞ն արեց, էտ ո՞ն արեց
Էսիկ ըրմմեն Լենին արեց։

Խրնգոն ասեց, մեր պան ի ղուր,
Թողեք փախենք ղրխ Ջանգաղուր.

Էտ ո՞ն արեց, էտ ո՞ն արեց,
Էտիկ ղըմմեն Լենին արեց։

Առուշ ասեց.—Ջիմ Թալլած մալ,
Ի՞մալ Թորկեմ, փախնիմ ի՞մալ...
Էտ ո՞ն արեց, էտ ո՞ն արեց,
Էտիկ ղըմմեն Լենին արեց։

197. ԵՐԵԿ ԲԱՏՐԱԿ ԷԻ

Երեկ բատրակ էի,
Էսօր—դատավոր,
Լենինի խոսքերով
Դարձավ բախտավոր.
Խոսքերիտ մատաղ—Լենին ջան, խոսքերիտ,
Գործերիտ մատաղ, Լենին ջան, գործերիտ։

Հարուստը կապել էր
Մեր ճար ու ճամփեն,
Հող ու ղավդ խլել,
Ջաֆթել էր ամեն.
Ձորքերիտ մատաղ Լենին ջան, ղորքերիտ,
Գործերիտ մատաղ, Լենին ջան, գործերիտ։

Աշխարհը մե ծով էր
Մենք մեչը ծարավ,
Լենինի գործերով,
Տեսա՞ք ինչ տառավ,
Գործերիտ մատաղ, Լենին ջան, գործերիտ,
Փորցերիտ մատաղ, Լենին ջան, փորձերիտ։

Աղքատ, չքավորը
Օր-արև տեսավ,
Հարուստը խեղճացավ
Օրը սև տեսավ։
Պատվերիտ մատաղ, Լենին ջան, պատվերիտ,
Պատկերիտ մատաղ, Լենին ջան, պատկերիտ։

Ջավահիր անունդ
Ապրի Հավիտյան,
Գործ, աշխատանքդ
Լինի անխափան,
Գործերիտ մատաղ, Լենին ջան, գործերիտ,
Խոսքերիտ մատաղ, Լենին ջան, խոսքերիտ։

198. ԼԵՆԻՆԻ ԵՐԳԸ

Լսեք պատմեմ իրականից,
Թե իսկը ո՞վ էր Լենինը.
Հասկացող էր ամեն բանից
Շնորքի ծով էր Լենինը։

Ծով խելքովը աշխարհ չափեց,
Ինչքան ճիկ ու չանքեր թափեց.
Թշնամին տեսավ սարսափեց,
Ընդերներով էր Լենինը։

Ընդերներով շատ-շատ տարի,
Աշխատեցին ժիր ու արի,
Մեծ հոգի էր, խղճով բարի,
Շատ անունով էր Լենինը։

Անունը պայծառ ու մեծ էր,
Լուս ավող կրակ ու բոց էր,
Բարի, մարթասեր անկեղծ էր,
Էհտիբարով էր Լենինը։

Էհտիբարով քաջ զեկավար
Գտավ բանվորին դեղ ու ճար,
Շատ հոգսեր քաշեց անհամար,
Ինթիզարով էր Լենինը։

Ինթիզարը առավ գործով,
Իմաստուն խելացի, փորցով.
Սաղ թշնամիքը թափեց ծով,
Ջարբը զոռով էր Լենինը։

— Ջարբա՛ զոռ, բանվոր գեղացի,
Ասավ, թեզ արա միացի,
Բոլոր աշխարհը տիրացի.—
Այսպես խոսող էր Լենինը։

Խոսող էր, խոսքերը անգին,
Շուռ տվեց աշխարհն իր հանգին,
Շինելով նորը, քանդեց հինը,
Հինը կործանող էր Լենինը։

Կործաննեց ուժեղը, չարը,
Վեր քարին չթողեց քարը,
Կարվեց բուրջայի ճարը,
Խիստ հետևող էր Լենինը։

Հետևեց, երկիրը շինեց,
Անապատները ջուր անցուց,
Ծովը ծովի հետ միացուց,
Քաջ աշխատող էր Լենինը։

199. ԼԵՆԻՆԻ ԴԱՍՏԱՆԸ

Լսեք ձեզի պատմեմ ինգերներ,
Թե ինչեր արեց Լենինը,
Հենց որ Նիկոլն ընկավ թախտեն,
Սահմանն ընցավ Լենինը։

Հենց որ տեմն էլավ Կերըսկին
Իրեսին էկավ Պոբսկին,
Փախան ալբալ, պոչերը կզկին,
Ու առաջացավ Լենինը։

Քաջ Լենինը քաշեց թուրը,
Ընցավ թոնա կետի ճուրը,
Կերնըսկիյին էկավ լուրը,
Ասին.—փախի՛, էկավ Լենինը։

Լենինն՛ էր քասըբի թագավոր,
Քաշեց ուր զորքը սաղ-պոլոր,

Հարուստ, պանդին մնացին մոլոր,
Թամմըղին քշեց Լենինը։

Պանվորն էր Լենինի քոմակը,
Ըռըշպարըն էլ ընցավ քամակը,
Խանգավ բուրջույի ճրաքը,
Խոպին խավսար արեց Լենինը։

Լենինը խաքավ պենքը, պրախը,
Հարուստների սիրան ինգավ ախը,
Նոր ըսկսեց փախըփախը,
Եվ ճառիը քցեց Լենինը։

Ջորըը քաշեց մտավ Պետրոգըլ,
Սըրտից չխարցուց, սաղըը սոլը.
Տաղ էլ բուրջույին կոտորեց բոլ,
Սավետը արեց Լենինը։

Մոսկովը վերցրեց, վլաստը դրին,
Ըմմեն տեղ հեղկոմ ընդրին,
Բալշևիկներն աշխարհ դիրին,
Թաքավորի թախտը նստավ Լենինը։

Եվ Լենինը նստավ թախտը,
Բացեց քասիբ-քուսուբի բախտը.
Ամմա պայց ֆռանկ, ինկլիզ էտ վախտը,
Ղոշում քաշին էկան Թեխ Լենինը։

Տանց պերաններն էլ տվեց Թեխ չոլ,
Ճառիեց ու կոտորեց բոլ-բոլ,
Քշեց թամմըղ Թեխ ըստամբոլ,
Երկիրը մաքրեց Լենինը։

200. ԼԵՆԻՆԻ ԵՐԳԸ

Լսեցինք Լենինի անունը.—
Շինեց քասիբ-քուսուբի տունը.
Կտրվեց բուրժուվանի քունը,
Անունիտ մատաղ, Լենին ջա՛ն։

Մոսկովից ծաքեց մեկ արև,
Սաղ աշխարհին տվեց պարև,
Կույակի օրը տառավ սև
Քո գալըտ պարի, Լենին ջա՛ն։

Եփ Կովկաս խասավ քո լուրը,
Տաշնակը թափավ սև ջուրը,
Փախնք, էլ ձեր պանը դուր ի,
Կալըտ բարի, ջա՛ն, Լենին ջա՛ն։

Օրդուն էկավ Դիլիջանից,
Մավզերիստներ ճղին Հայաստանից,
Պոծանք տաշնակի նման գազանից,
Մնացինք էլման, Լենին ջա՛ն։

Տաշնակը փախավ Ջանգազուր,
Կասեն նժդեն շատ ի տխուր,
Ժողվեց ուր զորք, փախավ դըխ Արազի ջուր,
Եփ կարմիրքեր խասան, Լենին ջա՛ն։

Վա՛յ ձե գնալ ըլնի, գալ չըլնի,
Քո ձե մե խող իղբալ չըլնի,
Տաշնակ փախավ էլ գալ չըլնի,
Հայաստան փրկիր Լենին ջա՛ն։

Տաշնակներ փախան դըխ Թարվիզ,
Խմբապետաց կոտրվավ վիզ,
Երկրից կարվավ էնոնց Թոզն ու իզ,
Ջումաթ մնաց քև, Լենին ջա՛ն։

201. ԱՐԵՎԵԼՔ, ԱՐԵՎՄՈՒՏՔ...

Արևելք, արևմուտք, հյուսիս և հարավ
Դաշեցին, բանեցին, հարուստը տարավ,
Վա՛յ լըմըն տարավ, ա՛խ յաման տարավ։

Հողը, ջուրը մալը մուլքը, հարուստը տիրեց,
Ոսկին ու արծաթը իր տակը արեց,
Վա՛յ լըմըն արեց, ա՛խ յաման արեց։

Հարուստը կաշառում՝ ուժիդ, դատավոր,
Ուր ինքն է դող, աղքատն է մնդավոր,
Վա՜յ լըմըն մնդավոր, ա՜խ յաման մնդավոր։

Սկի պես կը հոսեր, արուն ու թանաք,
Աշխարհն էր մի դմակ, հարուստը դանակ.
Վա՜յ լըմըն դանակ, ա՜խ յաման դանակ։

Անցան շատ տարիներ, անցավ ժամանակ,
Լենինի ձայնն էկավ ախբատի քոմագ։

Ձենն էկավ Լենինի, ուր ձենին դուբըան,
Ուրախացավ ախբատ, ախրից դուբըան։

Լենինի անունով օրդու կապնցին,
Բուրժուայի գլխին կրակ թափեցին.
Դենեկին, վրանգիլ, ֆրանկ, ինկլիզը
Բոլշևիկն ամենի կարից վիղը։
Լենին երկիրը ամբողջ առավ,
Ով որ մնդ չէր ուզում, արանքից թռավ։

202. ԼԵՆԻՆԻ ԵՐԳԸ

Մեղ մխիթարից քու անըմը,
Ջքավորի պաշտպան Լենին,
Անջախ դուխից աշկ պայինք,
Տու խեղճի պահապան, Լենին։

Համփի ծեռից քասըբը խեղճ.
Մագար օր, արև ունե՞ր, հեչ.
Քցիր մեղի լեն օրվա մեչ,
Խեղճի պաշտպան դու ջա՜ն Լենին։

Ադալաթ ա քու ամեն դատը,
Աշխարհս չկա քու հատը,
Քոռանա ով ուզի վատը,
Նաշարի պաշտպան, Լենին ջա՜ն։

Անըմբռա լսել ենք վաղուց,
Ըսպասում ենք էսօր էրուց,
Դորնսի խետ մեր աշկը լուս,
Խնդճի, նաշարի տեր, Լենին։

Ջորքը էլավ Արա լեռը,
Մեր թևերից ինգավ բեռը.
Լացնց շուն տաշնակի մերը,
Անումիտ ղուրբան Լենին ջա՛ն։

Խաբարը էկավ Ալագաղ,
Մուրադը փախավ վազի-վազ,
Լեզուն թալեց տաս էրկու գաղ,
Դուշմանտ փախավ, ջա՛ն Լենին։

Փետրվարին ճամփեն բուք էր,
Դաշնակ կուզեր մեղի ուտեր,
Խաբար բերին բալշևիկ կուգեր,
Էլի հախթիր տու ջա՛ն Լենին։

Մեր կործը շակնց ապրիլին,
Խաբար տարեք շուն կապրելին,
Սուքը պռնեց Մուքոյի էլին,
Ջորքտ հախտնց մեր քաջ Լենին։

Մաղլում ու խնդճ խոսքս արթար,
Ափսոս չիտեմ կրել-կարթալ,
Մինչ ի մահս, ումր ու աջալ,
Կովեմ քեզի, մեր մեծ Լենին։

203. ԿԵՑՑԵ ԼԵՆԻՆԸ–ԼԵՆԻՆԸ

Լենինի բարձր կանունը
Ամեն տեղ մեծ ա անունը,
Քանդեց Նիկոլի չար տունը,
Կեցցե Լենինը-Լենինը։

Բանվորներին հեղափոխեց.
Ձենք ու կազեթ տեղափոխեց,

Բուրժուների կարգը փոխեց,
Կեցցե Լենինը-Լենինը։

Լենինը հասավ կարմիր վագոն
Պոկից Կերենսկու պագոն,
Բերից մեզ ճշմարիտ զակոն,
Կեցցե Լենինը-Լենինը։

Լենինի ձեռքով միացանք,
Ամեն բանով մենք լիացանք,
Բոլոր ազգեր ախպերացանք,
Կեցցե Լենինը-Լենինը։

204. ԼԵՆԸՆՈՒ ԽԱՂ

Լենի էկավ ինչքա պազե,
վա՛յ լե, լե, լե, լե,
Մե ազաաեց շատ սթամե
վա՛յ լո, լո, լո, լո։

Լենի որ կա՝ մեկ թավատ էր,
վա՛յ լե, լե, լե, լե,
Լենու կոռծեր ադալաթ էր
վա՛յ լո, լո, լո, լո։

Լենու արած շատ իրավ էր,
վա՛յ լե, լե, լե, լե.
Լենու կոռծեր հախշարք չավ էր,
վա՛յ լո, լո, լո, լո։

Լենու դորք էր կարմիր պանակ,
վա՛յ լե, լե, լե, լե.
Քոմադ ին ամմեն ժամանակ
վա՛յ լո, լո, լո, լո։

Լենու շնուխք պիրեց մեզի,
վա՛յ լե, լե, լե, լե.
Լենու պիրած մե կոլխոզ ի,
վա՛յ լո, լո, լո, լո։

Արժի Հախշրի-դույնի մալին,
վա՛յ լե, լե, լե, լե.
Լենու պիրած՝ Շիրկանալ ի,
վա՛յ լո, լո, լո, լո։

Լենու դուշման ի Տրուսկին,
վա՛յ լե, լե, լե, լե.
Վիրուց, փախավ սաղ մե ոսկին,
վա՛յ լո, լո, լո, լո։

205. ՍԱՎԵՏԻ Լե–Լե

Ղուզիդաղը էկավ ձունը,
Կեցցե Լենինի անունը,
Յար, յա՛ր, էլու յա՛ր,
Թե՛լու յա՛ր, յա՛ր անուշ։

Սարի վրա շինենք շինքը,
Կեցցե Լենինի օրենքը,
Յար, յա՛ր, է՛լու յա՛ր,
Թե՛լու յար, յա՛ր անուշ։

Ամեն արի, էլավ թողը
Կեցցե Լենինի կոլխողը.
Յար, յա՛ր, է՛լու յար,
Թե՛լու յար, յա՛ր անուշ։

Փոխվել ա աշխարք ալամը
Կեցցե Լենինի գալամը,
Յար, յա՛ր, է՛լու յար
Թե՛լու յար, յա՛ր անուշ։

Կարմիր տրոշակի գունը
Կեցցե Լենինի կոմունը,
Յար, յա՛ր, է՛լու յար,
Թե՛լու յար, յա՛ր անուշ։

Ջուր տարա, լվացի պուրթը,
Կեցցե Լենինի խորհուրդը,

Յար, յա՛ր, է՛լու յար,
Թե՛լու յար, յա՛ր անուշ։

Ճալից կըտրի, պերի՛ փետը,
Կեցցե Լենինի սավետը,
Յար, յա՛ր, է՛լու յար,
Թե՛լու յար, յա՛ր անուշ։

Երևանու պերին աղը
Ըլնեմ Լենինի մատաղը,
Յար, յա՛ր, է՛լու յար,
Թե՛լու յար, յա՛ր անուշ։

206. ԼԵՆԻՆԻ ՋԱՆԻՄԱՆ

Ըստուկի վըրի գինին,
Բոյիդ մեռնիմ.
Կեցցե մեր ընկեր Լենին,
Յարն անուշ։

Ըստուկի վըրի մանած,
Ջանիդ մեռնիմ
Խոսենք Լենինի կենաց,
Յարն անուշ։

Թիլվիսա բերին դանակ,
Հոգուդ մեռնիմ,
Կեցցե մեր կարմիր բանակ,
Յարն անուշ։

Կլոր արաբ գարի յա,
Բոյիդ մեռնիմ,
Կոմսոմոլի տարի յա
Յարն անուշ։

Ջեբիցս հանի նագան,
Բոյիդ մեռնիմ,
Փշաներ դաշնակցական
Յարն անուշ։

Կլոր արտը կարեկ ա,
Ջանիդ մեռնիմ,
Կոմունիստի օրենք ա,
Յարն անուշ։

207. ԼԵՆԻՆՆ ԷՐ

— Ո՞վ էր մեզի լույս բերողը,—
Ազատության հիմք դնողը,
Լենինն էր, Լենինն էր։

— Ո՞վ էր բացեց դռները գոց.—
Գյուղում հիմնեց խրճիթ, դպրոց,
Լենինն էր, Լենինն էր։

— Ո՞վ էր աքսորում կյանք մաշող.—
Աշխատավոր հոգսը քաշող,
Լենինն էր, Լենինն էր։

— Ո՞վ էր մեռավ, տվեց մեզ ցավ,—
Քանց արեգակ էկավ, անցավ
Լենինն էր, Լենինն էր։

— Ո՞վ էր մեր սրտում անմահ մնաց,
Աշխարհ էկավ ու չգնաց,
Լենինն էր Լենինն էր։

208. ԼԵՆԻՆԻ ՄԱՀԸ

Քանը չոռսի
Իրիկվա կուռը,
Մեր կեղը հասավ
Սև մահի լուրը։

Ցրիշը խաբար
Բերավ շրջանից,
Բալքի չը խերվի
Իր ազիզ ջանից։

Սև տրոշակը
Քաշեց պճինգը,
Սև սուքը ընկավ,
Սաղ կեղի մնչը։

Լենինը մեռավ,
Ո՞վ ա մեր տերը.
Լաց ու կուց արին
Սաղ ինգերնները։

Կեղի հարուստներ,
Տերտեր, տիրացու,
Շատ ուրախացան
Էնոնք չը լացին։

Ջորս ծայր աշխարհին
Տխրեցին, լացին,
Լենինի մահը
Շատեր սրբացին։

209. ԼԵՆԻՆԻ ՄԱՀԸ

Իրիկվա թարաֆ էր,
Վերեն ձոն կուգար,
Վերեն ձոն կուգար,
Ռադիոն կխոսեր,
Տխուր լուր կուտար,
Տխուր լուր կուտար։

Լենինը մեռավ,
Լենինը մեռավ,
Ամա՜ն, աստված ամա՜ն,
Էս ի՞նչ բան եղավ։

Լենինին բերեցին,
Հասցրին Մոսկով,
Հասցրին Մոսկով,
Էկան ընկերները,
Կայնեցին շարքով,

Լենինը մեռավ,
Լենինը մեռավ,
Օ՜ֆ, ընկերներ մեզի
Մենձ վնաս եղավ։

Կարմիր բայրաղներին
Սևեր կապեցին,
Սևեր կապեցին,
Երկրներ իմացան,
Սուգ արին լացին,
Սուգ արին լացին։

Ամա՜ն տղեք, ամա՜ն...
Էս ինչ բան եղավ,
Մեր աղատիչ, փրկիչ,
Լենինը մեռավ։

Դամբարան շինելու
Տվին պատվերը,
Տվին պատվերը,
Երկրի ամեն կողմից
Ղրկեցին քարեր,
Ղրկեցին քարեր,

Լենինի դամբանի համար
Դամբանի համար։

Դամբանը շինին
Հրապարակում,
Հրապարակում,
Հանգստության, Լենին
Քո ոսկորներուն։

Լենին ջա՜ն, Լենին,
Լենին ջա՜ն, Լենին,
Բոլոր ժողովրդի,
Աղնիվ սիրելին։

Լենին դուս բերին
Շուշև կապու մեջ,
Շուշև կապու մեջ,
Ծքող ժողովրդին
Չկար թիվ ու վերջ,
Չկար թիվ ու վերջ։

Ա՜փսոս քեզ Լենին
Ա՜փսոս քեզ Լենին,
Բանվորի գեղացու
Ազնիվ Սիրելին։

Երբ Լենին տարան
Դրին դամբարան,
Դրին դամբարան
Մաշինեք, տրամվա
Իսկույն դադարան,
Իսկույն դադարան։

Լենին քեզ համար,
Լենին քեզ համար,
Լենին մեր դարդերի
Բժիշկ, դեղ ու ճար։

Բանվորի, գյուղացու
Առաջնորդն է նա,
Առաջնորդն է նա,
Գործով մեր սրտերում
Անմահ կմնա,
Անմահ կմնա։

Լենի՜ն ջան, Լենի՜ն,
Լենի՜ն ջան, Լենի՜ն,
Բոլոր ժողովրդի
Ազնիվ սիրելին։

210. ՋԱՐԹԻՐ, ԼԵՆԻՆ...

Սարեր, ձորեր ծաղկով լցվան,
Զարթի՛ր տես, սիրելի Լենին,
Փակած ճամփաները բացվան,
Զարթի՛ր, ո՛վ պաշտելի Լենին
Զարթի՛ր, տես քո զավակներին։

Լեռ քարերին վարդ է բուս է,
Բլբուլը քաղցր կխոսե.
Մեծ Լենինի երգը կըսե,
Զարթի՛ր, ո՛վ մեր անմահ Լենին,
Զարթի՛ր, տես քո զավակներին։

Դուբան դաշտը բաղ է դառել,
Պտուղ տվող թաղ է դառել,
Լաց, շիվանը խաղ է դառել,
Զարթի՛ր, ո՛վ սիրելի Լենին,
Զարթի՛ր, տես քո զավակներին։

Քաղաք ու գյուղ զարդացել են,
Օրենքներդ ամրացել են,
Զավակներդ մեծացել են,
Զարթի՛ր, ով պաշտելի Լենին,
Զարթի՛ր, տես քո զավակներին։

211. ԼԵՆԻՆԻ ԵՐԳԸ

Լենինը մի լուս էր, եկավ ու անցավ,
Իրա խոսքն ու կոռծը աշխարքը լցվավ,
Քանց լուսավոր աստղ փայլեց ու անցավ,
Ափսո՛ս քեզի, ափսո՛ս, աննման Լենին։

Արևելք, արևմուտք, հարավ ու հյուսիս,
Ամեն տեղ տարածվեց քո վառ փառքի լիս,
Տու էս մեծ մարքարե, փրկող ամենքիս,
Ափսո՛ս, հազար ափսո՛ս, աննման Լենին։

Տու ամբողջ երկրի փոխեցիր կարքը,
Շուռ տվիր կլխիվեր, սահմանիր վարքը.
Աշխարհ աշխար հասավ քո անվան փառքը,
Ափսո՛ս, որ մահացար, մեր բնկեր Լենին։

Թշնամի ազգերը բնկեր շինեցիր,
Զրկված պանվորներին առաջ քաշեցիր,
Խեղճ, ֆաղիր գեղացու հոգին փրկեցիր,
Հազար ափսո՛ս մեռար, դու մեր լավ Լենին։

212. ԼԵՆԻՆԻ ԵՐԳԸ

Կեցցե Լենինի ջանքը,
Իզուր չանցավ աշխատանքը.
Փրկեց բանվորի կյանքը,
Հիշենք Լենինը, Լենինը։

Բոլոր աշխարհ ծրագրեց,
Բանվորներին միացրեց,
Տեքստիլ գործարան հիմնեց,
Հիշենք Լենինը, Լենինը։

Շիրկանալի նվաճումը,
Քանդեց բուրժուայի տունը,
Կարեց աչքերիցը քունը,
Հիշենք Լենինը, Լենինը։

Զոր տեղերը կանաչեցրեց,
Եվրոպային ամաչեցրեց,
Տոմն ու տեղներս լցրեց
Հիշենք Լենինը, Լենինը։

Ամենայն տեսակ գործարան
Հիմնեց ոխչ երկրում համայն,
Բանվորին չթողեց անբան,
Հիշենք Լենինը, Լենինը։

Շիրկանալը խլղին փրկեց
Ամենայն գեղեր ջուր խրկեց,

Ջարկամ բուրժուային մրկեց,
Հիշենք Լենինը, Լենինը։

Բոլոր գեղեր դպրոցներ հիմնեց.
Մատաղ սերունդ մեջը լցրեց,
Տաստիրակեց, տուրս տվեց
Հիշենք, Լենինը, Լենինը։

Կոլխոզն էր մեզ պահողը,
Համայնական ջուրը, հողը,
Էլ չկա մեզ, կողոպտողը,
Հիշենք Լենինը, Լենինը։

213. ՉԻ ԾՆՎԵԼ ՔԵԶ ՆՄԱՆ

Հեռատես գիտնական,
Թանկագին Լենին,
Չի ծնվել քեզ նման
Արևի տակին։

Դու ակն աղբյուրի.
Կենսատու ջուր ես,
Հավետ անմահական
Արևի հուր ես։

Մարդկության հզոր
Դու մեծ օրինակ,
Մնացիր մեզ համար
Քարի հիշատակ։

Քո մեծ գործերում
Կենդանի էս, կաս.
Լենին մեր սրտերում
Անմահ կմնաս։

214. ՀՈՂԸ ՏՎԻՐ ԴՈՒ ԳԵՂԱՑՈՒՆ

Հողը տվիր դու գեղացուն,
Իսկ պանվորին աղատություն,

Լույսը ճիրա վըր ըս հոգուն
Զարթնի՛ր, Լենին, չարդ տանեմ։

Թե աշխարքում մահ ու մեռ կա,
Քեզպես մեռնողը անմահ ա,
Էդ հըմենին գործդ վկա,
Զարթնի՛ր, Լենին, քեզ մահ չկա։

Դու ուժով իր ժողովուրդով,
Ժողովրդից ուժեղ չկա,
Զարթնի՛ր, ումուտ, արև Լենին,
Քեզնից լուսով արև չկա։

215. ՌՈՒԲԵՆԻ ԵՐԳԸ

Թուխերը կապեցին էյլարա դուղը,
Էդ յոթ քշեր է մացեր ևնք դուսը։

Բալշևիկն էկավ էյլարա փուշտը
Մադաթ, երամ, հասիր Ռուբենի կուշտը։

Իրեք կողմից եկավ քաֆըր դաշնակը,
Կարկուտի պես մաղվից կարմիր գնդակը։

Քաֆր գամբեղցիկ, օղնության հասեք,
Մեր ուժը պակաս է, բանի սպասեք։

Կարմիր պարտիզանի թիվը շատ քիչ էր
Զորս կողմը բռնեցին էլ ճարը ի՞նչ է։

Ռուբենը կանչեց.—Տղի՛րք, մի վախեք,
Կռվեք, մի՛ հանձնվեք, և ոչ էլ փախեք։

Դուշմանը կատաղած ելավ մեշիցը
Գուլլեն կպավ Ռուբենի դոշիցը։

Էյլարա դաշտերը ձուն է ու դուրան
Սար ու քար էլ լացին Ռուբենի վրան։

Սև չիվարը էկավ Սանամի հալին
Սպանվելու լուրը բերին իր բալի։

Սևլը լծին, սպանվածին բերեցին,
Խեղճ Սանամի գլխին սևեր կապեցին։

Բերին, գրին Ռուբենի դիակը,
Դոշին էր առել քաֆր գնդակը։

Լացե՛ք, լացե՛ք դու ընկեր ու բարեկամ,
Ձեզի համար ես գնացի, էլ չկամ։

Քաջ ընկերներ, դուք իմ տեղը **բռնեցեք,**
Ձեր պարտիզան Ռուբենին հիշեցեք։

216. ՁԱԽՄԱԽՎԻՑ ԱՆՑԱՎ ՁՈՐՔԸ

Ձախմախլվից անցավ զորքը,
Ջնջվեց դաշնակի զորքը,
Անցավ, մտավ գետնի խորքը,
Կարմիր բանակ, բարով եկար։

Ջաղացի մոտ բռնին դիրքը,
Կամանդիրն էր մեծը՝ ինքը,
Մեզի փրկեց կարմիր զինքը,
Կարմիր բանակ, բարով եկար։

Ջարխեջից եկավ քոմագը,
Անցան մեր զորքի քամագը
Դաշնակ փախավ, մտավ ծակը,
Կարմիր բանակ, բարով եկար։

Իջևանից հանին դրոշը,
Եկավ մեծավորի խոշը,
Դաշնակների բանը բոշ ա,
Կարմիր բանակ, բարով եկար։

Խաբար գնաց Դիլիջանը,
Սաղ մնա բալշևիկի ջանը,

Կարվավ Սևպուհի ջանը
Կարմիր բանակ, բարով եկար։

217 ԱՂՍՏԱՖԱՅԻՑ ԲԵՐԵՑԻՆ ԼՈՒՐԸ

Աղստաֆայից բերեցին լուրը,
Սևպուհը ասաց՝ մեր բանը զուր է,
Արամը կանչեց՝ Մուրադը ուր է,
Փախի՛ր, ա՛յ դաշնակ, բանակը էկավ,
Քո վիզը կտրող դանակը էկավ։

Ուզուն-Քալայից բարծեցին ավտոն,
Պետը մոռացավ հաքնել յուր պալտոն,
Շուտ արա, ասավ—ձին քաշիր, Անտոն,
Փախի՛ր, ա՛յ դաշնակ, կարմիրներն էկան,
Փախի՛ր, հեռացիր, երկրի տերն էկավ։

Արարատովին տվին դըպեժը,
Ի՞նչ պետք է անի էն սարսաղ գիժը,
Մինիստրների խառնվեց կաժը,
Փախի՛ր, ա՛յ դաշնակ, բալշևիկն էկավ,
Փախի՛ր, հեռացի՛ր, երկրի տերն էկավ։

Խատիսով ազան հասավ մինչ Բաթում,
Շալակած ոսկին մեկ էլ իր խաթուն,
Պարախոդ տվեք աստծու խաթրուն։
Փախի՛ր, ա՛յ դաշնակ, բալշևիկն էկավ,
Բալշևիկն էկավ, քոմադով էկավ։

218. ՕՐԴՈՒՆ ԷԿԱՎ ՍԱՐԻ ՓԵՇԵՆ

Օրդուն էկավ սարի փեշեն,
Կարմիրները լցվան մոշեն,
Գուլլեն առավ Մուրադի դոշեն,
Փախի՛ր դաշնակ, բալշևիկն էկավ,
Քո սև ը սուք օրերն էկան։

Օրդուն հասավ ճայի ձորը,
Էկավ դաշնակի սև օրը,

Գուլլեն մտավ Աստյի փորը.
Փախի՛ր դաշնակ, բալշևիկն էկավ,
Թալան-թուլանիդ վերջն էկավ։

Օրդուն հասավ Համբարակը,
Դաշնակի ջանն ընկավ կրակը,
Ցուրգունով կրին ջամդակը.
Փախի՛ր դաշնակ, բալշևիկն էկավ,
Էկավ քո գրողը, էկավ։

Դաշնակ փախավ սարով-ձորով,
Փախնողին չես պահի զոռով,
Քաղաք հասան քաղցած փորով.
Մավըղներներ ծախին կերան,
Շատախցիներ, լոթոած բերան։

Թալաննցին մալականներ,
Տարան տալեքներ, լագաններ,
Դաշնակ հաշխարհի ապականն էր
Դե՛ հա փախեք բալշևիկն էկավ,
Էկավ, ձեր սև գրողն էկավ։

Խատխտովն հասավ Փոլիս,
Փոկից փախած շուն ա խալիս,
Քամկից մեկելներն են գալիս,
Հայդե՛ դաշնակ, փախիր գնա.
Էլ հետ չգա՛ս, էնտեղ մնա։

219. ԿՈՒՎ ԵԼԱՎ...

Կուվ ելավ Դավա-բոյին,
Ինչքան անմեղ էնտեղ զոհին,
Գերի ընկող շատ դժգոհ ին,
Ամա՛ն մերիկ, ինչ զուլում էր։

Բալշևիկներ չահել-չիվան,
Աստված անի Սեփանի դիվան,
Ջեռեր, ոտներ կապեց չվան,
Ամա՛ն, հասեք, ինչ զուլում էր։

Խմբապետներ անխիղճ անաստված,
Չէ՛, քար չարեց արցունք ը լաց։
Թամմըզ պալից թափեցին ցած,
Ա՛խ, վա՛խ, մերիկ, ինչ զուլում էր։

Մընացողին բըրթին զուլով,
Բըրթվողին թալին զոռով,
Ջահել, բուդալա, մուրազով,
Ամա՛ն ասուված, ինչ զուլում էր։

Լաց-աղաղակ բըռնեց բախչեք,
Ա՛խ, մի ըշկեք, թողեք փախչեք,
Լաշով լցվեց թար ու թախչեք,
Ամա՛ն, ինչ անխիղճ զուլում էր։

Սարեր, քարեր ոխպացին,
Քանի մերեր նստան, լացին.
Ա՛խ, մեր բալեք ո՛ւր գնացին...
Յամա՛ն, շատ անխիղճ զուլում էր։

Թե ջուղաբը լենինին գընա,
Խմբապետներ, ձեզ չի մընա.
Բոլշևիկ հայիֆ կը հանա,
Ամա՛ն, շատ սիթամ զուլում էր։

220. ՂՈՒԿԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Թշնամու ձեռքով
Նըհատակվեցիր,
Անվեհեր մարտիկ
Ղուկաս Ղուկասյան։

Վեհ գաղափարի,
Ազնիվ մարտընչող,
Խիզախ, քաջարի
Ընկեր Ղուկասյան։

Քո ճանապարհիդ
Դու չը շեղվեցիր.

Հանդուգն, կործանյա,
Ազնիվ Ղուկասյան։

Բայց նվնդ ու նամարդ
Սատր թշնամին,
Վորոկայթ լարեց,
Ընկեր Ղուկասյան։

Գործըդ ու անունըդ
Կապրի հավիտյան,
Կարմիր նահատակ
Անմահ Ղուկասյան։

221. ԳՆԴԱԿԱՀԱՐՎՈՂ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

Նշանն շեշտակի, կրակեցեք դուք անահ,
Անհետ թող ցնդի մեր աչյունը.
Կեցցե՛ն խորհրդները՝ փարոս լուսարձակ
Գալիք վառ կյանքին մեր ողջույնը։

222 ԱՌԱՋ ԵՆՔ ԳՆՈՒՄ, ԱՌԱՋ

Առաջ ենք գնում, առա՛ջ,
Թշնամուն տրորում, ջարդում,
Ու դիրքերը նրա
Գրոհում ենք, գրավում։

Գյուղերում հեղկոմ ենք ընտրում
Խլում հողը կուլակից,
Տալիս ենք աղքատ գյուղացուն
Ու առաջ գնում նորից։

223. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻ ԱՄԻՍ ԿԱ

Հայաստանում մի ամիս կա
Կարմիր մայիսը,
Հայաստանում մի Ավիս կա,
Կոլոտ Ավիսը։

Մենք դարձել ենք կրասնոարմեից
Զևսանի բոլշևիկ,
Հե՛յ, վախեցիր կարմիր աստղից
Դաշնակ մաշենիկ։

Մայիս ամսին կռվի ելանք
Դաշնակը կատղեց,
Մեր սարերում ալան-թալան
Կարծում էր հաղթեց։

224. ԱՆՈՒՇ ՅԱՐՈ ՋԱՆ

Ո՛վ է տեսել էսպես լավ բան,
Անուշ յարո ջան,
Հայաստանը խորհրդային,
Անուշ յարո ջան։

Վերջը տրվեց չար դաշնակին,
Անուշ յարո ջան,
Արև ծագեց Հայաստանին,
Անուշ յարո ջան։

225. ՈՎ ՉԻ ՏԵՍԵԼ ԱԶԱՏ ԵՐԿԻՐ

Ով չի տեսել ազատ երկիր
Թող գա Հայաստան.
Մատզերիստին ազատ մեյդան
Իսկ մեզ կախաղան։

Խատիսովը աշխարհ չափեց
Մեր հողը ծախեց,
Միամիտների աչքը կապեց
Միթամ ազատեց։

Գնաս բարով չգաս տարով
Պարոն Խատիսյան,
Էս երկիրը մերն է հիմի
Մեզ էլ կմնա։

226. ՈՎ ՉԻ ՏԵՍԵԼ ԱԶԱՏ ԵՐԿԻՐ

Ով չի տեսել ազատ երկիր
Թող գա Հայաստան,
Մաուզերիստին ազատություն
Իսկ մեզ կախաղան։

Մենք գրվեցինք կրասնոարմեեց,
Ջեստնի բոլշևիկ,
Դե՛, սարսափիր հրես գալիս ենք
Դաշնակ մաշենիկ։

Գնաս բարով չկաս տարուլ
Պարոն Խատիսյան,
Էս երկիրը մերն է հիմի
Մեզ էլ կմնա։

227. ՎԱԼՇՈՒՐԻԿՆԵՐ

Վերուց Հիտլե զուրք-զուրապիտ
Հաշխրը կիս էրից վիրան
Էրից վիրան, նոր հիտ տառցավ
Վար կյա Սավիթ երկրը վրան.
Թուվիմը պիս անըկ հառիչ
Ուզից ըզմի կավաթ փուրցի.
Դորիս տառնա թախպիր էնի,
Դորիս տառնա դրես ուր կուրծին...
Իթալ արին ըզմի սինոռ
Կանչից էսաց.—Ա՛յ վալշուրիկներ,
Հաչկերնիտ պացեք, թախմին երեք,
Տիսեք ծի վրա վու՞վի կյալի,
Աղեք կիտի՞ք թն իս վուվն իմ,
Իս Հիտլեն իմ արինական,
Իս տը զարկիմ զաֆտիմ հաշխար,
Էնիմ հուքմաթ ֆաշիկական.
Իս տը քանդիմ աշխար պիճուն,
Քանդիմ ուր տիղ կանիփ ցանիմ,
Մեկիլ ասկիր հինչքան վար կեն,
Ալման ցեղին հեսիր անեմ...

2

Վալշուրիկներ տառցան ջրվաբ իտան,
Էսին., Է՛յ տու ցանցատ պըստ.
Թա տու վալնիս ասքան տարի
Քյու արարմունք մինք լավ տիսանք.
Տու քընց լիշակիր առամճիլմ,
Իկար, կերթաս սամ ելու պիս,
Մինակ քընց խոռ, վատ-զուլումքար,
Հունը--հավիտեն կհիշվիս...
Աման թը վար ճառյաթ էնիս
Միր Սավիթ էրկիրը վրա կյա՞ս,
Քիթը-մռութի կճառթինք,
Ատ միկ պան տը ադիկ հիմնաս...

3

Հիտլե ֆանթլի ըր քընց թուվիմ,
Վուր տիսավ մարախ չենիր հիչ,
Տառցավ անիկ տախ վալշուրիկներ,
Շուղում ժպտից, ուր խուսք փուվիից,
Էսաց.—վոլա վալշուրիկներ,
Իս խանաք ինք էրի խըտ ծի,
Տուք արխայինն մացիք ծի տեղ,
Խանկիստ ապրիք, խանկիստ պառկիք,
Իս ծի մոտեն տավա չունիմ,
Խավատացիք ինծի ախպիր,
Իմ ծիծվանք խատ Անկլոզնի,
Խատ Ֆրանկսըզ, խատ Ամըլքյան...
Ատ վար լսին վալշուրիկներ
Կանչին ուրանց մարթերաց
Էսին.—լատ մուղաթ կեցիք,
Վոն կուռծ ունի պատյը խտ,
Անիկ ուսուլով տը պախը,
Կյուշտուկ, քամակ ուր ծիռի փիտ...

4

Ըղուրթ վար վատեմ չիր անցե կյախ,
Հիտլե կյաղտուկ քեշից հոռտուն

Քյեշից կիշրով սինուռ հանցավ,
Սինուռ հանցավ, քշից միր տին,
Քշից միր տին, առին ծիծվանք,
Միր զուրաց խիստ զիլ չանգեչանգ,
Պաշլայիցին թունդ մարաքյեր,
Միկ կողմից մինք, միկ կողմից նանք...

5

Խապար կնաց վալշուրիկներաց,
Ասին ապա ծի տուն ակուլի,
Հիտլե կոշուն-հասկյար քյեշից,
Սինոռ հանցավ զարկեց ըզմի...
— Վա՜յ տու նամառա... էսին վալշուրիկները,
Էսին կաղափլանմիշ իլան,
Կանչին ուրինց յուրալանքիր,
Կանչին պուճուն սարասկյարքիր.
Կանչին էսին, ըզմի տուշման տողրի զոռնի
Ապա ինե մի վախենաք.
Ատալաթ մի կողմնի, չխո,
Իտիվ-հառճիվ մինք կհախտինք...
Կանչին էսին.—Սավիթական
Միր քաչ վարշալներ թըխ կյան,
Կանչին էսին,—Սավիթական
Միր կահրամաններ թըխ կյան.
Կանչին էսին,—Սավիթական
Միր յուրալաններ թըխ կյան.
Կանչին էսին,—Սավիթական
Փափուռ-բեկինիր թըխ կյան.
Կանչին էսին,—Սավիթական
Խրկինք թունուղնիր թըխ կյան...
Թըխ կյան կարմիր հասկյարն առնին,
Հառնին սինուռը Սավիթի
Թըխ կյան փափուռ-հասկյարն առնին
Լուղ տան ծովիրը Սավիթի
Թըխ կյան այլապրանքտիր առնին,
Թըռնին ճեկատը Սավիթի...
Խաստին զարկին ըզմի տուշման,
Վար իկիր քընց հարամի-կյուղ,

Կուզին զարկին ըզմի կուտրին,
Կուզին զավթին Սավիթը խուղ։

6

Վալշուրիկնիր վար փուրմ էրին,
Սավիթ երկիրը չուրս ունխաբեն,
Ջուրք վը ասկյար, կնցած հասպար,
Առած սիլախ, թափին էկին.
Թափին էկին հալբա հալուվ,
Ֆաշիկտիրաց բրսակ տալով,
Թափին էկին, սրտիր խուցված,
Քընց Թորվան կնց պոցը, ալավ.
Էկին վարշալքիրը բաբուռ,
Քընց հարծիվ, էկին, հի՜նչ էկին,
Էկին յուրալանքիրը վառ,
Կազմ լոիվ, էկին, հի՜նչ էկին.
Էկին փափուռ-բնկիններ զառ,
Անհաշիվ, էկին, հի՜նչ էկին.
Էկին այլապրանչիքը փառ,
Մունջ անթիվ, էկին, հի՜նչ էկին.
Էկին կարմիր-հասկյարներ թառ,
Դրխ կըռիվ, էկին, հի՜նչ էկին.
Էկին, էկին, թիվ անխամար,
Ջառը-զարզանդ ռաշիդ, չաթան,
Էկին ամինք սիրտ մեկ առած,
Բահրավիլու ըզմի վաթան...

7

Հիտլե անցավ ըզմի սինուռ
Կանչից ուրին զուրք-զուրապիտ,
Կանչից էսաց.—Հինչըխ էսած իմ,
Ծե տուպարա նորից կամիմ,
Լավ հիմեցեք վար մինք ալման ինք,
Ալման ֆաշիկ արինական,
Մինք Թոռուն ինք, ըռուսնիր չինք,
Մինք տը ապրինք, ըռուս մեռնը.
Ալման ֆաշիկ միլիթից իզատ,
Միկիլ հասկիր տը կուտուրվին.

Ան ֆուկարակաիր ալ վար կէն,
Տը հաշխատին ըզմի պախին...
Կուտուրըցե՛ք պուլուր հասկիր
Հինչքան վար կէն վեր հաշխըրին,
Կուտուրըցե՛ք վար փուչ ըլնին,
էրկիր մնա ֆաշխատերաց
Կուտուրըցե՛ք ըզմին հասկիր,
Ալման ֆաշիքից իլաղա,
Կուտուրըցե՛ք ահիլ, ճրհել,
Կնիկ, հախճիկ, ծծկեր տըղա...
Կուտուրըցե՛ք, թականըցեք,
Վառեք, քանդեք էրեք վիրան
Թուղ վալշուրիկ հաշխըը միչ,
Քյար չը մընա քյարի վրա...

8

Սապիս կյաղտուկ մունչ պեխապար,
Խոռ Հիտլե հոռուան մաչ կիշեր,
Ջարկեց ըզմի սինուռ քշից,
Հանցավ հազատ վաթանը մեր
Հանցան հազատ վաթանը մեր,
Քընց կիլերու բորը-բոլուք,
Հանցան, հազատ վաթանը մեր,
Քընց չաքուրկյու էլը-էլամ.
Հանցան առատ վաթանը մեր,
Քընց խուզիրու նարը-նախիր.
Հանցան հարցակ վաթանը մեր,
Քընց ուցիրու մառը-մշուշ...
Հանցան, քյաղաք իկավ հառճիվ.
Քանդին էրին դարբա-դաղին,
Շինը-ավան իկավ հառճիվ,
Թալին էրին լութը-արյան,
Կիղը-կուլխուզ իկավ հառճիվ,
Ճառթին, փշրին, կիրան, տարին,
Մարթը-մադաթ իկավ հառճիվ,
Ջարկին, կորին, մուրթին, կախին...
Կախին մարթիր, մուրթին մանկտիք,
Ռուսվա էրին հախչիկ-կնկտիք,

Վոն խըղիցին, կուտուրիցին,
Վոն էլ հեսիր քշին ամինք...
Միրը-պառավ, մատղաշ, ծծկեր,
Լցին փուսիր թաղին սաղ-սաղ.
Մունթիր լցին մանչ վարժատուն,
Փակին պուլուր, վառին սաղ-սաղ,
Հախչիկ, կնկտիք էրին բիսառ,
Կրծքնիր պատռին, սպանին սաղ-սաղ,
Ծանրած միրիր փուրիր ճղին,
Մանչքը խանին, մուրթին սաղ-սաղ...
Թալին ըզմի ազատ էրկիր,
Իլած-չիլած տարին պիթուն.
Թալլին խարկին ուրինց էրկիր,
Հինչ վար տիսան, հինչ վար կնդան...
Միր շին էրկիր քընց կանանչ հառտ,
Ալման-ֆաշիկ, քընց մառ մուրխա,
Վրա թափին, կարին լափին,
Միլը ծիլվանք, մուրը-մուրխա,
Միր շին էրկիր քընց պաղչա-պաղ,
Ալման ֆաշիկ քընց թիլ-թրթուռ,
Միր շին էրկիր քընց զառ իքիմ,
Ալման ֆաշիկ քընց բաղ-քյարգյաղ,
Վրա թափին էրին վերան,
Տակնը վրա, բարը-բարբաղ...

9

Հիտլե ուրին սատանական-սանթանաթը
Մունջ հերիք չիր.
Ուրին զավթած տաս հյուքմաթի
Ասքյար-լաշքյարն էլ խիտն ի պեր.
Անունց անզավթ զառպը հառճիվ
Սար կտուղար, քյար կխալվիր,
Աման վալշուրիկներաց վոլա կասխ
Հիչ վեճն էլ չիր.
Անունք ուրանց հնար-հնճարով,
Անպիս խնարք կուրծիր էրին,
Վոր Ալմանաց հուտուն ճնջին,
Անունց կլխին պալա պիրին...

Ինչի՜ր էրին, ինչի՜ր էրին...
Վար թա ասինք հալամ-հալամ,
Սաղ ծուվիր տը լին մուրաքար,
Ուրմաննիրաց ծառիր՝ ղալամ...

10

Հիտլե տեսավ կարմիր-հասկյար—
Վոլա ուրին միճկ կը կուտրը.
Ամինք դևխեն կալմիշ էրած,
Ուր ղուրաց աման կը կըտրի.
Հարտամ ուրինք միկ հարատըմ տիղ
Վար կառաչնին աս երկրին միչ.
Ուրինց խաղար-խաղար ասկրաց
Լեշ կը կուխին կերթին հառիչ...
Պուլուր աթրաֆ չուլը ուրման—
քամակնիր ուրինց կիրիզման,
Ջուրս դևխնիր ծանր-տուման,
Իրինք նավալատ, անկյուման,
Ցիրիկ ղըզլ-հասկյարն իղան,
Էվարին՝ կարմիր փարթըղան.
Աս հինչ պան ի աստված աման,
Ո՞ն էր տիսե անցկամ թիֆան...
Անունք զարկին ֆրանքսըզ, նուրվիկ,
Հուլանտ, Պերղին, Պուլկար,
Անունք տիրըն հաշխրը կիսին,
Մունջ անցկում պան հիչ չտիսին...
Հիտլե ատունք վար թախմընից,
Կատղավ ծամից ուրին միս.
Կանչից ուրին սարասկյարքիր,
Կանչից անունց ուր մուտ էսաց.
Էսաց.—լաո աս ծիվ թուղիք,
Թա չը ռուսնիր մի քուք կտրին,
Թը վար,—էսաց.—կուղեք հախտիլ,
Սավիթ աշխար ծնկի պիրիլ,
Պետքի առաջ անունց են ճուխտ,
Բաշ քյաղաքնիր զարկիլ, տիրիլ,
Ատունցմե միկ Մոսկուֆանի,

Պանվորքտիրաց լուս-հաղթության.
Միկիլ վոլա, ըՍտալինկրանթ,
Արիվիլքի տուռը-պիրան,
Ատ հիրկուսը վար տիրիցինք,
Կատանք չխո կափկազ կանցինինք
Անտիցն էլ Հինտ ու Յաման,
Սորա պուխուն տունչա-ուման...
Մընաց ըռուս վալշուրիկներ,
Նանց կըշինք Ուրալ, Սիպիր,
Թուղ անտիղ պաղիրու միշին,
Քաղցած-ծառավ մեռնըն-կուրչըն...
Դե, հան կիտամ ծև խրաման,
Հառնչ քնչնք Մուսկուֆա չան.
Կեծակը պիս վրա տվիք,
Վրա տըվիք զարկիք ցրվիք,
Քյար չխոնիք վերա քյարին
Բիխուն վալշուրիկ հաշխըրին...
Հինչ ֆաշիկ շատ մարթ ըսպանը,
Անըկ շատ էլ խաչ կստանա.
Հինչ ֆաշիկ շատ մանկունք մուրթը,
Անըկ էրկաթ խաչ կստանա.
Հինչ ֆաշիկ շատ կնկտիք բեսուռը,
Անըկ ճուչըթեն կստանա.
Հինչ ֆաշիկ շատ ահիլ կըտրը,
Անըկ մու շննլիկ կստանա...
Զարկիք, ցրվիք, կուտուրըցիք,
Ճառթիք, փշրիք մու վառիցիք,
Քյար չխողնիք վերա քյարին,
Պիխուն քումընըստ հաշխըրին...
Ահան սահաթ պիր ծիռ առած,
Իս ծի կիտամ վախտը-վատա.
Ջուր սահաթը ըռաստ ութըն,
Մասկուֆ քյաղաք վերցիք պիխուն.
Քյառսուն տաղյա ութըն վիրան,
Ըստալինկրռանթ էնինք վիրան.
Իտիվ ռաստ սահաթը տաս,
Զարկինք ընցինք զըպա Կափկազ,
Էն դխիցն էլ Հինդ ու Յաման,
Սորա պիխուն տունչա-ումանն

Հիալև քյաշնց գուրք-գուրապիտ,
Քշնց գախ Մասկուֆա վերեն,
Քշնց վերեն, հայ արից թա
Խըփիք, քանդիք, էրիք վերան...
Ատ ժամանակ վալշուրիկներ
Խնծան ծիանք ընկան հառիչ,
— Դե՛հ, միր իտվեն,—էսին,—տղիրք,
Մահ տուշմանին, հառիչ, հառիչ.
Էկին, էկին աչու դիխեն,
Զուրքիր էկին խազար-խազար.
Էկին, էկին ծախու դիխեն,
Թուփիր էկին խազար-խազար.
Էկին, էկին ցածի դեխեն,
Տանկիր էկին խազար-խազար,
Էկին, էկին վերի դեխեն,
Ալլապլանքտիր խազար-խազար.
Էն վար խասին ճակատ-ճակտի,
Դրը-դնգուցն իլավ իրկինք.
Էն վար խաուլին, ծինը ծուրից,
Տողտողացին իրկինք-կիտինք,
Աչեն կրակ, ծախեն թուբիր,
Ցածեն տանկիր, վերեն ռումբիր
Կրակ թափին գեհեննական,
Քընց սոթումու քարը-կարկուտ,
Հարճիճ թափին սասանական,
Քընց գյուլանու քար-կարկուտ,
Ռումբեր թափին ասմանական—
Քընց պայիզու խարը-խազալ.
Թրեր շաչին խունկորական,
Քընց մազըրբու շարը-շափաղ...
Միկ դեխեն հականնի թնդում,
Ղումբարա թափում լուլի պես,
Միկ դեխեն թվանքն ի ճռռում.
Տաք հարճիճ թափում սիլի պես.
Միկ դեխեն թուփիրնին դնդում,
Զուզայում, կռռում կիլի պես.
Միկ դեխեն տանկիրնին բվվում,

Հառիչ հուսում սամելի պիս.
Ջարկում-ջարկվում ին միկ-միկու
Տիվոտած շներու լման.
Միկ դևխեն վալշուրիկները,
ուրինց շին վաթանի խամար.
Միկիվ դևխեն Ալմաննները
Ջաֆթ ու զոռ, թալանի խամար...

12

Վալշուրիկներ խիծած ծիանք,
Թրեր քիշած կերթան հառիչ.
Կերթան հառիչ, նորա կըտան,
Երկինք, գետինք կըգընդա.
— Հառի՛չ, կասին,—մեր հասկյարքիր,
Յարալանքիր.
Հառիչ քելիք մի վախեննաք,
Ջարկիք զֆաշիկ, ջարկիք կուտրիք,
Ջարկիք կուտրիք, ավրութենեն
Ըզմի Մասկուֆ քյաղաք խալսիք.
Ջարկիք կուտրիք, էսրութենեն
Ըզմի Սավիթ վաթան խալսիք.
Ջարկիք կուտրիք, վախչ մարթկութենն,
Ֆաշիքտիրաց լծեն խալսիք...
Հե՛յ-հե՛յ հառի՛չ, կարմիր-հասկյար
Մինչ ծի խիտեննիք մի վախեննաք.
Ջարկիք էտ աղդուն կիլիրաց,
Կուտրիք վախչ երիք շան սատակ...

13

Կարմիր հասկյար ասյան կտրած
Վալշուրիկներու խուսքիրաց,
Էլ ավելի ղղին տարցած
Հոռա՛ քեշից վըրա տվից.
Վրա տվին աչու դևխեն
Ջուրը-ջուրքիր խաղա՛ր-խաղա՛ր,
Վրա տվին ծախու դևխեն
Ֆուրը-ֆուփքիր խաղա՛ր-խաղա՛ր,
Վրա տվին ցածի դևխեն

տարը-տանկիր խաղա՛ր-խաղա՛ր,
վրա տվին վերի դեխեն
Այլապանքտիր խաղա՛ր-խաղա՛ր,
Ջուրս տնխիցը կալմիչ էրած,
Անունց կլխին տվին, տվին.
Կուտուրած չխո-կուտուրիցին,
Ան մնացած զարկին, ցրվին...

14

Մասկուֆի տակ Ալմաննիրաց
Հոդուչի պիրան կուտրվից.
Կարմիր-հասկրը զառբը հառճիվ
Ցաշիքտիրաց ղուրքը պարտվից.
Ջուրքը պարտվից, ընկնող-ընկավ,
Փախնող-փախավ ցաքը-ցրիվ,
Ցաքը-ցրիվ իլան ցրվան,
Քընց պայիղու խուտը-խռիվ...
Լեշիր Թուղին, լեշիր Թուղին,
Քընց ոստանու լեռն ու սարիր
Հեսիր Թուղին, հեսիր Թուղին,
Քընց Օրմանու խարը-խաղալ.
Սիլախ Թուղին, սիլախ Թուղին,
Քընց Պարթուղու քյարը-քռեն.
Ըռաթըր Թուղին, ըռաթըր Թուղին,
Քընց ծուվիրու լիլը-ավալ...
Հոռոան կուտրավ, Հիտլե փախավ,
Փախավ կնաց մրմռալուվ.
Էկավ անկուղ, փախավ կուղ-կուղ,
Փախավ կլխին ա՛խ-վա՛յ տալուվ...

15

Մասկուֆը տակ ճառթվիլուց հիտ,
Կյալան Հիտլե խաստակուղ բիմար,
Նուրից էլ մը խավաք էրից,
Ջուրք-հասկյար խանից անխամար.
Թուխպիր էրից վար ըսխըտին
Հարցակվը վար ըՄուալինկռանթ
Քանդը խիմնարիվ մունչ պիթուն,
Ավիրը էնը քարը-քանդ...

Սալբան առին վալշուրիկներ,
Առին կաղափլանիմիշ իլան.
Կայնին կանչիցին ուրինց վարշալքիր,
Կանչիցին ուրինց կինճ կայրամանքիր.
Կայինին կանչիցին յարալանքիր,
Կանչիցին պութուն սարասկյարքիր.
Կանչիցին բսին.—Առհամդուլա,
Մինք Հիսլեի միչք կուարիցինք.
Աման անիկ քընց պրինտատա հրուչի,
Նուրեն կուզի կովիլ.
Ատուր խամար վուտքի իխան
Ալման էրկրի Թիֆիլ-զառամ,
Ան բսխատին կուզի ուր տրոպ
ԸՍտալինկռանթի վևրեն փուրցի
Մկա հաղրվիք վար անունուր
Տրոպին-տրոպամ ալ տանք հավիլի...
Ատուր խամար միր ծեն
Բայան էրեք Սավիթ էրկրին,
վար համեն հասկ, համին միլլեթ,
Թափին էկին ըզմի հոքնութեն...
Առիք միկ կիրըմ կիրըցեք
Սավիթու հարավ հաշխըրին.
Առիք միկ կիրըմ կիրըցեք
Սավիթու ուսբս հաշխըրին.
Առիք միկ կիրըմ կիրըցեք
Սավիթու արվիլիկ հաշխըրին,
Առիք միկ կիրըմ կիրըցեք
Սավիթու արիվմուտք հաշխըրին...
Կիրըցեք խարկըցեք
Պութուն Սավիթաստան ըրկրնիրաց,
Կիրըցեք խարկըցեք
Պութուն տինը-տիյար պանաքտիրաց,
Կիրըցեք խարկըցեք
Պութուն ճիմը-ճառա միլլաթկիրաց...
Ասըցեք վով սրտով սիրը
Լենու տողրի մասսաբ, Թըխ կյա.
Ասըցեք վով սրտով սիրը

Ուրին հազաւուբեն, թըխ կյա.
Ասըցեք վով սրտով սիրը
Մի Սավիթը վաթան, թըխ կյա.
Ըրխ կյա ծիռը սիլախ խառնը,
Կարմիր-հասկրին քյարը-քյումակ...

17

Վալշուրիկներաց կանչի հապով,
Սավիթ ռահաթ վուտքի իլավ.
Վուտքի իլավ թափից իկավ
Քընց բահարու սիլը-սիլավ.
Քընց բահարու սիլը-սիլավ
Գրուփաց իկավ ղրխ կովու չան,
Իկավ, սավիթ հաշխրին տալու
Սուրը՝ ֆիտան, ջանը՝ ղուրբան...
Միրը՝ վորթուն, կնիկ՝ էրկան,
Քիրըն՝ ախպոր, թա-կընացիք,
Մի Սավիթ հազատ վաթան
Ծև կրծքիրով պաշապանիցիք
Կուլխուզնիրաց, սուվխուզնիրաց,
Քյաղաքնիրաց ու կիղիրաց...
Փափրիկնիրաց, զավատնիրաց,
Քյարխանաննիրաց,
մատաննիրաց...
Առած ուրինց սիլախ-ասպաբ,
Ամին ղխից թափին էկին,
Էկին վալշուրիկներաց կանչին,
Էկին Սավեթին հոքնութին...

18

Հիտլե չան տվից ուր հոռտուն
Քհշեց վար ըՍտալինկռանք,
Խրամանք էրից հասնիք պարկիլ,
Անմաճալ, քընց կեծակը շանք.
— Իս ծե կիտամ,—էսաց Հիտլե,
— Սահաթը կիս, վախտը-վատա.
Վար իրկինքի հիրիս ցրվիք
Ատ քյաղաքի պուրճը-պատան...

Էսաց, խրամանք էրաց դուրաց
ՔՍտալինկռանիը պաշարին,
Խարիւր-խապար թուփ-պուլիմիտ
Քյաղքի պուլոր աթրաֆ շարին.
Շարըն աթրաֆ, ուղըս-հարաֆ,
Կալաբանդին ղըմին թարաֆ
Բուռուն փըչին, հիրար կանչին,
Մոնչացին արնածարաւ.
Արնածարաւ, մունջ կուզե-կուզ,
Ուրինց սիլախ պոնած հաղիր,
Ջուրս տեխերաց տալղա տալով,
Պաշկայիցին հառիչ վազիլ...

19

Վալշուրիկնևրաց խնարքուվ,
Ամեն մեկ թախպիր թափիր ին,
Պութուն քյաղաքը հասարիլ,
Սարը-սանդյառով կապիր ին,
Ան վար տիսավ ղուր թշնամին,
Քընց բորյազու կատղած քամին,
Սիվ շարքիրուվ սըխ լանջե-լանջ
Պաշկայիցին հուսիլ հառիչ...
Աման ռաշիդ կարմիր-հասկյար,
Սավիթնիրու դուրքը-լաշքյար.
Ուր սանթանաթուվ աճալա,
Չի տար տուշմընին մաճալը,
Քընց ծուվերաց լափն ու լափին,
Ամինք տեխեն կրակ թափին...
Կրակ թափին խաղար-խաղար,
Ջամտաք թափին քընց լեռն ու սար,
Վերը-լեշից արունքն էլավ,
Խառվավ հիրար կապից սիլավ,
Կապից սիլավ խիղիղ տառավ,
Ջուրը-ջամտաք քշից տարավ...

20

Հիտլեյ տված սահաթը կիս վատեն
Քյեշից շապաթ, համիս...
Տիսավ ղուր չէ, ղուրքը խալսավ

Կանչեց նուր հոքնութեն.
Նուր հոգնութեն զուռուվ-բալուվ
Խափխփելով, հալբա-հալով.
Հիկին ռումին, իսփան, հունկար,
Իթալ, ճափուն, ֆիլանտ...
Համան կուվի տաք ժամանակ,
Հիկին Ալման զուրքին քյումակ։
Վար հիկին, Հիտլե հուրխըցած
Տառցավ կարմիր զուրաց էսաց.
— Է՛յ վալշուրիկ զուրք-զուրապետ,
Դև ծիր կլոխ լացնք ըսխիտ.
Մկա էլ դու՞ր կարնաք էրթիք,
Վար իմ ծիռաց տակեն խալսիք.
Մկա վար մինք հըլինք պամբակ,
Տուք ըզկրակ, մե չիք վառի,
Մկա վար մինք հըլնինք ըզխուտ,
Տուք ըզ թուփան, մե չիք հնծի.
Մկա վար մինք հըլնինք ուչխար,
Տուք ըզկյապան, մե չիք պատնի
Էլ միր թիվն ի քուլուրական,
Մի զորութեն սասանական,
Իս ծե անպիս միկ զառպըմ տամ,
Վար չմուռնաք հուն-հավկաեն...

21

Հիտլե ուր խուսք տալ չէր խալսի,
Դում-դրնդուցն ընկավ հաշխար,
Սավիթ երկրը չուրս տեխերեն
Ամինք ռայաթ էկին խամխար.
Վալշուրիկներաց կանչած հիմդատ,
Էկին խասին չուրս թարաֆեն.
Ծիռը սիլախ թափին էկին
Կարմիր-հասկրին քյարը-քյումակ...
Էկին Սավիթ հարավ երկրեն
Խայը կուրճի, հատրպիճան,
Լեսկի, չեչեն, ապխազ, Ավատ,
Աճար, Սվան, իժուր, տունկան
Էկին սավիթ ուսբս երկրեն,
Ըռուս, լաթըշ, էստոն, քարիլ

Մալտավ, լիթվա, փշավ, նինից,
Կիլյակ, լապար, պուրյաթ, չուվաշ։
Էկին սավիթ արիվելկեն՝
Յակութ, Ալթայ, Օստլաք, տարկիլ,
Յուզպիկ, կազախ, քիրքիզ, տաճիկ,
Թուրքմեն, թաթար, պաշկիր, ուդմուր։
Էկին սավիթ արիվմուտքեն՝ խախոլ,
Կոիմ, կապան, խակաս,
Ուկյուր, սայամ, շուրյա,
Չվինկի, տուլկան, կալցի, տապաստան,
Էկին քընց կարկտի սիվ համպ,
Սարիր-ձուրիր պաշարեցին,
Էկին քընց միժ, տումանը չամ,
Սար ու տաշտիր պատեցին.
Էկին քընց պահարու սիլավ,
Քյար ու քյավշան ուղուղիցին,
Վալշուրիկներաց հուքմին հաղրը,
Անունց հառճիվ ըսպասիցին։

22

Վալշուրիկներ կանչին էսին,
— Է՛յ տու Հիտլե,
Մառթասըֆաթ խոռ ատամճիլ,
Հևռի ծնունդ հաշխարավիր,
Դե հիմիկա էտ տու, էտ էլ մինք,
Սրա հինչ ծիռնետ կիկյա։
Վիրչի օրն ի զարկինք, զարկվինք,
Տիսնանք վիր մեր կլա, թըխ լա.
էտ քյու քյումակ զուռով, զուռով
Քշած պիրած չուրս դեխերեն,
էտ միր, ուրից կամքով իկած,
Վուխճ Սավիթատան հաշխըրեն.
Խազար ատպես զառպ ինք տիսե,
Ատ էլ թըխլի խազարը միկ.
Իշթա մեյտան, զարկինք-զարկվինք
Էլ ծիր մուտեն չինք վախի մինք...
Էսաց, զոշուն էրկու դեխից
Քընց քյուրդատան խասան հերուր
էն վար կպան ճակատ-ճակտի

Գյուղը-գըմմուցն ընկավ հաշխար...
Գյուղը-գըմմուցն ընկավ հաշխար,
Փուրը-փուշին իլավ իրկինք
Մինը-ծուրից սարսից հաշխար,
Տողտողացին երկինք-կետինք։
Տարմի լման վրա թափվան
Ջուրք վը ռայաթ չուրս թարաֆեն,
Համպի լման այլապլանքտիր
Տալղա տալով էկն վերեն,
Ջուրքի՛ր էկան, ղուրքի՛ր էկան,
Ջերգյա՛-ջերգյա՛, շարա՛ն-շարա՛ն.
Տանկի՛ր էկան, տանկի՛ր էկան,
եքա-եքա, շարան-շարան.
Թուփի՛ր էկան, թուփի՛ր էկան,
եքա-եքա, շարան-շարան.
Ռախտի՛ր էկան, ռախտի՛ր էկան,
Հալղա-հալղա, շարան-շարան...
Ռայաթ-հասկյար, կապած լաշքյար
Քընց ծուվիրու կատղած լափին,
Քեշած սուր-թուր, սիրտը մրմուռ,
Ամինք դեխեն կրակ թափին,
Կրակ թափին գեհենական,
Քընց գյուլանու կարը-կարկուտ.
Ռումբիր թափին աստանական,
Քընց պայիղու խարը-խաղալ,
Թրիր շաղին խունխորական,
Քընց մազրբու շարը-շափաղ...
Միկ դեխեն հականնի թնդում,
Ղումբարա թափում լուլի պես.
Միկ դեխեն թվանքնի ճռռում,
Տար հարճիճ թափում սիլի պես։
Միկ դեխեն թուփիրնին դնդում,
Ջուղայում, կոռում կիլի պես.
Մեկ դեխեն տանկիրնին բլվում,
Հառիչ հուսում սամ էլի պես.
Ջարկում-ղարկվում ին միկ-միկու,
Տիվոտած շիրերու լման.
Խփում-պղկոտում ին միկ-միկու,

Ազազուն ֆիլերու լման,
Միկ դեխեն վալշուրիկները,
Ուրինց շին վաթանի համար.
Միկիլ դեխեն ֆաշիկները,
Ջավթ ու զոռ թալանի համար...

23

Ատափզ էլմը հիրիս առած
Հիտլեյ ճակատ դիպավ քյարին.
Ան չդիմցավ վալշուրիկաց
Սասանական զառքը-զուռին...
Զդիմացավ մու, կլոխ կորցրից,
Տիվավ ահվալ քիշնի, ակխավ
Ակխավ, հոռտուն թուղից հիսիր,
Զինք ուր կլուխն առնց փախավ.
Փախավ կնաց խասավ Պերլի,
Մտավ ուրին խուր զերզամբին,
— Է՛յ վախ,—էսաց,—թուղ զըմին մարթ
Ուր ճար տիսնա էս անքամին...
Էս ըռուսնիր կիտի ֆախիր,
Սումի կոծուղ, տկիտ, խավար.
Իս չիր կիտի մղիկ տապիս
Կննին խուղիրաց խավասար...
Էլ մի կընա՞ց... մի պան պոշնի...
Մկա տիսնք ծի թատարիք։

24

ԸՍտալինկռանթ ֆաշիքտիրաց
Հոռտուչի միչքը կուտըրից.
Կարմիր-հասկրը զառպը հառճիվ
Ալմաննիրաց զուրք պարտվից.
Զուրքը պարտվից, ընկնող-ընկավ,
Փխնող-փախավ ցաքը-ցրիվ,
Ցաքը-ցրիվ իլան ցրվան,
Քընց պայֆղու խուտը-խռիվ...
Լեշեր թուղին, լեշեր թուղին,
Քընց ոստանու լեռն ու սարեր,
Հեսիր թուղին, հեսիր թուղին,

Քընց օրմանու խարը-խազալ.
Սիլախ Թուղին, սիլախ Թուղին,
Քընց Քարթողու քյարը-քրուն.
Ըռաթըր Թուղին, ըռաթըր Թուղին,
Քընց ծուվիրու լիլը ավազ...
Հոռոռուն կուտրավ, Հիտլե փախավ,
Փախավ գնաց մրմռալով.
Իկավ անկուղ, փախավ կուզ-կուզ,
Փախավ կլխին ա՞խ վա՞յ տալով...

25

Ֆաշիկոիրաց միշկ կուտրվից,
Պաշլայիցին հիտ կրըզիլ.
Հիտ կրըզիցին վը փախան
Ատ անիծված հասկն աղաղիլ.
Կարմիր-հասկյար տապան-պասման,
Անունց կլխին տալով-տալուվ.
Սավիթ երկրից քշից խանից
Ջառըը-զուռով, հալըը-հալով.
Քշից խանից, երկիր մաքրից.
Դորիս մտավ Ալմանու խուղ.
Ալմանու խուղ մտավ զարկից,
Քընց կայրաման, քընց քաջ հախտուղ,
Ջարկից-զարկվից հառըչացավ,
Անունց Պերլի քյաղաքն առավ.
Քյաղաքն առավ, անունց դիվնի վերեն
Տնկից կարմիր պայրաղ...

26

Ինչ Հիտլեն էր, վախկուտ, ռուսպի,
Հուքմաթի փուղ-փարեն առած,
Կլուխ վերուց կյաղտուկ կիշրով
Ոն կիտի ո՞ւր փախավ կընաց...

27

Հախտվեց Ալման մամլաքյաթը,
Էն վար հաշխար զարի պիրավ.

Զավթնց ֆաշիկ հուքմաթը,
էն վար դունչեն քյամրախ էրավ.
Ճառթվնց Հիտլեյ սանթանաթը,
էն վար էրկրին կրուզ տառավ.
Ուրին էրաց չար կուռծիրաց
Ատալաֆ զազապն առավ...

28

Վալշուրիկներ ուրինց հնճարով
էրկիրն էսրուբենե փրկիցին,
Կարմիր-հասկյարը զառբը-զուռով,
Հաշխարն ավիրումե խալսից.
Փառք վալշուրիկաց շնուխքին,
Յաշա անունց վալշուրիկ անվան.
Վար հախտութեն, հազատութեն
Պիրին ըզմի սարհամիյան...

228. ԵՍ ՎՐԵԺՆ ԵՄ...

Ես վրեժն եմ բաջազնեցի,
Կռվելով առաջ գնացի,
Զարգվա այնտեղ մնացի,
Խափնք մորս վիրավոր եմ։

Շպալները կրծքիս խփի,
Հայոց գնդերն առաջ քաշի,
Դիակս հողին պահ տվի,
Ասնք մորս, վիրավոր եմ։

Երբ որ մտանք Կերչի հողը,
Սիրտս ընկավ մահվան դողը,
Սեվ մազերս դրին հողը
Խափնք մորս վիրավոր եմ։

Կերչի ֆրոնտ քառ ու քոա,
Շրապնելը կը ֆրոֆոա.
Թևիս վերքը կը մըռմըռա,
Խափնք մորս, վիրավոր եմ։

Կերչի ծովի ջուրը պաղ էր,
Մայրը գիտեր որդին սաղ էր.
Բայց չգիտեր հողի տակն էր,
Խափեք մորս վիրավոր եմ։

Կերչ քաղաքի կլխի լուլեն,
Թաղեմ շուն Հիտլերի բալեն,
Մայրս ու քույրս Թողեց լալեն
Ասեք մորս վիրավոր եմ։

Մայրս ու քույրս Թունդրան բոցին
Նորամանուկն օրորոցին,
Սիրած յարս ձեռքն էր ծոցին,
Խափեք մորս վիրավոր եմ։

229. ԿԵՐՉ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԻ ԼԱԼԵՆ

Կերչ քաղաքի գլխի լալեն,
Թաղեմ գերմանացու բալեն,
Հորս, մորս Թողեց լալեն
Խաբեք մորս, վիրավոր եմ։

Մորս Թողի Թունդրա բոցին,
Սիրած յարիս ձեռքը ծոցին,
Ապիզ բալես օրորոցին,
Խաբեք մորս, վիրավոր եմ։

Կերչ քաղաքի ջուրն էր աղի,
Կերակուրն էր դառն ու լեղի,
Շատ չահեվներ կորան անտեղի,
Խաբեք մորս, վիրավոր եմ։

Հենց որ մտա Կերչա հողը,
Վրես Թափվեց մահվան դողը,
Սև մազերս դրի հողը
Խաբեք մորս վիրավոր եմ։

230. ՍԵՎ ԾՈՎԻ ԱՓԻՆ

Սև ծովի ափին մայրիկ ջան
Փրփուր չի բռնում.
Իմ գրած նամակը մայրիկ
Քեզի չի հասնում։

Կերչի ճակատում, մայրիկ ջան
Վիրավորվեցի.
Բայց քույրերը ուշ մոտեցան
Արնաքամվեցի։

Տասնութ տարեկան հասակում
Սիրահարվեցի.
Սիրահարված ժամանակս՝
Կռիվ գնացի։

Մի լար մայրիկ, մի լար քույրիկ
Լացողը ես եմ.
Գերմանացու թոփի առաջ
Կանգնողը ես եմ։

231. ԿԵՐՉ ՔԱՂԱՔԸ

Կերչ քաղաքի գլխի լալեն,
Թաղեմ շուն Հիտլերի բալեն,
Մայր ու քույրս թողեց լալեն
Ասեք մորս վիրավոր եմ։

Կերչ քաղաքը քար ու քոա,
Գյուլլեն մեջը կը ֆոֆոա.
Թևիս յարեն կը մըռմոա,
Ասեք մորս վիրավոր եմ։

Ջոր սուխարին իմ քամակը,
Սա է վերջին իմ նամակը.
Տվեք կարդա սիրած յարս
Ասեք մորս, վիրավոր եմ։

Կերչ քաղաքի ջուրն էր աղի
Հացն ու կերակուրն էր լեղի.
Շատերը կորան անտեղի,
Խաբեք մորս, վիրավոր եմ։

Ես վրեժն եմ բաջաղլվեցի
Հայրենիքիս գոհ գնացի
Դիակս Կերչում թաղեցի
Խաբեք մորս վիրավոր եմ։

232. ՍԵՎ ԾՈՎԻ ԱՓԻՆ

Սև ծովի ափին մայրիկ ջան
Փրփուր չի բռնում.
Իմ պրած նամակը, մայրիկ
Քեզի չի հասնում։

Կամուրջն անցկենալիս, մայրիկ
Եռևս նայիր.
Կամուրջն անցկացա էն կողմը,
Ոմուդդ կորիր։

Կերչի ճակատում, մայրիկ ջան
Վիրավորվեցի.
Հայրենիքի պատվի համար,
Ծովը նետվեցի։

Մի՛ լար մայրիկ, մի՛ լար քույրիկ
Էլի եռ կը գամ.
Մինչև կռվի վերջանալը՝
Երազով կը գամ։

233. ԿԵՐՉԻ ԵՐԳԸ

Կերչ քաղաքը քար ու քոռ,
Գյուլլեն մեջը կը ֆըռֆռա,
Սրտիս վերքը կը մըռմռա.
Խաբեք մորս վիրավոր եմ։

Ջոր սուխարին իմ քոմակս
Սա է վերջին իմ նամակս,
Տվեք կարդա սիրած յարս.
Խաբեք մորս վիրավոր եմ։

Ծարավ եմ ջուր տվող չկա,
Էս քաղաքին աղբյուր չկա.
Վախենում եմ դարիր մեռնեմ
Մոտս աղգական էլ չկա։

Դիրքը մտած ժամանակս
Տխուր գրի այս նամակս,
Սիրեցի չառա փափագս,
Խաբեք մորս վիրավոր եմ։

234. ԿԵՐՋԻ ԵՐԳԸ

Վերան Կերչի ջուրն էր ագի,
Հացն ու կերակուրն էր լեղի
Շատ ջահելներ կորան անտեղի,
Պատմիր նամակ յարալու եմ,
Յարալու եմ դառնալու չեմ։

Պարախոդը լցրին ղորքը,
Ճամփա չկար անցներ խորքը.
Շատերն ընկան ծովի խորքը,
Պատմիր նամակ յարալու եմ,
Յարալու եմ դառնալու չեմ։

Դիրքիս մեջը մութ ու խավար,
Լուսնակ վերևիցը կամար.
Ես մեռնում եմ ձեզի համար,
Պատմիր նամակ յարալու եմ,
Յարալու եմ դառնալու չեմ։

235. ՓԱԽԻՐ ՊՈՒԻՍ...

Հազար իննը հարյուր քառասուն մեկ թվին,
Հանկարծակի գիշեր վրա տվին.

Էկան տեսան ըռըսի ավին,
Հողևրն էրենց գլխին տվին.
Փախի՛ր Պռուս, էկավ ըռուսն։

Էկան էլան Կովկասյան լեռները,
Դողաց քու զորքի օտքն ու ձեռները.
Թափեցիր Թալանած բեռները,
Փախի՛ր Պռուս, էկավ ըռուսն։

Նավթի հոտից էրված, վառված,
Էկար Մոզդոկ, տեսար դառար.
Դու քո մտքով Մոսկովն առար
Փախի՛ր Պռուս, էկավ ըռուսն։

236. ՓԱԽԻՐ ՊՌՈՒՍ

Մըր խումբ կերթա արագ-արագ,
Շուտով մտանք Բեռլին քաղաք.
Յորեն-գարին նորից կաղանք,
Փախի՛ Պռուս, էկավ ըռուս։

Բեռլին ճամբան օլոր-մոլոր,
Ըռուս փաթթից Բեռլու բոլոր.
Հիտլերի աչքեր ընկավ խոլոր,
Փախի՛ Պռուս, էկավ ըռուս։

Զարկին, քցին բանդն ու հորը,
Խորուրթ մնաց ուրան փորը.
Խապար տվեք դարդոտ մորը
Փախի՛ Պռուս, էկավ ըռուս։

237. ՍԵՎ ԾՈՎԻ ԱՓԻՆ

Սև ծովի ափին ծաղիկ չի բանի,
Իմ գրած նամակը քեզի չի հասնի։

Երազում տեսա-մայրս էր լալիս,—
Տեսնես որտեղ ընկավ իմ ափիշ բալես։

Կերչի քաղաքում վիրավորվեցի,
Հրացանս ձեռքս առա, նորից կռվեցի։

Մի՛ լա մայրիկ, մի՛ լա քույրիկ, հայրենյայց սիրուն,
Շատի հետ ես էլ թափում եմ արյուն։

238. ՍԵՎԱՍՏՈՊՈԼ

Սևաստոպոլ, ջուրդ պաղ էր,
Մայրը դիտեր, որդին սաղ էր,
Ճանապարհը շատ դժվար էր,
Պատմեք մորս՝ վիրավոր եմ։

Սևաստոպոլ, շուրջդ մեշա,
Դյուլլեն մեջդ կը խշխշա,
Արյունն էլավ յանա-յանա,
Բժիշկ բերեք վերքս բանա։

239. ԵՐԲ ՈՐ ՀԱՍԱՆՔ...

Երբ որ հասանք Կերչի հողը.
Ջանս ընկավ մահվան դողը,
Սև քյաքուլս դրի հողը.
Յանա, յանա դիլխոր բան ա։

Կերչի հողն է քար ու քոռ,
Դյուլլեն գլխիս կը ֆըռֆըռա,
Սրտիս յարան կը մըռմըռա.
Յանա, յանա, դիլխոր բան ա։

Ոչինչ չասիք անբախտ մորս,
Խաբար չտաք պառավ հորս,
Ծածուկ կասիք մեծ ախպորս,
Յանա, յանա, դիլխոր բան ա։

Դյուլլեն էկավ կպավ սրտիս,
Բժիշկն էկավ նստեց կոխքիս.
Ջարչարելով առավ հոգիս,
Յանա, յանա, դիլխոր բան ա։

240. ՌՈՍՏՈՎԻ ԳԼԽԻ ԼԱԼԵՆ

Ռոստովի գլխի լալեն,
Մեռնի գերմանացու բալեն,
Երեխեքս Թողեց լալեն,
Խափեք մորս յարալու համ։

Մեր ու քիրս Թոնրի բոցում,
Մանուկ բալաս օրորոցում,
Սիրած յարս ձեռը ծոցում
Խափեք մորս վիրավոր համ։

Ես Հունանն եմ խնձորկեցի,
Սողնսող առաջ գընացի,
Դիակս այնտեղ Թողեցի,
Խափեք մորս, ասեք սաղ եմ։

241. ԳԻՇԵՐՈՎ ԱՆՑԱ

Հայրենիքից հեռացել եմ,
Գիշերով անցա, Դոն, քեզի.
Մտածելով մնացել եմ,
Գիշերով անցա, Դոն քեզի։

Տանկեր գնում էին արագ,
Փափագ ունեն դեպի ճակատ,
Կռվում էին ճիշտ ու հաստատ
Գիշերով անցա, Դոն, քեզի։

Ազովի հետ դու կապ ունես,
Հընկից-վեցը ճուղեր ունես,
Պանդուխտ մարդկանց դու խնայես,
Գիշերով անցա, Դոն, քեզի։

242. ՍՓԱ ՍՈՎ ՋԱՆ

Սփա, ծով ջան, ծփա,
Աչվանս տուս գա,

Սաղնա սրտիս չարեն,
Աչքերիս քուն գա։

Նավաստի ախպեր ջան,
Նավդ մի քշի,
Թագա նշանլու եմ՝
Կոսպանդս բաշխի։

243. ԿԵՐՉ ՔԱՂԱՔԸ

Կերչ քաղաքը քար ու քոա,
Գյուլլեն մեջը կը ֆըռֆըռա,
Ոտիս վերքը կը մըռմըռա,
Խափեք մորս, վիրավոր եմ։

Ծարավ եմ ջուր տվող չկա,
Էս քաղաքին աղբյուր չկա.
Վախենում եմ զարիբ մեռնեմ
Մոտս ազգական էլ չկա։

Դիրքը մտած ժամանակս,
Տխուր գրի այս նամակս,
Սիրեցի չառա փափագս,
Խափեք մորս, վիրավոր եմ։

244. ԵՐԿՆՔՈՎ ԱՆՑՆՈՒՄ ԷՐ...

Երկնքով անցնում էր այլոպլանը,
Փախե՛ք տղերք, փախե՛ք, էկավ գերմանը։

Գաթա թխի մայրիկ ջան, դիր տանեմ հետս,
Ամեն դիրք մտնելուս, քեզ բցեմ միտս։

Ինչու բերեցիր, մայրիկ ջան, բարուր արեցիր,
Գերմանու ֆրոնտը ինձի ղրկեցիր։

Գնալով, գնալով գյուղից հեռացա,
Տասնութ տարեկան զարդի տիրացա։

Նստեցի մաշինեն, հասա սահմանը,
Յոթ տարի էր, մայրիկ ջան, կռվի պայմանը։

Կանցիլարի տուռը վառվում էր փուռը,
Ինձի տանում են, մայրիկ ջան, բոյնիի դուռը։

Երկու կռունկ իջավ Իգիտա սարին,
Քաֆուր գերմանն էկավ, տարավ իմ յարին։

245. ՋԻՆՎՈՐԻ ԵՐԳԸ

Կռվի ճակատում, մայրիկ ջան,
Վիրավորվեցի,
Հայրենիքիս սիրո համար.
Արյուն թափեցի։

Մի լար, մայրիկ, որ քո որդին
Կռվում գոհ գնա,
Քո որդու տեղ հայրենիքը
Անպարտ կմնա։

Ինձ կհիշեն ընկերներս,
Խաղաղ օրերին,
Իրենց սրտում միշտ կպահեն
Անմահ զինվորին։

246. ՌՈՍՏՈՎԻ ԵՐԳԸ

Ռոստովի գլխի լալեն
Մեռնի գերմանացու բալեն,
Մերս ու քիրս Թողեց լալեն,
Ասեք մորս, վիրավոր եմ։

Բաժանվում եմ հորից-մորից,
Եվ հարազատ ընկերներից,
Հայաստանի սեգ սարերից
Խափեք մորս, վիրավոր եմ։

Ես Դուրգենն եմ Հայաստանցի
Թշնամու դեմ քաջ կռվեցի,
Հայրենիքիս հողի համար
Ռոստովի տակ զոհվեցի։

247. ԿԵՐՉՆ

Սև ծովի ափին մայրիկ
Փրփուր չի տալիս,
Իմ գրած նամակը մայրիկ
Քեզի չի գալիս։

Մի լար մայրիկ, մի լար քույրիկ
Էլի հետ կգամ,
Էս ամսվա տասնը հինգին
Երազով կգամ։

Մեր խաղաղ երկիր մայրիկ
Պատերազմում է,
Իմ, քո տեսնելը, մայրիկ
Մեկ երազում է։

Կերչի ճակատում մայրիկ
Վիրավորվեցի,
Առանց քեզ տեսնելու,
Ծովը նետվեցի։

Էս ինչ սև անդուկ էր
Մեր դռան առաջ,
Տասնութ տարեկան մեռա
Մուրազս չառած։

248. ԸՌԱՍՏՈՎ ԳԼԽԻ ԼԱԼԵՆ

Ըռաստով գլխի լալեն
Մեռներ գերմանացու բալեն,
Սիրած յարս Թորգեց լալեն
Խափեք մորս յարալու եմ։

Ըռոստովի ջուրը սառն էր
Մայրիկ պիտեր բալեն սաղ էր,
Ջգիտեր որ հողի տակն էր
Խաբեք մորս յարալու եմ։

Հենց որ մըտա Կերչի հողը
Սիրտըս ընկավ մահվան դողը,
Շեկ մազերըս դըրի հողը
Խափեք մորս յարալու եմ։

Վիրավորվեցի ժամը վեցին—
Ընկերներս բաժանվեցին,
Ընձի բըժիշկ չուղարկեցին
Խաբեք մորս յարալու եմ։

Կերչ քաղաքը քար ու քըռա
Գյուլլեն մեչքիս կը մըռմըռա,
Սրտիս յարեն չի լավանա
Խափեք մորս յարալու եմ։

Ընկերներ ջան մի հեռացեք
Իմ դագաղը զարդարեցեք,
Անունըս վրեն գրեցեք
Խափեք մորս յարալու եմ։

Հորս մորս թորգիր բոցին
Մորս աչքը լաց ու կոծին,
Քյոռփա էրեխեն օրորոցին
Սիրած յարիս ձեռը ծոցին։

Թռիր նամակ հասիր հորս
Ծածուկ պատմիր դիլխոռ մորս,
Շատ չըպատմեմ մեծ եղբորս
Խաբեք մորս յարալու եմ։

Ես Լևոնն եմ մարտունեցի
Առաջն ընկա ու գնացի,
Հայրենիքիս զոհ գընացի
Խափեք մորս յարալու եմ։

249. ՋԱՎԱԽՔ ԼՍԻ՛Ր

Ջավախք լսի՛ր,
Ջննքի շաչյունն հեռավոր.
Կորյուններն են քեզնամ ծնված
Հերոսաբար մարտնչում։

Ջավախք լսի՛ր
Արյան ձայնը քո որդոց,
Քեզ համար ենք այն թափում
Քո անունով մարտ մտնում։

Ջավախք լսի՛ր
Ջավակներիդ համբավը,
Հերոսական ոգով լցված
Վերքը կրծքին պրոհում։

Ջավախք լսի՛ր զավակներիդ երդումը
«Թեկուզ արյան ծովում խեղդվենք
Քո փառքը վեհ կպահենք»։

Ջավախք լսի՛ր
Կռակն ընկած հերոսի—
Գերեզմանս թող բաց մնա
Որպես փարոս վրեժի։
Ջննքի շաչյունն հեռավոր

Ու մարտական հառաչները
Կորյուններիդ վիրավոր
Ջավախք, Ջավախք լսի՛ր։

250. ՆԵԼՍՈՆ

— Էն երկնքում փոթորիկ է,
Էն ո՞վ կխաղա,
— Էն Նելսոնի մաշինեն է,
Էնտեղ կխաղա։
— Էն կայծակն է վառվռում
Էն ո՞վ կխփի,

— Էն Նելսոնն է երկնքից
Կրակ կթափի։

— Էն գերմանու սրտերը.
Ո՞վ է շամփրում,
— Էն Նելսոնն է Հիտլերին
Ահ ու դող բերում։

— Շարած աստղերը դոշին
Էն ի՞նչ իգիթ է,
— Շարած աստղերը դոշին
Մեր քաջ Նելսոնն է։

— Էն ծովը արուն կապեց
Էն ո՞ւմ արինն էր,
— Էն Նելսոնն էր, որ գոհվեց
Նրա արինն էր։

— Սեգ Սարերը սուգ կանեն,
Էն ո՞ւմ հառաչն է,
— Էն նրա մոր մրմունն է,
Նրա հառաչն է։

— Էն ում սրտերում կապրի,
Էն ո՞ւմ անունն է,
— Էն մեր սրտերում կապրի
Նելսոն անունն է։

251. ԲԱՂՐԱՄՅԱՆԻՆ

Զևոքը առած Դավթի Թուրը
Կեցցե հերոս Բաղրամյանը,
Յուլց տվեց իր քաջությունը
Ապրի հերոս Բաղրամյանը։

Առյուծների գնդեր կազմեց,
Թուր ու սուրը պատրաստ պահեց.
Թշնամու վրա արշավեց,
Կեցցե հերոս Բաղրամյանը։

Պողպատից ամուր է ջանը,
Գովական է բռնած բանը,
Ուրախացավ Հայաստանը,
Ճապրի հերոս Բաղրամյանը։

252. ԱՐԳԱՄԻ ԵՐԳԸ

Քաջ, խգիթ տղա,
Դու գերմանացոնց
Խփիր քարին, տղա
Ոնց կրակ ու բոց։
Արգամ, Արգամ, Արգամ Պետրոսյան,
Տվիր թշնամուն, արիր ցիր ու ցան։

Քեզ շատ չարչարեցին
Ջարի բերնցին,
Տասնութ տեղ աստղանիշ
Վերքեր քաշեցին։
Արգամ, Արգամ, Արգամ Պետրոսյան,
Վրեժդ առար դու քաջի նման։

Քեզ բռնող ֆրիցներին,
Քո տեղը դրիր,
Ջենքերը խլելով
Շանսատակ արիր։
Արգամ, Արգամ, Արգամ Պետրոսյան,
Խփեցիր-չարդեցիր թշնամուն գաղան։

Սովետի հարազատ,
Քաջարի զավակ,
Հպարտ ենք քեզանով
Բոլոր ժամանակ։
Արգամ, Արգամ, Արգամ Պետրոսյան,
Կեցցե՛ս հերոս տղա, կեցցե՛ս հավիտյան։

253. ԳԵՎՈՐԳ ՋԱՔՅԱՆ

Ծնվեցիր ծոցում Սյունաց աշխարհի
Ազատ լեռների դու արծիվ արի.

Դու սովետական երկրում աճեցիր
Քեզ համար անմահ փառք նվաճեցիր։

Երբ պատերազմի փողը հնչեցին,
Քեզ դեպի ռազմի դաշտը կանչեցին,
Հոգումդ ծփաց վրեժը վարար
Հայոց բաչերին պայքարի տարար։

Խիզախ զորավար էիր դու կերչում,
Քաջերիդ դեպի մարտ էիր կոչում,
Ոսոխը ոռնում էր իր մթին որջում,
Քաջերիդ զարկից ջարդվում էր կորչում։

Եվ ընկար մահով դու հերոսական,
Ով քաջ զորավար, թանկագին Զաքյան,
Դու հայրենիքի քաջազուն որդի,
Կապրես միշտ սրտում քո ժողովրդի։

254. ՋԱՔՅԱՆԻՆ

Ափսոս անժամանակ
Դառար նահատակ,
Հայի հերոս զավակ
Անվեհեր Զաքյան

Թշնամու զորքին բյուր
Քաշեցիր սուր-թուր,
Վեց հազար հինգ հարյուր
Զարգեցիր, Զաքյան։

Հերոսի պես ընկար
Ով քաջ զորավար.
Հիշատակդ անմար
Կմնա, Զաքյան։

255. ՕՐՀՆԻՐ ՃԱՆԱՊԱՐՀՍ

Օրհնիր ճանապարհս թանկագին մայրիկ,
Անպատճառ պիտ գնամ, մնալ չեմ կարող,

Սպասիր նամակիս ծերունի հայրիկ,
Անպատճառ պիտ գնամ, մնալ չեմ կարող։

Թշնամին մարդակեր մտավ մեր հողը,
Ինչպես մութ գիշերվա չարամիտ գողը.
Ջարմացավ ու շշմեց ամեն լսողը,
Անպատճառ պիտ գնամ, մնալ չեմ կարող։

Առաջնորդը ավեց մարտի հրաման,
Ժողովուրդը կանգնեց մեկ մարդու նման.
Թշնամին մեր հողում ղարկել է վրան,
Անպատճառ պիտ գնամ, մնալ չեմ կարող։

Պատերազմ է մղվում հանուն մեր պատվի,
Կը խփենք թշնամուն որտեղ նկատվի.
Որ մտավ մեր հողը անշուշտ կը դատվի,
Անպատճառ պիտ գնամ, մնալ չեմ կարող։

256. ԿՈՍՏՈՒՄԸ ՊԱՏԻՑ...

Կոստումը պատից կախված էր,
Կոստանդը ղումին.
Հայրը կը դա կասի «ո՞ւր ա իմ որդին»։

Դոշիդ տուր, մայրիկ ջան, կարդացի թերթը,
Աղվանին տանում են ծովային բերթը։

Արևը մայր մտավ, լուսնյակը ցոլաց,
Նավը կռակ ավեց, Աղվանը դողաց։

Աղվանի ընկած տեղը շատ խորը տեղ էր,
Շատերը կարծում են Աղվանը սաղ էր։

Ավետիք հայրիկ ջան դանակդ սրի,
Աղվանի դագաղը նախշով զարդարի։

Սև եզը մորթեցինք, հարսանիք արինք
Ջուռնի ձենը կտրինք, պատարաք արինք։

257. ԿՈՎԻՑԸ ՏՈՒՆ ԵՍ ԴԱՌել

Կովիցը տուն ես դառել,
Բշնամու սիրան էս վառել,
Նստիր խալին, բանձր կալին,
Մատաղ ըլեմ ես քո գալուն։

Կովիցը տուն ես դառել
Մեր տան ճրագն էս վառել,
Ջուր տամ սիրտդ զովանա,
Պաչ տամ հոգիդ դինջանա։

258. ՅԱՐՍ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Յարս կարմիր բանակում,
Ես էլ նրա թիկունքում,
Աշխատենք ուժով լարված
Որ թշնամուն տանք հարված։

Երևկ նամակ ստացա,
Յարիս տեղը իմացա.
Նա գերմանացու հողում
Ջախջախում է թշնամուն։

Յարիս լեն դոշի վրա,
Կարմիր աստղ կշողա,
Էսօր նամակ կգրեմ,
Կասեմ քո բոյին մեռնեմ։

259. ՅԱՐՍ ԳՆԱՑ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

Յարս գնաց կարմիր բանակ
Բանակին մեռնեմ,

Գրել է ինձ մի նամակ
Նամակին մեռնեմ։
Ինձ անուշ բարև է ղրկել
Բարևին մեռնեմ,
Կառծես Թե արև է ղրկել
Արևին մեռնեմ։
Թիկունքն է սար, բոյը չինար
Իր բոյին մեռնեմ,
Ինքն հերոս, հրամանատար
Իր սոյին մեռնեմ։
Ցաշիստանների դեմ է կռվում
Կռվողին մեռնեմ,
Հայրենիքի հողն է պահում
Պահողին մեռնեմ։

260. ՀԱՆԴԸ ԴԱՌԱՎ ՀԱՍԿԻ ԾՈՎ

Հանդը դառավ հասկի ծով,
Ջան էս ինչ լավ արև ա...
Հանդեն եկի անուշ հով.
Ջան էս ինչ լավ արև ա...
Գնամ հանդը հանդ անեմ,
Ջան էս ինչ լավ արև ա.
Սիրո անուշ բանդ անեմ
Ջան էս ինչ լավ արև ա,
Կռիվը պրծավ, գնաց,
Ջան էս ինչ լավ արև ա.
Յարս կռվան եռ կգա,
Ջան էս հետի հաց անեմ,
Ջան էս ինչ լավ արև ա։

261. ՆԱՆԵ

— Նանե, նանե ո՞ւր կերթաս.
Ծերացել էս, ղուր կերթաս.
— Վայ, բալա ջան, մի ասե,
Էսօր ջահել օրըս է,
Տղես կռվեն է եկե,

Հեռու հեռվեն է եկե,
Կռվեն նոր է տուն դառե,
Հանգած ճրագն է վառե,
Սրտի մուրազն է առե,
Դուշմանին հողն է դրե...
Կերթամ աղբյուրը ջրի,
Որ քաջ բալես գա խմի,
Տանեմ գլուխը լըվամ,
Պագեմ, սրտով հովանամ:

Ծանոթագրություններում մենք չենք ծավալվում, սահմանափակվում ենք միայն վերցված նյութերի սկզբնաղբյուրների հիշատակումով։ Խիստ անհրաժեշտության դեպքում բերում ենք այս կամ այն վիպերգի հետ առնչվող և այն ինչ-որ չափով լրացնող զրույցները։ Վիպերգերը, որպես կանոն, վերնագրված են այնպես, ինչպես սկզբնաղբյուրներում են։ Որոշ դեպքերում, վիպերգի բովանդակությունից ելնելով, մենք գրել ենք նոր վերնագիր, առնելով քառակուսի փակագծերի մեջ։ Վիպերգերը ծանոթագրվում են հետևյալ հերթականությամբ. նախ դրվում է վիպերգի համարը, հետո վերնագիրն ու նրա դիմաց՝ կլոր փակագծերում մեր ժողովածուի էջը, և ապա, նոր տողից, այն աղբյուրը, որտեղից վերցված է վիպերգը։ Վերջում, եթե պահպանվել են, տրվում են տեղեկություններ վիպերգն ասողի, գրառողի և գրառման ժամանակի մասին։

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՀԻՆ ՇՐՋԱՆ

1. Հայկ և Բել (էջ 41)

Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Հարությունեան, Տփղիս, 1913, էջ 31—37։

2. Հայկ և Բել (էջ 44)

«Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն», չորրորդ տպագրութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջարանիւ և ծանօթագրութեամբք, ի ձեռն Ս. Մալխասեանց, Երևան, 1939, էջ 2—6։

Բելի մասին հետաքրքրական զրույց է պատմում Դ. Սրվանձտյանցը իր «Գրոց ու բրոց» գրքում, «Բելի ուղտերը և ուղտապաններըը» խորագրի տակ։

«Դատվան դեղն ջրհորի սահմաններով դեպի Նեմրութ ի դաշտակողմն գնալով՝ կտեսնես կարգ մը անկվածի կամ կանգնվածի պես սև քարէր, որոնք հեռվեն և մութ ժամանակ կրնան խաբել զմարդ՝ թե կարավան են անոնք, կամ մարդ և ուղտ։ Տեղացիք Բելի ուղտեր և ուղտապաններ կանվանեն զանոնք, և որոց համար կվիպասանեն ու կըսեն թե. «Կռապաշտ թագավոր է եղեր Բելը, և մեծ զորքով եկեր Հայոց թագավորի ու երկրի վրա կռիվ։ Հայոց թագավորը Աստուծո ձեռնով սպաներ է զԲել և հաներ Նեմրութա գլուխ, այն տեղը փորեր, թոնիր շիներ, մեջը կախեր վառեր է։ Աստուծո հրամանքով այն կրակը ջուր է կտրեր, զմոխիրն հողի տակ խջուցեր, որ չէղնի քամին անոր փոշին տանի։ Բելի մարդիկ և ուղտերն ալ իրենց վախեն քար

ևն կարևր։ Մինչև այսօր Բոնիրն ու ջուրը կա. և այն ջուրն է, որ սարի տակով կիջնա Մեղրագետի ակնեն կրխև և այդ պետը կկազմև»։ («Գրոց ու բրոց», Կ. Պոլիս, 1910, էջ 31—32)։

Բևլի կերպարի բնութագրման առումով հետաքրքրական է նաև հետևյալ ավանդությունը, որ բերում է Հ. Սարգսյանը իր «Տեղագրութիւնքի» մեջ։

«Նեմրութ հզոր թագավորը բանությամբ տիրելով հարավային երկրների շատ գավառներին, գալիս է Հայաստան և կամենում է, որ երկրի ժողովուրդը պաշտե իրեն իբրև աստված։ Այս նպատակով նա սկսում է շինել մի դաստակերտ ահեղ բարձրությամբ լեռան գագաթի վրա, որ արդեն պատրաստի կար շինության նյութ և ուր ուղտերի երամակներով ավազ էին կրում Դատվանի ափից։ Եվ ահա երբ ահագին շինության գործը մոտ էր ավարտման՝ ի հիացումն բոլոր տեսնողների, Նեմրութը կամենալով ապավորել բոլորիցունց մտքի մեջ, թե իսկ ինքն է աստվածը և թե չկա բացի իրենից ավելի զորեղ աստված, բարձրանում է յուր կառուցած շենքի տանիքի վրա և լարում է յուր աղեղը դեպի երկինք՝ որպեսզի Աստծուն ապտևի և ինքը նորա տեղը բռևե։ Բայց ճշմարիտ աստված՝ տեսնելով նորա ամբարտավանությունը, հանում է (վանա) ծովից մի մեծ ձուկն և բռնում է Նեմրութի նետի դեմ։ Նեմրութը արձակից նետը և դիպավ ձկան, արյուն կաթեց վերևից վայր։ Նա կարծեց, որ աստված ապտևված է և բոլորին հավատացրեց, որ արդարև այդպես է։ Մինչդեռ նա և այս անգրկին բոլոր ներկա անձինք ուրախանում էին պատահած դեպքին, զրգռվեցավ աստվածային բարկությունը, զարկեց կայծակը և ուղտերի երամակը քար դարձրեց այն իսկ տեղում, ուր նորա կանգնած էին, իսկ ինքը Նեմրութը յուր կառուցած շենքի հետ վայր գլորվեցավ յուր ոտքերի տակ բացված անդունդը, որտեղից բխեց «Յորդառատ ջուր» ծածկելով բոլոր տարածությունը։ Այսպես անհետացավ Նեմրութի հիշատակը»։

(«Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Հ. Ներսիսի Սարգսեան», Վենետիկ, 1864)։ Ավանդությունը բերված է Մկրտիչ Էմինի «Մովսես Խորենացին և հայոց հին վեպերը» գրքից, Թիֆլիս, 1886, էջ 45—46)։

Նման մի ավանդություն գտնում ենք բանահավաք, ազգագրագետ Բենսեի գրքում։

«Աշտարակաշինության տեղը Նեմրութ (Նեբրովթ) լեռան գլուխը կոչվեն, ուր Նեմրութը (Բևլը) որ խիստ զորա ու զորավոր մարդ կեղևի, կանգնեց իր նշանավոր բերդը (աշտարակը)։

Երբ որ Նեմրութը՝ յուր բերդը կանգնեցնելու համար, ժողովուրդը չարաչար կոանջեր և կնեղեր, բազմությունը մի անգամ բողոքեց, թե՝ «չե վերև աստված կա, չվա՞խենա աստուց զմըզի իտա խտար կը տանջիս»։ Նեբրովթը կպատասխանե, եթե վերև աստված կա՝ պետք է իմ բերդը այնքան բարձրացնեմ, որ ծայր հասնի աստծու մոտ։

Մինչև ամպերը բարձրացնելով յուր բերդի ծայրը, առավ յուր նետ ու աղեղը և «դեմ էրևց աստծուն ու զարկեց. հրա զարկելուն՝ երկու ձուկ կը պատեն (ընկնել) երկնուց, Նեմրութ կըկարծե որ զաստված սպանեց՝ բերեց ցած»։

Աստծու հրամանքով մեկ-մեկ տաժու (տաժի—բարակ, քերծել, շուն) գորա մրջիմ (մրջյուն) փէչդա կէղնին, մրջյուներ կքանդեն զբերդի հիմք, տակ կդարձնեն, են մեկ օր բերդ՝ ինքն ուրին հրմալ կրփլի՝ օր գլխու քար կիռնա ի Ուրֆա (Եդեսիա)։

վանա ծովու արևմտյան կողմը գտնված՝ Դատվան դյուղի հյուսիսը, մի ձորակի մեջ՝ ուղտի բարձրությամբ և կարավանի ձևով կանգնած ավազաքարեր կան, որոնք «Նամրութի դևևերը» (ուղտեր) են էղի, օր ջուր կկրեին ծովեն ի Նամրութ սար, բերդի շինության վախտ Նամրութեն, որ կհպարտանա մըջ ուր մարդին, Աստված գեն դեվեք կենեն քար»։

Նեմբրովիի հակայական ուժը ցույց տալու համար, Նեմբրովի սարի արևելյան կողմը գտնվող Բենուա գյուղի մոտիկ գտնված մի քանի մեծ և ահագին քարերը ժողովուրդը կանվանե «պարանոտարեր» (պարսատարեր) զորոնք՝ ամբարտավան բռնավորը լեռան գլխից յուր պարսատի մեջ դրած կծգի ելեր ներքև։

(«Բուլանըխ կամ Հարք գավառ», Հավաքեց Բենոե, խմբագրեց և հրատարակեց Ե. Լալայան, Թիֆլիս, 1901, էջ 29—30։ Արտատպություն «Ազգագրական հանդեսից»։

Հայկի և Բելի մասին ակնարկներ գտնում ենք Բենոեի նշված գրքում (էջ 26, 31, 45 և այլն) և Թովմա Արծրունու «Պատմության» մեջ, բայց գրույցի, ավանդության, սյուժետային խոսքի կամ դեղարվեստական հյուսվածքի մակարդակի հասած չլինելու պատճառով չենք ներկայացնում քննիերցողին։

Հայկի մասին մի գրույց պահպանվել է XI դ. վրաց պատմիչ Լեոնտիոս Ռուիսեցիի (Լեոնտի Մրովելի) «Վրաց թագավորների և նախահայրերի ու տոհմերի պատմություն» խորագրով գրքում։ Գրույցը բերում ենք ամբողջությամբ.

«Նախ և առաջ հիշատակենք այսպես, որ հայոց (սոմեխների) և վրաց (քարթվելների), ռանաց և մովականաց, հերաց և լեզգիների (լեկաց), եգերաց (մեգրելների) և կովկասյաց՝ ազգս բոլորի հայրը մի էր Թորգոմ (Թարգամոս) կոչեցյալը։ Այս Թորգոմը (Թարգամոսն)՝ էր որդի Թարշշի, վորդվո Յավանա, վորդվո Յարեթի—վորդվո Նոյի։

Եվ այս Թորգոմը (Թարգամոսը) քաջ մարդ էր։ Եվ լեզուների բաժանումից հետո, երբ Ներբոթը Բաբելոնում աշտարակ շինեց և լեզուները բաժանվեցին՝ ի սփյուռս ամբողջ աշխարհի, այս Թորգոմը (Թարգամոսն) իր ամբողջ ժողովրդով եկավ և բնակություն հաստատեց երկու լեռների՝ Արարատի և Մասիսի միջև, որոնք անմատչելի են մարդկանց համար։

Եվ նրա ժողովուրդը մեծ էր և անհամար, քանի որ էին բազում կանայք, ուստերք և դստերք նորա, և քանի որ նա (Թորգոմն) ապրեց վեցհարյուր տարի։

Եվ այս՝ Արարատի և Մասիսի երկիրը, որ վիճակվել էր նրանց, այլևս չէր կարողանում նրանց տեղավորել։ Եվ նրա (Թորգոմի) երկրի սահմաններն այս են. արևելքից՝ ծովն Գուրգունի, արևմուտքից՝ ծովն Պոնտոսի, հարավից՝ լյառն Օրբելի, և հյուսիսից՝ լյառն Կովկասու (Կովկասիա)։

Բայց Թորգոմի (Թարգամոսի) որդվոց մեջ ութը հայանի դարձան (իբրև) քաջարի և անվանի հսկաներ, որոնց անուններն են. առաջինն կոչվում էր Հայկ (Հաոս), երկրորդը՝ Քարթլոս, երրորդը՝ Բարդոս, չորրորդը՝ Մովական, հինգերորդը՝ Լեկոս, վեցերորդը՝ Հէրոս, յոթերորդը՝ Կավկաս, ութերորդը՝ Եգրոս։ Եվ այս ութ (եղբայրները) հսկաներ էին։

Բայց Հայկը (Հաոսը) ամենրից հսկան էր— որովհետև նրա նման ոչ ոք չի եղել երբեք ոչ ջրհեղեղից առաջ և ոչ էլ հետո՝ հասակով (բոյով), ուժով և արիությամբ։

Բայց Արարատի և Մասիսի երկիրը այլևս չէր կարողանում (նրանց) տեղավորել։

Թորգոմը (Թարգամոսը) բաժանեց իր երկիրն ու ժողովուրդը այս ութն հսկաների միջև, իր ժողովրդի կեսը և իր երկրի լավագույն մասը (կեսը) տվեց Հայկին (Հաոսին), իսկ մյուս յոթին տվեց նրանց հասնելիքն ըստ երիցության։

Բայց Հայկը (Հաոսը) ժառանգեց իր հորը՝ Թորգոմին (Թարգամոսին) պատկանյալ երկիրը, և սրբոց (սահմանակից) երկիրներին, հյուսիսից՝ ինչպես մատնանշել ենք, հարավից՝ Որբէ (sie) լեռամբ, արևելքից՝ մինչև ծովն Գուրգունի, արևմուտքից՝ մինչև Պոնտոսի։ Եվ այս յոթն հսկաների կառավարիչն ու իշխանն էր Հայկը (Հաոսը), և այսպես բոլորը հպատակ էին Հայկին (Հաոսին), և բոլորը մի լեզու

ունեին՝ հայերենը (սամխեներենը), իսկ ուրիներէյան միասին էին ի ծառայության Ներրոթի հսկայի, որն առաջին արքան էր ամբողջ աշխարհում:

Սրանից հետո մի քանի տարի անց Հայկը (Հայոսը) դիմեց նույն յոթն հսկաներին, ժողովեց նրանց և ասաց. «բարձրյալ աստվածը տվեց մեզ ուժ և բազմություն մեր ժողովրդի, այժմ օգնականությամբ արարիչ աստծո չլինենք այլևս ոչոքի ստրուկ և ոչոքի չծառայենք, բացի արարիչ աստծուց»: Յոթն հսկաները՝ հավատալով սրան՝ հաստատեցին նրա (Հայկի) մտադրությունը, և ուրացան Ներրոթին՝ հարկ չտալով նրան այլևս: Սրանց հետ մի քանի այլ ժողովուրդներ համամիտ եղան, իսկ մյուսները երկմիտ դարձան: Ապա բարկացավ Ներրոթը, ժողովեց իր հսկաներին և բոլոր հավատարիմ զորավարներին, և դուրս եկավ ընդդեմ Թորգոմյաննների (Թարգամոսյաններին): Իսկ Հայկը (Հայոսը) դիմեց յոթնեքյան հսկաներին, և Թորգոմի (Թարգամոսի) ժողովրդին, և նրան օգնություն ցույց տվին արևմտյան այլևայլ ժողովուրդները ևս: Սրանց բոլորին ժողովեց Հայկը (Հայոսը) և կանգնեց Մասիսի ստորոտում: Եվ երբ մոտեցավ Ներրոթը Ատրպատական (Ադրբաջանական) աշխարհին և կանգնեց այնտեղ, վաթսուն հսկա և՝ նրանց հետ՝ հզոր զորավարներ ուղարկեց Թորգոմյաններին (Թարգամոսյաններին) կարգի կանչելու համար: Հենց որ Ներրոթի զորավարները մոտեցան, Հայկի (Հաոսի) յոթն հսկաները մեծ զորքով դիմավորեցին (նրանց), իսկ Հայկը (Հաոսը) հզորագույն զորքով կանգնեց նահից՝ թիկունքում: Նրանց միջև տեղի ունեցավ ահասիկ պատերազմ, որ նմանվում էր ոգի սաստկությանը, քանի որ նրանց ոտանների փոշին նման էր կուտակված ամպերին, նրանց զրահի փայլատակումը՝ երկնքի կայծին, նրանց բերանի ձայնը՝ որոտման ձայնին, նրանց նետերի բազմությունը ու բարերի ձգումը՝ խիտ կարկտահոսությանը՝ կարկտի առումին: Շարունակվեց պատերազմը նրանց միջև, և երկու կողմից էլ եղան անթիվ կոտորվածներ:

Իսկ Հայկը (Հաոսը) նույն հսկաների նահից էր կանգնած, քաջալերում էր նրանց և մխիթարում ահարկու ձայնով, որ կայծակի ձայնին էր նման: Ապա Թորգոմյանք (Թարգամոսյանք) հաղթահարեցին և կոտորեցին Ներրոթյան հսկաներին և նրանց զորավարներին: Իսկ Թորգոմյան (Թարգամոսյան) յոթ հսկաները՝ Քարթլոս, Բարդոս, Մովական, Հերոս, Լեկան, Կովկաս (Կավկասոս) և Երգրոս՝ կենդանի մնալով և չվիրավորվելով, զորավիգ էին և փառաբանում (էին) աստծուն: Հենց որ Ներրոթն այս լսեց, բարկացավ և արշավեց նրանց դեմ իր ամբողջ ուժով: Իսկ Հայկը (Հաոսը) Ներրոթի չափ զորք չուներ: Նա ամրացավ Մասիսի գերբունդներում: Ներրոթը ցածից մոտեցավ, և երբ նա ոտից մինչև գլուխ զինված երկաթով և պղնձով: Նա եկավ մի սարի վրա խոսելու Հայկի (Հաոսի) հետ և պահանջեց նրանից հնազանդություն, որպեսզի իր կամքով գա նրա մոտ: Իսկ Հայկը (Հաոսը) դիմեց հսկաներին. «Ամրացրեք ինքներդ, որ ես գնամ ընդդեմ Ներրոթի»: Եվ նա գնաց և դեմ առ դեմ մոտեցավ Ներրոթին, ձգեց նետը, որն՝ անցնելով պղնձե տախտակով՝ խոցեց կուրծքը և դուրս եկավ բամակից: Ապա Ներրոթն ընկավ, և նրա բանակը փախուստի դիմեց: Եվ Հայկն (Հաոսն) իրեն արքա հայտարարեց իր եղբայրների և սահմանակից այլ ժողովուրդների վրա: Իսկ յոթնեքյան եղբայրները գնացին՝ յուրաքանչյուրն դեպի իր երկիրը, և նրանք Հայկի (Հաոսի) հպատակ էին»:

(Պրոֆ. դր. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Լե—ԺՒ դար, Երևան, 1934, էջ 143—147):

Արամանյակի, Արամայիսի, Ամասիայի և Գեղամի մասին վիպերգերը տե՛ս «Մովսեսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատությամբ Մ. Աբեղեան և Ս. Հարությունեան, Տփղիս, 1913, էջ 37—42:

3. [Հայկյան Արամ] (էջ 47)

Մ. Խորենացի, *Վերծիշյալ գիրքը, էջ 43—44։*

4. [Տիգրան և Աժդահակ] (էջ 50)

Մ. Խորենացի, *Վերծիշյալ գիրքը, էջ 71—84։*

5. [Երվանդ բագավոր] (էջ 56)

Մ. Խորենացի, *Վերծիշյալ գիրքը, էջ 161—173։*

6. [Արտաշես և Սաթենիկ] (էջ 60)

Մ. Խորենացի, *Վերծիշյալ գիրքը, էջ 173—191։*

7. [Արտավազդ] (էջ 67)

Մ. Խորենացի, *Վերծիշյալ գիրքը, էջ 191—192։*

Վիպերգի մյուս պատառը տե՛ս «Բանասեր», (Հատ. Ա, 1851, Կ. Պոլիս, էջ 239—244)։

Այստեղ գնում ենք Արտավազդի, Մ. Էմինի բառերով ասած, «Հայոց Պրոմեթեոսի» առասպելի սակավածանոթ մի այլ օրինակ։

«Արտավազդ անունով հայոց մի թագավոր կար, որ ուներ խելագար որդի՝ Շիդար։ Յուր մեռնելու ժամանակ Արտավազդը չհանձնեց թագավորությունը Շիդարին, որովհետև սա խելագար էր։ Վասն որո աշխարհը վրդովեցավ և շատ ավերումներ էր լինում։ Մի օր Շիդարը ձի հեծավ և հրամայից փող փչել ու հրատարակել, թե նա կամի թագավորել, և գնաց բնաիր հեծելազորքով զրոսնելու։ Երբ նա հասավ գետի կամրջին՝ պիղծ ալյար (շար ոգին) շարժից այտեղ, և նա ընկավ գետը ու կորավ։ Իսկ հեծելազորքը՝ լուր տարածից՝ իբր թե Շիդարի տասվածները հափշտակեցին նորան և դրին Սև լերան մեջ, որ Ավազ Մասիոն է, և նա շղթայած կա այտեղ։ Եվ երկու շուն՝ մեկը սպիտակ և մյուսը սև, հանապազ լիզում են Շիդարի շղթաները, այնպես որ տարվա վերջը նորա մազի պես բարակում են, և երբ կտրվին՝ Շիդարը կելնի և աշխարհը կավերե։ Սորա առաջը առնելու համար կախարդները սահմանեցին, որ յուրաքանչյուր տարեմտին՝ Նավասարդի մեկին, ամենայն գործավոր, ինչ արհեստ տեր լինի նա, երեք անգամ կոփե դարբնասալը, որպեսզի Շիդարի կապը, որ մազե բարակության է հասել, դարձյալ հաստանա և ամրանա, որ Շիդարը չելնե և չավերե աշխարհը...»։

(«Բազմավեպ», 1877, էջ 277)։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՄԻՋՆԱԴԱՐ IV—VIII դարեր

8. [Տրդատ և Գրիգոր] (էջ 69)

«Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 21—413։

Ա. [Տրդատը հաղթում է գոթերի թագավորին]։ Ագաթանգեղոս, էջ 30—34, հատվածներ՝ 37, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47։

Բ. [Դրիգորը խոր վիրապում։ Տրդատը ավերում է Պարսկաստանն ու Ասորեստանը]։ Ագաթանգեղոս, *էջ 42—43, հատվածներ 68—69, էջ 70—73, հատվածները՝ 121, 122, 123, 124։*

Գ. [Տրդատը խոզ է դառնում և Գրիգորի օգնությամբ կրկին մարդու կերպարանք առնում]։ Ագաթանգեղոս, *էջ 112—116, հատվածները՝ 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219 220, 221։*

Դ. [Հնթանոսությունը պարավում է]։ Ագաթանգեղոս, *էջ 394—413. հատվածները՝ 777, 778, 779, 780, 181, 784, 785, 786, 787, 789, 790, 809, 812, 813։*

9. Տաղ գեղեցիկ (էջ 79)

Արշակ Զոպանյան, *Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 4—6։*

Հիշյալ գրքի ներածության մեջ այս և «Յաղագս Հռիփսիմեի կուսին» վիպերգի մասին Ա. Զոպանյանը գրում է. «Տաղ գեղեցիկը» Տրդատա և Լուսաւորչի պատմությունը կերգե գարձյալ, բայց բոլորովին աշուղական ոճով մը, գեղջկական խեղճուկ քնարի մը գործ է, ամեննեն պարզ ու անարվեստ տեսակեն։

Նույնպիսի կարծ մըն է և «Յաղագս Հռիփսիմեի կուսին» երկայնին վիպերգը, զուտ ժողովրդական անուս աշուղի մը, բասննցի աշուղ Նազարի արտադրությունն է, կան բավական տողեր՝ հոռի ընդօրինակությամբ աղավաղված և գրեթե անհասկանալի դարձած։ Տաղաչափությունն է՝ մերթ 4—4, մերթ 4—3, մերթ 8, կան ալ՝ տեղ-տեղ ազատ տողեր։ Հետաքրքրական է տեսնել, ինչպես Հռիփսիմեա պատմությունը, ավանդաբար հասած մինչև այդ խոնարհ աշուղը, անոր մտքին ու ճաշակին մեջ առեր է այս մանկական ձևը, որ մերթ հակիրճ ու միամիտ շնորհն մը զուրկ չէ։

Այս... կարևորություն մասնավոր արժեք մը տվող հանգամանք մը ևս այն է, որ պատմական անձերու և դեպքերու նվիրված տողեր են, և այդպիսիները թե մեր դասական և թե ժողովրդական բանաստեղծության մեջ՝ շատ սակավադեպ են»։

(Ա. Զոպանյան, *Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ ԺԴ*)։

10. [Տիրան բազավոր] (էջ 80)

«Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց ի չորս գլխութիւնս», երկրորդ տպագրութիւն, Վենետիկ ի տպարանի Սրբոյն Ղազարու, Յամի 1889, էջ 49—54։

11. [Գնել, Տիրիթ, Փառանձեմ, Արշակ] (էջ 84)

Ա. [Գնել և Տիրիթ]։ Բուզանդ, *էջ 119—120։*

Բ. [Գնելի սպանությունը և Փառանձեմի ողբը]։ Բուզանդ, *էջ 120—125։*

Գ. [Արշակը իրեն կին է առնում Փառանձեմին]։ Բուզանդ, *էջ 125—127։*

12. [Արշակ և Շապուհ] (էջ 89)

Ա. [Շապուհը մեծարում է Արշակին, վասակը սպանում է Շապուհի ախոռապետին]։ Բուզանդ, *էջ 128—130։*

Բ. [Արշակ թագավորը անխնա կոտորում է նախարարներին]։ Բուզանդ, *էջ 133։*

Գ. [Արշակը օգնում է պարսիկներին, սրի է քաշում հունաց զորքը, բայց Անդոկի դավաճանությամբ փախչում է պարսից թագավորից]։ Բուզանդ, *էջ 133—139։*

Դ. [Հայոց և Պարսից զորքերի հակառամարտը]։ Բուզանդ, էջ 141—143։

Ե. [Պարսիկներն ասպատակում են Հայաստանը]։ Բուզանդ, էջ 145—148։

Զ. [Արշակը կոտորում է Շապուհի բանակը]։ Բուզանդ, էջ 149։

Է. [Շապուհը խաբեությամբ իր մոտ է կանչում Արշակին, փորձում է հայկական հող ու ջրի վրա և բանտարկում]։ Բուզանդ, էջ 167—173։

Ը. [Շապուհը մորթազերծ է անում Վասակին]։ Բուզանդ, էջ 173—174։

Թ. [Փառանձեմը տարվում է Պարսկաստան և սպանվում]։ Բուզանդ, էջ 174—179։

Ժ. [Արշակ Բագավորի մահը]։ Բուզանդ, էջ 210—213։

13. [Պապ արքայորդի] (էջ 108)

Ա. [Պապի վերադարձը Հայաստան]։ Բուզանդ, էջ 189—192։

Բ. [Մուշեղը ջախջախում է պարսից զորաբանակը]։ Բուզանդ, էջ 193—194։

Գ. [Պապ և Ներսես]։ Բուզանդ, էջ 234—237։

Դ. [Պապի սպանությունը]։ Բուզանդ, էջ 237—240։

Ե. [Վարազդատ Բագավորը սպանում է Մուշեղ զորավարին]։ Բուզանդ, էջ 242—244։

14. [Տարոնի պատերազմ] (էջ 118)

Հովհան Մամիկոնեան, *«Պատմութիւն Տարօնոյ»*, աշխատությամբ և առաջաբանով պատմական դիտությունների թեկնածու Աշ. Աբրահամյանի, Երևան, 1941։

Ա. [Տրդատ և Դեղևհոն]։ «Պատմութիւն Տարօնոյ», էջ 130—141։

Բ. [Մուշեղը ջարդում է պարսից զորաբանակը]։ «Պատմութիւն Տարօնոյ», էջ 158—162։

Գ. [Դայլ Վահան]։ «Պատմութիւն Տարօնոյ», էջ 174—202։

Դ. [Դայլ Վահան և Սմբատ, Վաղինակ և Ասուր]։ «Պատմութիւն Տարօնոյ», էջ 205—229, 238—247։

IX—XI ԴԱՐԵՐ

15. [Թեոդորոս Ռշտունի և Վարդ Պատրիկ] (էջ 133)

«Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ», ի լոյս ածին Գ. Տեր-Մկրտչեան և Մեսրոպ Եպիսկոպոս, Էջմիածին, տպարան դիտական ինստիտուտի, 1921, էջ 29—32։

16. [Տաճատ Սճնեացի և Աշոտ Առծրունի] (էջ 134):

Տե՛ս Շապուհ Բագրատունի, *էջ 51—63։ «Դևրեն և Գրիգոր Արևը»* վիպերգը *տե՛ս* Շապուհ Բագրատունի, *էջ 40—49, 64—71։*

17. Նարեկացին (էջ 142)

«Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից», գիրք Գ, Գարեգին Սարկավագ Հովսեփյանց, *Թիֆլիս, 1892, էջ 16—19։ «Նարեկացին» վիպերգի մյուս պատումները տե՛ս «Լումա», գիրք Գ, Թիֆլիս, 1899, էջ 325—328։* Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտու-

թյան և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Ե. Լալայանի ֆոնդ (FA)։ Ասել է վաննցի Օղապետ Բեյլարյան, 75 տարեկան։ Գրի առավ Սեննեքերիմ Շալճյան, 1915 թ.։ Հրատարակվում է առաջին անգամ։ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Բանահյուսության բաժնի ֆոնդ (FF)։ Ասել է Մուխախ Վասիլ Ավետյան, 72 տարեկան, Մոկսի Քառ գյուղից, ջրաղացպան։ Գրի է առնված 1933 թ.։ Հրատարակվում է առաջին անգամ։

«Գիրք որ կոչի Այսմաւուրք ի թ. հայոց ՌՃՀԹ» (1730), կ. Պոլիս, էջ ԳՃՂԴ (394)։

XII—XIV ԴԱՐԵՐ

18. [Անի քաղաքի անկումը] (էջ 145)

Մատթեոս Ուռհայեցի, *ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 62—64։*

19. [Քաջ Թոռնիկ] (էջ 147)

Մ. Ուռհայեցի, *էջ 66—67, 86։*

20. [Սենեքերիմ թագավոր] (էջ 147)

Մ. Ուռհայեցի, *էջ 30—33։*

21. [Վասակ սպարապետ] (էջ 149)

Մ. Ուռհայեցի, *էջ 7—9։*

22. [Գագիկ և Թորոս] (էջ 151)

Ա. [Գագիկը սպանում է Մարկոսին]։ Մ. Ուռհայեցի, *էջ 118—120։*
Բ. [Գագիկի մահը]։ Մ. Ուռհայեցի, *էջ 143—145։*
Գ. [Թորոսն առնում է Գագիկի մահվան վրեժը]։ Մ. Ուռհայեցի, *էջ 212—214։*

23. [Իշխան Խաչիկ] (էջ 156)

Մ. Ուռհայեցի, *էջ 60—61։*

24. [Ասախ զվէոնն ասեմ (էջ 157)

Աս. Մնացականյան, *Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1956, էջ 228—230։*

25. [Վառնի երգը] (էջ 159)

«Մաղաքիա Աբեղայի Պատմութիւն վասն ազգին Նետողաց», Ս. Պետերբուրգ, 1870, էջ 37—47։ Մյուս պատումները տե՛ս նշված գրքի 231, 232 էջերը։

26. [Կենցաղային վիպերգեր] (էջ 164)

Ա. [Սուզ դաւեր մեծ իշխանի]։ Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. երրորդ, 1946, էջ 411—412։

Բ. Յովհաննես և Աշայ։ Տե՛ս Ա. Մնացականյան, էջ 183—190։

Գ. Մոնի, Ա. Մնացականյան, էջ 196—198։

XV—XVIII ԴԱՐԵՐ

(էջ 171—181)

27—37 համարների տակ դրվող երգերը վերցված են Ա. Մնացականյանի վերոհիշյալ ժողովածուից։ Երգերի մյուս պատումները տե՛ս հետևյալ էջերում՝ 156—157, 207—208, 209—210, 211, 212, 213, 215, 216—217, 218—219, 220—222, 223—225, 226—227, 233—234, 235—236, 237, 238—240, 241—242, 243—244, 245—246, 546—548, 158—159, 160—162, 163—164, 165, 167—168, 169—171, 172—174, 175—176, 177—178, 247—248, 251, 252—253, 254—256, 257, 258—259, 260—261, 262—264։

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ (XIX ԴԱՐ)

38. Քարոզ խաչ (էջ 182)

Ա. Վ. Սեդրակյան, *Քնար Մշեցոց և վաննեցոց, էջ 9—12։*

39. Կարոս խաչ (էջ 185)

Շերենց, *Վանա սազ, առաջին մաս, Թիֆլիս, 1885, էջ 73—74։*

Մյուս պատումները տե՛ս Գարեգին սարկավագ Հովսեփյանց, Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1892, էջ 12—16։ «Լումայ», 1904, № 2, 44—46։ Վիպերգը գրի է առել Գարեգին Սրվանձտյանցը։

40. Կարոս խաչ (էջ 186)

«Հազար ու մի խաղ», երկրորդ հիմնյակ, կազմեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան, Վաղարշապատ, 1905, էջ 87—97։ Մյուս պատումները տե՛ս «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Զ, 1906, էջ 16—17։ Բանահավաք Ս. Հայկունին տողատակի ծանոթության մեջ գրում է. «Ասած է կույր Մանուշակ Մելքոնյան, 58 տարեկան»։ «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Զ, 1906, էջ 16։ Վերնագրի տակ բանահավաք Ս. Հայկունին գրել է. «Ալաշկերտի բարբառով»։ Ասացողն ու գրառման թվականն անհայտ են։ Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, ե. ֆալայանի ֆոնդ (FA)։ Ասել է Տրհներցի կույս

աշուղ Պետրոս պապիկը։ Գրի է առել վանեցի Հայրիկ Ամեմյանը (Վանցի) 1915 թ.։ Տպագրվում է առաջին անգամ։ Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Ե. Լալայանի ֆոնդ (FA)։ Գրի է առել Հայրիկ Ամեմյանը 1915 թ.։ Տպագրվում է առաջին անգամ։ Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Ե. Լալայանի ֆոնդ (FA)։ Գրի է առել Արտաշես Բարսեղյանը 1915 թ., ասացողը անհայտ է։ Տպագրվում է առաջին անգամ։

41. Կարոս խաչ (էջ 192)

«Մաղկաբաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության», առաջին փունջ, հավաքեց Հայկ Ամեմյան, Ս. Էջմիածին, 1917, էջ 28—34։

Այս պատումը համեմատաբար մեծ է ու ամբողջական։ Պատմել է 80-ամյա ծերունի, վանում ճանաչված կույր աշուղ Պետրոս պապիկը 1913 թ.։ Բանահավաքը տղատարիք ժամանակին մեջ շարունակում է. «Այս աշուղը տաս տարեկան հասակին կրկորանալ (ծաղկի պատճառով) և կաշակերտի Վասպուրականի մեջ նշանավոր Աշուղ-Տալիպին և անկե ալ կսորվի «Կարոս խաչ» պոեման, Տիրամայր Ս. Կարապետ և Հոգոց վանքերու և Երուսաղեմի գովքերը և այլն» («Մաղկաբաղ...», էջ 23—24)։

Բանահավաքը ենթադրում է, որ «Կարոսը» կարող է տեղի, վայրի անուն էլ լինել։ Մանրամասն տե՛ս «Մաղկաբաղ...», էջ 24—25։ Մյուս պատումը տե՛ս «Մաղկաբաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության», առաջին փունջ, հավաքեց Հայկ Ամեմյան, Ս. Էջմիածին, 1917, էջ 26—28։ Վիպերգն ասել է Պետրոս պապիկը 1913 թ. Վանում, գրի է առել Հայկ Ամեմյանը։

Վիպերգը պատմվել է արձակ, տողատումը կատարել ենք մենք։

42. Կարոս խաչ (էջ 197)

Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, բանահյուսության բաժնի ֆոնդ (FF)։ Ասել է վանեցի Վարդան Օհանյանը, 64 տարեկան, անգրագետ, ծեփագործ բանվոր։ Գրի է առել բանահավաք Գ. Թարվերդյանը 1936 թ. Երևանում։ Տպագրվում է առաջին անգամ։

43. Կարոս խաչ (էջ 201)

«Տաբռն» հավաքածոյ ժողովրդական երգերու, հավաքից և կազմից Արտաշես Տեր-Խաչատրյան, Պեյրութ, 1950, էջ 10—11։ Վիպերգն ասել է Մշո գաշտի Աղջան գյուղի բնակիչ Արմենակ Հովհաննիսյանը։ Գրի է առել Արտաշես Տեր-Խաչատրյանը։

44. Ասլան աղա (էջ 203)

Գարեգին սարկավագ Հովսեփյան, «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից», Թիֆլիս, 1892, էջ 7—11։

45. Ասլան աղա (էջ 206)

Գարեգին սարկավագ Հովսեփյան, «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից», Թիֆլիս, 1892, էջ 3—7։

46. Կազուան Ասլան (էջ 209)

«Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Զ, 1906, էջ 13—15։ Տողատակի ծանոթության մեջ բանահավաք Ս. Հայկունին գրում է. «Մոկաց ու վաղարշապատի խառն բարբառով ասած է Մկրտիչ Կալանց»։

47. Նլեխաանոս (էջ 211)

«Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Զ, Մոսկվա—Վաղարշապատ, ՌՅՄԵ (1906), էջ 3—10։ Վիպերգը ասել է Կարճկանա Նանկանց գյուղի բնակիչ Արմաղան Մարտիրոսյանը։ Գրի է առել Ս. Հայկունին։ Տողատակի ծանոթության մեջ գրում է. «Շատ սրատուչ և օրորվելով ախուր եղանակով երգած է Արմաղան Մարտիրոսյան, 65 տարեկանց»։

48. Ալեխաան (էջ 218)

«Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Զ, Մոսկվա—Վաղարշապատ, 1906, էջ 10—13։ Բանահավաք Ս. Հայկունին գրում է, որ դա «Թաւրիզի բարբառով է... Ասած է Համասփիւռ Նիկողոսեան, 50 տարեկանց»։

49. Հավատարիմ կնկա հեքիաթը (էջ 222)

Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Տ. Նավասարդյանի ֆոնդ (FB)։ Գրի է առել Տիգրան Նավասարդյանը։ Ասացողն անհայտ է։ Տպագրվում է առաջին անգամ։

50. Սիրու հեքիաթը (էջ 224)

«Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. X, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1967, էջ 34—36։ Գրի է առնված բանահավաք Բենսեի կողմից (Սահակ Մովսիսյան) 1915 թ. աշնանը, Բաղնոցի շրջանի Բարգավ գյուղում։ Պատմել է Հակոբ Հաղոյանը, Մուշ-Բուլանըխի Կոփ գյուղացի, անգրագետ, հողագործ, 40 տարեկան։

51. Մոկաց Մէրզեն (էջ 226)

Արիստակես վարդապետ Սեդրակյան, Քնար մշեցոց և վանեցոց, Վաղարշապատ, 1874, էջ 45—46։

52. Մուկաց Միրզեն (էջ 227)

«Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից», գիրք Գ, ժողովեց Գարեգին սարկավագ Հովսեփյանց, Թիֆլիս, 1892, էջ 19—20։

53. Մոկաց Միրզեն (էջ 228)

«Հազար ու մի խաղ», առաջին հիանյակ, խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան, Վաղարշապատ, 1894, էջ 62—66։

54. Մոկաց Միրզեն (էջ 230)

«Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. 2, 1906, էջ 40—41։ Ասել է Մոկացի Ջաուիկ Խնպոյանը, գրի է առել Ս. Հայկունին։

55. Մոկաց Միրզա (էջ 232)

«Նաղկաքաղ վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության», առաջին փունջ, հավաքագրեց Հայկ Ասճեմյան, Ս. Էջմիածին, 1917, էջ 17—20։ Վիպերգն ասել է Մոկսի Մոփանց գյուղի բնակիչ 67-ամյա Աբրիկ Յովոյանը, 1916 թ. հուլիսին, Վանում։ Միւս պատումները տե՛ս Նաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության», առաջին փունջ, հավաքագրեց Հայկ Ասճեմյան, Ս. Էջմիածին, 1917, էջ 21/23։ «Նաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության», առաջին փունջ, հավաքագրեց Հայկ Ասճեմյան, Ս. Էջմիածին, 1917, էջ 12—21։ Վիպերգն ասել է Մոկսի Մոփանց գյուղացի 67-ամյա Աբրիկ Յովոյանը, 1916 թ. հուլիսին, Վանում։

56. Մոկաց Միրզա (էջ 234)

Հայկական ՍՍՀ ԳԱ. հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Բանահյուսության բաժնի ֆոնդ (FF)։ Ասել է Վարդան Օհանյանը, գրի է առել Գ. Թարվերդյանը, 1936 թ. դեկտեմբերի 17-ին։ Տպագրվում է առաջին անգամ։

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

57. Սար ու ձոր սասանմիշ էլան, զարմացան (էջ 237)

Խաչատուր Աբովյան, *Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի, պատմական վեպ, Երևան, 1939, էջ 206—207։*

58. Գովեստ գեներալ Տեր-Ղուկասեանի (էջ 238)

Աբշակ Բուռնեան, *Ռամկական մրմունջներ, Աղնբսանդրապոլ, 1895, էջ 60։*

59. Երգ Զեյթունի (էջ 238)

Զեյթունցի, *Զեյթունի անցեալն ու ներկայն, Բ մաս, Վիեննա, 1902, էջ 79—80։*

60. Տելի ֆեշիշը կըսե (էջ 239)

Զեյթունցի, *Զեյթունի անցեալն ու ներկայն, Ա մաս, Վիեննա, Մխիթարյան տպարան, 1900, էջ 83։*

61. Տարաե, տարաե (էջ 240)

Կարապետ Հովհաննեսյան, *Հայկական պարերգներ, Ատաբազար, 1912, էջ 26—27։*

62. Առարոյի երգը (էջ 240)

Հրաչեա Քրիստափորյան, *Փնջիկ երգարան, Ս. Պետերբուրգ, 1906, էջ 86—88։*

63. Ես մենակ չեմ (էջ 242)

«Տարոն», երգարան, կազմեց Քերովբե Կարապետյան, 1930, էջ 10։ Վիպերգը գրի է առել Մ. Ղազարյանը։

64. Աղրիճցի կարիճները (էջ 242)

Գրականության և արվեստի թանգարան, Ս. Քամալյան ֆոնդ, երկրորդ բաժին, տետր № 2։ Վիպերգը գրի է առել Ս. Քամալյանը, 1895 թ., տպագրվում է առաջին անգամ։

65. Աղրիճցի Մարտոյի երգը (էջ 243)

Գրականության և արվեստի թանգարան, Ս. Քամալյանի ֆոնդ, երկրորդ բաժին, տետր № 101։ Վիպերգը գրի է առել Ս. Քամալյանը, Ղարսում, 1895 թ. հունվարին։ Տպագրվում է առաջին անգամ։

66. Սասունցոց բողոքը (էջ 244)

Սրշակ Բռուտյան, *Ռամկական մրմունջներ, Ալեքսանդրապոլ, 1895, էջ 61—62։*

67. Առարոյի երգը (էջ 245)

«Նոր երգարան, Ռազմի երգեր», Թիֆլիս, 1915, էջ 91—92։

68. Կարիճ Սասունցիկ (էջ 246)

«Սոխակ Հայաստանի», Ազգային լիակատար երգարան, հրատարակեց Գրիգոր ավագ քահանա Գրիգորյանը, Բագու, 1912, էջ 209—210։

69. Սասունցիներու գանգատը (էջ 247)

«Տարոն», երգարան, կազմեց Քերովբե Կարապետյան, 1930, էջ 79։

70. Ա՛յ հավար, Բայազիտ վառնցին (էջ 248)

Տիգրան Նավասարդյան, *Հայ ժողովրդական հնքիաթներ, վեցերորդ դիրք, Թիֆլիս, 1890, էջ 74—75։*

71. Ես Աղեկն եմ (էջ 248)

«Հազար ու մի խաղ», ժողովրդական երգարան, առաջին հինյակ, խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան, Վաղարշապատ, 1894, էջ 59—60։ Մի այլ երգում ասվում է՝

Ես Ալեքն եմ Մատաթեցի,
Սիրուն արի մեր տուն կնցի,
Դեմ աղոթարան նկնեցի։

էջ 45։

72. Դուլիճանցի Հարբեն Քեհիե սպանության առթիվ (էջ 249)

«Տաղեր ու խաղեր», խմբագրեց ու կազմեց Ալեքսանդր Մխիթարյանց, Ալեքսանդրապոլ, 1900, էջ 111—112։

73. Աբարանցի Աղեկի երգը (էջ 250)

«Տաղեր ու խաղեր», խմբագրեց ու կազմեց Ալեքսանդր Մխիթարյանց, Ալեքսանդրապոլ, 1900, էջ 88—89։

74. Խանում Եվա չան (էջ 251)

«Տաղեր ու խաղեր», խմբագրեց ու կազմեց Ալեքսանդր Մխիթարյանց, Ալեքսանդրապոլ, 1900, էջ 88։

75. Բերդիցը դուրս ելա... (էջ 252)

«Վիրահայոց բլբուլ», երգեր, Թիֆլիս, էջ 11—12։

76. Շեխ Սաֆոն (էջ 253)

«Տաղեր ու խաղեր», խմբագրեց ու կազմեց Ալեքսանդր Մխիթարյանց, Ալեքսանդրապոլ, 1900, էջ 105—106։

77. Տարոնի Ջուլում (էջ 253)

«Տարոն», երգարան, կազմեց Քերովբե Կարապետյան, 2930, էջ 59։ Գրառող Մանուկ Գրիգորյան։

78. Սիփանա չորս կողմ (էջ 254)

Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Բանահյուսության բաժնի ֆոնդ (FF)։ Ասել է Արտավազդ Մարտիրոսյանը, գրի է առել Արտաշես Նազինյանը։ Տպագրվում է առաջին անգամ։

79. Դարսա ճող ու չուրը (էջ 255)

Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Բանահյուսության բաժնի ֆոնդ (FF)։ Գրի է առել Ա. Դանալանյանը։ Տպագրվում է առաջին անգամ։

80. Բայբուրթ լեռներում (էջ 255)

Ասել են Պողոս Տոնոյի Մխիթարյան և Ներսես Եգորի Սիմոնյան։ Երգը լսել են 1918 թ. Վարսում, գինվոր նրած ժամանակ։ Երգը գրի ենք առել մենք 1961 թ. սեպտեմբերին, Երևանի 26 կոմիսարների անվան այգում։ Տպագրվում է առաջին անգամ։

81. Բայբուրդու լեռներեն (էջ 256)

Գ. Ա. Հակոբյան, *Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը*, Երևան, 1974, էջ 342։

82. Բասենցու խաղը (էջ 256)

Գ. Ա. Հակոբյան, *Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը*, Երևան, 1974, էջ 342։

ՀԱՍԱՆ ՂԱԼԻ ԵՐԳԵՐ

83. Հասան Ղալա (էջ 256)

Հայկական ՍՍՀ Գ.Ա. հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Բանահյուսության բաժնի ֆոնդ (FF)։ Երգը գրի է առել Ա. Ղանալանյանը։ Տպագրվում է առաջին անգամ։

84. Հասան Ղալեն (էջ 258)

Հայկական ՍՍՀ Գ.Ա. հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Բանահյուսության բաժնի ֆոնդ (FF)։ Ասել է Հովսեփ Հովհաննիսյանը, գրի է առել Արտաշես Նազինյանը։ Տպագրվում է առաջին անգամ։

85. Հասան Ղալա (էջ 259)

Հայկական ՍՍՀ Գ.Ա. հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Բանահյուսության բաժնի ֆոնդ (FF)։ Ասել է Սարգիս Սարգսյանը (Սանահնի Սրբե), ծնված 1900 թ. Վարսի շրջանի Ուղուզլի գյուղում, հողագործի ընտանիքում։ Գրի է առել Ա. Ղանալանյանը, 1934 թ. Երևանում։ Տպագրվում է առաջին անգամ։

86. Հասան Ղալա (էջ 259)

Հայկական ՍՍՀ Գ.Ա. հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Բանահյուսության բաժնի ֆոնդ (FF)։ Ասել է Լևոն Նազարյանը, Ախատալի շրջանի Ալափարա գյուղից, 35 տարեկան, անգրագետ, պատերազմի հաշմանդամ (կռվում կորցրել է երկու ոտքը)։ Գրի է առել Գ. Թալվերդյանը, 1934 թ. Երևանում։ Տպագրվում է առաջին անգամ։

87. Արտաշի երգը (էջ 261)

Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, գրի է առել Ա. Ղանալանյանը։ Տպագրվում է առաջին անգամ։

88. Հասան Ղալա (էջ 261)

«Հայ բանահյուսության քրեստոմատիա», երկրորդ լրացված և բարեփոխված հրատարակություն, կազմեց և խմբագրեց Գր. Գրիգորյան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1974, էջ 451—452։

89. Արմալեցի Օսեփի խաղը (էջ 262)

Գ. Ա. Հակոբյան, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 343։

90. Հասան Ղալա (էջ 263)

Գ. Ա. Հակոբյան, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 343—344։

Սալդաբի խաղեր

91—107 համարների տակ եղած երգերը (էջ 264) վերցված են «Հայ բանահյուսության քրեստոմատիայից»։ Ստորև հերթականությամբ նշում ենք գրքի էջերը՝ 446—447, 447, 447—448, 448, 449, 450, 451։

108—113 համարների տակ եղած երգերը վերցված են «Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը» գրքից։ Հերթականությամբ նշում ենք միայն գրքի էջերը. 344—345, 345, 346—347, 404։

114—127 համարների տակ եղած երգերը վերցված են Գրիգոր Հակոբյանի «Հայրենի եզերք» (Բասենի պարերգերը) գրքից։ «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1978։ Հաջորդականությամբ նշում ենք միայն գրքի էջերը. 112, 114—115, 130, 130—131, 131—132, 133, 141—142, 142—143, 145—146, 148—149, 164—165, 165—166։

Պաղդխի երգեր

128—182 համարների տակ եղած երգերը (էջ 283) վերցված են Գր. Գրիգորյանի «Հայ բանահյուսության քրեստոմատիայից», Երևան, 1974։ Ստորև հերթականությամբ նշում ենք միայն գրքի էջերը. 389—391, 392—398, 398—401, 401—402։

183. Պաղդխի մշեցու երգը (էջ 297)

«Երգարան», կազմեց Հ. Հայկազունի, Թիֆլիս, 1909, էջ 68—69։

184. Ախպերս դարիք է (էջ 298)

Գ. Ա. Հակոբյան, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 348։

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՎԻՊԵՐԴԵՐ

185. Շոռոռա՛, Սալաթ, շոռոռա՛, (էջ 299)

Հազար ու մի խաղ, առաջին հիանյակ, խմբագրելին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան, Վաղարշապատ, 1894, էջ 60—61։

186. Շոռոռ (էջ 300)

«Մասիս» շաբաթաթերթ, 1885, № 3763, էջ 853։ Գրի առավ Մ. Սարգսյան։

187. Ի նավակոծեալն ի ծովուն վանա (էջ 301)

Գ. Ալիշան, *Հայոց երգք ռամկականք, 1852, էջ 15—17։* Առաջին անգամ տպագրվել է *«Բազմավեպում», 1843, էջ 333, «Ազգային երգերու և ուրիշ ավանդներու վերաբեր» խորագիրը կրող հոդվածում։*

188. Գուլաբեցի Աբշակի Երգը (էջ 302)

«Հայ բանահյուսության բրնատոնմատիա», 1974, էջ 149—150։

189. Էվջիլարցի Սաթոյի Երգը (էջ 303)

«Հայ բանահյուսության բրնատոնմատիա», 1974, էջ 149—150։

190. Բարակ ճամփեն (էջ 304)

Գրիգոր Հակոբյան, *Հայրենի երկիր, 1978, էջ 117։*

ՋՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՍՈՅԻԼԻՋՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ

ՎԻՊԱԿԱՆ ԵՐԳԵՐ

191. Լենին փաշա (էջ 305)

«Հայկական խորհրդային ֆոլկլորը», ժողովածու, Երևան, 1938, էջ 9—16։ Ասել է Գաբո Բարցումյանը, գրի է առել բանահավաք Գեղամ Թարվերդյանը 1934 թ.։ Վիպերգի մյուս պատումը տե՛ս *ժողովրդական ստեղծագործության տան կազմած «Սովետահայ ժողովրդական և գուսանական ստեղծագործություններ» անտիպ ժողովածուում, կազմող Ս. Խանդոյան, 1947 թ.։* Գրի է առել բանահավաք Աբրահամ Աբրահամյանը 1946 թ.։ Ասացողն անհայտ է։ Տպագրվում է առաջին անգամ։

192. Լենու խաֆար (էջ 312)

«Լենինը հայ ֆոլկլորի մեջ», Երևան, 1936, էջ 143—149։ Ասել է Սահակ Ապրոյանը, Մշու Նամ դյուղից, անգրագետ, 52 տարեկան, հովիվ։ Գրի է առել Գեղամ Թարվերդյանը, 1935 թ.։

193. Լենինի խեմաթը (էջ 319)

«Լենինը հայ ֆոլկլորի մեջ», Երևան, 1936, էջ 155—160։ Ասել է Նորաշենցի (Նոր Բայազետ) Նուշո Դրիգորյանը, 65 տարեկան, անգրագետ, վիպերգը սովորել է Բարվում «կիսատ տղերքից»։ Գրի է առել Գեղամ Թարվերդյանը, 1935 թվականին։

194. Լենու խաղ (էջ 324)

«Լենինը հայկական ֆոլկլորի մեջ», Երևան, 1936, էջ 170—175։ Ասել է գյուղցի (Կոտայք) սևագործ բանվոր Հայրո Պետրոսյանը, 40 տարեկան։

195. Պա, պա, պա, Լենին բաբա (էջ 325)

«Լենինը հայկական ֆոլկլորում», Երևան, 1936, էջ 160։ Ասել է կոտայքցի Պետրոս Շիրոյանը, 69 տարեկան, անգրագետ։

196. Լենինու խաղ (էջ 326)

«Լենինը հայկական ֆոլկլորում», Երևան, 1936, էջ 20։ Ասել է Պետրոս Շիրոյանը։

197. Երեկ բաւտրակ էի (էջ 327)

«Լենինը հայկական ֆոլկլորի մեջ», էջ 15։ Ասել է զուլալեցի Սերոբ Նաղշբարյանը, ծնված 1909 թ., երգը լսել է համագյուղացի աղջիկներից։

198—212 համարների տակ գտնվող երգերը վերցված են «Լենինը հայ ֆոլկլորի մեջ» վերոհիշյալ ժողովածուից։ Ստորև հերթականությամբ հիշատակում ենք տաղանների և դրատողների անուն ազգանունը. Կույր աշուղ Քյամալ Բեկլարյան, 36 տարեկան. տալմասեցի Արշակ Սահինյան 75 տարեկան. փյանցի Անդալաթ Պետրոսյան, 33 տարեկան. արթիկցի վաղարշակ Նուշոյան, 34 տարեկան. աշտարակցի Գևորգ Ավագյան, անգրագետ, 75 տարեկան, երգը լսել է բողդոզանցի (Լենինական) աշուղ. Բալ Գևորգից. ասել է Սևանի շրջանի Ծաղկունք գյուղի բնակիչ Բալա Հարությունյանը, 84 տարեկան, գրի է առել Սերո Խանզադյանը. ակնեցի Նուբար Խնխոսյան, 62 տարեկան. Ղրիասարեի Գևորգյան, համզաչիմանցի, 65 տարեկան, անգրագետ. Զեբե Դավթյան, տպարանցի, կույր աշուղ, 18 տարեկան, անգրագետ. Գևորգ Ավագյան, 45 տարեկան, անգրագետ. Ասացողն ու դրատողն անհայտ են. Օհանյան Բ., շահալեցի (Կիրովականի շրջան), 50 տարեկան. Լևոն Լևոնյան, խոյեցի, 30 տարեկան, բանվոր. Պողոս Սահակյան, շիշմափեցի (Ամասիայի շրջան), 50 տարեկան, անգրագետ. Լենա Ղազարյան, Ախտալի շրջանից։

213. Երգը վերցված է ժող. ստեղծագործության տան «Սով. ժողով. և գուսանական ստեղծագործություններ» անտիպ ժողովածուից։ Գրի է առել Արտյոմ Շահբազը 1939 թ.։

214. Հողը տվիր դու գեղացուն (էջ 343)

Երգը գրի է առել մանկավարժ Արգար Մովսիսյանը, 1927 թ.։

215—220 համարների տակ դրված երգերը (էջ 378—382) վերցված են «Հայկական խորհրդային ֆոլկլորը» ժողովածուից, Երևան, 1938, էջ 65—71։ Սառն հերթականությամբ նշում ենք միայն ասացողների և գրառողների մասին եղած տվյալները։ Հորինողն անհայտ է, գրառող Գ. Թարվերդյան։ Ասել է Իջևանի շրջանի Ադդան գյուղի բնակիչ Մամրե Արզումանյանը, գրառող Գ. Թարվերդյան. դիլիջանցի, գերձակ Մնացականի Արամյանը, բանահավաք Գ. Թարվերդյան, Իջևանցի 50-ամյա Փարիջան Եղիազարյան, բանահավաք Գ. Թարվերդյան, Կարապետ Հակոբյան, 50 տարեկան, գրառնաչ, բանահավաք Գ. Թարվերդյան։

221. Գնդակահարվող մարտիկների երգը (էջ 349)

Գ. Օգանեզով, *Հերոսական մարտերում, Երևան, 1964, էջ 125։*

222. Առաջ ենք գնում, առաջ (էջ 349)

Գ. Օգանեզով, *Հերոսական մարտերում, Երևան, 1964, էջ 130։*

223. Հայաստանում մի ամիս կա (էջ 349)

Երգը տպագրվում է առաջին անգամ։ Ասել է հին բոլշևիկ Վարդուշ Տարախչյանը, լսել է 1920 թ.։ Տարածված է եղել հայկական առաջին հրաձգային գնդի զինվորների և Ղազախ-Շամշադինի պարտիզանների շրջանում։ Գրի ենք առել մենք 1961 թ. հոկտեմբերին, Երևանում, Վ. Տարախչյանի տանը։

224. Անուշ յարո ջան (էջ 350)

«Հայ ժողովրդական երգեր», ժողովածու, Երևան, 1961, էջ 159։

225. Ով չի տեսել ազատ երկիր (էջ 350)

Երգը տպագրվում է առաջին անգամ, ասել է Օնիկ Սահակյանը, սովորել է 30-ական թվականներին։ Գրի ենք առել մենք 1961 թ., Երևանում։

226. Ով չի տեսել ազատ երկիր (էջ 351)

Երգը տպագրվում է առաջին անգամ։ Ասել է հին բոլշևիկ, պատմաբան Կարո Ղազարյանը, լսել է 1920 թ. հեղափոխականներից։ Կ. Ղազարյանը հայտնում է, որ այն հորինել է եղիա Զուբարը։ Երգը գրի ենք առել մենք 1961 թ. հոկտեմբերին, Երևանում։

227. Վալշուրիկներ (էջ 351)

Վիպերգը ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ. մի փոքր հատված տպագրվել է Գր. Գրիգորյանի «Հայ բանահյուսության քրեստոմատիայում»։ Վիպերգը վերցված է ժող. ստեղծագործության տան «Սովետահայ ժողովրդական և գուսանական ստեղծագործություններ» անտիպ ժողովածուից, էջ 11—24։ Գրի է առել բանահավաք Գեղամ Թարվերդյանը (Վերդին) 1946 թ.։ Տպագրում ենք մասնակի խմբագրումով։

228—244 համարների տակ եղած երգերը (էջ 370—378) բացառությամբ 286,

287, 288, որոնցից առաջինը գրի ենք առել մենք, մյուս երկուսը՝ Վարդ Բդոյանը, վերցված են Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվից։ Ստորև նշում ենք միայն ասացողների և գրառողների մասին նշած տվյալները՝ ըստ երգերի հերթականության։ Ասել է 50-ամյա մի գեղջկուհի Ղարաբուռուն կայարանից դեպի Երևան եկող գնացքում, գրի է առել մի դասատու Ադինի շրջանի Տաշ-Ղալա գյուղի դպրոցից։ Ասել է մի վիրավոր տղա, գրառող դիվիջանցի Արևքնազ Շահնազարյան։ Նազարյան Աստղիկ, 33 տարեկան, վաղարշապատցի։ Հեմա Սարգսյան, 11 տարեկան, վաղարշապատցի։ Հարությունի Գիլանյան, վաղարշապատցի։ Սրբուհի Կարապետյան, 17 տարեկան, Վաղարշապատի շրջանի վերինխաթունարխցի, երգել է «Հասան Ղալա» երգի եղանակով։ Ժ. Բադիրյան, գրառող Ս. Խանզադյան։ Բալաբեկ Գևորգյան, ապարանցի, գրառող Վարդ Բդոյան։ Գրի է առել Ս. Խանզադյանը 1946 թ.։ Հակոբ Հակոբյան, Աղինի շրջանի Մուսալաղու գյուղից, գրառող Վարդ Բդոյան, 1945 թ.։ Մխիթարյան Գոհար, 14 տարեկան, վաղարշապատցի։ Սրբուհի Կարապետյան, 17 տարեկան, վերինխաթունարխցի (Վաղարշապատի շրջան) Սողոմոն Բարսեղյան, նույն գյուղից։ Այս 16 երգը տպագրվում է առաջին անգամ։

245. Ձիվորի երգը (էջ 379)

Ժողովան «Սովետահայ ժողովրդական և գուսանական ստեղծագործություններ», անտիպ ժողովածու. ասել է Ախուրյան շրջանի Թալշարուխ գյուղի բնակիչ Ցոլակ Խաչատրյանը, 13 տարեկան, գրի է առել Ս. Խանզադյանը 1946 թ. Երևանում։ Երգը տպագրվում է առաջին անգամ։

246. Ռոստովի երգը (էջ 379)

Վերցված է վերոհիշյալ անտիպ ժողովածուից։ Ասել է Չամբլեցի 12 տարեկան Ռուբեն Ենոքյանը։ Գրի է առել Ս. Խանզադյանը 1946 թ.։ Երգը տպագրվում է առաջին անգամ։

247. Կերչն (էջ 380)

Տպագրվում է առաջին անգամ։ Երգն ասել է Մարտունու շրջանի Զոլաքար գյուղի բնակիչ, 14 տարեկան Ժորժիկ Ավետիսի Հայրապետյանը։ Գրի է առել Վարդ Բդոյանը 1943 թ. հունիսի 22-ին, Երևանում։

248. Ռաստով գլխի լալեն (էջ 380)

Տպագրվում է առաջին անգամ։ Երգն ասել է վերոհիշյալ Ժորժիկ Հայրապետյանը։ Գրի է առել Վարդ Բդոյանը 1943-ին։

249. Ջավախք լսիր (էջ 382)

ՀՊՊԱ ֆոնդ № 83, գործ 3, էջ 47։ Ասել է Լ. Դարբինյանը, Հայրենական մեծ պատերազմի մասնակից։ Տպագրվում է առաջին անգամ։

250. Նելսոն (էջ 382)

«Գուսանական և ժողովրդական երգեր», էջ 17։ Ասել է Վ. Խանզադյանը, գորիացի, ծնված 1890 թ.։

251. Բաղրամյանին (էջ 383)

«Սովետահայ ժողովրդական և դասական ստեղծագործություններ», անտիպ ժողովածու։ Ասացողն ու գրառողն անհայտ են։ Տպագրվում է առաջին անգամ։

252. Արգամի երգը (էջ 384)

Տե՛ս վերը նշված անտիպ ժողովածուն, ասել է Դարալագյազի Ազատիկ գյուղի բնակիչ Ռոզա Արշակյանը։ Գրի է առել Վերդին 1942-ին։ Տպագրվում է առաջին անգամ։

253. Գևորգ Ջաֆյան (էջ 384)

Տե՛ս վերոհիշյալ անտիպ ժողովածուն։ Ասել է Աբարատ գործարանի բանվոր Սաղաթել Դավթյանը։ Գրառողն անհայտ է։ Երգը տպագրվում է առաջին անգամ։

254. Ջաֆյանին (էջ 385)

Տե՛ս վերոհիշյալ անտիպ ժողովածուն։ Ասացողն ու գրառողը անհայտ են։ Երգը տպագրվում է առաջին անգամ։

255. Օրիորիր նաճապարիս (էջ 385)

Ասել է 12 տարեկան մի աղջիկ 1942-ի մայիսին, Երևանի 26 կոմիսարների անվան այգում, Ջիվանու «Մայրիկ» երգի նմանակով։ Գրի է առել Թամարա Արսենյանը։ Տպագրվում է առաջին անգամ։

256. Կոստումը պատից (էջ 386)

Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Բանահյուսության բաժնի ֆոնդ (FF)։ Ասել է վաղարշապատի շրջանի Զևյվա գյուղի բնակիչ Սաթենիկ Պետրոսյանը, 36 տարեկան, անգրագետ։ Երգը տպագրվում է առաջին անգամ։

257—261 համարների տակ նշած երգերը (էջ 387, 388, 389), բացառությամբ «Յարս դնաց կարմիր բանակ» երգի (ռազմաճակատային «Մարտիկ» ԲԼԲ, 1943, նոյեմբերի 19), վերցված են ժող. ստեղծագործության տան վերոհիշյալ անտիպ ժողովածուից։ Ստորև նշում ենք միայն ասացողների և գրառողների մասին նշած տվյալները. ասացողն ու գրառողն անհայտ են։ Լիպարիտ Սարգսյան, գյուղաքարակցի, գրառել է Ս. Խանզադյանը 1946-ին։ Հռոմ Գրիգորյան, Միկոյանի շրջանից, գրի է առել Ս. Խանզադյանը 1946-ին։ Ասել է Մ. Նարյանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Ներածություն 7
1. Ծագումը, կազմավորումը, ժանրային գծերը 7
2. Միջավայրը, հորինողները, պատումները 10
3. Պատմության շարժումը ըստ վիպերգերի և պատմական երգային բանահյուսության 13
4. Պատմության գնահատումը վիպերգերում և պատմական երգային բանահյուսության մեջ 14
5. Վիպերգերի և պատմական երգային բանահյուսության գաղափարական բովանդակության հիմնական գծերը 17
6. Վիպերգերի և պատմական երգային բանահյուսության արվեստը 25

ԲՆԱԳԻՐ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՀԻՆ ՇՐՋԱՆ

1. Հայկ և Բել 41
2. Հայկ և Բել 44
3. Հայկյան Արամ 47
4. Տիգրան և Աժդահակ 50
5. Երվանդ Յագավոր 56
6. Արտաշես և Սաթենիկ 60
7. Արտավազդ 67

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՄԻՋՆԱԴԱՐ

IV—VIII դարեր

8. Տրդատ և Գրիգոր 69
9. Տաղ գնդեցիկ 79
10. [Տիրան Յագավոր] 80
11. [Գնել, Տիրիթ, Փառանձեմ, Արշակ] 84
12. [Արշակ և Շապուհ] 89
13. [Պապ արքայորդի] 108
14. [Տարոնի պատերազմ] 118

IX—XI դարեր

15. [Թևոդորոս Ռշտունի և վարդ Պատրիկ] 133
16. [Տաճատ Անձևացի և Աշոտ Արծրունի] 134
17. Նարեկացին 142

XII—XIV դարեր

18. [Անի քաղաքի անկումը] 145
19. [Քաջ Թոռնիկ] 147
20. [Սենեքերիմ թագավոր] 147
21. [Վասակ սպարապետ] 149
22. [Դավիկ և Թորոս] 151
23. [Իշխան Խաչիկ] 156
24. Աւախ, ըզվէրնն ասեմ 157
25. Լևոնի երգը 159
26. [Կենցաղային վիպերգեր] 164

XV—XVIII դարեր

27. Տաղ պիլպուլի և վարդի 171
28. Տաղ պուլպուլի 172
29. Տաղ սիրոյ և պուլպուլի 173
30. Ողբ բլբուլի 174
31. Կիծ մը կրակ 174
32. Վայրի հաւուկ մի... 174
33. Ես էի աղաս աղջէն 175
34. Մի թաւիր, վարդ 177
35. Տաղ բլպուլին վերայ ասացեալ 178
36. [կանչե՛, կռունկ, կանչե՛...] 179
37. Ջկիմիայն ի ձեռս առ եւ զհայերէնս ասա 180

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Նոր ժամանակներ XIX դար

38. Քարոզ խաչ 182
39. Կարոս խաչ 185
40. Կարոս խաչ 186
41. Կարոս խաչ 192
42. Կարոս խաչ 197
43. Կարոս խաչ 201
44. Ասլան աղա 203
45. Ասլան աղա 206
46. Կագուան Ասլան 209
47. Ալեքսանոս 211
48. Ալեքսան 218
49. Հավատարիմ կնկա հեքիաթը 222
50. Սիրու հեքիաթը 224
51. Մոկաց Մէրզեն 226
52. Մուկաց Միրզեն 227
53. Մոկաց Միրզեն 228

54. Մոկաց Միրզին 230
55. Մոկաց Միրզա 232
56. Մոկաց Միրզա 234

Պատմական երգային բանահյուսություն

57. Սար ու ձոր սասանմիշ էլան, զարմացան 237
58. Թովհաս գնևերալ Տեր-Դուկասեանի 238
59. Երգ Չեյթունի 238
60. Տելի քեշիշը կըսե 239
61. Տարան, տարան 240
62. Արաբոյի երգը 240
63. Ես մենակ չեմ 242
64. Աղբինբցի կտրիճները 242
65. Աղբինբցի Մարտոյի երգը 243
66. Սասունցոց բողոքը 244
67. Արաբոյի երգը 245
68. Կարճ սասունցիք 246
69. Սասունցիներու գանգատը 247
70. Այ Հավար, Բայազիտ վառնցին 248
71. Ես Ադևկն եմ 248
72. Դալիճանցի Հարթին Քհին սպանուիյան առթիվ 249
73. Աբաբանցի Ադևկի երգը 250
74. Խանում Եվա ջան 251
75. Բևրդից դուրս ելա... 252
76. Շեխ Սաֆոն 253
77. Տարոնի զուլում 253
78. Սիփանա չորս կողմ 254
79. Զարսա Հող ու ջուրը 255
80. Բայբուրթի լեռներում 255
81. Բայբուրդու լեռներին 256
82. Բասենցու խաղը 256

Հասան Ղալի երգեր

83. Հասան Ղալա 256
84. Հասան Ղալին 258
85. Հասան Ղալա 259
86. Հասան Ղալա 259
87. Արտաշի երգը 261
88. Հասան Ղալա 261
89. Արմալեցի Օսեփի խաղը 262
90. Հասան Ղալա 263

Սալդաթի խաղեր

91. Սալդաթի խաղը 264
92. Սալդաթի մորմոքը 264
93. Նիկոլից էկավ սև Բուղին 265
94. Աչքս պցել եմ սարին 266
95. Միրանի ծառ ծովել ա 266
96. Սիրուն ջան, սիրուն ջան 266
97. Հանդովը սել ա էթում 266
98. Սարևրը սարսուռ 266
99. Թադավորի թախտը 267
100. Բաղբռնա տեղն արան 267
101. Երևանու ճամփեն դուզ ա 267
102. Բիջազլվա պոյեզդը 268
103. Կանցիլարի դուռը... 268
104. Ձինվոր տարան 269
105. Ձյուն էկել 269
106. Մայրիկ ես գնում եմ 269
107. Բաղչի պատը 269
108. Ջարկնցնք ոսկի ցցեր 270
109. Ջևլրան Բուխեր կապնցին 270
110. Սալդատ ախպորս նամակը 270
111. Լուսնակ լուս տուր 271
112. Գիլի գիլ, գիլն է տարև 272
113. Փնջլիկ աղա 272
114. Էս տարվա արտերը... 273
115. Անտեր մնար... 274
116. Ամա՞ն կռունկ... 274
117. Անտեր մնար... 275
118. Ես ու յարս ջահել ենք... 276
119. Երկնքեն անցնի կը... 276
120. Ջապաս Բուխ էրին... 277
121. Էս տարվա արտերը... 278
122. Լուսնյակ լուս տուր... 278
123. Լուսընկի լուսը... 279
124. Կանչև կռունկ, կանչև... 280
125. Կաթավը քարին... 281
126. Սալդաթ ախպորս նամակը 282
127. Սալդաթ ախպորս նամակը 282

Պաճդխտի երգեր

128. Գընամ ու գընամ կ'ըսեմ 283
129. Ձիմ յարն էմանեթ կու տամ 283
130. Էլեր եմ, կերթամ կը... 284
131. Էրթալու եմ... 284
132. Յածցի լեռներ... 284

133. Ալ մահրըմաս... 284
134. Ես ծարավ եմ... 284
135. Ես զարիբ եմ... 285
136. Ես շնֆթալուի մորճ մէյի 285
137. Մարդ որ մարդու կանիծի 285
138. Ծառեր, դուք ծիրան միք տա 285
139. Կանչէ՛, կռունկ, կանչէ՛ 285
140. Կռունկ յուստ կը կեաս... 286
141. Ղարիբ եմ... 286
142. Էս գիշեր 286
143. Սիրտս նման էր... 287
144. Ամպեր է գարուն կու գա 287
145. Ան բարձր սարին... 287
146. Բամբակ եմ ցաներ... 288
147. Բարձր սարերու հովեր 288
148. Բլխատոր ջուր կուգեր... 289
149. Խերխիս էր հովիվ... 289
150. Երթամ, Թուխ ամպիկ լինիմ 289
151. Երկինք որտա՞ց... 290
152. Ընկա Թաղն Թաղ... 290
153. Լալվարա ջուրը սառն ա 291
154. Լուսիկ մի փրթավ քարեն 291
155. Ծարավել եմ... 291
156. Կանգնեմ քարին... 292
157. Կերածս կուլ չի գնում 292
158. Ջուրն ի փըռթիս... 292
159. Յարս գնացեր կարիբութեն 292
160. Կարիբութի՛ն, չար գերութեն 292
161. Էրկու ամառ 293
162. Կարիբի տիրոջ... 293
163. Գարուն էկավ... 293
164. Քեզ կողորկեմ... 293
165. Սև է աչքերդ, կռունկ 293
166. Հիվանդ եմ... 294
167. Ես զարիբ եմ... 294
168. Կանչեմ՝ ջան, արե... 294
169. Այ նանի... 294
170. Կանչէ՛, կռունկ... 294
171. Կրկաղնեմ Սոնա քարին 294
172. Փչեցեք հովեր... 295
173. Ծառիս ծերը ծաղկել ա 295
174. Գիշեր խալդա... 295
175. Կանգնել ես... 295
176. Ես ծարավ եմ... 295
177. Լուսնակ, դու կամաց գնա 296
178. Կայնել եմ...

179. Դարիր տեղը... 296
180. Դարիր եմ... 296
181. Ախ ըսեմ... 296
182. Ըստամբոլ շիներ են... 296
183. Պանդուխտ մշեցու երգը 297
184. Ախպերս զարիր է... 298

Կենցաղային վիպերգեր

185. Շորորա՛, Սալաթ, շորորա՛ 299
186. Շորոր 300
187. Ի նավակոծեալն ի ծովուն Վանա 301
188. Գուլարեցի Արշակի երգը 302
189. Էվջիլարցի Սաթոյի երգը 303
190. Բաբակ համփեն... 304

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ

191. Լենին փաշա 305
192. Լենու խաբաթ 312
193. Լենինի խնքաթը 319
194. Լենու խաղ 324
195. Պա՛, պա՛, պա՛, Լենին բաբա 325
196. Լենինու խաղ 326
197. Երևկ բաարակ էի 327
198. Լենինի երգը 328
199. Լենինի գաստանը 329
200. Լենինի երգը 330
201. Արևելք, արևմուտք... 331
202. Լենինի երգը 332
203. Կեցցե Լենինը-Լենինը 333
204. Լենընու խաղ 334
205. Սավետի լե-լե 335
206. Լենինի ջանիման 336
207. Լենինն էր 337
208. Լենինի մահը 337
209. Լենինի մահը 338
210. Ջարթիր, Լենին 341
211. Լենինի երգը 341
212. Լենինի երգը 342
213. Չի ծնվել քեզ նման 343
214. Հողը տվիր դու գեղացուն 343
215. Ռուբենի երգը 344
216. Չախմախվից անցավ զորքը 345

217. Աղտաֆայից բևեռային լուրը 346
218. Օրդուն եկավ սարի փեշևն 346
219. Կոխվ ելավ... 347
220. Ղուկաս Ղուկասյան 348
221. Գնդակահարվող մարտիկների երգը 349
222. Առաջ ենք գնում, առաջ 349
223. Հայաստանում մի ամիս կա 349
224. Անուշ յարս ջան 350
225. Ով չի տեսել ազատ երկիր 350
226. Ով չի տեսել ազատ երկիր 351
227. Վալշուրիկներ 351
228. Ես վրեժն եմ... 370
229. Կևրչ բաղաբի գլխի լալեն 371
230. Սև ծովի ափին 372
231. Կևրչ քաղաքը 372
232. Սև ծովի ափին 373
233. Կևրչի երգը 373
234. Կևրչի երգը 374
235. Փախիր պռուա... 374
236. Փախիր պռուա 375
237. Սև ծովի ափին 375
238. Սևաստոպոլ 376
239. Երբ որ հասանք 376
240. Ռոստովի գլխի լալեն 377
241. Գիշերով անցա 377
242. Մփա ծով ջան 377
243. Կևրչ քաղաքը 378
244. Երկնքով անցնում էր... 378
245. Զինվորի երգը 379
246. Ռոստովի երգը 379
247. Կևրչն 380
248. Բռաստով գլխի լալեն 380
249. Ջավախք լսիր 382
250. Նևլսոն 382
251. Բաղրամյանին 383
252. Արգամի երգը 384
253. Գևորգ Ջաբյան 384
254. Ջաբյանին 385
255. Օրհնիր Հանապարհս 385
256. Կոստումը պատից 386
257. Կովիցը տուն ես դառել 387
258. Յարս կարմիր բանակում 387
259. Յարս գնաց կարմիր բանակ 387
260. Հանդը դառավ հասկի ծով 388
261. Նանև 388

ԳՐԻԳՈՐ ԱՐՏԱՇԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՊԵՐԳԵՐԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ
Բնագրեր

Հրատ խմբագիր Ժ. Մ. ԱԴՈՆՑ
Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐՇԱԿԱԼՅԱՆ
Նկարիչ՝ Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ
Տեխ. խմբագիր Հ. Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Վերատուգող սրբագրիչ Ա. Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ



ИБ № 955

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բաղրամյան փ. 24 գ։
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին։
Հանձնված է շարվածքի 7.05.1985 թ.։ Ստորագրված է տպագրության 10.04.1986 թ.,
ՎՖ 06594, չափը 60×90¹/₁₆, թուղթ № 2։ Տառատեսակ «Գրքի սովորական», բարձր
տպաշրություն։ Տպագր. 26,25 մամուլ։ Հրատ-հաշվարկ. 21,7 մամուլ։ Տպաքանակ
2000։ Հրատ. № 6644, պատվեր № 369։ Գինը 3 ռ. 10 կ.։

A II 74757